

ՀՀ ԳԱԱ Յ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՋԱՐՈՒԿՅԱՆ ԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գիտական հոդվածների ժողովածու

Երևան 2016

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գիտական հոդվածների ժողովածու



ԱՍՈՂԻԿ

«Ասողիկ» հրատարակչություն

Երևան 2016

INSTITUTE OF LINGUISTICS OF NAS OF RA AFTER H. ACHARYAN

**ЈАНУКУАН READINGS**  
Collection of scientific papers

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА

**ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ**  
Сборник научных статей

Yerevan 2016  
Ереван 2016

ՀՏԴ 81:06  
ԳՄԴ 81  
Ջ 229

**Տպագրվում է  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշ-  
մամբ**

Խմբագրական խորհուրդ՝ Բ.Գ.Թ. Վ.Լ. Կատվայան (նախագահ)  
Բ.Գ.Ղ., պրոֆ. Վ.Գ. Համբարձումյան  
Բ.Գ.Ղ., պրոֆ. Գ.Կ. Խաչատրյան  
Բ.Գ.Ղ., պրոֆ. Լ. Շ. Հովհաննիսյան  
Բ.Գ.Ղ., պրոֆ. Լ.Ս. Հովսեփյան  
Բ.Գ.Ղ., պրոֆ. Ա.Ե. Սարգսյան  
Բ.Գ.Ղ. Ռ.Մ. Թոխմախյան  
Բ.Գ.Թ. Ա.Ս. Գալստյան  
Բ.Գ.Թ. Ն. Գ. Հովհաննիսյան  
Բ.Գ.Թ. Ժ. Ա. Միքայելյան  
Բ.Գ.Թ. Ն.Ժ. Սարգսյան

Ջ229 **ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**  
Գիտական հոդվածների ժողովածու.-  
Եր.:Աստղիկ, 2016.- 244 էջ:

ՀՏԴ 81:06  
ԳՄԴ 81

ISBN 978-9939-50-330-1

© ԶԶ ԳԱԱ Զ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2016

**ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀՈՂՎԱԾՆԵՐ**

<b>Ամիրխանյան Անժելա</b> - <i>Գառ</i> և <i>ղմակ</i> արմատով բուսանուններ.....	6
<b>Բարսեղյան Ամալյա</b> - Նյութական իմաստ ունեցող բառերի կապակցական արժեքը տեքստում.....	14
<b>Գրիգորյան Սուսաննա, Պարոնյան Նաիրա</b> - Մեկնաբանական դիտողությունները Վարդան Արևելցու ճառերում .....	22
<b>Գրիգորյան Սուսաննա</b> - «Սիրտ» բառը գրաբարյան դարձվածային միավորներում.....	30
<b>Դիրբարյան Նարինե</b> - Խեթա-լուվական ենթաշերտը հայկական հնագույն տեղանուններում.....	37
<b>Դոխոյան Ռուզաննա</b> - Վարք արտահայտող բայերի իմաստային դասակարգումը արդի հայերենում.....	46
<b>Զաքարյան Հովհաննես</b> - <i>Լեկ, փոկ</i> և <i>թաղիք</i> բառերի ստուգաբանությունը.....	56
<b>Թաղևոսյան Հասմիկ</b> - Իմաստային նոր դրսևորումներ «Գիրք վաստակոց» երկում .....	66
<b>Թոխմախյան Ռաբերտ, Տիոյան Սուսաննա</b> - Ժխտման կարգը արևմտահայերենում և արևելահայերենում.....	71
<b>Խաչատրյան Ալվարդ, Բարխուդարյան Ալվարդ</b> - Անձնանունների հոլովման յուրահատկությունները Նոր կտակարանի գրաբար և հին հունարեն բնագրերում.....	76
<b>Խաչատրյան Հասմիկ</b> - <i>Աղբ</i> և <i>աղբանոց</i> հասկացությունների բառային դրսևորումները բարբառային հայերենում.....	84
<b>Կատվալյան Վիկտոր</b> - Միջինհայերենյան շրջանի փոխառություններ Բայազետի բարբառում.....	95
<b>Համբարձումյան Վազգեն</b> - Հայերենի տվյալների կարևորությունը հնդեվրոպասեմական առնչությունների ուսումնասիրության մեջ.....	104
<b>Հարությունյան Հասմիկ, Պետրոսյան Լիլիթ</b> - Բառերի կապակցելիության մասին դիտարկումները գրաբարի քերականագիտության մեջ (17-րդ դար).....	111
<b>Հարությունյան Քնար</b> - Դարձվածքները Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում.....	119
<b>Մանուչարյան Սվետլանա</b> - Բարբառային իրողությունները Սուրեն Այվազյանի «Ճակատագիրն հայոց» և «Խնձորեսկ» վեպերում.....	125
<b>Միրքայեյան Ժաննա</b> - Բայի երկրորդական վերլուծական ժամանակները արևմտյան խմբակցության Կարնո, Խարբերդ – Երզնկայի, Սիվրիհիսարի բարբառներում և Անատոլիայի երկու նորահայտ բարբառային միավորներում.....	135
<b>Միրքայեյան Սոնա</b> - Արաբերենի հնչյունական համակարգի արտացոլումը Վանի բարբառում.....	142

<b>Մկրտչյան Գարիկ</b> - Մշո բարբառի տարածման սահմանները ՀՀ Կոտայքի մարզում.....	151
<b>Մկրտումյան Արմինե</b> - Դարձվածային նորաբանությունները և հոմանշային գործածությունները Վ. Թոթովենցի «Բաց կապույտ ծաղիկներ» պատմվածքում.....	158
<b>Ներսիսյան Վարսիկ</b> - Հայերենի <i>համաձայնել</i> և <i>համաձայնվել</i> բայերի իմաստային տարբերակման հարցի շուրջ.....	165
<b>Չուլքեան Յակոբ</b> - Ընթացակցական դերբայի խնդիրը արևմտահայերենի մեջ.....	172
<b>Պողոսյան Նորայր</b> - Նոր ձևությունների առաջացումը և գործածությունը հետգրաբարյան շրջանում.....	180
<b>Սարգսյան Արմեն Շ.</b> - Անձնանունը՝ զավեշտի հենք հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում.....	184
<b>Սարգսյան Արմեն, Մինասյան Շողեր</b> – Ղարաբաղի բարբառի դարձվածների հնչերանգային առանձնահատկությունները.....	194
<b>Սիրունյան Տիգրան</b> - Հովհաննես Քոնեցու քերականության սահմանումների լատիներեն նախօրինակները.....	200

## ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

<b>Գրիգորյան Գայանե</b> – Խոսակցական և գրական լեզուների տեմպի համեմատական քննություն.....	209
<b>Ղուկասյան Սևակ</b> - <i>Այո-ոչ</i> հարցումները Մատթեոսի արևելահայերեն և արևմտահայերեն ավետարաններում.....	213
<b>Մելքոնյան Հեղինե</b> - Հավելադրությունը և զեղչումը՝ հակոտնյա միտումներ. դրսևորումները հայերենում.....	219
<b>Տեր Մերկերյան Ռոբեր</b> - Արդի հայերենի երկու տարբերակների փոխհարաբերությունների հարցեր.....	229
<b>Ֆիշենկճեան (Ֆչևկջեան) Անի</b> – Արևմտահայերենի խոնարհման համակարգի հերթական տարբերությունները.....	237

**ԳԱՌ ԵՎ ՉՄԱԿ ԱՐՄԱՏՈՎ ԲՈՒՄԱՆՈՒՆԵՐ**

Հայոց լեզվում գոյություն ունեն կենդանիների անուններով կազմված մեծ թվով բույսեր, որոնց ուսումնասիրությունը ազգաբանական ուշագրավ երևույթ է: Այդ անունները, լինելով ժողովրդի աշխարհընկալման ու լեզվամտածողության արգասիք, առաջացել են ըստ որևէ հատկանիշի (ձև, չափ, համ, հոտ, գույն և այլն) նմանության, ծիսական, հավատալիքային, բուժական ու բազմաթիվ այլ իրողություններով<sup>1</sup>, և ինչպես Թեոդիկն է գրում, «ռամիկը հեզնութին խառնած է գործին մեջ, ինչ ինչ վայրի թուփեր ու միրգեր մկրտելու առթիւ... անձնիր բառ յաճախ փոխաբերութիւն մըն է, տեսակ մը գովեստ կամ պարսաւ և կամ նմանակերպութիւն»<sup>2</sup>:

Սովորաբար վայրի օգտակար բույսերի անունները կազմվել են ոչ միայն ընտանի (եզ, մաքի, խոյ և այլն), այլև դրական վերաբերմունքի արժանացած վայրի կենդանիների (եղնիկ, կաքավ, արծիվ և այլն) անուններով: Քիչ կարևորություն ունեցող կամ վնասակար բույսերին երբեմն տվել են բացասական վերաբերմունքի արժանացած ընտանի (էշ, շուն, խոզ և այլն) կամ վայրի (գայլ, օձ, մուկ և այլն) կենդանիների անուններ:

Երբեմն կենդանիների անուններով են կոչվում նույն բույսի ավելի քիչ պիտանի կամ վատորակ տարատեսակները<sup>3</sup>: Կ. Գաբիկյանը նշում է, որ «ըստ ժողովրդային բուսաբանութեան, ամեն բոյս իր խալըլիկը-գայն կեղծողը, անոր միմուսը, ծաղրաձուն ունի», որոնք հաճախ կազմվում են կենդանու անունով կամ սուտ բառով<sup>4</sup>: Օրինակ, մասուրի, ավելուկի և ալոճի լավագույն տեսակները կոչվում են խաս մասուր<sup>5</sup>, խաս ավելուկ<sup>6</sup> և խնկալուջ<sup>7</sup> (խնկալոճ)<sup>8</sup>: Մասուրի անորակ համարվող տեսակները, որոնք բարակ պտղամիս և խոշոր կորիզներ ունեն, կոչվում են շան մասուր, իշու մասուր, խոզու մասուր<sup>9</sup>, արջամասուր<sup>10</sup> և այլն: Իշու ավելուկը<sup>11</sup>, իշու անթառամը<sup>12</sup>, իշու մանդակը<sup>13</sup>,

<sup>1</sup> Ղ. Ալիշան, *Հայրուսակ կամ հայկական բուսաբանութիւն*, 1895, Վենետիկ, էջ 111: Կ. Գաբիկեան, *Հայ բուսաշխարհ*, Երուսաղեմ, 1968, էջ Թ: Ա. Ամիրխանյան, *Դաշտային ազգագրական նյութեր* (այսուհետև՝ ԴԱՆ), Լոռու մարզ, 2009-2013, Տավուշի մարզ, 2014-15:

<sup>2</sup> Թեոդիկ, *Ամենուն Տարեցոյցը*, 20-րդ տարի, Վենետիկ, 1926, էջ 92:

<sup>3</sup> ԴԱՆ, Լոռու մարզ, Գուգարք, 2012:

<sup>4</sup> Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ ԺԵ:

<sup>5</sup> Կ. Բորյան, *Երկրագործական մշակույթը Հայաստանում*, Ե., 1972, էջ 12:

<sup>6</sup> ԴԱՆ, Լոռու մարզ, Օթթեր, 2011:

<sup>7</sup> Կ. Պետոյան, *Սասնա ազգագրությունը*, Ե., 1965, էջ 484:

<sup>8</sup> Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 88:

<sup>9</sup> Նշվ. աշխ., էջ 71:

<sup>10</sup> ԴԱՆ, Լոռու մարզ, Դսեղ, 2011: Արթրի, 2013:

<sup>11</sup> ԴԱՆ, Լոռու մարզ, Նոր Խաչակապ, 2009:

<sup>12</sup> Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 70:

<sup>13</sup> Նշվ. աշխ., էջ 71:

շան ալոճը<sup>14</sup>, իշու մատիտեղը (իշու բանջար, սուտ մատիտեղ)<sup>15</sup>, արջի նվիկը (օձու նվիկ)<sup>16</sup>, շնթելուկը<sup>17</sup>, շնբոխը<sup>18</sup> (շնրպեքի)<sup>19</sup> համարվում են անարգ, ոչ ուտելի տեսակներ:

Հաճախ անունների ձևավորումը պայմանավորված է կենդանու վրա բույսի ունեցած ազդեցությամբ: Օրինակ, կատուները շատ են սիրում կատվարմատ (կատվի խոտ, կատվի դեղ)<sup>20</sup> բույսը, լվխուղի<sup>21</sup> հոտից լվերը սատկում են, մղամուճի պտուղները թռչուններն ուտում են, դրա համար էլ կոչվում է ճնճղուկի խեժ<sup>22</sup> և այլն:

Հայաստանի տարբեր պատմաագագրական շրջաններում, անգամ նույն բնակավայրում, յուրաքանչյուր բույս ունի մի քանի անուն, որը թերևս կարելի է բացատրել մի շարք հանգամանքներով: Դրանցից է բնակչության տեղաշարժը, երբ պատմական Հայաստանի տարբեր բնակավայրերից մարդիկ պարտադրված հեռացել են և բնակություն հաստատել այլ վայրերում՝ շարունակելով բույսերին տալ իրենց իմացած անունները:

Երբեմն նույն բույսի անունները կազմվում են ըստ տարբեր հատկանիշների՝ մի դեպքում որևէ առարկայի նմանությամբ, մեկ այլ դեպքում՝ ըստ բուժական նշանակության, համի և այլն: Օրինակ, լոշտակը կոչվում է նաև մարդարմատ<sup>23</sup>, օձի խաղող<sup>24</sup> և այլն: Մարդարմատ անվանումը բացատրվում է այն բանով, որ բույսի արմատը մարդու մարմնի նման է: Հնագույն ժամանակներից գերբնական հատկություններով բնորոշվող լոշտակի օձի խաղող անվանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ բուժիչ լինելու և դառը համի համար համեմատվել է նույնպես գերբնական համարվող օձի հետ, որի թույնը մեծ կիրառություն է ունեցել ժողովրդական բժշկության մեջ:

Մեծ տարածում ունեն նաև այն բուսանունները, որոնք կազմվել են որևէ մեծ մասամբ մշակովի, բույսի անունով: Լոշտակի փաթաթվող և մագլցող հատկությունը նմանեցվել է խաղողի հետ՝ կազմելով ոչ միայն օձի խաղող, այլև սպիտակ որթատունկ<sup>25</sup> անվանումները:

Հայաստանը հնագույն ժամանակներից եղել է ոչ միայն երկրագործական, այլև անասնապահական մշակույթի երկիր, որտեղ զարգացած էր ոչ միայն խոշոր, այլև մանր եղջերավոր անասնապահությունը: Հետևաբար օրի-

---

<sup>14</sup> Նշվ. աշխ., էջ 174:

<sup>15</sup> Նշվ. աշխ., էջ 70, 221:

<sup>16</sup> Նշվ. աշխ., էջ 22:

<sup>17</sup> **Մահակ վարդապետ Ամատունի**, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 518:

<sup>18</sup> ԴԱՆ, Լոռու մարզ, Լեռնանցք, 2009:

<sup>19</sup> ԴԱՆ, Տավուշի մարզ, Թեղուտ, 2014:

<sup>20</sup> **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 305: **Ա. Թորոսյան**, *Հայաստանի դեղաբույսերը*, Ե., 1983, էջ 155:

<sup>21</sup> **Վ. Պետոյան**, նշվ. աշխ., էջ 478:

<sup>22</sup> **Ս. Հակոբյան**, *Հայկական բնաշխարհի դեղաբույսերը*, Ե., 1975, էջ 91:

<sup>23</sup> **Մտ. Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 2, Ե., 1944, էջ 224: **Ա. Թորոսյան**, նշվ. աշխ., էջ 96:

<sup>24</sup> **Կ. Գաբրիելյան**, նշվ. աշխ., էջ 255: **Ա. Թորոսյան**, նշվ. աշխ., էջ 96:

<sup>25</sup> Նշվ. աշխ., էջ 98:



նաչափ է այն հանգամանքը, որ հայոց լեզվում մեծ թիվ են կազմում ընտանի կենդանիների անուններով բույսերը, որոնցից սույն հոդվածում անդրադարձել ենք «գառ» և «դմակ» բառերով կազմված անուններին:

«Գառ» բառը ծագում է բնիկ հնդեվրոպական «*waren*» (խոյ, ոչխար, գառ) արմատից<sup>26</sup> և հայերենում գործածվում է միայն դրական իմաստով:

Հիսուս Քրիստոսը, իբրև անբիծ և անարատ գառ, կոչվում է գառն Աստծո, որն իր արյունը թափեց մարդկության մեղքերի քավության համար: Այս խորհրդով էլ Հովհաննես Ավետարանիչի նշանավոր տեսիլքում Աստծո որդին բազմիցս ներկայացված է գառան կերպարանքով<sup>27</sup>: Այդ իսկ պատճառով Հիսուս Քրիստոսի՝ գառն աստծո անվանումը ժողովրդական մտածողությամբ վերագրվում է ազնիվ, պարկեշտ, ողջախոհ և հեզաբարո մարդկանց<sup>28</sup>:

«Գառ» նշանակում է մատղաշ, անվնաս, անմեղ: Որպես փաղաքշական վերաբերմունքի արտահայտություն՝ այդպես են դիմում նաև մանուկներին<sup>29</sup>: Նույն մտածողությամբ մանկությունը երբեմն կոչվել է «գառնույթ», իսկ Օտղկազարդին կարկաչա ածող երեխաներին բաժանվող խաշած ցորենը՝ «գառնահատիկ»<sup>30</sup>:

Երեխայի կաթնատամը նետում էին թոնրի ակի մեջ ու մի քանի անգամ կրկնում. «Առ քե շան ատամ, տու ընձի գառի ատամ»<sup>31</sup>:

«Գառան բերան» է կոչվում զարնանային անուշ գեփյուռը<sup>32</sup>, «գառու բերան դարձավ» արտահայտությունը նշանակում է անուշանալ, քաղցրալեզու դառնալ<sup>33</sup>, «Գառան աչք, գառնաչքանի» են անվանում անուշ, հեզ հայացք ունեցողներին<sup>34</sup>: Թարմ, փափուկ հացը կոչվել է «գառ գաթա»<sup>35</sup>:

Պատմական Հայաստանում «գառ» արմատով կան բազմաթիվ տեղանուններ (Գառաձոր, Գառասնի, Գառաշից, Գառնակերտ, Գառնակ, Գառնաբերդակ, Գառնեղի, Գառնեն, Գառնավուկ և այլն)<sup>36</sup>, որոնցից Գառնի տեղա-

<sup>26</sup> Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 151:

<sup>27</sup> *Ավետարանը ըստ Հովհաննեսի*, Ա 29:

<sup>28</sup> Հր. Աճառեան, *Հայերեն գալարական բառարան*, հ. Թ, *Էվինեսան ազգագրական ժողովածու*, Թիֆլիս, 1913, էջ 219: Ա. Սուրբխայան, Ս. Գալստյան, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, Ե., 1975, էջ 67:

<sup>29</sup> Կ. Գաբրիկեան, *Բառգիրք սեբաստահայ գալարալեզուի*, Երուսաղեմ, 1952, էջ 133: Մու. Մալխասյանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 413:

<sup>30</sup> Մու. Մալխասյանց, նշվ. աշխ., էջ 414: Հր. Աճառեան, նշվ. աշխ., էջ 219-20:

<sup>31</sup> Բենսե, *Բուլանըն կամ Հարք գավառ*, ԱՀ, Ե գիրք, Թիֆլիս, 1899, էջ 133: Ե. Լալայան, *Բայազետի գավառ կամ Գեղարքունիք*, ԱՀ, գիրք XVI, Թիֆլիս, 1907, էջ 44: Վ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 282:

<sup>32</sup> Մու. Մալխասյանց, նշվ. աշխ., էջ 413: Հր. Աճառեան, նշվ. աշխ., էջ 219:

<sup>33</sup> Նշվ. աշխ., էջ 219:

<sup>34</sup> Նշվ. աշխ., էջ 220: Մու. Մալխասյանց, նշվ. աշխ., էջ 414:

<sup>35</sup> Կ. Գաբրիկեան, նշվ. աշխ., էջ 133:

<sup>36</sup> Թ. Հակոբյան, Մու. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 1, Ե., 1986, էջ 90-91:

նունն ըստ Մովսես Խորենացու կապվում է Գեղամ նահապետի թոռ Գառնիկի անվան հետ<sup>37</sup>:

Գառան վերաբերյալ դրական պատկերացումները տարածվել են նաև բուսանունների վրա, տրվելով այդ արմատով կազմված այն բույսերին, որոնք կիրառվում են ուտեստի համակարգում, ծխական զանազան արարողություններում, ժողովրդական բժշկության մեջ և այլն:

Դրանցից է ողջախոհ գառան ծառիկը, որը թերևս գոթից ճանկ (գոտեաց ճանկ) բույսն է: Այն համարվել է պարկեշտություն և կուտություն պահող, որի համար կանայք տերևները տան մեջ են դրել, իսկ ճյուղերից իրենց համար գոտի հյուսել: Ժողովրդական բժշկության մեջ սերմերը և տերևները կիրառել են օձի կամ այլ կենդանիների կծածը, վավաշտությունը բուժելու համար, իսկ վառվող բույսի ծխի միջոցով վանել են վնասակար կենդանիներին<sup>38</sup>:

Քաջունին գրում է, որ այս բույսը մի տեսակ ձարխոտ է, աճում է նաև Եվրոպայում և լատիներեն կոչվում է «Agnus castus», որը պարկեշտ, ողջախոհ գառ է նշանակում: Բույսը, որպես կասեցուցիչ ցանկության, «տային հաւատար կանանց յայն պէտս», իսկ ծաղիկը զուգորդվել է սրբության և ողջախոհության հետ<sup>39</sup>:

Ըստ Քաջունու և Գաբիկյանի ենթադրության՝ ողջախոհ գառան ծառիկը Եգիպտոսի Կողբացու հիշատակած կանեփուկն է, որի մասին նա գրել է. «Կանեփուկը մի թուփ է, որի սերմը դեղ է և նույնն էլ դարձյալ ցանկությունից զցող է»<sup>40</sup>:

Հայերենում գառ բառով կազմված բույսերից են նաև գառնուկը<sup>41</sup>, գառի խոտը,<sup>42</sup> գառնառվույտը, գառնեղերդը,<sup>43</sup> գառնջիկը, գառին ծաղիկը<sup>44</sup> և այլն, ինչպես նաև սև, մանրահատ, թանձրամաշկ գառումաքի (գառնումաքի) խաղողն<sup>45</sup> ու գառմակ սեխը<sup>46</sup>:

Ըստ երևույթին, բույսերի նմանատիպ անունների ստեղծման համար կարևորվել են «գառ» բառի մատղաշ, նորատի, մատաղ իմաստները, որոնք զուգորդվում են այն հանգամանքի հետ, որ խոտաբույսերը հիմնականում հավաքում են նոր դուրս եկած ժամանակ, երբ դալար են և հյութեղ:

<sup>37</sup> Մ. Խորենացի, *Հայոց պատմություն*, Ե., 1981, էջ 115:

<sup>38</sup> Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 128-129: Գ. Գաբիկեան, *Հայ բուսաշխարհ*, էջ 184:

<sup>39</sup> Ի. Հ. Մանուկ վարդապետ Քաջունի, *Բարզիք արուեստից եւ գեղեցիկ դպրութեան*, հ. 1, Վենետիկ, 1891, էջ 47:

<sup>40</sup> Ե. Կողբացի, *Շոժ աղանդոց*, Ե., 1970, էջ 60:

<sup>41</sup> Գ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 39: Հր. Աճառեան, *Հայերէն գաւառական բառարան*, էջ 220: Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 110:

<sup>42</sup> Ե. Լալայան, *Երկեր*, հ. 1, Ջավախք, Ե., 1983, էջ 53:

<sup>43</sup> Ռ. Ղազարյան, *Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարան*, Ե., 1981, էջ 20:

<sup>44</sup> Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 110:

<sup>45</sup> Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 70: Գ. Գաբիկեան, *Բարզիք սեբաստահայ գաւառալեզուի*, էջ 133:

<sup>46</sup> Նշվ. աշխ., էջ 45: Մ. Ամատունի, նշվ. աշխ., էջ 125:

Բնականաբար, գառ բառով կազմված անունների մի մասն առաջացել է նմանության հենքի վրա, օրինակ, տերևները նմանեցվել են գառան ականջի, լեզվի հետ և այլն (գառնականջիկ<sup>47</sup>, գառան ականջ, գառնականջ<sup>48</sup>, գառնալեզու<sup>49</sup>, գառան տոտիկ<sup>50</sup>, գառան թշիկ<sup>51</sup> և այլն):

Բույսերի մեջ որոշակի խումբ են կազմում նաև «գառ» և «դմակ» բառերով կապակցված անունները:

«Դմակ» բառն իրանական փոխառություն է, ծագում է «duma» (պոչ) բառից<sup>52</sup>: Հայերենում այլաբանորեն ընկալվում է նաև պարարտ, փարթամ, խոշոր իմաստով (օրինակ դմակ թուր)<sup>53</sup>:

Հավանաբար գառան դմակ կոչվող բույսերի համար կարևորվել է ոչ միայն արտաքին նմանությունը, այլև գառ-մատղաշ և դմակ-պարարտ փոխաբերական իմաստները:

Հայաստանի պատմաագագրական շրջաններում նույն՝ գառան դմակ (գառնադմակ, գառնադմակիկ, գառան դմակիկ, կյառնի տմակ) անվանումով հայտնի են ոչ միայն որոշակի թվով տարբեր խոտաբույսեր<sup>54</sup>, որոնք հիմնականում ունեն մտոտ և հյութեղ տերևներ կամ էլ դմակի նմանվող ծաղիկներ, այլև խաղողի սորտ, որն ունի սպիտակ, մանր հատիկներ, բարակ կեղև ու քիչ կորիզ<sup>55</sup>:

Գառան դմակ են կոչվում նաև գրեթե բոլոր ուտելի սնկերը<sup>56</sup>, որոնք հավաքում են նոր դուրս եկած ժամանակ՝ երբ մատղաշ են, փափուկ և հյութեղ:

<sup>47</sup> Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 20: Սո. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 414:

<sup>48</sup> Ղ. Այիշան, նշվ. աշխ., էջ 110: А. Ролловъ, *Дикорастущія растения Кавказа, ихъ распространение, свойства и примѣненіе*, Тифлис, 1908, с. 348. Սո. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 414: Կ. Գաբրիկեան, *Հայ բուսաշխարհ*, էջ 39: Յ. Մալխասեան, *Հայ գեղջուկի պլուր*, ԱՀ, Ջ գիրք, Թիֆլիս, 1900, էջ 200:

<sup>49</sup> Կ. Գաբրիկեան, նշվ. աշխ., էջ 39: Սո. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 413: Ա. Մերասաացի, *Գիրք բժշկական արհեստի (XVI-XVII դդ.)*, Ե., 1993, էջ 240: Ռ. Ղազարյան, նշվ., աշխ., էջ 20: Ա. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 66:

<sup>50</sup> Կ. Գաբրիկեան, նշվ. աշխ., էջ 39, 54:

<sup>51</sup> Հր. Աճառեան, նշվ. աշխ., էջ 219: Սո. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 413:

<sup>52</sup> Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 201:

<sup>53</sup> Ղ. Այիշան, նշվ. աշխ., էջ 147: Յ. Գայայեան, *Բառարան գանձարան հայերեն լեզուի*, Գահիրե, 1938, էջ 105:

<sup>54</sup> Գ. Մրվանձտյան, *Երկեր*, հ. 1, Ե., 1978, էջ 353, 153: Ս. Մովսիսյան (Բենե), *Հարք (Մշո Բուլանքի)*, ՀԱԲ, հ. 3, Ե., 1972, էջ 71: Ս. Ամատունի, նշվ. աշխ., էջ 125: Կ. Գաբրիկեան, նշվ. աշխ., էջ 38, 220: Ռ. Գարուկյան, *Շատախ գավառի ազգագրական նյութեր*, ՀԱԲ, ԱԲԱ, գործ 14, թերթ 247: Հ. Հովակիմյան, *Գողթն գավառի Բիստ գյուղի ազգագրություն*, ՀԱԲ, ԱԲԱ, գործ 71, թերթ 79: Ա. Բարսեղյան, *Մոկաց ազգագրական նյութեր, գործ 8, մաս 1, թերթ 247*: Ա. Հարությունյան, *Տարունի ազգագրական նյութեր*, ՀԱԲ, ԱԲԱ, գործ 69, էջ 8: Ան. Հովակիմյան, *Կարբիի ազգագրական նյութեր*, ՀԱԲ, ԱԲԱ, գործ 70, մաս 1, էջ 79: А. Bedevian, *Illustrated polyglottic dictionary of plant names*, 1936, Cairo, էջ 205, 468, 540-542: ԴԱՆ, Լոռու մարզ, Ջրաշեն, Արորի, 2013:

<sup>55</sup> Ղ. Այիշան, նշվ. աշխ., էջ 109: Կ. Գաբրիկեան, նշվ. աշխ., էջ 38, 45: Ս. Ամատունի, նշվ. աշխ., էջ 125: Թեղիկ, նշվ. աշխ., էջ 70: Հր. Աճառեան, նշվ. աշխ., էջ 219: Սո. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 413:

<sup>56</sup> С. Нанаголян, *Шляпочные грибы Армении (агарикоидные базидиомицеты)*, Ե., 2008, с. 12.

Այդ բույսերի մի մասը, որոնց Քաջունին անվանում է գառնադմակայք, պատկանում է թանձրատերևազգիների (crassulaceae) ընտանիքին: Ի դեպ, լատիներեն «crassula» բառը նշանակում է թանձր, գեր և իմաստով զուգորդվում է «դմակ» բառի հետ<sup>57</sup>:

Տարբեր, սակայն նույնանուն բույսերը շփոթությունների տեղիք են տալիս ու պարզաբանումների անհրաժեշտություն առաջացնում: Երևույթն առկա է նաև «գառ» բառով կազմված և գառան դմակ կոչվող բույսերի պարագայում: Այս դեպքում մեզ երբեմն օգնում են բույսի տարանունները և եղած նկարագրությունները:

Մասնավորապես Գաբիկյանի նկարագրած գառնուկ (եղեսպակ, մեղրթեր, պապուկ) բույսը, որի տերևներով տոլմա են փայթաթել, իսկ մատղաշ ցողունները կեղևեղով կերել, երկու տեսակ է՝ պարտեզի գառնուկ և լեռան գառնուկ (վայրի)<sup>58</sup> և տարբերվում է Աճառյանի ու Մալխասյանի նկարագրած բույսից, որը նաև գառնուկ խոտ է կոչվել ու որպես համեմունք օգտագործվել պանիր պատրաստելու ժամանակ<sup>59</sup>:

Թթվառվույտը կոչվում է նաև գառնականջիկ<sup>60</sup>, թրթնջուկը՝ գառան ականջ<sup>61</sup>, գառնալեզուն՝ գաղտիկուր կամ ջղախոտ<sup>62</sup>:

Գառան տոտիկը մանր ու բազմաթիվ ծաղկաթերթիկներ ունենալու համար կոչվում է հազարաթերթիկ, հին գերեզմանոցներում առատորեն աճելու համար՝ մեռելի ծաղիկ<sup>63</sup>, ինչպես նաև երդեց (երթից) խոտ, օձու խոտ և այլն: Վիրախոտ, պատերազմական խոտ անվանումը բացատրվում է այն բանով, որ վիրավոր զինվորները բույսն օգտագործել են վերքեր բուժելու և արյունահոսությունը դադարեցնելու համար<sup>64</sup>:

Գառան դմակ, գառնադմակ, գառնադմակիկ են կոչվում դովլաթի ծաղիկը (մեծ գառնադմակիկ, բաղդածաղիկ, հովվի պաշար, ջահրա)<sup>65</sup>, թանթոնիկը<sup>66</sup> և թրթնջուկը<sup>67</sup>: Վերջինս, գառան ականջից ու գառան դմակից բացի, կոչվում է նաև գառնական և հումագ<sup>68</sup>:

<sup>57</sup> Մ. Քաջունի, նշվ. աշխ., էջ 588: Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 38:

<sup>58</sup> Նշվ. աշխ., էջ 39, 196:

<sup>59</sup> Հր. Աճառեան, նշվ. աշխ., էջ 220: Մո. Մալխասեան, նշվ. աշխ., էջ 414:

<sup>60</sup> Նշվ. աշխ., էջ 414: Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 20:

<sup>61</sup> Ղ. Ալիջան, նշվ. աշխ., էջ 110: А. Ролловъ, նշվ. աշխ., էջ 348: Մո. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 414: Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 39:

<sup>62</sup> Նշվ. աշխ., էջ 39: Մո. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 413: Ա. Սեբաստացի, նշվ. աշխ., էջ 240: Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 20: Ա. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 66:

<sup>63</sup> Նշվ. աշխ., էջ 171:

<sup>64</sup> Նույն տեղում: Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 39, 54:

<sup>65</sup> Նշվ. աշխ., էջ 38:

<sup>66</sup> А. Ролловъ, նշվ. աշխ., էջ 464: Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. 1, 1976, էջ 221: Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 20:

<sup>67</sup> Հր. Աճառեան, նշվ. աշխ., էջ 219:

<sup>68</sup> Ասար Սեբաստացի, նշվ. աշխ., էջ 357:

Փոքր գառնադմակիկը կոչվում է նաև գալու խաղող, կոծիծ խոտ<sup>69</sup>, փռան խաղող, բռան թուր<sup>70</sup> և այլն:

Բոսորագույն բաղդածաղիկը համարվել է հայոց աշխարհի ամենագեղեցիկ ծաղիկներից, որ աղջիկները դեռ չբացված հավաքել են ու գուշակություններ անելու համար տուն տարել: Ում ծաղիկը շուտ բացվել և երկար մնար, նա էլ առաջինը պիտի պսակվեր ու երջանկության արժանանար: Պանդուխտների հաջողության համար նույնպես նրանց հարագատները այս ծաղկը տուն էին տանում:

Բաղդածաղիկի գառնադմակիկ անունը կապված է այն բանի հետ, որ բույսն ունի «գառան դմակի պես տափակ, մսալի, թանձր, ջրուտ տերևներ», որոնք գործածվել են սննդի մեջ<sup>71</sup>:

XVII դ. տաղերգու Դավիթ Սալաձորեցին հայտնի է որպես ծաղիկների երգիչ, որի «Գովասանք ծաղկանց» տաղում հիշատակվում է նաև գառնադմակը.

Ակընջուկն ու գառնադմակն կարօտ են մանուշկին տեսուն.

Հասրաթ են իրար տեսնելու մուրտն ու շուշան ու բրաբիոն...<sup>72</sup>

Սակայն այսօր դժվար է ասել, թե Սալաձորեցին ինչ ծաղիկ նկատի ուներ, և նրա հիշատակած գառնադմակն ու մեր հիշատակած բաղդածաղիկն արդյոք նո՞ւյնն են:

Վերոնշյալ հանգամանքները ցույց են տալիս, որ գառան դմակը բուսանուններին տրվող կայուն բառակապակցություն է: Կարելի ենթադրել, որ այն որոշակի հատկություններով ուտելի վայրի բույսերին տրված ընդհանրական անուն է, որ տարածված է եղել պատմական Հայաստանի բոլոր ազգագրական շրջաններում:

Այսօր դժվար է տարբերակել գառան դմակ անունով բոլոր բույսերը, քանի որ ցեղասպանության և հետագա իրադարձությունների, սերունդների միջև կապի խզման, տնտեսության ու կենցաղի փոփոխության հետևանքով մենք կորցրել ենք նաև բույսերի մասին ողջ տեղեկատվությունը, մասնավորապես դրանց նկարագրությունն ու կիրառությունը և հիմնվում ենք միայն գրավոր աղբյուրների ու Հայաստանի Հանրապետության տարածքում կատարած դաշտային աշխատանքների վրա:

Anjela Amirkhanyan - Plant names composed of the roots gar (lamb) and d'mak (fat tail). - In the Armenian language plant names containing the root gar are not only arranged considering any organ (ear, tongue etc.) but also the figurative sense of the word "lamb" in the meaning of "young, fresh", for those plants are to be gathered in the period when they are fresh and juicy.

<sup>69</sup> Գ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 39:

<sup>70</sup> Նշվ. աշխ., էջ 244: Անվանումն առաջացել է այն հանգամանքից, որ բույսն աճում է բուռերում (կրահողերում):

<sup>71</sup> Նշվ. աշխ., էջ 38:

<sup>72</sup> Գ. Սալաձորեցի, Գովասանք ծաղկանց, Գ. Մրվանձտյանց, Համով-հոտով, Կ. Պոլիս, 1884, էջ 282:

In the Armenian language there is a considerable number of plant names containing the words *gar* and *d'mak*. Under the collocation “*garan d'mak*” a sort of grapes, dozen of grass plants and almost all the edible mushrooms are known. The word *d'mak* also means thick, fleshy, succulent in Armenian. Probably, giving names to plants with thick and fleshy leaves it was important to underline the figurative sense of the words “*lamb*” as “*fresh*” and “*fat tail*” as “*thick*”.

The above mentioned highlights that the collocation *garan d'mak* is stable in plant names. Supposedly, it in some sense is a common name for edible wild plants, distributed all through the ethnographic regions of historical Armenia.

Анжела Амирханян - Названия растений, составленные из корней “*гар*” (ягненок) и “*д'мак*” (курдюк). - В армянском языке названия растений, содержащие корень “*гар*” составлены не только на основе какого-либо органа (ухо, язык и т. д.), но и согласно переносному смыслу слова “ягненок” как “юный, свежий”, так как эти растения собирают в такое время, когда они свежи и сочны.

В армянском языке значительно также число растений, названия которых содержат слова “*гар*” и “*д'мак*”. Под названием “*garan d'mak*” известен сорт винограда, десяток трав, так называются также почти все съедобные грибы. Слово “*д'мак*” в армянском обозначает также тучность, мясистость, сочность. Вероятно, давая названия растениям с мясистыми и толстыми листьями, важной особенностью были именно переносные смыслы слов “ягненок” как “свежий” и “курдюк” как “толстый”.

Вышеозначенное указывает на то, что словосочетания “*garan d'mak*” является устойчивым для названий растений. Можно предположить, что оно в некоторой степени является общим названием для съедобных дикорастущих растений, распространенных во всех этнографических районах исторической Армении.

**ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՄԱՍՏ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՌԵՐԻ  
ԿԱՂԱԿՑԱԿԱՆ ԱՐԺԵՔՆ ՏԵՔՍՏՈՒՄ**

Տեքստը կապակցված ամբողջություն է, որի մեջ լեզվական կարգերի (կատեգորիաների) արտահայտությունը ավելի ամբողջական է:

Տեքստի կապակցվածությունը իրականանում է ներտեքստային կապերի միջոցով:

Տեքստի լեզվաբանությունը ձևավորվել է XX դ. 60-ական թվականներին: Սկզբնական շրջանում ուսումնասիրվում էին տեքստը, նրա կառուցվածքը, լեզվական միջոցները, բաղադրիչների կապակցման օրինաչափությունները:

Այդ շրջանում երևան եկան մի շարք ուղղություններ (տեքստի ընդհանուր լեզվաբանություն, տեքստի պրագմատիկ լեզվաբանություն, իմացաբանական ուղղություն), որոնք տեքստի ուսումնասիրության ժամանակ նոր մոտեցումներ ունեցան (տեքստաբանական, տեքստի մեկնաբանության, հանրահոգելեզվաբանական և նշանահոգելեզվաբանական, լեզվամշակութաբանական, լեզվահոետորական): Ժամանակակից մոտեցումներում առաջնային է համարվում տեքստի ուսումնասիրության խոսույթային (дискурсивный подход) մոտեցումը<sup>73</sup>:

Տեքստաբանության մեջ կան տեքստի և նրա նվազագույն միավորի ըմբռնման տարբեր կարծիքներ (Մ. Տիցման, Թ.վան Դելկ, Գ.Ջահուկյան և այլն):

Տեքստաբանության ժամանակակից ուղղություններում տեքստը հիմնականում դիտարկվում է որպես համակարգված կառուցվածքային բարձրագույն միավոր, որ «բովանդակում է հաղորդում աշխարհի մի հատվածի վերաբերյալ, կազմված է հեղինակի մտահղացումով, ունի կառուցվածքային (կոմպոզիցիոն), իմաստաբանական և գործաբանական (պրագմատիկ) միասնություն, վերամշակված է լեզվի գործառական և ոճական նորմերի համապատասխան»<sup>74</sup>:

Տեքստի նվազագույն միավորի՝ պարբերության մեջ նախադասությունների միջև առկա են միևնույն հարաբերությունները, ինչ բարդ նախադասության բաղադրիչների միջև: Մինչդեռ հեղինակի ոճով և արտաքին իրադրությանը պայմանավորված, այդ հարաբերությունները ավելի քիչ են արտահայտվում հարաբերիչ բառերով: «Սակայն բոլոր դեպքերում էլ մասերի միջև առկա են կարգային (կատեգորիական) և տերմային այն իմաստները, որ խմբավորված են ՀԼԿ-ի և որոշ վերապահությամբ նախադասության անդամների ընդհանուր ավանդական ուսմունքի մեջ»<sup>75</sup>:

<sup>73</sup> **В.А.Маслова**, *Современные направления в лингвистике*, М., 2008, էջ 21-22:

<sup>74</sup> Ն. տ., էջ 27:

<sup>75</sup> **Գ.Բ.Ջահուկյան**, *Շարահյուսական ուսումնասիրություններ*, Ե., 2003, էջ 65:

Տեքստում պարբերությունները նույնպես կապվում են հատուկ միջոցներով՝ նախաբերիչներով, որի միջոցով հղում է կատարվում նախապես ասվածին (բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, ցուցաբառեր (ներկոնտեքստային): Դրանք են՝ *վերոհիշյալ, վերևում նշվածը* և այլն: Հետաբերիչներով, որի դեպքում հղում է կատարվում ասելիքին (հետևյալը, ստորև բերվող և այլն):

Տեքստում նախադասությունների կապակցման մեջ մեծ է բառական միջոցների դերը:

Դրանք են՝

**ա.** շաղկապներ և շաղկապական բառեր,

**բ.** նյութական իմաստ ունեցող բառական միջոցներ (գոյական, ածական, դերանուն, թվական, բայ, մակբայ),

**գ.** ոչ նյութական իմաստ ունեցող բառական միջոցներ (կապ, եղանակավորող բառեր, ձայնարկություն):

Հոդվածում կանոնադաշտնաք նյութական իմաստ ունեցող բառերից մի քանիսի (գոյական, ածական, դերանուն) կապակցական արժեքին տեքստում, որոնք, բացի նախադասության մեջ կատարած իրենց շարահյուսական դերից, ունեն կապակցման արժեք՝ հարաբերության մեջ մտնելով տեքստ կազմող նախադասությունների հետ:

Այս նկատառումով դիտարկենք մի հատված Նար-Դոսի «Սպանված աղավնի» վիպակից:

«Հիշում եմ նրա *ծնողներին: Հայրը* խստաբարո և կրոնասեր մարդ էր, թեև տերտերներին ատելով ասում էր՝ համարելով նրանց իրենց կոչմանն անարժան մարդիկ, բայց միշտ ժամ էր գնում:

Գարեգինի *մայրը* շատ գեղեցիկ և կենսաթրթիռ մի կին էր, ամուսնուց առնվազն մի քսան տարով փոքր»:

Այստեղ *հայրը, մայրը* գոյականները իմաստային կրկնությամբ կապակցվում են *ծնողներ* գոյականի հետ՝ ստեղծելով ներտեքստային կապեր նախադասությունների և պարբերությունների միջև:

Կարող է հաջորդ նախադասությունում մանրամասն նկարագրվածը կապակցվել նախորդ նախադասության ընդհանուր անվանումով գոյականի հետ՝ դառնալով կապակցման միջոց:

«Ես և իմ ընկեր Անդոն *հաց* ենք տանում նրա հոր՝ բրուտ Ավագի համար: Գունավոր աղյուխի մեջ Անա զիզին փաթաթել է *լավաշ, խորոված սիմինդր, սիստորած լոբի, մի քանի վարունգ* և *մի քիչ պանիր*» (Բակ., Բրուտի տղան):

Կարող է նաև նախորդ նախադասությունում մանրամասն ասվածը ներկայացվել ընդհանուր անվանումով գոյականով, որը դառնում է կապակցման միջոց նախորդ նախադասության հետ:

«Համաձայն եմ պարոն Ավետիքյանի հետ, որ թերթ քիչ են կարդում, բայց մենք մասամբ թերթ կարդալու ծավալները մեծացնելու ուղղությամբ աշխատանքներ ենք իրականացնում: «Մեր պատանի ժուռնալիստների դպրո-



ցում» երեխաների հավաքագրման գործընթացը նպաստում է *խնդրի* նվազեցման» (ՀՀ, 22.12.2015 թ.):

Հաճախ հատուկ անունով անձը կամ առարկան կարող են բնութագրվել հասարակ անունով՝ շրջաստությամբ դառնալով կապակցման միջոց նախադասությունների միջև:

«Միքայել Շաթիրյանի «Արծաթե դար» պատմավեպը լուրջ և հասուն ստեղծագործություն է: *Հեղինակն* ասելիք ունի, ցավ ունի և ամենակարևորը, պատմության փիլիսոփայական ընկալում: Վեպում *պատմաբանն* ու *գեղագետը* հանդես են գալիս օրգանական միասնությամբ, մեկը լրացնում և ճշտում է մյուսին» (ԳԹ, 18.3.2016 թ.):

Կարող է նաև հասարակ անունով գոյականը շրջաստությամբ բնութագրվել հատուկ անունով՝ կապ ստեղծելով նախադասությունների և պարբերությունների միջև:

«Մայրաքաղաքում ամանորյա միջոցառումները կամփոփվեն հունվարի 13-ին՝ «Իմ հին ու Նոր տարի» ծրագրով.

Նախօրեին տոնական մեծ հանդիսությամբ հանրապետության *երկրորդ քաղաքում* ևս վառվեցին գլխավոր տոնածառի լույսերը: *Գյումրու* գլխավոր տոնածառը այս տարի ունի 27 մետր բարձրություն ու շքեղ զարդարանք, բայց ամենակարևորը գյումրեցիներին տոնական տրամադրություն պարզեցնելն է» (ՀՀ, 22.12.2015 թ.):

Կամ՝ «*Աժ նախագահը* գտնում էր, որ 2016 թ. ԼՂՀ հռչակման 25-ամյակը նշելը լավ հնարավորություն է՝ Արցախը և արցախյան թեման օրակարգում ներառելու և միջազգային հարթակներում շրջանառելու համար:

*Խորհրդարանի ղեկավարը* պատասխանեց նաև լրագրողներին հետաքրքրող հարցերին:

Ի պատասխան այն հարցին, թե օրենսդիրն ինչ քայլեր կարող է ձեռնարկել աղբբեջանադարաբաղյան սահմանում տիրող լարվածությունը մեղմելու և միջազգային կառույցների միջոցով Աղբբեջանի վրա հակազդելու համար, *Ա.Ղույանը* նշեց, որ չնայած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդական ջանքերին, Բաքուն շարունակում է ռևանշիստական արկածախնդրությունները՝ լուրջ սպառնալիք հանդիսանալով տարածաշրջանում» (ՀՀ, 25.12.2015 թ.):

Տարբեր կապակցական միջոցներով են կապված «Հայաստանի Հանրապետություն» թերթի հետևյալ հատվածի պարբերությունների նախադասությունները և պարբերությունները:

«*Գործիքները* պատահական երաժիշտների չեն տրամադրում: *Դրանց* արժանանալու համար պետք է որոշ չափով անուն ձեռք բերել (*գործիքները* փոխարինված են *դրանց* դերանունով): *Ամեն անգամ*, երբ կարևոր համերգ եմ ունենում, Լոնդոնի «Ինգլզ և Հեյդեյ» կազմակերպությունն ինձ գործիք է տրամադրում: *Նախորդ անգամ* «*Ստրադիվարիոս*» էին տվել: *Ստրադիվարիոսը* շատ շուտ վաճառվեց («*Ստրադիվարիոս*» գոյականի կրկնությամբ է կապված): *Այս անգամ էլ* հրաշալի «Գվադանինի» են տվել (*ամեն անգամ, նախորդ*

անգամ, այս անգամ կապակցությունները թվարկման հարաբերությամբ են կապում նախորդող և հաջորդող նախադասությունները): Դա էլ արժեքավոր և հզոր գործիք է»,- ՀՀ-ի հետ զրույցում ասաց նա, («Գվադանիինի»-ն փոխարինված է դա դերանունով և կապվել նախորդ նախադասության հետ):

Այդ գործիքով Անին նվագեց «Վերադարձի փառատունում» (երկրորդ պարբերությունը այդ գործիքով դերանվանական կապակցությամբ կապվում է առաջին պարբերության «Գվադանիինի» գոյականի հետ՝ փոխարինման գործառույթով): Այդ առիթով նա Հայաստան էր եկել: Իսկ Հայաստանից մեկնել էր կատարելագործման նպատակով (այդ առիթով դերանվանական կապակցությամբ և նա դերանվամբ փոխարինման գործառույթով կապված է երկրորդ պարբերության առաջին նախադասության հետ, իսկ Հայաստան գոյականը կրկնության միջոցով՝ հաջորդ նախադասության հետ):

Անին առաջինն էր, ով ստացել է Րաֆֆի Մանուկյանի կրթաթոշակը՝ ուսումը շարունակելու Լոնդոնի թագավորական ակադեմիայում (պարբերության վերջին նախադասությունը Անի հատուկ անվան կրկնությամբ կապվում է պարբերության առաջին նախադասության հետ):

Ասուլիսներից մեկի ժամանակ Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը հետևյալ ձևակերպումը հնչեցրեց՝ Եթե հավաքենք Եվրոպայի մեր երիտասարդ կատարողներին, կարելի է 3-4 սիմֆոնիկ նվագախումբ կազմել:

Միայն թե այդ կատարողներից շատերի մասին այստեղ՝ Հայաստանում ոչ բոլորը գիտեն:

Միության նախագահն ավստոսում է. «Այդպիսի երիտասարդներն արտասահմանում դահլիճներ են լցնում, իսկ մեզ մոտ ճանաչված չեն» (ՀՀ, 11. 11. 2015 թ.):

Վերջին երեք պարբերություններում ասելիքը հղում է կատարվում հետևյալ հարաբերիչով՝ կապ ստեղծելով նրանց միջև: Նախավերջին պարբերությունը այդ կատարողներից դերանվանական կապակցությամբ փոխարինման գործառույթով է կապված առաջին պարբերության հետ: (Եվրոպայի մեր երիտասարդ կատարողները փոխարինված են այդ կատարողներով): Վերջին պարբերությունը միության նախագահը զեղչման կապակցման միջոցով (հիմքում ընդհանուր անդամն է ընկած) է կապվում առաջին պարբերության Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ բառակապակցության հետ՝ կապ ստեղծելով այդ պարբերությունների միջև: Փոխարինման կապ է ստեղծվում այդպիսի երիտասարդներ դերանվանական կապակցությամբ (Եվրոպայի մեր երիտասարդ կատարողները փոխարինված են այդպիսի կատարողներ դերանվանական կապակցությամբ) առաջին պարբերության հետ:

Ածականը նախադասություններ կամ պարբերություններ կապակցելիս սովորաբար հանդես է գալիս գոյականի հետ, և այդ կապակցության միջոցով բնութագրվում է նախորդ նախադասություններում կամ պարբերություններում նկարագրվածը, այլ բառերով տրված իրը, անձը և այլն:

«Մարկոս աղա Ալիմյանը ծանր հիվանդ էր:

Յոթ օր առաջ նա իր նոր կառուցվող տասնումեկերորդ տան վրա արհեստավորներին պատվերներ տալիս մարմնի մեջ զգաց անսովոր ցուրտ, եկավ տուն, պատկեց անկողին և այլևս չկարողացավ վեր կենալ: Բժիշկները մարդուն ուշադիր քննեցին և միաձայն հաստատեցին թոքերի բորբոքում:

*Լուրը* նույն ժամին տարածվեց ամբողջ քաղաքում:

Եվ ահա այսօր մեռնում է *անվանի քաղաքացին, խելացի մարդը, տոկուն վաճառականը*, որ ամբողջ կյանքն անց էր կացրել անդուլ գործունեությանը, քրտինքը ճակատին, խիղճը հանձնած երկաթե սնդուկին և հոգին գրպանը դրած» (Շ. Քառս):

*Լուրը* գոյականն ընդհանուր անվանում է առաջին և երկրորդ պարբերություններում մանրամասն նկարագրվածը՝ կապ ստեղծելով նրանց միջև, իսկ *անվանի քաղաքացին, խելացի մարդը, տոկուն վաճառականը* ածականի և գոյականի կապակցությունների միջոցով բնութագրվում է Մարկոս աղա Ալիմյանի անձը, և այս եղանակով կապ է ստեղծվում առաջին պարբերության հետ:

Կամ՝ «Երբ ես «Մեր լեզուն, մեր խոսքը» խորագիրն էի ընտրում, ընկերներիցս մեկը ասաց. «Ղե, կա՛մ մեր *լեզուն* գրի, կա՛մ *խոսքը*»: Ասացի՝ երկուսն էլ կան, և երկուսն էլ տարբեր երևույթներ են, մեր *գեղեցիկ գրական, մշակված իսահակյանական «Լիլիթի» լեզուն* և մեր *առօրյա՝ աղքատիկ, խեղճ ու կրակ խոսքը*» (ՀՀ, 17.6.2016թ.):

Նախորդ նախադասության լեզուն բնութագրվում է *գեղեցիկ գրական, մշակված իսահակյանական «Լիլիթի» լեզու*, իսկ խոսքը՝ *առօրյա՝ աղքատիկ, խեղճ ու կրակ խոսք* նույնպես ածականի ու գոյականի կապակցություններով, և այս եղանակով կապ է ստեղծվում նախորդ նախադասությունների հետ:

Եթե գոյականները, ածականները նշանակում են առարկաներ, առարկաների և երևույթների հատկություններ անկախ իրադրությունից, ապա դերանունները դրանք նշանակում են իրադրությունից կախված: «Դերանունը որպես կապակցող բառ երկու գործառույթ ունի:

Առաջինը ըստ էության իրադրական, երկրորդը՝ կոնտեքստային-իրադրական: Առաջին դեպքում նրանց նշանակությունը համապատասխանում է անմիջական ակտին, երկրորդ դեպքում՝ հանդիսանում է նշանների նշան՝ ցույց տալով հարևան միավորի նշանակությունը, նույնպես կապված իրականության հետ միջնորդավորված ուրիշ լեզվական միավորի միջոցով»<sup>76</sup>:

«*Էդուարդ Բասբեկյանը* ակադեմիայի ստեղծման առաջին օրվանից (այն սկզբում ինստիտուտ էր կոչվում) մինչև իր կյանքի վերջը, մինչև տեսողության կորցնելը, անգամ դրանից հետո էլ ներկա է եղել ակադեմիայի կյանքին: Եվ թվով ամենաշատ ուսանողներ *նա* է ունեցել՝ ուսուցողական աշխատանքին զուգակցելով ստեղծագործական կյանքը, մասնակից դառնալով և՛ մշակույթին, և՛ ոչ մշակույթային իրողություններին: *Նա* իսկապես լավ դասա-

<sup>76</sup> Г.Б. Джаукян, *Универсальная теория языка*, М., 1999, էջ 203:

խոս էր. ամենամեծ առավելությունը, որ նա ուներ այն էր, որ ուսանողի մոտ բացահայտում էր նրա ինքնությունը, այլ ոչ թե... սարքում էր իր նմանակը: *Ինքը* ոչ թե պարզապես դասախոս էր, այլ նաև ինքն իրեն չէր պատկերացնում իր ուսանողներից կտրված» (ՀՀ, 4.11.2015թ.):

Այս դեպքում դերանունները հանդես են գալիս ներկոնտեքստային փոխարինման գործառնությամբ՝ ցույց տալով հարևան միավորի նշանակությունը:

Էդուարդ Իսաբեկյան հատուկ անուն գոյականը փոխարինված է *նա*, *ինքը* դերանուններով, և վերջիններս (նա, ինքը) կապակցում են նախադասությունները:

Կապակցական դեր կատարող դերանունը կարող է գործածվել գոյականաբար:

«Երբ 50-ական թվականներին ես եկա «Հայֆիլմ», նա կինոյի պետերից էր, և ահա այս տողերը գրելիս հայտնաբերում եմ, որ չգիտեմ էլ, թե ինչ պաշտոն էր վարում (հիմա պաշտոնավորների չափը երբեմն երևում է, նույնիսկ երբ իրենք չեն երևում):

*Այդպիսին էր Շաթիրյանը՝* ուղղակի մարդ, միայն մարդ, մշտապես մարդ՝ հանդարտ, ինքնավստահ, կիրթ:

*Այդպիսին էր նա թե իր վերընթաց ուղու ժամանակ գրական ասպարեզում, թե իր վարչական աշխատանքի տարիներին, թե նախանձելի հաջողությունների և թե աննախանձելի բարդությունների և դժվարությունների օրերին, տարիներին»* (ԳԹ, 18.3.2016թ.):

Պարբերությունները կապակցող գոյականաբար գործածված *այդպիսին* դերանվան բովանդակությունն արտահայտված է առաջին պարբերության մեջ, որը փոխարինման և կրկնության կապակցման միջոցներով ներտեքստային կապեր է ստեղծում:

Նախադասություններ կապակցում է նաև դերանվանական կապակցությունը (դերանունով կամ այլ խոսքի մասերով):

«Ֆետրե գլխարկով մարդուն օջախի մոտ նստած կինը, որի երկար զգեստի տակ պարզ երևում էին նրա ծնկները, թվում էր քրմուհի՝ եռոտանու առաջ ծխի շարժումները գուշակող:

*Այն կինը* երբեք բոբիկ ոտքերով չի՝ քայլել, չի նստել միացող աթարի առաջ: Առավոտյան ծովը բրոնզե հալոցքի պես տարուբեր էր լինում և լիզում ամբերի կրաքարերը: Շովափին *սև թավիշե գլխարկով կինը* հովանոցի ծայրով ավազի վրա նշաններ էր անում և ավերում: Իսկ ինքը ջարդում էր ձեռքի չոր ճյուղերը, մանրիկ փշուրներ անում, և երբ ալիքները կաթիլներ էին ցողում նրանց ոտքերին ու ետ վազում, ալիքներն իրենց հետ տանում էին չոր ճյուղերի փշուրները: *Այն կինը* ծովափին խոստումի բառեր ասաց, աշխարհը թվաց լայնարձակ մի ծով, ու սիրտը ձուլվեց ծովի հետ (Բակ. Ալպիական մանուշակ):

Ֆետրե գլխարկով մարդու անցյալն ու ներկյան իրար մեջ են ձուլվում իբրև հոգեբանական պատկերներ, որոնք կապակցվում են *այն կինը* դերանվանական կապակցության փոխարինման (*սև թավիշե գլխարկով կինը* փոխա-

ըինված է այն կին-ով) և կրկնության կապակցման միջոցներով՝ ստեղծելով ներտեքստային կապեր նախադասությունների և պարբերությունների միջև:

Կապակցական դեր կատարող դերանունը կարող է դրվել նաև այն բառի վրա, որը նախորդ նախադասությունում կամ նախադասություններում նկարագրվածի ընդհանուր անվանումն է:

Բերենք մի հատված Ա.Բակունցի «Երկերի» առաջաբանից. «Աբովյանին վերագրված բազմաթիվ միֆերի կողքին կար նաև նրա դերի ճշմարիտ գնահատությունը, որով նրա *ստեղծագործությունը* և *աշխարհայացքը կապվում էին հայ դեմոկրատիայի արմատական շահերի հետ*:

*Նույն ուղղության* լույսի տակ էլ Բակունցը անդրադառնում է Աբովյանի ժառանգությանը՝ նրա վրա գցելով պատմական երկու դարաշրջանների լույսը. մեկ՝ Աբովյանի ժամանակի, մեկ իր ժամանակի:

Երկու պարբերությունները կապակցվում են *նույն ուղղության* դերանվանական կապակցությամբ՝ դառնալով ներտեքստային կապի միջոց:

Այսպիսով՝

**ա.** Գոյականը նախադասություններ, պարբերություններ է կապակցում, եթե այն մասնավորում կամ ընդհանուր անվանում է նախորդ կամ հաջորդ նախադասություններում մանրամասնորեն նկարագրվածը: Գոյականը նախադասություններ, պարբերություններ է կապակցում նաև շրջասությամբ, զեդչումով, կրկնությամբ:

**բ.** Ածականը նախադասություններ կապակցելիս հիմնականում հանդես է գալիս գոյականի հետ միասին և այդ կապակցության միջոցով բնութագրում է նախորդ նախադասության կամ պարբերության մեջ մանրամասնորեն նկարագրվածը կամ այլ բառերով ասված անձ, առարկա և այլն:

**գ.** Դերանունը նախադասություններ կամ պարբերություններ կապակցելիս հանդես է գալիս ներհամատեքստային (ներկոնտեքստային) փոխարինման գործառնությով: Փոխարինումը և կրկնությունը պարբերությունների ներքին և արտաքին կապերի հիմնական միջոցներ են, որոնք ընկած են ներտեքստային կապերի հիմքում:

Barseghyan Amalya – A cohesive value of the words having material meaning in text.- Noun, adjective, pronoun besides their syntactic function in sentence also have connective value in text.

a. The noun serves as internal and external connections in the paragraph, if it generally specifies or names the described in the preceding or following sentences, as well as by periphrases, ellipsis, repetition.

b. The adjective while connecting characterizes what is described in detail in the preceding sentence or paragraph, or a person, object, etc., presented in other words.

c. The pronoun while connecting represents function of inter-contextual replacement and repetition.

Барсегян Амалия – Соединительное значение слов, имеющих материальный смысл в тексте.-Существительное, прилагательное, местоимение, в дополнение к синтаксической роли в предложении, в тексте имеют союзное значение.

а. Существительное исполняет внутренние и внешние соединения абзаца, если задаёт общее имя или указывает описываемое в предыдущих или следующих предложениях, а также перифразами, эллипсисом, повторением.

б. Прилагательное, исполняя соединения, характеризует то, что подробно описывается в предыдущем предложении или абзаце, или человека, объекта и т.д., представленные другими словами.

в. Местоимение, исполняя соединения, представляется межконтекстной функцией замены и повторением.

## ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐՂԱՆ ԱՐԵՎԵԼՅՈՒ ՃԱՌԵՐՈՒՄ

Վարդան Արևելցին իր գրական մեծ վաստակի և հոգևոր-կրթական գործունեության շնորհիվ հսկայական ճանաչում է ունեցել միջնադարյան Հայաստանում և Կիլիկիայում: Ժամանակակիցները նրան մեծարել են «սուրբ», «հոգիապայծառ սուրբ հայր», «լուսավոր վարդապետ», «անյաղթ հռետոր», «եռամեծ», «տիեզերալույս վարդապետ», «նոր լուսավորիչ» պատվանուններով: Իսկ Գրիգոր Տաթևացին նրան միշտ ներկայացրել և պատվել է Մեծն Վարդան անունով:

Բազմաթիվ և բազմաբնույթ են Վարդան Արևելցու ճառերը, խրատները, ներբողներն ու թղթերը, որոնք արծարծում են աստվածաբանական խնդիրներ, ծիսական հարցեր կամ նվիրված են սրբերի կյանքին ու գործունեությանը: Նա, ըստ իր իսկ վկայության, օգտվել է մի շարք գրավոր և բանավոր աղբյուրներից, հատկապես անտիկ և միջնադարյան գիտափիլիսոփայական, պատմական, հայրաբանական, մեկնաբանական հայերեն թարգմանված և օտարալեզու երկերից: Վարդան Արևելցու ստեղծագործական ժառանգության քննություն է կատարել Փայլակ Անթապյանը, որն իր երկհատոր աշխատության մեջ մանրակրկիտ ներկայացրել է հեղինակի պատմագրական, քերականական երկերը, ինչպես նաև ճառերը, մեկնություններն ու ներբողները<sup>77</sup>: Վ. Արևելցու առ այսօր մեզ հասած հայտնի ճառերի թիվը, ինչպես նշում է Փ. Անթապյանը, քսանից չի անցնում: Այդ ճառերը հեղինակի գրական հարուստ ժառանգության ամենաքիչ ուսումնասիրված մասն են կազմում: Մ. Չամչյանը առաջինն է հիշատակում դրանք, սակայն ստույգ չի նշում, թե ինքը ինչ ճառեր նկատի ունի, միայն ընդամենը մեկ տողով գրում է. «Գրեաց սա ինքն Մեծն Վարդան եւ այլ բազում ճառս ընտիր ոճով եւ իմաստիք»<sup>78</sup>: Մ. Չամչյանից հետո Վ. Արևելցու ճառերի մասին մի փոքր ավելի ընդարձակ է խոսում Մ. Մաղաք-Թեոփիլյանը: Նա արձանագրում է, որ Վարդան Արևելցին հեղինակել է նաև ճառեր, և թվարկում է դրանց անունները՝ նշելով ընդամենը չորսը, բայց ո՛չ դրանց բովանդակության վերլուծություն է կատարում և ո՛չ էլ գնահատանքի խոսք է ասում<sup>79</sup>: Մ. Օրմանյանը նշում է, որ Վարդան Արևելցին «շատ մը ճառեր ունի, սակայն ումանց մասին երկբայություններ կհարուցվին»<sup>80</sup>: Անվանի բանասեր Ն. Մառը իր բանասիրական դիտողություններում առանձնացնում է Վ. Այգեկցու գրչին պատկանող ճառերն ու

<sup>77</sup> Տե՛ս Փ. Անթապյան, *Վարդան Արևելցի. կյանքն ու գործունեությունը*, գիրք Ա, Բ, Ե., 1987, 1989:

<sup>78</sup> Մ. Չամչյան, *Պատմություն հայոց*, Գ, Վենետիկ, 1786, էջ 241:

<sup>79</sup> Տե՛ս Մ. Մաղաք-Թեոփիլյանց, *Վարք երևելի արանց*, Բ, Վենետիկ, 1839, էջ 581:

<sup>80</sup> Մ. Օրմանյան, *Ազգայատու*, Բ, գիրք Ա, էջ 1668:

քարոզները՝ դրանով իսկ կատարելով կարևոր մի գործ՝<sup>81</sup> ճշտելով իրապես Վ. Արևելցու գրչին պատկանող գործերը, քանի որ ձեռագրական մի շարք վկայություններով ու փաստերով հավաստված է, որ այս երկու հեղինակները միաժամանակ նույն ժանրով ստեղծագործել են: Հիշյալ երկու Վարդանների նույն ժանրի ստեղծագործությունները գատորոշելու, տարբերակելու համար կարևոր հանգամանք է նաև, ինչպես նշում է Անթապյանը, այդ երկերի լեզվաճական առանձնահատկությունների տարբերությունը, քանի որ եթե Վ. Այգեկցին խրատող ու բարոյականություն քարոզող երեց է, և իր քարոզներն ունեն ավելի մտերմիկ, անմիջական ու ազատ բնույթ՝ միահյուսված առակներով, ապա Վարդան Արևելցին իր ճառերի մեջ իսկական մեկնիչ է, որ սիրում է բացատրել ամեն մի գիտելիք ու բառ. «Նա զրուցելուց, խրատելուց ավելի պարզաբանում, ուսուցանում, հրահանգում է: Նրա ճառերը ստեղծագործական շատ ավելի մերձավոր առնչություններ ունեն հայ ճառագրության ավելի վաղ շրջանի ավանդների, մասամբ նաև հնագույն եկեղեցական հայրերի նույն կարգի երկերի հետ և ավելի դասական են»<sup>82</sup>: Վարդան Արևելցու ճառերը հիմնականում հանդիպում են այն ձեռագրերում, որոնք «Տոնապատճառ» են, կամ էլ ներառել են «Տոնապատճառ»-ը: Այստեղ տեղ են գտել կրոնական զանազան տոների նշանակությանը վերաբերող այսպես կոչված «պատճառներ», այսինքն՝ բացատրություններ՝ կրոնագիտական առատ մանրամասնություններով: Դրանք երբեմն վերաբերում են նաև կրոնական մի շարք երկերի, նրանց բովանդակության բացահայտմանը և ստեղծման հանգամանքներին: Այսպիսով, «Վարդանայ վարդապետի» անունով եղած ճառերը առանձնացնում են ըստ այն օրինաչափությունների, որ այդ ձեռագրերի կարևոր մասը ընդօրինակվել է 18-րդ դարի երկրորդ կեսին. դրանք տարբերվում են Վ. Այգեկցու ճառերից և՛ թեմատիկ, և՛ լեզվաճական առանձնահատկություններով և չեն վերաբերում մինչև 13-րդ դարը ու դրանից հետո ապրած մեզ հայտնի Վարդաններից որևէ մեկին: Բացի այդ՝ հայտնի է, որ հիշյալ Վարդաններից միայն Վարդան Արևելցին է Արևելյան Հայաստանից և արևելահայերեն նմուշներ է թողել իր երկերում, օրինակ՝ ում-ով ներգոյական հոլովի և դերբայական վերջավորությամբ ցայտուն 1-2 օրինակ:

Հայ միջնադարի խոշոր մատենագիր Վ. Արևելցու ճառախոսական և ներբողագրական ժառանգությունը ներկայացրել է Հակոբ Քյոսեյանը՝ ամփոփելով դրանք «Աստվածաբանական բնագրեր, հետազոտություններ: Ճառք, ներբողեանք» գրքում: Այստեղ նա ներկայացրել է հեղինակի 22 ճառ (հղումներում նշվում են ճառերի համարները ըստ վերոնշյալ աշխատության):

Վ. Արևելցու ճառերի ուսումնասիրությունը «...հնարավորություն է տալիս վեր հանելու միջնադարյան Հայաստանում առկա վարդապետական մտքի երկու կարևորագույն մարզերի՝ սուրբգրային և դավանաբանական աստվածաբանության առանձնահատկությունները »<sup>83</sup>:

<sup>81</sup> Տե՛ս **Н. Март**, *Сборник притч Вардана*, ч. 1, СПб, 1899, էջ 238-328:

<sup>82</sup> **Փ. Անթապյան**, նշվ. աշխ., Ե., 1987, էջ 176:

<sup>83</sup> **Վ. Արևելցի**, *Ճառք, ներբողեանք*, Ե., 2000, էջ 5:



Իր ճառերի մեջ Վ. Արևելցին բազմաթիվ նշումներ է արել, որոնք ցույց են տալիս, թե ինչ աղբյուրներ են նրան նյութ տվել: Նրա հիշատակած անուններից պարզվում է, որ առանձնապես օգտվել է օտար եկեղեցական հայրերի աշխատություններից, այդ թվում նաև՝ անտիկ շրջանի մի շարք իմաստասերներից: Ճառերի մեջ քննարկված որոշ փիլիսոփայական և բնագիտական դրույթներ նույնպես հաստատում են, որ Վ. Արևելցին քաջածանոթ է անտիկ գիտնականների և իմաստասերների աշխատություններին, որոնցից հավանաբար ոչ անմիջաբար օգտվել է: Հեղինակի ճառերում քանիցս հիշատակվում է Տիեզերական եկեղեցու մեծանուն հայրերի ու վարդապետների անունները՝ Փիլոն Եբրայեցի, Աթանաս Ալեքսանդրացի, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի և այլք, նա վկայաբերում է զանազան հատվածներ այս հեղինակների երկերից: Վ. Արևելցին իր ճառերում շոշափում է նաև սուրբգրային բանասիրության հարցեր:

Մեր հոդվածում անդրադարձել ենք Վ. Արևելցու՝ Հ. Քյոսեյանի աշխատասիրությամբ հավաքված ճառերին և դրանցում առկա մեկնաբանական դիտողություններին կամ, ինչպես հեղինակն է անվանում, ստուգաբանություններին: Ուսումնասիրելով Վարդան վարդապետի ճառերը՝ տեսնում ենք, որ հեղինակը իրագեղ է միջնադարում առավել հաճախ կիրառվող բառային ստուգաբանություններին: Ուշադրության արժանի է նրա այն դատողությունը, որ բառերն ու անուններն ինքնին ստուգաբանում և բացատրում են իրերի բնույթն ու բովանդակությունը: Դրանք ներկայացնում են կամ իրը, կամ նրա գործը, կամ ձայնը. «...ամենայն ինչ անուանեալ՝ տեղեկութիւն տայ մեզ, թէ անուանքս ստուգաբանիչք են եւ մեկնիչք իրացն եւ բնութեանց, որ կան ընդ նոքարք, քանզի կամ զիրն յայտնեն կամ՝ զգործ իրացն եւ կամ՝ ձայնի նորա »<sup>84</sup>: Ապա ավելացնում է. «Երկու են բանի տեսակք. մին, որ ընդ մտացն է եւ մին, որ յառաջ գա լեզուան, եւ դու թէ կամիս տես պարապով զբառոյ եւ բաց զմիտան»<sup>85</sup>: Եվ հեղինակն ինքը մեկնում, ստուգաբանում է որոշ բառեր յուրովի համեստորեն ասելով, թե դա անում է «նսեմացեալք մտաւք եւ տհաս եւ փցուն լեզուա»<sup>86</sup>: Ժամանակին Դավիթը նույնպես փորձել է մշակել ստուգաբանության երեք տեսակ. «Ստուգաբանութեան ձեւք են երեք, յիրէն, յարուեստէն, ի ձայնէն»<sup>87</sup>: Բացի այդ՝ Դավիթը նաև մշակում է ստուգաբանության հետևյալ եղանակները. 1. Բառը բաժանում է բաղադրիչների ճիշտ կամ բռնագրոսիկ կերպով, որը, ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, ոչ այնքան կամայական է, որքան տուրք է իր ժամանակին, երբ այն շատ սովորական էր<sup>88</sup>: Դավիթը նշում է, սակայն, որ բառի ստուգաբանությունը պարզելը ոչ բոլորին է հատուկ, այլ ամենից խոհեմներին. «...ոչ ամենեցուն է գիտս այս, այլ խոհեմա-

<sup>84</sup> Նշվ. աշխ., *Ճառ է*, էջ 122:

<sup>85</sup> Նույն տեղում, էջ 130:

<sup>86</sup> Նույն տեղում, էջ 123:

<sup>87</sup> Տե՛ս **Н. Адопц**, *Дионисий Фракийский и армянские толкователи*, Петроград, 1915, с. 96:

<sup>88</sup> **Գ. Ջահուկյան**, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում*, Ե., 1954, էջ 134:

գունիցն եւ էթ»<sup>89</sup>: Ստուգաբանության երկրորդ եղանակը բառի կազմիչ տարրերի, հատկապես բաղաձայնների փոփոխությունն է, երբ լծորդ տառերն են փոխարինում իրար, «յորժամ ելեալ մինն ի լծոյն, մտանէ ընկերակիցն բառնալով զլուծն, որպէս բենն զմենի եւ կամ մենն զպէի, նոյնպէս եւ այլքն»<sup>90</sup>: Այսպիսով, Դավթի մտ նույնպէս հանդիպում են այն եղանակները, «որոնց օգնությամբ կարելի է ստուգաբանել իրենց կազմությամբ առարկաները հիշեցնող բառերը, մյուս կողմից՝ այն սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվել, երբ բառի և նրա նախնական իմաստի միջև կապն ակնհայտ չէ»<sup>91</sup>: Չ. Ջահուկյանը նշում է, որ Ստ. Մյունեցին նույնպէս առաջարկում է ստուգաբանության տարբեր եղանակներ՝ անունների տարբերությամբ տարբերելով իրերը: Նա հին աշխարհի ստուգաբանական ուսմունքը իր դրական ու բացասական գծերով ի մի է հավաքել՝ վերածելով մի կուռ համակարգի, որը վճռական ազդեցություն է թողել հետագա բոլոր ստուգաբանական փորձերի վրա՝ տեղիք տալով ամեն տեսակ կամայականությունների<sup>92</sup>:

Ներկայացնենք Վ. Արևելցու տարբեր ճառերի մեջ եղած որոշ բառերի մեկնաբանական կամ ստուգաբանական դիտողությունները: Դրանք 2 կարգի են.

1. Վ. Արևելցին երբեմն ստուգաբանում է բառը՝ բաժանելով որոշակի բաղադրիչների, որոնք ըստ հեղինակի՝ տվյալ բառի մեջ ունեն իմաստային ծանրաբեռնվածություն և այդպիսով թելադրում են բառի իմաստը: Նմանատիպ ստուգաբանության են ենթարկվում **մարդ, ուրբաթ** բառերը: Այսպես, «Սկիզբն ի մարգարեութեան Եգեկիէլի մեկնութեանն վարդապետին Վարդանայ» ճառում, հղելով Կորնթացիների ԺԱ 7 գլխին, հեղինակը գրում է, որ **մարդ** բառը իրենով հայտնում է այդ անվան մեջ առկա բարձր բովանդակությունը, քանզի «մարդն անուն՝ զիրն բնութեան, զի պատկեր եւ փառք Աստուծոյ է»<sup>93</sup>, սակայն, թափանցելով դրա աստվածաբանական խորհրդի մեջ, այլաբանական բացատրություն է տալիս՝ ասելով, որ եթե **մարդ** բառը շրջենք, կստացվի «դրամ»: Իսկ դրամի վրա դրվագված է թագավորի պատկերը, և այդ պատկերի պատվին է, որ արժևորվում է դրամը, որով պայմանավորված՝ շահ է բերում: Այսինքն «մարդ» բառի պարունակած խորհուրդը բարձրանում է, քանզի «դրամ=մարդու» վրա է հանգչում նախաստիպի՝ Աստծու շնորհը: Շարունակելով իր ստուգաբանությունը բառի տրոհման միջոցով՝ Վ. Արևելցին նշում է, որ երբ հանում են ստուգաբանվող բառի վերջին տառը, մնում է «մար» բառը, որը երբայեցեքեն և ասորերեն նշանակում է **տէր**: Վերջինս արդեն հանգում է Աստծու գաղափարին ընդարձակելով բառի աստվածաբանական

<sup>89</sup> Տե՛ս **Н. Адонц**, *Дионисий Фракийский и армянские толкователи*, Петроград, 1915, с. 85:

<sup>90</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 114:

<sup>91</sup> **Չ. Ջահուկյան**, նշվ. աշխ., Ե., 1954, էջ 135:

<sup>92</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 183:

<sup>93</sup> **Վ. Արևելցի**, *Ճառք, ներբողեանք, Ճառ է*, էջ 122:

տարածքը: Եվ եզրակացնում է, թե «...երեք գիր է ի պատիւ Սրբոյ երրորդութեան: Արդ այսքան հրաշալի եւ մեծ բնութիւն իրք եւ անուն»<sup>94</sup>:

Անդրադառնալով **ուրբաթ** բառի ստուգաբանությանը՝ «Յաղագս եւրթն աւուրն արարչութեան...» ճառում գրում է, որ «...**ուրբաթ** ըստ եբրայեցոցն **կազմութիւն** ասի, զի աստ կազմեցաւ մարդն ի պատկեր Աստուծոյ, եւ ըստ մեր լեզուիս ուրբաթ ասի, այսինքն է՝ **ուր** եւ **բաւթն**, որ եղև գոյժ սգոյ, քանզի զմեղացն Աղամայ զարն ուրբաթ ասեն, ուր ի սուգ մտին արարածքս... Եւ ... յուրբաթացեալ դարու եկն աս մեզ գթութեամբ եւ ողորմութեամբ եւ ի յուրբաթի աւուր ի յուրբաթացեալ ժամու իսաչիւ ազատեաց զմեզ ի մեղաց... »<sup>95</sup>: Այսինքն՝ բառը տարրալուծում է՝ բաժանելով **ուր** եւ **բաւթ** բաղադրիչների, որոնցից յուրաքանչյուրին տալիս է որոշակի իմաստ և ստուգաբանում ըստ այդմ:

2. Հաճախ Վ. Արևելցիին փոխում է բառի ձևը՝ հարմարեցնելով իր կողմից բացատրվող միավորի իմաստին և ըստ դրա՝ տալով բառի ստուգաբանությունը: Սրա հետևանքով որոշակի հասկացությունների նրա բացատրությունների մեջ հանդիպում ենք անսպասելի ստուգաբանությունների: Այսպես՝ **տիւ** բառը կապում է **տեւել** բառի հետ և մեկնաբանում հետևյալ կերպ՝ **տիւ** –ը այդպես է կոչվում, «քանզի որչափ **տեւել** լոյսն յաւդդ, ի վերայ գլխոց մերոց **տիւ** կոչի, գոր եւ ցերեկ անուանեմք»<sup>96</sup>: **Խոտ** բառը ստուգաբանելու համար փոխում է այն և կապում **խոտան**, ապա նաև **հոտ** և **հոտել** բառերի հետ. «Եւ **խոտ** վասն անարգութեան կոչի, որ է խոտան եւ անարգ, սակաւագին եւ դիւրանցու: Նոյնպէս է եւ մարմինն՝ ի մեկնիլ դալարութեան հոգւոյն ոչ իմիք պիտանացու»<sup>97</sup>: Եվ ավելացնում է, թե **խոտ** բառի մեջ «թէ զձորդն փոխել ոք, եւ փոխանակ **զխե**-ին դնել զընկերն **զհո**՝ **հոտ** է, այսինքն՝ գոլորշի, որ ի ցամաքիլ իրացն վերանայ, եւ երբ սպառի խոնաւութիւն՝ կտրի եւ գոլորշին, որպէս մարմին **հոտեալ** եւ ապա բնաւին հողացեալ եւ չորացեալ»<sup>98</sup>: Իր այս բացատրությամբ ցամաքած խոտը ներկայացնում է ցավոտ ու ծերացած մարմինը, առաջ է քաշվում կյանքի անցողիկության գաղափարը, կյանք, որից հետո մնում է գոլորշի միայն: Իսկ **նշան** բառը ստուգաբանում է հետևյալ կերպ. «**Նշանն**» հրաշալից եւ զարմանալեաց է անուն անձանաւթ եւ անսովոր իրաց, գոր թէ զվերջին վանկն առաջի դնեն «**աննիք**» ասի. չնաշխարհիկ եւ նորահրաշ իրք...»<sup>99</sup>:

3. Որոշ մեկնաբանություններ համընկնում են գրաբարյան բառարանների բացատրություններին և ստուգաբանական բառարանների սովյալներին, սակայն դարձյալ Վ. Արևելցիին շեշտը դնում է բացատրվող բառի ձևին և այս տեսակետից էլ ներկայացնում իր ստուգաբանական տարբերակները, այսպես՝ **եկեղեցին** անվանում է «Ժողովուրդք քրիստոնէից, որպէս եւ ասէ, թէ

<sup>94</sup> Նույն տեղում, էջ 123:

<sup>95</sup> Վ. Արևելցի, նշվ. աշխ., ճառ Ա, էջ 34:

<sup>96</sup> Նույն տեղում, էջ 24:

<sup>97</sup> Նշվ. աշխ., ճառ Ե, էջ 99:

<sup>98</sup> Նույն տեղում, էջ 100:

<sup>99</sup> Նշվ. աշխ., ճառ ԺԵ, էջ 237:

*Եկեղեցացոյ* ժողովուրդ»<sup>100</sup>: Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» (այսուհետ՝ ՀԱԲ) նույնպես բացատրվում է ժողովուրդ, ՆՀԲ-ում՝ ժողովուրդ, նաև՝ ժողովարան<sup>101</sup>: *Եպիսկոպոս*՝ «...վասնզի *Տեսուչ* ասի եպիկոպոսն եւ Ոստիկան՝ տեսուչ՝ **տե՛ս**՝ յստակ աչաւք եւ անկաշառ զվիճակն, առաքելաբար շրջեաց առ ամենեսեան, զպարգես Հոգւոյն մի՝ վաճառեր արծաթոյ տգիտաց...»<sup>102</sup>: *Հորեկյան* բառը բխեցնում է *հորել* բառից, որ նշանակում է *ազատություն*: Այն հեղինակը դարձյալ ստուգաբանում-մեկնաբանում է աստվածաբանական տեսակետից՝ նշելով, որ բառի իմաստը պայմանավորված է նրանով, որ «ասեին, թէ յիսուներորդի յորելենին էղեւ ազատութիւն ի ծառայութենէն եգիպտացոցն»<sup>103</sup>: Հ. Աճառյանը նշում է, որ ՆՀԲ-ն նույնպես դնում է իմաստը՝ *ազատություն*՝ համարելով փոխառյալ եբրայերենից, իսկ ՀԱԲ-ում բացատրված է որպէս հրեական թողության տարին, որ 50 տարին մի անգամ էր գալիս. փոխառյալ է հունարեն *հորել* բառից՝ *-եան* մասնիկով, և բոլորի բուն մայրն է եբրայերեն՝ *խոյ, խոյի եղջուր*, որով ազդարարվում էր հորելյանական տարին: Ումանք այն թարգմանում են ազատություն<sup>104</sup>: Իսկ «*քահանայն* Քաւիչ կոչի եւ միջնորդ Աստուծոյ եւ մարդկան: Եւ եթէ քաւիչը անքաւելի մեղանչես, ո՞ր խորք ծածկէն գրեգ: Եւ եթէ զհասուն ոչ քաւեսցես՝ զարին նորա ի ձեռաց քոց խնդրեսցէ»<sup>105</sup>: Հ. Աճառյանը նույնպես նշում է, որ *քահանայ* բառը ասորական փոխառություն է՝ կախարդ, բախտագուշակ, հները ստուգաբանում են *քաւել* կամ *քահել* բառից, որ նշանակում է զարնել, մաքրող, սրբող, կրոնական պաշտոնյա, տերտեր, Առձեռն բառարանում համընկնում է՝ քավիչ<sup>106</sup>: *Կրօնավոր* բառը Վ. Արևելցին ստուգաբանում է հետևյալ կերպ՝ «...եւ *կրանատորն*՝ որ կրէ զԽաչն Քրիստոսի՝ յունս բարձեալ»<sup>107</sup>, գրաբարյան բառարաններում՝ վանական, ճգնավոր, համբերող, իսկ ըստ Հ. Աճառյանի՝ առաջացած *կիր* արմատից՝ *օն* ածանցով<sup>108</sup>: *Կաթողիկոս* բառի վերաբերյալ գրում է. «*Ամենակալ* թարգմանի՝ ամենեցունց աստուածաբար խնամ պարտիս տանել եւ անախտ մնալ ի մարմնական ախտից »<sup>109</sup>:

Վ. Արևելցու ստուգաբանական դիտարկումներից են նաև մի շարք այլ բառերի մեկնաբանություններ՝ արդեն իմաստային առումով, ինչպես՝ *աբեղայ* բառը՝ «...*աբեղայն* հայր ասի, քանզի Քրիստոսի նման է աբեղայն, որ նախ զինքն ծնանի նոր մարդ եւ իւր Հայր լինի...»<sup>110</sup>: Գրաբարյան բառարաններում բառի բացատրությունները համընկնում են, իսկ Հ. Աճառյանը

<sup>100</sup> Նշվ. աշխ., *Ճառ Գ*, էջ 70:

<sup>101</sup> Տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 2, Ե., 1973, էջ 12:

<sup>102</sup> Վ. Արևելցի, նշվ. աշխ., *Ճառ Գ*, էջ 73:

<sup>103</sup> Նշվ. աշխ., *Ճառ Բ*, էջ 48:

<sup>104</sup> Տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 3, Ե., 1977, էջ 401:

<sup>105</sup> Վ. Արևելցի, նշվ. աշխ., *Ճառ Գ*, էջ 73:

<sup>106</sup> Տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 4, Ե., 1979, էջ 540:

<sup>107</sup> Վ. Արևելցի, նշվ. աշխ., *Ճառ Գ*, էջ 73:

<sup>108</sup> Տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 2, Ե., 1973, էջ 685:

<sup>109</sup> Վ. Արևելցի, նշվ. աշխ., *Ճառ Գ*, էջ 73:

<sup>110</sup> Նույն տեղում, էջ 73:

բացատրում է՝ «վանական, կուսակրոն կրոնավոր, ասորերենից փոխառյալ, որի առաջին նշանակությունն է՝ տխուր, տրտում»<sup>111</sup>: **Շարաթ** բառը Վ. Արևելցին անվանում է «հանգիստ, դատարկություն եւ պարապումն » և բացատրում է. «շաբաթ հանգիստ աստի, քանզի զինչ եւ առնէր Աստուած, հանգչէր ի տեսանէլն, թէ բարի է»<sup>112</sup>, «...քանզի Աստուած Ինքն, ասէ, հանգեալ յաւուրն եւթներորդի յամենայն գործոց իւրոց, ...եւ հանգիցէ ծառայ քո եւ աղախին եւ գրաստ քո եւ եզինք...եւ դու ի մեղաց քոց դադարեացես գոնեա ի շաբաթուն, զի եւ անուն աւուրն կոչի»<sup>113</sup>: **Վիրակի**-ն բացատրում է որպէս «անդրանիկ եւ սկիզբն աւուրց արարչութեան, եւ վասն այսորիկ մեզ պարտ է պատուել եւ սուրբ պահել զկիրակէն յամենայն մեղաց ժամատեղաւք եւ խոստովանութեամբ, հաղորդութեամբ»<sup>114</sup>, «**քաղղեայ**՝ մոգ, կախարդ, երկիրն քաղղեացոց՝ ասորոց թարգմանն ասէ երկիրն կախարդաց, քանզի Քաղղեայն եւ Քաղղեայն աղանդոյն անուն է, զի դիւթք եւ հմայք էին անդ, եւ անտի աստեղագիտութիւնն սկսաւ»<sup>115</sup>: **Ձեռն** բառը մեկնաբանում է՝ «Ձեռն զներգործութիւն Հոգւոյն ասէ, զի ձեռամբ տուեալ լինի պարգեւք, զոմանս հարկանէ, եւ զամենեսեան ստեղծանէ»<sup>116</sup>: Այս բառը ՀԱԲ-ում բացատրվում է որպէս բնիկ հայերէն բառ՝ **բռնել** իմաստով<sup>117</sup>: Երբեմն հեղինակը ստուգաբանում է նաև հատուկ անունները, ինչպէս **Բարսակէ**՝ հորը տեսնողը<sup>118</sup>: Այս բացատրությունը Հ. Աճառյանը «Հայոց անձնանունների բառարանում» սխալ է համարում և բառի նշանակությունը տալիս է **կովող, մարտնչող, Աստված, հետևաբար նաև՝ աստվածամարտ**:<sup>119</sup> **Միոն** հատուկ անունը Վ. Արևելցին մեկնաբանում է որպէս «մայր, յորմէ ծնաւ Քրիստոս Աստուած»<sup>120</sup>: Հ. Աճառյանը «Հայոց անձնանունների բառարանում» նշում է, որ այս անունով էր կոչվում Երուսաղեմի մոտ գտնված լեռը, լայն իմաստով՝ նաև Երուսաղեմը<sup>121</sup>: **Եզեկիել** ըստ Վ. Արևելցու նշանակում է «իշխանություն Աստուծոյ, զոր եցոյց արդեամբ, զի տեղի ետ Աստուծոյ եւ հնազանդ եղէ»<sup>122</sup>: Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում» բացատրված է որպէս եբրայերենից փոխառյալ բառ՝ հաստատուն, ուժեղ, զորավոր իմաստներով<sup>123</sup>: Եվ այսպէս, Վարդան վարդապետի ճառերում մի շարք

<sup>111</sup> **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, Ե., 1971, էջ 74:

<sup>112</sup> Վ. Արևելցի, նշվ. աշխ., *Ճառ Ա*, էջ 24:

<sup>113</sup> Նշվ. աշխ., *Ճառ Բ*, էջ 48:

<sup>114</sup> Նշվ. աշխ., *Ճառ Ա*, էջ 25:

<sup>115</sup> Նշվ. աշխ., *Ճառ Ե*, էջ 130:

<sup>116</sup> Նույն տեղում, էջ 130:

<sup>117</sup> Նույն տեղում, էջ 131:

<sup>118</sup> **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. 3, Ե., 1977, էջ 149:

<sup>119</sup> Վ. Արևելցի, նշվ. աշխ., *Ճառ Ե*, էջ 104 :

<sup>120</sup> Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, , հ. 2, Ե., 1942, էջ 391:

<sup>121</sup> Վ. Արևելցի, նշվ. աշխ., *Ճառ Ե*, էջ 104 :

<sup>122</sup> Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, , հ. 2, Ե., 1942, էջ 521:

<sup>123</sup> Վ. Արևելցի, նշվ. աշխ., *Ճառ Ե*, էջ 108:

<sup>124</sup> Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, , հ. 2, Ե., 1942, էջ 95:

հատուկ և հասարակ անունների վերաբերյալ մեկնաբանական և ստուգաբանական զանազան հետաքրքիր դիտողություններ են հանդիպում:

Վ. Արևելցու ճառերն ունեն մի շարք հետաքրքիր կողմեր, և հիմնականում կրոնական բովանդակություն ունեցող այս երկերը, այնուամենայնիվ, բավարար նյութ են տալիս մեր օրերի բանասերին, լեզվաբանին՝ տարբեր լեզվաբանական ուսումնասիրություններ կատարելու:

Grigoryan Susanna, Paronayn Naira - Interpretational Remarks in Vardan Areveltsi's Allocutions.- Vardan Areveltsi's allocutions, counsels, odes and papers discuss theological matters, ritual issues or are devoted to the life and activities of saints. According to his evidence, he made use of numerous written and oral sources, especially of antique and medieval scientific-philological, historical, interpretational works translated into Armenian and foreign-language works. These odes are the least investigated part of the author's rich literary heritage. The article examines Vardan Areveltsi's 22 odes and the different interpretational reviews which are included in them. Of special interest is the author's judgment that words and names are self-explanatory, they already explain the nature and the content of the things, because they present either their name, their purpose or their voice.

Григорян Сусанна, Паронян Наира - Комментарские замечания в тирадах Вардана Аревелци.- Тирады, наставления, оды и бумаги В. Аревелци выражают теологические задачи, ритуальные вопросы или посвящены жизни и деятельности святых. Он, по своему собственному свидетельству, пользовался разными письменными и устными, особенно научно-философскими, историческими источниками, античными и средневековыми комментарскими переводами и иноязычными произведениями. Эти тирады составляют самую малоизученную часть богатого литературного наследства автора. В статье представлены двадцать две тирады В. Аревелци и находящиеся в них разные комментарские замечания. Достойны внимания рассуждения автора о том, что слова и имена сами по себе объясняют сущность и содержание вещей, так как представляют либо предмет, либо его действие или звук.

**«ՄԻՐՏ» ԲԱՌԸ ԳՐԱԲԱՐՅԱՆ ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ ՄԻՎՈՐՆԵՐՈՒՄ**

Դարձվածքը լեզվի պատկերավորման հնագույն միջոցներից է: Այն փոխաբերական կամ այլաբանական իմաստ ունեցող կայուն բառակապակցություն է և սովորական բառակապակցությունից տարբերվում է նախ և առաջ բառացի բացատրության անհնարինությամբ (հմմտ. ապտակ տալ/ սիրտ տալ. եթե առաջին դեպքում ունենք մեխանիկական, ուղղակի գործողություն, ապա երկրորդ դեպքում գործողությունը ոչ մեխանիկական է և ոչ էլ ուղղակի, քանի որ սիրտը համարվելով քաջության հոմանիշ կամ այն «ծնող» օրգանը, այստեղ երկրորդաբար ձեռք է բերել «գոտեպնդել», «ոգևորել», «ավելի ուժեղ դարձնել» իմաստը):

Դարձվածքի բաղադրիչ սովորաբար դառնում են բառապաշարի հիմնական շերտի բառերը, իսկ հաճախականության առումով առաջին շարքում են մարմնի մասերը նշանակող բառերը (գլուխ, աչք, ատամ, երես, սիրտ, մեջք և այլն):

Բառարանային տվյալներով դարձվածքների ամենահաճախական բաղադրիչներից մեկն էլ «սիրտ» բառն է: Իհարկե, սա առաջին հերթին պայմանավորված է, ինչպես նշեցինք, բառապաշարի հիմնական շերտի բառ լինելու, այսինքն՝ շատ գործածական լինելու հանգամանքով, սակայն կա նաև արտալեզվական մեկ պատճառ. այս բառով բացի մարդու ամենակենսական օրգաններից մեկը լինելը, դեռ հայերենի դասական շրջանից նշանակվել են ոչ պակաս կարևոր երկրորդային նշանակություններ, այդ թվում՝ ըստ գրաբարյան բառարանների՝ **«յոժարութիւն, ոգի, կամք, միտք, խորհուրդ, ցանկութիւն, տրամադրութիւն, քաջութիւն»**: Այս բառերի իմաստներն արդեն իսկ հուշում է դրանց համարժեք դարձվածքների հնարավոր գոյությունը, սակայն եթե սրանցից յուրաքանչյուրի իմաստով ժամանակակից հայերենն ունի դարձվածք, գրաբարյան բառարանները դրանց վկայությունները գրեթե չունեն.

յոժարութիւն - հոժար **սրտով** (ժկց.)

ոգի - ուժեղ **սիրտ** ունենալ (ժկց.)

կամք - արի **սիրտ** ունենալ (ժկց.)

միտք - **սիրտը** բացել, **սիրտը** դատարկել (ժկց.)

խորհուրդ - **սրտի** ծայրով անցկացնել (ժկց.)

ցանկութիւն - **սրտի** ուզած (ժկց.)

տրամադրութիւն - ուրախ **սրտով**, **սիրտը** տխուր (ժկց.)

քաջութիւն - քաջ **սրտի** տեր (ժկց.):

Եթե ուսումնասիրողների կարծիքով ժամանակակից հայերենը «սիրտ» բառով ունի շուրջ 400 դարձվածք (ավելի գործածական են. «սիրտ անել, սիրտ առնել, սիրտ (չ)ունենալ, սիրտը բացել, սիրտը բարակ, սիրտը բռնել, սիրտը դատարկել, սիրտը մաշել, սիրտը մարել, սիրտը հովանալ, սիրտը կրակ

ընկնել, սիրտը շահել, սիրտը պինդ պահել, սիրտը պղտորել, սիրտը վկայել, սիրտ տալ, սիրտը տեղն ընկնել, սրտին յուղ քսել, սրտից արյուն գնալ, սրտի հետ գնալ, սրտի խորքում, մեծ սրտի տեր» դարձվածքները են), ապա մեր դիտարկմամբ «Գաւառական բառարանը» բարբառներում գրանցել է շուրջ 150 կիրառություն, մինչդեռ գրաբարյան բառարանների վկայությունները խիստ սահմանափակ են. դրանք երկու տասնյակից էլ չեն անցնում (ըստ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի՝ մեկ տասնյակ. **«սիրտ առնուլ», «սիրտ դնել», «սիրտ թափել», «դառնութիւն սրտի», «սիրտ ի բերան», «արիութիւն սրտին», «ի խորոց սրտի», «մտօք սրտիւք», «ի բուռ սրտէ»,** ըստ Հ.Աճառյանի «Հայերէն արմատական բառարան»-ի՝ երկու տասնյակ, իսկ Ռ. Ղազարյանի մասնագիտական հրատարակության՝ «Գրաբարի դարձուածաբանական բառարան»-ում, «սիրտ» բաղադրիչով ընդամենը չորս դարձվածք է երբևիտմ)։

Ըստ Հ.Աճառյանի «Հայերէն արմատական բառարան»-ի «սիրտ»-ը բնիկ հայերէն բառ է՝ «սիրտ» օրգանի նշանակությամբ։ Այս բառահոդվածի տակ Արմատական բառարանի բերած գրաբարյան բառավկայությունները հետևյալն են (բերում ենք բառարանում առկա թվարկման հաջորդականությամբ). **սրտացուցանել** (Երգ երգոց), **սրտաբեկ** (Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց), **սրտազետ** (Գործք առաքելոց), **սրտալիք** (Կորին վարդապետի Պատմութիւն Ս.Մեսրոբայ), **սրտառուչ** (Պատմութիւն Բուզանդ Փաւստոսի, Կորին վարդապետի Պատմութիւն Ս.Մեսրոբայ), **սրտակեզ** (Պատմութիւն Բուզանդ Փաւստոսի), **սրտամոխի** (Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց), **այրասիրտ** (Ս. Խորենացոյ Պատմութիւն Հայոց), **հայկասիրտ** (Թովմայ Արծրունոյ Պատմութիւն), **թանձրասիրտ** (Յովհան Ոսկեբերան, Մեկնութիւն Եսաեայ), **գազանասիրտ** (Ս. Եփրեմի մատենագրութիւք), **խստասիրտ** (Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց), **խօթասիրտ** (Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց), **նեղասրտիկ** (Յովհան Ոսկեբերան, Մեկնութիւն... այլոց բանին հին կտակարանի), **միասիրտ** (Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց), **քաջասիրտ** (Մակաբայեցոց Բ գիրք)<sup>124</sup>։

Նկատելի է, որ վերոբերյալ գրաբարյան բառավկայություններից շատերը բացատրվում են հենց դարձվածային միավորներով. սրտացուցանել - սիրտ տալ, սրտաբեկ - սիրտը կտրված, սրտազետ - սիրտը կարդացող, հասկացող, սրտակեզ - սիրտն այրող, սիրտը մրմռացնող, այրասիրտ - ուժեղ սիրտ ունեցող, հայկասիրտ - Հայկի սիրտ ունեցող, գազանասիրտ - գազանի սիրտ ունեցող։

Այստեղ ծագումնաբանության առումով հնարավոր չէ չնկատել բարդ բառերի և դարձվածքների առաջացման նմանությունը։ Մյուս կողմից, այն բարդ բառերը, որոնք հիմնական իմաստից բացի ունեն փոխաբերական իմաստ, նրանց առաջացման հիմքում դարձվածային միավոր է, այսինքն՝ ծագումնաբանության առումով դարձվածքը նախորդում է բարդ բառին. սիր-

<sup>124</sup> Հ. Աճառյան, *Հայերէն արմատական բառարան*, հ. 4, Ե., 1979:



տը մաշած-սրտամաշ, սիրտը կտրտված-սրտաբեկ, սիրտը հասկացող- սըր-տագետ, սիրտը պինդ պահել -պնդասիրտ, քաջ սիրտ ունեցող- քաջասիրտ են:

Եվ քանի որ ծագումնաբանության առումով դարձվածքը նախորդում է համարժեք հոմանիշ բարդ բառին, ապա քիչ հավանական է, որ «սիրտ» բառով դասական հայերենը ընդամենը մեկ տասնյակ դարձվածքի կիրառություն է ունեցել, հետևաբար, ոչ բոլոր դարձվածային միավորներն են ներառված գրաբարյան բառարաններում, ըստ էության երկու հիմնական պատճառով: Նախ, հայտնի է, որ օրինակ՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»<sup>125</sup> հեղինակները վկայությունների բազմահազար էջերը (գրեթե 50 հատորյակի ծավալ) նյութական ծանր վիճակի պատճառով համառոտել են և թողել ներկայիս հանրածանոթ երկու հատորյակը. այսինքն բառարանագրության մեջ գործել է տնտեսման սկզբունքը: Մյուս կողմից, բառարանները, հավանաբար, հաշվի առնելով, դարձվածքների ժողովրդախոսակցական շերտից դուրս գալու հանգամանքը, հիմնականում բերել են արդեն գրական տարբերակում դրանցից սերված և կիրառություն գտած բարդ բառերի բացատրությունները. օրինակ՝ Արմատական բառարանում դարձվածքով բացատրվող համապատասխան բարդ բառերի վկայություններն ավելի շատ են, քան հիշատակվող դարձվածքները:

Վերոասածի հաստատումն է նաև այն փաստը, որ դարձվածքների մի զգալի մասի առկայությունը ժամանակակից հայերենում, արևմտահայերենում և բարբառներում ավելի վաղ ծագում ունեցող ընդհանուր աղբյուր ունենալու օգտին է խոսում, չնայած, որ դրանց գրաբարյան տարբերակը բացակայում է. (օրինակ՝ «սիրտը վեր էլնել» (ժկց.), «սիրտը ելլել» (արևմտ.), «սիրտը յէր իլլել» (Ղարաբաղի բարբառ). գրաբարյան տարբերակը բացակայում է: Կամ՝ «սիրտս յուղվեց» (ժկց.), «սիրտը իւղ կապել» (արևմտ.), «սերտըս յէղ կապեց» (Ղարաբաղի բարբառ) գրաբարյան տարբերակը դարձյալ բացակայում է):

Հայերենի դասական շրջանի դարձվածքների ոչ բոլորի վկայված լինելու մասին են խոսում նաև դրանց պատկառելի թվով առկայությունը Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մեջ, և մասնավորապես՝ միայն նրա «Գիրք քարոզութեան» Ձմեռան հատորում<sup>126</sup> «սիրտ» բառով երկու տասնյակից ավելի դարձվածային կիրառություն ենք գտնում՝ գրեթե հավասար գրաբարյան բառարանների վկայություններին (նույն հեղինակի մեկ այլ աշխատության՝ «Գիրք հարցմանց»-ում ավելի քան չորս տասնյակ դարձվածային կիրառություն կա. **գբաղձանք սրտին, գաղտնիք սրտի, գանձարանի սրտի, զգերեզմանս սրտից, զուարթ սրտիւ, բոլոր սրտիւ, բանքն սրտի, զբարկութիւն սրտին, զբերկրումն սրտին, բնակարան սրտին, բորբոք այրեցման սրտին, զգայրացումն սրտին, զծածուկս սրտին, թլփատութիւն սրտի, թշուառութեան սրտին.** խստութիւն սրտին, ի

<sup>125</sup> Հ. Աւետիքեան, Հ. Մխիթարեան, Հ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Ե., 1979:

<sup>126</sup> Գ. Տաթևացի, *Գիրք քարոզութեան, Ձմեռան հատոր*, Կ. Պոլիս, 1740:

բոլոր սրտէ, ի սիրտ երկրի, ի ձեռն սրտին, հեզ և խոնարհ սրտիւ, ջերմեռանդ և ողորմած սրտին, սիրտ երկրի, սիրտ սուրբ և աննեւզ, սիրտ սուրբ և գեղեցիկ, սիրտն կապեալ, սրտիւ հաւատալ, մաքրի սիրտն, հաւանին սրտիւք, սրտիւք տօնեմ, ռոռզէլ զսիրտս, ներտրամադրեալն ի սրտի, սրտին ասյրին, սրտիւ հաւատալ, քակէ ի սրտէն):

Սա ավելի քան համոզիչ փաստարկ է, որ նրա օրերում այս դարձվածքները տարածված կիրառություն են ունեցել, որովհետև հատկապես նրա Քարոզգրքերը գրվել են լայն լսարանի համար և տրամաբանական էր, որ քարոզների լեզուն գրեթե մոտենում էր խոսակցական լեզվին: Հետևաբար, սա էլ մի փաստ է՝ պնդելու, որ գրաբարյան բառարաններում դարձվածային միավորների ոչ ամբողջ ծավալն է ընդգրկվել:

Ըստ հիմնական բաղադրիչի խոսքի մասային պատկանելության Տաթևացու «Գիրք քարոզութեան» Ձմեռան հատորում գործածած դարձվածքները հիմնականում անվանական և բայական են.

անվանական բաղադրիչով դարձվածքներ. **բաղձանք սրտին (Ձմեռան,360), սուրբ սրտի (Ձմեռան,457, 361), բոլոր սրտի (Ձմեռան,455), յամենայն սրտէ (Ձմեռան,457), ի բոլոր սրտէ (Ձմեռան,456), քարացեալ սրտիւք (Ձմեռան,457), սէր սրտին (Ձմեռան,360), կէս սիրտ (թերի) (Ձմեռան,455), սէր ի սրտէ (Ձմեռան,456):**

Բայական բաղադրիչով դարձվածքներ. **առանց սրտի խօսել (Ձմեռան, 360 (շաղակրատել)), սիրտն աղաղակէ (Ձմեռան, 360) (հուզվել), ի սրտէն ելեալ (Ձմեռան, 360) (սրտից բխած), պահել ի սրտի (Ձմեռան, 457) (հիշել), խստանալ սրտիւք (Ձմեռան, 457) (խիստ զայրանալ, կոպիտ, դաժան վարքագիծ դրսևորել), սիրտն և լեզուն ընկերանան (Ձմեռան, 360) (խաղաղություն, ներդաշնակություն դրսևորել), սիրտն և լեզուն համաձայնին (Ձմեռան, 360), (համաձայնության մեջ գտնվել):**

Այս դարձվածքների մի մասը ժամանակակից հայերենում տարբերակային ձևերով պահպանվել է. **սիրտն աղաղակէ - սիրտը պայթել, պահել ի սրտի - պահել սրտում, բոլոր սրտիւ, յամենայն սրտէ - ամբողջ սրտով, քարացեալ սրտիւք - քարացած սրտով:**

«Գիրք քարոզութեան» Ձմեռան հատորի դարձվածքների օրինակներից նույնպես կազմվում են համապատասխան բարդ բառեր, ինչպես օրինակ՝ խստանալ սրտիւք-խստասիրտ, սուրբ սրտիւ-սրբասիրտ, քարացեալ սրտիւք - թանձրասիրտ, կէս սիրտ - սրտաբեկ, սէր սրտին - սրտալիր:

Ի տարբերություն սովորական կայուն բառակապակցությունների, ինչպես նշեցինք, դարձվածքն անպայման ունի փոխաբերական իմաստ, որը կարող է պայմանավորվել կամ բաղադրիչներից մեկի իմաստով, կամ բաղադրիչների համադրությամբ՝ նոր նրբիմաստի ձեռքբերմամբ: «Գիրք քարոզութեան» Ձմեռան հատորի դարձվածքներում հիմնականում դրսևորվել է երկրորդ դեպքը: Ավելորդ է ասել, որ բերվող օրինակներում սիրտը «չի խոսում», «չի աղաղակում», «չի ելնում», «չի խստանում», «չի ընկերանում», «չի համաձայնում», այլ սրանք բոլորը մարդու հուզական վիճակների սուր կամ

այլաբանական նշանակումն են՝ «սիրտ» բաղադրիչի և մեկ, կամ մի քանի այլ բաղադրիչների համադրությամբ:

«Գիրք քարոզութեան» Չմեռան հատորում շարադրանքի միջավայրում դարձվածքները հաճախ ունեն հեղինակային բացատրություններ և կամ՝ նյութի շարադրանքը արդեն իսկ հանգեցնում է որևէ բացատրության:

**Առանց սրտի խօսել** (Չմեռան,360) – Ադոթի ժամանակ երկու անկարգություն կարող է լինել. նախ, որ լեզուն խոսի առանց սրտի և շատախոսություն լինի. «...երկու անկարգություն է յադօթս: Նախ՝ որ **լեզուն առանց սրտին խօսի առաստուած՝** շաղակրատումն է և ոչ ադօթք»: Հեղինակը բառացի բացատրությունն արդեն իսկ բերում է՝ «շաղակրատում», այսինքն սուկ խոսքերի շարանը դեռ ադոթք չէ, այն պետք է արվի ջերմեռանդությամբ:

**Ի սրտէն ելեալ** (Չմեռան,360) - Ի տարբերություն «մեռելոտի ադոթքի»՝ ըստ հեղինակի **սրտից բխած** ադոթքը վկայում է մարդու հոգու կենդանության մասին. «ադօթքն ի բաղձանաց **սրտէն ելեալ՝** կենդանի է»:

**խստանալ սրտիք** (Չմեռան,457) - Սուրբ Գրքի պատումներում սրտի խստանալը, քարանալը, չարանալը հիմնականում բերվում են Ելից գրքում՝ փարավոնի հատվածում, որտեղ բնութագրվում է նրա հպարտությունը, հոխորտալը, չար անհնազանդությունը. «Եվ մի» լիցուք խստապարանոց և մի խստասիրտ. խստասիրտն է որպէս փարաւօն, որ չարացաւ և **խստացաւ սրտիք** ընդդէմ հրամանին աստուծոյ»: Նույն ծագումն ունի **քարացեալ սրտիք** (Չմեռան,457) դարձվածքը. «Այլն մի» լիցուք խիստ և **քարացեալ սրտիք**, որ զբնեռս սիրոյն աստուծոյ ոչ առնումք ի միտս մեր»:

**Պահել ի սրտի** (Չմեռան,457) - այսինքն՝ հիշել, սակայն ոչ թե պարզապէս հիշել, այլ՝ մեծ սիրով հիշել, հիշել խանդաղատանքով. «Եվ զի՞նչ է պիտոյ պատուիրանին Աստուծոյ, այսինքն՝ նախ ուսանիլն և ապա **պահելն ի սրտի** և ապա գործով կատարել»:

**Սիրտն աղաղակէ** (Չմեռան,360) «Անկարգ» և «բարեկարգ» ադոթքների հիմնական տարբերությունն ըստ էության ջերմեռանդության առկայությունն է կամ բացակայությունը, «սիրտն աղաղակէ», այսինքն՝ ջերմեռանդ ադոթել. - «Այլ ընդդէմ այսմ բարեկարգ ադօթքն կրկին է: Նախ՝ որ **սիրտն** ինքն ըստ ինքեան ադօթէ և **աղաղակէ** առ աստուած»:

**Սիրտն և լեզուն համաձայնին** (Չմեռան,360) - Այստեղ սրտի և լեզվի համաձայնությունը բացասական իմաստով է, հեղինակի բառերով՝ «խնդրել մարմնական ինչ, կամ կորուստ թշնամեաց, կամ յաջողումն չարաց». «Թե **սիրտն և լեզուն համաձայնին՝** այլ զչարն խնդրեն և զմարմնական խնդիրս, այն հեթանոսաց շատախօսութիւն է»:

**Սիրտն և լեզուն ընկերանան** (Չմեռան,360) - Եթե նախորդ օրինակում չար **համաձայնության** մասին էր խոսքը, ինչպէս տեսնում ենք, «**ընկերանանալը**» խաղաղության դրսևորման նրբիմաստ է բերում. «որ **սիրտն և լեզուն ընկերանան** միմեանց և բարին խնդրեն յԱստուծոյ, այսինքն զթողութիւն մեղաց և զարքայութիւն երկնից...»: Հավելենք նաև, որ այս դարձվածում «ընկերանալ» բառի ընտրությունը պատահական չէ, որովհետև հայերենում «ըն-

կերանայր» («ընդ կեր»՝ ծագումով) ի տարբերություն, օրինակ, ռուսերենի «**товарищ**» համարժեքի (որ ծագում է «**товарь**»՝ ապրանք, ունեցվածք բառից, այսինքն «ընկերություն անել» ռուսերենում բառացի նշանակում է ապրանքափոխանակության հարաբերության մեջ գտնվել)՝ հայերենում ենթադրում է օտարին խաղաղությամբ ընդունելու, հետևաբար «հացով կիսվելու», «սեղան գցելու» արարողություն, այսինքն սրտի և մարմնի «ընկերությունը» խորհրդանշում է այս խաղաղությունը: Նույն հեղինակի այս աշխատության մեկ այլ հատվածում կարդում ենք. «որ զհիրն սիրէ, մարդասեր է. և մարդասերն աստուած է, **զաստուծոյ նմանութիւն յինքն բերէ**» (Չմեռան 339), կամ՝ «Եվ զխաղաղութիւն **առ ընկերս** և **առ օտարս**՝ որով հանգիստ կէայ մարդն յաշխարհիս» (Չմեռան 456), այսինքն, սրտի և լեզվի «ընկերակցությամբ» մարդը տիրապետում է բարձրագույն վիճակի, որին նա կոչված է աշխարհում:

Հումանիշներ են «**բոլոր սրտիս**», «**ի բոլոր սրտէ**», «**յամենայն սրտէ**» դարձվածքները՝ արդեն իսկ պայմանավորված առաջին բաղադրիչների հոմանիշ լինելու հետ. «այլ պարտ է **յամենայն սրտէ**, **ամենայն գրոլորն** է իմանալ ըստ իմաստնոցն, այսինքն **բոլոր սրտիս** և բոլոր հոգով և բոլոր մարմնով և բոլոր մտօք սիրել զաստուած և ոչ մասամբ» (Չմեռան 455,456). «Եվ արդ՝ սիրեսցուք զաստուած ո՛վ եղբարք, **յամենայն սրտէ**» (Չմեռան 457):

**Կէս սիրտ** - «այսպէս որ **կէս սրտիդ** յաստուած լինի ... այսպիսի սէրս անընդունելի է աստուծոյ» (Չմեռան,455): Դարձվածքը տարածված է նաև մեր օրերում՝ «թերի վերաբերմունք» իմաստով:

**Սէր սրտին** (Չմեռան,360) - «Եվ դարձեալ որպէս խունկ ոչ մերձեցեալ ի հուրն զհօտն ոչ բուրէ, նոյնպէս խունկ աղօթիցն ոչ մերձեցեալ ի ջերմն **սէր սրտին**, ոչ հաճոյ է աստուծոյ»: Կրակով այրվող խնկի բուրմունք, - այսպէս է բացատրում հեղինակը սրտի ջերմ սիրով արված աղոթքը:

**Սէր ի սրտէ** (Չմեռան,456) - Նախորդ դարձվածքի հոլովված տարբերակն է. «Եւ **սէր ի սրտէ** փոխանակ անասնոց անբանից»: Փոխանակ կենդանական զոհերի, ըստ հեղինակի, աստուած սրտի սեր է ցանկանում տեսնել:

**Սուրբ սրտիս** (Չմեռան, 457) - «կակդացուցեալ թլպատեսցուք զսիրտս մեր յաւելորդ չարութենէ, զի կարասցուք **սուրբ սրտիս** սիրել զաստուած»: Օրինակը, դարձյալ բերվում է հեթանոսական սովորույթների համեմատությամբ՝ «թլպատեսցուք զսիրտս մեր յաւելորդ չարութենէ» պատկերավոր համեմատությամբ, որպէսզի աստծո նկատմամբ սերը մաքրամաքուր դառնա:

Բառարանային բացատրության առումով, սովորաբար, դարձվածային միավորները ունեն կոնկրետ բառային հոմանիշներ, սակայն ինչպէս ընդհանրապէս, այդպէս էլ Տաթևացու պարագայում, դրանց գործածությունը խոսքը ավելի ընդգծված, պատկերավոր և դիպուկ դարձնելու նպատակ է հետապնդում. օրինակ՝ **պահել ի սրտի** (ժամանակակից հայերենում՝ պահել սրտում), բառացի նշանակում է «հիշել, սակայն դարձվածքը սաստկական նրբերանգ է պարունակում, որ նշանակում է «հիշել սիրով», ավելին՝ «հիշել ջերմ սիրով». **ի սրտէն ելեալ** բառացի նշանակում է «արտահայտած», «արտա-

բերած», սակայն դարձվածքը ընդգծել է «ամբողջ ցանկությամբ», «սիրո դրսևորում» իմաստը:

Ծագումնաբանության առումով հիմնականում ձևավորվելով լեզվի ժողովրդախոսակցական շերտերում՝ դարձվածքը կարող է ունենալ գրական, աստվածաշնչյան և այլ ակունքներ, երբ դարձվածքի ձևավորման միջավայրը դառնում է հարազատ և ընկալելի, ինչպես օրինակ՝ **«խստանալ սրտիք» (Ձմեռան, 457)**, աղբյուրը աստվածաշնչյան հայտնի պատումն է, երբ Աստված խստացրեց փարավոնի սիրտը (Ելից. 14). **«սիրտն աղաղակէ»**. ամենայն հավանականությամբ նորկտակարանյան հատվածի համաբանությամբ է՝ «եթե դրանք լռեն, քարերը կաղաղակեն» (Ղուկաս. 19.40). «սուրբ սրտի» (Ձմեռան, 457, 361). ակունքը դարձյալ Աստվածաշունչն է. **«Հայկի սիրտ ունեցող»**, աղբյուրը Հայկի և Բելի առասպելն է:

Susanna Grigoryan- The word “heart” in the stable-phrases in the “Winter tome” of the “Preaches book” Grigor Tatevatsi.- Stable-phrases represents one of the most ancient ways of the national figurative thinking. But, analysis shows, that not every ancient armenian phraseological combinations entered in grabar dictionaries, as here the number of words not reach twenty, in that case that only in " Winter tome " of the “Preaches book” Grigor Tatevatsi that number is more than a few dozen.

Сусанна Григорян - Слово "сердце" во фразеологических оборотах в " Зимнем томе "Книги проповедей Григора Татеваци.- Фразеологические обороты представляют один из самых старых способов народного образного мышления, однако, анализ показывает, что не все староармянские фразеологические обороты вошли в грабарские словари, так как здесь их число не составляет два десятка, в том случае, что только в "Зимнем томе" Книги проповедей Григора Татеваци это число превышает несколько десятков.

**ԽԵԹԱ-ԼՈՒՎԱԿԱՆ ԵՆԹԱՇԵՐՏԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ  
ՏԵՂԱՆՈՒՆԵՐՈՒՄ**

---

Վաղնջական ծագման տեղանունների լեզվաբանական ուսումնասիրությունը երկու կարևորագույն նպատակ ունի. նախ՝ բացահայտել տեղանունը ստեղծող ժողովրդին և նրա լեզուն՝ իր ծագումնաբանությամբ, ապա՝ ըստ կարելիության ճշտել այդ տեղանվան գործածության տարածքում բնակվող ժողովուրդներին ու նրանց լեզուները: Այս նպատակների իրագործման լեզվական հիմնական գործիքը հնագույն տեղանունների հնչյունական, ձևաբանական կազմի և ամենից առաջ բառային բովանդակության վերականգնումն է: Տեղանվան նախնական իմաստի վերականգնումն առաջնային խնդիր է նաև պատմագիտության և աշխարհագրության համար, որովհետև այս գիտակարգերի տեսանկյունից տեղանունները տարբեր ժողովուրդների բնակության սկզբնական վայրերի, տվյալ տարածքի նախնական աշխարհագրական վիճակի մասին բնութագրիչ տեղեկություններ պարունակող միավորներ են, յուրօրինակ վաղնջատեքստեր, որոնց միջոցով հնարավոր է վերականգնել կորույսյալ փաստերը իրենց ինքնությունը կորցրած ազգերի, նրանց լեզուների, բնակության տեղանքի առանձնահատկությունների վերաբերյալ:

Հայկական բարձրավանդակը հնուց ի վեր եղել է տարբեր մեծ և փոքր ազգերի ու ցեղերի խառնարան, որտեղ բնիկ և եկվոր ժողովուրդները միմյանց դեմ պատերազմներ են մղել, դաշինքներ կնքել, պետություններ են ստեղծել արքայական և նախարարական տոհմեր ձևավորել: Այս ամենի հետևանքով հայոց լեզուն հարստացել է տարբեր արմատներով՝ հատկապես խեթա-լուվական, կամ անատոլիական, դրանցից կազմված տեղանուններով, անձնանուններով, իսկ մեր պատմությունը և մշակույթը՝ արքայատոհմերով, հերոսներով և աստվածներով:

Հայկական տեղանվանահիմքերում հայ-խեթական, հայ-լուվական բառային ընդհանրությունները, զուգաբանությունները յուրօրինակ շերտ են կազմում: Մեր այս հոդվածի նպատակն է առանձնացնել հայ-խեթական այն բառային զուգաբանությունները, արմատները, հատուկ և հասարակ անունները, դիցանուններն ու ժողովրդանունները, որոնք կամ ուղղակի են վկայված, կամ վերականգնվում են հայկական տեղանուններում: Դրանք փոխառություններ չեն, այլ հայերենի ենթաշերտը կազմող ձևեր են, ծագում վաղընջահայերենից, ընդ որում՝ այդպիսի տեղանվանահիմքեր ունեցող տեղանունների մի մասն իր կենսունակությունը պահպանել է ցայսօր: Ենթաշերտը տեղաբնակների լեզվի ազդեցությունն է եկվորների, ի մասնավորի՝ նվաճողների լեզվի վրա. շատ վաղնջական տեղանուններ բացատրվում են հենց ենթաշերտի միջոցով: Այդ իսկ պատճառով էլ ընդհանուր բառային ենթաշերտի մեջ ընդունված է առանձնացնել տեղանվանական ենթաշերտը: Տեղան-

վանագիտական գրականության մեջ ենթաշերտն ավելի լայն՝ լեզուների ցեղակցական բնույթից անկախ ըմբռնում ունի. «Տեղանվանագիտության մեջ ենթաշերտ ասելով հաճախ նկատի ունեն տվյալ տարածքի այն բոլոր բնակիչների տեղանունների լեզուն, որոնք ժամանակային առումով նախորդում են այժմ այդ տարածքում գերակշռող բնակիչներին՝ անկախ այս կամ այն բնակչության լեզուների մերձավոր ցեղակցային բնույթից»<sup>127</sup>: Այսինքն՝ ցեղակից ժողովուրդների կամ ազգերի տեղանվանական փոխներթափանցումները ևս համարվում են ենթաշերտային, այն դեպքում, երբ ընդհանուր լեզվաբանության մեջ անհնար է խոսել ենթաշերտի մասին, երբ խոսքը վերաբերում է քույր լեզուներին:

Ընդհանրապես տարբեր լեզուներում տեղանունների, հատկապես՝ տեղանվանահիմքերի զուգադրությունը թույլ է տալիս երևան հանել լեզուների ընդհանրության նոր աստիճաններ, որոնցից կարևորագույնը տիպաբանական մերձակցությունն է, այս կապակցությամբ Ն.Տրուբեցկոյը նշում է. «Ես կասկածում եմ, որ երբևէ հնարավոր կլինի համոզիչ և աներկբա (գիտական տեսանկյունից) ապացուցել հնդեվրոպական լեզուների մերձավորությունը սեմական, ուրալյան կամ կովկասյան լեզուների միջև: Ընդ որում ես, «մերձավորություն» ասելով, նկատի ունեմ բացառապես նրա ուղիղ իմաստը՝ ծագումնաբանական: Կա այլ մի բան՝ տիպաբանական մերձավորությունը, որն անկասկած գոյություն ունի ծագումնաբանորեն իրար հետ չկապված լեզուների միջև»<sup>128</sup>:

Խեթա-լուվական լեզուների հնդեվրոպական բնույթն արդեն ապացուցված է, սակայն բազմաթիվ են այս լեզուներում և հայերենում առկա բառային ընդհանրությունները ոչ հնդեվրոպական՝ սեմական, կովկասյան տարբեր ժողովուրդների հասարակ և հատուկ անունների միջև: Ինչպես փաստում է Գ.Զահուկյանը. «Ձգալի թիվ պետք է կազմեն հայերենի՝ խեթա-լուվական լեզուներից ոչ անմիջաբար կատարված փոխառությունները, դրանք կարող են գալ խուռա-ուրարտական, սեմական և այլ լեզուների միջնորդությամբ, ինչպես հայտնի է, խեթա-լուվական լեզուների ներդրումն այդ լեզուների մեջ բավական մեծ թիվ է կազմում»<sup>129</sup>: Նման բառերի հիման վրա հնարավոր է վերականգնել տիպաբանական մերձավորության աստիճանը Փոքր Ասիայում, Ասորիքում և Կովկասում բնակված ու բնակվող ժողովուրդների լեզուների միջև:

Հայերենի և խեթերենի փոխհարաբերության հարցը գիտնականների հետազոտության առարկա է դարձել դեռևս այն ժամանակ, երբ խեթերենի գիտական ուսումնասիրությունը նոր էր սկսվում, դեռ չէին տարբերակված

<sup>127</sup> **Р.А. Агеева**, *Проблемы топонимического субстрата // Этническая топонимика*. Сборник статей. М., 1987, էջ 15:

<sup>128</sup> **Н.С.Трубецкой**, *Проблема родства между большими языковыми семьями // Избранные труды по филологии*, М., 1987, էջ 61:

<sup>129</sup> **Գ.Բ.Զահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 313:

բուն խեթերենը և հիերոգլիֆային խեթերենը: Հայ-խեթական ցեղակցական ընդհանրության դրույթի անդրանիկ հիմնավորողը Պ. Ենսենն էր (P. Jensen, Hittiter und Armenier, Strassburg, 1898), որն առաջ էր քշում այն կարծիքը, թե խեթերը հայերի նախնիներն են: Խեթերի անունը, որը ակկադական, ուրարտական որոշ աղբյուրներում հայտնի էր *ht*, *hate*, *hatti*, *hati* ձևերով, Աստվածաշնչում՝ *hittim*, հնդեվրոպական լեզուներից հայտնի t>յ հնչյունական անցումով կարող է հանգեցնել *huy* ժողովրդանվանը: Խեթական բնեռագիր արձանագրությունների հայտնագործումից և վերձանումից հետո էլ որոշ գիտնականներ, օրինակ՝ Ի.Մ.Դյակոնովը (Хеты, фригийцы и армяне, Переднеазиатский сборник, Москва, 1961, 333-368 էջ) շարունակում էին հիմնավորումներ փնտրել այդ վարկածի համար՝ ձգտելով *huy* ժողովրդանունը կապել *hate*, *hatti*, *hati* անվանումների հետ: Նշենք, որ *խեթ* անվանումն ինքնանվանում չէ, *խեթերեն* եզրույթը ևս ծագել է ավելի ուշ, նախապես այս ժողովրդի լեզուն կոչում էին *նեսիտական* կամ *նեսիական*: Ինքնանվանումը *nešumili/ kanišumili* մակբայից է, որը թարգմանվում է՝ «խեթերի ձևով», այն ծագել է վաղ խեթական թագավորության կենտրոնական քաղաքի անունից՝ *Նեսս* կամ *Գանես* (գտնվում է արդի Թուրքիայի տարածքում՝ Գյուլթեփե)<sup>130</sup>: *Խեթերեն* լեզվանունը առաջացել է շատ ավելի ուշ ծագած աստվածաշնչյան *խեթեր* ժողովրդանունից, որի հիմքում խեթական պետության անվանումն էր՝ KUR<sup>URU</sup> *Hatti*- «Հաթի քաղաքի երկիր», նշենք, որ *Hatti*-ն հաթերի ինքնանվանումն է, իսկ հաթերը Կենտրոնական Անատոլիայի և Հայկական բարձրավանդակի ավտոխտոն ժողովուրդներից են, որոնք ձուլվեցին խեթերի մեջ: Հաթերի լեզուն հնդեվրոպական չէր և արմատապես տարբերվում էր հին անատոլիական հնդեվրոպական լեզուներից<sup>131</sup>:

Վերջին տարիներին Մայնցի գիտությունների և գրականության ակադեմիայի Հին Արևելքի հանձնաժողովի ջանքերով ստեղծվել է համացանցային շտեմարան «Hethitologie Portal Mainz», որը եվրոպական այլ կենտրոնների հետ համագործակցելով՝ վիթխարի աշխատանք է կատարում՝ հրապարակելով խեթերեն արձանագրությունների արտանկարները և դրանց վերձանմանը վերաբերող մեծաքանակ նյութեր:

Խեթերենն այսօր բավականաչափ ուսումնասիրված և գրավոր հարուստ վկայություններով փաստագրված վաղնջական լեզուներից է: Այն իր գրավոր հուշարձաններով հայտնի է մ.թ.ա. II հազարամյակից, համարվել է Խեթական թագավորության պաշտոնական լեզուն մ.թ.ա. XVIII-XIII դարերում: Հայտնի են խեթական գրչագրական չորս կենտրոններ՝ Խաթթունաս, Սաբինուվան, Թաբիկկան և Սաբիսան, այս կենտրոններում կատարված պեղումների ընթացքում հայտնաբերվել են տասնյակ հազարավոր կավե աղյուսներ, որոնք պարունակում են պետական, պաշտոնական, ծիսական բովանդակության տեքստեր: Ցավոք, խեթական սեպագիր աղյուսների մեծ

<sup>130</sup> Տե՛ս **Ա.С.Касьян, А.В. Свиридов**, *Хеттский язык/ Реликтовые индоевропейские языки Передней и Центральной Азии*, М., 2013, էջ 26:

<sup>131</sup> Հմմտ. **Գ.Բ.Ջահոլյան**, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, Ե., 1970, էջ 124:



մասն այսօր գտնվում է Թուրքիայում՝ Անկարայի ու Ստամբուլի թանգարաններում, մի հանգամանք, որը, գիտնականների արձանագրմամբ, անհնար է դարձնում կամ լրջորեն դժվարացնում է բնօրինակների գիտական ուսումնասիրությունը, բարեբախտաբար Բողազցյոյում գտնված տեքստերի պատահականներ մեծ մասամբ արտանկարված են և տպագրված<sup>132</sup>: XXI դարում խեթագիտությունը լուրջ առաջընթաց է արձանագրում. 2008-2012 թթ. հրապարակվել են խեթերենին վերաբերող նոր աշխատություններ, որտեղ պարունակվում է լեզվական հարուստ նյութ, ամենից առաջ առանձնացնենք Հ. Հոֆների և Կ. Մելչերտի երկհատորյա աշխատությունը, որի երկրորդ հատորում տառադարձմամբ տրված են խեթական բազմաթիվ արձանագրություններ, ինչպես նաև Թեո վան դեն Հաուտի աշխատությունը, որտեղ խեթական տեքստերը տրված են և՛ տառադարձմամբ, և՛ սեպագրերով<sup>133</sup>: Ընձեռված տվյալների հիման վրա հավաստիության առավել բարձր աստիճանով հնարավոր է գուգահեռներ անցկացնել հայ-խեթական տեղանվանական ընդհանրությունների վերաբերյալ:

Հայ-խեթական լեզվական առնչություններին անդրադարձել են ինչպես հայ, այնպես էլ օտար հայտնի լեզվաբաններ՝ Ջ.Բոնֆանտեն, Հ.Պեդերսենը, Գ.Ջոլտան, Ա.Կամենհուբերը, Տ.Շուլտհայսը, Ջ.Գրեպպինը, Ա. վան Վինդեկենսը, Ն.Մարտիրոսյանը, Գր.Ղափանցյանը, Հ.Աճառյանը, Հ. Մանանդյանը, Գ.Ջահուկյանը, որոնք հայ-խեթական ընդհանուր բազմաթիվ արմատներ են առանձնացրել: Ձուտ տեղանունների մակարդակում հայ-խեթ-լուվական առնչությունների մասին առանձին հետազոտություններ են կատարել Հովհ. Կարազոյանը, Ա.Քոսյանը, Վ.Խաչատրյանը, Ա. Պետրոսյանը: Գ.Ջահուկյանը, անդրադառնալով այս հարցի նախակարապետներին՝ որոշ վերապահումներ է կատարում: Այսպես՝ Բ. Հրոզնու աշակերտ Ն. Մարտիրոսյանի հետազոտությունները կարևորելով հանդերձ, հայագետը քննադատում է նրա մեթոդը, որը հիմնականում արտաքին նմանություններից էր ելնում: Թեև պետք է նշել, որ արտաքին նմանությունների հիման վրա բառային գուգաբանությունների ցանկի կազմումը էական կարևորություն ունի, նմանությունների որոշակի քանակից են ծնվում որակական բնութագրերը: Գր.Ղափանցյանի և Տ. Շուլտհայսի համեմատությունները համարվում են առավել համոզիչ, բայց՝ թերի: Գ.Ղափանցյանի պարագայում վճռորոշ է այն գործոնը, որ այս մեծ հայագետն այդպես էլ չընդունեց հայերենի հնդեվրոպական բնույթը՝ մեր լեզուն համարելով ասիանիկ և հնդեվրոպական տարրերի խառնուրդ: Ինքը՝ Ջահուկյանը, հայ-խեթական ընդհանրություններին անդրադառնալով, կարծում է. «Եթե ճիշտ է այն վարկածը, որ հայերենի բուն կրողները՝ արմենները, Փոքր Ասիայում մասսայաբար երևացել են փոյուզիական ցեղերի հետ մ.թ.ա. XII դարի մոտերքը, ապա խոսք կարող է լինել ոչ թե բուն խեթական ժողովուրդների, այլ

<sup>132</sup> Հմմտ. **А.С.Касьян, А.В. Свиридов**, նշվ. աշխ., էջ 29:

<sup>133</sup> Խեթագիտության վերջին ձեռքբերումները հասանելի են էլեկտրոնային տարբերակով «*Hethitologie Portal Mainz*» ծրագրի կայքում՝ <http://www.hethport.uni-wuerzburg.de/HPM/hethportlinks.html>

խեթական պետության կործանումից հետո այդ ժողովուրդների մնացորդների հետ հայերի ունեցած տևական շփման մասին»<sup>134</sup>: Այսինքն՝ հայ-խեթական բառային ընդհանրությունների հիմնական մասը պետք է լինեն հայ ժողովրդի մեջ ձուլված խեթա-լուվական հատվածների ենթաշերտային ազդեցության արդյունք: Գ. Ջահուկյանը կարծում էր, որ հայասերենը ևս ցեղակցորեն կապված է խեթա-լուվական լեզուների հետ, և փորձում էր հայասական շերտ վերականգնել հայերենում՝ իբրև բնիկ տարր: Ըստ էության այս կարծիքին էին նաև Գ. Ղափանցյանը և Ն. Ադունցը: Գ. Ջահուկյանի դիտարկմամբ, հայասցիների լեզուն, որը պատկանում էր հնդեվրոպական լեզուների խեթա-լուվական խմբին և պարունակում էր թրակյան տարր, հայերենին ձուլվելու ընթացքում նրա մեջ թողել է հնդեվրոպական ծագման այնպիսի բառեր, որոնք չեն բացատրվում հայերենի բուն օրինաչափություններով<sup>135</sup>: Մենք, հետևելով այս դրույթին, հայասական ծագման տեղանվանահիմքերը քննել ենք խեթականի հետ մեկտեղ:

Գ. Ջահուկյանի ենթադրությամբ, համեմատաբար փոքր է խեթերենից, լուվերենից հայերենի անմիջաբար կատարած փոխառությունների քանակը, հայ-խեթ-լուվական որոշ բառային ընդհանրություններ ամենայն հավանականությամբ գալիս են շրջակա լեզուներից, ամենից առաջ՝ կովկասյան և խուռա-ուրարտական լեզուներից<sup>136</sup>: Խեթական պետության արևելյան ծայրագավառում բնակվել են անատոլիական-հայասական, խուռա-ուրարտական, կովկասյան և այլ բնույթի ժողովուրդներ, ինչպես նաև հայերենով և նրան մերձավոր լեզուներով խոսող ժողովուրդներ: Գ. Ջահուկյանը եզրակացնում է. «Անհնար չէ Խորենացու հիշատակած՝ Հայկի հաջորդների և նախարարական որոշ տների անունների մեջ տեսնել հայասական թագավորների անունների և դիցաբանական անունների արձագանքը»<sup>137</sup>: Որպես հիմնավորում՝ նա բերում է **Արա, Տորք, Կադմոս, Հայկակ, Հոյ** դիցանունները, **Սկայորդի** ցեղանունը:

«Հին Հայաստանի տեղանունների պատմալեզվաբանական նշանակությունը» աշխատության մեջ Գր.Ղափանցյանն արդեն անդրադարձել էր հայ նախարարական մի շարք տոհմանունների, որոնցից ծագում են բազմաթիվ բնականուններ և երկրանուններ՝ դրանք ստուգաբանելով որպես խեթական ցեղերի հնագույն անվանումներ: Նման ստուգաբանությունների որոշ մասն այսօր վիճարկվում է, սակայն ընդհանուր կաղապարն իր կենսունակությունը պահպանում է ցայսօր, այսինքն՝ հայկական էթնոսի մեջ ձուլվող այլ ցեղային միավորների անվանումները սկզբնապես վերածվել են տոհմանունների, ապա՝ բնականունների, որովհետև այդ տոհմերը հիշյալ գավառների կամ աշխարհների տերն էին ու հիմնադիրը: Այսպես՝ **Ամատունիները**, Գր.Ղափանցյանի համոզմամբ, ծագում են *mada* ցեղանունից, որը նույնն է, ինչ միդացիները, Գ. Ջահուկյանը ևս բերում է հիերոգլիֆային խեթերեն **Amatuṣuana**

<sup>134</sup> Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, Ե., 1979, էջ 146-147:

<sup>135</sup> Գ. Բ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան*, էջ 340:

<sup>136</sup> Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, էջ 147:

<sup>137</sup> Գ. Բ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան*, էջ 341:

(ցեղանունը)՝ առանց մեկնաբանության այն զուգադրելով հայոց *Ամասունի* տոհմանվան հետ<sup>138</sup>: Գր. Ղափանցյանը խեթական արմատներ է վերականգնում **Մանդակունի** տոհմանվան մեջ՝ այն բխեցնելով *mandak* անունից, **Մլկունի** տոհմանունը՝ *sala, salak* ցեղանունից, վերջիններս հիշատակվում են խեթական օրենսգրքում, ինչպես նաև ասորեստանյան արձանագրություններում որպես մարտունակ և ավազակաբարո ազգություններ: **Խոռխոռունի** տոհմանունը բխեցվում է *Xor* անունից, որը նույնն է, ինչ *Խուռ*-ը, խուռիտները<sup>139</sup>: Այս տոհմանուններն իրենց հերթին տեղանունների հիմք են դարձել:

Պատմաբանների համոզմամբ, վերոնշյալ ազգությունների մի մասն ապրում էր Հայաստանում կամ տեղափոխվել էր Հայաստան Խեթական պետությունից, և նրանց ժառանգները դարձել էին հայոց նախարարական տների հիմնադիրներ: Երբեմն այդ տոհմերը, ձուլվելով մայր ժողովրդի մեջ, իրենց մասին վկայություններ պահպանել են միայն տեղանունների մեջ, որովհետև նրանք չեն կարողացել երկար գոյատևել որպես ինքնուրույն ավատատեր տոհմ և կլանվել են այլ՝ ավելի բազմանդամ ու հզոր նախարարական տոհմերի կողմից: Այս առումով հետաքրքիր է ներկայումս վերակենդանացած **Քաշաթաղ** տեղանվան ստուգաբանությունը, որը արձանագրված է պատմագիր Ստեփանոս Օրբելյանի Սիսական նահանգի պատմության մեջ, այս ստուգաբանությունը զարգացվել է Գր. Ղափանցյանի կողմից, ըստ այդմ՝ *Քաշաթաղ*, *Քաշունիք*, *Քաշի մարզ* տեղանունների հիմքում *քաշիտ* ցեղն է, *Քաշունիքն* ինքնին, որպես լեզվական միավոր, տվյալ ազգի հոգնակի ուղղականի բառաձևն է: Նշենք, որ հոգնակի ուղղականի և հայցականի հոլովաձևերը տեղանուն դառնալու մեծ ներուժ ունեն<sup>140</sup>:

Խեթա-լուվական ենթաշերտային տեղանուններից հիշատակենք **Արմավիր**-ը, որը Գ. Ջահուկյանը բխեցնում է հին անատոլիական *Arma* - «լուսին, լուսնաստված» անունից<sup>141</sup>: **Ամասիա**-ն համադրում է խեթերեն *hamasa-s* «թոռ» բառի հետ<sup>142</sup>՝ այս մեկնաբանությունը համարելով առավել հավանական, բայց բերում է նաև թրակյան կամ հրեական ծագման վարկածներ: Այսպես՝ զուգահեռականություն է հաստատում թրակյան իզական *Αμασιαχis* անվան և հայկական արական *Ամասիա* անվան միջև, որից Ս. Խորենացին բխեցնում է *Մասիա* լեռնանունը, Ջահուկյանն այս շարքում հիշատակում է նաև հրեական թագավոր Ամասիային, որի անունը հրեերեն ստուգաբանվում է *amš* «հզոր» և *Jah* «Եհովա» բաղադրիչներով: Այս զուգաբանությունները բերվում են թեակա-նության երանգով<sup>143</sup>: Իսկ Ա. Քոսյանը **Ամասիա** տեղանվան մեջ տեսնում է խեթական *am* արմատը՝ «մայր, կին» իմաստով<sup>144</sup>:

<sup>138</sup> Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 161:

<sup>139</sup> Տե՛ս Գր. Կապանյան, *Историко-лингвистические работы*, Ե., 1975, հ. II, էջ 46-47:

<sup>140</sup> Տե՛ս Գր. Կապանյան, նշվ. աշխ., էջ 123-125:

<sup>141</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 161:

<sup>142</sup> Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան*, էջ 162:

<sup>143</sup> Նույն տեղը, էջ 68:

<sup>144</sup> Ա. Քոսյան, *Հայկական լեռնաշխարհի տեղանունները*, Ե., 2004, էջ 45-46:

Չուտ հայասական ծագման տեղանվանակերտներից Գ. Ջահուկյանն առանձնացնում է **aša** մասնիկը, որը համարում է հայկական –*ական* ածանցին հոմանիշ մասնիկ, որը խեթա-լուվական լեզուներում կազմում է սեռական հոլովին գուգահեռ ստացական ածականներ, ուստի **Հայասա//KUR<sup>URU</sup> Hayaša** տեղանունը նշանակում է՝ *հայ-ական*<sup>145</sup>, Haya-ն համարվում է տոհմանուն, որը ծագում է անվանադիր աստուծո անունից (խեթական տեքստերում նշված է U.GUR)<sup>146</sup>:

Հայկական տեղանուններում հանդիպող *առիճ/առինջ* բաղադրիչը Գ. Ջահուկյանը ևս համարում է հայասական՝ բացատրելով այն «տանել» կամ «խլել» խեթալուվական արմատներով, թեև չի բացատրում Հ. Աճառյանի բացատրությունը հայկական արմատի միջոցով *առիճ/առինջ* > «տուն, շեն» իմաստներով<sup>147</sup>: **Առիճ/առինջ<sup>URU</sup>Pitiyarig/k/q(a)** տեղանվան մեջ, որը համադրվում է հայկական *Բազա(յա)ռիճի* կամ *Բթառիճի* հետ, իսկ առաջին բաղադրիչի համար վերականգնվում է հայ. բուրբ «հաստ, գուլ, թավ» արմատը՝ Վասպուրականի *Բուրբ* և Բայազետի *Բուրբակ* բնակավայրերի անունների համաբանությամբ:

Ա. Քոսյանը **Արիփսա//<sup>URU</sup>Aripša** (Վանա լճի արևմտյան ափին) տեղանվան մի քանի ստուգաբանական փորձերից կարևորում է հայերենով և խեթերենով վերականգնումը՝ *Ara* դիցանուն + *isba/e* «ձի», որ բառացի թարգմանվում է «հեծյալ Ար» կամ «Ար աստուծո ձի», հնարավոր է նաև «Ար աստուծո սրբավայր» մեկնաբանությունը<sup>148</sup>:

**Արմատանա//<sup>(KUR)</sup><sup>URU</sup>Armatana** տեղանունը (ենթադրաբար կասկյան երկիր) Գ.Ջահուկյանը բխեցնում է հայերեն «արմատ, տոհմ, ցեղ» բառից, այն պահպանվել է հետագա *Արմտան*-ի մեջ (*Մեծ* և *Փոքր Արմտաններ*) այս արմատի միջոցով հայազետը ստուգաբանում է նաև *Արմ-են* հայոց ժողովրդանունը՝ որպես «արմ-արմատ, ցեղ, գ-արմ» կամ «ընձիղ, ցողուն», «մեծ, ուժեղ, հզոր», այս ձևերը ծագում են հե. \*er «շարժ(վ)ել, հուզել, բարձրացնել» արմատից \*m- կամ \*-men- մասնիկների հավելմամբ, ինչպես օրինակ՝ *ὄρμενος* «ցողուն, ընձյուղ», *ὄρμνος* «ձյուղ»<sup>149</sup>:

**Ազգի//<sup>(KUR)</sup><sup>URU</sup>Azzi** երկրանունն ունի ստուգաբանության տարբեր վարկածներ, Գ. Ջահուկյանն առաջարկում է՝ հայկական «ազգ, ցեղ, սերունդ, տոհմ», հե. \*g'en- հիմքից բխեցնել, այս մեկնաբանությունը մոտ է Ն. Արոնցի կարծիքին, բայց հայազետը չի բացատրում նաև *Ազգի* անվան այլ ծագում օրինակ, *ազազուն* «չոր» արմատից առաջացած լինելը<sup>150</sup>:

<sup>145</sup> Նույն տեղը, էջ 331:

<sup>146</sup> Ա. Քոսյան, նշվ. աշխ., էջ 50:

<sup>147</sup> Գ.Բ.Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային շրջան*, Ե., 1987, էջ 337:

<sup>148</sup> Նույն տեղը, էջ 39:

<sup>149</sup> Գ.Բ.Ջահուկյան, նշվ.աշխ., էջ 287-288, նաև Ա. Քոսյան, նշվ. աշխ., էջ 40:

<sup>150</sup> Ա. Քոսյան, նշվ. աշխ., էջ 44-45:

Հայ-խեթ-լուվական ընդհանուր տեղանվանակերտ արմատներից նշենք նաև՝ tam/dam «կառուցել» - հայերեն **տուն**, որոնցից կազմված են հայկական մի շարք հին տեղանուններ՝ *Անգեղատուն, Ագրավատուն, Բշխանատուն*, խեթ. šuppi «մաքուր»- հայերեն **սուրբ**, *Սուրբ, Սուրբահան, Սրբանիստ*, խեթ. Išha «սեր» - հայերեն **իշխան**, *Բշխանասար, Բշխանաձոր, Բշխանանիստ*, խեթ. Կappu «գետափ»- հայ. **ափն** արմատը, որից ունենք՝ *Ափնագյուղ, Ափնա, Ափուն, Գետափ*, հիեր. խեթ. Tarhuna «որոտի աստված»- հայ. Տորք աստվածությունը, լուվ. Šantaš (որոտի աստվածը, ինչպես նաև՝ šant- «բարկացած, զայրացած»)- հայ. **շանթ**, հիեր. խեթ. A'-s-ti-ya-su-s անձնանունը, ինչպես նաև՝ Astuqatimaš իշխանի անունը, որ թարգմանվում է «այն թող լինի անունը», վերջինս զուգադրվում է հայերեն **աստված** բառի հետ, որը ևս տեղանվանահիմք է՝ *Աստվածընկալ, Աստվածամայր, Աստվածաբերդ, Աստվածածին*, խեթ. Muršili-š- հայ. **Մուշեղ**<sup>151</sup> և այլն:

Հիշյալ տեղանունների, տեղանվանական հիմքերի ընդհանրություններն աներկբա վկայում են, որ հնդեվրոպական հնագույն անհետացած լեզուների՝ հատկապես խեթա-լուվական, ուսումնասիրության բնագավառում արձանագրված մեծ առաջընթացը հնարավոր է դարձնում դրանց և հայերենի փոխհարաբերությունների նորովի գնահատումը մեր ազգածագման և վաղնջական պատմության առավել ճշգրիտ և ամբողջական վերականգնման համար:

Narine Dilbaryan – The Hittite-Luwian substrate in the Armenian place names (toponyms). - Armenian plateau has been a crossroad for both big and small nations since the ancient times, most of them have merged with each other or disappeared, their tracks can often be restored only by the remaining place names. The Armenian place names of the Armenian-Hittite, Armenian-Luwian isoglosses make an extensive layer in the language. These roots are not loan-words, they form a substrate in ancient Armenian, some of them are productive even today. For example, tam / dam «build»> **տուն** in Armenian "house" - Angehatun, Agravatun, Ishkhanatoun, šuppi «clean»> **սուրբ** in Armenian "holy"- Surp, Srbahan, Srbanist, išha «boss, Mr»> **իշխան** in Armenian "prince" - Ishkhanasar, Ishhanadzor, Ishhananist, Կappu «riverbank»> **ափն** in Armenian "shore" - Apnaguyugh, Apna, Apum, Getap, A'-s-ti-ya-su-s or Astuqatimaš anthroponym> **աստված** in Armenian "god" - Astvatsynkal, Astvatsamayr, Astvatsaber, Astvatsatsin, etc.

Нарине Дилбарян - Хетто-лувийский субстрат в армянских топонимах. – Армянское нагорье с древних времен было перекрестком для больших и малых народов, многие из которых ассимилировались, исчезли, их следы чаще можно восстановить только в топонимах. В армянских топонимах армяно-хеттские, армяно-лувийские изоглоссы составляют весомую прослойку. Эти корни не являются заимствованиями, они образуют субстрат в древнеармянском языке, часть из них продуктивны и сейчас. Например, tam/dam «строить»> **տուն** по-армянски «дом» -

<sup>151</sup> Հմմտ. Գ.Բ.Ջահուկյան, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, էջ 148-162:

*Ангехатун, Аграватун, Ишханатун, šurri «чистый»*> **սուրբ** по-армянски «святой»  
- *Сурб, Србахан, Србанист, išha «хозяин, господин»*> **իշխան** по-армянски «князь»  
- *Ишханасар, Ишханадзор, Ишхананист, օրրի «берег реки»*> **ափն** по-армянски  
«берег» - *Аннагюх, Анна, Арум, Гетан, А'-s-ti-qa-su-s* или *Astuçatimaīs* антропо-  
ним> **աստված** по-армянски «бог» - *Аствацынгал, Аствацамайр, Аствацаберд,*  
*Аствацацин* и т.д.

**ՎԱՐՔ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՅԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԱՐԴԻ  
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Խոսքային գործունեությունն իրականացվում է **ասացական, մտածական, զգացական**, ինչպես նաև **վարքի** բայերի (ՎԲ) գործուն մասնակցությամբ: Արդի հայերենում ՎԲ-երի վերաբերյալ որևէ ուսումնասիրություն չկա: Մենք հետազոտել ենք այն **խմաստային տեսանկյունից՝** դիտարկելով իբրև **բառաիմաստային խումբ (ԲԻՄ)**՝ կազմակերպված **դաշտային սկզբունքով՝ միջուկի, եզրամասի, հատվող միավորների** փոխհարաբերությունների հաշվառմամբ:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել մարդու վարքը՝ **բացահայտելու վարքագործունեության** լեզվական արտացոլումները, որոնք իրենց մարմնավորումն են գտնում ՎԲ-երի մեջ, **ուրվագծելու** այդ ԲԻՄ-ի սահմանները՝ հիմք ընդունելով **դասակարգման իմաստային չափանիշը**, այսինքն՝ բառարանային բացատրությունը: Խմբավորումը կատարել ենք՝ նկատի ունենալով **միասնականացնող կարգային-բառային հետևյալ իմակը**. «Վարքի բայերն արտացոլում են մարդկանց՝ հասարակության մեջ իրենց պահելու, անձնական կյանք վարելու եղանակը, կենցաղավարությունը, վարվելակերպը, մեկի կամ մի քանի նկատմամբ այս կամ այն վերաբերմունքի դրսևորումն ու գնահատականը»: Բառացանկը կազմել ենք, ըստ Է. Աղայանի Արդի հայերենի բացատրական բառարանի (ԱՀԲԲ)<sup>152</sup>, **համատարած ընտրանքի** եղանակով և **դասակարգել իմաստահարացուցային, շարակարգային և գործարանական սկզբունքներով**: Իմաստահարացուցային դասակարգումը կատարել ենք **երկաստիճան համակարգով՝** առաջին աստիճանում ՎԲ-երի ԲԻՄ-ը բաժանելով **երեք դասի՝ առաջնային, երկրորդային և փոխաբերական**: Վարքի առաջնային բայերի դասին ենք վերագրել նրանք<sup>153</sup>, որոնք, որպես **վարքագործունեության** արտահայտություն, արձանագրված են ԱՀԲԲ-ում իրենց **առաջին երկու-երեք** նշանակություններով (3462): **Երկրորդային բայերի** դասին՝ նրանք, որոնք արձանագրված են ԱՀԲԲ-ում իրենց **երրորդական-չորրորդական** կամ այլ նշանակություններով (256): **Փոխաբերական** բայերի դասին՝ նրանք, որոնք արձանագրված են ԱՀԲԲ-ում իրենց **փոխաբերական** նշանակություններով (784): Դասակարգման **երկրորդ** աստիճանում ՎԲ-երի **առաջնային հարացույցը** իմբավորել ենք ըստ **ենթահարացույցների**<sup>154</sup>՝ նկատի ունենալով բարոյագիտական հասկացությունները: Ի տարբերություն **առաջնային բայերի՝ երկրորդային և փոխաբերական բայերը** գուրկ են **իմաստային հակադրությունից**, որովհետև խոսքային իրադրության մեջ են միայն ձեռք բերում **վարքագործունեու-**

<sup>152</sup> Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976:  
<sup>153</sup> Դասակարգելիս հիշյալ բառարանից քաղել ենք միայն **համադրական** բայերը:  
<sup>154</sup> Տե՛ս Ս. Ռ. Դոկտայան, *Ասացական բայերի բառաիմաստային խումբը արդի հայերենում*, Ե., 2014, էջ 22-23:

թյան հատկանիշ և կապ ունեն խոսքային տարբերակայնության հետ, հետևաբար դուրս են մտում **հարացուցային դասդասումից**:

Այս բայերի առանձնահատկությունը նրանց **գնահատողականությունն** է, վարքի և արարքների նկատմամբ որևէ **վերաբերմունք արտահայտելու ունակությունը**:

Ռուս լեզվաբաններից **Օ. Ժդանովան** նշում է, որ **ՎԲ**-երը արտահայտում են մարդու հանրային-հաղորդակցական գործողությունների և արարքների միասնությունը՝ ստանալով որոշակի հանրային-ինտելեկտուալ **գնահատական**՝ պայմանավորված **վարքագործողությունների և արարքների հանրային որոշակի նշանակալիությամբ, ընդհանրացող սուբյեկտի դիրքորոշմամբ**, որի տեսանկյունից էլ գնահատվում են դրանք, **տվյալ հասարակության մեջ ընդունված վարքի նորմերի համընդհանուր հասկացություններով**<sup>155</sup>: **Ա. Նեչանան ՎԲ**-երը բաժանում է խոսքային, հանրային հարաբերությունների վրա ազդելու, քաղաքավարության նորմերը խախտող, այլ անձանց վրա ազդեցություն գործելու, այլ անձանց խաբելու միջոցով շահ ստանալու, արտաքին դրսևորում ունեցող (օր.՝ ձևացնել, սպավորություն թողնել ևն), առանց բացասական գնահատականի, ընդհանուր վարք արտահայտող **ենթախմբերի**՝ միաժամանակ նշելով, որ դժվար է այդ բայերի դասակարգումը, քանի որ նրանց մեջ սերտորեն միահյուսվում են արտալեզվական, հասկացական և լեզվական նշանակություններ<sup>156</sup>: **Լ. Վասիլը** վերոնշյալ բայերը բաժանում է **ազնիվ, անկեղծ, արժանապատիվ, քաղաքավարի, հնազանդ, համեստ, անկաշկանդ, հավասարակշռված, ինքնակառավարվող, ուշադիր, զգուշավոր, լուրջ, բանական/խելամիտ, զծուծ** վարքատեսակների, ինչպես նաև վարքի տարբեր կողմերը բնութագրող միայնակ բայերի<sup>157</sup>:

**Բարոյագիտության մեջ** առանձնացվում են **իդեալ, բարիք և չարիք, պատասխանատվություն և խիղճ, ազատություն, առաքինություն և արատ, երջանկություն, հաճույք, շահ, արդարություն, զբասրություն, կատարելություն, եսասիրություն, բարեգործություն, էվթանագիա, մահապատիժ, բռնություն հասկացությունները**<sup>158</sup>. իհարկե, սրանցից բոլորը չէ, որ իրենց արտացոլումը գտնում են բայապաշարում (օր.՝ **իդեալ, կատարելություն, էվթանագիա** ևն)՝ **սակավաթիվ** (մեկ-երկուսը) լինելու, **վերլուծական բայերով** (օր.՝ դաս տալ, մեղք գործել ևն) կամ այլ **խոսքի մասերով** արտահայտվելու պատճառով:

Լայն առումով **վարքը** ենթադրում է բարոյականության և նրա անբալետելի կողմերի՝ **բարոյական գործունեության, բարոյական հարաբերությունների և բարոյական գիտակցության** կիրառումը հանրության կյանքում՝

<sup>155</sup> Տե՛ս **Օ. Жданова**, *Семантическая структура глаголов поведения, Семантические классы русских глаголов*, Свердловск, 1982, Межвуз. сб. науч. трудов, էջ 55:

<sup>156</sup> Տե՛ս **Ա. Нечаева**, *Аспектуальная характеристика предикатов поведения*, actalinguistica. com:

<sup>157</sup> Տե՛ս **Լ. Васильев**, *Семантика русского глагола*, Уфа, 1981, էջ 54-70:

<sup>158</sup> Տե՛ս **Ա. Гусейнов. Р. Апресян**, *Этика: Учебник*. - М., Гардарики, 2004, **Ռ. Օհանջանյան** *Էթիկա և էթիկետ. Բարոյագիտություն և վարքականոններ*, Ե., 2008:



նպաստելով մարդու ձևավորման, դաստիարակության, հանրային կառավարման խնդիրների լուծմանը<sup>159</sup>:

Արդի հայերենի ՎԲ-երը մենք բաժանում ենք **հանրային, բարոյական/անբարոյական, անձնային, նպատակային, զարգացման, վարվելակերպի, ազդեցության, խոսքային, վարքափոխակերպման ենթահարացույցների**:

Հանրային վարքի բայերի ենթահարացույցը ձևավորվում է հանրային վարքի իմաստահավելիչով (իմ-իչ)՝ արտահայտելով հետևյալ իմաստային բանաձևը (ԻԲ). «Հանրային կյանքում որոշակի վարք դրսևորել»: Նույնացուցիչը (նույն-իչ) գործելն է: Ըստ իմաստային տարբերացուցիչների՝ ենթահարացույցը բաժանվում է գնահատման, արդարության հաստատման, աշխատասիրության, ծուլության, բարեգործության, չարագործության բայախմբերի: Գնահատման բայախումբ՝ «Մեկի՝ մի բանի հարգը՝ արժեքը ճանաչել, արժանիքին համապատասխան վերաբերվել»<sup>160</sup> ԻԲ-ով՝ *գնահատել*, արժևորել, վերագնահատել ևն<sup>161</sup> բայերով: Արդարության հաստատման բայախումբ՝ «Դատարանի վճռով, պատճառաբանություններով կամ արարքներով աշխատել վերաբերմունքը՝ վարմունքը արդարացնել, իր արդարությունը հաստատել» ԻԲ-ով՝ *արդարանալ*, անմեղացնել, ինքնարդարանալ բայերով: Աշխատասիրության բայախումբ՝ «Հանրօգուտ գործունեություն ծավալել՝ որևէ արդյունք ստանալու համար» ԻԲ-ով՝ *աշխատել*, զբաղվել, ծառայել բայերով: Բաղկացած է հաջողության ենթախմբից՝ «Որևէ գործ հաջողությամբ պսակել» ԻԲ-ով՝ *հաջողել*, կարողանալ, ճարտարել բայերով: Ծուլության բայախումբ՝ «Որևէ գործով զբաղվելու հակման ու ցանկության բացակայություն ցուցաբերել» ԻԲ-ով՝ *ծուլանալ*, զլանալ, հեղգանալ բայերով: Բարեգործության բայախումբ՝ «Բարեկամաբար վարվել այլոց նկատմամբ, հնարավորինս աջակցել» ԻԲ-ով՝ *բարեբարել*, երախտավորել, հովանավորել բայերով: Բաղկացած է հոգածության և աջակցության ենթախմբերից: Հոգածության՝ «Մեկին խնամել, մեկի մասին հոգ տանել» ԻԲ-ով՝ *հոգածել*, խնամել, հոգալ բայերով: Աջակցության՝ «Դժվարին իրավիճակում որևէ մեկին օգնել, սատար կանգնել» ԻԲ-ով՝ *աջակցել*, նպաստել, սատարել, օգնել բայերով: Զարագործության բայախումբ՝ «Բարոյական պահանջների դեմ հանցավոր գործողություն կատարել՝ ոտնահարելով մարդասիրության և արդարության սկզբունքները» ԻԲ-ով՝ *չարագործել*, չարախնդալ, չարանալ բայերով: Բաղկացած է դավաճանության, իրավախախտման, սպանության ենթախմբերից: Դավաճանության ենթախումբ՝ «Թշնամիների կողմն անցնելով՝ յուրայինների դեմ գործել» ԻԲ-ով՝ *դավաճանել*, ուխտադրժել, երդմնազանցել բայերով: Իրավախախտման՝ «Օրենքի պահանջները չկատարել կամ խախտել՝ սեփական շահերին ապօրինությամբ

<sup>159</sup> Տե՛ս 'ս *Բարոյագիտական բառարան*, Ե., 1985, էջ 57:

<sup>160</sup>Սյունիետ բարոյագիտական հասկացությունները ներկայացվում են ըստ *Բարոյագիտական բառարանի* և Է. Աղայանի վերը նշված *բառարանի*:

<sup>161</sup> Հոդվածը չձանաթեմնելու նկատառումով յուրաքանչյուր տեսակի համար բերում ենք երկուսից հինգ օրինակ:

հասնելու նպատակով»՝ *իրավախախտել*, իրավագանցել, օրինախախտել բայերով: Բաղկացած է գողության բայաշարքից՝ «Ուրիշին պատկանող իրը թաքուն վերցնել ու սեփականել» ԻԲ-ով՝ *գողանալ*, գրպանել, յուրացնել բայերով: Սպանության ենթախումբ՝ սպանության նույն-իչով, որոշ բայեր էլ՝ զանգվածային սպանության իմ-իչով՝ «Որևէ միջոցով մեկին կյանքից զրկել» ԻԲ-ով՝ *սպանել*, եղեռնագործել, կոտորել, ոճրագործել բայերով:

Բարոյական/անբարոյական հարաբերություններ արտահայտող բայերի ենթահարացույց. կախումների ու կապերի ամբողջություն, որ ծագում է մարդկանց բարոյական գործունեության ընթացքում՝ ըստ նրանց միջև առկա համատեղ գործունեության ընթացքում իրար նկատմամբ ունեցած որոշակի պարտականությունների: Ձևավորվում է բարոյական հարաբերությունների իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Բարոյականության կանոնները պահպանել և դրանց համաձայն գործել»: Նույն-իչը հարաբերվել-ն է՝ սիրո, հարգանքի, պատասխանատվության, ամուսնաընտանեկան հարաբերությունների բայախմբերով: Սիրո բայախումբ՝ «Մեկի՝ մի բանի նկատմամբ խորին կապվածություն զգալ, հակառակ սեռին պատկանող անհատի նկատմամբ սեր տածել» ԻԲ-ով՝ *սիրել*, գորովել, պաշտել բայերով: Բաղկացած է բարեկամության ենթախմբից՝ «Բարեկամ դառնալ, մտերմանալ» ԻԲ-ով՝ *բարեկամանալ*, եղբայրանալ, խնամիանալ, ընկերանալ բայերով: Հարգանքի բայախումբ՝ «Հարգանք տածել մեկի նկատմամբ, ճանաչել, գնահատել մեկի արժանիքները՝ վաստակը նն» ԻԲ-ով՝ *հարգել*, ակնածել, երկրպագել, պատկառել բայերով: Պատասխանատվության բայախումբ՝ «Իր գործողությունների, արարքների համար հաշվետու լինել և դրանց հետևանքները իր վրա կրելու պարտավորություն ստանձնել» ԻԲ-ով՝ *ստանձնել*, հանձնառել, խոստանալ բայերով: Ամուսնաընտանեկան հարաբերությունների բայախումբ՝ «Օրինական ամուսնական կապի մեջ մտնել, ընտանիք կազմել» ԻԲ-ով՝ *ամուսնանալ*, նշանվել, հարսնանալ բայերով: Բաղկացած է ամուսնալուծության ենթախմբից՝ «Օրինական ճանապարհով ամուսնությունը լուծել» ԻԲ-ով՝ *ամուսնալուծվել*, պսակալուծվել, բաժանվել բայերով: Անբարոյական հարաբերությունները ձևավորվում են «Հասարակության կողմից ընդունված բարոյական նորմերից շեղվել» ԻԲ-ով: Նույն-իչը անբարոյականանալն է՝ անամոթության, շվայտության, անառակության բայախմբերով: Անամոթության բայախումբ՝ «Անամոթ արարք, վարքագիծ դրսևորել» ԻԲ-ով՝ *անամոթանալ*, անզգամանալ, անպատկառանալ, ցինիկանալ բայերով: Շվայտության բայախումբ՝ «Ցուփ կյանք վարել, կերուխումի անձնատուր լինել»՝ *շվայտանալ*, զեխանալ, ցուփանալ բայերով: Անառակության բայախումբ՝ «Անառակությամբ զբաղվել» ԻԲ-ով՝ *անառականալ*, այլասերվել, խենեշանալ, շնանալ բայերով:

Անձնային վարքի բայերի ենթահարացույց. բարոյական հատկությունները դրական և բացասական դրսևորում ունեն, այսինքն՝ ի հայտ են գալիս որպես առաքինություններ և արատներ: Ձևավորվում է անձնային վարքի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Անձնային որոշակի վարք դրսևորել համապատասխան իրավիճակում»: Նույն-իչը վարվելն է: Բաղկացած է առաքինություն ար-

տահայտող մեծահոգության, առատաձեռնության, արիության, ամոթի, խղճի, զղջման, հնազանդության և արատ արտահայտող քծնանքի, բարձրամտության, դժգոհության, երկչտության բայախմբերից: Մեծահոգության բայախումբ՝ «Որևէ մեկի նկատմամբ մեծահոգություն ցուցաբերել» ԻԲ-ով՝ *մեծահոգանալ*, ասպետանալ, վեհանձնանալ բայերով: Բաղկացած է ներողամտության ենթախմբից՝ «Որևէ մեկի թերությունների՝ անխրախուսելի արարքների նկատմամբ մեղմ վերաբերմունք ցուցաբերել» ԻԲ-ով՝ *ներել*, թույլատրել, հանդուրժել բայերով: Առատաձեռնության բայախումբ՝ «Առատորեն տալ, բաշխել, չինայել» ԻԲ-ով՝ *առատաձեռնանալ*, առատաշնորհել, շոայլել բայերով: Արիության բայախումբ՝ «Որևէ արարքով արի դառնալ, խիզախանալ» ԻԲ-ով՝ *արիանալ*, խիզախանալ, քաջանալ բայերով: Բաղկացած է հերոսության ենթախմբից՝ «Չերոս դառնալ, հերոսական գործեր կատարելով՝ հերոսի հոչակ՝ կոչում ձեռք բերել» ԻԲ-ով՝ *հերոսանալ*, առասպելանալ, սխրագործել բայերով: Բաղկացած է անձնագոհության բայաշարքից՝ «Որևէ նպատակի համար իր անձն ուրանալ, գոհել» ԻԲ-ով՝ *անձնագոհել*, գոհաբերել, նվիրաբերել բայերով: Ամոթի բայախումբ՝ «Որևէ արարքից ամոթ զգալ» ԻԲ-ով՝ *ամաչել*, ամոթահարվել, ամոթխածել բայերով: Խղճի բայախումբ՝ «Իր արարքներն ու վարքագիծը գիտակցել, վերլուծել ու գնահատել, դրանց նկատմամբ անհաշտության և բարոյական ինքնաքննադատություն դրսևորել» ԻԲ-ով՝ *խղճմտել*, ինքնախարազանել, ինքնամերկացնել բայերով: Բաղկացած է խղճահարության և կարեկցանքի ենթախմբերից: Խղճահարության՝ «Որևէ մեկի նկատմամբ խղճահարությամբ համակվել» ԻԲ-ով՝ *խղճահարվել*, խղճալ, ուղորմել բայերով: Կարեկցանքի՝ «Ուրիշի կարիքին, նեղությանը կարեկից լինել, ցավակցել» ԻԲ-ով՝ *կարեկցել*, սփոփել, վշտակցել, ցավակցել բայերով: Զղջման բայախումբ՝ «Ափսոսալ, ցավ զգալ մի բան արած կամ չարած լինելու համար» ԻԲ-ով՝ *զղջալ*, ափսոսալ, ստորջանալ բայերով: Բաղկացած է ճգնաժողովության ենթախմբից՝ «Հրաժարվել աշխարհից ու նրա վայելքներից՝ իր անձը ենթարկելով զրկանքների» ԻԲ-ով՝ *ճգնել*, առանձնանալ, մեկուսանալ, տանջվել բայերով: Հնազանդության բայախումբ՝ «Հնազանդ դառնալ, մեկին՝ մի բանի ենթարկվել» ԻԲ-ով՝ *հնազանդվել*, զսավել, ենթարկվել, *հպատակվել*<sup>162</sup> բայերով: Քծնանքի բայախումբ՝ «Մեկի հաճությունը՝ բարյացակամությունը շահելու համար նրա նկատմամբ ստորաքարշ վերաբերմունք ցուցաբերել» ԻԲ-ով՝ *քծնել*, շողոքորթել, հաճոյանալ, ստորաքարշել բայերով: Բարձրամտության բայախումբ՝ «Բարձրամիտ լինել՝ դառնալ, մեծամտել» ԻԲ-ով՝ *բարձրամտել*, ամբարտավանել, գոռոզանալ, մեծամտել բայերով: Բաղկացած է արհամարհանքի և սնափառության ենթախմբերից: Արհամարհանքի ենթախումբ՝ «Հեզնական՝ նվաստացուցիչ վերաբերմունք ցույց տալ» ԻԲ-ով՝ *արհամարհել*, անգոսնել, քամահրել բայերով: Մնափառության՝ «Փառքի ետևից ընկնել, գոռոզանալ» ԻԲ-ով՝ *սնափառել*, փառամուլել, ինքնապարծել բայերով:

<sup>162</sup> ՎԲ-եր կան (տվյալ դեպքում նաև ընդգծվածները), որոնք, ըստ իրադրության, գնահատվում են ինչպես դրական, այնպես էլ բացասական իմաստով:

Բաղկացած է պարծենկոտության բայաշարքից՝ «Իր արժանիքների՝ խրախուսելի արարքների նն գիտակցությամբ իրեն բավարարված զգալ, գոռոզանալ» ԻԲ-ով՝ *պարծենալ*, հպարտանալ, պանծալ բայերով: Դժգոհության բայախումբ՝ «Բռնորից և ամեն ինչից դժգոհել» ԻԲ-ով՝ *դժգոհել*, բողոքել, գանգատվել, տրտնջալ բայերով: Երկչոտության բայախումբ՝ «Երկյուղ՝ վախ զգալ, երկչոտություն ցուցաբերել» ԻԲ-ով՝ *երկչոտել*, երկնչել, վախենալ բայերով:

Նպատակային վարքի բայերի ենթահարացույց. սովորաբար, կենսական առաջադիմությունը ենթադրում է, որ մարդը իր առջև նպատակներ դնի և փորձի հասնել դրանց իրականացմանը: Ձևավորվում է նպատակային վարքի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Որոշակի նպատակ դնել և հասնել դրա իրագործմանը»: Նույն-իչը նպատակադրվելն է: Բաղկացած է երջանկության, հաճույքի, պչրանքի/պճնանքի, միջնորդության, ձեռներեցության, շահի, բարոյալքման, ձախողման, սպառելու, զգուշավորության բայախմբերից: Երջանկության բայախումբ՝ «Երջանիկ դառնալ, իրեն երջանիկ զգալ» ԻԲ-ով՝ *երջանկանալ*, բախտավորվել, երանանալ բայերով: Հաճույքի բայախումբ՝ «Այնպիսի արարքներ կատարել, ցանկություններ և պահանջներ բավարարել, որոնք հաճույք կպատճառեն» ԻԲ-ով՝ *կայելել*, բավականանալ, բավարարվել, գոհանալ բայերով: Պչրանքի/պճնանքի բայախումբ՝ «Եքել հագնվել, զարդարվել, կոտրատվել՝ իր անձի նկատմամբ ուշադրություն հրավիրելու նպատակով» ԻԲ-ով՝ *պչրել*, *պճնվել*, նագել, կոտրատվել բայերով: Միջնորդության բայախումբ՝ «Իբրև միջնորդ խառնվել, միջամտել՝ որևէ գործ հաջողեցնելու նպատակով» ԻԲ-ով՝ *միջնորդել*, բարեխոսել, միջամտել բայերով: Ձեռներեցության բայախումբ՝ «Որևէ բանի իրականացման ձեռնամուխ լինել, մի գործ սկսել» ԻԲ-ով՝ *ձեռնարկել*, ընձեռել, նախաձեռնել, սկսել բայերով: Շահի բայախումբ՝ «Որևէ գործունեությունից՝ ձեռնարկությունից օգուտ՝ շահ ստանալ» ԻԲ-ով՝ *շահել*, օգտվել, շահավետել բայերով: Բաղկացած է շահամոլության և խնայողության ենթախմբերից: Շահամոլության ենթախումբ՝ «Որևէ արարք կատարել մոլի շահադիտությամբ» ԻԲ-ով՝ *շահամոլել*, շահադիտել, շահապաշտել, շահեցնել բայերով: Խնայողության՝ «Խնայողաբար գործածել՝ ծախսել, հնարավորինս նվազագույնի հասցնել որևէ բանի վրա կատարվող ծախսերը» ԻԲ-ով՝ *խնայել*, դիզել, տնտեսել բայերով: Բաղկացած է ժլատության բայաշարքից՝ «Ժլատ դառնալ, ժլատություն ցուցաբերել» ԻԲ-ով՝ *ժլատանալ*, ազահանալ, կծծիանալ, ճղճիմանալ բայերով: Բարոյալքման բայախումբ՝ «Բարոյական անկման հասցնել, հոգեպես՝ բարոյապես ընկճել, լքել» ԻԲ-ով՝ *բարոյալքել*, ընկճել, հուսալքել, վհատեցնել բայերով: Ձախողման բայախումբ՝ «Անհաջողության մատնել՝ խափանել» ԻԲ-ով՝ *ձախողել*, խափանել, տապալել բայերով: Սպառելու բայախումբ՝ «Որևէ բան գործածելով՝ օգտագործելով վերջացնել» ԻԲ-ով՝ *սպառել*, գործածել, ծախսել, պարպել բայերով: Զգուշավորության բայախումբ՝ «Ուշադիր, շրջահայաց լինել, ինքն իրեն սպահովել ենթադրվող որևէ վտանգից» ԻԲ-ով՝ *զգուշանալ*, զգոնանալ, խուսափել բայերով:

Չարգացման բայերի ենթահարացույց. զարգացումը մի որակական վիճակից մի ուրիշ՝ ավելի բարձր վիճակի անցման գործընթացն է, որն ապահովում է ինչպես հասարակական, այնպես էլ անհատական աճի որոշակի աստիճան՝ մակարդակ: Ձևավորվում է զարգացման իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Առաջադիմել, ստորին կամ վատ վիճակից դեպի ավելի բարձր կամ լավը դիմել»: Նույն-իչը զարգանալն է: Բաղկացած է առաջադիմության, դաստիարակության, բարեփոխման, քննադատության, պայքարի բայախմբերից: Առաջադիմության բայախումբ՝ «Դեպի առաջ շարժվել, զարգանալ առաջադիմության ուղիով» ԻԲ-ով՝ *առաջադիմել*, առաջխաղալ, գերազանցել բայերով: Դաստիարակության բայախումբ՝ «Կրթել, որոշ հմտություններ՝ վարքուբարքի կանոններ ու գիտելիքներ սովորեցնել» ԻԲ-ով՝ *դաստիարակել*, բարեկրթել, սովորեցնել, քաղաքակրթել բայերով: Բաղկացած է պատգամի, բարոյախոսության, հորդորի, խրախուսանքի, պարսավանքի, պատժի բայերի ենթախմբերից: Պատգամի ենթախումբ՝ «Որևէ մեկին որևէ բան պատգամել» ԻԲ-ով՝ *պատգամել*, կտակել, պատվիրել բայերով: Բարոյախոսության ենթախումբ՝ «Բարոյախոսության միջոցով դաստիարակել» ԻԲ-ով՝ *բարոյախոսել*, խրատաբանել, խրատել բայերով: Հորդորի ենթախումբ՝ «Բացատրելով՝ հասկացնելով հավանության բերել, ընդունել տալ» ԻԲ-ով՝ *հորդորել*, համոզել, տրամադրել բայերով: Բաղկացած է քարոզի բայաշարքից՝ «Որևէ ուսմունք՝ գաղափարախոսություն՝ դավանանք քարոզել» ԻԲ-ով՝ *քարոզել*, գաղափարաբանել, վարդապետել բայերով: Խրախուսանքի ենթախումբ՝ «Հավանությամբ՝ խրախուսանքով մղել մեկին՝ մի բանի՝ նպաստել որևէ բանի կատարմանը» ԻԲ-ով՝ *խրախուսել*, խանդավառել, ոգեշնչել, քաջալերել բայերով: Բաղկացած է գովեստի բայաշարքից՝ «Գովեստի խոսքեր ասել որևէ մեկի հասցեին՝ խրախուսման նպատակով» ԻԲ-ով՝ *գովել*, դրվատել, փառաբանել բայերով: Պարսավանքի ենթախումբ՝ «Որևէ արարքի՝ վարմունքի համար պարսավել» ԻԲ-ով՝ *պարսավել*, նախատել, հանդիմանել, կշտամբել բայերով: Պատժի ենթախումբ՝ «Գործած հանցանքի համար օրենքով սահմանված պատժի ենթարկել» ԻԲ-ով՝ *պատժել*, դատապարտել, պատժապարտել բայերով: Բաղկացած է մեղադրանքի, պատասխանատվության ենթարկման և մահապատժի բայաշարքերից: Մեղադրանքի բայաշարք՝ «Մեկին որևէ բանում մեղավոր ճանաչելով՝ դատական պատասխանատվության ենթարկել՝ դատապարտել» ԻԲ-ով՝ *մեղադրել*, ամբաստանել, դատաքննել բայերով: Բաղկացած է զրպարտության ենթաշարքից՝ «Մեկի վրա սուտ մեղադրանքներ բարդել, վարկաբեկիչ լուրեր տարածել» ԻԲ-ով՝ *զրպարտել*, բանսարկել, հերյուրել բայերով: Պատասխանատվության ենթարկման բայաշարք՝ «Մեկի արարքների՝ հանցանքի համար համապատասխան տույժի/տուգանքի ենթարկել» ԻԲ-ով՝ *տուգանել*, բռնագանձել, հարկել բայերով: Մահապատժի բայաշարք՝ «Մահապատժի ենթարկել»՝ *մահապատժել*, գլխատել, գնդակահարել բայերով: Բարեփոխման բայախումբ՝ «Լավացնելու՝ բարվոքելու նպատակով փոփոխություն մտցնել, բարենորոգել, բարեկարգել» ԻԲ-ով՝ *բարեփոխել*, բարվոքել, բարեկարգել, բարենորոգել բայերով: Քննադատության բայախումբ՝ «Բացահայտել որևէ մեկի



գործունեության՝ աշխատանքի ևն թերությունները՝ քաղաքացիները, շտկելու նպատակով» ԻԲ-ով՝ *քննադատել*, բանադատել, քննել բայերով: Բաղկացած է ծաղրի ենթախմբից՝ «Մեկի արարքները՝ պակասությունները ծաղրանքով ներկայացնել՝ դրանք շտկելու կամ վերացնելու նպատակով» ԻԲ-ով՝ *ծաղրել*, այսպես, հեզնել բայերով: Պայքարի բայախումբ՝ «Որևէ բան հաղթահարելու համար ակտիվ գործողություններ ծավալել» ԻԲ-ով՝ *պայքարել*, բանավիճել, մաքառել բայերով: Բաղկացած է մրցության և պատերազմելու ենթախմբից: Մրցության ենթախումբ՝ «Մեկի դեմ իբրև մրցակից դուրս գալ, մեկին մի բանում գերազանցելու ձգտել» ԻԲ-ով՝ *մրցել*, գոտեմարտել, հաղթել, պարտվել բայերով: Պատերազմելու ենթախումբ՝ «Պատերազմ (բարոյական կամ զինված ընդհարում) վարել մի բանի՝ մեկի դեմ» ԻԲ-ով՝ *պատերազմել*, կռվել, մարտնչել բայերով:

Վարվելակերպի բայերի ենթահարացույց, մարդկանց հանդեպ վերաբերմունքի արտաքին դրսևորում. ներառում է վարվեցողությունը շրջապատողների նկատմամբ, հասարակական վայրերում: Վարվեցողության կանոնները ունեն խիստ կարգավորված արարողության բնույթ: Բաղկացած է քաղաքավարի և անքաղաքավարի վարք արտահայտող բայախմբերից: Քաղաքավարի վարքի բայախումբ՝ քաղաքավարի վարքի իմ-իչով՝ հետևյալ ԻԲ-ով. «Քաղաքավարի վարք դրսևորել»: Նույն-իչները հարաբերվելն ու շփվելն են՝ ողջունել, ծանոթանալ, ներկայանալ, դիմել, խնդրել, առաջարկել, զգուշացնել, հրավիրել, համաձայնել, մերժել, շնորհավորել, բարեմաղթել, հաճոյախոսել բայերով: Բաղկացած է ինքնավերահսկման, ինքնատիրապետման, հյուրասիրության ենթախմբերից: Ինքնավերահսկման ենթախումբ՝ «Ինքն իրեն վերահսկել, իր վարքագծին հետևել» ԻԲ-ով՝ *ինքնավերահսկել*, ինքնասահմանափակել, ինքնարգելել բայերով: Ինքնատիրապետման ենթախումբ՝ «Իր գործողությունները դրված նպատակին հասցնել՝ չնայած ծագած խոչընդոտներին և չնախատեսված հանգամանքներին» ԻԲ-ով՝ *ինքնատիրապետել*, զսպել, համբերել, տոկալ բայերով: Հյուրասիրության ենթախումբ՝ «Ուշադիր՝ հոգածու վերաբերմունքով պատվել հյուրերին» ԻԲ-ով՝ *հյուրասիրել*, հյուրընկալել, հյուրամեծարել, պատվասիրել բայերով: Անքաղաքավարի վարքի բայախումբ՝ «Մեկին կոպիտ բան ասել՝ կոպիտ պատասխան տալ կամ որևէ գռեհիկ արարք թույլ տալ» ԻԲ-ով՝ *կոպտել*, գռեհկանալ, անտաշանալ բայերով: Բաղկացած է հայհոյանքի ենթախմբից՝ «Կեղտոտ՝ լալիր խոսքեր ուղղել մեկին, հիշոցներ տալ» ԻԲ-ով՝ *հայհոյել*, զարշաբանել, լուտալ, պղծաբանել բայերով:

Ազդեցության բայերի ենթահարացույց՝ հետևյալ ԻԲ-ով. «Որևէ մեկին կամ որևէ խմբի իր ազդեցությանը ենթարկել՝ անհրաժեշտ արդյունքին՝ նպատակին հասնելու համար»: Նույն-իչները ներգործելն ու ազդելն են: Բաղկացած է հարկադրանքի, իշխելու, ղեկավարման, շահագործման, մահվան բայախմբերից: Հարկադրանքի բայախումբ՝ «Հարկադրել, ստիպել մի բան անելու նպատակով» ԻԲ-ով՝ *հարկադրել*, խոստովանեցնել, պարտադրել, ստիպել բայերով: Բաղկացած է կարգադրության ենթախմբից՝ «Որևէ բան կատա-

րելու կարգադրություն անել» ԻԲ-ով՝ կարգադրել, հրահանգել, հրամայել բայերով: Իշխելու բայախումբ՝ «Տիրել, իրեն՝ իր կամքին՝ տնօրինությանը ենթարկել» ԻԲ-ով՝ *իշխել*, թագավորել, տիրակալել, տիրել բայերով: Բաղկացած է բռնության և նվաճման ենթախմբերից: Բռնության ենթախումբ՝ «Բռնությամբ՝ ուժով տիրել, ուժով իր ձեռքի տակ պահել» ԻԲ-ով՝ *բռնալալ*, բռնազավթել, նեղել բայերով: Բաղկացած է տանջանքի բայաշարքից՝ «Ֆիզիկական և հոգեկան ցավ, անհանգստություն պատճառել» ԻԲ-ով՝ *տանջել*, լլկել, խոշտանգել, չարչարել բայերով: Բաղկացած է ծեծի ենթաշարքից՝ «Մարմնին հարվածներ հասցնելով՝ ցավ պատճառել» ԻԲ-ով՝ *ծեծել*, գանակոծել, մարակել բայերով: Նվաճման ենթախումբ՝ «Ռազմական ուժով, բռնությամբ տիրել՝ տիրապետել» ԻԲ-ով՝ *նվաճել*, աշխարհակալել, գրավել բայերով: Ղեկավարման բայախումբ՝ «Որևէ մեկին կամ որևէ խմբ(եր)ի գլխավորել՝ առաջնորդել» ԻԲ-ով՝ *ղեկավարել*, առաջնորդել, գլխավորել, կառավարել բայերով: Շահագործման բայախումբ՝ «Ուրիշի աշխատանքի արդյունքները յուրացնել, հարստահարել» ԻԲ-ով՝ *շահագործել*, հարստահարել, կեղեքել բայերով: Մահվան բայախումբ. մահ հասկացությունը՝ մարդկային անհատական կեցության վախճանականության գիտակցումը, նպաստում է՝ պարզելու մարդկային կյանքի բարոյական իմաստն ու արժեքը: Մահվան մշտագիտակցումը մեծ ազդեցություն է թողնում մարդու կյանքի և արարքների վրա, հար ուղեկցում է նրան՝ պարտավորեցնելով չափել վարքագիծը, խոսքն ու արարքները: Ձևավորվում է *մահվան իմ-իչով*՝ «Մարդկային կյանքի վերջին հասնել, գոյություն ունենալուց դադարել» ԻԲ-ով՝ *մահանալ*, *անշնչանալ*, *վախճանվել* բայերով:

**Խոսքային վարքի բայերի ենթահարացույց.** վարքը դրսևորվում է նաև խոսքի միջոցով և, ըստ իմաստային տարբերացուցիչների, ենթահարացույցը բաժանվում է **դրակնան՝ ճշտախոս** (ճշմարտաբանել, ճշմարտախոսել), **հակիրճախոս** (լակոնաբանել, հակիրճաբանել), **սակավախոս** (սակավախոսել, քչախոսել), **ցածրախոս** (մրամջալ, շշնջալ), **ճարտարախոս** (ճարտասանել, պերճախոսել), **գեղախոս** (վայելչախոսել, քաղցրախոսել), **հաճոյախոս** (հաճոյախոսել, սիրաշահել), **զվարճախոս** (զվարթախոսել, կատակել), **սրախոս** (սրախոսել, սրամտել), **բացասական՝ դատարկախոս** (բարբաջել, դատարկաբանել), **բարձրախոս** (բղավել, գոռալ), **շատախոս** (շաղակրատել, շատախոսել), **ստախոս** (ստել, խաբել), **հակառակախոս** (զժովել, հակաճառել) **ճոռուխոս** (հոխորտալ, պոռոտախոսել), **անարգախոս** (բամբասել, զագրախոսել), **խարդավախոս** (խեղաթյուրել, նենգափոխել) **վարքատեսակների**<sup>163</sup>:

**Վարքափոխակերպման բայերի ենթահարացույց.** կյանքի տարբեր իրողություններ, իրադրություններ և հանգամանքներ երբեմն ստիպում կամ պահանջում են, որ մարդը փոխի իր վարքը, շեղվի իր սկզբունքներից, նախկին գործելակերպից նն: Ձևավորվում է **վարքափոխակերպման իմ-իչով**՝ հետևյալ ԻԲ-ով. «Մյանքի ինչ-ինչ «մարտահրավերների» ստիպմամբ փոխել նախկին վարքը՝ ներկա պայմաններին հարմարվելու նպատակով»: Նույն-իչը

<sup>163</sup> Սյւ մասին ավելի մանրամասն տե՛ս **Ռ. Դոխայան, նշվ. աշխ.**, Ե., 2014, էջ 31-65:

վերափոխվելն է՝ բայերի մի սեռածվալ խմբով (օր.՝ **հայանալ, այլակերպվել, անաստվածանալ, եվրոպականանալ, գորեղանալ, քրիստոնեացվել** ևն ):

ՎԲ-երը իրենց իմաստաբանության մեջ միավորում են **գործողության, վիճակի, հարաբերության** իմակներ, որոնք առկայանում են մարդու արարքներում, վարքագծում՝ թելադրված խոսողի կամ գործողի ինտելեկտուալ-բարոյական գիտակցությամբ և ընկալմամբ, ինչպես նաև արտահայտում են անձի վիճակն ու հարաբերությունը այդ արարքների նկատմամբ՝ համապատասխանաբար գնահատվելով ինչպես իրենց, այնպես էլ հանրության կողմից: ՎԲ-երը գտնվում են հիմնականում **ասացական, մտածական, զգացական**, ինչպես նաև այլ ԲԻՄ-երի հատման տիրույթում՝ առաջացնելով **վարքի երկրորդային** և **փոխաբերական** բայեր:

Dokhoyan Ruzanna - The semantic classification of the verbs of behaviour in modern Armenian. - In the article we study the man's behaviour, we reveal the language reflections of behaviour-activity, we outline the borders of the word-semantic group of those verbs. The word-semantic group of the verbs of behaviour /the paradigm/ is divided into the following subparadigms: **public, moral/immoral, personal, target, development, manner, effect, verbal, behaviour-transformation**, and which in their turn are divided into groups, subgroups, ranges, subranges. Thus, in their semantics, the verbs of behaviour combine **semes of action, state, relation**, which exist in the man's deeds, behaviour, dictated by the doer's intellectual-moral consciousness and perception, they also express the person's state and relation with those deeds, being appreciated comparatively by them as well as by the public.

Дохоян Рузанна - Семантическая классификация глаголов поведения в современном армянском языке. - В статье исследуется человеческое поведение, выявляются его языковые отражения, определяются границы ЛСГ (парадигма). В составе ЛСГ выделяются следующие подпарадигмы: **общественная, моральная/аморальная, личностная, целевая, вербальная**, а также подпарадигмы **развития, этикета, влияния и изменения поведения**. Эти подпарадигмы, в свою очередь, подразделяются на группы, подгруппы, ряды, подряды. Таким образом, глаголы поведения в своей семантике обобщают **семы действия, состояния, отношения**, которые наличествуют в человеческом поведении и поступках. Данные семы продиктованы интеллектуально-моральным сознанием и восприятием деятеля. Они также отражают его состояние и отношение к поступкам, в которых выражается оценка как с его стороны, так и со стороны общества.



**ԼԵԿ, ՓՈԿԵՎ ԹԱՂԻՔ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ինչպես արդեն նշել ենք ««Ոտնաման» և «կաշի» նշանակող մի քանի բառերի ստուգաբանություն» հոդվածում<sup>164</sup>, հնդեվրոպացիների հնագույն մտածողությամբ՝ ոտնամանը որոշ մշակման ենթարկված կաշի էր, կաշին էլ՝ կոշկացու: Այսինքն՝ ոտնամանն ու կաշին սերտորեն առնչվող երևույթներ էին և ինչ-որ ժամանակ նույն հասկացության մեջ էին առնված: Հետագայում դրանք տարբերակվեցին, ինքնուրույնացան, սակայն պահպանեցին իմաստային ու գործառական կապը, երբեմն էլ՝ ձևական-բառային առնչությունը: Պատահական չէ, որ որոշ լեզուներում կան «ոտնաման» և «կաշի» նշանակող նույնարմատ կամ համանուն բառեր<sup>165</sup>: Հայերենում այդպիսիք են հ.-ե. ծագում ունեցող *կօշիկ* և *կաշի* (<\*skeu- «ծածկել, կտրել»), *տրեխ* և *տեռ(ել)* «մաշկ(ել)» (<\*der-/derə-/drē- «կտրել, կաշի»), *մաշկ* և *մաշիկ* «բարձրակրունկ սեկե կոշիկ», *մորթ* և *մոյկ* «երկարաճիտ կոշիկ» (<\*mai-/ moi- «ծածկել, կաշի»), *օդ* «ոտնաման» և *օդենի* «ոչխարի մորթի» (<\*ou-/eu- «կրել, հագնել, ոչխար, մորթի, կաշի») բառազույգերը: Սրանց են հարում նաև <\*(s)keu- «ծածկել, կտրել» արմատից սերված *սեկ* «գունավոր բարակ կաշի», *սերեկ* «կաշվե կափարիչ», *կաճ* «թաղիք», *կեղև*, *կտե/քթի* «կեղև», *խաղախ* «կաշի, մորթ», *խեճեպ* «կճեպ, կեղև, պատյան», *խորխ* «մորթ, կաշի, կճեպ», *քերթել* «մաշկել, պլոկել», *շոպկել* «մաշկել, պլոկել, փրցնել»<sup>166</sup>, \*dig- «այծ» արմատից սերված *տիկ* «մորթի, պարկ» (ՀՄԲ, 729) և այլ բառեր:

Նկատենք, որ կաշին կենդանու մարմնի բնական ծածկն է, իսկ կոշիկը՝ ոտքի ձեռնաշեն ծածկը: Նշված բառերի, ինչպես նաև դրանց նախաձևերի միջև իմաստային անցումը հետևյալն է. «կտրել» > «կաշվի կտոր» > «կաշի» > «կաշվի կտորից պատրաստված» > «ոտնաման» (Wik., kurpe): Սրան լրացնում են «կտրել, քերթել» > «կաշի» > «ծածկել» > «ոտնաման», ինչպես նաև «կենդանի» > «կենդանու մորթի» > «կաշի» > «ոտնաման» անցումները (ՀՄԲ, 4, 405):

«Ոտնաման» և «կաշի, մաշկ, մորթ, կեղև, թաղանթ» ու հարակից իմաստներով բնիկ հայերեն բառերի շարքն այսքանով չի ավարտվում: Դրանց պետք է ավելացնել նաև հետևյալները:

1. *Լեկ*

Հայերենի բարբառներում գործածվում է նաև *լեկ* բառը, որ նշանակում է մերթ «մշակված կամ անմշակ կաշի», մերթ «կաշվե ծածկոց կամ գոգնոց»,

<sup>164</sup> **Զ. Զարարյան**, «Ոտնաման» և «կաշի» նշանակող մի քանի բառերի ստուգաբանություն. – «Ջահուկյանական ընթերցումներ». *Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 95-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր*, Ե., «Գիտություն», 2015, էջ 53-60:

<sup>165</sup> Օրինակ՝ անգլ. shoe «կոշիկ» և skin «կաշի», ռուս. черевика «մաշիկներ» և корá «կեղև»: Երբեմն էլ նույն բառն ունի երկու իմաստն էլ, օրինակ՝ գոթ. skauda «կոշիկ», skauda-raip «կաշեփոկ, կաշվե գոտի» (Պոկ., 951-953):

<sup>166</sup> **Զ. Զարարյան**, *նույն տեղում*:

մերթ «տրեխ» (ՀԼԲԲ, 2, 212, Մալխ. 2, 192): Այս դեպքում առկա է «կաշի > ոտնաման» իմաստային անցումը նույն բառի սահմաններում: Հայերենի ստուգաբանական բառարաններում սա որպես գլխաբառ չկա: Մակայն **լերկ** բառահոդվածում<sup>167</sup> դրա **լեկ** բարբառային տարբերակի առիթով Հ Աճառյանը գրում է. «... նույնն էմ համարում **լեկ** ... «ռչխարի բարակ և լերկ մորթ՝ կաշի» իմաստի զարգացման համար հմմտ. այբան. l'akur «մերկ» և l'ikur «կաշի»» (ՀԱԲ, 2, 277): Մակայն այս ստուգաբանությունն ընդունելի չէ, քանի որ ըստ Յ. Պոկոռնու և Ս. Նիկոլանի բերած տվյալների՝ այբաներենում ոչ թե «կաշի» իմաստն է առաջացել «մերկ»-ից, այլ երկունսն էլ «կտրել, պոկել» իմաստից (Նիկ. 1541, Պոկ. 419, տե՛ս նաև ստորև): Հետևաբար **լեկ** «կաշի»-ն **լերկ** բառից չպետք է բխեցնել, և անհրաժեշտ է փնտրել մեկ այլ ավելի համոզիչ ստուգաբանություն:

Յ. Պոկոռնու բառարանում և Ս. Նիկոլանի կազմած «Հնդեվրոպական ստուգաբանության շտեմարանում» գտնում ենք հնիլ. **\*lā-** «ծածկել» արմատը (Պոկ. 651, Նիկ. 1561)<sup>168</sup>: Անշուշտ, այս արմատի այլ ձայնավորումից է սերել նաև հայերեն **լեկ**-ը, որի համար պետք է վերականգնել հ-ե. **\*le-g-** նախաձևը:

Ինչպես տեսնում ենք, տարբեր լեզուների ցեղակից ձևերը արտացոլում են «կտրել > քերթել > կաշի > ոտնաման» իմաստային բանաձևը, որի մեջ տեղավորվում է նաև հայերեն **լեկ**-ը:

Նույնպիսի ծագում ունեն նաև **լաքուցանել (լուխցնել)** «թաքցնել» < \*płək-, \*pel- «ծածկել, թաքցնել» բառը (Ջահ., 293) և, ինչպես տեսանք, **լպակել** «կաշին քերթել», **լպուկ** «լերկ, չքավոր» բառերը (ՀԱԲ, 4, 94, պոլոկել):

<sup>167</sup> Հ. Աճառյանը **լերկ** բառը կապում է **ողորկ**-ի հետ և բխեցնում հ.-ե. \*lerg-, \*lorg- «հարթ, ողորկ, լարծուն, սահուն» նախաձևից (ՀԱԲ, 3, 555-556): Գ. Ջահուկյանը **լերկ**-ի համար վերականգնում է հ.-ե. \*lerg- նախաձևը (ՀԱԲ, 295):

<sup>168</sup> Այս արմատի հիմքային տարբերակներից և տարբեր աճականներով ընդլայնումներից են՝ **\*law[e]/-e-** «կտրել, ճեղքել» (սրանից են՝ հ.հուն. λάϊο-ն «արոք», դան. le «մանգաղ»), **\*lAust-** «կտոր» (սրանից են՝ ռուս. луста «կճեպ, կլեպ», լիտվ. lūstas «հացի կտոր») (Նիկ. 1561), **\*lāp-** «զարդարված հագուստ» (սրանից են՝ ռուս. лапотъ, «տրեխ», лапти «քրծենից տրեխներ») (Նիկ. 1581), **\*lep-** «մաշկել, քերթել» (սրանից են՝ հուն. λέπος «կեղև, կճեպ», ռուս. лепень «կտոր, ծվեն», лепесток «ծեղկաթերթ») (Նիկ. 1601), **\*lop-** «կեղևել, կաշին քերթել» (սրանից են՝ հայ. լպակել «կաշին քերթել», լպուկ «լերկ, չքավոր», դրափոխությամբ՝ պլոկել «մաշկել, կեղևել», պլոկ «1. մաշկ, 2. մերկ», պլկորել «վերքի փառը պոկել»), **\*l(e)up-** «կեղև» (սրանից են՝ հուն. λέπω «կեղևել», λέπις «կճեպ», լիտվ. lupiti «կեղևել»), **\*l(e)ub(h)-** «նրբակեղև» (սրանից են՝ ռուս. луб «կեղև», лубочка, лубянка «ծառի կեղևից կողով», լատվ. luõbu «կեղևել», անգլ. leaf «տերև», այբ. l'abe «կեղև», լատ. \*luber > liber «ծառի նրբակեղև, դրա վրայի գրվածք, գիրք») (ՀԱԲ, 4, 94, պոլոկել), **\*letr-** «մաշկած կաշի» (սրանից են՝ անգլ. leather, հ.իդ. lethar, հ.իլ. leðr «կաշի») (Նիկ. 1621), **\*lAsk-**, **\*lAsk-** «փերթ, կտոր, քուրջ» (սրանից են՝ ռուս. лóскýт «կտոր, ծվեն», անգլ. lash «փոկ, գոտի, գործած մտրակ») (Նիկ. 1541), **\*lak-/lĕk-/læk-** «պոկել, պատռել, կաշի» (սրանից են՝ այբ. l'akur «մերկ», l'ekure, l'ikure «մորթի, կաշի, կեղև, տաշեղ», լատ. lacer «պատռել», ռուս. лохматый «բրդոտ, փրչոտ, գզուգ») (Նիկ. 1541, Պոկ. 419): Այս բոլոր նախաձևերը կապվում են նաև **\*plĕk'**- «քերթել, մաշկել, կեղևահանել» տարբերակի և **\*pelf(e)(w)-**, **\*plĕ(w)-** «ծածկել, կաշի, մաշկ» պարզական արմատի հետ, որոնց մասին տե՛ս նաև ստորև:

Հ.-ե. տարբեր լեզուների ժառանգ ձևերի իմաստային զարգացումների գունապնակը հետևյալն է: Կտրել (քերթել, պատռել, պոկել, ճեղքել, քերծել), կտրվածք (ճեղք, սպի), կտրող գործիք (մանգաղ, արոր, բահ, դանակ, ատամ), կտոր (փերթ, քուրջ, շերտ, բաժին, փերթ, ծվեն, թեփիկ, տաշեղ, բիծ), ծածկել (թաքցնել, պահել, դարանակալել, խաբել, ստել), ծածկոց (կարպետ, կաշի, մաշկ, մորթ, կեղև, կճեպ, կլեպ, պատիճ, փառ, թաղանթ, քող, բարուր, քիվ, ծաղկաթերթ, տերև, սաղարթ, ծեփ, սպեղանի), հագուստ (շոր, վերարկու, թիկնոց, շապիկ, գլխաշոր, թաշկինակ, ոտնաման), կաշվե, կեղևե և այլ իրեր (կողով, պարկ, գրելու մակերես, փոկ, գոտի, թոկ, թել, մորակ, ժապավեն), մազ, մազոտ (բրդոտ, փրշոտ), լերկ (մերկ, ճաղատ), մաշկի հիվանդություն (քոս, քոր, ցան), աղիք, փորոտիք, կարկաստել, (փխբ.) կողոպտել, տանջված, չքավոր և այլն:

Այս գունապնակը հաշվի առնելով՝ հավաստիորեն չստուգաբանված համարվող և ստուգաբանական բառարաններում տեղ չգտած բառերից կարելի է վերոհիշյալներին միացնել նաև հետևյալները: **Լակնան (լաքան, լագան)** «կանեփի թելից կամ այծի մազից հյուսված ներբանով ոտնաման» (ՀԼԲԲ, 2, 209), **լակաշ** «1. հնամաշ պատառոտված կոշիկ, 2. փողոց նետված կաշվի կտոր, 3. (փխբ.) կաշառք» (Մալխ., 2, 180) (**լգեշ, լգոշ**, ՀԼԲԲ, 2, 223), **լեքշ (լքըշ)** «1. հորթի չկարած տիկ քաղցուի համար» (Մալխ., 2, 196), «2. ծոմոված հին կոշիկ» (ՀԼԲԲ, 2, 223) (\***le-g-**), **լեկոուտ** «ծերությունից դեմքը կնճռոտված, ստամները թափված» (ՀԼԲԲ, 2, 217) (\***le-g-**), **լոխպել (լոխկել, լոպկել, լպկել)** «1. կաշին քերթել, մաշկել, 2. քերծել, պլոկել, 3. կողոպտել, թալանել, 4. ծառի կեղևը հատել, 5. միրգը կճպել, 6. փետրահան անել» (ՀԼԲԲ, 2, 240), **լպգորել** «մորթը քերծել, քերթել» (Մալխ., 2, 219), **լղջել** «1. քերծել, 2. պլոկել, 3. (փխբ.) թալանել, պլոկել» (ՀԼԲԲ, 2, 234), **լեխտր** «երկժանի մեծ բահ՝ ճիմ հանելու համար» (ՀԼԲԲ, 2, 217), **լեխարել** «հողը փորել» (ՀԼԲԲ, 2, 216) (\***le-ke-**), **լափուճ (լափուջ)** «1. ընկույզի միջուկի 2 մասերից յուրաքանչյուրը, 2. մրգի կետը» (ՀԼԲԲ, 2, 209) (\***le-ph-**), **լպունք** «գլխարկի թելեր, որ կապում են ծնոտի տակ» (ՀԼԲԲ, 2, 247) (\***le-b-**), **լպուտ (լպաութ)** «հաստ բիր, մահակ» (ՀԼԲԲ, 2, 243), **լպուտ (լբուղ)** «թաղիքագործ, գրար» (ՀԼԲԲ, 2, 247) (\***lo-b-**), **լպպ (լեպո, լափուտ)** «1. մսի վրայի թաղանթ՝ փառ, որ կտրում թափում են, 2. վերքի վրայի մեռուկացած կաշի, 3. պառաված դեմքի թարշամած ու կախկիսված մաշկ, 4. քերթած կաշվի վրա մնացած մսերը» (Մալխ., 2, 184), **լպպորել** «մաշկը՝ մորթը վրայից հանել» (ՀԼԲԲ, 2, 246) (\***le-b-**), **լբգել (լիբգել)** «ծառի կամ ճյուղի կեղևը հանել» (ՀԼԲԲ, 2, 223), **լբերդ** «չափազանց մաշված (շոր)» (ՀԼԲԲ, 2, 210) (\***le-bh-**), **լոփ** «թանձր ու անգարդ կարպետ» (Մալխ., 2, 225) (\***lo-ph-**), **լոթ** «1. մսի անպետք կտոր, 2. մորթու վրա մնացած մսի կտոր, 3. լաթ, շոր, 4. կաշվի անպետք կտոր» (ՀԼԲԲ, 2, 238) (\***lo-t-**), **լեթան** «1. երկաթե շեղբով բանջարաքաղիկ, 2. թոնրից հացը հանելու հարմարանք» (ՀԼԲԲ, 2, 216), **լեթոնել (լեթվել)** «վերքը անընդհատ բորբոքվել, չլավանալ» (ՀԼԲԲ, 2, 216) (\***le-t-**), **լոդ** «վերնագգեստ,

կրկնոց, լօղիկ» (Մալխ., 2, 205), **լօղիկ (լօթիկ, լօթակ, լութակ)**<sup>169</sup> «վերարկու» (ՀՄԲ, 304-305, ՀԱԲ, 2, 307-308) (\***ləu-dh-**), **լանք** «1. մաշված լաթի կտոր, ցնցոտի, 2. հին, մաշված, 3. վատ թխված, խմոր մնացած» (Մալխ., 2, 183) (\***lə-n-t-**), **լանձի-լանձի** «լանք-լանք, ճղճղված, պատառոտված» (Մալխ., 2, 183) (\***lə-n-gh-**), **լանկախ** «կաշվե բարակ թոկ, փոկ» (Մալխ., 2, 183) (\***lə-n-g-**), **լեմ** «ատամ», **լեմոնիկ** «ատամները թափված» (Մալխ., 2, 193), **լեմիկ** «դանակի շեղք» (ՀԼԲԲ, 2, 218) (\***le-m-**), **լամփառ** «հաստ և մեծ մատներով եղան հարդը քամելու համար» (ՀԼԲԲ, 2, 199) (\***lə-m-p-**), **լաս(ս)** «1. գերանդու մեկ հարվածով կտրված խոտի կույտ, 2. լասերի երկար շերտ խոտհարքում, 3. բահի խփով կտրված հողաշերտ, 4. տափակ շերտ» (ՀԼԲԲ, 2, 203, Մալխ., 2, 185), **լաստ (լեստ)** «1. թրի դանակի՝ սողնի՝ մանգաղի շեղքը, 2. հնացած անկոթ դանակ» (ՀԼԲԲ, 2, 203, 221) (\***lə-s-d-**), **լոզ** «1. ծառի ճյուղ կտրտելու մեծ դանակ, 2. միս ջարդելու խոոր կեռ դանակ» (ՀԼԲԲ, 2, 238), **լեսպ (լոսպ)** «շերտ, կտոր (պանրի, մսի)» (ՀԼԲԲ, 2, 221, 244), **լոս (լոց, լոցունք)** «հացի փշրանք» (ՀԼԲԲ, 2, 244, 245), **լոսու(ն)ք** «մանրուք, փշուր, օճառի կտորտանք» (ՀԼԲԲ, 2, 244) (\***lo-s-**), **լոստե** «փայտով լավ ծեծել, ջարդուփշուր անել» (ՀԼԲԲ, 2, 244) (\***lo-s-d-**), **լաշք** «մսի վրայի կախված մաշկը» (ՀԼԲԲ, 2, 202) (\***lə-s-k-**), **լաստոտիլ** «քորելուց բշտիկներ դուրս տալ» (ՀԼԲԲ, 2, 203) (\***lə-s-d-**), **լառճատե** «մարմինը պատառոտել» (ՀԼԲԲ, 2, 203) (\***lə-r-di-**), **լետտե, լերկե** «մորթը մաշկը քերծվել» (ՀԼԲԲ, 2, 221) (\***le-r-**), **լորիս** «1. կաշվից ոլորած թոկ՝ փոկ, որով լուծը կապում են սայլին կամ արորին, կղան, կապան, 2. լինգ» (Մալխ., 2, 209, ՀԼԲԲ, 2, 245) (\***lo-r-kh-**) և այլն:

Իրանական փոխառություններ են համարվում հավանաբար նույն հ.-ե. արմատից ծագած **լայքա (լաքա(յ), դաքա)** «կարմիր կաշի» (պրսկ. lakā «կարմիր սեկ») (ՀԱԲ, 2, 264), **լաթ** «շոր, կտոր, լվացք, պատառ» (պրսկ. lat) (ՀԱԲ, 2, 257), **լախտ** «ծեծի փոկ, մահակ» (պրսկ. laxt «մահակ») (ՀԱԲ, 259-260) և այլ բառեր:

## 2. Փոկ

Հայերենում կա նաև **փոկ** բառը, որ նշանակում է մերթ «կաշվի բարակ կամ հաստ շերտ՝ լար՝ թել», մերթ «ձևված կաշի՝ տրեխացու», մերթ «տրեխ» (ՀԼԲԲ, 7, 19): Այս դեպքում ևս առկա է «կաշի > ոտնաման» իմաստային անցումը նույն բառի սահմաններում: Հայերենի ստուգաբանական բառարաններում այս բառը համարվում է անհայտ ծագման (ՀԱԲ, 4, 512, ՀՄԲ, 766): Հետևաբար հավանական է, որ սա բնիկ հայերեն բառ է:

3. Պոկոռնու բառարանում գտնում ենք հինլ. **\*sp(h)ēi-** «սուր, հատու» արմատը (սրանից են՝ լատ. *spiculum* «սայր, սուր ծայր», նորվ. *spik* «շյուղ, անվաճաղ», լիտվ. *speigliai* «խիթան», հ.հուն. σπιλος «խութ», պր. *shpina* «փուշ, ասեղ», թոխ.Ս *spin-* «եղան, եռաժանի», անգլ. *spire* «սուր ծայր, սայր, ասեղ»)

<sup>169</sup> **Լօղիկ** բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարում են կելտական կամ սկանդինավյան արբյուրից փոխառություն՝ անհայտ ճանապարհով: Կարծում ենք՝ ավելի ճիշտ կլինի այս դեպքում տեսնել պարզապես հայ - կելտական (կամ սկանդինավյան) զուգաբանություն:

(Պոկ. 981-982)<sup>170</sup>: Անկասկած, այս նույն արմատի այլ ձայնավորումից է սերում նաև հայերեն **փոկ**-ը, որի համար պետք է վերականգնել հ-ե. \*pho-g- նախածնել:

Ինչպես տեսնում ենք, տարբեր լեզուների ցեղակից ձևերը արտացոլում են «կտրել > քերթել > կտոր > կաշի > ոտնաման» իմաստային բանաձևը, որի մեջ տեղավորվում է նաև հայերեն **փոկ**-ը: Իմաստային ճյուղավորումները տանում են նաև մինչև «փետուր, մագ, թել, փաթիլ, թեփիկ, փոշի, փուշ, ասեղ, կաճ»: Դրանց շարքում, ինչպես տեսնում ենք, տեղ են գտել նաև **փեղկ**-ն ու **փերթ**-ը: Հ. Աճառյանն ու Գ. Ջահուկյանը սրանց են միացնում նաև **փեռեկ**-ը («ձեղք») [*\*(s)pher-g-*] (ՀԱԲ) և **փերձոկ**-ը («փշուր, կտոր») [*\*(s)pher-d-*] (ՀՄԲ):

Հավաստիորեն չստուգաբանված համարվող բառերից կարելի է սրանց միացնել նաև **փակել** «ծածկել» (\*phə-g-), **(ս)փածանիլ** «հագնել» (\*sphə-g-), **փեղոյր** «կնոջ գլխարկ» (\*phe-l-), **փոճոկ** «կեղև» (\*pho-d-), **փապիլ** «բաժանվել» (\*phə-b-), **փետել** «պոկել, փրցնել, կտրել» (\*phe-d-), **փետուր** (\*phe-d-), **փութ** «կտոր, պատառ», **փթիլ** «խիստ մանր ձավար», **փթուր** «մանր կտոր, փշուր», **փթիթ** «թրիթ, կտտոր» (\*phō-t-), **փշուր, փուշ, փշատ** (\*phō-s-), **փոշի** (\*pho-s-), **փոշկ** «թրիթ, գոմաղթ» (\*pho-s-g-), **փքին** «նետ» (\*phō-k-), **փուրծ** «գործվածքից թափվող աղվամագ» (\*phō-r- g'-), **փրթել** «պոկել, կտրել, հնձել, բրդել,

<sup>170</sup> Այս արմատի հիմքային տարբերակներից և տարբեր աճականներով ընդլայնումներից են՝ **\*(s)p(h)el-** «ձեղքել, կտրել, քերթել, տախտակ» (սրանից են՝ հ.հնդկ. *pātayati* «տաշեղներ, բեկորներ», պարսկ. *ispar, sipar* «վահան, ասպար», հ.հուն. *σφάλαξ* «հատու, թափանցող», լատ. *spolium* «մաշկել», մ.բ.գերմ. *spillen* «ձեղքել», ռուս. *пол* «կեւ; սեռ; հատակ», *палка* «ձող», *полотно* «կտավ, քարան», *полоть* «քաղհանել») (Պոկ. 985-987), **\*(s)p(h)elg-** (սրանից են՝ հայ. *փեղկ*, անգլատար. *spilcan* «երկաթաձող») (Պոկ. 987), **\*(s)plei-** «ձեղքել, կտրել» (սրանից են՝ անգլ. *splint* «բեկոր», *splinter* «տաշեղ», *flinders* «տաշեղներ, կտորներ», հ.իսլ. *sliss* «բեկոր») (Պոկ. 1000), **\*spol-** «կաշի, մորթի» (սրանից են՝ լիտվ. *spāliai* մորթափառ, կաշվի հսկայանակ երեսը», հ.պրուս. *spelantxis* «բեկոր», լատ. *spolium* կաշվի թափոն») (Նիկ. 2621), **\*pleĕ- pleik-** «կեղևել, պոկել, մաշկել» (սրանից են՝ լիտվ. *plėsti* «մաշկել, քերթել», անգլ. *flay* «մաշկել») (Նիկ. 2161, Պոկ. 835), **\*pel-, \*pel[e](w)-, \*plē(w)-** «կաշի, մաշկ, թաղանթ» (սրանից են՝ ռուս. *пеленá* «շղարշ, քող, ծածկոց, բարուր», *пелёá* «թաղանթ», լիտվ. *plėnė* «թաղանթ, կձեպ», լատվ. *plėve* «բարակ թաղանթ», լատ. *pellis* (<\*pelnis), հ.հուն. *πέλας* «կաշի», անգլ. *fell* «մորթի», *film* «թաղանթ») (Նիկ. 2021, 2081, Պոկ. 803-804), **\*pleu (s-, -k-), \*plous-, \*plAwək-** «կտրել, պոկել, փետուր; փետուր; մագեր; մանրաթել» (սրանից են՝ լիտվ. *plūskos* «մագեր», լատվ. *pluska* «փունջ, ծվեն, պատտռիկ; փաթիլ; աղվամագ», անգլ. *fleece* «բուրդ, գեղդ», մ.ս.գերմ. *vīūs, vlūsich* «ոչխարենի», լատ. *plūma* «փետուր, աղվամագ», հ.իռլ. *lōm* «բրդյա», անգլ. *flake* «փաթիլ, փերթ, թեփիկ», ալբ. *flokë* «փաթիլ; մագ», մ.ս.գերմ. *vlocke* «փաթիլ», լատվ. *plauki* «փոշի», *plāukas* «փաթիլներ», *plūcu, plūkt* «պոկել, քերթել», լիտվ. *plūksna, plūnksna* «փետուր», *plāuka-s* «վարսեր», անգլ. *flock* «ոչխարի հոտ») (Նիկ. 2161, 2141, Պոկ. 837, 838), **\*peil-** «դանակ, սղոց» (սրանից են՝ ռուս. *пила́, «սղոց», լիտվ. peili-s* «դանակ», անգլ. *file* «սղոցիկ») (Նիկ. 2121), **\*pel-t-, -d-** «գործվածքի կտոր, կտավ» (ռուս. *полотно* «կտավ», հ.պրուս. *pelkis* «վերարկու», անգլ. *felt* «թաղիթ, կաճ») (Նիկ. 2081), **\*palə-** «գործվածքի մեծ կտոր» (սրանից են՝ լիտվ. *palá* «կտավի մեծ կտոր», լատ. *pallium* «հովանի, ծածկոց», թիկնոց») (Նիկ. 2021), **\*(s)p(h)er-, \*(s)p(h)erəg-** «պատռել, փալաս» (սրանից են՝ հայ. *փերթ*, հ.իսլ. *spjotr* «կտոր, փերթ», հ.հուն. *σπαράσσω* «պատռել, պոկել») (Պոկ. 992), **\*pak'(-)** «ոտնաման» (սրանից են՝ հ.հուն. *páks* «կոշիկ», հ.իռլ. *assa* «սանդալ») (Նիկ. 2021) և այլն:

պրծեցնել», **փրթիկ** (**փտոթիկ**) «մանր մաս, կտոր, փերթ», **փոթիկ** «փոքրիկ, մանրիկ» (\*phō-r-t-), **փափուկ** (\*phə-ph-), **փարախ** «ռչխարի գոմ» (\*phə-r-), ինչպես նաև փոխառություն համարվող **փուր** «պողի կանաչ կեղև» (\*phō-r-) (իբր այթայան թաթարերենից), **փառ** «զգեստ, շապիկ, նրբաթաղանթ, մաշկ» (\*phə-r-) (իբր ուրարտերենից), **փարատ** «անջատ, առանձին» (\*phə-r-) (իբր ասորերենից), **փաթ** «պտույտ, շրջան» (\*phə-t-), **փոթ** «զգեստ, քուրջ, ծալք» (\*pho-t-) (իրանական ենթադրյալ ձևերից) բառերը (ՀԱԲ, ՀՄԲ), նաև՝ ստուգաբանական բառարաններում տեղ չգտած **փապել** «ճեղքվել», **փապար** «ծոճրակ», **փապարած** «կոշտուկ, մաշկի ճեղքվածք» (\*phə-b-), **փապո** «ծառի նորաբողբոջ տերև» (\*phə-b-r-) (Մալլև., 4, 487), **փափուկ** «հնամաշ կոշիկ» (\*phə-ph-) (ՀԼԲԲ, 9, 359) բառերը:

Սրանց հետ հաճախ իմաստային ու ձևային լծորդություն ունեն նաև հավաստիորեն չստուգաբանված համարվող մի շարք այլ բառեր՝ **պարկ** (**պարկուճ**) < \*p(h)ə-r-g-, **պարուտակ** «բարակ մաշկ, թաղանթ» < \*p(h)ə-r-, **պասակ** «մախար» < \*p(h)əu-, **պաճար** «տավար, նախիր» < \*p(h)ə-di-, **պճեղ** «հատված, մաս, կտոր» < \*p(h)ō-di-, **պիծառ** «մի քիչ» < \*p(h)i-g'-, **պատռել**, **պատառ**<sup>171</sup> «կտոր» < \*p(h)ə-d-, **պախել** «ճեղքել, պատռել» < \*p(h)ə-kh-, **պաշարել** «չորս կողմից փակել» < \*p(h)ə-s-, **պոկել** «կտրել անջատել» < \*p(h)o-g- (հմմտ. **փոկ**), **պ(ո)լոկել**<sup>172</sup> < \*p(h)o-l-, **պոճոկել** < \*p(h)ō-r-di-, **պրճ(ն)ել** «կողոպտել, հափշտակել» < \*p(h)ō-r-di-, **պլեճ** «մնացորդ մանրուք» < \*p(h)ō-l-, **պանտ** «պատ» < \*p(h)ə-n-d-, ինչպես նաև իրանական ենթադրյալ (չվկայված) ձևերից փոխառյալ համարվող **պատ** (պատան, պատեան, պատիճ, պատակ) < \*p(h)ə-d-, **պար** «շրջան», **պարան**, **պարիսպ**, **պարեկ** «պահպան» < \*p(h)ə-r-, **պարտակ** «ծածկոց, ծածկույթ» < \*p(h)ə-r-d-, **պայուսակ** < \*p(h)ə-i-, **պառակտել** < \*p(h)ə-r-g- (հմմտ. **փեռել**), **պահել** «թաքցնել» < \*p(h)ə-r-ti- բառերը: Թեև բառակզբում ենիլ. \*ph-ին և \*p-ին հայերենում սովորաբար համապատասխանում են փ-ն և հ-ն, իսկ հայերեն պ-ին՝ հնիլ. \*b-ն, սակայն Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում, որ հնիլ. \*p(h)-ն հայերենում երբեմն դարձած լինի պ:<sup>173</sup>

Ունենք նաև իմաստով ու ձևով լծորդվող բառեր, որոնց բառակզբում փ-ի կամ պ-ի փոխարեն առկա է ք<sup>174</sup> բրդել (հմմտ. **փրթել**), **բակ**<sup>175</sup> (հմմտ. **փակ**): Սրանք կարող են լինել բարբառային տարբերակվածության հետևանք: Ուստի չի բացառվում, որ նույնարմատ բառերի վերոհիշյալ բազմության հետ

<sup>171</sup> Հ. Աճառյանը **պատառ** բառը չի ստուգաբանում (ՀՄԲ, 4, 35), իսկ Գ. Ջահուկյանը ենթադրում է «փոխառություն թերևս սեմական աղբյուրից. հմմտ. ակկադ. pataru(m) «բաժանել, ճեղքել»» (ՀՄԲ, 624): Բայց **պատ(ա)ռ** արմատը հայերենում լայնորեն տարածված ու ճյուղավորված է, հետևաբար նախապատվությունը պետք է տալ հ.-ե. ծագման վարկածին:

<sup>172</sup> Սյւ բառը Հ. Աճառյանը համարում է **լպկել** բառի դրափոխված տարբերակը (տե՛ս Ծան. 5):

<sup>173</sup> Տե՛ս ՀՄԲ, **Պթխիլ**, **Պռղել**, **Պիծակ**, **Պաղակ**, **Պաղատ** բառահոդվածները:

<sup>174</sup> Հմմտ. *բարուր* – *պարուր*, *բղեղ* – *փաթեթ* համապատասխանությունները և այլն:

<sup>175</sup> **Բակ** բառը Հ. Աճառյանը համարում է փոխառություն հարավկովկասյան լեզուներից (ՀՄԲ, 1, 390-391), սակայն Գ. Ջահուկյանն այդ կարծիքը կասկածի է ենթարկում (ՀՄԲ, 113): **Բակ** բառի բնիմաստն է «փակել, պարփակել, շրջապատել» (հմմտ. *բակ առնուկ*, *բակ ունել*, *բակ արկանել*, *բակառել*) (ՀՄԲ, 1, 390-391):

կապված լինեն նաև \*bhe(i)- «ճեղքել, կտրել, ծակել» արմատից սերված համարվող բեկ, բիծ, բիր, բահ, բերան, բոր, բուրդ բառերը (ՀՄԲ, համապատասխան բառահոդվածները), հավաստի չստուգաբանված բիրտ, բաճկոն, բուակ «բրդյա գործվածք» բառերը և իրանական ենթադրյալ ձևից փոխառյալ համարվող բարակ բառը:

Եթե նկատի ունենանք «սուր, հատու» > «կտրել, ճեղքել, փորել, ծակել» > «փոս, խոռոչ, անցք» > «դատարկ, պարապ» իմաստային անցումները, ապա վերոհիշյալ բառախմբին կարելի է միացնել նաև **փասպ** «խոռոչ, քարայր» < \*phə-b-, **փոր(ել)** «անցք, խոռոչ, որովայն, ընդերք, ձոր, բրել, փոս անել, քանդակել» < \*pho-r-, **փող** «նեղ անցք, խողովակ, ուղի, շեփոք» < \*pho-l-, **փարփուտ** «դատարկ» < \*phə-r(ə)-ph-, **պարասպ** «դատարկ, փուշ, ունայն, ազատ» < \*p(h)ə-r(ə)-p(h)- անհայտ ծագման համարվող բառերը<sup>176</sup>:

### 3. Թաղիք

Կաշին և կաճը ծածկոցի տեսակներ են՝ նույն մորթու մշակումից, թեն տարբեր արտադրաբանությամբ ստացված: Հետևաբար պատահական չէ հայերեն **կաշի** և **կաճ** բառերի արտաքին նմանությունը և, ինչպես վերը նշվեց, հետև. նույն արմատից ծագած լինելը<sup>177</sup>:

Հայերենում **կաճ** բառից ավելի լայն տարածում ունի դրա հոմանիշ **թաղ(իք)** բառը, որ համարվում է անհայտ ծագման (ՀՄԲ, 2, 143-144, ՀՄԲ, 255): **Թաղ** արմատական տարբերակը նշանակում է «1. կաճ, 2. կաճե գլխարկ, 3. սաղավարտ, 4. խիտ, սեղմ, 5. կամարածն ծածկ, 6. հողով ծածկելը»: Սրանից – **կ-** աճականով է կազմված **թաղկ** «խիտ, սեղմված, թնջկված» բառը, **-թ-** աճականով՝ **թաղթ** «ձվի սպիտակուցի նուրբ թաղանթ» բառը: Նույն արմատից է ենթադրվում **թաղանթ** բառը (ՀՄԲ, 256): Այլ ածանցյալներ են՝ **թաղուն** «խիտ, կուռ, խճողված», **թաթաղուն** «լեցուն, լիովի, խիտ», **թաղակ** «թաղիքե սաղավարտ կամ գլխարկ», **թաղկուճ** «թնջկած մազեր», **թաղխանալ** «թաղկել, խտանալ, թաղիք դառնալ, թնջկել», **թաղել** «հողով ծածկել», **թաղթաղուկ** «խրուտ, ճահճուտ», **թաղուճ** «խաղ ձու թաղելով», **թաղոց** «անթեղած կրակ», **թաղնայ** «գլխի մեծ փաթույթ, կերպասե գլխարկ»: Գ. Ջահուկյանը **թաղանթ, թաղել, թաղթ** բառերը կասկածով կապում է հնիւլ. \*tol-/\*tel-/\*təl- «հարթ, գետին, տախտակ» արմատի հետ (որ համոզիչ չէ), իսկ **թաղ(իք), թաղկիլ** բառերի կապը դրա հետ քիչ հավանական է համարում (ՀՄԲ, 255-256):

Ս. Նիկոլանի «Հնդեվրոպական ստուգաբանության շտեմարանում» **թաղուն** բառը բխեցված է հնիւլ. \*tAlw- «հաստ, սովար, խիտ» արմատից (Նիկ. 2801): Նույն արմատը Յ. Պոկոռնին տալիս է \*(s)tel- տարբերակով (Պոկ. 1018): Բայց իմաստային հանրության զարգացումները ենթադրել են տալիս, որ «հաստ, խիտ» իմաստներին պիտի նախորդեին «կտրել > կտոր > կաշի > ծածկել» հաջորդական անցումները: Այդ իմաստները պահպանված գտնում ենք ձևախմաստային նույն դաշտին պատկանող հնիւլ. **tuḫēi-** «կտրել, խփել» (սրա-

<sup>176</sup> Այս վերջին երկու բառերի հնարավոր կապի մասին նշել է Գ. Ջահուկյանը (ՀՄԲ, 761):

<sup>177</sup> Հմմտ. նաև անգլ. felt «թաղիք, կաճ» եւ լատ. pellis «կաշի», անգլ. fell «մորթի», film «թաղանթ» և այլն:



նից են՝ անգլասաքս. *ðwītan* «կտրել», հ.իսլ. *Þveitr* «կտրվածք», *Þveita* «հարված» (Պոկ. 1099), \**tuerk-* «կտրել» (սրանից են՝ ավեստ. *θwarəš-* «կտրել», հուն. *σαρκάειν* «մաշկել») (Պոկ. 1102), \**twak-*, \**tyakos-* «կաշի, մորթի» (սրանից են՝ հ.հնդկ. *tvacas-* կաշի», հուն. *σάκος* «կաշի, ծածկ, վահան») (Նիկ. 2921, Պոկ. 1099), \**tuǎk-*, \**tuk-* «փակել, խտացնել» (սրանից են՝ հուն. *σάγμα* «ծածկ, հագուստ», *σάγη* «գրահ, զգեստ») (Պոկ. 1098), \**telk-*, \**telek-* «մանրել, ձեռել, խփել» (սրանից են՝ ռուս. *толочь*, «մանրել, ձեռել, լուսել», *толокно* «վարսակալյուր», *толкати* «հրել», լատվ. *nuótafcit* «խփել, ձեռել, փշրել, ջարդել», կիմր. *talch* «հատված, հատիկ», հ.կոռն. *talch* «մաշկի թեփ») (Նիկ. 2821, Պոկ. 1062) արմատներում ու դրանց ժառանգ ձևերում: Անշուշտ, սրանց հետ ծագումնաբանորեն կապված է հայերեն **թաղ**-ը: Դրա համար պետք է վերականգնել հ-ե. \**təl-* «խիտ, ծածկ, թաղանթ» նախածը, որից են նաև վերոհիշյալ **թաղել**, **թաղլուծ**, **թաղոց**, **թաղուն**, **թաթաղուն**, **թաղթաղուկ**, **թաղակ**, **թաղիք**, **թաղիանալ** բառերը: Նույն արմատի՝ աճականներով ու ածանցներով տարբերակներից են **թաղկ**, **թաղկել**, **թաղկուծ** (<\**təl-g-*), **թաղթ** (<\**təl-t-*), **թաղանթ** (<\**təlθ-t-*՝ ոնգայնացմամբ), **թաղնայ** (<\**təl-no-*) բառերը: Նույն արմատից կարելի է բխեցնել նաև թուրք **«1. գրելու թաղանթ, 2. նամակ, հրովարտակ»** բառը (<\**təl-t-*): **Հ. Աճառյանը** դա համարում է փոխառություն լատիներեն *titulus* «արձանագրություն, մակագրություն, վերնագիր, պիտակ, տապանագիր» բառից (ՀԱԲ, 4, 630-631): Գ. Ջահուկյանը դա ընդունում է կասկածով (ՀԱԲ, 274): Բայց, իսկապես, նախ՝ լատիներենը չունի հայերենի առաջին՝ «թաղանթ» իմաստը և նույնիսկ երկրորդ «նամակ, հրովարտակ» իմաստը:<sup>178</sup> Երկրորդ թուրքը Հայաստանում հայտնվել է որպես մագաղաթի փոխարինող, այսինքն՝ կաշվե թաղանթի այլընտրանք: Բայց մինչ այդ նա գործածական բառ է եղել «նամակ» իմաստով, որը **Հ. Աճառյանը** առաջնային է համարում և դրանով էլ հիմնավորում լատիներենից փոխառությունը: Իսկ «թաղանթ» իմաստը համարում է երկրորդային: Սակայն իրականում, որպես կանոն, պարունակողի (կրիչի) անունն է դառնում նաև պարունակչայի (գրվածքի) անուն<sup>179</sup>, և ոչ թե հակառակը<sup>180</sup>, ուստի **Հ. Աճառյանի** պնդումը

<sup>178</sup> Ի դեպ՝ *titulus* բառը լատիներենում ստուգաբանված չէ. կա միայն ենթադրություն, որ դա փոխառություն է էտրուսկերենից (ՎԲԱ, *titulus*):

<sup>179</sup> **Է. Աղայան**, *Լեզվաբանության հիմունքներ*, Ե., 1987, էջ 344:

<sup>180</sup> Դա նշանակում է, որ եթե որևէ բառ տվյալ լեզվում ունի երկու իմաստներն էլ, ապա առաջնայինը պարունակողի անունն է: Լատիներենում *titulus* բառը չունի «թաղանթ» իմաստը, հետևաբար նա լատիներենում հայտնվել է միանգամից «արձանագրություն» իմաստով: Նույն կերպ «թաղանթ» իմաստը չունեն հայերենում **նամակ** փոխառյալ բառը, ռուսերենում *писмо*-ն: Մինչդեռ *paper*-ը, *бумага*-ն, *թուղթ*-ը, *մագաղաթ*-ը, *պապիրուս*-ը և այլն ունեն երկու կարգի իմաստներն էլ՝ «թաղանթ» և «գրություն», որոնցից առաջնայինն է «թաղանթ»-ը: Լատիներեն *liber* բառը ունի «ծառի կեղև» և «գիրք» իմաստները, որոնցից սկզբնականը առաջինն է, քանի որ հնում գրում էին ծառի կեղևից պատրաստված կրիչների վրա (*Wik., library*): Անգլերեն *book* (գերմ. *Buch*) բառը ծագում է նախագերմաներեն \**bokiz* «հաճարեմի» բառից, քանի որ հնում գրելիս են եղել այդ ծառի փայտից պատրաստված սալիկների վրա (*OED, book*): Լատիներենն ու սանսկրիտն էլ ունեն «գրություն» նշանակող բառեր, որոնք առաջացել են ծառանուններից (կեչից և հացենից համապատասխանաբար) (*OED, book*): Հունարեն *βιβλίον*



խմաստային տիպաբանության առումով արժանահավատ չէ: Մնում է ենթադրել, որ թուղթ բառը ասորերենից փոխառյալ մագաղաթ բառի հնագույն հոմանիշն է, որի «թաղանթ» իմաստը գրական լեզվում դուրս է մղվել մագաղաթ բառի փոխառության հետևանքով: Թուղթ-ը շարունակել է առավելապես գործածվել ածանցյալ «նամակ» իմաստով (ըստ մատենագրական սովյալների) մինչև 9-10-րդ դդ. չինական թղթի հայտնվելը<sup>181</sup>, երբ դարձյալ գործուն է դարձել նրա «գրելու թաղանթ» իմաստը: Հավանական է, որ խոսակցական ու բարբառային հայերենում մագաղաթ-ի փոխարեն մշտապես շարունակել է գործածվել թուղթ-ը՝ նաև «թաղանթ» իմաստով<sup>182</sup>: Հետևաբար պետք է ենթադրել, որ թուղթ բառը բնիկ հայերեն է, այլ ոչ թե փոխառություն: Երրորդ՝ պատահական չէ նրա արտաքին և բովանդակային նմանությունը թաղթ և թաղանթ բառերին՝ որպես դրանց ծագումնաբանական տարբերակի: Ի դեպ, բարբառներում կա նաև *ու* ձայնավորումով նույնարմատ թուլիկ (<\*töl-)> «մախաղ, պայուսակ» բառը (ՀԼԲԲ, 2, 141):

Այսպիսով, որ Հայկական լեռնաշխարհը հնուց անտի եղել է կաճագործության, կաշեգործության ու կոշկագործության կենտրոն, ապացուցվում է ոչ միայն պատմագիտական, հնագիտական ու ազգագրական, այլև լեզվական սովյալներով: Հայերենում, հակառակ տարածված թյուր պատկերացման, մեծ թիվ են կազմում «կաճ», «կաշի», «ոտնաման» և հարակից իմաստներով բնիկ (հնդեվրոպական ծագման) բառերը:

#### Համառոտագրություններ

ՀԱԲ – **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հհ. 1-4, Ե., 1971-1979

ՀԱԲ – **Գ. Զահուկյան**, *Հայերեն ստուգարանական բառարան*, Ե., 2010

Մալխ. – **Ս. Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան*, հհ. 1-4, Ե., 1944-1945

ՀԼԲԲ – *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հհ. Ա-Է, Ե., 2001-2012

Ֆաս. – **М. Фасмер**, *Этимологический словарь русского языка*, тт. 1-4, М., 1964-1973

Պոկ. – **J. Pokorny**, *Indogermanisches etymologisches Wörterbuch*. Bern-München, 2005 (<http://dnghu.org/indoeuropean.html>)

Նիկ. – *S. Nikolaev, Database of Indo-European etymology* (<http://starling.-rinet.ru/cgi-bin/response.cgi?root=config&morpho=0&basename=data\ie\piet&first>)

Wik. – Wiktionary (<https://en.wiktionary.org/wiki>)

OED – Online Etymology Dictionary (<http://www.etymonline.com>)

---

(**βύβλος**) «գիրք» բառն էլ առաջացել է **βύβλος** «պապիրոս» բառից (սա էլ իր հերթին՝ *Byblos* քաղաքի անունից, որտեղ արտադրվում էր պապիրոսը) (**Wik., Bible**): **Մատենան բառը ևս սկզբնապես նշանակել է «մագաղաթ», հետո միայն «(արձանագրություն, գիրք)»** (ՀԱԲ, 3, 269):

<sup>181</sup> Ի դեպ՝ հայերը թղթին մի քանի դար ավելի շուտ են ծանոթացել, քան հռոմեացիները:

<sup>182</sup> Ժամանակակից բարբառներում էլ **թուղթ** բառը լայն գործածություն ունի՝ ի տարբերություն **մագաղաթ**-ի (ՀԱԲ, Թուղթ, Մագաղաթ):

Hovhannes Zakaryan – Etymology of Armenian Words լեկ, փոկ and թաղիք-  
Armenian words լեկ, փոկ and թաղիք are not etymologized. The article, dwelling  
upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward etymologies for them as  
native Armenian words of I. E. origin. They are: լեկ "leather, leather cloth or apron,  
shoe" < \*le-g-, \*lā- "to cover, wrap", փոկ "strap, belt, brogue" < \*pho-g-, \*(s)p(h)ēi-  
"sharp", թաղիք "felt" < \*təl-, \*(s)tel- "thick, tight, dense".

Оганес Закарян – Этимология армянских слов լեկ, փոկ и թաղիք-Армянские  
слова լեկ, փոկ и թաղիք считаются не этимологизированными. В настоящей  
статье на основе фонетического, словообразовательного и семантического  
анализов предлагаются их этимологии, согласно которым данные слова являются  
исконно армянскими словами индоевропейского происхождения. Эти  
этимологии: լեկ "шкура, кожаный фартук, лапоть" < \*le-g-, \*lā- "покрывать", փոկ  
"ремень, тяз, лапоть" < \*pho-g-, \*(s)p(h)ēi- "острый", թաղիք "войлок" < \*təl-,  
\*(s)tel- "толстый, плотный".

## ԻՄԱՍՏԱՅԻՆ ՆՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ «ԳԻՐՔ ՎԱՍՏԱԿՈՑ» ԵՐԿՈՒՄ

Միջին հայերենի բառապաշարի կարևոր և անբաժանելի մասն են կազմում նաև գրաբարից ավանդված այն բառերը, որոնք ձևով նույնն են, սակայն գործածվել են նոր իմաստներով: Այդ բառերի նոր իմաստների առաջացումը պայմանավորված է իմաստափոխական տարբեր երևույթներով, որոնց հիմքում ընկած է հասկացությունների միջև որևէ առնչություն: Իմաստային նոր դրսևորումները հիմնականում պայմանավորված են բառիմաստի ընդլայնմամբ, նեղացմամբ, խոսքիմասային փոխանցումներով և բառի փոխաբերական իմաստով գործածվելու հանգամանքով:

Իմաստային նոր դրսևորումներ կարելի է գտնել միջին հայերենով ավանդված տարբեր սկզբնաղբյուրներում՝ ոչ միայն ինքնուրույն այլ նաև թարգմանական գրականության հուշարձաններում: Այս տեսանկյունից, կարելի է ասել՝ առանձնանում է միջնադարյան հայ թարգմանական գրականության կարևոր նմուշներից մեկը՝ «Գիրք վաստակոց» երկը<sup>183</sup>, որը անգնահատելի սկզբնաղբյուր է միջին հայերենի ուսումնասիրության համար:

Նշված երկում մեր հաշվումներով կիրառվել են մոտ հինգ տասնյակ իմաստոփոխված բառեր, որոնց մեծ մասը նոր իմաստով առաջին անգամ կամ եզակի վկայությամբ հանդիպում է հենց այս երկում:

Սույն հոդվածում մենք առանձնացրել և քննել ենք մեկ տասնյակ իմաստափոխություններ (11), որոնք, հիմնականում բառիմաստի ընդլայնմամբ առաջ եկած եզակի դրսևորումներ լինելով, արձանագրված չեն նախ և առաջ «Միջին հայերենի բառարան»-ում<sup>184</sup>, որոշ բառերի դեպքում՝ նաև մյուս բառարաններում<sup>185</sup>:

**Ապրացու** բառը գրաբարում ածական է և ունի «ապրեցնող, փրկող» նշանակությունը: Առձեռն բառարանը տալիս է ածականական երկու իմաստ՝ «ապրելու միջոց» և «ապրող, նա, որ պիտի ապրի»<sup>186</sup>: Ստ. Մալխասյանցը արդեն եղածին զուգահեռ գավառական բառ կամ նշանակություն նշումով բե-

<sup>183</sup> Գիրք վաստակոց, Վենետիկ, 1877 (այսուհետև՝ ԳՎ): Բերվող օրինակների էջերը կնշվեն փակագծերում:

<sup>184</sup> Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), Ե., 2009:

<sup>185</sup> Մեր կողմից առանձնացված բառերը ստուգել ենք հետևյալ բառարանների տվյալներով. Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1846, Նոր բառգիրք հայկազնեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836-37, Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), Ե., 1971-1979, Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՄՀԲԲ), Ե., 1944, Հ. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, Հայոց լեզվի բարբառային բառարան, Ե., 2001-2012:

<sup>186</sup> Տե՛ս Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1846, էջ 95:

բում է նաև «ապուրի համար պետքական» իմաստը<sup>187</sup>: Այս իմաստը *սայրացու, սպուրցու, սայրցու* ձևերով կիրառվում է հայերենի մի շարք բարբառներում<sup>188</sup>:

ԳՎ-ում *սայրացու*-ն գործածվել է բոլորովին այլ՝ «երկար ժամանակ բան պահելու տեղ, մառան» գոյականական իմաստով. «Եւ ոմանք թգենտոյն տերևն *սայրացուին* ներքև փռեն 'ի կերչէն պահէ» (31): Այս նոր իմաստը, ինչպես արդեն տեսանք, արձանագրված չէ ՄՇԲ-ում և մյուս բառարաններում: Նկատենք մի հետաքրքիր հանգամանք. «Առձեռն բառարան»-ը նշված բառի համար բերելով «սպրելու միջոց» իմաստը՝ փակագծում նշում է *տասպան Նոսյի*<sup>189</sup>, այսինքն՝ տասպանը դիտվում է իբրև «սպրեցնող միջոց»: Սրանից կարելի է հասկանալ, որ *սայրացու* բառը իմաստի ընդլայնմամբ ԳՎ-ում կիրառվել է նաև «սպրեցնող տեղ» նշանակությամբ:

**Գան** գոյականը գրաբարին բնորոշ «ծեծ» իմաստին զուգահեռ միջին հայերենում ձեռք է բերել նաև «վերք, վնասվածք» իմաստը: Նշված իմաստով *գան*-ը առատորեն հանդիպում է միջնադարյան բժշկարաններում:

ԳՎ-ում «վերք» իմաստով *գան*-ը մեկ անգամ է հանդիպում միայն. «Վասն պախրեի, որ կաղայ... լուս գկճղակսն տաք ջրով, և գիտ *զգանն*, և հին տաք մարդոյ գոգով լուս» (213): Այս երկի համար առավել հատկանշական է *գան*-ի՝ «բույսի վիրավոր մաս» նշանակությունը, որ առաջ է եկել «վերք» իմաստի ընդլայնմամբ: Նշված իմաստով ԳՎ-ում բազում օրինակներ կարելի է գտնել, ինչպես՝ «Տե՛ս, թե *գանն* բարձր լինի՝ 'ի հողոյ առ մաղած հող և այծու աղբ և խառնեա ընդ իրար և շաղախ արա, և դի՛ր ի վերայ *գանին*: Եւ թե՛ 'ի հողն մօտ լինի *գանն*՝ դու գաղբն և գհողն յիրեար խառնեա և ծածկեա նոյն հողովն. օգտէ *գանին*» (76), «... և 'ի յատակն օտար աղբ լից հող. և ըզտնկին *գաներն* կուով օ՛ծ և ապա դիր. նա անսղալ բռնէ» (179):

Որքան էլ զարմանալի կարող է թվալ, վերոնշյալ երկու իմաստներն էլ չենք գտնում ՄՇԲ-ում, թեև այնտեղ արձանագրված է *գանել* բայը՝ «վնասել» իմաստով, ընդ որում բերվում է հենց ԳՎ-ի օրինակը<sup>190</sup>: *Գանել* բայը գրաբարում ունի «ծեծել, նախատել, կշտամբել» իմաստները, որոնք վերաբերում են մարդուն կամ կենդանուն, իսկ ԳՎ-ում իմաստային ընդլայնում է նկատվում. *գանել*-ը քանիցս կիրառվել է «ծառի արմատին կամ բույսին վնասել» իմաստով, ինչպես՝ «... և պատրաստ կաց 'ի բրելն որ ջքշտես և *չգանես* գտունկն» (65), «Յաղագս որ 'ի տունկն փորիչ կամ խոփ կամ այլ սուր իրք դիպի՛ և *գանէ* գինքն» (76), «Ա՛ռ պտուղն ձեռոք քաղած որ *չգանի*» (127):

Նկատենք, որ ԳՎ ում գործածված *գան* «բույսի վիրավոր մաս» և *գանել* «ծառի արմատին փորելու ժամանակ վնասել» բառերի իմաստային այս

<sup>187</sup> Մտ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Ե., 1944, հ.1, էջ 211:

<sup>188</sup> Տե՛ս Հ. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան, էջ 130: Հայոց լեզվի բարբառային բառարան, Ե., 2001, հ.1, էջ 95:

<sup>189</sup> Տե՛ս նշվ. տեղում, էջ 95:

<sup>190</sup> Տե՛ս ուր. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, էջ 133:

նոր դրսևորումները արձանագրել է Աճառյանը՝ իբրև սկզբնաղբյուր հղելով հենց ԳՎ-ին<sup>191</sup>:

**Թագ** գոյականը ԳՎ-ում գործածվել է միանգամայն նոր «մեղունների թագուհի» իմաստով. «...և երբ մեղու կամենաս տնկել, դու յամեն կոճակ *թագ* մի դիր, նա այն զամեն մեղուքն ժողով պահե: Եւ *թագիտ* նշանք այս է. խարտեշ լինի և մեկուկէս մեծ քան զայլ մեղու. և որ զայս նշանքս ունենայ, լան այն է, և վատ *թագ*՝ այլագոյն լինի և սևագոյն, և մեծութիւն երկու հետ մեծ քան զայլ մեղու» (191):

Նկատենք, որ ԳՎ-ում կիրառված *թագ*-ի իմաստային այս նոր դրսևորումը արձանագրել է միայն Աճառյանը<sup>192</sup>:

**Ծունգն** գոյականը իր կազմախոսական նշանակությունից բացի գրաբարում ունի նաև «հացաբույսերի ցողունների միացման տեղը» իմաստը: ԳՎ-ում *ծունգ*-ը գործածվում է նաև «բուն որթ» իմաստով, որը չկա ՄՀԲ-ում. ինչպես՝ «Եւ ՚ի հաստատած այգին որ սարբնայով լինի չորս ուռ պարտ է թողով ՚ի *ծունգն*. Յամեն *ծունգ* երկու որթ ուռ» (63), «Դու ՚ի մեկայլ տարին մայրան թողուս, որ է *ծունգ*» (64):

Նշված իմաստը ունեն ՆՀԲ-ն և ՀԱԲ-ը (ունի նաև ՄՀԲԲ-ն), որոնք երկուսն էլ հղում են ԳՎ-ին<sup>193</sup>:

**Ծայր** գոյականը, որ գրաբարում ունի «վերջ, գագաթ, կատար» իմաստները, միջին հայերենում ևս իմաստափոխության է ենթարկվել՝ հանդես գալով «քիչ» իմաստով: Վերջինս *մի* անորոշ դերանվան համադրմամբ գործածվել է «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» թարգմանական երկում (13-րդ դ.) «մի քիչ» նշանակությամբ. «...նա առնուն *ծայր մի* աղ և լնուն ի բերանն»<sup>194</sup>: ԳՎ-ում *ծայր մի*-ն կիրառվել է նաև մակբայական իմաստով. «Եւ այն է լաւ, որ յետևեն *ծայր մի* ստեպ բանաս զպատուհանսըն» (195): ՄՀԲ-ում արձանագրված է վերջինիս ածականական կիրառությունը, իսկ մակբայականը՝ ոչ: Նշված իմաստը չունեն նաև մյուս բառարանները:

Արաբերենից փոխառյալ *մկրատ* miqrad «կտրող գործիք» գոյականը (միակ բառն է մեր քննածներից, որ ավանդված չէ գրաբարից), որ սովորական է միջին հայերենի համար, նշված իմաստից բացի ԳՎ-ում գործածվել է «խաղողի որթի ծիլ» նշանակությամբ. իմաստային այս ընդլայնման հիմքում հավանաբար ընկած է մկրատի և խաղողի որթի ծիլի նմանությունը. «Եւ երբ դնել կամենաս, նախ սրբեա գտերևսն և *զմկրատսն* և ապա դիր» (53): Նշված նոր իմաստը բերում է Աճառյանը և հղում ԳՎ-ին<sup>195</sup>: Ստ. Մալխասյանցի բառարանում ևս գտնում ենք վերոբերյալ իմաստը՝ զավառական բառ կամ

<sup>191</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Ե., 1973, էջ:

<sup>192</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 135:

<sup>193</sup> Տե՛ս Նոր բառգիրք հայկագնեան լեզուի, հ. Ա, էջ 1027: Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ.2, էջ 472:

<sup>194</sup> Տե՛ս Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ, Ե., 1980, էջ 88:

<sup>195</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Ե., 1977, էջ 330:

նշանակություն նշումով<sup>196</sup>: Նկատենք, որ *սկրաստ*-ը «խաղողի որթի ծիլ» իմաստով կա Արարատյան (Դվինի) բարբառում: Դա են վկայում բարբառա-  
յին բառարանները<sup>197</sup>:

*Սերտ* ածականը գրաբարում բազմիմաստ բառ է և համապատաս-  
խանաբար ունի «ամուր, պինդ, խիտ, ջերմ, ստույգ, մտերիմ, սեփական» ի-  
մաստները: ԳՎ-ում վերջինս հանդես է եկել բոլորովին նոր՝ «շուտ-շուտ,  
ստեպ» մակբայական իմաստով, ինչպես՝ «*Սերտ* ծեծեա՛ն նուավ զջուրն՝ որ  
փրփրայ» (103), «*Սերտ* խառնէ որ չայրի» (105), «... Ա՛ն անուշահոտ սպիտակ  
ձաղկունք, և *սերտ* շփեա զկոճակն ՚ի ներքուստ» (192):

Նշված սերտ-ից ԳՎ-ում համապատասխանաբար կիրառվել է *սերտել*  
բայը՝ (գրաբարում ամրացնել, պնդացնել) «շուտ-շուտ անել, կրկնել» իմաս-  
տով. «...և ՚ի հետ սերտեն զգարկերն այնչափ, որ միսն մէն մանրի» (194):  
Նկատենք, որ ինչպես *սերտ*, այնպես էլ *սերտել* բառերի նոր իմաստները  
արձանագրված չեն բառարաններում:

*Սիրտ* գոյականը Գիրք վաստակոց»-ում բառիմաստի ընդլայնմամբ  
կիրառվել է նոր՝ «մրգի միջուկ, կորիզ» նշանակությամբ<sup>198</sup>. «Ա՛ն նոր սեր-  
կնիլ... և այնու ճեղքեա ի չորս և հան *սիրտն*, և զքթերն և դի՛ր ի ձիթած  
կարաս» (126): ՄՀԲ-ում *սիրտ* բառի այս նոր իմաստը տեղ չի գտել, չնայած  
որ ածանցավոր *սրտուկ* ձևը կա<sup>199</sup>: ՆՀԲ-ն բերում է «սիրտ պտղոց» իմաստը  
և հղում է ԳՎ-ին<sup>200</sup>: Ստ. Մալխասյանը *սիրտ* բառի համար որպես 11-րդ  
իմաստ ևս նշում է «պտուղների սիրտը՝ էական մասը»<sup>201</sup>:

*Քշտել* բայը գրաբարում ունի «կտրել, կրճատել», իսկ միջին հայե-  
րենում «հարվածել» իմաստները, ինչպես «և պատրաստ կաց ի բրելն որ  
*քշտես* և ջգանես գտունկն» (65): ԳՎ-ում «հարվածել»-ից բացի *քշտել*-ը կի-  
րառվել է «քսել» իմաստով. «Ճանաչել զմեծն և զբրդեղն, որ երբ զձեռնդ *քշ-  
տես* ի բուրդն կակուղ լինի» (214): ՄՀԲ-ում նշվում են «հարվածել» և «մի բա-  
նի մեջ հավաքել» իմաստները, իսկ «քսել» նշանակությունը արձանագրված  
չէ: Նշված իմաստը գտնում ենք միայն ՀԱԲ-ում, որտեղ *քշտել* բայի համար  
Աճառյանը բերում է նաև «ձեռքը մի բանի զարնել, քսել» իմաստը՝ իբրև  
սկզբնաղբյուր հղելով հենց ԳՎ-ին<sup>202</sup>: Նկատենք, որ *քշտել* բայի «քսել» իմաս-  
տը ունեն չաճնի (քիշտել), Խարբերդի (քշտել) և Սվեդիայի բարբառները<sup>203</sup>:

<sup>196</sup> Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Ե., 1944, հ. 3, էջ 344:

<sup>197</sup> Տե՛ս Հ. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան, ջ 786: Հայոց լեզվի բարբառային բա-  
ռարան, հ. Դ, Ե., 2007, էջ 65:

<sup>198</sup> Այս մասին տե՛ս նաև Հ. Թաղևոսյան, *Սիրտ* բաղադրիչով նոր կազմություններ միջնաղար-  
յան բժշկարաններում, Հայերենագիտական միջազգային տասներերորդ գիտաժողովի գեկու-  
ցումների ժողովածու, Ե., 1915, էջ 118:

<sup>199</sup> Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, էջ 722:

<sup>200</sup> Տե՛ս Նոր բառգիրք հայկականեան լեզուի, հ. Բ, էջ 716:

<sup>201</sup> Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Ե., 1944, հ. 4, էջ 220:

<sup>202</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Ե., 1979, էջ 585:

<sup>203</sup> Տե՛ս նույն տեղում:

Այսպիսով՝ ամփոփելով վերն ասվածը՝ ևս մեկ անգամ նշենք, որ «Գիրք վաստակոց» երկում առաջին անգամ կամ եզակի վկայությամբ կիրառված զգալի թվով իմաստափոխված բառերից տասնմեկը տեղ չեն գտել ՄՀԲ-ում: Դրանցից վեցը (*զան, զանել, թագ, ծունգ, մկրատ, քշտել*) կան ՀԱԲ-ում, այդ թվում մեկը (*ծունգն*)՝ նաև ՆՀԲ-ում և ՄՀԲԲ-ում, *սիրտ* բառի «մրգի միջուկ, կորիզ» իմաստն ունեն ՆՀԲ-ն և ՄՀԲԲ-ն, չորսը (*սայրացու, ծայր մի, սերտ, սերտել*), տեղ չեն գտել բառարաններից և ոչ մեկում: Վերը բերված իմաստային նոր դրսևորումները հետագա դարերում կիրառությամբ աչքի չեն ընկել, դրանցից միայն *մկրատ* և *քշտել* բառերն են, որ այսօր էլ կիրառելի են հայերենի որոշ բարբառներում:

Hasmik Tadevosyan –New Semantic Manifestations in the Work “Girk Vastakots”. - This article studies new meanings of words (11 words), which were used in the work "Girk Vastakots" (13c.), but were not included in the "Dictionary of Middle Armenian". New semantic manifestations are mainly due to the expansion of the word meanings. These new meanings were not used in the following centuries, only two of them are still used in the Armenian dialects.

Тадевосян Асмик - Новые смысловые проявления в произведении “Гирк Вастакоц”. - В статье рассматриваются новые значения слов (11 слов), которые употреблялись в произведении “Гирк Вастакоц” (13в.), но не были включены в “Словарь среднеармянского языка”. Новые смысловые проявления в основном обусловлены расширением значения слов. Эти новые значения не применялись в последующих веках, только два из них до сих пор используются в армянских диалектах.

**ԺԽՏԱՆ ԿԱՐԳԸ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ  
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Ժխտումը ընդհանրական հասկացություն է, որը հատուկ է բոլոր լեզուներին: Այն ոչ միայն քերականական, այլև տրամաբանական հասկացություն է: Այսինքն՝ ժխտումը մարդկային մտածողության արգասիք է: Իրականության մեջ ժխտում գոյություն չունի:

Ժխտումը, լինելով լեզվաբանների ուսումնասիրությունների կենտրոնում՝ ամենաբազմազան իր դրսևորումներով<sup>204</sup>, այնուամենայնիվ մնում է լեզվաբանության կնճռոտ հարցերից մեկը:

Շատ լեզվաբաններ այն տեսակետն են հայտնում, որ ժխտումը հաստատման հակառակ արտահայտությունն է: Այսպես, ակադ. Ս. Աբրահամյանը հայերենի որոշյալ և ժխտական դերանունները միավորում է նկատի ունենալով, որ ժխտական կոչվող դերանունները որոշյալների հականիշ-ժխտական տարբերակներն են՝ *ամեն ոք - ոչ ոք, ամեն մի - ոչ մի, ամեն ինչ - ոչինչ, ամեն մեկը - ոչ մեկը*<sup>205</sup>:

Սակայն ինդիքն այն է, որ նշվածը ոչ միշտ է ընդունելի. կան դեպքեր, երբ հիշատակված եզրերը՝ հաստատական - ժխտական, իմաստաբանորեն հիմնավորված չեն. այսպես, եթե «**Լ. Արոնյանը հաղթեց բոլոր մրցակիցներին**» հաստատական նախադասության հակառակը ժխտականն է «**Ոչ ոք չհաղթեց Լ. Արոնյանին**», ապա «**Ոչ ոք չհաղթեց Լ. Արոնյանին**» չի նշանակում, թե բոլորը պարտվել են, և Լ. Արոնյանը հաղթել է բացարձակապես բոլորին: Նույնը տեղի ունի արևմտահայերենում.

Բացի այդ, **ոչինչ** ժխտական դերանունը ոչ միշտ է համապատասխանում *ամեն ինչ* - ին: Արևելահայերենի ազգային կորպուսում (արևակ)<sup>206</sup> դիտարկելով այդ ժխտական դերանվան առկա 1000 օրինակները՝ կարելի է ներկայացնել դրա բոլոր իմաստային, ձևաբանական և շարահյուսական դրսևորումները՝ նկատի ունենալով հնչերանգային հսկայական դերը.

1. Հաց ու պանիր, **ուրիշ ոչինչ** ...
2. -Լավ,- ասաց տղան,- **ոչինչ** ...
3. -**Ոչինչ, ոչինչ**,- պատասխանեց Ռոստովը ...
4. Մեռնել, քրնանալ, **ոչինչ ավելի** ...
5. Մի՛ խոսիր **ոչինչ**, ցած բեր գլուխդ ...

<sup>204</sup> Այս մասին մասնավորապես տես՝ **Լ.Սանթրյան, Ժխտման արտահայտությունը հայերենում**, Ե., 2011:

<sup>205</sup> *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 2, Ե., 1974, էջ 208:

<sup>206</sup> Տե՛ս՝ [www.eanc.net/com](http://www.eanc.net/com) կայք էջը:



6. Էս է, **ուրիշ ոչինչ ...**
7. Մա **դեռ ոչինչ ...**
8. Ես քեզ համար **գուցե ոչինչ ...**
9. Լավն է, **ոչինչ ...**
10. **-Ոչինչ**, - մի փոքր էլ ամաչիր ...
11. Մեր ժամանակներում թիվ նկարերը **ոչինչ է ...**
12. Ու՛մ ես ասում, Փեփուշին, Չի էլ լսում, **կարծես ոչինչ ...**
13. Ինչպե՛ս ես – **ոչինչ ...**
14. **Ոչինչ**, որ այս հարցին չպատասխանեմ ...<sup>6</sup>
15. Մային, **ոչինչ**, խելոք տղա է և այլն:

Իսկ «ինչպե՛ս ես – **ոչինչ**» հարց ու պատասխանը, որ սովորական է արևելահայերիս համար, և նշանակում է՝ **սովորականի պես, կամաց-կամաց** և այլն, միանգամայն անհասկանալի ու անտրամաբանական է արևմտահայ մեր հայրենակիցներին:

Այսինքն, լեզվում միշտ չէ, որ գործում են բինար հակադրություններ. հանդիպում են նաև երեք, չորս և բազմակի հակադրություններ կամ առհասարակ չկա հակադրություն:

Ըստ Կարո Առաքելեանի՝ արևմտահայերենում «... ժխտական դերանունները՝ **ոչ ոք, ոչինչ, ոչ մեկ, ոչ մեկը**, իրենց իմաստով համապատասխանաբար կը հուսասարին **ամեն ոք, ամեն ինչ, ամեն մեկ, ամեն մեկը** դերանուններուն, միայն այն տարբերությամբ, որ ժխտականները ժխտական իմաստ ունին: Ժխտական դերանունները կարելի է կոչել **որոշեալ ժխտական դերանուններ**»<sup>207</sup>:

**Ոչ մեկ, ոչ մեկը** ժխտական դերանունները արևմտահայերենում կանոնական են և ունեն որոշակի բաշխվածություն. **ոչ մեկ** անհոդ կիրառությունը պարտադիր կերպով պահանջում է գոյական՝ **ոչ մեկ մարդ, ոչ մեկ երեխա** և այլն, իսկ հոդավոր ձևի դեպքում՝ գոյականը բացառվում է՝ **ոչ մեկը ըսավ, ոչ մեկը եկավ** և այլն, մինչդեռ արևելահայերենում ահող կիրառությունը կանոնական չէ և համարվում է գավառաբանություն:

Ս. Աբրահամյանի, Բ. Վերդյանի և Վ. Քոսյանի հեղինակած՝ «Հայերեն լեզուի դասագրքում»<sup>208</sup> ժխտական դերանունները, որպես տեսակ, առանձնացված չեն. «հանրական դերանուններն են՝ **ոչ ոք, ոչինչ, ոչ մեկը, որոնք ամեն ոք, ամեն ինչ և ամեն մեկը** դերանուններուն ժխտականներն են»:

Ս. Ասատրյանը<sup>209</sup>, ընդունելով հանդերձ Ս. Աբրահամյանի տեսակետը, այնուամենայնիվ ժխտական դերանունները որպես առանձին տեսակ է ներկայացնում՝ դրանց մեջ ընդգրկելով **ոչ ոք, ոչինչ, ոչ մեկը, ոչ մի** ձևերը:

Ինչպես էլ կոչենք կամ անվանենք՝ ժխտական դերանունները կան երկու գրականներում էլ, քանի որ դրանք հասկացություններ են՝ իրենց բառային, քերականական, հնչյունաբանական նշանակություններով հանդերձ<sup>210</sup>:

<sup>207</sup> Կարո Առաքելեան, *Արդի հայերենի քերականություն*, Գ գիրք, Պլյուրթ, 1998, էջ 90:

<sup>208</sup> Ս. Աբրահամյան, Բ. Վերդյան, Վ. Քոսյան, *Հայերեն լեզուի դասագիրք*, Ե., 1968, էջ 131-133:

<sup>209</sup> Ս. Ասատրյան, *Ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր*, Բ, Ե., 1973, էջ 157:

Հայտնի է, որ գրական արևելահայերենում այս դերանունների հետ գործածվում են ժխտական բայաձևեր, այսինքն տվյալ դեպքում մենք ունենք կրկնակի ժխտում, ինչը հատուկ է նաև ռուսերենին՝ **никто не пришел, ничего не знаю, ничего не вижу** և այլն, մինչդեռ արևմտահայերենում այդ դերանունների հետ գործածական են դրական խոնարհման բայաձևերը, որն էլ հատուկ է անգլերենին, գերմաներենին և այլն. օրինակ՝ **ոչինչ ըսավ – ոչինչ չասաց, ոչ որ ըսավ – ոչ որ չասաց**:

Հատկանշական է, որ ժխտական մակբայների դեպքում երկու գրականներում էլ ժխտման լեզվական դրսևորումը նույնն է՝ **բնավ չըսավ – բնավ չի ասել, երբեք չը մոռնար – երբեք չի մոռանում**:

Անգլերենում, օրինակ, **never** մակբայը ժխտական բայ չի պահանջում. այդ իմաստը ներառում է իր մեջ (ինչպես հայերենի երկու գրականներում. օրինակ՝ **I never see him, I never go to the cinema**):

Գերմաներենում ևս, **երբեք**-ի դիմաց առկա **nimmer** (բարբառային), **nie(mals)**, **nirgendwann** (գրական) երեք մակբայները դրական բայ են պահանջում (**Ich habe niemals den Film angesehen.**)

Նույնական են նաև ժխտական խոնարհման հարացույցները երկու գրականներում. տարբերություն են տալիս միայն հարակատար դերբայով կազմված ձևերը, որոնք արևմտահայերենում ունեն առավել լայն գործածություն՝ արևելահայերենի նկատմամբ, և բայական խոնարհման հարացույցի լիիրավ անդամ են: Տարբերությունը միայն ժխտական մասնիկի դիրքային առանձնահատկությունն է. վերջինս կարող է լինել ինչպես նախադաս, այնպես էլ ետադաս՝ բայի նկատմամբ, ինչն էլ հիմնավորումներից մեկն է արևելահայերենում հարակատարով կազմված ձևերի՝ բայական ժամանակային հարացույցից դուրս թողնելուն. այսպես,

**գրել եմ - չեմ գրել**

**գրում եմ – չեմ գրում**

**գրելու եմ – չեմ գրելու, բայց՝**

**կանգնած եմ – կանգնած չեմ** (ինչպես՝ գեղեցիկ է – գեղեցիկ չէ, մարդ է – մարդ չէ և այլն): Արևմտահայերենում հարակատարի ժխտական ձևերը կանոնական են երկու դրսևորումներում էլ՝ **կերած չէ-չէ կերած, քնած չէ-չէ քնած** և այլն՝ ի տարբերություն արևելահայերենի:

Հայերենում, ինչպես հնդեվրոպական բազմաթիվ լեզուներում, բառային մակարդակում ժխտումը իրացվում է նախածանցների միջոցով՝ **անտուն, չխոսկան, դժպատեհ, ապարդյուն**, որոնցից ձևաբանական մակարդակում միայն չ-ն է գործում՝ բայի ժխտական խոնարհման հարացույցում՝ **չգրել, չկարդալ, չսիրել, չտենչալ** և այլն:

Ժխտականի ձևով արևելահայերենում հանդես է գալիս նաև **մի** արգելականը՝ **մի՛ խոսիր, մի՛ կարդա, մի՛ խանգարիր** և այլն, որը արևմտահայերենում կարող է նաև հնչյունափոխվել՝ ի--ը. մ'ըսեր, մ'ըներ և այլն:

<sup>210</sup> Գ. Ա. Բրուսյան, Փիլիսոփայություն և լեզու, Ե., 1972, էջ 6-7:

Ժողովրդական խոսքում կամ բարբառներում հանդիպում է նաև ժրխտականի այսպիսի դրսևորում՝ ... **Չեմ ու չեմ, չեմ ու չեմ, Չեմ, չեմ ու չեմ, Չեմ կըրնա, կըրնա ես խաղա ...**վերջին կըրնան, փաստորեն ժխտական մասնիկի ժխտումն է:

Վերջածանցներից սակավ գործուն է **-ատ** -ը՝ ծագած **հատ** արմատից՝ **պոչատ, կիսատ, քնատ , կոնատ** և այլն:

Հայերենի զարգացման արդի փուլում ածանցացման գործընթացում է **զուրկ** արմատը<sup>211</sup>, որը **ան-** նախածանցի պես բավականին կենսունակ է և կարող է միանալ գոյականական հասկացություններին՝ ժխտելով նախահիմքի իմաստը:

Դեռևս անցյալ դարի 70-ականներին հրատարակված Հայոց լեզվի հանգաբառարանում<sup>212</sup> այդ կազմիչով վկայված են 49 բառեր՝ **օդագուրկ, թագագուրկ, շնորհագուրկ, իրավագուրկ, շեշտագուրկ , արժեքագուրկ , իմաստագուրկ**, իսկ Արևակում առկա է ևս 36 բառ՝ հիմնականում նորակազմություններ և վերոբերյալներից տարբեր՝ **արատագուրկ, իլլագուրկ** (եռաստիճան), **ձայնեղագուրկ, հիմնագուրկ, հուսագուրկ, թաղանթագուրկ, բովանդակագուրկ, գրահագուրկ, չափագուրկ, կենսագուրկ , եթերագուրկ** (Ս1-ը դեռ եթերագուրկ է), այլն, որոնց շարքը շարունակաբար համալրվում է՝ **ծովագուրկ, ծառագուրկ, ծնողագուրկ** և այլն:

Հայերենում այդպիսի իմաստով, թեև սակավաթիվ բառերում, հանդիպում են **-անկ** վեջնաբաղադրիչով բառեր՝ **ոստայնանկ, տնանկ, սնանկ, դրանկ և պաշտոնանկ** <sup>213</sup> (վերջինս, ինչպես նաև **սնանկը** ունեն նկատելի արգասավորություն) բառերը:

Տրամաբանության և քերականության մեջ ժխտումը ոչ միշտ է միարժեքորեն համընկնում: **Բացակա է և ներկա չէ** ձևերը տրամաբանության մեջ նույնական հասկացություններ են, մինչդեռ քերականության մեջ **ներկա չէ** ձևը ժխտական է:

**Արամը մտահոգված էր, որ հաջող չի հանձնել քննությունը** նախադասությունն ունի իմաստային երեք մեկնաբանություն՝ 1. որ չի հանձնել քննությունը՝ առհասարակ, 2. որ ցածր նիշ է ստացել և 3. իր հնարավորություններին և պատրաստվածությանը համապատասխան գնահատականը չի ստացել: Այսինքն՝ ժխտումն այստեղ միարժեք չէ:

Ժխտման հետ կապված՝ ուսումնասիրության առանձին նյութ են **Լինում է, չի լինում, ասած- չասած մի բան է, եղած չեղածը մի հաշիվ է, ունեցած – չունեցածը այս է, չլնեմ-չիմանամ** և նման այլ ժողովրդական ասությունները, որոնք կարծես որևէ հաստատականի ժխտում չեն. սրանց այստեղ չենք անդրադառնում:

<sup>211</sup> Ըստ ակադ. Գ.Ջահուկյանի՝ այն արմատական ածական է, որը հայկազյան բառարանում մեկնաբանվում է որպես գրիեալ, անմասն, անբաժին, սին՝ Ջարկ և ունայն ի ճշմարիտ գեղեցկութեացն- էջ 751:

<sup>212</sup> *Հայոց լեզվի հանգաբառարան*, Ե., 1976, էջ 240-241:

<sup>213</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 237:

Սույն ուսումնասիրությունը նպաստում է.

1. Մեքենական թարգմանության մեջ լեզվի ձևային նկարագրմանը, որտեղ կարևորվում է բառերի դիրքը՝ շարադասությունը նախադասության մեջ: Եթե արևմտահայերենում ժխտական դերանունների շրջապատում բացառվում են բայի ժխտական խոնարհման ձևերը, ապա արևելահայերենում, ըստ մեր հետազոտության արդյունքների, այդ ձևերը կարող են և լինել, և չլինել:

2. Կրկնակի ժխտման՝ ընդունված տեսակետի բացառմանը. արևելահայերենում, ինչպես և արևմտահայերենում, չկա այդպիսի ժխտում (այն հանդիպում է որոշակի դերանունների ժխտականների զուգադրությամբ միայն):

3. Հայերենի զարգացման արդի փուլում ածանցացման գործընթացում գտնվող լեզվական միավորների բացահայտմանը. **զուրկ** արմատը՝ համալրելով հայերենի ածանցակերպների ցանկը, մեծ արգասավորությամբ նորանոր բաղադրյալ բառեր է կազմում:

Robert Tokhmakhyan, Susanna Tiuyan - Category of Negation in Western and Eastern Armenian.—The negative pronouns in two literary languages represent a separate semantic group and not always they form oppositions with attributives. That category has various expressions on different levels of language. Together with negative prefixes negative suffixes also have certain activeness. The words **զուրկ** [zurk] “not having” and **զերծ** [zerts] “without” tend to be used as affixes together with them. Grammatical and logical negations have specificities of expression.

Роберт Тохмахан, Сусанна Тиоян - Категория отрицания в западно- и восточноармянском языках.—Функционирование отрицательных местоимений в двух литературных языках отличается: в западноармянском эти местоимения не имеют двойного отрицания, что свойственно восточноармянскому. Во всех остальных случаях выражения отрицания одинаковы.

Отрицательные местоимения составляют отдельную семантическую группу, они не всегда образуют контрастные пары с определенными местоимениями. На нынешнем этапе развития языка значительную активность выявляют также негативные постфиксы: список суффиксидов дополняют слова *զուրկ* и *զերծ*. У грамматического и логического отрицания есть специфики выражения.

**ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԻ ՀՈՒՆՎՄԱՆ ՅՈՒՐԱՏԱՏՎԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐԱԲԱՐ ԵՎ ՀԻՆ ՀՈՒՆԱՐԵՆ ԲՆԱԳՐԵՐՈՒՄ**

Հին հայերենը և հին հունարենը մտնում են հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ և որպես թեքական լեզուներ՝ պահպանել են հնդեվրոպական հիմնալեզվի ձևաբանական համակարգին բնորոշ քերականական ընդհանուր դրսևորումները: Երկու ցեղակից լեզուներին բնորոշ են հոլովի և թվի քերականական կարգերը: Ձևաբանական այս հատկանիշներից բացի, հին հունարենն ունի մի առանձնահատկություն ևս. ի տարբերություն գրաբարի՝ քերականորեն տարբերակվում է նաև հնդեվրոպական նախամայր լեզվից ժառանգած անվան սեռի քերականական կարգը, քանի որ անուն խոսքի մասերը սեռը մատնանշող համապատասխան նշույթներ ունեն: Մինչդեռ գրաբարում և՛ հասարակ, և՛ հատուկ անունները, իբրև ինքնակա լեզվական կամ բառաբանային միավորներ, սեռային տարբերակում չունեն:

Հոդվածում զուգադրահամեմատական քննության են ենթարկվել Նոր Կտակարանի անձնանունների հոլովման յուրահատկությունները գրաբարում և հին հունարենում: Փորձել ենք զուգադրահամեմատական քննությամբ պարզել Նոր Կտակարանի անձնանունների հոլովման ընդհանուր օրինաչափությունները երկու լեզուներում, վերհանել դրանց թեքման առանձնահատկությունների լեզվական և արտալեզվական պատճառները: Անձնանունների ցանկերը քաղել ենք Հայաստանի աստվածաշնչյան ընկերության՝ 1997 թ. հրատարակած «Աստուածաշունչ մատենան Հին և Նոր Կտակարանաց» գրաբար և Nestle-Aland Novum Testamentum Graece (1998թ.) հին հունարեն բնագրերից:

Հնդեվրոպական շրջանում թեմատիկ և աթեմատիկ հիմքերի հիմքակազմ ու հերթագայվող ձայնավորները տարբեր բնույթ ունենին: Հնդեվրոպականից հին հայերենին անցնելիս տեղի է ունենում նշյալ հիմքերի վերախմբավորում, ինչպես նաև՝ ուղղականի ձայնավորի անկում, որի հետևանքով սեռական-տրական հոլովների ձայնավորները դառնում են հոլովները տարբերակող նշույթներ: Որպես թեք հոլովների բաղկացուցիչ տարրեր՝ գրաբարի քերականները դրանք անվանում են *հոլովիչներ*<sup>214</sup>:

Հնդեվրոպական հիմնալեզուն ունեցել է ութ հոլով՝ ուղղական, կոչական, հայցական, սեռական, բացառական, տրական, գործիական և ներգոյական: Հին հայերենն ունի վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական: Գրաբարի որոշ քերականներ ավելացնում են ևս չորսը՝ պատմական, պարառական, ներգոյական և կոչական, որոնք ունեն կիրառության առանձին կամ մասնակի դեպքեր:

<sup>214</sup> Տե՛ս Գ. Չախուկյան, *Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը*, Ե., 1959, էջ 77:

Գրաբարում անունները հոլովվում են հոլովիչներով և հոլովակազմիչներով: Հոլովակազմիչներով ձևավորվում են հոլովները: Հոլովիչներով որոշվում են հոլովման տիպերը: Ըստ այսմ՝ գրաբարն ունի 5 պարզ՝ *ա, է, ի, ու, ու* և 2 խառն՝ *ի-ա, ու-ա* հոլովումներ: Ըստ հոլովիչների տեղակայման՝ գրաբարագիտության մեջ ընդունված են տարբեր անվանումներ՝ ձայնավորահանգ և ձայնորդահանգ (Գ. Ջահուկյան), ներքին և արտաքին (Ա. Ղարիբյան), վերջադրական և ներդրական հոլովումներ (Ա. Աբրահամյան), միջմասնիկավոր և հետմասնիկավոր (Հ. Աճառյան): Վերջադրական բնույթի հոլովման դեպքում հոլովիչը դրվում է բառի վերջում, ներդրական հոլովման դեպքում՝ բառի վերջավորությունից առաջ ընկած մասում: Գրաբարում *ա* պարզ վերջադրական հոլովման են ենթարկվում մեզ հետաքրքրող հատուկ անունների մեծ մասը<sup>215</sup>:

Այս հոլովման բնույթի վերաբերյալ հայ քերականագիտության մեջ կան տարբեր կարծիքներ: Գ. Ջահուկյանի պնդմամբ *ա* արտաքին հոլովումն առաջացել է փոխառյալ հատուկ անունների միջոցով: Նա հասնում է այն մտքին, որ մաքուր *ա*-ով հիմքերը վկայված հնդեվրոպական արմատներ չունեն, դրանք փոխառյալ հատուկ անուններ են կամ դրանց համաբանությամբ հոլովվող նորակազմ ձևեր<sup>216</sup>:

Վ. Առաքելյանը փորձում է հերքել այս հոլովման օտար ծագման տեսակետը: Նրա համոզմամբ, *ա* պարզ վերջադրական հոլովումը գալիս է վաղնջահայերենից և կենդանի է հայերենի մի շարք բարբառներում: Այս տեսակետը հիմնավորում է իր մայրենի բարբառային օրինակների վկայակոչմամբ՝ *էլառա փոսը, Հաղըսա փեշերը, Քանաքեռա տակը* և այլն: Նշում է նաև, որ հայերենը մի շարք օտար անունների թեքման համար փոխառել է հունարենի հոլովման որոշ ձևեր (սեռական, հայցական, կոչական), որոնք չեն մերվել հայ ժողովրդի լեզվամտածողությանը և մնացել են գրքային ոճերում՝ իբրև պատճենումներ<sup>217</sup>:

Ըստ ընդունված տեսակետի՝ մ.թ.ա. առաջին դարում Պաղեստինում խոսում էին երեք լեզվով՝ արամերեն, եբրայերեն, հունարեն: Հունարենը հիմնականում օգտագործում էին Երուսաղեմի հոգևորականները: Երուսաղեմի դպիրները վարժ տիրապետում էին հունարենին, որն ուներ բոլոր առավելությունները քրիստոնեության տարածման միջոց դառնալու համար: Նոր Կտակարանը, որի առաքելությունը քրիստոնեության տարածումն էր, գրի է առնվել մ. թ. առաջին դարում: Նրա լեզուն «կոյնե» կոչվող հունարենն է, որը բնութագրվում է բառապաշարի ու շարահյուսական կանոնների պարզությամբ: Դասական հունարենի համեմատ՝ այն կրել է հնչյունական, հատկապես երկբարբառային փոփոխություններ<sup>218</sup>:

<sup>215</sup> Տե՛ս **Ա. Աբրահամյան**, *Գրաբարի ձևերի և բառերի*, Ե., 1976, էջ 18-25:

<sup>216</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 240:

<sup>217</sup> Տե՛ս **Վ. Առաքելյան**, *Գրաբարի քերականություն*, Ե., 2010, էջ 24:

<sup>218</sup> Տե՛ս **Ա. Կալայան**, *Նոր Կտակարանի ընդհանուր ներածություն*, Ե., 1996, էջ 42-49:

Հայոց գրերի գյուտից անմիջապես հետո Աստվածաշունչը թարգմանվել է հայերեն նախ ասորերենից, իսկ հետագայում հայերեն բնագիրը համեմատվել է «յոթանասնից» թարգմանության հետ, կատարվել են անհրաժեշտ ճշգրտումներ ու լրացումներ: Հայ թարգմանիչները, որոնք հունական կրթություն էին ստացել և տիրապետում էին խոսքարվեստի բարձր ոճին, Աստվածաշունչը թարգմանեցին հայերեն և «հրեական ու հունական բնագրերից վերածվեց հայկական բնագրի, որ զարմացրեց աշխարհահռչակ աստվածաշնչագետներին իր թարգմանական արվեստով ու ինքնուրույնությամբ ...»<sup>219</sup>:

Դասական հայերենի հոլովման համակարգը ներկայացնող յուրօրինակ շերտերից են Նոր Կտակարանում գործածված անձնանունները, որոնք ծագումով հիմնականում եբրայական անուններ են: Եբրայական այս անունները, որոնք պատկանում են միջագգային բառաշերտին, Նոր Կտակարանի թարգմանության միջոցով նույնությամբ կամ մասնակի ձևափոխություններով փոխառվել են նախ հույների, այնուհետև հայերի կողմից՝ հարմարվելով հին հունարենի և հին հայերենի ոչ միայն հնչյունական, այլև ձևաբանական օրենքներին: Այսպես, քանի որ հունարենը զանազանում է հոդը՝ որպես բառային անկախություն ունեցող խոսքի մաս, Նոր Կտակարանի եբրայական այն անձնանունները, որոնք չէին թեքվում, հին հունարեն բնագրում իրենց հոլովական իմաստներն արտահայտում էին հոդերի թեքված ձևերով: Իսկ մի շարք եբրայական անուններ էլ փոխառվել են հունարենին բնորոշ վերջավորություններով՝ մերվելով փոխառու լեզվի բառապաշարին:

Գրաբարում *ա* վերջադրական հոլովումը իմաստային հոլովում է, քանի որ այս հոլովիչով թեքվում են հիմնականում հատուկ անունները: Նոր Կտակարանում վկայված անձնանունները հիմնականում ենթարկվում են *ա* և *ի* հոլովումների, որտեղ մի շարք անուններում բառավերջի *է* և *ի* ձայնավորները *ա* հոլովիչից առաջ դառնում են *ե կամ պահպանվում են*, օրինակ՝ *Բարաքիա-Բարաքեայ, Մարիամ-Մարեմայ, Եսայի-Եսայեայ, Չաքարիա-Չաքարիայ, Ղովո-Ղովոսայ, Յակովբ-Յակովբայ, Յուդա-Յուդայ, Յովսէ-Յովսեայ, Յովսէփ-Յովսեփայ, Մահակ-Մահակայ, Աննա-Աննայի, Ահարովն-Ահարովնի, Դանիէլ-Դանիէլի, Երեմիա-Երեմիայի, Եղիսաբեթ-Եղիսաբեթի, Յիսուս-Յիսուսի, Մամուէլ-Մամուէլի, Միմովն-Միմովնի, Սողոմովն-Սողոմովնի* և այլն:

Անձնանունների թեքման ժամանակ որոշ անձնանունների հունաձև - *աս, -էաս, -էոս, -էս, -իս, -ոս* բաղադրիչները *ա* հոլովիչով հոլովվելիս հունարենի նմանողությամբ թեք հոլովաձևերում ընկնում են *Ղուկաս-Ղուկայ, Անդրէաս-Անդրեայ, Արտեմիս-Արտեմեայ, Զեբեդէոս-Զեբեդեայ, Եղիազարոս-Եղիազարայ, Յակովբոս-Յակովբայ, Տիմոթէոս-Տիմոթեայ, Հերովդէս-Հերովդիսայ, Աղեքսանդրոս-Աղեքսանդրի, Կղեոպատրոս-Կղեոպատրայ* և այլն: Հաճախ - *ոս* վերջավորությունը պահպանվում է *ի* հոլովման մի խումբ անձնանունների և ուղիղ, և թեք ձևերում՝ *Մովսէս-Մովսիսի, Պետրոս-Պետրոսի, Պիղա-*

<sup>219</sup> Վ. Առաքելյան, *Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը*, Ե., 1984, էջ 14:

տոս-Պիղատոսի, Պաւղոս-Պաւղոսի, Ստեփանոս-Ստեփանոսի, Փիլիպպոս-Փիլիպպոսի, Քրիստոս-Քրիստոսի և այլն:

Նոր Կտակարանում առանձին խումբ են կազմում ու հոլովման հետևյալ անձնանունները, որոնք քանակային առումով սակավադեպ կիրառություն ունեն՝ *Աբրահամ-Աբրահամու, Յովհաննէս-Յովհաննէու, Յովնան- Յովնանու, Մարիամ-Մարիամու, Յակովբ-Յակովբու*: Վերջին երկու անունները հոլովվում են նաև ա հոլովիչով՝ *Մարեմայ, Յակովբայ*:

Ի տարբերություն գրաբարի՝ հին հունարենում գոյականն ունի չորս հոլով, երեք թիվ՝ եզակի, հոգնակի, երկակի, երեք հոլովում՝ առաջին, երկրորդ, երրորդ, ինչպես նաև՝ երեք սեռ՝ արական, իգական և չեզոք: Երեք հոլովումների բաժանումը պայմանավորված է բառերի եզակի թվի սեռական հոլովածով: Ըստ այդմ՝ առաջին հոլովման են պատկանում հիմնականում իգական սեռի գոյականները, որոնք եզակի ուղղականում ունեն -α, -η, իսկ եզակի սեռականում՝ -ας, -ης վերջավորությունները:

Անձնանունների թեքման պարագայում հոլովման ընդհանուր պատկերը փոխվում է, որը պայմանավորված է Նոր Կտակարանի հունարեն բնագրում վկայված եբրայերեն անձնանունների հնչյունակազմի առանձնահատկություններով և եբրայերենի ձևաբանական յուրահատկություններով: Նշենք, որ եբրայերենում գոյականը բնութագրվում է սեռի և թվի քերականական կարգերով: Այն հոլովի քերականական կարգ չունի: Իգական սեռի հասարակ անունները սեռը տարբերակող նշույթներ ունեն, որոնք հիմնականում դրբսևորվում են -ա, -իթ վերջավորություններով, օրինակ՝ *տալմիդ-տալմիդա* (աշակերտ-աշակերտուհի), *ստուդէնտ-ստուդէնտիթ* (ուսանող-ուսանողուհի), *տալմիդ տօվ-տալմիդա տօվա* (լավ աշակերտ-լավ աշակերտուհի) և այլն: Ի տարբերություն հին հունարենի՝ եբրայերենում *հա* որոշյալ հոդը կցվում է բառին՝ որպես նախածանց: Հին եբրայերենում հոդի կցման ժամանակ կրկնվում էր բառի առաջին բաղաձայնը, ինչպես օրինակ՝ *հաշշուլխան* «սեղանը»: Ինչ վերաբերում է հատուկ անուններին, նշենք, որ դրանք եբրայերենում հոդ չեն ստանում: Կան, սակայն, տեղանունների հոդավորված եզակի նմուշներ, օրինակ՝ Հագալիլ «Գալիլեա»...<sup>220</sup>:

Հին հունարենում բառերը սովորաբար ավարտվում են կամ ձայնավորներով կամ -ν, -ρ, -ς եւ բարդ -ψ, -ξ բաղաձայններով: Մակայն հունարեն ներթափանցած օտար բառերը և Նոր Կտակարանում հանդիպող եբրայերեն ու արամերեն հատուկ անունները այս կանոններին չեն ենթարկվում և չեն թեքվում: Այս երևույթը հատկապես բնորոշ է բաղաձայնով վերջացող անուններին, իսկ բաղաձայններ բառավերջում, ինչպես նշեցինք, հունարենը չի սիրում<sup>221</sup>: Դրանց հոլովը որոշվում է հունարենի հոդերով, որոնք հոլովվում են և ունեն թիվ ու սեռ: Օրինակ *τοῦ Δαυὶδ, τὸν Ἀβραάμ, τὸν Ναθαanaήλ, τοῦ Μελεὰ, τοῦ Μεννὰ, τοῦ Ματταθαΐ, τοῦ Ναοὺ*:

<sup>220</sup> Տե՛ս **Ս. Հակոբյան**, *Արդի եբրայերեն*, Ե., 2003, էջ 58-69:

<sup>221</sup> **Erik G. Lay**, *New Testament Greek*, University Press, Cambridge, 1987թ., էջ 9:



Չայնավորով վերջացող եբրայական անունները, ի տարբերություն բաղաձայնով վերջացողների, ենթարկվում են հունարենի հոլովման օրենքներին, թեև Նոր Կտակարանում հանդիպում ենք -α, -η, -ι, ձայնավորներով վերջացող այնպիսի անունների, որոնք չեն թեքվում՝ *Κανᾶ*, *Ραμᾶ*, *Βηθφάγη*, և այլն:

Սեռական հոլովում տարբեր վերջավորություններ են ստանում -ας-ով և -ης-ով վերջացող անունները, որոնք, որպես կանոն, պատկանում են առաջին հոլովման: Այսպես, -ας վերջավորությամբ մի շարք եբրայական անուններ սեռական հոլովում ունեն ոչ թե -ου, ինչպես օրինակ՝ *Ἱερεμίας-Ἱερεμίου*, *Ἡσαΐας-Ἡσαΐου* այլ ունեն -α վերջավորությունը՝ *Συλας-Συλα*, *Λουκᾶς -Λουκᾶ*, *Ἰούδας-Ἰούδα*, *Σατανᾶς-Σατανᾶ*, *Ἀρθημας-Ἀρθημα*, *Ἄννας-Ἄννα*: Առաջին հոլովման սեռականում -ου են ստանում նաև -ης-ով վերջացող անունները՝ *Ἡρώδης-Ἡρώδου*, *Ἰωάννης-Ἰωάννου* և այլն:

Երկրորդ հոլովման են ենթարկվում արական, իգական և չեզոք սեռի գոյականները, որոնք հիմքում ունեն -ο ձայնավորը՝ ὁ κόσμος (արական), ἡ βίβλος (իգական), τὸ δῶρον (չեզոք): Երկրորդ հոլովման բոլոր գոյականները եզակի սեռականում ունեն -ου վերջավորությունը: Այս հոլովմամբ հոլովվում են նաև ա) հունական ծագում ունեցող՝ *Ἀρχέλαος-Ἀρχελάου*, *Πέτρος-Πέτρου*, *Ἀνδρέας-Ἀνδρέου*, *Φίλιππος-Φιλίππου*, *Ἰούλιος-Ἰουλίου* (լատիներեն) անձնանունները և բ) եբրայական այն անունները, որոնք հունացվել են հունարենի -ος վերջավորությամբ՝ *Μαθθαῖος-Μαθθαίου*, *Ἰάκωβος-Ἰακώβου*, *Ἀλφαιος-Ἀλφαίου*, *Θαδδαῖος-Θαδδαίου*, *Βαρθολομαῖος-Βαρθολομαίου*, *Μάρκος-Μάρκου* և այլն:

Երրորդ հոլովման արական, իգական և չեզոք սեռի գոյականները ուղղականում ունեն տարբեր վերջավորություններ: Եզակի սեռականում հիմնականում ստանում են -ος վերջավորությունը: Նոր Կտակարանի երրորդ հոլովման անձնանունները բաժանվում են՝ ա) թեքվող՝ *Συμεών Συμεώνος*, *Σολομών-Σολομώνος*, *Ἰάσων-Ἰάσονος*, *Ἀπολλών-Ἀπολλύονος*, *Μωϋσῆς-Μωϋσέως* և բ) չթեքվող խմբերի՝ *Δαυὶδ*, *Ἀβραάμ*, *Ἰσαάκ*, *Ἰακώβ*, *Ζάρα*, *Θαμάρ*, *Φάρες*, *Ἐσρώμ*, *Αράμ*, *Σαλμών*, *Ἰεσσαὶ* և այլն:

Այսպիսով, ներկայացնելով Նոր Կտակարանի հին հունարեն և գրաբար բնագրերում վկայված անձնանունների հոլովման տիպերը՝ հանգում ենք հետևյալին.

Ա) Ուսումնասիրվող երկու գրական լեզուներին բնորոշ են հոլովի, թվի քերականական կարգերը: Հին հունարենը հնդեվրոպական նախալեզվից ժառանգել է նաև անվան սեռային տարբերակումը՝ արական, իգական, չեզոք: Իսկ հին հայերենում այն ջնջվել է սեռը մատնանշող վերջավորության անկման հետևանքով<sup>222</sup>: Հին հայերենը պահպանել է հնդեվրոպական գրեթե բոլոր հոլովները: Կոչականն է, որ չունի յուրահատուկ ձև, որի պատճառով Ավետարանի թարգմանիչները հունարեն բնագրի որոշ անձնանունների կոչա-

<sup>222</sup> Տե՛ս **Ա. Մէյե**, *Հայագիտական ուսումնասիրություններ*, Ե., 1978, էջ 231:

կանը տառադարձել են որպես ուղղականաձև կազմություն՝ ...ի ձայն մեծ աղաղակեաց եւ ասէ, **Ղազարէ**, արի եկ արտաքս (Յովհ. ԺԱ, 43), Ասեմ քեզ, **Պետրէ**, չիցէ այսօր հաւու խօսեալ... (Ղուկաս, ԻԲ, 34), Հայեցաւ ի վեր Յիսուս եւ ասէ ցնա, **Ջակքէ**, փութա էջ այտի (Ղուկաս, ԺԹ, 5), Այսքան ժամանակս ընդ ձեզ եմ, եւ ո՞չ ծանեար զիս, **Փիլիպպէ** (Յովհ. ԺԴ, 9):

Լեզվի հոլովական համակարգում կարևոր նշանակություն ունեն նաև հոդերը: Դրանք որոշյալի և անորոշի քերականական կարգն արտահայտող միջոցներ են, որոնք կարող են կցվել բառերին, ինչպես հայերենում և երբայերենում, և կարող են հոլովվել, ինչպես հունարենում: Հնդեվրոպական նախալեզվում հոդ չկար: Իրականում հոդերն առաջացել են ցուցական դերանունների քերականական իմաստների ընդլայնմամբ: Հին հունարենում անձնանունները, որպես կանոն, հոդով հանդես չէին գալիս, սակայն հին հունարենի աստիկյան շրջանում հոդերի գործածության ընդլայնում է նկատվում: Նոր Կտակարանի հունարեն բնագրում հաճախ են հանդիպում հոդ ունեցող անձնանուններ: Այսպես, օրինակ՝ Դոսծաճ ձէ՝ էյննոսսեն տոն Փաթեճ կա՛ ըն Յաթա էկ տիճ Փաթաթ Փաթեճ ձէ՝ էյննոսսեն տոն Էթրոմ Էթրոմ ձէ՝ էյննոսսեն տոն Էթրոմ (Մատթ. Ա, 3):

Նոր Կտակարանի գրաբարյան բնագրում գործածված եբրայական և հունական ծագման բոլոր անձնանունները հոլովվում են հիմնականում **ա** և **ի** հոլովիչներով: Հունարեն բնագրում անձնանունների մեծ մասը սեռական հոլովում ստանում է -օս վերջավորությունը, օրինակ՝ Իրոճոճ-Իրոճոճ, Կարթոճ - Կարթոճ, Սեթրոճ-Սեթրոճ, Մաթթաճոճ-Մաթթաճոճ, Լաճարոճ-Լաճարոճ, Իաճաթոճ - Իաճաթոճ և այլն: Մեծ թիվ են կազմում նաև առաջին հոլովման այն անունները, որոնք սեռականում ստանում են -ա վերջավորությունը՝ Տոլաճ-Տոլաճ, Լոսճաճ - Լոսճաճ, Դոսծաճ-Դոսծաճ, Էթրոմաճ-Էթրոմաճ, Էննոսսաճ-Էննոսսաճ, Տատանաճ-Տատանաճ:

Այս անունները հիմքակազմ տարրերով և վերջավորություններով սեռական հոլովում նույնանում են գրաբարյան ձևերի հետ, որը կարող է բացատրվել փոխառությամբ: Մեր կարծիքով, մաքուր **ա** ունեցող նման հիմքերի համաբանությամբ էլ հոլովվել են հունարենից գրաբար թարգմանված աստվածաշնչյան անձնանունների մեծ մասը՝ **Ղուկաս-Ղուկայ**, **Յուդա-Յուդայ** և այլն:

Հունարենում սակավաթիվ են -օն վերջավորությամբ երրորդ հոլովման անունները՝ Տոմեօն-Տոմեօն, Տոլոմեօն-Տոլոմեօն, իսկ գրաբարում առավել քիչ են **ու** հոլովման անձնանունները՝ Մարիամ-Մարիամ, Աբրահամ-Աբրահամ:

Բ) Սեռականում -օս վերջավորություն են ստանում -աճ վերջավորությամբ այն անձնանունները, որոնց -ա- ին նախորդում են -ի կամ -է ձայնավորները, այսպես կոչված, մաքուր ալֆայի պարագայում՝ Էնթրեաճ-Էնթրեոս, Օճաճ-Օճաճ: Իսկ եթե -աճ վերջավորությանը բաղաձայն է նախորդում, ապա թեք ձևերում անձնանունները ստանում են -ա վերջավորությունը՝ Տոլաճ-Տոլաճ, Լոսճաճ-Լոսճաճ, Խոսճաճ-Խոսճաճ: Նշենք, որ -աճ, -իճ վերջավորության -ճ-ն հու-

նարենի արական սեռի ցուցիչն է, իսկ եբրայերենում այս անունները վերջա-  
նում են ձայնավորով, օրինակ՝ եբր. Երեմյահու> հուն.՝ Ἰερεμίας, եբր. Եհուդա  
> հուն.՝ Ἰούδας, եբր. Հաննահ>հուն.՝ Ἀννᾶς:

Նոր Կտակարանի գրաբար բնագրում տեղ են գտել ուսումնասիրվող  
անունների մի շարք եբրայական ձևեր՝ Ζαχάριας>Չաբարիա, Ἰερεμίας> Երե-  
միա, Ἠλίας>Եղիա, Ἐζεκίας>Եզեկիա, Ἡσαίας>Եսայի, Ἰούδας> Յուդա և այլն<sup>223</sup>:

Գ) Ինչպես գիտենք, գրաբարի **ա** վերջադրական հոլովումը իմաստային  
հոլովում է, որը, Գ. Ջահուկյանի պնդմամբ, առաջացել է օտար փոխառյալ  
անունների ազդեցության և համաբանության հիման վրա: Ուստի սեռական  
հոլովում -α-ով վերջացող եբրայական և հունական անունների համաբանու-  
թյամբ պայմանավորված՝ Նոր Կտակարանի գրաբար թարգմանության մեջ  
ավելի մեծանում է **ա** հոլովիչով հոլովվող անձնանունների հաճախականու-  
թյունը:

Ըստ վիճակագրական մեր տվյալների՝ Նոր Կտակարանի գրաբար  
բնագրում հանդիպում են հոլովական զուգաձևություններ ունեցող հետևյալ  
անունները՝ *Յուդայ-Յուդայի, Դաւթայ-Դաւթի, Փիլիպպեայ-Փիլիպպոսի, Երեմի-  
այ-Երեմիայի, Յասովնայ-Յասովնի, Յովնանայ-Յովնանու, Ղուկայ-Ղուկասու,  
Յակովբու-Յակովբայ, Յովսեփու-Յովսեփայ, Մարեմայ-Մարիամու/Մարեմու:  
Օրինակ՝* Եւ մեք նաւեցաք յետ ատուրցն բաղարջակերաց ի Փիլիպպեայ ...  
(Գործք Առ., Բ,6), Եւ մտեալ յապարանսն Փիլիպպոսի...(Գործք Առ., ԲԱ, 8):  
...Յակովբ ծնաւ զՅովսեփ այրն Մարեմայ (Մատթ. Ա, 16) , ..եկն ի տուն Մա-  
րեմու (Գործք Առ. ԺԲ,12) և այլն:

Նշյալ զուգաձևություններում *ի*-ով ձևերն ավելի կենսունակ են: Օրինակ՝  
*Դաւիթ* անվան *Դաւթայ* սեռականի ձևը հաճախադեպ է Հին Կտակարանում,  
Նոր Կտակարանում այն գրեթե կիրառական չէ: Նշանակում է՝ Նոր Կտակա-  
րանի թարգմանիչները անձնանունների թեքման ժամանակ նախապատվու-  
թյունը տվել են *ի* հոլովմանը: Ակնհայտ է, որ **ա** հոլովիչը բնորոշ է բարձր ու-  
ճին, իսկ **ի** հոլովիչը՝ ժողովրդախոսակցական լեզվին է հատուկ եղել: Այստեղ  
թերևս մեծ դեր է ունեցել Նոր Կտակարանի ժողովրդախոսակցական հունա-  
րենի՝ կոյնեի ազդեցությունը: Կոյնեով է գրի առնվել Սուրբ գիրքը, և դրա ան-  
միջական ժառանգորդն է ժամանակակից հունարենը՝ իր բարբառներով:

Այսպիսով, Նոր Կտակարանի հին հունարեն և գրաբար բնագրերում  
գործածված անձնանունների զուգադրահամեմատական քննությունը բացա-  
հայտում է ձևաբանական նոր որակներ, որոնք պայմանավորված են լեզվա-  
կան և արտալեզվական գործոններով: Եբրայական և հունական ծագում ունե-  
ցող այս անձնանունները հոլովվում են հին հունարենի և հին հայերենի թեք-  
մանը հատուկ օրինաչափություններով՝ որպես այդ լեզուներին մերված  
անուններ:

Եբրայական քաղաքակրթությունը և մշակույթը ստեղծել են անձնանուն-  
ների յուրօրինակ շերտեր մեր երկու ժողովուրդների անվանադրման համա-

<sup>223</sup> Հմմտ. <http://www.behindthename.com/names/usage/biblical-greek>.

կարգերում: Այդ անունները համագործածական են հայերենի և հունարենի զարգացման բոլոր փուլերում, որոնք իրենց կենսունակության շտրիկի բազմաթիվ ազգանունների ծնունդ են տվել թե՛ հունարենում՝ արական և իգական սեռերի տարբերակմամբ՝ Σολομος, (ար.) - Σολομου (իգ.), Ἀνδρεαδης (ար.) Ἀνδρεαδου (իգ.), Πετροπουλος (ար.) - Πετροπουλου (իգ.), թե՛ հայերենում՝ Արարահամյան, Դավթյան, Ղուկասյան, Հովհաննիսյան, Սովսիսյան, Պետրոսյան, Պողոսյան, Սողոմոնյան և այլն:

Alvard Khachatryan, Alvard Barkhudaryan - The Peculiarities of the Declension of anthroponyms in the original Grabar (Old Armenian) and Greek texts of the New Testament. –The anthroponyms of the New Testament being mainly of Hebrew origin, are unique keys, revealing the peculiarities of the morphological system of Grabar and Old Greek. According to our statistical data - in the original Grabar text of the New Testament the anthroponyms normally belong to the declensions *w* and *h* - *Անդրեայ, Ղուկայ, Դավթի, Սովսիսի*. There are a number of proper names in the New Testament Greek with the ending -ου in the genitive. The names of first and second declensions with -ας, -ης, -ος, - Πέτρος, Ἡρώδης get - ου in genitive. Whereas a number of names ending in -ας have in the genitive -α instead of - ου. Λουκάς-Λουκά, Ἰούδας-Ἰούδα. In our opinion, the outer declension *w* of high style, which was typical of Early Armenian, had a wide usage in the classical period of the Armenian language development also owing to the analogy of the mentioned genitival proper names ending in - α.

Алвард Хачатрян, Алвард Бархударян - Специфика склонения антропонимов в древнеармянском и древнегреческом текстах Нового Завета. Новозаветные антропонимы еврейского происхождения являются своеобразным ключом, раскрывающим закономерности морфологических систем древнеармянского и древнегреческого языков. По нашим статистическим данным, антропонимы в древнеармянском тексте Нового Завета в основном принадлежат к склонению *w* и *h* - *Անդրեայ, Ղուկայ, Դավթի, Սովսիսի*. В греческом тексте Нового Завета большое число составляют антропонимы с окончанием -ου в генетиве. Это имена на -ας, -ης, -ος, склоняемые по первому и второму склонению- Πέτρος, Ἡρώδης. Однако имена на - ας в генетиве часто имеют окончание - α, а не -ου, Λουκάς – Λουκά, Ἰούδας-Ἰούδα. Мы приходим к выводу, что в древнеармянском языке присущее высокому стилю склонение *w* в классическом грабаре распространилось по аналогии древнегреческого типа склонения антропонимов. В дальнейшем оно было вытеснено склонением *h*, ставшим универсальным.

**ԱՂԲԵՎ ԱՂԲԱՆՈՑ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ  
ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՅՐԵՆՆՈՒՄ<sup>224</sup>**

Տուն և տնտեսություն իմաստային դաշտն արտացոլող բառերին իմաստաբանորեն առնչակից են *աղբ* և *աղբանոց* բառերը, որոնց բառանվանումները ներկայանում են բազմաթիվ համանիշային զուգաբանություններով:

*Աղբ* բառը «աղտեղություն, կղկղանք» իմաստով վկայված է Աստվածաշնչում և Ագաթանգեղոսի աշխատության մեջ: Հ.Աճառյանը *աղբ*-ը կովկասյան լեզուներից փոխառյալ բառ է համարում՝ համեմատելով լազ. lebi «կեղտ», lebiari, leboni «աղտոտ, կեղտոտ», ulebu «կեղտոտել» բառերի հետ: Եվ քանի որ հայերենը բառակցքում չունի *z*, ըստ օրենքի՝ ավելացրել է նախաձայն *ա*: Նշենք, որ առանց նախաձայնի բառաձևը՝ *լեպ*, պահպանված է Ղարաբաղի բարբառում՝ «դիրտ, մրուր, հիվանդության ժամանակ լեզվի վրա գոյացած կեղտ»<sup>225</sup>, Համշենում՝ ջրի երեսին հավաքված փրփուր<sup>226</sup>, Գանձակում, Բանանցում՝ ցրփեղ՝ խիստ ջրալի ցեխ նշանակությամբ:

Գ.Ջահուկյանը անդրադառնում է Հ.Աճառյանի հայերենի՝ քարթվելական լեզուներից կատարած 47 հնագույն փոխառություններին, և այդ ցուցակում տեղ գտած մի շարք բառերի դեպքում վերապահումներ է անում, որոնց թվում է նաև *աղբ*-ը: Նա հավաստի չի համարում նաև Լիդենի և Պետերսոնի այն տեսակետը, ըստ որի՝ *աղբ*-ը կապում են *աղտ* բառի հետ և բխեցնում են \*el «նեխել, հոտել» արմատից:

Ըստ Ջահուկյանի՝ *աղբ* բառը աղերսներ ունի խեթ. šalpa «կղկղանք» բառի հետ և գալիս է հնդեվրոպական աղբյուրից: Մյուս լեզուներում բառն ունի գերազանցապես «յուղ, ճարպ» իմաստը, որը հայերենում ևս պահպանվել է «հողը աղբով պարարտացնել», իսկ բարբառներում՝ «պարարտություն» իմաստով<sup>227</sup>:

«Հայոց լեզվի բարբառային բառարանում» վկայված են *աղբին* բառանունը՝ աղբով պարարտացված արտ (Կարին, Մուշ), ջրաբբի արտ (Քղի) իմաստներով, ինչպես նաև *աղբուն* (Մեբաստիա, Եվդոկիա, Բալու), *ախպուն* (Մալաթիա, Համշեն) բառաձևերը՝ պարարտացնելու աղբ նշանակությամբ: Վանում սույն բառանունը փոխաբերացմամբ ձեռք է բերել նույնիսկ բարեբախտություն նշանակությունը<sup>228</sup>:

<sup>224</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԿՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ 15-6B101, գիտական թեմայի շրջանակներում:

<sup>225</sup> Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետ ՀԱԲ), հ.1, Ե. 1971, էջ 123-124:

<sup>226</sup> Հ. Աճառյան, *Համշենի բարբառը*, Ե., 1947, էջ 260:

<sup>227</sup> Գ.Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան* (այսուհետ՝ ՀԼՊ:ՆԺ), Ե., 1987, էջ 190, 592:

<sup>228</sup> *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետ ՀԼԲԲ), հ.1, Ե., 2001, էջ 38:

**Աղբ** հասկացության իմաստով հայերենի բարբառների մոտ 500 խոսվածքային միավորներում արձանագրված են բառային հետևյալ դրսևորումները՝ **ախայ, ախփես, ախտ, յէխտ, կէխտ, ժէխ, զիբիլ, կախ, ալիուցկ, գախ, խիջ** և այլն: Բառերի համանիշային այսպիսի առատության մեջ փորձել ենք բառանունները խմբավորել՝ հիմք ընդունելով ծագումնաբանական ընդհանրությունը: Ըստ բառային սկզբնաձևի՝ առանձին խումբ են կազմում **ախայ, օխայ, ուխայ, ախփես** միավորները:

**Ախայ** հասկացության **ախայ** բառանունը ընդգրկման մեծ շառավիղ ունի գործառու է և՛ արևելյան (Ղարաբաղ, Լոռի, Ղազախ-Կիրովաբաղ, Պարսկահայք, Բայազետ և այլն), և՛ արևմտյան խմբակցության բարբառներում (Մեքաստիա, Վան, Խարբերդ, Նիկոմեդիա, Ակն և այլն): Հիշյալ տարածքի որոշ խոսվածքներում այն հանդես է գալիս տարբեր հնչաձևերով՝ 1. **հ՛** շնչել ձայնեղի հավելումով՝ **հ՛ախայ** (Օշական, Բասեն, Կարս), 2. շրթնային **ւմ**-ով՝ **ւմխայ** (Գավառ), 3. առաջնալեզվային **ւմ**-ով՝ **ւմխայ** (Մարտակերտի Հայադի գ.):

Անտիոքի բարբառախմբի խոսվածքներում **ախայ** բառանունը՝ տվյալ բարբառախմբին բնորոշ օրինակափ հնչյունափոխությամբ, դարձել է **օխայ** (Մարաշ, Հաջըն, Զեյթուն), Սվեդիայի Խտրբեկ գյուղի խոսվածքում՝ **ուխայ**, Քեսաբում՝ **ւի**-ի քմայնացմամբ՝ **ւիխայ** հնչատարբերակով:

Փաստենք նաև, որ հայերենի բարբառներում **ախայ** բառանունը բառիմաստային այլ գործառույթ ևս ունի. Հայ բարբառագիտական ատլասի (այսուհետ՝ ՀՖԱ) ծրագրով հավաքված նյութերում **ուխայ, ախայ** հնչաձևերով այն վկայված է իբրև գոմաղբ հասկացության նշանակելի (Սվեդիայի Խտրբեկ, Մասունի Մոտկան գ.-եր):

**Ախայ** բառանվան քերականական յուրօրինակ բառաձևեր են **ախփես, ախփիս** բառանունները՝ **աղբ** նշանակությամբ: Նոր հայկազյան բառգրքում աղբեք, աղբիւք, աղբիս բառահոդվածում կարդում ենք. «Աղբլուտոց, կոյտ աղբոյ, կամ կուտոց յաւելուածոց տանց. տեղի հաւաքման իրաց՝ որք աւել ածելով ի դուրս ձգին»<sup>229</sup>: Հ.ԱՃառյանը բերում է հին մատենագրության մեջ հիշատակված **աղբիք**՝ «աղբ թափելու տեղ» (Մանդակունի), **յաղբիսն**՝ ներգոյական հոլովաձևով (Մրբոյն Եփրեմի «Մեկնութիւն և սկիզբն Յոբայ»), նաև **աղբնք**՝ «աղբանոց» (Աստվածաշունչ) բառաձևերը, որոնք, ըստ նրա, գործածված են անեզաբար, և աղբիւս, աղբիւք, աղբիս, աղբես, աղբիսք ձևերը առաջացել են՝ աղբեք կամ աղբիք բառերի հայցականը (**աղբես, աղբիս**) ուղղական դարձնելով (հմմտ. չորք-չորս)<sup>230</sup>:

Բարբառային հայերենում պահպանվել է հիշատակված **ախփես (ախփիս)** բառանունը, որի գործառույթը բարբառներում ընդլայնվել է: Այսպես՝ **ախփես** բառանունը Վանի միջբարբառախմբի խոսվածքներում (Շատախ՝ **ւմխփես**, Մոկսի Մամոտանցի Ապարանց և Սեղ գ.-եր՝ **ախփէս**, Վանի Խեք գ.՝ **հախփես**) գործառու է **աղբ** իմաստով: Նույնիսկ Շատախի Տղացպար

<sup>229</sup> Նոր բառգիրք Հայկազեան լեզուի (այսուհետ՝ ՆՀԲ), Կ. Ա, Վենետիկ 1836, էջ 36:

<sup>230</sup> ՀԱԲ, Կ.1, էջ 123-124:

գյուղում **աղբանոց** բառի նշանակելի է փաստված **անխփես** արմատից և **-անոց** ածանցից բաղադրված բառաձևը՝ **անխփեսանոց**, Շատախում առկա է **անխփոց** բառանունը՝ որպես աղբանոց: Հիշյալ տարածքի այլ խոսվածքներում **աղբանոց** հասկացության բառանուն է փաստված **փողոց (փուղոց)** բառաձևը: Մեր նախորդ հրապարակումներում անդրադառնալով **փողոց** բառանվանը՝ նկատել ենք, որ սույն բառանունը բարբառային հայերենում ունի բառիմաստային տարբեր դրսևորումներ՝ փողոց, շուկա, աղբանոց, արտաքնոց և այլն<sup>231</sup>: **Փողոց** բառանունը հայերենի՝ հատկապես Վանի, Մուշի, Շատախի, Սասունի, Նոր Բայազետի, Խոյի տարածքի բարբառներում հաճախ կիրառվում է հենց **աղբանոց** իմաստով:

**Ախախ** բառանունը աղբանոց իմաստով գործածվում է Լոռու խոսվածքներում (Շամուտ, Հազվի, Հաղպատ), ինչպես նաև Մառնեուլի շրջ. Խոժոնի գյուղում:

**Աղբանոց** հասկացության վկայված բառանուններ են **աղբ** բառային սկզբնաձևից բաղադրված **ախպրնոց** (Խարբերդի Բազմաբերդ գ.), **ըխպանոց** (Խանլար ք.), **ախբրոց** (Մեբաստիայի Խուռնավուլ գ.), **հախպանոծ** (Կարսի Ծպնի գ.), **ախպրնոծ** (Սվեդիայի Խտրբեկ գ.), **ախպանոծ** (Անտիոքի տարածքի Բեյլանի Սովալլուխ և Աթըխ գ.-եր), **ըխպափա** (Մարտակերտի Հասանդայա, Մարայան Մարովի գ.-եր) բառաձևերը:

**Աղբ** և **հար** արմատների բառարարումից առաջացած բառաձև է **ախպահար** բառանունը՝ որպես **աղբանոց** հասկացության նշանակելի: Ըստ Հ. Աճառյանի՝ այն նոր բառ է՝ 1877 թ հիշատակված «Գիրք վաստակոցում»<sup>232</sup>, որը Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի խոսվածքներում **ըխպրհար** հնչաձևով մեծ տարածում ունի (Ղարաբաղի Կոճողուտ, Հարությունագումեր, Առաջաձոր, Դաշքեսանի Բանանց, Զազլիկ գ.-եր, Գանձակ):

Հայերենի և՛ արևելյան, և՛ արևմտյան խմբակցության բարբառներում տարածական մեծ ընդգրկում ունի **աղբ** հասկացության **զիբիլ** բառանունը: ՀԲԱ-ում այն գրանցված է արևմտյան խմբակցության՝ Անտիոքի (Բեյլանի Սովալլուխ, Աթըխ գ.-եր), Մուշ-Տիգրանակերտի (Տիգրանակերտ, Բիթլիսի Խիզանի Պոռոնենց, Սասունի Հազգո գ.-եր), Վանի միջբարբառախմբի (Վան ք., Վանի Արճեշի շրջ. Բոլորմակ գ., Վանի Այուր գ., Աղբակի Վանք, Հասպատան գ.-եր), Փոքր Ասիայի (Խարբերդ, Մալաթիա, Արաբկիր, Կարին, Զավախք), իսկ արևելյան խմբակցության՝ Խոյ-Մարաղայի (Մարաղա ք., Սալմաստի Փայաջուկ գ., Սասիսի Այնթապ գ.), Արարատյան (Երևանի Նորք, Քանաքեռ, Ջուղա, Պարսկահալք), Ղարաբաղ-Շամախիի (Շամախիի Սաղյան գ., Նուխի ք., Ղարաղաղի Վինան, Մարտակերտի Սեյտուկան գ.-եր), Ագուլիս-Մեղրիի (Ագուլիս, Կարճևան) բարբառախմբերի խոսվածքներում: Բառը վկայված է Ս.Սալիասյանցի բառարանում, որը **զիբիլ**-ը համարում է արաբական փոխառություն

<sup>231</sup> *Ջահուկյանական ընթերցումներ, Միջազգային գիտաժողովի զեկուցումներ*, Ե., 2014, էջ 64-66:

<sup>232</sup> ՀԱԲ, հ.1, էջ 124:

zibl՝ գ. 1. Մանր թափթփուկ, աղբ, աղբիւս: Այս զիբիլը աւելի՛ր, դե՛ն անծիր: 2. փոխ. Անպետք, արժանիքից՝ նշանակությունից գուրկ: Ջիբիլ մարդ<sup>233</sup>: Ջիբիլ բառանունը արձանագրված է նաև Միջին հայերենի բառարանում. զիպիլ-արար. zibl, պրսկ. zebale, գ. աղբ, զիբիլ: Իր զիպիլն օգտե՛ք քալաֆին<sup>234</sup>:

Հիշյալ բարբառների և խոսվածքների մեծ մասում *աղբանոց* հասկացությունը համապատասխանաբար դրսևորված է *զիբիլանոց* բառանվամբ՝ որոշակի հնչատարբերակներով (*զրբլանոց*<sup>235</sup> Ջուղա, *զիբիլոց*<sup>236</sup> Խարբերդի Սվջող գ., *զիբլանոց*<sup>237</sup> Նախիջևանի Տանակերտ, *զիբլանոց*<sup>238</sup> Ագուլիս և այլն):

*Աղբանոց* հասկացությունը որոշ բարբառներում առկա է *զիբիլ* և պարսկերեն *խանա*<sup>239</sup> տուն, արմատներով բաղադրված *զիբիլխանա* բառաձևով (Տիգրանակերտ, Արաբկիր, Մարաղա ք., Շամախիի Մաղյան գ.):

Հարկ է նշել, որ հիշատակված բարբառներում, բացի *զիբիլանոց* և *զիբիլխանա* բառանուններից, կան նաև *աղբանոց* հասկացության բառային այլ դրսևորումներ՝ *փուղոց* (Վան, Փայաջուկ), *ք ուլուոց* (Նախիջևանի Կաղ գ.), *չուփիկ* (Օավկայի շրջ. Ղաբուռ գ.):

*Աղբ* հասկացության իմաստով բարբառային հայերենում գործառույթ ձևերի մեջ առանձին խումբ է կազմում *ժէխ* բառանունը: Ըստ Հ.Աճառյանի՝ հիշյալ բառը դեռևս հին մատենագրության մեջ վկայված է *ժահ* բառաձևով և նշանակում է «աղտեղություն, գարշահոտություն, գարշ, զազիր մի բան», որից և ժահաղիմություն՝ տգեղ տեսք, ժահահոտ՝ վատ հոտ ունեցող: Գիտնականը բառը համարում է պահլավական փոխառություն՝ \*žah ձևից առաջացած: Ի դեպ, Հ.Աճառյանը փաստում է, որ աղտեղություն իմաստով բառը ավանդված չէ. այս բառի բուն նշանակությունը պահլավերենում եղել է «հոսիլ, թորիլ, բղիլիլ, վազել», և հետագայում միայն «աղտեղի բաների հոսման համար էլ առնուելով՝ վատ նշանակություն ստացավ»: Եվ ըստ նրա՝ այս իմաստով գործածված օրինակներ ևս առկա են հայերենում. «Ամենայն *ժահ* աւելորդացն արտաքս հոսի ընդ քիթսն և ընդ աչսն»<sup>235</sup>:

ՄՀԲ-ում վկայված է *ժահ* բառից բաղադրված *ժահաստեսակ* բառանունը, որը ժանգր տված, ժանգահար, ժանգակված նշանակությունն ունի և միայն փոխաբերաբար է գործածվում աղտեղի, ապականված, կեղտոտված իմաստով<sup>236</sup>:

Բարբառային հայերենում բառը հիմնականում հանդես է գալիս *ժէխ* (և հնչյունի երկբարբառային արտասանությամբ), *ժիխ* հնչատարբերակներով: *Աղբ* հասկացության *ժէխ* բառանվան տարածական շառավիղը ընդգրկում է բարբառների արևմտյան խմբակցությունից Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբի Մուշի, Սասունի, Վանի միջբարբառախմբի խոսվածքները (Դիաղին, Բուլանուխ, Արծկե, Արձեշ, Սասուն) և արևելյան խմբակցությունից Խոյ-Մա-

<sup>233</sup> Ս. Մալխացեանց, *Հայերեն բացատրական բառարան* (այսուհետ՝ չԲԲ), Ե., 2010, էջ 23:

<sup>234</sup> Ռ. Ղազարյան, *Հ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան* (այսուհետ՝ ՄՀԲ), հ. Ա, Ե., 1987, էջ 217:

<sup>235</sup> ՉԱԲ, հ. 2, էջ 220-221:

<sup>236</sup> ՄՀԲ, հ. Ա, էջ 270:



բաղայի, Արարատյան բարբառախմբի խոսվածքները (Մակու, Խոյ, Բայազետ, Մուրմալու): *Ժիխ* հնչաձևով բառանունը վկայված է Մասունի բարբառի որոշ խոսվածքներում (Ախալի, Քոփի գ.-եր): Հետաքրքրական է, որ ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերում Մասունի Գոմք գ. փաստված է *ավել* և *ժեխ* արմատների բաղադրությամբ առաջացած *ավլըժեխ* բառաձևը: Ըստ Հ.Աճառյանի՝ Վանում և Բուլանըխում առկա է *ժախ* բառի *ժախին* բառաձևը՝ ավլելուց գոյացած աղբիմաստով, իսկ Սեբաստիայում՝ *ախսիաժախի* բառանունը՝ ավլուք իմաստով<sup>237</sup>, որում, մեր կարծիքով, *ախսի* բառի առնանկությամբ *ժախ* բառին ավելացել է *փ* հնչյունը: ՆՀԲ-ում ևս վկայված է *ժեխ* բառանունը, սակայն տրվում են նախ նրա *ժախ* և *ժահ* բառաձևերը՝ աղտեղություն, զարշահոտություն իմաստով, իսկ ռամկականում՝ նաև *ժախ* և *ժեխ* հնչատարբերակները<sup>238</sup>:

Բարբառային հայերենում *ժեխ* բառանվան բարբառային դաշուն ընդգրկող խոսվածքներում որպես *աղբանոց* հասկացության բառաձև գործառում է հիմնականում *ժեխանոց* բառանունը իր հնչատարբերակներով՝ *ժեխնոց*, *ժեխանոց*, *ժեխնոճ* և այլն: Հարկ է նշել, որ հիշյալ տարածաշրջանի որոշ խոսվածքներում *աղբանոց* հասկացությունը դրսևորված է նաև այլ բառանուններով: Ամենագործածականը *փողոց* բառանունն է՝ *աղբանոց* իմաստով, առկա է նաև *փողան* (Մոսկան), *հ'ախախ* (Բիթլիսի Խիզանի շրջ. Շեն գ.), *չօփլուկ* (Կարսի Քյուրագղար գ.), *քնլլուգ* (Կոտայքի շրջ. Պտղնի գ.), *խրքա, խրքրա* (Մոսկանի Նիչ գ., Փսանք գավ. Սըշկեղ գ.) բառաձևերը:

*Աղբ* հասկացության բառանվանումների մեջ առանձին խումբ են կազմում *ավլուք*, *ավլուցկ* բառանունները, որոնք ծագումնաբանորեն կապ ունեն *ավել* բառի հետ: *Ավլուք* կամ *ավլուցկ*, այսինքն՝ ավելով հավաքված աղբ, երբ գործողությանը վերաիմաստավորմամբ վերագրված է արդյունքը: *Ավելը* բնիկ հայերեն բառ է, և ենթադրվում է հնիս. *obhel* նախաձևը<sup>239</sup>:

Բարբառների արևմտյան խմբակցության Վանի միջբարբառախմբի (Վանի Արճակ, Թիմար, Մոկս), Փոքր Ասիայի (Սեբաստիա, Խարբերդ, Երզնկա), ինչպես նաև Անտիոքի բարբառախմբերի (Սվեդիայի Խտրբեկ գ.) որոշ խոսվածքներում գրանցվել են *աղբ* հասկացության հիշատակված *ավլուք*, *ավլուցկ* բառաձևերը՝ տվյալ բարբառներին համապատասխան հնչաձևերով (Մոկսի Մամոտանց՝ *սնվլուցկ*, Վանի Ավրակ գ.՝ *ավիլուցկ*, Արճակի շրջ. Լիմ գ.՝ *ավիլուծկ*, Սվեդիայի Խտրբեկ՝ *սնվլըծսնկ* (ավլած-հավաքված աղբ իմաստով), Երզնկա, Խարբերդ, Սեբաստիա՝ *ավլուք*): Թեև Հ.Աճառյանը *ավելուք*, *ավելուցք* բառերը համարում է նոր բառեր, այնուամենայնիվ դրանք բարբառներում լայն կիրառություն ունեն:

*Կեղտ*, *աղս*: Բարբառային հայերենում *աղտ*, *կեղտ* բառանունները վերաիմաստավորմամբ հանդես են եկել նաև *աղբ* հասկացության նշանակե-

<sup>237</sup> ՀԱԲ, հ. 1, էջ 221:

<sup>238</sup> ՆՀԲ, հ.1, էջ 825:

<sup>239</sup> ՀԱԲ, հ.1, էջ 356, ՀԼՊ: ՆԺ, էջ 213:

լիներ: Ըստ ՀԱԲ-ի՝ **աղտ**-ը բնիկ հայերեն բառ է<sup>240</sup>: Բառանվան ծագմանն անդրադարձել է նաև Գ.Ջահուկյանը. նա փաստում է, որ ֆիզիկական աշխարհին վերաբերող բնիկ հնդեվրոպական բառերի մեջ լայնորեն արտացոլված են հնագույն ժամանակներից եկած և յուրաքանչյուր լեզվի անկապտելի մասը կազմող բառեր, որոնց մեջ առանձնացնում է նաև ցեխի և տիղմի նշանակումները՝ **աղտ**, գայռ, գոռ, մաւր, միծ, տիղմ<sup>241</sup>:

**Կեղտ**-ը «աղտ, կեղտ, անմաքրություն» իմաստով վկայված է հին մատենագրության մեջ: Բառը Հ.Աճառյանը չի ստուգաբանում, ծագումնաբանական որոշ վարկածներ է ներկայացնում, որոնցում հիմնականում բառը կապում են **աղտ** կամ **եղտ** ձևերի հետ<sup>242</sup>: Հարկ ենք համարում ներկայացնել այս բառի շուրջ արված Գ.Ջահուկյանի դիտարկումները: Գիտնականը Պոկոռնու բառարանում տեղ չգտած հնդեվրոպական արմատական ձևերը, ինչպեսև Պոկոռնու և Հ.Աճառյանի բառարաններում չստուգաբանված հնդեվրոպական ծագման հայերեն բառերը տալիս է + նշանով, և այդ ցանկում փաստված է \***geld + կեղտ** բառանունը<sup>243</sup>: Մեկ այլ առիթով Գ.Ջահուկյանը գրում է. «Միննույն իմաստները բարբառային տարբեր տարածքներում տարբեր բառերով արտահայտելու դեպքեր իրոք եղել են, և դրանք ժամանակակիցների կողմից նկատվել են: Եվ հաշվի առնելով մի կողմից՝ 5-րդ դ. դասական հեղինակների բառագործածությունը և մյուս կողմից՝ արդի բարբառային տարբերությունները, մի շարք դեպքերում դժվար չէ որոշել բառային համանիշների բարբառա-տարածական բնույթը»<sup>244</sup>: Եվ ըստ նրա՝ այդպիսի տարածքային տարբերակներ են **աղտ-կեղտ**, խածանեմ-կծանեմ, պաղ-սառը գույգերը:

**Կեխտ**-ը հիշյալ իմաստով գործածվել է բարբառային տարբեր միավորներում (Վանի Հայոց ձոր, Կոգովիտ գավ. Արծափ, Ալաշկերտի Յեխնթափա, Մասունի Սեմալ (**գեղդ**), Եդեսիայի Գարմունջ (**գեղդ**), Շամշադինի Չինչին, Իջևանի Գետահովիտ, Աչաջուր, Եղեգնաձորի Խաչիկ գ.-եր (**կեխտ**)):

Հարկ է նշել, որ մեր ձեռքի տակ եղած նյութերում Նախիջևանի Ազա գ.-ում առկա է **ձեխտ** բառանունը, որում, կարծում ենք, նախ տեղի է ունեցել **կեղտ** բառի **կ**-ի քմայնացում, այնուհետև՝ **կ**-ից **ճ**-ի անցում (**կ** > **կ** > **ճ**)՝ **ձեխտ**:

**Աղտ** բառանունը սահմանափակ կիրառություն ունի արևմտյան բարբառախմբի Մալաթիայի, Տրապիզոնի, Համազենի, Կարնտ (**աղդ**), Երզնկայի (**աղդ/ախտ**) և Ախալքալաքի (Կարծախ գ.՝ **աղտ**) խոսվածքներում: ՀԱԲ-ում գավառականների մեջ Հ.Աճառյանը արձանագրել է **աղտ** բառի **ողդ** և **ողդ** հնչաձևերը Զեյթունում և **ողդ**-ը՝ Հաճրնում<sup>245</sup>:

Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի, Ագուլիս-Մեղրի բարբառախմբի խոսվածքներում (Խանլարի Գետաշեն գ., Ղարաբաղի Նոր-Շեն, Գորիսի

<sup>240</sup> ՀԱԲ, հ.1, էջ 135-136:

<sup>241</sup> ՀԼՊ:ՆԺ, էջ 258:

<sup>242</sup> ՀԱԲ, հ. 2, էջ 570-571:

<sup>243</sup> ՀԼՊ: ՆԺ, էջ 109, 124:

<sup>244</sup> ՀԼՊ. ՆԺ, էջ 388:

<sup>245</sup> ՀԱԲ, հ. 1, էջ 136:

Քարահունջ գ.-եր, Կապան, Դաշքեսանի Ջազլիկ գ., Նախիջևանի Փառակա գ., Մեղրու Կարճևան, Կաքավաբերդ գ.-եր) **աղտ** բառանունը փաստված **յէխտ** բարբառային տարբերակով: Նույն հնչաձևով առկա է նաև Պարսկահայքի Մուժումբար գ.-ում: Ըստ Հ.Մուրադյանի՝ բառասկզբի **ա-**ի դիմաց Կաքավաբերդի բարբառն ունի **ա**, միայն **ազբ** և **աղտ** բառերն են, որ շեղվում են այդ օրենքից. **աղտ** բառը **ա-**ի դիմաց ունի երկհնչյուն **յէ՝ յէխտ**<sup>246</sup>: ՀՖԱ նյութերում բառը Գորիսի Շինուհայր գ.-ում փաստված է **յիղտ** հնչաձևով:

Հիշատակված բարբառներում առկա **յէխտ** բառաձևը, կարծում ենք, աղերսներ ունի գրաբարյան **եղսիւր** բառի հետ:

Հ.Աճառյանը «Քննություն Ազուլիսի բարբառի» աշխատությունում արձանագրել է **աղտ** բառի **էխտ** (**աղտոտ>է՛խտոտ**) տարբերակը՝ համեմատելով այն Ղարաբաղի բարբառում առկա **յէխտ** բառանվան հետ: Ըստ նրա՝ **աղտ** բառը հատուկ է արևմտյան բարբառներին, արևելյան բարբառներում այն ջնջվել է՝ փոխարինվելով **կեղտ** բառով, իսկ Ազուլիսի և Ղարաբաղի բարբառները այս դեպքում ներկայացնում են միջին դիրք<sup>247</sup>:

**Ղեք.** ՀՖԱ-ի նյութերում **ղեք** բառանունը՝ **աղք** նշանակությամբ, վկայված է Կարնո՝ հատկապես Ջավախքի որոշ խոսվածքներում (Ախալքալաքի Լոմատուրցի, Օլավերդ, Գանձա, Վաչիան գ.-եր՝ **տեք**, Ալաստան՝ **դ՛եք**, Բեժանո՝ **տիեք** և այլն):

ՄՀՖ-ում վկայված **ղեք** բառանունը համարվում է արևելյան լեզուներից փոխառություն՝ արաբ dig, պրսկ. deḡḡ՝ բժշկական տերմին՝ հալումաշող՝ հյուժող տենդ իմաստով, որն առկա է Ա.Ամասիացու և Մ.Հերացու աշխատություններում: «Թէ գտակն չորացնես և ծեծես և ի վերայ ցանես, յիստկէ զաղտն և զղեքն հանէ, և զպեղծ միսն հալէ (Ա.Ամասիացի)», «Դկին տիրոջն օգտակար է (Մ.Հերացի)»<sup>248</sup>:

Հ.Աճառյանը Հայերեն գաւառական բառարանում ևս փաստել է **ղեք** բառանունը, որը, ըստ նրա, Ախլցխայում ավելից գոյացած աղտոտություն, ժեխ, ավելուկք, ինչպես նաև «պարտակ կամ քօղ սաղմին (տղընկեր) իմաստներով է գործառում<sup>249</sup>: ՀԼԲԲ-ում վկայված է, որ **ղեք** բառանունը Վանում դրսևորված է վատ հոտ իմաստով: Մուշում և Ալաշկերտում բառն առկա է հետևյալ դարձվածում. «Շահն ի մամոց, **ղեքն** ի պապոց», այսինքն՝ ապրել ի վնաս մեկի և գործել հոգուտ մյուսի<sup>250</sup>: Բացի **ղեք** բառաձևից, Հ.Աճառյանը արձանագրել է նաև **ղեգ** հնչատարբերակը, որը ոչ միայն հին մատենագրության մեջ է առկա, այլև բարբառային հայերենում: Խարբերդում, Տարենտեում այն կոպիտ, կոշտ, անքաղաքավար (Դեգ մարդ է, դեգ բնություն ունի), Պոլիսում՝ անհամբոյր, խեթի (Հետս դեգով կը խօսի), Ատափազար՝ անխելք իմաստն ունի, և **ղեգ** բա-

<sup>246</sup> Հ.Մուրադյան, Կաքավաբերդի բարբառը, Ե., 1967, էջ 165:

<sup>247</sup> Հ.Աճառյան, Քննություն Ազուլիսի բարբառի, Ե., 1935, էջ 23, 332:

<sup>248</sup> ՄՀՖ, հ.1, էջ 174, 171:

<sup>249</sup> ՀԳԲ, էջ 274:

<sup>250</sup> ՀԼԲԲ, հ. Ա, Ե., 2001, էջ 329:

ռաձևը բխեցնում է գրք. **դագ** ձևից<sup>251</sup>: Գ.Ջահուկյանը **դագ** բառանունը իրանական փոխառություն է համարում՝ dag, որն ունի նենգություն, դավ, թակարդ իմաստները: Մեր կարծիքով՝ շատ հնարավոր է՝ **դեք** աղբ իմաստով բարբառային բառանունը **դագ** բառից փոխաբերացմամբ առաջացած բառանուն լինի, որն էլ հնարավոր է՝ ծագումնաբանորեն կապ ունենա իրանական փոխառություն համարվող **դաժան** բառի հետ:

**Փառք**: Հայտնի է, որ բարբառային հայերենում երբեմն միևնույն բառը բառիմաստային տարբեր դրսևորումներ է ունենում: Այդպիսի բառանուններից է **փառք** բառը: Ս.Մալխասյանցի բառարանում **փառք** բառահոլվածում հետևյալ բառիմաստներն են փաստված. 1. փտրված կաթ, 2. փշուր, փշրանք, փոքր կտոր, 3. մի փոքր քանակություն, 4. աղբ, դուրս թափելու դեգ, 5. խիլ, աչքն ընկած ճյուղ կամ մի օտար բան, 6. փորոտիք (այս նշում է նաև փորփառ)<sup>252</sup>: Հ.Աճառյանի ՀԳԲ-ում կարդում ենք. «1. Ախց., Ատ., Արբ., Խրբ., Պլ., Տփ. փշրանք, փշուր, 2. Դրբ. աղբ, թափելու կեղտ, չօփ, 3. Դրբ. խիլ, 4. Երև. Փորոտիք (հմմտ. Փորփառ), 5. Պլ. (որ և փցար, Եղ. փնցիկ)»<sup>253</sup>:

Հայերենի բարբառներում խնդրո առարկա **աղբ** հասկացության բառանուն է դիտարկված նաև **փառք**-ը, որն այդ իմաստով գործառում է միայն Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի խոսվածքներում (Գորիսի Տաթև, Խնձորեսկ, Ղարաբաղի Հաղրութ, Չափար): Գորիսի Կորնիձոր և Շինուհայր գ.-երի խոսվածքներում բառանունը ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերում գրանցված է **փուսուր**, **փուսոր** հնչատարբերակներով: Ի դեպ, հիշատակված խոսվածքներում **աղբ** հասկացությունը **փառք** բառից բացի գործառում է նաև **զիբիլ**, **յէխս** բառաձևերը: Նույնիսկ Ղարաղաղի Խանազահ գ. խոսվածքում արձանագված է, որ **զիբիլը** ընդհանրապես աղբն է, իսկ **փառքը**՝ ավելի մանր աղբը, այսինքն՝ փտրի գործառույթը պայմանավորված է նրբիմաստներն արտահայտելու հանգամանքով:

Հ.Աճառյանը **փառք** բառը համարում է կովկասյան կամ իսաղյան փոխառություն և ըստ նրա՝ **փառք**, **փշուր** բառերը ծագումնաբանորեն առնչակցվում են: Նույնիսկ **փառքի** աղբ նշանակությունը նրան ենթադրել է տալիս, որ **փթիր**, **փթուր** բառերն էլ սերում են նույն ձևից<sup>254</sup>: Այս բառին անդրադառնում է Գ.Ջահուկյանը՝ հնարավոր համարելով **ուր**-ով կամ **որ**-ով վերջացող որոշ բառերի ուրարտական ծագումը, որոնց մեջ ներառում է նաև **փթուր** բառը, որը համեմատում է **փշուր**, **փառք** բառերի հետ<sup>255</sup>:

Որպես **աղբանոց** հասկացության բառաձև մեր ձեռքի տակ եղած նյութերում միայն Հաղրութի Քարագլուխ գ.-ում է գրանցված **փառք** բառից ձևավորված **փրսորանոց** բառաձևը: **Փառք** բառանվան բարբառային դաշուն ընդգրկող խոսվածքներում **աղբանոց** հասկացությունը դրսևորված է հիմնա-

<sup>251</sup> Տե՛ս նույնը, էջ 274, ՀԱԲ, հ.1, էջ 610:

<sup>252</sup> Ս.Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, Ե., 2010, հ.4, էջ 529:

<sup>253</sup> ՀԳԲ, էջ 1087:

<sup>254</sup> ՀԱԲ, հ. 4., էջ 508-509:

<sup>255</sup> ՀԼՊ: ՆԺ, էջ 439:

կանում **ըխպըհար** (Գորիսի Տաթև, Սևարանց, Կորնիձոր, Խոտ գ.-եր, Կապանի Վերին և Ներքին Խոտանան, Արծվանիկ գ.-եր և այլն), երբեմն էլ՝ զուգահեռաբար, **զիբիլանոց, զիբլանոց** (Սևարանց, Արծվանիկ) բառաձևերով: Հիշյալ տարածաշրջանի որոշ խոսվածքներում **աղբանոց** իմաստով գործառում է նաև **փող** բառանունը (Ղարադաղի Խանագահ, Ղասմաշեն, Ուրգուրուն գ.-եր): Փաստենք, որ աղբանոցը **փողան** (փող+ան) բառաձևով վկայված է Երզրնկայում և Սասունի Մոտկանում: Ուշագրավ է, որ գրական հայերենում առկա **բակ** բառը, որ նշանակում է տան շուրջը եղած գավիթ, աղբանոց իմաստով է գործառում Հաղորություն (**պրեկ**) և Գորիսի Խնձորեսկ գ. (**պսիկ**): ՀԼԲԲ-ում բառի այլ նշանակությունների հետ տրված են նաև փոս, հոր, աղբափոս (Ղրբ.), տան ավերակները՝ որպես աղբանոց (Մեղրի) իմաստները<sup>256</sup>: Բառիմաստային մեկ այլ դրսևորումով՝ արտաքնոց, առկա է Ագուլխում (**բոկ**)<sup>257</sup>, Ստեփանավանի Կուրթան գ. (**բագ**): Ե՛վ Հ.Աճառյանը, և՛ Գ.Զահուկյանը բառը համարում են հարավկովկասյան (քարթվելական) լեզուներից կատարած հնագույն փոխառություն՝ վրաց. baki «ցանկապատ, փարախ» իմաստով<sup>258</sup>:

**Կախ**: Համշենի բարբառի մի շարք խոսվածքներում (Օրդու, Տրապիզոն, Ունիե, Ճանիկ), ինչպես նաև Խոտրջուրի Միջինթաղ գ.-ի խոսվածքում, ըստ ՀԲԱ նյութերի, **աղբ** հասկացության բառանուն է դիտարկվել **կախ (գախ)**-ը<sup>259</sup>: Բառի ծագումն անհայտ է: Մեր կարծիքով՝ հիշյալ բառանունը հնարավոր է՝ աղերսներ ունենա հնդեվրոպական ծագման (\*gel-d) **կեղս** բառի հետ, որում **ս**-ն հնարավոր է՝ աճական լինի, մյուս կողմից էլ առկա է **աղս** բառանունը, որը Ասլանբեկում **աղ\*** հնչատարբերակով է վկայված Հ.Աճառյանի ՀԱԲ-ում<sup>260</sup>: Բառանունը Համշենի խոսվածքներում գրանցված է **կախ**, իսկ Խոտրջուրում՝ **գախ** հնչատարբերակով: Խոտրջուրում **գախ** բառանունը՝ տան աղբ իմաստով, փաստված է նաև ՀԼԲԲ-ում<sup>261</sup>:

Հիշատակված բարբառների մի մասում **աղբանոց** հասկացությունը դրսևորվում է **գախընձ** (Ունիեի Բալլուղ գ.), **գախընոց** (Օրդու) բառաձևերով, իսկ մի մասում էլ այն վկայված է հոմանիշային այլ զուգաբանությունների հետ (**ախպընձ**):

Համշենի բարբառի խոսվածքներին բնորոշ **աղբ** հասկացության այլ՝ **խիջ** (Տրապիզոն, Սամսոն, Օրդուի Չիբուխլու գ.), **գոնբոն** (Օրդու) բառաձևերը ևս արձանագրված են ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերում (**կոնբոն**՝ Եվդուկիա, **գուբոն**՝ Քրի գավ. Հարդիֆ գ.)<sup>262</sup>: Կարծում ենք՝ **գոնբոն** -ը փոխառություն է թուրքերենից:

<sup>256</sup> ՀԼԲԲ, հ.Ա, Ե. 2001, էջ 152:

<sup>257</sup> Հ.Աճառյան, *Քննություն Ագուլխի բարբառի*, Ե., 1935, էջ 340:

<sup>258</sup> ՀԱԲ, հ. 1. էջ 391, ՀԼՊ: ՆԺ, էջ 591, 595:

<sup>259</sup> Տե՛ս ՀԲԱ նյութեր, տետր հ. 252, 410, 99բ, 336, 94, 52:

<sup>260</sup> ՀԱԲ, հ.1, էջ 136:

<sup>261</sup> ՀԼԲԲ, հ.Ա, էջ 229:

<sup>262</sup> Տե՛ս տետր հ. 52, 187, 99բ, 429:

Գրական հայերենում *խիճ*-ը «քարի մանրուք, քարի մանր կտորտանք» իմաստն ունի: Բառի ծագումն անհայտ է: Սակայն ինչպես փաստեցինք, Համշենում այն աղբ նշանակությունն ունի: Նույնիսկ աղբանոց հասկացությունը *խիջընէժ* բառաձևով է վկայված Օրդուի Չիբուխլու գ. և Մամսունում:

Արձանագրենք, որ ՀԼԲԲ-ում *խիջ* բառանունն ունի հետևյալ բացատրությունը. «*խիջ* Հմշ. Խառնիխտուն, անկարգ, թափթփված. *խիջ* դուն, \*փոքու *խիջ* (արհմրհ.), ուտելու բան: Ալայ փոքու *խիջ* ին: *խիջխախուլ*, Հմշ. Չափից դուրս թափթփված, կեղտոտ (տուն): Դունը *խիջխախուլ* ա»<sup>263</sup>:

Հայերենի որոշ բարբառներում՝ Մեքաստիայում, Համշենում, Հաճընում, Խարբերդում, Խոտրջուրում, Ակնում, աղբ, կեղտ, կղկղանք (շան, կատվի, մարդու) իմաստով առկա է *փին* բառանունը (Դրդլին *փինը* սրբապա: Էրած արտին *փին* մխիթարանք (առած)), իսկ Նոր Ջուղայում փաստված են *փինա*՝ կեղտ, կեղտոտություն, *փինա կապել*՝ կեղտոտվել, Ախլցխայում՝ *ջընփին*, Պոլսում՝ *ջամփին*՝ շան աղբ բառաձևերը<sup>264</sup>: *Փինը* համարվում է բնիկ հայերեն բառ՝ հնիս. pino կամ spino ձևից սերած: Նկատենք, որ *փին* արմատից էլ ունենք առավել գործածական *փրնթի* բառանունը: Ըստ Հ.Աճառյանի՝ *փրնթի* բառը կազմված է *փին+թի* բառերից, իբր «աղբի թի», և ենթադրում է, որ «այսպիսի պատկերավոր բացատրություններ սովորական են ժողովրդական լեզվի մեջ»<sup>265</sup>: Ջահուկյանը անհամոզիչ է համարում *փին+թի* աճառյանական մեկնաբանությունը և կարծում է, որ *թ*-ն թերևս աճական է<sup>266</sup>:

Բարբառային հայերենի որոշ խոսվածքներում *աղբ* հասկացության բառանուններ են դիտարկվել *խող* (Դովլաթաբադի Մեքաբադ գ.), *փոշի* (Չահարմահալի շրջ. Լիվապյան գ., Ապարանի շրջ. Ղալայի, Արագած գ.-եր, Նիկումեդիայի Խասկալ գ.), և թուրքերենից փոխառյալ *թոզ* (Մասունի Իշխանաձոր գ.) և անհայտ ծագման *քիր* (Սևերեկ) բառերը:

Իրանական փոխառություն համարվող *աշխալ* (*աշղալ*) բառանունը՝ որպես *աղբ* հասկացության նշանակելի, գործառում է Պարսկահայքում (Փերիայի Հազարջիրիբ գ., Չահարմահալի շրջ. Սինագան գ., Քյազազի շրջ. Ազնա և Քալլավա գ.-եր): Հիշյալ տարածքում *աղբանոց* հասկացությունը վկայված է *քութ* բառանվամբ:

Բարբառային հայերենում *աղբ* հասկացությունը դրսևորված է *խըրջ* (Մասունի Խաբլոզգի շրջ. Կուսկետ գ.), *խըռչուխուռ* (Մասունի Մոտկանի Մըրցանք գ) բառաձևերով, որոնք, կարծում ենք, քրդերենից փոխառյալ բառեր են:

Այսպիսով՝ *աղբ* և *աղբանոց* հասկացությունների բառանունների քննությունը մեկ անգամ ևս հաստատում է, որ բարբառային հայերենում պահպանվել են հինհայերենյան բառապաշարի յուրօրինակ բառաշերտեր, որոնք երբեմն լրացվում են փոխաբերացմամբ նոր իմաստներ ձեռք բերած բառերով,

<sup>263</sup> ՀԼԲԲ, հ. Բ, էջ 327:

<sup>264</sup> ՀԼԲԲ, հ. Զ, Ե., 2010, էջ 382, ՀԱԲ, հ. 4, Ե., 1979, էջ 504-505:

<sup>265</sup> ՀԱԲ, հ. 4, Ե., 1979, էջ 507:

<sup>266</sup> ՀԼՊ:ՆԺ, էջ 193:

ինչպես նաև փոխառյալ բառերով՝ բառային որոշ նրբինաստներն արտահայտելու անհրաժեշտությունից ելնելով:

Khachatryan Hasmik - Lexical manifestations of the words “garbage” and “dump” in the dialects of Armenian. This article examines the words reflecting the concepts of “garbage” and “dump” in the dialects of Armenian. The most frequently used ones are: zibil, zibilanots, zhekh, zhekhanoṭ, akhp, akhpynots, ykhp̄yhar, akhpes, keght, yekht, ekht, pysor, avluq, deq, gakh, gakhnoṭ, khij, pyek.

Хачатрян Асмик - Словарные модификации понятий «мусор» и «свалка» в диалектах армянского языка. В данной статье исследуются отмеченные в армянских диалектах словоформы понятий «мусор» и «свалка», из которых наиболее широко употребляются словоформы զիբիլ (зибил), զիբիլանոց (зибиланот), ժեխ(жех), ժեխանոց (жеханот), ախպ (ахп), ախպրնոց (ахпанот), ըխպրհար (эхпэр), ախպիւ (ахпес), կեղտ (кехт), յէխտ (йэхт), էխտ (эхт), փրսօր, ավլուք (псор, авлук), դեք (дек), գախ (гах), գախնոց (гахноц), խիջ (хидж), պրէկ (пэк):

**ՄԻՋԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ**

Միջինհայերենյան շրջանում լեզվի բոլոր դրսևորումները (գրական, խոսակցական տարբերակներ, բարբառներ) շարունակել են փոխառություններ կատարել տարածաշրջանում գործառոդ այլ լեզուներից, հատկապես՝ արաբերենից, պարսկերենից, թուրքերենից: Ընդ որում՝ միջին հայերենում օտարամուտ բառերի քանակը հասնում է «պատկառելի չափերի»<sup>267</sup>: Ինչ խոսք, օտար բառերի այդ առատ ներհոսքը պայմանավորված էր պատմական իրողություններով, բազմաթիվ ցեղերի ու ժողովուրդների հետ հարևանությամբ ու շփումներով<sup>268</sup>: Նկատվել է, որ միջինհայերենյան շրջանում կատարված փոխառությունների մեծագույն մասը ժողովրդական բնույթ ունի, և հատկապես արաբերենից, պարսկերենից ու թուրքերենից փոխառյալ բազմաթիվ բառեր պահպանվել են ժամանակակից բարբառներում<sup>269</sup>: Նման փոխառությունների զգալի քանակություն գործառում է նաև Բայազետի բարբառում:

Հայտնի է, որ միջին հայերենի փոխառությունների մեծագույն մասը կազմում են արաբերեն բառերը<sup>270</sup>: Ըստ Ռ.Ղազարյանի՝ հայ-արաբական հարաբերությունների (և՛ բուն Հայաստանում, և՛ նրա սահմաններից դուրս) առաջին շրջանում (7-9-րդ դդ.)<sup>271</sup> արաբերենի ազդեցությունը հայերենի վրա

<sup>267</sup> Տե՛ս ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 197:

<sup>268</sup> Հայաստանը մշտական շփման մեջ էր տարբեր ժողովուրդների հետ. «Արևելքից՝ պարսիկների, արաբների, սելջուկների, հյուսիսից՝ վրացիների, հարավից՝ արաբների, ասորիների, քրդերի: Բուն հայկական հողերում էլ տարբեր ժամանակներում ... հաստատվել էին օտար ժողովուրդներ ու ցեղեր. հույն, ասորի, հրեա, պարսիկ, արաբ, սելջուկ, քուրդ, մոնղոլ, թուրք: ... Լեզուների մերձեցմանը խթանում էր բարձր վերելք ապրող առևտուրը: ... Ինչպես հայերենը, այնպես էլ պարսկերենը, հունարենը, իտալերենը, իսպաներենը, ասորերենը, արաբերենը այս շրջանում ենթարկվել են իրենց շփվող լեզուների անդիմադրելի ազդեցության» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 197-198): Ընդհանրապես, տարբեր ժողովուրդների և մշակույթների հետ շփումները տարբեր բարբառներում արտահայտվում են փոխառությունների զանազանությամբ: Այսպես, Բայազետի և Խոյ-Մարաղայի բարբառներում զգալի քանակություն են կազմում անմիջական փոխառությունները պարսկերենից (Խոյ-Մարաղայի բարբառի վերաբերյալ տե՛ս Մ.Սասադյան, Ուրմիայի /Խոյի/ բարբառը, էջ 147), պարսկերենից փոխառությունները բավական շատ են Ալաշկերտի խոսվածքում (տե՛ս Ք.Մաղաթյան, Ալաշկերտի խոսվածքը, էջ 60), Արարատյան բարբառի «...որոշ ենթաբարբառներում ավելի շատ թուրքերեն բառեր են փոխ առնվել, մյուսներում՝ պարսկերեն» (Մ.Բաղդասարյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, էջ 183), Շատախի խոսվածքում բավականին շատ են քրդերենից և թուրքերենից կատարված փոխառությունները (տե՛ս Մ. Մուրադյան, Շատախի բարբառը, էջ 81) և այլն:

<sup>269</sup> Տե՛ս Ռ.Ղազարյան, Միջին գրական հայերենի բառապաշարը, Ե., 2001, էջ 63-64:

<sup>270</sup> ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 199:

<sup>271</sup> Այս շրջանի հայ-արաբական փոխհարաբերությունների մասին տե՛ս նաև ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 207-208:



խիստ աննշան է եղել, մինչդեռ երկրորդ շրջանում (12-17-րդ դարեր), չնայած Հայաստանում վաղուց վերացել էր արաբական տիրապետությունը, հայերեն են մուտք գործում չափազանց մեծ թվով արաբերեն փոխառյալ բառեր<sup>272</sup>:

Բայազետի և շրջակա Արարատյան, Վանի, Խոյ-Մարաղայի, Մշո, Դիադինի բարբառներում գործածվող միջինհայերենյան արաբական փոխառություններից են<sup>273</sup>՝ ավան (Ա., Խ., Ս., Վ.), սնչեբ (Վ., Խ., Ս.), մմանաթ (բուրբ<sup>274</sup>), սնիբ (Ա., Խ., Վ., Ս.), դսվի (բ.), յեսիր (Ա., Վ., Խ.), թամամ (Ա., Վ., Ս., Խ.), թավլա /թավվա (Ա., Խ., Ս.) լսզմթ (բ.), խըլղ(բ.), խսյսսթ (Ա., Խ.), խարաբ (բ.), խեբ (բ.), հալ (բ.), խալալ (բ.), հսլթթ (Ա., Վ., Դ., Խ.), հ'ախ (Ա., Դ., Վ.), հսրսթթ (Ա., Խ., Դ.), հուքմ (Դ., Վ.), կսլթ (բ.), կսյիլ (Վ., Դ.), կսյիմ (Ս., Խ.), կսստու (Խ., Դ.), կուվաթ (բ.), ջուղաբ (բ.), մմլ (բ.), մսյլս (Ա., Դ., Խ., Վ.), միլսթ (Ա., Խ., Դ., Վ.), մուք (Ա., Վ., Ս., Խ.), նմղ (Ա., Խ., Վ.), նսֆս (բ.), շնո (բ.), շսրթթ (Ա., Խ., Վ., Դ.), ջըվուղ (Ա.), ջուլ (բ.), սըլս (բ.), ումբըր (բ.), ֆըլան (Ա., Դ., Խ., Վ.), ֆել (Ա., Խ., Վ.) և այլն:

Ինչ խոսք, մի շարք դեպքերում արաբական փոխառությունները կարող են լինել նաև միջնորդավորված, հատկապես երբ հնչյունաբանորեն բառն ավելի նման է մեկ այլ լեզվի համապատասխան միավորի<sup>275</sup>: Օրինակ, Բայազետի բարբառի *հավլես* ձևը ավելի մոտ է թուրքերենի (haves), քան արաբերենի (havas) ձևին, *կսստու* (դիտավորյալ) ձևին ավելի մոտ է թուրքերենի (kast), քան արաբերենի (qasd) ձևը, *ջսյեղ* ձևը ավելի մոտ է պարսկերենի (jahel) ձևին, քան արաբերենի (jahil) ձևին, Բ.՝ *մէրդան* ձևը ավելի մոտ է պարսկերենի և թուրքերենի (meydan) ձևին, քան արաբերենի (maydan) ձևին և այլն:

Մինչդեռ այլ դեպքերում, երբ արաբերենի ձևը ավելի մոտ է բարբառայինին, քան պարսկերենին կամ թուրքերենին (օր. Բ. հուքմ – արաբ. hukm, պրսկ. hokm, թուրք. hükm կամ hüküm. Բ. կսյիլ – արաբ. gail, պրսկ. gael, Բ.

<sup>272</sup> Տե՛ս Բ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 91: Առաջին հայացքից հակասական այս իրավիճակը լեզվաբանները բացատրում են այն իրողությամբ, որ արաբերենից փոխառված բառերի մեծագույն մասը արաբների հետ մշտական շփման արդյունք և ժողովրդական բնույթի փոխառություններ են, որոնք, լայն գործառնություն ունենալով ժողովրդախոսակցական լեզվում, սկզբնական շրջանում՝ գրաբարի շարունակվող տիրապետության պայմաններում, հայ մատենագրության մեջ չէին արտահայտվում, սակայն միջին գրական հայերենի ձևավորմամբ՝ միջին հայերենի խոսակցական տարբերակներում կենսունակությունը պահպանած արաբերեն փոխառությունները իրենց արտահայտությունն են գտնում նաև գրավոր խոսքում (տե՛ս ԱՄԳՀՂ, հ. Ա, էջ 208-215, Բ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 92): Այսպիսի մեկնաբանության իրավացիությունն են հավաստում «...այն բազմաթիվ արաբերեն ժողովրդական փոխառությունները, որոնք շարունակում են պահպանվել ժամանակակից տարբեր բարբառներում» (Բ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 92):

<sup>273</sup> Օրինակները բերում ենք Բայազետի բարբառով, իսկ փակագծերում նշում ենք մերձավոր այն բարբառները, որոնցում ևս արձանագրվել են այդ բառերի համապատասխան ձևերը:

<sup>274</sup> Այսուհետ նման դեպքերում՝ բ.:

<sup>275</sup> Դիտարկումներ կատարում և այլազոր օրինակներ բերում ենք ըստ ՄՀԲ-ի:

զուլ – արաբ. jul, թուրք. շւլ, Բ. սըլւմ – արաբ. sala, թուրք. sele, Բ. զիբիլ – արաբ. zibil, պրսկ. zebale, Բ. մաննզիլ – արաբ. manzil, պրսկ. mānzel, թուրք. menzil), վստահաբար կարելի է պնդել, որ գործ ունենք անմիջական փոխառություններին հետ:

Կան դեպքեր էլ, երբ արաբերեն և պարսկերեն կամ թուրքերեն ձևերը նույնական են (ինչպես անդամ, դանֆտամ, կանլամ, կանլը, ման, շարբամ և այլն)<sup>276</sup>, ուստի դժվար է պնդել փոխառությունը անմիջակա՞ն է, թե միջնորդավորված:

Նշենք, որ Բայազետի բարբառի արաբական փոխառություններում նրկատելի են հնչյունական մի շարք իրողություններ, որոնցից էական են և բարբառի հնչյունական համակարգում տեղաշարժեր են առաջ բերել հետևյալները՝ ա) մեծ տարածում ունի սի ձայնավորը, որն առանց սահմանափակումների, բայց ոչ պարտադիր, դրսևորվում է և՛ ա-ի, և՛ սի-ի դիրքերում (դանֆտամ, կանլամ, անդամ), բ) արաբերենի ձայնեղներին բոլոր դիրքերում համապատասխանում են ձայնեղ հպականներ և հպաշփականներ (դանվի, խարաբ, խարաբ, ջըվուդ, կամբու, շարբամ)<sup>277</sup>, գ) արաբերենի կղաֆ բաղաձայնի դիմաց բարբառիս բառակցքում հանդես է գալիս կ՛ կամ կ (կ՛/կանրիբ, կ՛/կուրբան), դ) ֆ հնչյուն կարող է դրսևորվել բոլոր դիրքերում (ֆըլան, դանֆտամ, նանֆան, հանրիֆ)<sup>278</sup>, ե) արաբերենի բառակցքի հ-ի դիմաց որպես կանոն բարբառս ունի հ (հանյվան, հուքմ, հախ, հավէս), իսկ բառամիջի հ-ի դիմաց՝ յ (ջանյէլ, մանյլան)<sup>279</sup>:

Հետաքրքրական է, որ արաբերեն որոշ փոխառյալ բառեր իրենց հայերեն<sup>280</sup> համանիշների հետ կազմում են հարադրական բարդություններ, օրինակ՝ *անյամ-անջարաբ, կըռիվ-դանվի, հանյվան-անասուն, բանյան սանտիչ, ուժու կուվաթ*<sup>281</sup>, անգամ արաբերեն երկու հոմանիշներով կարող է նման հարա-

<sup>276</sup> Այլ լեզուներով օրինակները չենք բերում՝ նույնական լինելու պատճառով:

<sup>277</sup> Հիմնականում այդպես է և շրջակա բոլոր բարբառներում:

<sup>278</sup> Այդպես է և մերձավոր բոլոր բարբառներում:

<sup>279</sup> Դիտարկելով հ-ով սկսվող արաբերեն փոխառությունները Վանի բարբառում՝ Հ.Աճառյանը փաստում է, որ այդպիսի 32 բառերից վեցում հ-ի դիմաց առկա է *խ* (խանան, խարաթ, խալալ, խեթիմ, խինա, խէսաբ), և եզրակացնում, որ Վանի բարբառի հ>խ ձայնափոխությունը իրոք հին է և տեղի է ունեցել արաբների արշավանքից հետո. այդ շրջանին են վերաբերում հ>խ անցում ունեցող բառերը. մինչդեռ դրանից հետո թուրքերի տիրապետության շրջանում են կատարվել այն բոլոր փոխառությունները, որոնք պահում են նախաձայն հ-ն (տե՛ս ՔՎԲ, էջ 66-67): Հ-ի փոխարաբերության մասին ունենալով այլ տեսակետ՝ մենք ևս համարում ենք, որ Բայազետի բարբառում հ-ի դիմաց *խ* ունեցող արաբերեն բառերը (խալալ, խարամ, խինան) ներկայացնում են վաղ շրջանի փոխառություններ, երբ բարբառումս դեռևս հ-ն անսովոր էր, իսկ սյուս փոխառությունները, որոնք ունեն *հ*, վերաբերում են հետագա շրջանին, երբ հ-ի գործածությունը տարածքում արդեն իրողություն էր:

<sup>280</sup> Նկատի ունենք ոչ միայն բնիկ բառերը:

<sup>281</sup> Հետաքրքրական է, որ համանման երևույթ նկատվել է միջինասիական գեղարվեստական գրականության մեջ. «Օտար բառերը բանաստեղծական խոսքի մեջ հաճախ հանդես են

դրություն կազմվել՝ *խարար - ջուղար*, նաև արաբերեն և թուրքերեն բաղադրիչներով՝ *տնվար - մնլ*: Շատ արաբերեն բառեր կազմել են բայեր ու բաղադրություններ, ինչպես՝ անժամտես (անջեր), թըմել (թամամ), ժըղլել (ժուղլ), խարբըզիկ, խարբըբ'եր, խերագ'ըլոխ (խեր), խարամություն (խարամ), հանրիֆցընել (հանրիֆ), կնլբություն (կնլբ), մնյլն - մնյլն, *մոյննթ գ'ալ, յեսիր գ'ըրվել, ննֆնսը կըղրել, գ'ոխուուկ - անլենի* և այլն:

Արաբերեն որոշ փոխառություններ բարբառում ենթարկվել են իմաստափոխության: Այսպես, միջին հայերենում *աճալիպ* բառի համար վկայված են «գարմանալի, ապշեցուցիչ» իմաստները<sup>282</sup>, իսկ բարբառում *սջէր* բառն ունի բացասական առումով «տարօրինակ» իմաստը: Այդտեղից էլ *սժքստես* բառն ունի «խիստ տգեղ» իմաստը: Միջին հայերենում, ապա նաև հայերեն այլ բարբառներում *խալխ* բառն ունի «կողմնակի մարդիկ, ամբոխ, բազմություն, ժողովուրդ» իմաստները, Բայազետի բարբառի *խըլղ* համապատասխան ձևը՝ «օտար» իմաստը: Հետաքրքիր իմաստափոխության է ենթարկվել *միրաթ* «ժառանգություն» բառը: Այս բառի մեջ բարբառումս զարգացել է «տիրոջից զրկված, անտեր մնացած» իմաստը՝ դժգոհության, ինքնաձաղկման երանգով<sup>283</sup>: Այդ հիմքի վրա ձևավորվել է *միրաթ անտեր*՝ համանիշ բաղադրիչներով հարադրությունը, ինչպես՝ *Միրաթ անտերն էս ի'մալ ա ճըմըտտե*: *Միրաթ* բառը «անտեր» իմաստով գործածվում է նաև առանձին, ինչպես՝ *Էս միրաթը դ'ի կըրաղ*: *Միրաթ* մնցուկը ի'նչ հ'ելավ:

Հավելենք, որ արաբների հետ վաղեմի շփումները իրենց արտահայտությունն են ստացել *սրսրի* «անպետք, անիմաստ» և *հ արափացի* «վնասատու, անփույթ» բառերում, որոնցում, ի դեպ, «արաբ» բնիմաստը բացարձակապես չի գիտակցվում:

Ի տարբերություն արաբերենի՝ հայերենը պարսկերենի հետ մշտական շփումներ ունեցել է հնագույն ժամանակներից ի վեր, և այդ շփումը միշտ ուղեկցվել է բազմաթիվ նոր փոխառություններով<sup>284</sup>: Ուսումնասիրողները նշում են, որ միջինհայերենյան շրջանում պարսկերենից փոխառված բառերը

---

գալիս հայերեն ավանդական բառերի կողքին որպես նրանց հոմանիշներ կամ նույնանիշներ» (ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 223):

<sup>282</sup> Տե՛ս ԱՇԲ, էջ 35:

<sup>283</sup> Խոսողը *միրաթ* բառը գործածում է միայն իրեն պատկանող իրի վերաբերյալ՝ արտահայտելու իր դժգոհությունը վիճակից և, դրա հետ կապված, ընդգծելու տվյալ առարկայի անկարևոր լինելը իր համար: Այդ անցումը տեղի է ունեցել *անտեր* բառի՝ բարբառումս տարածված այնպիսի կիրառության ազդեցությամբ, երբ խոսողը իրավիճակից իր դժգոհությունն արտահայտում է սեփական իրի նկատմամբ վերաբերմունքով՝ իբրև թե իր մահով այդ իրը անտեր տեսնելու ակնարկով, ինչպես՝ *Էն անտեր տումկէս մէ բ'է*: Նույն կերպ *անտիրկըրվել* «մի բան հագնել» բայով ներկայացվում է ոչ միայն հագնելու գործողությունը, այլև իրավիճակից կամ մի բանից այնպիսի դժգոհություն, որ հագուստի տերը իբրև թե կցանկանար, որ հագուստը անտեր մնար:

<sup>284</sup> Տե՛ս նաև Ռ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 114:

ևս մեծ մասամբ ժողովրդական փոխառություններ են և հայոց լեզվին անցել են բանավոր կերպով, մանավանդ որ երկու ժողովուրդները գտնվել են մշտական շփման մեջ<sup>285</sup>: Սակայն միջին գրական հայերենում նոր պարսկերենից կատարված փոխառությունները, ինչպես դիտվել է քանակով զիջում են արաբերենից կատարված փոխառություններին<sup>286</sup>: Նույնը չի կարելի ասել Բայազետի բարբառի վերաբերյալ, որտեղ նոր պարսկերենից փոխառյալ բառերը քանակով թերևս չեն զիջում արաբերեն փոխառություններին, մի բան, որ ըստ երևույթին պայմանավորված է Պարսկաստանի հետ Բայազետի սահմանակցությամբ<sup>287</sup>: Այս փոխառությունները վերաբերում են կյանքի ամենատարբեր ոլորտների և ներկայացնում են իմաստային բազում խմբեր՝ բուսանուններ, կենդանիների, սննդի անուններ, մարմնին, տանը, զբաղմունքին ու գործիքներին, հագուստին, հարաբերություններին վերաբերող բառեր և այլն: Բերենք օրինակներ. քարնվուզ, քիշմիշ, բնուվ, շիշնկ, մնյա, քանֆկ, թուռշի, շիրս, շոռվա, շոռ, գանդան, փաշա, լուլմ, քոսս, կութի, մմշալ, ջրվալ, սմրայ, քիսս, փննդս, քունջ, քնթան, թանուզ, որժբնր, գավ, լրկամ, քնլքնթի, թրվանք, խըշտ/իկ/, ժընջիլ, շնյի, պեճ, փեշ, լմլնկան<sup>288</sup>- ծմռական, հնյրան, փեղամ, դիվան, յար, մըհանա, յադ, գուման, շմբաշ, զիյան, դնստան, մնսանլմ, նիգնր, մըխտան, գնյլմ, գնգ, դանգ, թիքս, ճանգ, չնրեք, ջուխտ, սրան, քոջ, թնգն, յա, ջան, համ, չնշկն, լախ, հեշ ևլն: Այս բառերից շատերը լայնորեն տարածված են նաև շրջակա բարբառներում<sup>289</sup>:

Անդրադառնալով հայերենի բարբառներում և, մասնավորապես, Ուրմիայի (Խոյի) բարբառում պարսկերեն փոխառությունների խնդրին՝ Մ.Ասատրյանը գրում է. «Խոյեցիները երկար ժամանակ գտնվելիս են եղել պարսկական տիրապետության տակ և անմիջական շփման մեջ են եղել պարսիկների հետ: Դրանից էլ պետք է ենթադրել, որ բարբառիս նորագույն պարսկական փոխառությունները, գոնե իրենց մի մասով, պետք է որ անմիջական փոխառություն լինեն պարսկերենից»<sup>290</sup>: Լեզվաբանը նշում է նաև, որ գրեթե

<sup>285</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 116, ԱՄԳՀՊ, հ. Ա, էջ 225: Հ.Աճառյանը նշել է, որ ԺԱ-ԺԲ դարերից հետո պարսկերեն բառերը չեն կարող ուղղակի փոխառված լինել պարսկերենից, «...որովհետև այդ ժամանակից արդեն պարսկերենը լռել էր Հայաստանի և Ստորպատակամի սահմաններում» (Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, Ե., 2013, էջ 332):

<sup>286</sup> Տե՛ս Ռ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 114:

<sup>287</sup> Այս առնչությամբ հետաքրքրական է Հ.Աճառյանի մի դիտարկումը: Նա նշում է, որ արդի բարբառներից Վանը և Նոր-Բայազետը գիտեն իրանյանից փոխառված *ջանուկ* բառը, «Բայց այժմ պարսկերենում չկա *ջանուկ* բառի ժառանգը, ուստի նա գտնվել է ԺԱ դարից ավելի առաջ և պարսկերենից անցել է հայոց արևելյան բարբառին, մինչ մյուսները գործ էին ածում երկուտրի» (Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Ե., 2013, էջ 137):

<sup>288</sup> Այս բառի արմատն է՝ *լնլն*, որ նշանակում է *դայակ*:

<sup>289</sup> Տե՛ս Արարատյան, Վանի, Մշո, Խոյ-Մարաղայի, Դիադինի բարբառներին և դրանց առանձին խոսվածքներին նվիրված աշխատություններում բերված բառացանկերը, ինչպես նաև ՀԼԲԲ-ն:

<sup>290</sup> Մ.Ասատրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, էջ 146-147:

անհնար է պարզել, թե բարբառում եղած պարսկերեն բառերից որոնք են անմիջական, իսկ որոնք՝ միջնորդական փոխառություններ, որովհետև դրանց մեծ մասը նույն հնչյունական կազմով գոյություն ունի թուրքերենում<sup>291</sup>: Նույն բանը կարելի է ասել նաև Բայազետի բարբառի պարսկերեն շատ փոխառությունների վերաբերյալ (օր.՝ *մրհանա* - պրսկ. և թուրք. behane, *յաղ* - պրսկ. և թուրք. yad, *սինի* - պրսկ. և թուրք. sini, *բախճա* - պրսկ. և թուրք. bağçe և այլն), սակայն շատ այլ դեպքերում բառի հնչյունական կազմը վկայում է նրա պարսկերենից անմիջական փոխառություն լինելը, ինչպես *ջիզյւր* (պրսկ. jegār, թուրք. ciger), *մէյմուն* (պրսկ. meymūn, թուրք. maymun), *շիշյւկ* (պրսկ. šišāk, թուրք. šisek), *շյւնգյւկ* (պրսկ. čāngal, թուրք. čengel), *թւրքյւզու* (պրսկ. tāra-zu, թուրք. terazi), *շյւնչի* (պրսկ. čarči, թուրք. čerči), *յախնի* (պրսկ. yāxni, թուրք. yahni) և այլն: Իհարկե, քիչ չեն նաև հակառակ դեպքերը, երբ պարսկերեն բառի հնչյունական կազմությունը հուշում է միջնորդավորված փոխառության մասին, ինչպես *յոնջա* (պրսկ. yonje, թուրք. yonca), *ղօստ* (պրսկ. dust, թուրք. dost), *դուշման* (պրսկ. došmān, թուրք. dūšman), *փաշա* (պրսկ. pače, թուրք. pača), *ժընջիլ* (պրսկ. zānjir, թուրք. zenjil) և այլն<sup>292</sup>:

Պարսկերեն փոխառություններում նկատվում են հնչյունական նույն իրողությունները, ինչ արաբերեն փոխառություններում, այսինքն՝ սն ձայնավորի տարածվածություն, բառի բոլոր դիրքերում ձայնեղ հպականների ու հպաշփականների համապատասխանություն, *հ*-ի դիմաց բառասկզբում *հ*, իսկ բառամիջում՝ *յ*, *ջ*-ի գործածականություն և այլն:

Պարսկերեն փոխառություններով բարբառումս ձևավորվել են բազմաթիվ բաղադրություններ՝ աճանցմամբ, և՛ բայակազմությամբ, և՛ բառաբարդմամբ: Օրինակներ՝ դուշմանակ, մէյմունություն, անջիզյւր, անդյւնդ, ջիզրավորել, դօստընալ, յաղընալ, սնգրզվորել, դյւնդօտել, սնգրզամեռ, գյւնդյւնը խըխմել, քիսից էթալ, խըշտել-բ՛ըշտել, փօշման մընալ, ջիզրէծուռ, գյւնյւմ տմրիկ, դյւնդախոցիկ, գէժ-գէժ, յա ... յա, յա թէ չէ, համ ... համ, համ էլ, նան կնկալիկ - մէյմուն, ջան ու ջիզյւր, խալի - խալիչա, շօռ - բ՛օրակ, կօպէկ - շյնի, նըխշուն - նիզյւր, կըխտտո - մըխտան, թուր ու թըվանք և այլն:

Պարսկերեն փոխառյալ որոշ բառեր նույնպես ենթարկվել են իմաստափոխության: Օրինակ՝ *լույւ* «խողովակ» բառը բարբառումս ձեռք է բերել *ուլոք* իմաստը, *թւրքյւզու* «կշեռք» բառը՝ *հավասարակշիռ* իմաստը, *թիքիւ* «մաս, կտոր, պատառ» բառը՝ *ուտելիքի պատառ* իմաստը, *կուրթի* «տուփ, փոքրիկ արկղ» բառը՝ *սնդուկ* իմաստը, *սմրայ* «տուն, շինություն» բառը՝ *խրճիթ, մա-*

<sup>291</sup> Տե՛ս Մ.Ասատրյան, նշվ. աշխ., էջ 147:

<sup>292</sup> Դիադինի բարբառին նվիրված աշխատության հեղինակ Վ.Խաչատրյանը միտք է հայտնել, որ պարսկերենից փոխառյալ մի շարք բառեր «...գրական հայերենում և մյուս բարբառներում հանդես են գալիս հնչյունափոխված, իսկ Դիադինի բարբառում այնպես, ինչպես փոխատու պարսկերեն լեզվում» (Վ.Խաչատրյան, Վարդենիսի բարբառը, էջ 115):

րագ իմաստը, շմբաշ «կեցցե՛, հիանալի՛» բառը՝ *սպարողի ձեռքի մեջ դրվող թղթադրամ* իմաստը և այլն:

Թերևս Պարսկաստանի հյուսիսում բնակվող ցեղերի հետ հաղորդակցման դժվարությունները Բայազետի բարբառում իրենց հետքը թողել են այդ ցեղերի անուններից առաջացած *թաթ*<sup>293</sup>, *թաթ ու գորան*, *գորանի*<sup>294</sup> ածականներով (երեքն էլ նշանակում են *անհասկացող*):

Միջինհայերենյան շրջանում զգալի քանակությամբ փոխառություններ են կատարվել նաև թուրքական լեզուներից: Ինչպես հայտնի է, հայության շփումները թուրքական ցեղերի հետ սկսվում են 11-րդ դարից: Նկատվել է, որ թուրքական լեզուների «բառերն ամբողջությամբ ժողովրդական փոխառություններ են և գործածական են եղել խոսակցական լեզվում, որտեղից ուղղակիորեն ներթափանցել են միջին գրական հայերենի տարբերակների մեջ»<sup>295</sup>: Հասկանալի է, որ միջինհայերենյան աղբյուրներում գրառված և բարբառային խոսքում գործառու թուրքերեն փոխառությունները հայոց լեզու են ներթափանցել 11-16-րդ դարերում: Բայազետի բարբառի՝ այդ ժամանակներից վերաբերող փոխառություններից են՝ յուրդ, գօլ, չօլ, ֆըռթօնա, բիբար, չամ, չօփ, քօք, յախու, յարա, մմյասուլ, յօրդան, թավա, կմփաղ, կմզան, չնդըր, օթաղ, կմրնվաշ, կմլիբ, հ՛ուստա, չնգուչ, բիզ, յախա, գօզլըկ, փեշտըմալ, բօրանի, փախլավա, փարա, աննկ, բնրիշ, գուլում, գօզնլ, մուշտուլուղ, բէյ, կմրն, մօռ, տմղլի, տմյաղ, փնս, բեղ, բօղազ, դօշ, բօյ, յան, իզ, պուճաղ, բօլ, սնդ, չըփլաղ, սուս, գօրն, կըդն, ճիմ, ճոթ, վայվաղա և այլն: Որպես կանոն, այս փոխառությունները գործառու են նաև շրջակա բարբառներում<sup>296</sup>:

Թուրքերեն փոխառություններում ևս գործածական է նաև ձայնավորը (թվում է՝ որոշ չափով ավելի սակավ, քան արաբերեն և պարսկերեն փոխառություններում), առկա է հպականների ու հպաշփականների՝ ըստ ձայնի և աղմուկի համապատասխանություն (բեզ – beg, բիզ – biz, չնդըր – čadir, աննկ – emek, դօշ – döş), սակայն հաճախ էլ՝ անհամապատասխանություն (յուրդ – yurt, կմլիբ – kalip, չնգուչ – čekič, փախլավա – baklava, բէյ – pey, տմղլի – dalga, ճիմ – čim): Թուրքերենի *ğ* հնչյունի դիմաց բառասկզբում ունենք *ğ*, բառամիջում ու բառավերջում՝ *η* (ğapağ - կմփաղ, boğa - բուղա, բօղազ – boğaz), *g*-ի և *k*-ի դիմաց բառասկզբում համապատասխանաբար առկա են *g* (göl – գօլ, güzel – գօզնլ) և *ğ* (karavaş - կմրնվաշ, kazan - կմզան), իսկ մյուս դիրքերում՝ *η* կամ *ju* (kulluk - կուլուղ, yorgan - յօրդան, otak - օթաղ, yaka - յախա, dalga - տմղլի,

<sup>293</sup> Տե՛ս նաև Հ.Աճառյան, Հայերեն գաղաղական բառարան, էջ 341:

<sup>294</sup> Այս ցեղի մասին տե՛ս Վ.Ոսկանյան, Գորան ցեղամիավորումը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XVI, Ե., 1996, էջ 186-192:

<sup>295</sup> Ռ.Ղազարյան, նշվ. աշխ., էջ 131: Տե՛ս նաև՝ Հ.Աճառյան, Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրայ և թուրքերենի փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մեջ, էջ 4:

<sup>296</sup> Տե՛ս Արարատյան, Դիաղիկի, Խոյ-Մարաղայի, Մշո, Վանի բարբառներին նվիրված մենագրական աշխատությունները:

baklava - փախլավա): Թուրքերենի *ö*, *ü* քայնացած հնչյունների դիմաց Բայազետի բարբառում գործառում են պարզ ձայնավորներ (*göl* - գոլ, *dös* - դոզ, *güzel* - գոզյլ, *gözük* - գոզլըկ), բառասկզբում *u*, *o*, *u* ձայնավորներից առաջ տարածված է *j* - ի գործածությունը (յախու, յան, յարա, յորդան, յուրդ): Որոշ դեպքերում բառի հնչյունական կազմությունը վկայում է փոխառության համեմատաբար ավելի վաղ կատարված լինելու մասին: Օրինակ, քանի որ թուրքերեն փոխառությունների բառասկզբում ձայնեղները շնչեղ չեն, ապա *p* չի բառում շնչեղ ձայնեղի դրսևորումը անշուշտ փոխառության հնության մասին է հուշում: Այդպես նաև թուրքերեն փոխառություններում (ինչպես նաև՝ արաբերեն և պարսկերեն) որպես կանոն երկբարբառային *n* կամ *z* չի դրսևորվում, մինչդեռ *նոթ* (ծայր, եզր) բառն ունի *n*:

Թուրքերեն փոխառություններով ևս Բայազետի բարբառում ձևավորվել են շատ նոր բառեր, ինչպես՝ յուռդաբ ըլուկ, իզկուրուս, քոքխան, ջանսմդութուն, բոյեբոյ, յան – յան, բոլ – բոլ, բիզ – բիզ, գոզյլական, փնստո, յանակի, բոդգոլ, փող ու փարա, քոք ու բ'ուս, կյնրն խաբար, յորդան-դոշնկ, քունջ ու պունճաղ, սմղ - սմլամաթ, սուս ու փուս, բեղ ու մուրուս, իզ ու թոզ, գոլել, բնրիշել, չամըռվել, բըզել, չըփլաղնալ, սմղնալ, յախա թախտըփել, յախից բ'ըռնել, անննկ ունէնալ, մուշտուլուղ տալ, դոշ տալ և այլն:

Թուրքերեն մի շարք փոխառություններ բարբառումն ենթարկվել են իմաստափոխության: Այսպես, *չավուշ* «ժանդարմ, ոստիկան» բառը բարբառումն ձեռք է բերել *չար*, *կատաղի* իմաստները, *փնս* «ժանգ» բառը՝ *շուրթերին նստած փառ* իմաստը, *գորն*՝ «համաձայն, համեմատ» բառը՝ *չափ* իմաստը և այլն: Այլ դեպքերում տեղի է ունեցել իմաստի ընդլայնում: Այսպես, *գուլում*՝ «մեծ աղետ» բառը ձեռք է բերել նաև *շատ*, *խիստ* իմաստները, *գոզյլ* բառը՝ նաև *հիանալի* իմաստը, բոլ «լի, առատ» բառը՝ նաև *բավական*, *հերիք* իմաստը և այլն:

Հետաքրքրական է Բայազետի բարբառում գործառող *դինջ էրմննի* «հանգիստ հայ» փոխառությունը, որ իբրև նախատական արտահայտություն գործածվում է ավելորդ հանգստություն ցուցաբերողի նկատմամբ, և որի մեջ «հայ» հասկացությունը բացարձակապես չի գիտակցվում:

Պետք է նկատել, որ բարբառներում արաբապարսկաթուրքական փոխառությունները չեն սահմանափակվում միջինհայերենյան շրջանի գրավոր աղբյուրներում եղածների զուգահեռներով: Անշուշտ, բանավոր խոսքում նման փոխառությունների քանակն ավելի մեծ պիտի լինի, բացի այդ՝ այն համարվել է նաև աշխարհաբարյան շրջանում: Արաբապարսկաթուրքական փոխառություններից բացի՝ միջինհայերենյան շրջանում փոխառություններ են կատարվել նաև հունարենից, լատիներենից, ֆրանսերենից, վրացերենից ու ասորերենից, այլ լեզուներից: Բայազետի բարբառում գործառում են այդ լեզուներից ներթափանցած (հնարավոր է՝ մեկ այլ լեզվի միջոցով) հատու-

կենտ բառեր: Այսպես, հունարենից են փոխառնված *սինոս*, *ֆիննայր* բառերը, ֆրանսերենից՝ *գալօֆ* բառը, վրացերենից՝ *ճնն* բառը, ասորերենից՝ *գուռ*, *խավիծ*, *սնխաստ*, *շուշայի* բառերը: Լեհերենից թուրքերենի միջոցով փոխառնված *վայվաղա* (լեհ. wojewoda, թուրք. voyvoda) «պաշտոնյա, իշխան, հարկահավաք» բառը նաև իմաստափոխվել է՝ ձեռք բերելով *չարակամ*, *վնասատու* իմաստները: Պետք է կարծել, որ միջինհայերենյան շրջանին են վերաբերում նաև քրդերենից կատարված փոխառությունները, ինչպես *բնիլնի* (խատուտիկ), *բրբ* (ոչխարի խուրք), *ղրվածո* (կամակատար. Ալաշկերտի խոսվածքում՝ հովվի օգնական), *խոզի/խոզնի* (երանի), *ճեռոք* (դժվարահաճություն. Մշո բարբառը պահպանել է այս բառի քրդերեն իմաստը՝ *հեքիաթ*), *լննուկ* (տղա. գործառում է *քրոդի* *լննուկ* «թուխ, սարեցու կերպարանքով տղա երեխա» բնութագրող կապակցության մեջ), *ճնվիկ* (բանջար, որի զոխերով թթու են դնում), *չոռ* (բույսերի հիվանդություն, նաև՝ անիծական բառ), *հավար* (օգնության կանչ) և այլն:

#### *Համառոտագրություններ*

ԱՄԳՀՊ – Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972.  
 ՄՀԲ - Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ե., 2009.  
 ՔՎԲ – Հ.Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Ե., 1952.  
 ՀԼԲԲ – Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1-7, Ե., 2001-2012.

#### *Բարբառներ՝*

Ա. – Արարատյան բարբառ  
 Բ. – Բայազետի բարբառ  
 Դ. – Դիադինի բարբառ  
 Խ. – Խոյ-Մարաղայի բարբառ  
 Մ. – Մշո բարբառ  
 Վ. – Վանի բարբառ

Viktor Katvalyan- Borrowings of Middle Armenian Period in the Dialect of Bayazet. – A large number of Arabic-Persian-Turkish borrowings of Middle Armenian period exist in the dialect of Bayazet which have triggered some shifts in the sound system of this dialect. These borrowings were semantically and grammatically assimilated in the dialect acquiring a lexical value of word-building significance.

Виктор Катвалян - Заимствованные слова среднеармянского периода в Баязетском диалекте.- Значительное количество в Баязетском диалекте арабских, персидских и тюркских заимствованных слов среднеармянского периода стало причиной некоторых сдвигов в фонетической системе диалекта. Эти слова семантически и грамматически осваивались и приобрели словообразовательное значение.



ՀԱՅԵՐԵՆԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՀՆԴԵՎՐՈՂԱՍԵՄԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՃ

Միջընտանիքային առնչությունների հարցը առաջ է քաշվել 19-րդ դ. 2-րդ կեսին<sup>297</sup>: Նման համեմատությունների համար այսօր հայտնի է ցեղակցական (ծագումով նույնական) մի քանի հարյուրից ավելի ձևային (պարզ, արմատական և ածանցական), թեև կան աշխատանքներ, որոնցում այդ թիվն անհամեմատ մեծացված է<sup>298</sup>:

Ընդունված է տարբերել արևելանոստրատիկ (ուրալյան, դրավիդյան, ալթայյան), արևմտյան (աֆրասիական, հնդեվրոպական՝ հին պատկերացմամբ, և քարթվելական), որի հիմքում ընկած է, օրինակ, ընդհանուր նոստրատիկ ձայնավորական համակարգը, այն է արևմտյանը վերածել է ձայնդարձի (արլատոսի), իսկ մյուսը՝ պահել է սկզբնական ձայնավորումը (վոկալիզմը): Մենք կառանձնացնեինք, այսպես կոչված, կենտրոնական կամ հարավնոստատիկ (ծագումնային առումով հայտնի հնդեվրոպական և քարթվելական, ինչպես նաև ծագումնային հատկանիշով ոչ լիովին բացահայտված խուռաուրարտական, այլև խաթական՝ «նախախեթական» և այլն)<sup>299</sup>:

Այսպես, օրինակ, հանրաձայնոր ընդհանուր նոստրատիկ «կառուցել, կերտել, շինել, անել» տարբերակային իմաստի համեմատության մեջ կարելի է ընդգրկել հայ. *կերտել*, այլև *քերել* (*քերթել*, *քորել*), եթե ոչ նաև *կարել*, *գրել* (?) և այլն բայ(արմատները)երը, որոնք էլ հետնալեզվային խուլ (եթե ոչ «ձայնածերպային») *k*-ով առնչվում են արևելանոստրատիկին բնորոշ եռակի հետնալեզվայինների, ավանդաբար՝ սովորական (քմային) (\*k), շրթնաքմային (\*k'), հետնաքմային (\*k<sup>h</sup>), բաղաձայնների տեսությանը, ըստ որի, օրինակ, մի կողմից՝ հե. \*k<sup>h</sup>er-«անել, շինել», մյուս կողմից՝ ուրալ. \*kurΛ- / \*korΛ «հյուսել, գործել», ալթայ. \*kurΛ- «սարքել, հարմարեցնել»<sup>300</sup>: Նման առանձնացումը հավասարապես տարածվում է ոչ միայն պայթականների, այլև կոկորդայինների (լարինգալների) և սուլական ձայնորդների վրա. հմմտ. հե. \*k<sup>o</sup>er «աղաց» ~ սեմ. \*gurm- «կալ, կալատեղ», ըստ այսմ ուզար. grm «կալատեղ. դատաստան», ակկադ. mak/grattu «դատաստան. պատժարան», արար. ḡarana «աղա. մանրել»,

<sup>297</sup> Տե՛ս **A. Meïe**, *Введение в сравнительное изучение индоевропейских языков.*, М., 1939: **A. Kury**, *Recherches sur le vocalisme, le consonantisme et la formation des racines en "nostratique"*, Paris, 1943, էջ V-VII:

<sup>298</sup> Նկատենք, որ քանակային մեծությունն այս դեպքում ևս զիջում է որակական ապացուցողականությանը:

<sup>299</sup> *Большой энциклопедический словарь: Языкознание*, М., 1998, էջ 338-339:

<sup>300</sup> Հմմտ. նույն տեղում, էջ 339:

ջարմ- «կալատեղ», (բրբռ.) «հավանգ, սանդ» և այլն<sup>301</sup>: Նույն և հաջորդ էջում Թ. Գամկրելիձեն և Վյաչ. Իվանովը գրում են. «Փոխառությունը սեմականից հնդեվրոպականում, այլ ոչ թե հակառակը, կարելի է հաստատել սեմականում հիմքի պատճառաբանվածությամբ (մոտիվավորվածությամբ), որում անվանականի հետ կա նաև բայական ձև»<sup>302</sup>: Այս փաստարկը խախտու է, քանի որ, օրինակ, բայական նման կազմություն նույն հիմքից ունենք նաև հայերենում՝ ի դեմս (բրբռ. Մուշ, Ալշ., Մկս., Ուրմ. և այլն ) *սոնել* «(հատիկը երկանքով խոշոր) աղալ» (< հե. \*k<sup>o</sup>er-) բայի<sup>303</sup>:

Վերը նշվեց, որ միջընտանիքային ուսումնասիրությունները նոր չեն, գալիս են նախանցյալ դարի կեսերից, և դրանց պատմությունը անցել է ծավալման երեք փուլ՝ 1) լեզուների բնույթի և կառուցվածքի մասին հիմնական նյութի կամ փաստերի հավաքման և միջընտանիքային երկյակ համեմատության (Վ. Շոտ, Մ. Ա. Կաստրին՝ ուրալալթայան, Գ. Մյուլեր, Ա. Կյունի՝ հնդեվրոպասեմական, Ֆ. Բոպ՝ հնդեվրոպաքարթվելական), 2) անցյալ դ. առաջին կես, ավելի մեծ չափով համեմատվող նյութի ընդգրկում, ալթայան լեզուների լավ ուսումնասիրվածություն, հնարավոր վերականգնումներ (Բ. Կոլինդեր՝ ուրալահնդեվրոպական, Օ. Սովաժո, Ա. Մ. Օ. Ռյասյանեն՝ ուրալալթայան լեզուներ, Հ. Պեդերսեն՝ բոլոր հայտնի և հնարավոր լեզուների համեմատություն. 1903 թ.)<sup>304</sup>, 3) անցյալ դ. երկրորդ կեսից առ այսօր (նոստրատիկ նախալեզվի վերականգնման փորձ. Վ. Մ. Իլիչ-Սվիտչ, Ա. Դոլգոպոլսկի, Գ. Ջահուկյան, Ա. Բոմխարդ և ուրիշներ)<sup>305</sup>:

Նախահայրենիքի առաջավորասիական տարածքի վրա լինելու մասին դրույթը (ոչ անկախ Գ. Ղափանցյանից, թեև այդ մասին չի նշվում) կա Գ. Ջահուկյանի «Очеки по истории дописьменного периода армянского языка» գրքում (գրված 1964 թ., տպագրված 1967 թ.)<sup>306</sup>: Գ. Ջահուկյանը ժամանակին, թերևս ոչ այնքան ընդարձակ և վերլուծաբար, այլ վարկածի ձևով, հարցը առաջ է քաշում երեք դրույթի տեսքով: Դրանք բերվում են նաև հետագայում, հեղինակի մյուս «Հայոց լեզվի պատմություն» (Ե., 1987 թ.) գրքում, որոնցից երրորդը հետևյալն է. «Հնդեվրոպացիների ցեղակցական կապերը սեմիտների, այլն քարթվելական, թյուրքական ժողովուրդների հետ, այդ կապերը

<sup>301</sup> **В. М. Иллич-Свитыч В. М., Древнейшие индоевропейско-семитские контакты // "Проблемы индоевропейского языкознания",** М., 1964, էջ 5: **Т. В. Гамкреддзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы,** т. 2, Тбилиси, 1984, էջ 693, 873:

<sup>302</sup> Նույն տեղում, էջ 873-874:

<sup>303</sup> Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ե, Ե., 2008, էջ 387:

<sup>304</sup> Նույն տեղում:

<sup>305</sup> **В. М. Иллич-Свитыч В. М., Древнейшие индоевропейско-семитские контакты // "Проблемы индоевропейского языкознания",** М., 1964: Նույնի *Опыт сравнения ностратических языков,* тт. 1-3, М., 1971-1991:

<sup>306</sup> Հմմտ. **S. Feist, Kultur, Ausbreitung und Herkunft der Indogermanen,** Berlin, 1913: Նույնի՝ *Die Dialekteder indogermanischen Ursprache // "Melanges ... H. Pedersen",* Copenhagen, 1937: Նույնի՝ *Vergleichendes Wörterbuch der gotischen Sprache,* Leiden, 1939: **R. Latham, Elements of comparative phonology,** London, 1892:

ժխտելու դեպքում էլ նրանց միջև նախնական շփումների ու փոփոխությունների ժխտման անհնարինությունը, ենթադրել է տալիս, որ (հետագա մեջբերումը «Очерки...»-ից) «հնդեվրոպացիները մի ժամանակ բնակվել են այն տերիտորիայում, որ սահմանակից է եղել սեմական ցեղերի կողմից բնակեցված տարածությանը»<sup>307</sup>:

Սեկ անգամ ևս դիմենք այս վարկածին, որ առաջ է քաշել Գ. Ջահուկյանը, և դա նախորդի և մյուս երկուսի համար մի տեսակ եզրակացություն է հիշեցնում. «Իբրև ընդհանուր եզրակացություն կարելի է ասել, որ մենք գործ ունենք հնդեվրոպացիների բնակության երկու հնարավոր վայրերի՝ 1) նախնական, երբ նրանք նոր էին բաժանվել նոստրատիկ ընդհանուրությունից կամ, եթե նոստրատիկ վարկածը ժխտվում է, շփման մեջ էին սեմական, քարթվելական և այլ ժողովուրդների հետ, և 2) ավելի ուշ, երբ նրանք գտնվում էին ինտենսիվ տրոհման՝ հնդեվրոպական ժողովուրդների առանձնացման նախօրյակին: Առաջին շրջանի համար հավանական է հնդեվրոպացիների՝ Ասիայում (իմա՝ Առաջավոր Ասիայում - Վ. Հ.) գտնվելու, երկրորդ դեպքում՝ Եվրոպայում գտնվելու վարկածը: Դժվարություն է հարուցում միայն այն հարցը, թե հայերը, իսթերը, արիացիները բաժանվել են արդյոք հենց Ասիայում (իմա՝ Առաջավոր Ասիայում - Վ. Հ.) եղած ժամանակ և Եվրոպայում ընդհանրապես չեն եղել, թե նրանք (հատկապես հայերն ու արիացիները) եղել են Եվրոպայում, ապա վերադարձել Ասիա (իմա՝ Առաջավոր Ասիայում - Վ. Հ.), ընդ որում հայերը՝ հենց իրենց բնակության սկզբնական վայրերը»<sup>308</sup>:

Ջահուկյանի գրքում նշվում է, որ սեմականից հնդեվրոպականին է անցել 24 բառ, որից 12-ը առկա է հայերենում: Դրանք են *կոլ, արտ, ցախ, անդ* «հանդ, դաշտ», *դոն* «(մի տեսակ) հաց, պաքսիմատ՝ չոր հաց», *երկան(ք), գինի* (ըստ իս՝ հմմտ. *այգի* «որթատունկի խաղողի այգի»), *դուռն, նաւ, տաւն, աստղ, այս* «քամի»<sup>309</sup>:

Գամլերեյիձեն և Իվանովը, իրենց հերթին, առանձնացնում են սեմականից և շումերականից փոխառյալ 16 արմատ՝ \*t<sup>[h]</sup>aĒro- «վայրի ցուլ», \*g<sup>[h]</sup>at' - «ուլ, այծ», \*ag<sup>[h]</sup>ono- «գառն(ուկ)», \*q<sup>[h]</sup>e/op<sup>[h]</sup>- «կապիկ», \*b<sup>[h]</sup>ar(s) - «(հացա)հատիկ. ձավար», \*d<sup>[h]</sup>oĦn©- «(հացա)հատիկ. հաց», \*Hand<sup>[h]</sup> - «(ուտելի) բույս», \*k<sup>o</sup>ern- «աղաց. երկան», \*med<sup>[h]</sup> - «մեղր. մեղրահյութ», \*p<sup>[h]</sup>eLeu<sup>[h]</sup>u- «տապար, սակր. կացին», \*sek<sup>[h]</sup>ÉR- «կացին. Սակր», \*k<sup>[h]</sup>lahĒ- «կողպեք. բանալի», \*naĦĒ- «նավ. աման», \*k<sup>[h]</sup>or(e)Á- «գնել. վաճառել», \*t'ap<sup>[h]</sup>-«զոհաբերություն», \*Hast<sup>[h]</sup>er-«աստղ»,

<sup>307</sup> Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն*, Ե., 1987, էջ 75: Գ. Բ. Джаукян, *Очерки по истории дописьменного периода армянского языка*, Ереван, 1967, էջ 38: Իբրև ընթացիկ մեկնաբանություն նշենք, որ 1964 թ, առաջ քաշված գիտական, տվյալ դեպքում՝ ընդհանուր հնդեվրոպաբանական-համեմատաբանական այս առաջավոր գաղափարը գալիս էր, անշուշտ, համալրելու, օրինակ. Իլիչ-Սվիտիչի այդ նույն տարում արդեն լույս տեսած աշխատություններում մշակվող տեսության հետանկարային լինելը:

<sup>308</sup> Նույն տեղում:

<sup>309</sup> Նույն տեղում, էջ 450:

\*sep<sup>[h]</sup>t<sup>[h]</sup>ö «եւթն (յոթ)», որոնցից մի քանիսն արդեն առաձնացրել էին նախորդ ուսումնասիրողները (Մյոլեր, Իլիչ-Սվիտիչ և ուրիշներ): Հեղինակները համեմատության մեջ բերում են հայերենից միայն մեկ տվյալ՝ \*Hand<sup>[h]</sup>- «ուտելի» բոյս» > հայ. (h)անդ «դաշտ. հանդ», որն իմաստի տեսանկյունից ավելի անբասիր չէ, քան հայ. (h)ունդ «(ուտելի) հատիկ. ընդդէմ»:

Մենք նոր վարկած ենք առաջ քաշում՝ ըստ հետևյալ հիմունքների.

1) արդյոք ք չի կարելի մտածել, որ հնդեվրոպականից են անցել նախորդ ուսումնասիրողների կողմից բերված գուգահեռները, որ, ասենք, 24-ն են, և որոնցից 12-ը կա հայերենում, այլև մյուսները (իմա՝ վերը թվարկվածը):

2) հնդեվրոպականից սեմական լեզուներին են անցել թերևս ավելի մեծ թվով բառեր, սակայն ոչ այն չափով, որ ստանում է հախուռն քննության տեսք. դա հիմնավորվում է հայերենի նորագույն տվյալներով, եթե ավելի լայն քննության ենք առնում հնարավոր և համեմատաբար հավանական և ապացուցողական մեծ ուժ ունեցող տվյալները (մեր տվյալներից, օրինակ, մի քանիսը, որ այստեղ բերելու ենք՝ *ար(ծ/տ)*, *բար-իք* // *բեր-ք* և այլն),

3) սահմանվում են հնչյունական օրենքներ, որոնք հիմք են հանդիսանում անցկացնելու միջլեզվաբնուսանիքային առնչությունների ժամանակագրություն:

4) Ի տարբերություն նախկինում ասվածի՝ թերևս անցում հնդեվրոպականից սեմականին, որ կարելի է դարձնել հատուկ քննության առարկա՝ հայերենի և այլ լեզուների համեմատական-տիպաբանական ուսումնասիրության հեռանկարում:

Բերենք մեր տվյալներից հետևյալ 10-ը (մեկ-երկուսը՝ հմմտ. Գ. Ջահուկյան և ուրիշներ):

1. Հայ. (բրբռ.) (h)աստդ «աստղ» < հե. \*Hast<sup>[h]</sup>er- «աստղ», իւթ. Ūaster - «աստղ», սանս. tārah (տույնը), ավեստ. stǝrǝbǝyō (տույնը), հուն. ἀστὴρ, կոռն. sterenn և այլն ~ սեմ. \*‘attar- «աստվածացված աստղ», «Վենեթա», ակկադ. Ištar «Իշտար (աստվածուհի)», փյունիկ. ‘štri «Աստարտա (աստվածուհի)», հիբ. ‘aštōret, արամ. ‘tr և այլն<sup>310</sup>:

2. Հայ. *ար(ծ/տ)* < հե. \*aú’ro- // \*Haú’ro- «(անմշակ) դաշտ. արոտավայր» հմմտ. հինդլ. ájrah «դաշտ», հուն. ἰγρόζ «դաշտ, արոտավայր», լատ. agēr «հող. դաշտ», գոթ. akrs «դաշտ» ~ շում. agar (= a-gár) «մշակովի տարածք. հասկ» հմմտ. նաև հայ. (բրբռ.) (h)արոս «չվարած՝ անմշակ դաշտ»<sup>311</sup>:

3. Հայ. *բար-իք* // *բեր-ք* < հե. \*b<sup>[h]</sup>ar(s)- «(հաց)հատիկ. ձավար» ~ սեմ. \*burr-// \*barr- «դաշտ. ձավար», հիբ. dar «ձավար», արաբ. burr- «հացահատիկ»<sup>312</sup>: Եթե սա ընդունելի է, ապա վերականգնվող ձևի արտացոլումները մի-

<sup>310</sup> Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 685-686, 875:

<sup>311</sup> Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 694: Ըստ Ջահուկյանի՝ *արոս* «խոպան, կորդ հող». «թերևս բնիկ հնդեվրոպական \*trǝuk- [\*s(ter)-] «կոշտ, կարծր, պինդ» արմատից», որն անհավանական է՝ հնչյունական անցումների առումով: Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 85:

<sup>312</sup> Հմմտ. *բար(իք)* («Ես իմ անուշ Հայաստանի արևահամ *բարն* եմ սիրում» (Ե. Չարենց):

այն «հին հնդեվրոպական» բարբառներին հատուկ լինելը դառնում է վերահայելի<sup>313</sup>:

4. Հայ. (բրբռ.) *դոն(հկ)* «վի տեսակ հաց. բոբոն! (?) < հե. \*d<sup>[h]</sup>oHn@- «հացահատիկ. հաց», հինդկ. dhānā «հացաբույսեր», պրսկ. dāna «ցորեն. կորեկ», լիտվ. dúona «հաց», թոխ. B tāno «ցորեն» ~ սեմ. \*duṾn- «կորեկ», ակկադ. duṾna, հիբ. dōhan, արամ. dōhīnā, արաբ. duṾn և այլն<sup>314</sup>:

5. Հայ. *դուռն* < հե. \*d<sup>[h]</sup>er- (\*d<sup>[h]</sup>er-) «բակ. դուռ», հինդկ. dvār «դուռ», dwāwah «դարպաս», ավեստ. (եզ. հայց. հոլ.) dvarīm «դարպասներ», հուն. θύρα «դուռ», լատ. forēs «դռներ» լիտվ. duris (նույնը), հսլավ. dvīri «դուռ», ռուս. дверь (նույնը) ~ շուս. tūr «բակ. փարսխ. դուռ»<sup>315</sup>:

6. Հայ. *ընկեր* (< \*ըն-կար) < հե. \*k<sup>[h]</sup>er(e)Á- «գնել. առևտուր անել» ~ սեմ. \*k-r-j «առևտուր անել», հիբ. kārā (նույնը), kīrā «գնելը. գնում», արաբ. k-r-j «վարձով տալ» և այլն. հմմտ. (բրբռ.) *չար-չի* «(շրջիկ) մանրավաճառ»(?)<sup>316</sup>:

7. Հայ. *(հ)անդ* «դաշտ, արտ» < հե. \*Handh- «ուտելի բույս». հմմտ. հուն. ζηνιον. eçdar «բուսական ուտելիք»~սեմ. \*Ṿinç- (at-) «ցորեն. հացաբույսեր». հմմտ. ուգար. Ṿīt «ցորեն», ակկադ. (բաբ.) uttu «գարու հատ» և այլն<sup>317</sup>:

8. Հայ. *տալ(ն)* «տոն» < հե. \*t'ap<sup>[h]</sup>- զոհաբերում. ծիսական ուտելիք՝ աստվածներին մատուցվող». հմմտ. իտթ. <sup>LU</sup>tappala «պալատական խնջույքի խոհանոցն ապահովող», լատ. dsaps «խնջույքի ծիսական ուտեստ», թոխ. tāpal «ուտելի(ք), tāp «ուտել» և այլն ~ սեմ. \*-d̥ba- «զոհաբերել», «զոհ», ակկադ. zību «զոհ», ուգար. db- «զոհաբերում», dbh «զոհասեղան», հիբ. zēbah «զոհաբերման կանխանի», արաբ. ḏaba-ā «զոհաբերել», àib'Y «զոհ», ասոր. deḥḥō «զոհաբերում». հմմտ. (ըստ իս) մյուս կողմից՝ հայ. *տապ(ալ)-ել* «զոհել, գետնել». հմմտ, թոխ. A tāpal, այլն հայ. *տապ(ալ)-ել* «իբ յուղով խորովել» (?)<sup>318</sup>:

9. Հայ. *տուար* «տավար» < հե. \*t<sup>[h]</sup>aēr- «վայրի ցուլ»~սեմ. \*t'ēawr- «ցուլ. եզ», ակկադ. šūru, ուգար. tr, հիբ. šōr, ասոր. tawrā, արաբ. tawr- և այլն (?)<sup>319</sup>:

10. Հայ. *փեղկ* «փեղկ. ստորոտ» < հե. \*p<sup>[h]</sup>eleu<sup>[h]</sup>- «կացին, տապար» ~ սեմ. \*plk «կտրատել, կտրել, տաշել. կացին», ակկադ. pilakku- «կացին», pullukū(m) «սպանել, կտրատել», ասոր. pelkā «կտրատել, տաշել», արաբ. faalaqa

<sup>313</sup> St' u T. B. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 872-873:

<sup>314</sup> St' u T. B. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 873:

<sup>315</sup> St' u T. B. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 134, 217, 224:

<sup>316</sup> Հմմտ. T. B. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, *К проблеме прародины носителей родственных диалектов и методам ее установления* // "Вестник древней истории", 1984, 2, էջ 110: Նույնի՝ *Индоевропейский язык и индоевропейцы*, էջ 875:

<sup>317</sup> T. B. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 873:

<sup>318</sup> Հմմտ. T. B. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, *К проблеме прародины носителей родственных диалектов и методам ее установления*, էջ 110: Նույնի՝ *Индоевропейский язык и индоевропейцы*, էջ 875:

<sup>319</sup> Ավանդաբար՝ հայ. *տուար* < հե. \*d̥Aryā [\*d̥Ar-er-]: **Գ. Ջահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, էջ 734:

«ճղատել, կոտորել» հմմտ. հայ. *փղճուկ* «կսկիծի պոռթկում, հեծկլտոց» (< հե. \*p<sup>[h]</sup>eleu<sup>[h]</sup>u-) և այլն<sup>320</sup>:

Hambaradzumyam Vazgen- On the Significance of the Armenian facts for the Indo-European-Semitic Correspondences. – There are a certain lexical units in the Armenian language having great importance for the Indo-European-semitic correspondence. Particularity on basis of these roots it is possible to advance an opinion about semitic loanwords from the Indo-European: cf. Arm. (диал.) (*h*)*սսսսղ* [hastō] ‘Star’ < IE \*Hast<sup>[h]</sup>er- ‘Star’, Hittit. ūšter- ‘Star’, Wed. táraš ‘Star’, Avest. stīrībyō ‘Star’, Grk. ἄστῆρ, Korn. sterenn etc. ~ Sem. \*‘attar- ‘divined Star’, ‘Venera’, Accad. Ištar ‘Ishtar (goddess)’, Phinic. ‘štri ‘Astarta (goddess)’, OHebr. ‘aštōreṭt, Aram.. ‘tr etc.; Arm. *ար(ծ/ւ)* [arc/t] < IE \*aú-ro- // \*Haú-ro- ‘Field’. cf. OInd. ájrah ‘Field’, Grk. γρός ‘Field, Pasture’, Lat. agēr ‘Earth, Field’, Goth. akrs ‘Field’ ~ Sum. agar (= a-gár) ‘Reprint, Field’, also Arm. (*h*)*արնս* [haros] ‘unexplored (Earth)’, Arm. *բար-իք* // *բէք-ք* [barik<sup>c</sup>, berk<sup>c</sup>] ‘Harvest, Property’ < IE \*b<sup>[h]</sup>ar(s)- ‘Grain, Millet’ ~ Sem. \*burr- // \*barr- ‘Wheat, pulverize Grain’, OHebr. bar ‘pulverize Grain’ Arab. burr- ‘Wheat’; Arm. (диал.) *ընձ(իկ)* [donik] ‘(round) Bread’ (?) < IE \*d<sup>[h]</sup>oHnō- ‘Grain, Bread’ ~ Sem. \*duŭn- ‘Millet’; Arm. *ընուն* [duŭn] ‘Door’ < IE \*d<sup>[h]</sup>ēr- . cf. Russ. *дверь* ‘Door’ ~ Shum. tūr ‘Court, Enclosure’; Arm. *ընկեր* (< \**ըն-կար*) [ñnker] ‘Friend’ < IE. \*k<sup>[h]</sup>or(e)Á- ‘buy, sell’ ~ Sem. \*k-r-j ‘sell’, OHebr. kārā ‘sell’, kīrā ‘purchase’, Arab. k-r-j ‘let, lease’, cf. Arm. (Dial.) *չար-չի* [i<sup>c</sup>ari<sup>c</sup>i] ‘Retailer, Retail dealer’ (?); Arm. *հանդ* [hand] ‘Feald’ < IE \*Hand<sup>h</sup>- ‘культурное растение’ ~ сем. \* ūinç (at-) ‘Wheat’; Arm. *սաս(ի)* [tawn] ‘Holiday, Offering’ IE \*t<sup>ap</sup>[h]- ~ Arab. àbÝ ‘sacrifice’, Assyr. dīš-ā, also - Arm. *սաս(ար)-ել* [tapalel] ‘sacrifice, fell to the ground’. cf. Thoch. A tāpal, also Arm. *սաս(ակ)-ել* [tapakel] ‘fry, roast’; Arm. *սնու(ար)* [tuar] ‘(horned) cattle’ < IE \*t<sup>h</sup>āĒro- ‘(wild) bull’ ~ Sem. \*tĒawr- ‘bull’ (?); Arm. *փեղկ* [p<sup>c</sup>òk] ‘Fold, Leaf’ < IE \*p<sup>h</sup>eleu<sup>[h]</sup>u- ‘Axe’ ~ Sem. \*plk ‘cut into pieces, hew’, Akkad. pilaqqu- ‘Axe’, pulluqu(m) ‘kill’, Syr. pelkā ‘Axe’, Arab. falaqa ‘reduce into small pieces’. cf. Arm. *փղճուկ* [p<sup>c</sup>òjuk] ‘sobbing crying’ (< IE \*p<sup>h</sup>eleu<sup>[h]</sup>u-).

Амбарцумян Вазген - Значение данных армянского в изучении индоевропейско-семитских корреспонденций. – В армянском языке существует лексический пласт, имеющий важное значение для исследования индоевропейско-семитских соотношений, в частности на их основе можно судить о семитских заимствованиях из общиндоевропейского: ср. арм. (диал.) (*h*)*սսսսղ* [hastō] ‘звезда’ < и.-е. \*Hast<sup>[h]</sup>er- ‘звезда’, хет. ūšter-‘звезда’, вед. táraš ‘звезда’, авест. stīrībyō ‘звезда’, греч. ἄστῆρ, корн. sterenn и т. д. ~ сем. \*‘attar- ‘обожествленная звезда’, ‘Венера’, аккад. Ištar ‘Иштар (богиня)’, финик. ‘štri

<sup>320</sup> Ըստ Աճառյանի՝ «անսոոյգ բառ» («չայերեն արմատական բառարան», հ. 4, Ե., 1979, էջ 506): Ավանդարտ *փեղկ* < հե. \*spheg-[\*spelg] (\*spel, \*phel-) «ճեղքել, պատռել»: Ըստ Ջահուկյանի՝ «*փռոզ* կամ *փռոջ* արմատից -ուկ ածանցով»: Տե՛ս **Գ. Ջահուկյան, Շայերեն սոսոցարանական բառարան**, էջ 261, 765: Հմմտ. **В. М. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов**, նշվ. աշխ., էջ 109-110:

‘Астарта (богиня)’, др.-евр. ‘aštōrett, араб. ‘tr и т. д.; арм. *шр(δ/и)* ‘поле’ < и.-е. \*aú’ro- // \*Наú’ro- ‘поле’, ср. др.-инд. ájrah «поле», греч. γῆρος ‘поле. Пастбище’, лат. agēr ‘почва. поле’, гот. akrs ‘поле’ ~ шум. agar (= a-gár) ‘орошаемая территория, нива’, а также арм. (*h*)*шрnu* [haros] ‘невозделанное поле’; арм. *ршр-һр // рһр-р* [barik<sup>c</sup>, berk<sup>c</sup>] ‘урожай’ < и.-е. \*b<sup>[h]</sup>ar(s)- ‘зерно. крупа’ ~ сем. \*burr-// \*bar- ‘зерно. обмолоченное зерно’, др.-евр. bar обмолоченное зерно’, араб. burr- ‘пшеница’; арм. (диал.) *һнһ(һһ)* [donik] ‘(круглый) хлеб’ (?) < и.-е. \*d<sup>[h]</sup>oHn@- ‘зерно. хлеб’ ~ сем. \*duŪn- ‘просо’; арм. *һнһн* [duĭn] ‘дверь’ < и.-е. \*d<sup>[h]</sup>Ēer- . ср. рус. *дверь* ‘дверь’ ~ шум. tūr ‘двор, загон. дверь’; арм. *рһһһр* (<\**рһ-һшр*) [ĥnker] ‘товарищ’ < и.-е. \*k<sup>[h]</sup>or(Ā)- ‘покупать, торговать’ ~ сем. \*k-r-j ‘торговать’, др.-евр. kārā ‘торговать’, kīgā ‘покупка’, араб. k-r-j ‘сдавать в наем’, ср. арм. (диал.) *шр-ш* [i‘arĭi] ‘торговец мелочным товаром’ (?); арм. *һһһ* [hand] ‘поле, нива’ < и.-е. \*Hand<sup>h</sup>- ‘культурное растение’ ~ сем. \*Ūinç- (at-) ‘пшеница, злаки’; арм. *иш(һ)* [tawn] ‘праздник. жертвоприношение’ < и.-е. \*t‘ar<sup>[h]</sup>- ~ араб. àbŪ ‘совершать жертвоприношение’, ассир. dĥB-ā, а также - арм. *ишш(ш)-һ* [tapalel] ‘совершать жертвоприношение, свалить наземь’. ср. тох. A tāpal, а также арм. *ишш(ш)-һ* [tarakel] ‘жарить, пожарить’; арм. *ишш(ш)* [tuar] ‘(крупный рогатый) скот’ < и.-е. \*t<sup>[h]</sup>aĒro- ‘дикий бык’ ~ сем. \*tĒawr- ‘бык’ (?); арм. *һһһ* [p‘eòk] ‘створ’ подножие’ < и.-е. \*p<sup>h</sup>eleú<sup>[h]</sup>u- ‘топор. секира’ ~ сем. \*plk ‘раскалывать, рубить’, аккад. pilakku- ‘топор’, pulluku(m) ‘убить, сир. pelkā ‘топор’, араб. falaqa ‘расщеплять’. ср. арм. *һһһһ* [p‘òjuk] ‘всхлип, рыдание’ (< и.-е. \*p<sup>h</sup>eleú<sup>[h]</sup>u-).

**ԲԱՌԵՐԻ ԿԱՊԱԿՑԵԼԻՌԻԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ԳՐԱԲԱՐԻ  
ՔԵՐԱԿԱՆԱԿՒՄՆԵՐԸ (17-րդ դար)**

Գրաբարի՝ 17-րդ դարում շարադրված քերականական աշխատություններում շարունակվում են Թրակացու «Մեկնություն քերականին» երկի թարգմանություն-փոխադրություններում սկզբնավորված հնչյունական, բառակազմական, ձևաբանական վերլուծություններին զուգահեռ ներկայացվել նաև շարահյուսական դիտարկումներ, որոնք հիմնականում արտացոլում են հին հայերենի բառերի կապակցելիության հնարավորությունները:

14-18-րդ դդ. ձևավորված քերականագիտությունը հայ իրականության մեջ բնութագրվում է «լատինաբան» տերմինով, քանի որ հեղինակ-քերականները լատինական դպրոցի ներկայացուցիչներ էին: Լատինաբան հայերենի պատմությունը մեզանում հարուստ ավանդույթներ ունի, սակայն նրա համարգային քննությունը ժամանակակից ընթերցողին է ներկայացրել Վ. Համբարձումյանը՝ իր «Լատինաբան հայերենի պատմություն»<sup>321</sup> մենագրության մեջ՝ քննելով լատինաբանության ուսումնասիրության պատմությունը, նրա տեղը հայերենագիտության մեջ, լատինաբան հայերենի բնութագիրը, հետագա դրսևորումները և այլ հարցեր:

Սույն աշխատանքում մենք, անդրադառնալով 17-րդ դարում շարադրված քերականական երկերին, համեմատական վերլուծության ենք ենթարկել դրանցում առկա դիտարկումները՝ բառերի կապակցելիության վերաբերյալ՝ արժևորելով խնդրի կարևորությունը կառուցվածքային լեզվաբանության դիրքերից:

Ֆրանցիսկոս Ռիվոլան «Grammaticae armenae libri quattuor» աշխատության չորրորդ գլխում՝ «Observationes ad syntaxim spectantes»<sup>322</sup> («Շարահյուսությանը վերաբերող դիտողություններ»), ներկայացրել է դիտարկումներ՝ գոյականների, ածականների և բայերի կապակցելիության մասին: Ռիվոլան առանձնացնում է երկու կարգի շարահյուսական կապակցություն՝ «որոշիչ և որոշյալ»՝ արտահայտված ածականով և գոյականով, «ենթակա և ստորոգյալ»՝ արտահայտված անունով և դիմավոր բայով:

Բառային միավորների կապակցությունն ունի ինչպես շարահյուսական, այնպես էլ ձևաբանական արտահայտություն, ինչպես բաղադրյալ ժամանակաձևերը, արտահայտվելով անցյալ և ապառնի դերբայներով, կապակցվում են *ևլ* օժանդակ բային՝ արտահայտելով եղանակաժամանակային և դիմաթվային հարաբերություններ, կամ «մակբայ + ածական» կապակցությո-

<sup>321</sup> Վ. Համբարձումյան, *Լատինաբան հայերենի պատմություն*, Ե., 2010:

<sup>322</sup> Grammaticae Armenae Libri Qvattvor Avctore **Francisco Rivola** Canonico in Ecclesia Sansti Thomae Mediolani, MEDIOLANI, Ex Tipographia Collegii Amerosiani. Anno M. DC. XXIV. Էջ 263-311: [http://greenstone.flib.sci.am/gsd/collect/armenian/Books/grammatica1624\\_index.html](http://greenstone.flib.sci.am/gsd/collect/armenian/Books/grammatica1624_index.html)



յամբ արտահայտվում են ածականի համեմատության աստիճանների տարբեր հարաբերություններ: Եվ վերջապես իմաստակիր միավորների կապակցելիությամբ են ստեղծվում բաղադրյալ բառերը՝ արմատների կամ ածանցների տարբեր գուգորդումներով:

Կղեմեոս Գալանոսի «Քերականական և տրամաբանական ներածություն և առ յիմաստասիրութիւնն շահելոյ»<sup>323</sup> աշխատասիրության մեջ քերականության քննության միավոր է համարվում «բանը»՝ որպես «շարադրության» (syntaxis) բաղադրիչ<sup>324</sup>: Ունենալով խոսքի մասերի շարահյուսական ըմբռնում, դրանք դիտելով իբրև «բանի» կամ նախադասության մասեր՝ Գալանոսը ներկայացնում է խոսքի մասերի իրացումները «խոսքային» մակարդակում: Խոսքի մասերի ձևաբանական փոփոխությունների ուսումնասիրությունը ենթադրում է բառերի կապակցության ուսումնասիրության տեսություն, ըստ որի կապակցությունը լինում է երկու տեսակի՝ համաձայնություն և խնդրառություն, որոնք քննվում են «Յաղագս կառավարութեան մասանց բանին» ենթազվիում<sup>325</sup>: Լայն առումով «կառավարություն» տերմինը ենթադրում է կապակցության բոլոր եղանակների ամբողջությունը՝ «շարակարգութիւն ինչ պատկանաւոր բառիցն՝ առ ի յարմարելոյ գրանն»: Նեղ իմաստով «կառավարությունը» միայն խնդրառությունն է կամ հոլովառությունը, որին զուգահեռ գործում է համաձայնությունը՝ որպես *անվան և բայի, ածականի և գոյականի, հարաբերականի և նախընթացի, պատասխանի և հարցման* քերականական արտահայտություն:

1. Ենթական (անունը) համաձայնում է ստորոցյալի (բայի) հետ թվով և դեմքով, ընդ որում՝ անունը դրվում է ուղղական հոլովով, և տարբեր դիմային հարաբերություն արտահայտող բազմակի ենթակաների դեպքում բայը համաձայնում է «պատվականագույնի» հետ (առաջինը գերադասելի է երկրորդից, երկրորդը՝ երրորդից): Ձևային համաձայնությանը զուգահեռ Գալանոսը քննում է նաև ենթակայի և ստորոցյալի իմաստային համաձայնությունը՝ նշելով, որ բազմակի եզակի թվով արտահայտված ենթակաները պահանջում են հոգնակի ստորոցյալ, եթե դրանք ժխտական միջոցներով չեն բնութագրված (*Պղատոն և Սոկրատէս ճեմեն: Ոչ յոյս և ոչ սէր կայ ի դև*):

2. Կապակցման եղանակներն արտահայտվում են կապակցման միջոցներով, մասնավորապես «որոշյալ + որոշիչ» զույգի դեպքում կարևոր է շարադասությունը. որոշիչը ստորադասվում է հատկապես ետադասվելիս և համաձայնում է լրացյալին թվի և հոլովի քերականական կարգերով:

<sup>323</sup> Քերականական և տրամաբանական ներածություն և առ յիմաստասիրութիւնն շահելոյ. Grammaticae, et Logicae Institvtiones Linguae Literalis Armenicae, Armenis Traditae ad **Clemente Galano** Clerico Regulari Saerae Theologiae Professore et Sanctae Sedis Apostolicae ad Armenos Missionario. Addito Vocabulario Armeno-Latino Omnium Scholasticarum Dictionum. Romae, ex Typographia Sacrae Congreg. de Propaganda Fide. M.D.C.X.L.V.

[http://greenstone.flib.sci.am/gsd/collect/armenian/Books/qerakan\\_neracutin\\_index.html](http://greenstone.flib.sci.am/gsd/collect/armenian/Books/qerakan_neracutin_index.html)

<sup>324</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Գրաբարի քերականության պատմություն*, Ե., 1974, էջ 26:

<sup>325</sup> Քերականական և տրամաբանական ներածություն և առ յիմաստասիրութիւնն շահելոյ, նշվ. աշխ., էջ 112:

Խոսքային մակարդակում «որոշիչ + որոշյալ» գույզը հարաբերվում է «ենթակա + ստորոգյալ» գույզին՝ առանց վերջինիս բնորոշ ժամանակի քերականական արտահայտության: Ձևային առումով «որոշիչ + որոշյալ» և «ենթակա + ստորոգյալ» գույզերը նույնպես հարաբերվում են. բազմակի ենթակայի դեպքում ստորոգյալն արտահայտվում է հոգնակի թվով, ինչպես բազմակի որոշիչների դեպքում որոշյալն արտահայտվում է հոգնակի թվով, օրինակ *Կոստանդիանոսի և Տրդատի թագաւորաց*:

3. Հարաբերականի և նախընթացի համաձայնությունը կատարվում է բարդ ստորադասական կառույցներում, որտեղ **որ** հարաբերականի համար պարտադիր է հոլովական համաձայնությունը. հարաբերականը հոգնակի նախընթացի հետ կարող է դրվել նաև եզակի թվով՝ առանց նրա հետ համաձայնելու:

4. Պատասխանի և հարցման համաձայնությունը կատարվում է նույն խոսքային միջավայրում, տարբեր նախադասությունների մեջ. ընդ որում՝ պատասխանը իբրև թերի նախադասություն, արտահայտվում է հարցական բառի հոլովով, ինչպես՝ *-Ո՞րք է այս խրատու: -Վարդայետացն: -Յումնէ առաքին: -Յարքայէ:*

«Կատավարությունը»՝ որպես *գոյականի* և *գոյականի*, *ածականի* և *գոյականի*, *բայի* և *գոյականի* քերականական արտահայտություն, հանդես է գալիս շարահյուսական երեք արտահայտություններում՝ «հատկացուցիչ + հատկացյալ», «լրացյալ + խնդիր», «լրացյալ + պարագա»:

1. «Հատկացուցիչ + հատկացյալի» կաղապարում լրացումն արտահայտվում է սեռական հոլովով, ինչպես՝ *երկիւղ տեառն*:

2. Ածականները կարող են պահանջել թեք հոլովներով՝ տրականով, հայցականով, բացառականով և գործիականով արտահայտված խնդիրներ, մասնավորապես՝ գիտություն, անգիտություն, արժանավորություն և անարժանություն, հավասարություն, օգտակարություն նշանակող *հնուտ, տեղեակ, տգետ, արժանի, անարժան, պարտական, հակառակ, թշնամի, բարեկամ, երկայն, մեծ, հաւասար, նման, բարի, չար* ածականները և ներկա (-*օղ*), ապառնի (-*լի*) դերբայները պահանջում են տրական հոլովով արտահայտված լրացյալ, օրինակ՝ *հնուտ գրչութեան, հաւասար հօր իմու*: Առավելություն կամ նվազություն նշանակող ածականները լրացում են պահանջում՝ «քան + գ + հայցական հոլով» կաղապարային ձևերում, օրինակ՝ *փոքր քան զնա*: Լիություն, գովք և պարսավանք նշանակող ածականները՝ գործիական հոլով, օրինակ՝ *լի շնորհօք*: Պակասություն, զանազանություն կամ կարգ ցույց տվող ածականները՝ *դատարկ, զանազան, օտար*՝ առողական (բացառական) հոլով, օրինակ՝ *օտար ի մէնջ*:

Ըստ խնդրառության և պարագաառության՝ բայերը կարող են դասակարգվել ամենատարբեր խմբերի, որոնցից Կղեմեոս Գալանոսը առանձնացրել է 17 խումբ:

1. Կրկնակի ուղղական պահանջող բայեր, օրինակ՝ *Աշակերտն իմ կոչի Յահաննէս*:

2. «Վասն + սեռական» կաղապարով արտահայտված նպատակի պարագա պահանջող բայեր, օրինակ՝ *Ես ուրախանամ վասն քոյ զայստեան:*

3. Վերջահոլով տրական՝ հանգման խնդիր պահանջող բայեր, օրինակ՝ *Ծառայեմ տեառն իմում:*

4. «Ի, առ, ց + հայցական» կաղապարով արտահայտված հանգման խնդիր պահանջող բայեր, օրինակ՝ *Ես նայիմ ի լեառն: Նայիմ առ քեզ: Միաբանեցան ընդ միմեանս:*

5. Հայցական հոլովով խնդիր պահանջող բայեր, օրինակ՝ *Բարի հովիւ ճանաչէ զոչխարս իւրս:*

6. Գործիական հոլովով միջոցի խնդիր պահանջող բայեր, օրինակ՝ *Ղու զարդարիս շնորհօք:*

7. «Ձ + բացառական» կաղապարով արտահայտված վերաբերության խնդիր պահանջող բայեր, օրինակ՝ *Ես անփոթ առնեմ զքէ:*

8. «Ձ + գործիական» կաղապարով արտահայտված տեղի պարագա պահանջող բայեր, օրինակ՝ *Թշնամիք իմ պատեցին զինն:*

9. Հայցական հոլովով խնդիր և անորոշ առումով տրական հոլովով չափի պարագա պահանջող բայեր, օրինակ՝ *Վաճառեցին զնա երեսուն արծաթոք:*

10. Հայցական հոլովով խնդիր և վերջահոլով տրական հոլովով հանգման խնդիր պահանջող բայեր, օրինակ՝ *Յուդաս մատնեաց զՔրիստոս հրէիցն:*

11. Հայցական հոլովով խնդիր և բացառական հոլովով խնդիր պահանջող բայեր, օրինակ՝ *Արձակեմ զՊետրոս ի կապանաց:*

12. Հայցական հոլովով խնդիր և գործիական հոլովով խնդիր պահանջող բայեր, օրինակ՝ *Ուրախացուցանեմ զքեզ բարի աւետօք:*

13. Հայցական հոլովով խնդիր և պատմական հոլովով խնդիր պահանջող բայեր, օրինակ՝ *Լուեալ եմ զտրտմական աւետիս զբարեկամէ իմմէ:*

14. Բոլոր բայերը կարող են առնել կացողական ներգոյական հոլով:

15. Բոլոր կրավորական բայերը պահանջում են անվանական՝ ուղղական, և հեղինակային բացառական:

16. Անդեմ՝ միադիմի բայերն ունեն միայն երրորդ դեմք և պահանջում են տրական հոլով և անորոշական բայ, օրինակ՝ *Ամենեցուն պարտէ մեռանի:*

17. Միադիմի բայեր բացառապես առանց որևէ խնդրատության՝ *Անձրնէ:*

17-րդ դ. 1-ին կեսին սկզբնավորված լատինատիպ տեխնիկական քերականությունը 3-րդ քառորդում հաջորդեց ռացիոնալիստական քերականությունը շնորհիվ Ոսկան Երևանցու և Հովհաննես Հովվի:

Ոսկան Երևանցու «Քերականութեան գիրք» աշխատության երկրորդ մասը նվիրված է շարահյուսական հարցերի քննությանը: Այն սկսվում է «Զի՛նչ է բան» հարցադրմամբ. «Բան է շարամանութիւն բարից առ ի բացատ-

րել գայլ իմն իրակութիւն գայլմ է խոթեան»<sup>326</sup>: Շարահյուսության մեջ Ոսկանը անդրադառնում է նաև համաձայնությանը և խնդրառությանը:

Համաձայնության եղանակով կապակցված միավորներից Ոսկանն անդրադառնում է «անուանաւորի և բայի», «ածականի և գոյականի», «վերաբերականի կամ առնչական դերանուան և առաջ ընկելոյն» (հարաբերյալի և հարաբերականի) հարաբերություններին:

Ոսկանը խնդրառությունը բխեցնում է բայիմաստի էությունից, ուստի և այն քննում է ըստ բայերի տարբեր նշանակություն ունեցող խմբերի: Ըստ նշանակության բայերը բաժանվում են 6 խմբի.

- ա) էական, օրինակ՝ *են, գոյ*,
- բ) կայական, օրինակ՝ *կամ, մնամ*,
- գ) ներմնացական (չեզոք)՝ գործողությունը մնում է գործողի մեջ, դուրս չի գալիս նրանից, օրինակ՝ *ուրախանամ, տրտմիմ*,
- դ) արտագործական (ներգործական)՝ գործողությունը դուրս է գալիս, անցնում ուրիշների վրա, օրինակ՝ *գանեմ, պատժեմ, այրեմ*,
- ե) կրաւորական, օրինակ՝ *գանիմ, պատժիմ, այրիմ*,
- զ) տուողական, օրինակ՝ *տամ, նուիրեմ*:

Շարահյուսական մակարդակում Ոսկանն ավելացնում է յոթերորդ խումբը՝ «խառն» անվանմամբ. վերջիններս կիրառվում են տարբեր հոլովածներով արտահայտված կառույցներում: Այդպիսիք են շարժողական բայերը, որոնք պահանջում են երեք կարգի խնդիր՝ *որտեղից, որտեղո՞վ, որտե՞ղ* հարցերին պատասխանող:

Հովհաննես Հռովբը քերականությունը սահմանում է իբրև «արհեստ ուղղապէս խօսելոյ»: Քերականությանը իբրև ուղղախոսության արվեստի, հատկացվում է երկու բաժին՝ ա) «բարուք տեղեկութիւն եզերաց», որի անվան տակ հասկանում է ձևաբանությունը, բ) «Բարուք տեղեկութիւն նոցին շարամանութեան»՝ շարահյուսության, խոսքի մասերի զուգորդումների քննություն<sup>327</sup>:

«Յաղագս շարամանութեան եզերաց»<sup>328</sup> հասվածում Հռովբը անդրադարձել է նաև նախադասության անդամների կապակցությանը, կետադրությանը, խոսքի կառուցման ընդհանուր սկզբունքներին, այդ թվում և նախադասության անդամների շարադասությանը: Խոսքի մասերի խնդրառության քննությանմեջ «կառավարություն» տերմինին զուգահեռ հեղինակը կիրառում

<sup>326</sup> Քերականութեան գիրք, Համառոտիք ծայրաքաղ արարեալ՝ Յաղագս մանկանց. և նորավարժից կրթութեան. Ի տառս մատենից և ի գիտութիւնս մասնաց բանի, ըստ քերթութեան արհեստի. Տպագրեալ ի տպարանի սրբոյ Էջմիածնի և սրբոյն Սարգսի գորավարի: Յամի Փրկչին. 1666. Եւ ի հայոց թուականի. ՌՃևԺ. Փետրվարի. ԺԲ. յմաստերդամ քաղաքի, էջ 40: [http://greenstone.flib.sci.am/gsdll/collect/armenian/Books/Voskan\\_Erevanci\\_Qerakanutyun\\_1666.pdf](http://greenstone.flib.sci.am/gsdll/collect/armenian/Books/Voskan_Erevanci_Qerakanutyun_1666.pdf)

<sup>327</sup> Զտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, Շարագրեցեալ ի Յոհաննիսէ վարդապետէ, կոստանդինուպօլսեցոյ, ի փառս Մեծագոյնս Աստոնյ և ի Յոզուտ Հայկազունեաց: ROMAE, M.DC. LXXIV. SVPERIORVM PERMISSV. [http://greenstone.flib.sci.am/gsdll/collect/armenian/Books/ztuvivn\\_haykaban1674.pdf](http://greenstone.flib.sci.am/gsdll/collect/armenian/Books/ztuvivn_haykaban1674.pdf)

<sup>328</sup> Նոյն տեղում, էջ 158

է «հռլովառութիւն» և «պահանջողութիւն» հասկացությունները՝ հայերենի քերականության մեջ առաջին անգամ կատարելով դիտարկում՝ պարտադիր կառավարման վերաբերյալ:

Ածականների խնդրառությունը քննելիս Հռլովը եզրակացնում է, որ ածականները ընդհանուր առմամբ պահանջում են նույն հռլովով խնդիրներ, ինչ հռլովով խնդիրներ պահանջում են նրանց ծնունդ տված բայերը, օրինակ՝ **տեղեակ գրոց > տեղեկացաւ գրոց**:

Հեղինակը բոլոր բայերը՝ ըստ խնդրառության, բաժանում է երկու խմբի՝ բայեր, որ միայն մեկ հռլով են պահանջում, և բայեր, որ թեք հռլովներ են պահանջում: «Յաղագս արգելմանց պահանջողութեանց բայից» բաժնում Հ. Հռլովը կանգ է առնում այն դեպքերի վրա, երբ բայը չի ստանում իր պահանջած հռլովով խնդիրը: Խնդրի բացառման պատճառ կարող են լինել.

ա. Խնդրի փոխարեն դրվում է աներևույթը՝ անորոշ դերբայը:

բ. Խնդրի փոխարեն դրվում է ամբողջ նախադասություն:

գ. Երբեմն բայի պահանջած խնդիրը բոլորովին չի դրվում, օրինակ՝ Մի՛ երկնչիր:

17-րդ դ. 30-90-ական թթ. ձևավորվեց հունալատինաստիպ քերականությունը, որի հիմնադիրը եղավ Սիմեոն Ջուղայեցին:

Ս. Ջուղայեցին շարունակում էր Թրակացու մեկնիչների ավանդները՝ կառուցելով քերականությունը «ըստ շարագրութեան քերթողացն»: Սակայն տարբերվելով 5-րդ դ. մեկնիչներից՝ Ջուղայեցին հատկապես քննում է ձևաբանությունն ու շարահյուսությունը՝ որպես մեկ ամբողջություն:

Ջուղայեցին լեզվի ուսումնասիրությունը բաժանում է 2 մասի՝ *կիրառելիքի* և *կիրառվողի* քննության: Լեզվական միավորները՝ *տառը, վանկը, բառը, բանը*, նա քննում է նախ խոսքից դուրս՝ իբրև «կիրառելիք», իբրև խոսքակազմիչ տարրեր, ապա խոսքի կապակցության մեջ՝ իբրև «կիրառություն»<sup>329</sup>:

«Քերականութիւն է գիտութիւն տառից և ասութեանց և կիրառութեանց սոցին ըստ շարագրութեան քերթողացն: Եւ բաժանի յերկուս՝ ի կիր առնլիս և կիրառութիւնս»:

Բառի կիրառության քննությունը Ջուղայեցին ավարտում է «Յաղագս արգելման հռլովմանց վրա» գլխով, որտեղ ներկայացվում են ներգործական սեռի բայերի խնդրառության այն դեպքերը, երբ հայցական հռլովով խնդիրը չի արտահայտվում, եթե բային հաջորդում է.

ա. անշաղկապ նախադասություն, օրինակ՝ *Աս է՝ որք եղբարք են*:

բ. թարմատար շաղկապներով կապակցված նախադասություն, օրինակ՝ *Նոքա ծանեան, թէ դու առաքեցեր*:

գ. անորոշ դերբայները՝ *Խորհէին սպանաներ*:

Խնդրառու են ոչ միայն բայերը, այլ նաև նախդիրները, որոնք ըստ հռլովառության լինում են «համազօր»՝ հոմանիշ, օրինակ *առ, ընդ, ի, յ* նախդիր-

<sup>329</sup> Սիմեոն Ջուղայեցի, *Գիրք, որ կոչի Քերականութիւն*, Կ. Պոլիս, 1725:

ները՝ ներգոյականի և «նախդրի» տրականի դեպքում (եմուտ *առ նա, ընդ դուռն, ի տուն*):

Բայերը՝ ըստ հոլովառության, լինում են՝ ա) եզառական, բ) յոզնառական:

Տարբերում է բայերի բուն հոլովառությունը այն դեպքերից, երբ նախադասության մեջ դրվում է որևէ հոլովով խնդիր կամ պարագա ըստ նախադասության ընդհանուր իմաստի, առանց անմիջականորեն բայի խնդրառությամբ պայմանավորելու: Որոշ բայեր, «ինքնին առնուած», կարող են մի տեսակ խնդիր ունենալ, իսկ որոշ գոյականների հարադրությամբ՝ մի այլ տեսակ, օրինակ՝ *դնեմ > ունկն դնեմ*:

Բայերի եզառական հոլովառությունը ներկայացվում է 7 կետով.

1. ուղղական են պահանջում էական բայերը, օրինակ՝ *եմ, անուանեմ, երկիմ*,

2. վերջահոլով տրական են պահանջում ընդդիմանամ, կարօտեմ, բարկանամ և այլ բայեր,

3. նախդրիվ տրական՝ *անկանեմ, բարձրանամ*,

4. հայցականով խնդիր՝ ներգործական սեռի բայերը,

5. բացառական են ստանում կրավորական սեռի բայերը,

6. պատմական են պահանջում *գոհանամ* և այլ բայեր,

7. պարառական են պահանջում *գեքազանցեմ* և այլ բայեր:

«Յոզնառական» խառն, հոլովառություն ունեցող բայեր.

ա. «հայցական + վերջահոլով տրական» են պահանջում *աւանդեմ, բաշխեմ, գրեմ* և այլ բայեր,

բ. «հայցական + բացառական + նախդրիվ տրական»՝ *արկանեմ, գլորեմ, դարձուցանեմ* բայերը,

գ. «հայցական + բացառական»՝ *ազատեմ, բժշկեմ* բայերը,

դ. «վերջահոլով տրական + անորոշ դերբայ» էական՝ միադիմի բայերը՝ *արժան է, բաւական է, պիտոյ է* և այլն:

Բայերը կարող են միաժամանակ ստանալ տարբեր հոլովներով խնդիրներ, որոնք լրացնում են բայիմաստը տարբեր կողմերով: Ջուղայեցին բացահայտում է խնդիրների կիրառության նպատակը: Այսպես՝ կան բայեր, որոնց միննույն խնդիրը դրվում է տարբեր հոլովներով՝ «*Ասեմ զայս կամ ասեմ զքեմ նմա*»: Նույն խնդրի տարբեր արտահայտությունները կախված են բայիմաստից, խոսքային միջավայրից:

Ջուղայեցին դիմավոր բայերի հոլովառությանը զուգահեռ ներկայացնում է նաև անորոշի (աներևույթի) հոլովառությունը՝ իբրև անկատար խոսքի՝ դերբայական դարձվածի արտահայտություն.

ա. Անորոշը (աներևոյթն) ստանում է սեռականով, երբեմն ուղղականով ենթակա, ինչպես անցյալը՝ ընդունելությունը:

բ. Նախդիրների հետ գործածվելիս հանդես է գալիս տարբեր պարագայական կիրառություններով:

Հայերենի վերաբերյալ լատինատիպ քերականական երկերի հեղինակները՝ Ֆրանցիսկոս Ռիվոլան, Կդեմեոս Գալանոսը, Ոսկան Երևանցին, Հովհաննես Հովով Կոստանդնուպոլսեցին, Սիմեոն Ջուլայեցին, բառերի կապակցելիության հնարավորությունների վերաբերյալ ներկայացրել են ինչպես ընդհանրական, այնպես էլ հեղինակային դիտարկումներ: Բոլոր քերականները «լեզուի մասեր» և քերականության ուսումնասիրության նյութ են համարում *գիրք, վանկը, բառը* և «բանը»: Ընդ որում՝ «բան» կոչվող լեզվական միավորում զուգահեռաբար են քննվում ձևաբանական և շարահյուսական արտահայտչամիջոցները:

Harutyunyan Hasmik, Lilit Petrosyan – Observations on Word Collocability in the Grammar Studies of Olg Armenian (17<sup>th</sup> Century).- Modern Structural Linguistics puts an emphasis on the peculiarities of word collocability in the process of speech formation making a distinction between the terms *modes of collocation* and *means of collocation*.

The study of historical grammar testifies that in Armenian linguistics, observations on word collocability began from the works of Greek School and logically continued in the works of Latin School.

Authors of grammatical works on Armenian of Latin School, such as Franciscos Rivola, Voskan of Yerevan, Simeon of Jugha made observations on word collocability possibilities of both generic and author- specific characters. All the grammar scientists consider *writing, syllables, words* and *speech*, which is formed with word collocations, as part of language and study material for grammar.

Асмик Арутюнян, Лилит Петросян - Наблюдения о сочетаемости слов в грамматике габара.- В процессе речеобразования современная структурная лингвистика особое место уделяет особенностям сочетаний слов, дифференцируя средства и методы словосочетаний.

Исследования в области исторической грамматики свидетельствуют о том, что изучение сочетаемости слов в истории армянского языкознания были начаты в трудах греческой школы и получили свое логическое продолжение в работах грамматиков латинской школы.

В трудах таких грамматиков латинской школы, как Франциск Ривола, Клемент Галанос, Воскан Ереванци, Иоанн Константинопольский, Симеон Джугаеци и др., в армянском языке выделяли как обобщенные, так и авторские подходы относительно возможности сочетаемости слов. Все грамматики обращали внимание на графику слова, изучали слог, само слово, речь как особым образом организованное сочетание.

ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԸ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ»  
ԵՐԿՈՒՄ

Փավստոս Բուզանդի «Պատմություն հայոց» աշխատության լեզվի առանձնահատկություններից մեկը ժամանակի ժողովրդախոսակցական բառերի և դարձվածքների առատ կիրառությունն է: Այս հատկանիշը մատնանշում են բոլոր ուսումնասիրողները՝ սկսած Ստ. Մալխասյանից, Մ. Աբեղյանից, Վ. Առաքելյանից<sup>330</sup>: Մեր հաշվումներով՝ երկուս կիրառված և գրաբարի դարձվածաբանական բառարանում արձանագրված են մոտ 400 դարձվածային միավոր<sup>331</sup>: Աշխատանքը կատարել ենք՝ քննության առնելով Փ. Բուզանդի երկի վեներտիկյան 1933 թ. տպագրության վերահրատարակումը Մատենագիրք հայոց մատենաշարով<sup>332</sup>: Կատարած քարտագրումները ստուգել ենք երկի Համաբարբառի տվյալներով, ապա Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձվածաբանական բառարան» և ըստ հարկի «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարաններով<sup>333</sup>:

Նախապես նպատակ ենք ունեցել պատասխանելու 3 հարցի.

ա. Կիրառված դարձվածքների ո՞ր մասն է առաջին անգամ վկայված այս աշխատության մեջ, ո՞ր մասն է ունեցել նախորդող կիրառություն և ո՞րն է վկայված միայն այս երկում:

բ. Ձևաբանական և կառուցվածքային ի՞նչ օրինաչափություններ ունեն այս դարձվածքները:

գ. Արդյոք հնարավոր է գրաբարի և մասնավորապես այս երկի դարձվածքները դասակարգել այն իմաստային խմբերում, որոնք առանձնացվում են արդի հայերենի դարձվածաբանության մեջ (դարձվածային սերտաձում, միասնություն, կապակցություն):

Ա. Տրամաբանական կլիներ սկսել աշխատության մեջ կիրառված դարձվածքների ծագման հարցից: Սակայն դա շատ բարդ և դեռևս պատասխան չստացած խնդիր է, որի մի մասնավոր դեպքի մասին Վ. Առաքելյանը

<sup>330</sup> Տե՛ս Փ. Բուզանդ, *Պատմություն հայոց*, Ե., 1968, Ներածություն, էջ 60: Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. Գ, Ե., 1968, էջ 191: Վ. Առաքելյան, *Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության*, Ե., 1981, էջ 160-174:

<sup>331</sup> Իրականում քարտագրել ենք 390 դարձվածք, հնարավոր բացթողումները և վրիպակները հաշվի առնելով, այսուհետ կիրառում ենք «մոտ/շուրջ 400» թիվը:

<sup>332</sup> Փաւստոս Բուզանդ, *Պատմութիւն հայոց*, Մատենագիրք հայոց, հ. Ա., Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003:

<sup>333</sup> *Հայկական համաբարբառ*, Փաւստոս Բուզանդացոյ Պատմութիւն հայոց, կազմեց՝ Վ. Գեվորգյան, 3-Ա, Ե., 1974, 3-Բ, 1976, 3-Գ, 1978: Ռ. Ղազարյան, *Գրաբարի դարձուածաբանական բառարան*, Ե., 2012: Գ. Աւետիքեան, Խ. Միւրաբեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Վեներտիկ, հ. 1, 1836, հ. 2, 1837:



գրում է. «Շատ սակավ են (գրաբարի՝ Ն. Ք.) այն դարձվածքները, որոնց մասին կարելի է պնդել, թե գալիս են բարբառներից: Ամբողջ դարձվածային հարըստությունը մնում է իբրև գրաբարի սեփականություն»<sup>334</sup>: Թեև նա ասում է գրաբարի բարբառային ծագման դարձվածքները որոշելու անհնարինության մասին, սակայն գրեթե նույն կերպ կարելի է մտածել այլ լեզուներից գրաբարին թարգմանաբար անցած դարձվածքների վերաբերյալ: Թեպետ անհնար չէ, բայց մեծ աշխատանք ու ջանքեր կպահանջվեն նման առանձնացումներ կատարելու համար: Այդ պատճառով էլ, եթե այսօր արդի հայերենի դարձվածքների ծագման մասին խոսելիս առանձնացնում ենք որոշ խմբեր (լեզվի զարգացման նախորդ փուլերից ժառանգած, բարբառներից առաջացած, թարգմանական և այլն), ապա գրաբարի դարձվածքների համար նման հստակ և լիարժեք խմբեր հնարավոր չէ տալ:

Տեսականորեն ավելի հեշտ էր թվում բառարանների նյութի համեմատ որոշել, թե գործածված դարձվածքներից որոնք են նախկինում արդեն կիրառվել, և որոնք են առաջին անգամ վկայվում կամ ունեն միակ վկայությունը այս երկրում: Աշխատանքի ընթացքում պարզ դարձավ, որ չնայած սա նախորդ հարցի պես անհնարին չէ, բայց բառարանների ընձեռած նյութի համեմատությամբ նման քննություն կատարելը ճշգրիտ պատկեր չի տա, որովհետև բառարանում երբեմն օրինակները բերված են՝ հաշվի չառնելով ժամանակային կարգը: Այսպես, Փ. Բուզանդի երկում կան մոտ 2 տասնյակ դարձվածքներ, որոնց համար Ռ. Ղազարյանի դարձվածաբանական բառարանում բերված են ոչ թե Բուզանդի, այլ ավելի ուշ դարերի հեղինակների վկայություններ: Օրինակ՝ *անկանելի տագնապ* («...զի որք քո կամացդ ոչ լուիցեն, անկցին ի տագնապ նեղութեան» 4Ը 29), *բժշկությունս առնել* («*Ձի շնորհքն այնպէս հանգեան ի նմա, զի մեծամեծ նշանս եւ բժշկությունս առնէր հիւանդաց*» 4Դ 22) բառարանում Հովի. Մամիկոնյանի «Պատմություն Տարօնոյ» երկի օրինակներով են<sup>335</sup>, *ի խնդիր անկանել* («...ի խնդիր արկանէր գնոյն գոյն ձի, գնոյն նշան...» 3Ի 10), *ի նեղ անկանել* («Արդ ի նեղ ուրեմն անգեալ թագաւորն Յունաց...» 4ԻԱ 9)՝ Սեբեոսից օրինակով<sup>336</sup>, *գրոյց տալ* («...եստուն զայս ամենայն գրոյց թագաւորին» 5Գ 2)՝ Ուխտանես երկից օրինակով<sup>337</sup>, *գամագիրտ լինել* («... թըշնամիք այսու գամագիրտ լինին» 3ԻԱ 3)՝ Չաքարիա Չագեցու օրինակով<sup>338</sup>:

Ուստի, քանի դեռ չունենք 5րդ դարի հայ ինքնուրույն և թարգմանական գրականության մեջ գործածված դարձվածքների ամբողջական ցանկ՝ ըստ հեղինակների և աշխատությունների ժամանակագրական կարգի, չենք ունենա ճշգրիտ վերլուծություն: Ամեն դեպքում, այժմ ըստ բառարանների տվյալների՝ Փ. Բուզանդի երկում կիրառված շուրջ 400 դարձվածքներից 105ը առաջին անգամ կամ միայն այս երկով են վկայված, կամ առաջին անգամ

<sup>334</sup> Վ. Առաքելյան, *նշվ. աշխ.*, էջ 81:

<sup>335</sup> Ռ. Ղազարյան, *նշվ. բառարանը*, էջ 138, 55:

<sup>336</sup> Նույն տեղում, էջ 130:

<sup>337</sup> Նույն տեղում, էջ 91:

<sup>338</sup> Նույն տեղում, էջ 58:

այստեղ են կիրառված, մնացած մոտ 300ը նախկինում արդեն գործածված էին՝ հիմնականում Աստվածաշնչում:

Բ. Ըստ ձևաբանական հատկանիշի՝ ընդունված է առանձնացնել գոյականական, ածականական, բայական, մակբայական, եղանակավորող դարձվածային միավորներ<sup>339</sup>: Այս տեսանկյունից քննելով՝ Փ. Բուզանդի երկի դարձվածքներից երեքը գոյականական են՝ *կենաց դէղ* (մասնակաղապարը՝ եգակի սեռականով գոյական+ուղղականով գոյական), *սրտի մտաւք* (եգ. սեռ. գոյ.+գործ. գոյ.), *յականէ յանուանէ* (բաց. գոյ.+բաց. Գոյ.), մեկը՝ մակբայական՝ *թէ կամաւ կամաւ եւ թէ ոչ կամաւ* (գործ. գոյ.+գործ. գոյ.+գործ. գոյ.) մնացած բոլորը՝ բայական: Բայական դարձվածքների առատությունը պայմանավորված է հայերենում բայ խոսքի մասի ունեցած առանձնահատուկ դերով:

Ըստ կառուցվածքի բայական դարձվածքները երկանդամ և եռանդամ են՝ եռանդամ են 23ը, մնացածը՝ երկանդամ:

**Եռանդամ դարձվածքներ**<sup>340</sup>. «Պատմութիւն Հայոց» աշխատութեան մէջ կան 20 եռանդամ դարձվածային միավոր, որոնք 3 մասնակաղապարներով են հանդէս գալիս

ա. Բ+Գ+Գ - 8 օրինակ. *ածել ի գիտութիւն կենաց, անկանել ի բանս հրապտւրանաց, առնել զբոսումն ուրախութեան, արկանել ի սուր սուրսերի, դնել բանս ի բերան, լինել ծախումն կոտորածոյ, լինել ի հարկի ծառայութեան, լիցի թիկունք օգնականութեան:*

բ. Գ+Գ+Բ - 8 օրինակ. *գանձն ի մահ դնել, ի խոյզ եւ ի խնդիր անկանել, ի հաշտութիւն խաղաղութեան խօսել, ի հարկի ծառայութեան կացուցանել, յուխտս եւ ի խնդրուածս լինել, ծաղր եւ այսպն առնել, ծափս զծափի հարել, ձեռն յանձին հարկանէին:*

գ. Գ+Մ+Բ - 2 օրինակ. *խորհուրդ ի մէջ առնոյր, փոյթ ի վերայ ունել:*

դ. Գ+Բ+Մ - 1 օրինակ. *սուր դնել ի վերայ:*

դ. Գ+Բ+Բ - 1 օրինակ. *գինին գալ գակամբ:*

Անշուշտ սրանց մէջ էլ կարելի է ավելի մասնակի բաժանումներ անել ըստ այն հարցի, թե ինչ հոլովով են դրված և բայի ինչ լրացումներ են գոյականները, սակայն նման քննությունը տեղին կլինի ավելի ընդգրկուն և շատ օրինակներով տեսական ուսումնասիրություններ կատարելու դեպքում, ուստի այստեղ դրանց չենք անդրադառնում:

**Երկանդամ դարձվածքներ.** Հանդես են գալիս հետևյալ մասնակաղապարներով՝ Գ+Բ, Բ+Գ, Ա+Բ, Բ+Ա, Մ+Բ, Բ+Մ, Բ+Դ:

ա. Գ+Բ - 169 դարձվածք. *ագդ առնել, ակն ածել, ակն առնուլ, ակն դնել, ակն արկանել, բանիւ անցանել, բուռն հարկանել, գայթակղութիւնս դնել, գոյժ արկանել, դէպ լինել, երկիր պահանել, զմտաւ ածել, խորհել, ընդ սուր հանել, թիկունս առնել, ի գերութիւն վարել, ի գուճս հարել, ի խնդիր արկանել, ի*

<sup>339</sup> Խ. Բաղիկյան, *Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները*, Ե., 1986, էջ 91:

<sup>340</sup> Եռանդամ ենք համարում նաև այն դարձվածային միավորները, որտեղ հարադիր բայն է լրացվում այլ խոսքի մասերով, քանի որ դա ընդունված մոտեցում է նաև արդի հայերենի դարձվածքների քննության ժամանակ (տե՛ս Խ. Բաղիկյան, *նշվ. աշխ.*, էջ 176):

խնդիր էլանել, ի հարկի կալ, ի ճակատ էլանել, խորհուրդ դնել, խրախոյս բառնալ, հռչակ հարկանել, ձայն ածել, ձայն արկանել, ձայն շրջել, ձեռն արկանել, միտ դնել, միտս հաճել, յանձին ունել, յապաշխարություն մտանել, յարտասուս հարկանել, յընչացք բանալ, յուղի անկանել, շուքս դնել, ուշ առնել, ուշ դնել, պահ ունել, սիրտ դնել, վրէժ խնդրել, տեղի տալ, փոյթ առնել եւ այլն:

բ. Բ+Գ – 75 դարձվածք. *ածել առ ոտս, ածել զմտաւ, ածել ի գիտութիւն, ածել ի ծունկս, ածել ի հաւանութիւն, առնել յաւարի, առնել աղաթօս, առնել խորհուրդ, արկանել ի ծառայութիւն, արկանել ի միտ, դառնալ ի փախուստ, դնել ի մտի, դնել թշնամանս, դնել ուխտ, էլանել յաշխարհէ, հանել յաչաց, հաճել զմիտս, մատնել ի ձեռն, ունել պահ, տալ խրատ, տալ քաջալերս եւ այլն:*

գ. Ա+Բ – 47 աներևոյթ առնել, բարեխաւս լինել, դարանամուտ լինել, խնդալից լինել, հաւատարիմ առնել, հալածական առնել, մարդակոտոր առնել, միաժողով անել, յայլակերպս լինել, չարամահ առնել, պինդ կենալ, ուրախ առնել, ուրախ լինել, փախստական արկանել եւ այլն:

դ. Բ+Ա – 7 դարձվածք. *առնել բարի, լինել բարեխօս, լինել խօսակից, լինել միաբան, լինել միջամուխ, գնալ փախստական, էլանել փախստական եւ այլն:*

ե. Ս+Բ – 16 դարձվածք. *առաջի կալ, զհետ լինել, զհետ մտանել, ընդ առաջ էլանել, ընդ մէջ լինել, ի վերայ անկանել, ի վերայ հասանել, յանդիման լինել, յառաջ մատուցանել եւ այլն:*

զ. Բ+Մ – 7. *աճել առաջ, անկանել ի վերայ, բառնալ ի միջոյ, գալ ի վերայ, հասանել ի վերայ, դնել առաջի, էլանել ընդ առաջ:*

է. Դ+Բ -1. *յիւր փտարել* (գրավել):

Ամենագործուն ենթակադապարներն են՝ Գ+Բ, Բ+Գ, Ա+Բ:

Կան մի շարք դեպքեր, երբ նույն դարձվածքը կիրառված է 2 շարադասութեամբ, օրինակ՝ *դէպ լինել* («...դէպ եղել առաքել անդր...» 4Ե 2) և *լինել դէպ* («Ապա եղել դէպ ար մի յաւուրց...» 4ԺԶ 5), *ընդ առաջ էլանել* («Եւ էլանէր ընդ առաջ նոցա...» 4Ժ 8) և *էլանել ընդ առաջ* («...զիարդ Վասակ սպարապետն Հայոց էլանէր ընդ առաջ նորա...» 4ԻԷ 1), *թիկունս առնել* («Եւ սկսաւ թիկունս իւր առնել զարքայն Պարսից...» 5ԼԲ 3) և *առնել թիկունս* («Եւ սրտի մտաւք արարին իրեանց թիկունս» 5ԼԸ 14), *ի խնդիր էլանել* («Յայն ժամանակի խնդիր էլանէր արքայն Արշակ...» 4Բ 2) և *էլանել ի խնդիր* («Եւ յետ այտորիկ ինքնին թագաւորն էլանէր ի խնդիր հայրապետին Ներսէսի» 4ԺԳ 28), *ի ձեռս տալ* («...զի ի նա ձեռս տայցեն...» 5ԼԸ 2) և *տալ ի ձեռս* («Տային զաշխարհն Հայոց ի ձեռն Սուրենայ» 5ԼԸ 12): Այս երևույթը նկատել և իբրև գրաբարի՝ աշխարհաբարի դարձվածքներից ունեցած տարբերություն և յուրահատկություն է դիտել Պ. Բեդիրյանը. այսպես «Եթէ աշխարհաբարի բառակապակցություններում, այդ թվում Դ-ներում, բայի լրացումների մեծ մասի (ուղիղ) շարադասությունը կարծեք թէ ընդհանուր առմամբ որոշված է՝ լրացյալից առաջ, ապա գրաբարն այս հարցում դեռ այն աստիճանի հստակություն չի դրսևորում: Համենայն դեպս կան բազմաթիվ Դ-ներ (ու այլ կայուն կապակցություններ), որոնց համար դժվար է ասել, թե հատկապես ո՞ր շարադաս-

սուրբունն է բնորոշ: Օրինակ՝ առնում յանձն եւ յանձն առնում, հասանեմ ի վերայ և ի վերայ հասանեմ...»<sup>341</sup>:

Հետևյալ 24 դարձվածային միավորների մասնակաղապարները չենք առանձնացրել, քանի որ նրանց ոչ բայական բաղադրիչներն առանձին վկայված չեն՝ Նոր բառգիր հայկազեան լեզուի բառարանում, ինչպես նաև Ռ. Ղազարյանի, Հ. Ավետիսյանի «Նորահայտ բառեր գրաբարում» (2007թ.) և Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. Նոր Հայկազյան բառարանում չվկայված բառեր» (2010 թ.) բառարաններում՝ *ազգատ առնել* (ազգը վերացնել. «... գրագումս ի նախարարացն կոտորեաց, գրագումս ազգատ արարեալ անճիտեաց...» 4ԺԹ 2), *այրացավեր առնել* (այրել և ավերել. «Այրացավեր առնէին, եւ զանթիւ մարդիկ արկանէին ի սուր սուների իւրեանց» 4ԻԴ 6), *անմի առնել* (ոչ մեկին չթողնել, բնաջինջ անել. «...դարձեալ ելեալք մարտնչէին, մինչեւ անմի զգարսն Արեաց առնէին» 5Ե 22), *աշխատ առնել* (նեղություն տալ, անհանգրստացնել. «Աղուէս, դու էիր խանգարիչ, որ այսչափ աշխատ արարեր զմեզ» 4ԾԴ 39), *աշխատ լինել* (նեղություն կրել. «...ըստ իւրեանց անկողիսս մահճացն մի ուրեք աշխատ լիցին ելանել» 4Դ 52), *արկանել երկիւղուկս* (վախեցնել. «...եւ թշնամիք իմ հրապուրեցին զիս, եւ արկին երկիւղուկս ի քէն...» 4ԾԴ 25), *գամագիտ լինել* (ելք, քնար գտնել), *գուն գործել* (ջանք թափել), *գաւրահատոյցն առնել* (գորքը խմբերի բաժանել՝ որոշ նպատակներով), *ի չքմեղս առեալ* (անմեղ ձևանալ), *ի չքմեղս լինել* (անմեղ ձևանալ), *լու լինել* (լսելի լինել, իմացվել), *խաթապատճառս լինել* (հիվանդությունը, սկարությունը պատճառ բերել), *խոյս տալ* (խուսափել, հեռանալ, փախչել), *խոստովան լինել* (խոստովանել, բարեբանել), *կապակոտոր լինել* (կապերը կտրել, խզել), *կողաքակ լինել* (բարեկամությունը խզել), *ձեռնթափ լինել* (ձեռք քաշել, հրաժարվել), *ձիահալածք առնել* (ձի հեծած հալածել թշնամուն), *նախանձուկս արկանել* (նախանձ առաջացնել), *նետալից առնել* (շատ նետերով խոցոտել), *որձակոտոր առնել* (արական սեռի մարդկանց կոտորել), *քաղահան առնել* (քաղհանել), *քաւ լիցի* (չլինի թե, հեռու ինձանից, քեզանից): Ինչպես երևում է, արդի լեզվամտածողությամբ և հայերենի բառակազմական օրինաչափությունները հաշվի առնելով, որոշ բառեր կարելի է ածական համարել, բայց եթե դրանք ածականներ էին, ապա ինչու գրաբարում առանձին, անկախ կիրառություն չեն ունեցել, գո՛ւցե սրանք հենց այն դարձվածքներն են, որոնք գալիս են բարբառներից, այդ պատճառով էլ նրանց բաղադրիչները գրական լեզվում վկայված չեն:

Գ. Դարձվածաբանության մյուս կարևոր խնդիրը դարձվածքների իմաստային դասակարգումն է՝ ըստ նրանց բաղադրիչների ձուլվածության աստիճանի: Ըստ այս հատկանիշի՝ այսօր ընդունված է առանձնացնել դարձվածների 4 տիպ՝ դարձվածային սերտաձում, միասնություն, կապակցություն և արտահայտություն (լեզվաբանների մի մասը վերջին տիպը չի ընդունում և չի առանձնացնում): Սակայն անգամ ժամանակակից հայերենում այս խմբերի

<sup>341</sup> Պ. Քեղիդյան, *Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն*, Ե., 1973, էջ 217:

սահմանները խստորեն տարորոշված չեն, կամ դարձվածային միավորներ, որոնց պատկանելությունը այս կամ այն տիպին որոշելը շատ դժվար, իսկ երբեմն կամայական է: Եթե նման բարդություններ կան այսօր ժամանակակից դարձվածքների իմաստային դասակարգման հետ կապված, ապա ինչպե՞ս կարող ենք մենք արդի լեզվամտածողությամբ փորձել դարերի հեռավորությունից դասակարգել գրաբարի դարձվածքները այս խմբերում: Անտեսել այս հարցը չէինք կարող, բայց և ճիշտ չենք գտնում ընդունված այս դասակարգումը կիրառել գրաբարյան դարձվածքների համար, ուստի կարծում ենք, որ պետք է փորձել գրաբարի դարձվածքների իմաստային քննության և դասակարգման համար ավելի համար տարբերակ գտնել:

Այսպիսով Փ. Բուզանդի «Պատմութիւն հայոց» երկում կիրառված մոտ 400 դարձվածքների ճնշող մեծամասնությունը բայական է, երկանդամ, գերակշռող Գ+Բ, Բ+Գ, Ա+Բ ենթակաղապարներով: Առայժմ դարձվածքների ծագման մասին չենք կարող խոսել, իսկ միայն այս երկով կամ առաջին անգամ այստեղ կիրառված դարձվածքները մոտավոր հաշվարկով կազմում են ամբողջի 1/4-ը:

Harutyunyan Knar – Phrases in Pawstos Buzand's "History of Armenians". – In our report we present idioms in Pawstos Buzand's "History of Armenia" forming semantic and structural classifications. In conclusion we generalize that from almost 400 idioms only 3 is noun, 1 is adverb, the others are verbs. About 95% of them are composed from 2 components, the others from three components.

Кнар Арутюнян – Идиомы в "Истории Армении" Павстоса Бузанда. – В данной статье исследованы фразеологизмы "Истории Армении" Мовсеса Хоренаци. Так как еще очень сложно определять происхождение древнеармянских идиомов, даем только их структуральный и морфологический анализ. В результате делаем выводы, что: 1. Из около 400 идиомов только 3 идиомы существительные, 1 наречный, все остальные глагольные. 2. Большинство идиомов двухкомпонентные (около 95%).

**ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՒՐԵՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ  
«ՃԱԿԱՏԱԳԻՐՆ ՀԱՅՈՑ» ԵՎ «ԽՆՁՈՐԵՄԿ» ՎԵՊԵՐՈՒՄ**

Ս. Այվազյանը, ինչպես հայ գրողներից շատերը, գործածել է ոչ միայն գրական, այլև խոսակցական ձևեր ու քերականական կառույցներ: Հայտնի է, որ լեզվի գրական և բարբառային տարբերակները «փոխադարձաբար ազդում են իրար վրա»<sup>342</sup>, քանի որ «գրական լեզուն ոչ այլ ինչ է, եթե ոչ գրական մշակման ենթարկված ու գրականության մեջ դրսևորվող խոսակցական լեզուն»<sup>343</sup>: Գրական լեզվի՝ բարբառների կենսունակ իրողություններով հարըստանալը հարափոփոխ գործընթաց է, որը չի սահմանափակվում պատմական որևէ շրջանով: Գրողի լեզվարվեստում բարբառային տարբերը ևս նպաստում են գեղարվեստական համապատասխան կերպարի ու կոլորիտի ստեղծմանը: «Ճակատագիրն հայոց» (այսուհետ՝ Ճ.Հ.) և «Խնձորեսկ» (այսուհետ՝ Խ.) պատմավեպերում հեղինակը գործածել է **ՈՒՎ** ճյուղի, Ղարաբաղի և մասնավորապես Գորիսի տարածքների բարբառային միավորներին բնորոշ լեզվական իրողություններ: Բարբառայինը կարող է հանդես գալ հնչյունափոխական, բառային, իմաստային և քերականական դրսևորումներով<sup>344</sup>: Ս. Այվազյանը երբեմն կիրառել է Սյունիք-Արցախ տարածաշրջանի խոսվածքներին հատուկ կրճատ անձնանուններ, որոնք ձևավորվել են *անկոնիման* (հապլոլոգիա) երևույթով, երբ «բառի միջից դուրս է ընկնում կից երկուական կամ մեկական հնչյուններից մեկը»<sup>345</sup>, օր.՝ Կնին՝ Գևորգի, Խաչին՝ Խաչատուրի, «Շնգարանց **Գաբին**» (Խ, 6) Գաբրիելի, «Շագունց **Մատին**», Ասատուրի (ն.տ.)՝ Աստվածատուրի, «Խոռատանց **Խեթթը**» (ն.տ.)՝ Խեղենեկի<sup>346</sup>, «Մոսին» (ն.տ.)՝ Մովսեսի, «Երանը» (Խ., 271)՝ Երանոսի, «Օսեփը» (Խ., 212)՝ Հովսեփի փոխարեն և այլն: Ինչպես անձնանունների կրճատումը, այնպես և հնչյունների անկումը, որը զգալիորեն «փոխում է բառի արտաքին պատկերը, հեռացնում նրան իր նախաձևից»<sup>347</sup>, ընդհանրապես տարածում ունի բարբառներում, ինչպես *քեզ-քե, դուրս-տո՛ւս*՝ «Ինչի՞՞ համար ես հարցնում, **քե** մատաղ» (Խ., 97), «Ղնրղը սրտան **տո՛ւս** քըեցիր» (Խ., 248): Անփոփումը պայմանավորված է նաև արագաբանությամբ, որի հետևանքով այ տղա կառույցը դարձել է այտա<sup>348</sup> («-Սյտա, բա որ էդպես է» (Խ., 123), ընդ այս-ը՝ դես, ընդ այն-

<sup>342</sup> Է. Աղայան, *Լեզվաբանության հիմունքներ*, Ե., 1987, էջ 620:

<sup>343</sup> Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 100:

<sup>344</sup> Ս. Մեքոնյան, *Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության*, Ե., 1984, էջ 109:

<sup>345</sup> Ա. Մարգարյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1997, էջ 130:

<sup>346</sup> Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, Ե., 1942, էջ 507:

<sup>347</sup> Հ. Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, Ե., 1982, հ. I, էջ 330:

<sup>348</sup> *Հայոց լեզվի բարբառային բառարան*, Ե., 2001, հ.1, էջ 54:

ը՝ **դեն** («**Ղեսից-դենից** դուրս է տվել» (Խ., 74)): Առանձնացրել ենք հնչյունափոխական այնպիսի դեպքեր, որոնք ևս բարբառայնություն են հաղորդում բնագրերին: Իբրև այդպիսիք դիտակելի են **այ** երկբարբառի պարզեցումը (**այ>է**), օր. «ձեր **մերը** չմեռնի» (Խ., 220), «**Էսօր** պիտի հայտնվեն» (Խ, 86), «**Էգուց-էջօր**, դատարանի նիստ է» (Խ., 124), «**Ա հեք**, հիմա իմ խոսքը նա է» (ՃՀ, 18), **այ>է>ի**՝ «կաձանով **իծաշարուկ** անցնում են» (Խ, 134), **իայ** եռաբարբառի պարզեցումը՝ տալիս է **ի**՝ «**միննակ** ա իլնլ » (Խ, 248), բառասկզբի ձայնավորի վերածումն **ը**-ի կամ սղումը՝ «Չո՛, **ըրա**, հո՛ » (Խ., 248), «Բախտիդ **քացի** մի տուր» (Խ, 272), «**սկի** չէ՛ս ամաչում» (Խ, 344), ձայնեղների իլացումը՝ **դ>տ**՝ «**Էտ** ա պահում իեզանը» (Խ., 248), «Դնրորը սրտեն **տաննակ** ա իլնլ » (Խ, 248), *մասամբ էլ խուլի ձայնեղացումը բառամիջում՝ տ>դ*՝ «Այ **զիդի** կրթությունն» (Խ, 266), *նաև այլ փոփոխություններ՝ ի>է*՝ «**Պենդ** չթխես եզանը» (Խ, 248), **ք>ռ**՝ *հերուեն*՝ հըռնի/է՝ «**Չռնի** ապան միննակ ա իլնլ » (Խ, 248): (Ի դեպ, տարածքիս բարբառին երանգը որոշ չափով պահելու նպատակով հարկ ենք համարել քմային ձայնավորները տառադարձել):

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ **հըռնի/է** տարբերակին զուգահեռ Մյունիք-Արցախ բարբառային տարածքում պահպանվել է նաև հնդեվրոպական նախալեզվից սերող **հերու** ձևը (\*peruti<sup>349</sup>): Քննվող նյութում առկա է նաև Ղարաբաղի և Գորիսի խոսվածքներին հատուկ բառասկզբում **հ**-ի հավելում՝ **ոնց>հունց**<sup>350</sup>, **ափ>հափուռ**<sup>351</sup>՝ «Էտ **հունց** բիրդան բոյ քշեցիր» (Խ., 248), «ուզում ես մի **հափուռ** հայերս» (Խ, 66):

Բարբառային բառաշերտերի ըստ հարկի կիրառվող տարբերը, օժտված լինելով հուզական երանգավորմամբ, հարուստ արտահայտչականությամբ, անմիջականություն և պատկերավորություն են հաղորդում Ս. Այվազյանի պատմավեպերի լեզվին: Հայտնի է, որ ժողովրդախոսակցական բառաշերտի հիմնական առանցքն են կազմում ժողովրդի կենսակերպը, սովորույթները նկարագրող արտահայտությունները՝ «կենցաղագրական բառերը, հարադիր, հարադրավոր և կրկնավոր բարդությունները, բնաձայնական բառերը, ձայնարկությունները, ... դարձվածքները և դարձվածաբանական արժեք ունեցող բառակապակցությունները (անեծքներ, օրհնանքներ) ... նաև արևելյան լեզուներից անցած մի շարք փոխառություններ»<sup>352</sup>: Իբրև այդպիսիք առանձնացրել ենք իմաստային ու կիրառական յուրահատկություններով հատկանշվող բարբառային և փոխառյալ մի շարք բառեր, որոնք հեղինակը գործածության մեջ է դրել նույնությամբ կամ գրականացրել է: Սյուպես «կարող ես քո **դգրբաշներին** ուղարկել Խնձորեսկի դեմ» (ՃՀ, 18) (տաճկ. kizilbaš<sup>353</sup>), «**օթախներում** լույսերը հանգում էին» (ՃՀ, 552) (տաճկ. otak<sup>354</sup>), «**Ախր** իր

<sup>349</sup> **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, Ե., 1977, հ. 3, էջ 89:

<sup>350</sup> **Հ. Աճառյան**, *Հայ բարբառագիտություն*, Մոսկվա-Նոր Նախիջևան, 1911, էջ 65:

<sup>351</sup> **Ա. Մարգարյան**, *Գորիսի բարբառը*, Ե., 1975, էջ 112:

<sup>352</sup> **Լ. Եզեկյան**, *Հայոց լեզու*, Ե., 2007, էջ 146:

<sup>353</sup> **Մ. Մալխասյան**, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1944, հ. 3, էջ 186:

<sup>354</sup> **Մ. Մալխասյան**, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1945, հ. 4, էջ 603:

տղան սոված-ծարավ էր» (Խ, 48) (տաճկ. achar<sup>355</sup>), «Ապուն **դալու** կուճոր հոտաղ» (Խ, 248) (թուրք. dal<sup>356</sup>), «**չուլերը** գցում» (Խ, 41) (տաճկ. cöl<sup>357</sup>), «ուղղակի **թամաշա** են անում» (Խ, 109) (արաբ. temāšā<sup>358</sup>), «**Ղալաթ** ես անում» (Խ, 280) (արաբ. galat<sup>359</sup>), «**գոռով** պիտի հաստատես ու **բրիշա՞ն** թողնես տունս» (Խ, 276) (պարսկ. zor<sup>360</sup>) (պարսկ. perišan<sup>361</sup>), «նրան **թամահ** կանեն» (Խ, 281) (արաբ. tama<sup>362</sup>), «**Սարսաղ** բաներ մի ասա» (Խ, 290) (տաճկ. sarsak<sup>363</sup>), «թանկագին **դոնախի** պատվին» (Խ, 291) (տաճկ. konuk<sup>364</sup>) և այլն: Հարկ է նշել, որ Գորիսի տարածքի խոսվածքներում առկա են օրինակների քմային ձայնավորներով **չօլ էր**, **դնլնթ**, **սնրսնղ** ձևերը և **թըմաշա**, **պի/բրիշակ** տարբերակները: Փոխառյալ **օջախ** (տաճկ. oğak<sup>365</sup>) բառը, կիրառված բարբառային իմաստային երանգով, ոճական արժեք ունի «մատաղի **օջախներից** ելնող ծխեր» (ՃՀ, 651) և «Օրհնված **օջախ** է, լավ տեղ ես ընկել» (ՃՀ, 634) օրինակներում, որոնցից առաջինում *օջախ*-ը ունի *կրակարան*, *վառարան*, երկրորդում՝ *տուն*, *ընտանիք* իմաստները:

Բարբառային բառի ընտրությունը հաջողված է, եթե այն կատարվում է որևէ նպատակադրմամբ: Անհրաժեշտություն է առաջանում բարբառային բառը մշակել գրական բառերի միջավայրում, խոսակցական տարբերակները ընդհանուր ընկալելի դարձնել, ուստի և բարբառային բառի տեղին գործածությունը ոչ միայն ոճավորում, այլև նպաստում է գրողի լեզվարվեստի ինքնատիպությանը<sup>366</sup>: Արձակագիրը, օգտվելով բարբառին բնորոշ արտահայտչաձևերից, համադրել է փոխառյալ ու բարբառային մասնիկները **բէ** «ան»+**հուշ** («թունավորել է իսանին «**բեյհուշացնող**» արմատիքով» (ՃՀ, 166)), փոխառյալ բառը ու հայերեն վերջավորությունը **օյին+ներ**, **հեյվան+ներ**, **չուլ+եր**, **բանդիտ+ներ**, **զուռնաչի+ներ**, **քյալլագոզություն**, **սարսաղություն**, օր. «ինչ **օյիններ** ես ուզում իսողալ» (ՃՀ, 17), «քեզ համար այս **չուլերում**» (ՃՀ, 646), «անգրագետ **հեյվաններ**» (Խ, 268), «**բանդիտների** մոտ» (Խ, 224), «բան են ուզում ասել **զուռնաչիները**» (ՃՀ, 115), «դիմեցիք **քյալլագոզության**» (Խ, 343), «**Սարսաղություն** մի արեք» (Խ, 205), նույն կառույցի մեջ զուգորդել է բարբառային և գրական բառաձևերը՝ «**հուփ բերեն** ու **ճզմեն** մեզ» (ՃՀ, 120), նաև բնագրերում զուգահեռաբար գործածել է միևնույն բառի գրական և խոսակցական տարբերակները՝ **արտ-հանդ-տափ**՝ «կեսօրին կգաս Սիմունց

<sup>355</sup> Մ. Մալխասյան, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1941, հ. 1, էջ 19:

<sup>356</sup> Ա. Մարգարյան, նշվ. աշխ., 1975, էջ 508:

<sup>357</sup> Մ. Մալխասյան, նշվ. աշխ., հ. 4, էջ 34:

<sup>358</sup> Մ. Մալխասյան, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1944, հ. 2, էջ 79:

<sup>359</sup> Մ. Մալխասյան, նշվ. աշխ., հ. 3, էջ 183:

<sup>360</sup> Մ. Մալխասյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 42:

<sup>361</sup> Մ. Մալխասյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 399:

<sup>362</sup> Մ. Մալխասյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 79:

<sup>363</sup> Մ. Մալխասյան, նշվ. աշխ., հ. 4, էջ 194:

<sup>364</sup> Մ. Մալխասյան, նշվ. աշխ., հ. 3, էջ 187:

<sup>365</sup> Մ. Մալխասյան, նշվ. աշխ., հ. 4, էջ 609:

<sup>366</sup> Մ. Մեթոնյան, նշվ. աշխ., էջ 114-115:



**տափը** (կորեկի արտ)» (Խ,33), «մեր **հանդերի** երկնքով» (Խ,25), **շեն-գյուղ**՝ «փախար **շենից**» (Խ, 62), «ահից ցիրուցան են եղել **շենացիները**» (ՃՀ, 141), «**գյուղացու** վերջին բուռ փոշին» (ՃՀ, 14), **ժայռ-քերծ**՝ «բարձրանանք **քերծերի** պնդոցները» (ՃՀ, 10), «**ժայռից** հատած ճանապարհները» (ՃՀ,11), **հայր-հեր-սպեր-սպա**՝ «**Հայրը**, Մելիք-Ֆարամազյան Մեհրին» (ՃՀ, 13), «Բարի օր, այ **հեր**» (ՃՀ, 17), «այստեղ եմ, **սպեր**» (ՃՀ, 10), «**սպան** մատաղ» (Խ, 248), **ռեխ-բերան**՝ «Ռեխդ ցրիվ չտաս» (ՃՀ, 63), «հարամ **բերանով** ասած» (ՃՀ, 656), **գլխարկ-գդակ-փափախ**՝ «նայում է **փափախիս**» (ՃՀ, 17), «մանրախուճուճ մորթուց դիք **գդակ** էր» (ՃՀ, 188), **մայր-մեր-նանի**՝ «պիտի լինեն իմ **մայրն**» (Խ, 43), «Կայ ձեր **մերը** չմեռնի» (Խ, 220), «-**Նանի**, իսկ պատրո՞նը» (Խ, 224) և այլն: Նկատելի է, որ ռճական տարբերակները, ունենալով իմաստային նրբերազ և հարազատ լինելով ժողովրդական լեզվամտածողությանը, գեղարվեստական խոսքը դարձնում են բազմաբնույթ, սեղմ ու առավել տիպական: Նյութի ուսումնասիրման տեսանկյունից հետաքրքրական են բարբառային արմատական և փոխառյալ բառերից բառաբարդմամբ և ածանցմամբ ձևավորված կազմությունները, ինչպես՝ **-ովի**՝ «**շենովի** մեռնել ենք ուզում» (ՃՀ, 9), **-ավոր**՝ «տղամարդի՞ կ եք, թե **լաչակավորներ**» (ՃՀ, 36), **-ացի**՝ «Ուզում եմ ասել մեր **շենացիները**» (ՃՀ, 630), **-ացու**՝ «**Ախպերացու**, ասում են...» (Խ, 86):

Ս. Այվազյանի խնդրո առարկա պատմավեպերում զգալի կշիռ ունեն ժողովրդախոսակցական բնույթի բարդությունները, որոնցով հեղինակը իր կերտած հերոսների ասելիքը վերարտադրել է ավելի համոզիչ ու ճշգրիտ: Համարական հողակապով բարդություններից են **շնաթակ**, **տնաշեն**, **իծաշարուկ**, **սրտաճաք** օրինակները («**շնաթակ** են տվել» (ՃՀ, 90), «**Տնաշեն**» (Խ, 314), «կածանով **իծաշարուկ** անցնում են» (Խ, 134), «**սրտաճաք** կլինեի» (ՃՀ, 159): Օրինակ, կան **հաչ** արմատով կազմություններ, որոնցով ժողովուրդը տարբերակել է շան հաչոցը՝ «շները **կենտահաչ** էին տալիս» (ՃՀ, 65), «թըը՝ նամին էլ **շնահաչ** չտաս» (Խ, 237), նաև գոեհկաբանություն են արտահայտել «բուլա, է, **լսկոահաչ** տաս» (Խ, 281), «Հերիք է **կնկահաչ** տաս» (ՃՀ, 65): Անհոդակապ բարդություններից են՝ «**շանսատակ** չանեք շանը» (ՃՀ, 652), «մի օրդու կարելի է **քարկոծ** անել» (ՃՀ, 73), «**Ծեղպատ** արեք հայակերներին» (ՃՀ, 56): Տեղայնացված և զուտ բարբառային են **ծեղպատ**-ը («Ղրբ. Արտը հնձելիս ամեն մի ճանկով բռնածը ծեղով պատ գցելը»<sup>367</sup>, «Հասկը վրան ցողունը, որով մանգաղի հարվածով հնձվածը պատում-փաթաթում են»<sup>368</sup>) և **լսկոահաչ տալ** («դատարկախոսել»<sup>369</sup>) բարդությունը:

Տեղին ենք համարում նշել, որ Սյունիք-Արցախ բարբառային տարածքում **լսկոահաչ** -ին զուգահեռ կիրառում են **լրխոահաչ(ի)** (Գապան), «**լրխորհաչի**»<sup>370</sup> (Գորիս), «**կոռահաչ(ի)**, **լրքոահաչ**»<sup>371</sup> (Ղարաբաղ) բառաձևերը,

<sup>367</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, Ե., 2002, հ.2, էջ 401:

<sup>368</sup> Ա. Մարգարյան, նշվ. աշխ., 1975, էջ 404:

<sup>369</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.2, էջ 232:

<sup>370</sup> Ա. Մարգարյան, նշվ. աշխ., 1975, էջ 397:

<sup>371</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 2, Ե., 2002, էջ 232:

որոնց արմատների **լըխա//լկո//լըքո//լըխկո** տարբերակները, կարծում ենք, մի դեպքում հավանաբար ձևավորվել են «**լալ** (հ.ե. \* log-(թուլլ, փչացած), պրս. lag (նեխած ձու)) 2. փխբ. դատարկախոս, դատարկամիտ, թեթևատլիկ»<sup>372</sup> (փոխաբերական իմաստը արտահայտվում է Սյունիք-Արցախի բարբառային միավորներին բնորոշ **լալ-լալ անէլ** «անիմաստ խոսել» հարադրությամբ) և **լախըռ** («լախըռ ըղնէլ-ոչինչ չանել»)»<sup>373</sup> արմատների բաղադրությունից, իսկ վերջինս էլ ծագմամբ գուցե առնչվում է այլ բարբառներում առկա թուրքերենից փոխառյալ «**լախըռտը** Պ., **լախըռդի** Վ. «խօսք»»<sup>374</sup> ձևերին (հմմտ. թուրքերեն «**lakirdi** «խոսք, գրույց, շաղակրատանք, դատարկախոսություն»»<sup>375</sup>, քրդերեն «**laqirdi** «կատակ, գավէշտ»»<sup>376</sup>): Մյուս դեպքում քրնընվող արմատների կազմավորումը, կարելի է ենթադրել, նաև փոխառյալ **լախըռ** կամ **լախըռդի** և գրաբարյան **լկնիլ** «լրբանալ, լարշիլ, համարձակիլ, լրբաբար յանդգնիլ»<sup>377</sup> կամ բարբառային **լկոտ(ու)իլ//լկստիլ**<sup>378</sup>// **լկստվել // լկզտվել**<sup>379</sup> բայերի բաղադրությամբ է առաջացել:

Ս. Այվազյանի այս վեպերում ոճական արժեք ունեն Գորիսի տարածաշրջանի խոսվածքներում գործուն անվանական և բայական հարադրությունները, որոնք, իբրև պատկերավորման միջոց, «յուրահատուկ կենդանություն ու թարմ շունչ են հաղորդում խոսքին՝ ավելի դիպուկ ու տպավորիչ դարձնելով այն»<sup>380</sup>: Նմանաբնույթ մի շարք անվանական կրկնավոր հարադրություններ իրացվում են տարբեր դրսևորումներով. նույն բառի կրկնությամբ, օր.՝ «երաշտից **ճաք-ճաք** հողեր» (ՃՃ, 5), նույն բառի հնչյունափոխված տարբերակներով՝ «**Մարսաղ-մարսաղ** դուրս մի տուր» (Խ, 344), *նաև տարբեր հարաբերություններ արտահայտող բաղադրիչներով՝ «Էզուց-էլօր դատարանի նիստ է» (Խ, 340), «**ոչ ու փուչ** բատրակկոմ Բագրատն է» (Խ, 281) և այլն: Արձակագիրը կրկնավոր բաղադրություններից կազմել է նաև կցական կրկնավոր բարբառային բայեր **կծկծալ, լխլխկալ**, օր.՝ «Մեերու սիրտը **կծկծում** է» (ՃՃ, 34), «**լխլխկում** են փորն ու կուրծքը» (Խ, 280): Եթե բարբառային բառաձևը փոխարինենք գրական նորմային համարժեք տարբերակով, ապա քերականական տվյալ կառույցը կզրկվի սեղմությունից, կթուլանա արտահայտչականությունը, օրինակ՝ «**Էզուց-էլօր** դատարանի նիստ է» - *Շուտով* դատարանի նիստ է և այլն:*

<sup>372</sup> **Ա. Յու. Սարգսյան**, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, էջ 236:

<sup>373</sup> Նույն տեղում:

<sup>374</sup> **Հ. Աճառեան**, *Թուրքերեն փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեանի բարբառներուն*, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 150:

<sup>375</sup> **K. Steuerwald**, *Türkisch-deutsches wörterbuch türkçe-almanca sözlük*, 1988, 727-728:

<sup>376</sup> **Р. П. Падолов**, *Этимологический словарь курдского языка*, том I, Москва, 2001, ст. 585-586:

<sup>377</sup> **Հ. Աճառեան**, *Հայերեն արմատական բառարան*, Ե., 1926, հ. 2, էջ 289:

<sup>378</sup> **Հ. Աճառեան**, *Հայերեն գաւառական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 427:

<sup>379</sup> *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. 2, Ե., 2002, էջ 232:

<sup>380</sup> **Մ. Մադանյան**, *Պատմականություն հաղորդող լեզվական միջոցները Ստ. Ջորյանի պատմավեպերում*, Ե., 2012, էջ 40:

Ժողովրդախոսակցական լեզվում ընդհանրապես զգալի կշիռ ունեն հարադիր բայերը: Ս. Այվազյանը հիշյալ գործերում առատորեն գործածել է բարբառային երանգ կամ կազմություն ունեցող հարադիր բայեր, որոնցում բաղադրիչներից մեկը կարող է փոխառյալ լինել: Այսպես տալ՝ «**թափ տվեց** թևերը» (ՃՀ, 39), «իբ պիղծ ոսքով **քացի տվեց**» (ՃՀ, 18), «մնում է երեսը **շուտ տված** ետ» (ՃՀ, 15), «**պեծին տվող** արևի տակ» (ՃՀ, 33), «Ընկածին **կոխ են տալիս**» (Խ, 22), անել՝ «օձի պես **տապ արած** սպասում է» (ՃՀ, 579), «գունե մեկին **ճար անենք**» (ՃՀ, 463), «դու **հարամ ես անում**» (Խ, 291), «ուղղակի **թամաշա են անում**» (Խ, 109), «**փեշքեշ են անում** այս տարվա հարկերը» (ՃՀ, 18), «նրան **թամահ կանեն**» (Խ, 281), «Դու իսկի **լայաղ էլ չարիր**» (Խ, 163), «**հեչ անեն** իմն ու քոնը» (Խ, 94), լինել՝ «Մրտաճաք **կլինեի**, եթե չհամարձակվեի» (ՃՀ, 159), «վեր կացեք, **ռաղ եղեք**» (Խ, 101), «**փշուր-փշուր եղած** ժողովուրդ ենք» (ՃՀ, 22), քնկնել՝ «ինչպես փաղաքշանքը **քոս ընկած** մոզուն» (ՃՀ, 191), ածել՝ «միայն **ման ածիր**, որ չմրսի» (ՃՀ, 213), «պատը պիտի **փուլ ածեն**» (ՃՀ, 646), գալ՝ «կայծեր են **ցրիվ գալիս**» (Խ, 222), «թող աշխարհը **փուլ գա**» (Խ, 160), նաև՝ կենալ՝ «Դե շաղ եկեք և **գործի կացեք**» (ՃՀ, 10), «**ետ կաց քո վճռից**» (ՃՀ, 31), սրծնել՝ «կարողացել էր **դուրս սրծնել** Բիչանադից» (ՃՀ, 181), «կարող էր **վրա սրծնել**» (Խ, 149), ունենալ՝ «Ուրիշ **ճար չունի** հայր» (ՃՀ, 622), համարել՝ «մեր աղ ու հացը **հարամ են համարում**» (ՃՀ, 261), խաղալ՝ «ինչ **օյին են խաղում** քարայծների գլխին» (ՃՀ, 50), բերել՝ «**հուփ բերեն** ու ճզմեն մեզ» (ՃՀ, 120), ստնել՝ «ինչպես են **երես առել** հայերը» (ՃՀ, 656) և այլն: Հիշյալ հարադիր բայերը ունեն նաև տարբերակային ձևեր, որոնք նկարագրում են նույն երևույթը, ինչպես սրծնել իմաստով՝ «**հարամ կանի** այն կաթը» (ՃՀ, 64) կամ «մեր աղ ու հացը **հարամ են համարում**» (ՃՀ, 261), մասնատվել իմաստով՝ «կայծեր են **ցրիվ գալիս**» (Խ, 222) կամ «**փշուր-փշուր եղած** ժողովուրդ ենք» (ՃՀ, 22), ցրվել իմաստով՝ «Դե **շաղ եկեք**» (ՃՀ, 10) կամ «**ահից ցիրուցան են եղել**» (ՃՀ, 141), կալել իմաստով՝ «ուղղակի **թամաշա են անում**» (Խ, 109), «**ես աչք ածեն**» (ՃՀ, 71) կամ «մի **հայացք ածեք** մեր շուրջը» (ՃՀ, 230) և այլն: Հարադիր բայերը կարելի է փոխարինել համադրականով, որը չունի նույն արտահայտչականությունը և իմաստային-ոճական դրսևորումը: Սակայն կան հարադրություններ, որոնք Ղարաբաղի և Գորիսի տարածքների խոսվածքներում չունեն բարբառային համադրական տարբերակներ, ինչպես *ռաղ լինել, ձեն հանել, օյին խաղալ, շաղ գալ, յոլա գնալ, հուփ բերել, թամահ անել, հարամ անել, թամաշա անել, հեչ անել* և այլն:

Ընդհանրապես, գեղարվեստական բնագրերում որպես «մտքի արտահայտման յուրահատուկ պատկերավոր ու նկարագրական ձևեր, հարադրավոր բայերը գեղարվեստական կերպարներ կերտելու, գրողի և նրա հերոսների լեզուն կենդանի, հմայիչ, զգացումային ու արտահայտիչ դարձնելու լեզվական լավագույն միջոցներ են»<sup>381</sup>: Հարկ է նշել, որ հիշյալ բարբառային միավորների բայական համակարգերը հարուստ են հարադիր կազմություն-

<sup>381</sup> Ա. Մարգարյան, *Նայերենի հարադիր բայերը*, Ե., 1966, էջ 240:

ներով: Ս. Այվազյանը խոսքի հուզարտահայտչականությունը ընդգծելու նպատակով **ճաք-ճաք լինել** հարադիր բայի միջոցով անձնավորել է «քերծերին» (ժայռերին) «ցավից **ճաք-ճաք կլինենք**» (Խ, 212), «-ճաքվելը **ճաք-ճաք լինել չէ**» (Խ, 212): Հավելենք, որ **ճաք-ճաք լինել** կառույցը Գորիսի խոսվածքներում ունի *1. պատառոտվել, 2. ինքն իրեն կոտրատվել, 3. ուժեղ լաց լինել, իսկ ճաքվել-ը՝ 1. ճեղքվել, 2. սաստիկ բարկանալ*<sup>382</sup> իմաստները:

Հարադիր բայերի դարձվածային արժեքը առավել ակնհայտ է դառնում փոխաբերաբար կիրառված կազմություններում, որոնք վերախմաստավորվելով՝ այլաբերական երանգ ունեն՝ «վեր կացեք, **ռադ եղեք**» (Խ, 101) «*1. հեռանել, 2. անհետանել*», «Հերիք է **կնկահաչ տաս**» (ՃՀ, 65) «*1. անիմաստ խոսել, 2. գրպարտել*», «թշամին էլ **շնահաչ չտաս**» (Խ, 237) «*վայրահաչել*», «**շնաթակ են տվել**» (ՃՀ, 90) «*սաստիկ ծեծել*», «**Մեղպատ արեք** հայակերներին» (ՃՀ, 56) «*1. շրջափակել, 2. փաթաթել*»:

Ս. Այվազյանը համագործածական բառերը կիրառել է բարբառային իմաստով: «Բարբառային իմաստը գրական բառի այն իմաստային առումն է, որն ընդհանուր գրական արժեք չունի: Նման դեպքում բառը ձևով գրական է, իսկ իմաստային այս կամ այն առումով՝ բարբառային»<sup>383</sup>: Նմանատիպ բնագրային օրինակներ են նաև «**մի մատ** ջուր» (ՃՀ, 34), «գյուղացու վերջին բուռ **փոշին**» (ՃՀ, 14), «**տղամարդ** կաց» (Խ, 95), «**լավ** տեղ ես ընկել» (ՃՀ, 634), «**Դե շաղ եկեք**» (ՃՀ, 10), որոնցում **մի մատ**-ը ունի *բարակ, փոշի-ն՝ այուր, տղամարդ-ը՝ պինդ, անհողող, լավ-ը՝ ապահով, իսկ շաղ-ը՝ նշված կառույցում՝ ցրվել* իմաստները: Համագործածական բառերի այսօրինակ կիրառությունները ևս հերոսների խոսքին անմիջականություն և բնականություն են հաղորդում:

Բարբառային քերականական ձևերը ձևաբանական և շարահյուսական ոչ գրական դրսևորումներն են: Ի տարբերություն ժողովրդախոսակցական բառերի՝ ազգային լեզվամտածողությանը հատուկ բարբառային բառերի, արտահայտությունների ու քերականական կառույցների գերակշռող մասը հանդիպում ենք կերպարների խոսքում՝ ոճական ինքնատիպ կիրառմամբ: Կերպարի անհատականացմանը և խոսքի երանգավորմանը նպաստում են բարբառային քերականական մի շարք իրողություններ՝ հոդեր, դերանվան տարբերակներ, հոլովման և խոնարհման ձևեր: Ուշադրության են արժանի գոյականի հոլովական բարբառային տարբերակները, օր. ուղղ. կրնեկ/զ- սեռ. կրնկա «**կնկա** ձեռքի բան» (Խ, 120), ուղղ. ապա//ապի, սեռ.//տր. Ապու (ն)՝ «**ապան** մատաղ», «**Ապուն** դալու կուճոր հոտաղ» (Խ, 248), ուղղ. Գողի, Բութի, սեռ.//տր. Գողուն, Բութուն՝ «**Գողուն** Մինասը» (Խ, 348), «**Բութուն** Աղալարը» (Խ, 349), ուղղ. սերտ, սեռ.//տր. սըրտէն, բաց. սըրտան՝ «Դնրողը **սրտեն** տաննակ ա իլավ» (Խ, 248), «Դնրողը սրտան **տոնու** քջեցիր» (Խ, 248): Պատմավեպերում կան նաև ընդհանրապես խոսակցական լեզվին հատուկ հավաքակա-

<sup>382</sup> Ա. Մարգարյան, նշվ. աշխ., 1975, էջ 431:

<sup>383</sup> Ս. Մեղունյան, նշվ. աշխ., էջ 110:

նություն ու ազգակցություն արտահայտող հոգնակիանիշ մասնիկներով ձևավորված կառույցներ՝ ուղիղ և թեք հոլովաձևերով, ինչպես՝ **-երք, -իք, -էք** «Տղերք, չխմե՞նք» (ՃՀ, 646), «**Ախպեր-տղորցից** վերցնելն ու տալը» (Խ, 119), «բռն **կնանիք**» (Խ, 285), «Ռեհանը էդ **կանանոցից** չի» (Խ, 285), «**խոխեքս** սոված կմնան» (Խ, 349), նաև՝ ուղղ.-**անք**, սեռ. **-անց** «**Շնագրանց** Գաբին», «**Դնելանց** Կնին», «**Արջանց** Ալեքսանը» (Խ, 6), ուղղ. **-ուևք**, սեռ. **-ունց** «**Քոչունց** Բախշին» (Խ, 5), «Լալազար **Փանդունցս**», «**Բանգունց** Սիմոնը» (Խ, 6), «**Միմունց** տափը» (Խ, 33), ուղղ. **-էք**, սեռ. **-ենց** «**Ջուլիակենց** Ալահվերդին» (Խ, 6), «**Ոսկիենց** բակը» (ՃՀ, 156) և այլն: Նշված հոլովական ձևերն ու հոգնակիանիշ բառերը հիմնականում գործառվում են խոսքում կերպարների տիպականացման միջոց: Հիշյալ վեպերի հերոսների խոսքում հանդիպել ենք նաև Սյունիք-Արցախ բարբառային տարածքի միավորների բնորոշ առկայացման կարգի դրսևորում, երբ հոդառությունը առկա է ոչ միայն ուղիղ, այլև թեք հոլովաձևերում: Որոշյալ հոդի նման կիրառությունները խոսքին հաղորդում են բարբառային երանգ, ինչպես՝ «**զուխը** վերցնի **պատուվը** տա» (ՃՀ, 22), «խանի խոսքը **գետնովը** տալ» (ՃՀ, 58), «ռամիկի մեկը **մտքովն** անց է կացրել» (ՃՀ, 101), «**Սրտումը** ցավեր կան» (ՃՀ, 22), «տասնմեկ հոգի իրենց **քեֆովը** մտնեն» (ՃՀ, 56) և այլն: «Որոշիչ հոդը ստացականության իմաստով կիրառվում է ոճը չծանրացնելու նպատակով»<sup>384</sup>: Որպես ժողովրդական մըտածողության հարագատ և կերպարի խոսքը երանգավորող ձևեր՝ առանձնացրել ենք տարբեր խոսքի մասերի բարբառային և փոխառյալ բառեր, որոնք առավել դիպուկ են պատկերում ժողովրդի տվյալ հատվածին բնորոշ մի շարք երևույթներ: Բնագրային հետևյալ օրինակները նկարագրում են. **ա. Ապրելակերպն ու առօրեական առարկաները**, այսպես, *գոյականով*՝ «վերջին բուռ **փոշին տաշտից** հանելու» (ՃՀ, 14), «յուզբաշու բերանը **փալաս** կոխեց» (ՃՀ, 65), «կերակրելու **հալ** չունենք» (ՃՀ, 144), «**սեփուրը** դնում է նրանց առաջ» (Խ, 170), «մի կով և **բաստան**» (Խ, 162), «**շորվան** մի կողմ դիր» (Խ, 288), *դերանունով*՝ «**մերի** հետ լավ ծանոթացրու» (ՃՀ, 72), *ածականով*՝ «մանրախուճուճ մորթուց **դիք** գրակ էր» (ՃՀ, 188), «երկու **թամ-թագա** պատկերի» (Խ, 157), *բ. մարդու ով լինելը, արարքները և բնութագրական հատկությունները*, *գոյականով*՝ «Օխա յ, **նանի**» (Խ, 48), «Արամ, հե յ, **բալաս**» (Խ, 53), «ձագճնգում է **խոխա** ունենալու համար» (Խ, 355), «**Ուստա** Ալեքսան» (Խ, 114), «Էտ ա պահում **խեզանը**» (Խ, 248), «կանացի մի **ծկլոցից**» (Խ, 68), «Արբակը **քացով** այնպես խփեց նրան» (ՃՀ, 92), «հայր լավ **մերան** է» (ՃՀ, 153), «իբ **մրափը** հարամ է արել» (Խ, 277), *ածականով*՝ «**հարամ** բերանով ասած» (ՃՀ, 656), «**լղար** ուսերը շարժելով» (ՃՀ, 189), «Ապուն դպու **կուճոր** հոտաղ» (Խ, 248), «դու **օյաղ**» (Խ, 340), «**սկյոր** չքավորներ են» (Խ, 162), «մենք **հալալ** մարդիկ ենք» (Խ, 221), *գ. բնության, կենդանիների վերաբերող երևույթներ*, *գոյականով*՝ «խճճված այս **դիքի** վրա» (ՃՀ, 48), «**շվաքում** ճաշթող էին անում» (ՃՀ, 33), «արմատիք, որ կոչվում է **ճիլուջանդուր**» (ՃՀ, 163), «**դոչի** եղջյուր-

<sup>384</sup> Ռ. Մկրտչյան, *Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն*, Ե., 1992, էջ 123:

ների պես» (Խ, 113), «**բայդուշի** պես ձեն տալիս» (ՃՀ, 56), «**Ղանթափի չայը**» (Խ, 291), «մի **ճում** խփում ես մեջքին» (Խ, 265), «**խամ** հող» (Խ, 120), **դ. հավատալիքները. գոյականով**՝ «կփրկեմ քեզ ամեն չարից ու **շատից**» (Խ, 278): Բնագրերում հանդիպել ենք Սյունիք-Արցախի բարբառային միավորներում կիրառվող այնպիսի բայեր, որոնք խոսքին յուրահատուկ երանգ են հաղորդում՝ «որոշել էին **ճղել** խավարը» (ՃՀ, 552), «Ղզլբաշները **ջոկել տարել էին, հողել**» (ՃՀ, 182), «ձեռքը **կոխեց** առվի մեջ» (ՃՀ, 57), «Հիմա մենք **մաղված ենք**» (ՃՀ, 118), «Էս կողմը **կա ց**» (Խ, 248), «չես կարող մեկը մյուսի մեջ **մերել**» (ՃՀ, 153), «փլավի համար բրինձ էր **խստակում**» (Խ, 33), «մազերը **փետեղով** եկավ» (ՃՀ, 56), «պետք է **ցուլլել**» (Խ, 151), **բուն բարբառային բառեր**՝ «Ամբոխը **խախավեց** տեղում» (ՃՀ, 38), «սպասումից կատաղած **շուլավում է**» (ՃՀ, 579), «լաց եղավ պատանու պես **թոսխոտեղով**» (ՃՀ, 244), «ձեռքերը **ծեփում է** աչքին» (Խ, 39), «տառապանքներից **ղարած էր**» (Խ, 46), «նա **ծլկել է**» (Խ, 99), «հուզումից **լալկվում**» (Խ, 309), «**լխկլխկում** են փորն ու կուրծքը» (Խ, 280), «մի մարդ **քաշանա**» (Խ, 13), «եկեք, որ **ջթակվեք**» (Խ, 13), «**լափող** կրակի պես» (ՃՀ, 69) և այլն: Նշենք, որ միայն «Խնձորեսկ» վեպում է հեղինակը գործածել օժանդակ բայի երրորդ դեմքի եզակի թվի համար բարբառային **ա** տարբերակը, մասնավորապես՝ հորովելի հատվածում, որն ամբողջությամբ գրառել է Խնձորեսկի խոսվածքով, այսպես՝ «ճապկի **ա**», «Էտ **ա** պահում», «միննակ **ա** իլնլ» (Խ, 248), «մարդ **ա** եկալ» (Խ, 13): Բարբառայնությունն են արտահայտում նաև բայի երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը, ինչպես՝ «**լսած կա՞ք**, որ էսպես ու էսպես եղավ», «**Լսած չկանք**» (Խ, 63), «-Ախչի, **լսած կա՞ս**» (Խ, 281), «**ներող եղեք**, ժողովուրդ» (Խ, 149), «ուրեմն մի քիչ **հաչող պիտի լինի**: Մենք էլ մի քիչ **ներող պիտի լինենք**» (Խ, 157): Գրական հերոսների վերաբերմունքն ու ապրումները բացահայտող անփոխարինելի ու արդյունավետ իրողություններ են նաև չթեքվող խոսքի մասերի բարբառային տարատեսակները, որոնք գերազանցապես կիրառվել են կերպարների ուղղակի խոսքում՝ դարձնելով այն առավել անհատական և բնութագրական: Այսպես՝ «**համա** մի քիչ փողի կարիք ունեմ» (Խ, 152), «**Հո** դու լավ գիտես» (ՃՀ, 325) (վերջինս «**չէ՞ որ**» իմաստով առկա է Ղարաբաղի բարբառում), «ձեռքը ճակատին դրած **հա** ոլորում էր շեկ բեղը» (ՃՀ, 117) (*շարունակ*), «բեմի եզրին շինելով **դիք** կանգնած» (Խ, 162) (*ուղիղ, անշարժ*), «**քիքոսն** ցավ կտա» (*հանկարծ*), (Խ, 248), «**հես** է» (Խ, 124), «Ուրեմն քեզ համար **հե՞ջ**» (ՃՀ, 21), «**Զէ՛ մի չէ՛**» (Խ, 291), «դատավորի հարցը և մեղադրյալի «**չէ՛-չէ՛ մին**» (Խ, 147) (վերջին երեք օրինակներում էլ *եղանակավորող բառեր են*): Ոճական պլանում ձայնարկությունների և եղանակավորող բառերի բարբառային տարբերակները ևս «դառնում են խոսողի զգայական, կամային վերաբերմունքի արտահայտիչներ»<sup>385</sup> և «նախադասությանը հաղորդում են բավականին ընդգծված վերաբերմունքայնություն»<sup>386</sup>: Ձայնարկությունները չունեն

<sup>385</sup> Ռ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 23:

<sup>386</sup> Ռ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 319:

նյութական-տրամաբանական իմաստ, սակայն արտահայտում են անմիջական հույզ, որով ավելանում է նրանց հուզարտահայտչական երանգավորումը, օր. «**Ամա՛ն, շանսատակ չանեք շանը**» (ՃՀ, 652), «**օխա՛յ ասենք ու խմենք**» (Խ, 172): Շարահյուսական մակարդակում խոսքին բարբառայնություն են տալիս Գորիսի խոսվածքներում գործառվող *կոչականները* («**Ա՛ հեր, հիմա իմ խոսքը նա է**» (ՃՀ, 18), «**ա՛յ մեր, դու այս ի՞նչ արիր**» (ՃՀ, 66), «**Այտա՛, բա որ էդպես է**» (Խ, 123)):

Ամփոփելով նշենք, որ բարբառը կամ խոսվածքը «որպես տիպային խոսքի երանգավորմանը նպաստող տարր օգտագործելիս հեղինակային խոսքը չի հակադրվում դրան..., դրանք հանդես են գալիս որպես նուրբ փոխներթափանցումների արդյունք, ներքին ընդհանրությունների արտահայտություն»<sup>387</sup>: Ս. Այվազյանը բարբառային իրողությունները գործածել է և՛ հեղինակային խոսքում, և՛ կերպարների լեզվում՝ ավելի ստույգ ու պատկերավոր ներկայացնելու ժողովրդի տվյալ հատվածի ինքնատիպ մտածելակերպն ու առօրյան, սովորություններն ու հավատալիքները:

Manucharyan Svetlana - Dialectical realities in the novels “The destiny of Armenians” and “Khndzoresk” by Suren Ayvazyan. - In his novels The destiny of Armenians and Khndzoresk Suren Ayvazyan applied some language realities typical of the branch um [ու], particularly in Kharabagh and Goris dialectal units. Those realities have been expressed by phonetic, lexical and grammatical displays. The author paired and paralleled the borrowed and dialectical elements with those of fiction. He applied short forms of names, dialectical versions of the words belonging to different part of speeches typical of Syunik and Artsakh regions, thus giving more expressiveness and illustration to the original works.

Манучарян Светлана – Диалектные реалии в романах Сурена Айвазяна “Судьба армянская” и “Хндзореск”. - Сурен Айвазян в исторических романах “Судьба армянская” и “Хндзореск” употребил языковые реалии характерные диалектным единицам ветви ум [ու], в частности Карабахской и Горисской, которые выражаются чередованием, словарными, семантическими и грамматическими проявлениями. Заимствованные и диалектные элементы употребляются в романах наряду с литературными нормами. Применяются характерные для диалектов региона Сюник-Арцах сокращения собственных имён, диалектные варианты слов относящихся к различным частям речи, которые придают оригиналам диалектность, образность и выразительность.

<sup>387</sup> Ս. Մելքոնյան, նշվ. աշխ., էջ 121:



**ԲԱՅԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ  
ԱՐԵՎՄՏՅԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐՆՈ, ԽԱՐԲԵՐԴ - ԵՐՁՆԿԱՅԻ,  
ՄԻՎՐԻՉԻՄԱՐԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՆԱՏՈՒԹՅԻ  
ԵՐԿՈՒ ԼՈՐԱՆՍՅՑ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻՎՈՐՆԵՐՈՒՄ**

Հայերենի՝ արևմտյան խմբակցության Կարնո բարբառը՝ *Կր* ճյուղին պատկանող, բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգմամբ ներառում է Կարինի, Լենինականի (Գյումրի), Բաբերդի և Խնդաձորի խոսվածքները<sup>388</sup>: «Կարնո բարբառը» աշխատության հեղինակ Հ. Մկրտչյանը բային նվիրված բաժնում գրում է. «Երկրորդական բաղադրյալ ժամանակներ կազմելու համար իբրև օժանդակ բայ Ախալցխիսեի և Ախալքալաքի խոսվածքները գործ են ածում *բլլիմ, բլլիս, բլլի, բլլինք, բլլիք, բլլին*, Լենինականինը՝ *էղնիս, էղնիս, էղնի, էղնինք, էղնիք, էղնին*, ինչպես նաև *էղա, էղար, էղավ, էղանք, էղանք, էղան* ձևեր»<sup>389</sup>: Այսինքն՝ գիրքը լույս տեսնելու ժամանակահատվածում՝ անցյալ դարի 50-ական թվականներին, հիշյալ բնակավայրերում գործառել են խնդրո առարկա ժամանակավածները: Վերը բերված է *լինել* բայը՝ խոնարհված սահմանական եղանակի ներկա և անցյալ կատարյալ ժամանակներով: Աշխատությունում հիշյալ երկրորդական ժամանակավածներին առնչվող այլ նյութ էլ կա. *սիրել* բայը խոնարհված է սահմանական, ենթադրական, ըզձական, հարկադրական եղանակների բոլոր ժամանակներով, դրանցից բերված է մեկական օրինակ: Հավելենք միայն, որ գլխավոր *սիրել* բայի հարակատար ու ապառնի դերբայներին հարադրվել են *լինել* օժանդակ բայի խոնարհված ձևերը՝ եզակի թիվ, առաջին դեմք<sup>390</sup>: Իսկ գրքի «Հավելվածի» բարբառային տեքստերի մեջ հանդիպել են մեզ հետաքրքրող մի քանի նմուշ: Այսպես. *Ախբատը օխտը օր հաց կէրած չի ըլի ...: Աս էրիկ կընիզը փրար հէջէն հավնի էղէ: Էրիզը կընգանը կըսէ էղէ, թէ խէլառ էս, կընիգնա՝ էրզանը ու վիրսի կըռվին կը էղէ: Աս մարթը մազըմ կէրթա, կաշէ օր հէջ հասէլու չի էնէ, յէդ կը դառնա: ...յէփօր քիչըմ հէռվընայու գըլի, բարիկէնթանը շալգինը բառնա կը ճիռուն*<sup>391</sup>:

Վերոնշյալ նախադասություններից երեքում գլխավոր բայերը՝ *ուտել, հասնել, հեռանալ (հէռվընայ)*, գործառում են համապատասխանաբար հարակատար, ապառնի դերբայներով և *լինել* օժանդակ բայի խոնարհված ձևերով, իսկ մյուս՝ *հավանել, ասել, կըռվել* բայերը խոնարհվել են իրենց կող-

<sup>388</sup> Գ. Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 132:

<sup>389</sup> Հ. Մկրտչյան, *Կարնո բարբառը*, Ե., 1952, էջ 68:

<sup>390</sup> Հ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 84:

<sup>391</sup> Հ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 110, 111, 113:



քին ունենալով *էղէ* բառաձևը: Ինչպես հայտնի է, երկրորդական բաղադրյալ կառույցներում եղանակաժամանակային տիպերը, նաև դեմքը և թիվը, որոշելու համար հիմնական դերը պատկանում է խոնարհված օժանդակ բային: Այնինչ բերված օրինակներից երեքում խոնարհվել են հենց գլխավոր բայերը՝ *էղէ* դերբայի հարադրությամբ, որը Կարինի բարբառում նույնն է՝ ինչ որ Պուսի բարբառի *յէղէր*-ը: Վերջինս, ըստ Հ. Աճառյանի, թուրքերեն *իսիշ* բառի թարգմանությունն է<sup>392</sup>: Ժամանակին մենք այս կարծիքին համամիտ չլինելով՝ գրել ենք, որ *յէղէր*-ը պարզապես *լինել* բայի վաղակատար դերբայն է, որի օժանդակությամբ ձևավորվում են հիշյալ ժամանակները<sup>393</sup>:

Ի դեպ, երկրորդական վերլուծական ժամանակների համար նման կառույցը թերևս հատուկ է արևմտյան բարբառախմբի որոշ միավորների, այսինքն՝ երբ խոնարհվում է գլխավոր բայը՝ կողքին ունենալով *լինել* օժանդակ բայի վաղակատար դերբայը: Նման հարադիր կազմություն, օրինակ, սակավ է հանդիպում արևելյան խմբակցության բարբառներում:

«Հայ ժողովրդական հեքիաթներ» գրքի 4-րդ հատորի՝ Շիրակի տարածքին վերաբերող նյութերում կան մեզ հետաքրքրող հետևյալ օրինակները. *Յէտեկ յէտ դատնալու օր կէղնի, կաշէ, օր ահան ճամբու վրա մէկ ջաննավարքս կայնէլ է: Էդ ի՞նչ կէնէս, ընձի գարկէլու՞ կդատիս: Թէ վօր հաղթէցիր յէ քօվըդ կայնած կէղնիմ: Հըմի էն դօվտէրը քընած կէղնին: Էդօր տըղէն թընդրի քօվը նըստած կէղնի...*<sup>394</sup>: Այս նախադասություններում գլխավոր բայերի դերբայական ձևերի կողքին՝ ապանի (*դատնալու, գարկէլու*) և հարակատար (*կայնած, քընած, նըստած*), խոնարհվել է *լինել* բայը համապատասխան դեմքով, թվով, եղանակով ու ժամանակով: Օրինակներից մեկում օժանդակ բայի դեր է ծառայում նաև *դատել*-ը, որը մինչ այժմ մեզ չի հանդիպել հայերենի ոչ արևելյան, ոչ էլ արևմտյան խմբակցության բարբառային միավորներում:

Արևմտյան տարածքի մեկ այլ Խարբերդ-Երզնկայի բարբառը ըստ Հ. Աճառյանի՝ *Կը* ճյուղի բարբառներից ամենամոտն է գրական արևմտահայերենին: Դրանով խոսել են Եփրատ գետի հոսանքի արևելյան, Պոնտական լեռնաշղթայի հարավային կողմի, Կարնո ու Մշո բարբառների արևմտյան և Տիգրանակերտի բարբառի հյուսիսային սահմանագծերի միջև ընկած տերիտորիայում ապրող բնակիչները<sup>395</sup>: Բարբառիս խոսվածքային միավորներն են Խարբերդի, Երզնկայի, Կամախի, Չմշկաձագի, Ալթուն-Հուսեյնի, Իսմայիլի, Հավորի խոսակցական լեզուները<sup>396</sup>:

Մեր ուսումնասիրած հաջորդ Դ. Կոստանդյանի «Երզնկայի բարբառը» աշխատության մեջ երկրորդական վերլուծական ժամանակների առկայության կամ բացակայության փաստի վերաբերյալ որևէ հիշատակում չկա:

<sup>392</sup> Հ. Աճառյան, *Քննություն Պոլսահայ բարբառի*, Ե., 1941, էջ 139:

<sup>393</sup> Տե՛ս Ժ. Միքայելյան, *Պոլսի խոսվածքի բայական երկրորդական ժամանակները ըստ Հ. Պարոնյանի ստեղծագործությունների*, Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2009, էջ 123:

<sup>394</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 4, Ե., 1963, էջ 27, 52, 54, 78:

<sup>395</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Ե., 1915, էջ 343:

<sup>396</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 133:

Այնինչ գրքի բարբառային նմուշների բաժնում կան այսպիսի օրինակներ. *Վախտով էրիգ մը ու գընիգ մը գան անդեր:* «Տուս, աշկիս մերեվար»,- *կըստ անդեր:* ...ընօս ձեռքեն գառնե, *կը դանե անդեր:* Մօլա, աղօտկե յետկը հայդարարե, պէլքի մեզը էշըս *կըդսաձ գըլա,* պէրե դա: Վարբեդ ու աշակերդ բադ մը *գը շարին անդեր*<sup>397</sup>:

Այս դեպքում նս կարելի է համոզված ասել, որ *անդեր* դերբայական ձևը համապատասխանում է Կարինի *էդե*-ին և Պոլսի բարբառի նույն *եդեր*-ն է: Այսինքն՝ այն ըլլալ օժանդակ բայի վաղակատար դերբայն է՝ չնայած աշխատությունում որևէ վկայություն չկա դրա մասին: Ասվածի ապացույցն է հիշյալ բարբառային տեքստերի մեջ *անդեր*-ի գործածությունը հետևյալ նախադասություններում. *Բայց մօլան խեղացի մօլա անդեր է: Վարբեդը բադը շարեր է, ամա ձուռ անդեր է*<sup>398</sup>:

Նույն բարբառի Չմշկածագի խոսվածքով կարող ենք մեկ օրինակ բերել «Դերսիմի բարբառային քարտեզը» գրքից: *Էս սս մարթուն հեչ չիմ դէսեր, չիմ ըլ ջաշնար, ստ ինդօ ը պարիք էրած գըլիմ*<sup>399</sup>: Գլխավոր բայը *անեղ*-ն է՝ հարակատար դերբայով և օժանդակ բայը՝ *ըլա*, որն այստեղ խոնարհված է ենթադրական եղանակի ներկա ժամանակով:

Հետագոտած բարբառային մյուս միավորը Սիվրիհիսարի միջբարբառն է՝ մեկ՝ նույնանուն խոսվածքով<sup>400</sup>: Ժամանակին այն Անատոլիայի Սիվրիհիսար քաղաքի խոսակցական լեզուն է եղել: *Կը ճյուղին պատկանող սույն բարբառը, ինչպես ուսումնասիրություններն են ցույց տալիս, հարուստ էր բայի երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերով:* «Անատոլիայի նորահայտ բարբառները և բանահյուսությունը» աշխատության հեղինակ Ն. Մըկըրտչյանի հավաստմամբ՝ ինդրո առարկա ժամանակները հիշյալ լեզվում կազմվում են *եդեր-եդեալ* բայի դերբայական ձևերի հարադրությամբ: Հեղինակը Սիվրիհիսարի բարբառը առանձնահատուկ է համարում հատկապես բայական համակարգով, որը «... եզակի է հայերենի բարբառների մեջ՝ իր երկրորդական բաղադրյալ ձևերի և եղանակների ուրույն դրսևորմամբ»<sup>401</sup>: Մասնավորապես, Ն. Մկրտչյանը գրում է, որ «*եդեր-եդեալ*» բայի գործառությամբ լայն կիրառություն ունեն երկրորդական վերլուծական ժամանակաձևերի կազմությունները: Երբեմն նույնիսկ *էդէլ, էդաձ/աղաձ, էլլ* բայաձևերը հարա-

<sup>397</sup> Դ. Կոստանդյան, *Երզնկայի բարբառը*, Ե., 1979, էջ 181,183:

<sup>398</sup> Դ. Կոստանդյան, նշվ. աշխ., էջ 183:

<sup>399</sup> Ռ. Բաղդամյան, *Դերսիմի բարբառային քարտեզը*, Ե., 1960, էջ 31: Ի դեպ, հեղինակը սույն աշխատությունում կարճ անդրադարձ ունի մեզ հետաքրքրող միավորների՝ Խարբերդ-Երզնկայի, Չմշկածագի խոսվածքների բայական համակարգերին, սակայն որևէ նշում չկա խնդրո առարկա ժամանակաձևերի վերաբերյալ:

<sup>400</sup> Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 133:

<sup>401</sup> Ն. Մկրտչյան, *Անատոլիայի հայ բարբառները և բանահյուսությունը*, Ե., 206, էջ 174:

դրվելով միմյանց՝ խոսքի մեջ կազմում են մի անվերջ շղթա<sup>402</sup>: Եվ իսկապես, աշխատության բարբառային նմուշներում քիչ չեն խնդրո առարկա ժամանակաձևերը՝ իրենց յուրօրինակ կառույցներով: Այսպես. *Միրվիսարցիներուն առայերը պէթեր հարուստ էղած էն էղալ է: Աղայերը Հային կէղ կէթան էղած էղալ է: Ատ վախիթերն ա շատ էշիխայեր էղած էղալ է: Թալանածերը ծիյերուն վրա նէտածերուն կիպի էթալտա կըլան...* Վախտին Միրվիսարին մէշ մէշ ախկատ կընիկ կըլա, անօ-ատօ տունին պանը պըյնէլօլ *կապրի էղած էլ է ... փէշման էղած էնածին*. պիթուն կըծիկէրը կը քաշէ մանդալին մէշը, ինք ա այրած պիթուն կըծիկէրը օսկիթէլի *փօխված էյան: ...թաղակաները նըստած կըլան ժամին տուռու: Մարթուն մէր խէրճ կըլա, փէշտընպալ կըպանին էղալ է, օրը մէքատ: Անմէն մարթ պախտի ախպուր ունի էղալ է: Ատ չախը տուրսը տերվիշի շօրէրօլ թաքալօրը կայնած կըլա: Փէշտընպալճին մէքաթ չըֆըթ տըրացին ունի էղալ է: Մայրս թէնճիրէլօլ *կէփէ էղած էղէ է, ան ա մէ թէնճիրէն կուտէ կէլա էղած էղէ է: Աս պիթուն կէլէճվածերըս Միրվիսարտա էղած աղէ է: ... քուլերըս ա կօրած էյան, քալի*<sup>403</sup>:*

Այս օրինակներում *էղած*-ը լինել (ըլալ) բայի հարակատար դերբայն է, *էղէ/աղէ* բառաձևը նույն այդ բայի վաղակատարն է՝ չնայած Ն. Մկրտչյանը վերոհիշյալ աշխատությունում նշում է, որ Միվրիհիսարի բարբառում բայը ընդհանրապես վաղակատար դերբայ չունի, և նրան փոխարինելու է գալիս հարակատարը<sup>404</sup>: Գուցե և հեղինակն իրավացի է, ասենք՝ ժամանակի ընթացքում այդ դերբայաձևը դադարել է գործառնելուց և որպես մնացուկ՝ քարացած ձևով, պահպանվել է միայն լինելի որպես օժանդակ բայ ծառայող, վաղակատարը՝ երկրորդական վերլուծական ժամանակաձևերում:

Մյուս *կօրած էյան* հարադիր կառույցը կազմված է *կօրէլ* խոնարհվող բայի հարակատար դերբայից և *ըլալ* օժանդակ բայի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակից՝ երրորդ դեմք, հոգնակի թիվ: Ընդհանրապես, հայերենի և՛ արևելյան, և՛ արևմտյան բարբառներում խնդրո առարկա ժամանակներին ավելի հարիր է վերջինիս նման կազմությունը, այսինքն՝ գլխավոր բայի դերբայական ձևին հարադրվում է օժանդակ բայը (ամենից հաճախ լինելը)՝ խոնարհված որևէ եղանակով ու ժամանակով:

Ն. Մկրտչյանի նույն՝ «Անատոլիայի նորահայտ հայ բարբառները և բանահյուսությունը» աշխատությունում անդրադարձ կա նաև բարբառային այլ միավորների՝ Բողազյանի Գամիրքի, Մուրադջա-Յալա-Չալղարայի, Մթանոզի բնակավայրերի խոսվածքներին: Մեր նպատակից դուրս համա-

<sup>402</sup> Ն. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 183:

<sup>403</sup> Տե՛ս Ն. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 273 -277, 282, 283:

<sup>404</sup>Տե՛ս Ն. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ176:

րելով հայերեն բարբառների շարքում սրանց տեղն ու դերը որոշելը՝ ըստ Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման (նրա «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատությունում ոչ մի հիշատակում չկա այդ խոսվածքների մասին), հարմար գտանք անդրադառնալ այս միավորների մեջ գործառող խնդրո առարկա ժամանակաձևերին:

Գամիրքի խոսվածքի սահմանական եղանակի ներկա ժամանակը, ինչպես նաև Միվրիհիսարինը, կազմվում է **կա** մասնիկի օգնությամբ, որը նաև շարունակականի իմաստ է արտահայտում, իսկ պայմանական եղանակը՝ **կը**-ի հարադրությամբ: Չնայած Ն. Մկրտչյանը չի խոսում խոսվածքային այս միավորի մեջ երկրորդական բաղադրյալ ժամանակների առկայության մասին, սակայն բանահյուսական նյութերում կան այսպիսի օրինակներ. *Ան վախիթը անտնթ կա էղեր, հոր փատիշահին ախչիկը ուօղը խընամի քարին վըրան պըտը նըստի էղեր: Էտ սըրային փատիշահին տըղան էտօնց պատըֆանին տակեն կասնի էղեր: Ինքը կըմաննի, չօճուխներն ա մէժած կըլան: ...անի անանկ այնա մը ունի էղեր...* Էփերը միհատիկ քոնօջը չպփեն ավելի սիրելուն կէա, ճամփա կիյնա կա: Դըմիշ չըլար ուտելու: Մարթ մը իրէք ախչիյ կուճա, տըղա չուճար, փարա է չուճար, նըստած տոնջոնմիշ կըլա էղեր: ...ամա լավ կարկըտած չէս էղեր<sup>405</sup>: Խոնարհված բայերն են կա (կամ, կաս), նըստել, անցնել, մեծ(ա)նալ, ունենալ, սիրել, ուտել, տոնջոնմիշ լինել, կարկըտել:

Հիշյալ աշխատության հեղինակ Ն. Մկրտչյանի վկայությամբ՝ Գամիրքի խոսվածքում էղեր-ը տաճկերենի իմիշն է: Ըստ նրա՝ դա նաև Ա. Այտընյանի կարծիքն է: Այն « ... հարադրվում է հարակատար, ապառնի, վաղակատար դերբայների և հարկադրական եղանակի ձևերին»<sup>406</sup>: Այսինքն՝ Հ. Աճառյանից բացի Ա. Այտընյանը նույնպես էղեր-ը բխեցրել իմիշ-ից: Ինչ վերաբերում է հեղինակի ներկայացրած հարադրական կառույցներին, դրանք հենց բայի երկրորդական վերլուծական ժամանակաձևերն են, որոնց կազմություններում մասն ունի էղեր վաղակատար դերբայը:

Եթե համեմատելու լինենք Միվրիհիսարի և Գամիրքի խոսվածքների խնդրո առարկա ժամանակները, ապա կհամոզվենք, որ նշված բարբառային միավորներից առաջինում դրանք ավելի բարդ կառուցվածք ունեն, քան երկրորդում:

Նկատենք, սակայն, որ մի դեպքում խոսվածքների խնդրո առարկա ժամանակաձևերը նմանություն ունեն, այն է՝ երկու բարբառային միավորներում էլ կա՝ ու գլխավոր բայն է խոնարհվում՝ կողքին ունենալով էղեր դերբայը, կամ էլ գլխավոր բայի դերբայական ձևին հարադրվում է ըլալ օժանդակ բայը՝ խոնարհված համապատասխան ժամանակով, թվով և դեմքով:

<sup>405</sup> Ն. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 251, 253, 255, 257, 260:

<sup>406</sup> Ն. Մկրտչյան, նշվ. աշխ էջ 82:

Կը ճյուղին պատկանող Մուրադջա-Յայլա-Չաղարայի խոսվածքում բայի շարունակականի մասնիկը *Կոր-ն է*: Ն. Մկրտչյանն ընդամենը մի էջի սահմաններում սույն խոսվածքի բային վերաբերող որոշ տվյալներ է հիշատակում: Մասնավորապես, նշում է, որ բարբառային այս միավորում վաղակատար դերբայի վերջավորությունը *-էր* է, իսկ հարակատարը՝ *-ած*: Խնդրո առարկա վերլուծական ժամանակներից ընդամենը երկու օրինակ կարող ենք բերել մեր նյութին առնչվող սակավաթիվ տեքստերից. *Էսի դահա շատ օսլի ունի էղէր... Դէրէջէի չարչարանքներովը Դէր Զօր հասուցած էն էղէր պըզտիկին, շալակօվ, գիրկօվ*<sup>407</sup>:

Առաջին նախադասությունում *ունենալ* բայն է խոնարհվել սահմանականի ներկա ժամանակով *էղէր* վաղակատար դերբայի հարադրությամբ, մյուս նախադասությունում գլխավոր խոնարհվող բայի *հասուցած* հարակատար դերբայը գործառում է *ըլալ-ի*՝ սահմանական եղանակի վաղակատար ներկա ժամանակի՝ հոգնակի թիվ, երրորդ դեմք, հետ: Խոսվածքին վերաբերող այլ փաստ հնարավոր չէ նշել եղած նյութի տղության պատճառով:

Ն. Մկրտչյանի հիշյալ աշխատության մեջ Սթանոզի խոսվածքային միավորին վերաբերող բաժնում երկրորդական վերլուծական ժամանակներին առնչվող որևէ դիտարկում չկար, ինչպես նաև մեզ հետաքրքրող նյութ չգտանք գրքում գետեղված բարբառային երկու կարճ տեքստերում:

Հարկ է նշել, որ հետազոտված բոլոր միավորներում խնդրո առարկա ժամանակների ժխտականը կազմվում է չ- մասնիկի օգնությամբ, որը դրվում է խոնարհված բայից՝ գլխավոր կամ օժանդակ, առաջ:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք արձանագրել, որ մեր ուսումնասիրած բարբառային միավորներում բայի երկրորդական վերլուծական ժամանակները տարբեր հաճախականությամբ են հանդես գալիս, ունեն և՛ նմանություններ, և՛ զանազանություններ: Հատկապես ակնառու է, որ բոլոր դեպքերում այդ ժամանակաձևերը հատուկ են խոսքի պատմողական ոճին: Եվս մի փաստ. վերոբերյալ աշխատություններում բացակայում է երկրորդական վերլուծական ժամանակների հրամայական եղանակը, որը, սակայն, հաճախ է հանդիպում հատկապես Հ. Աճառյանի՝ արևմտահայ բարբառներին նվիրված հետազոտություններում:

Կարևոր բարբառից բացի, հիշատակված տարածքային մյուս միավորները համարվում են մեռած լեզուներ: Խնդրո առարկա ժամանակները դրանցում, բնականաբար, զարգացում կամ փոփոխություն չէին կարող կրել, պահպանվել են ինչպիսին որ եղել են 1915թ. դրությամբ և նաև բարբառային նյութերը գրանցելու պահին:

<sup>407</sup> Ն. Մկրտչյան, նշվ. աշխ, էջ 297, 298:

Mikayelyan Janna – The Analytic Secondary Tenses in Several Dialects of Armenian Western Group. In the verbal systems of Karin, Kharberd-Yerznka, Sivrihisar dialects with various expressions are functioning the secondary composite tenses of the verb. They are also found in the texts of corresponding dialectal works. Mainly the auxiliary verb լինել “to be” is conjugated, to which is combined the respective participle of the main verb. Sometimes the main verb itself is conjugated with the help of the participle of auxiliary verb.

Микаелян Жанна - Дескриптивные второстепенные времена глагола в нескольких армянских диалектах западной группы.- В глагольной системе говоров каринского, харберт-ерзинкайского, сивриисарского диалектов в разной мере активности функционируют *второстепенные составные формы* глагола. Они также встречаются в текстах книг, посвященных данным диалектам. В основном спрягается вспомогательный глагол *լինել* в нужном виде наклонения и времени, имея рядом разные виды причастия главного глагола. А иногда спрягается основной глагол при помощи причастия вспомогательного глагола.

ԱՐԱԲԵՐԵՆԻ ՀԼՁՑՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ  
ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Վանի բարբառը բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման համաձայն ներառվում է բարբառների արևմտյան խմբակցության Վանի կամ հարավային միջբարբառախմբում և ընդգրկում է Մոկսի, Շատախի, Բաստի, Ոզմի և Վանի խոսվածքները<sup>408</sup>: Այն այսօր արդեն, ցավոք սրտի, հայերենի տարածքային մեռած տարբերակներից է, որի վերաբերյալ բարբառագիտական ուսումնասիրությունները հիմնականում հենվում են գրավոր վկայված նյութերի և հետազոտությունների ընձեռած լեզվական փաստերի վրա:

Ձևաբանական միահատկանիշ դասակարգմամբ Վանի բարբառը պատկանում է *Գը* ճյուղին, իսկ հնչյունաբանական հիմնական հատկանիշներն են բառի բոլոր դիրքերում տեղի ունեցող *h>ʃu* հնչյունափոխությունը, շնչեղ ձայնեղ հպականների բացակայությունը, ձայնեղ հպականների և կիսաշփականների իլացումը<sup>409</sup>:

Ինչպես յուրաքանչյուր լեզու կամ լեզվական համակարգ՝ Վանի բարբառը ևս ունի փոխառություններ, որոնց բավական մասը, պատմական հանգամանքների բերումով, կատարվել է թուրքերենից, սակայն քիչ չեն նաև արաբերեն՝ ուղղակի կամ միջնորդավորված փոխառյալ բառերը<sup>410</sup>: Ստորև դրանց հնչյունական քննությամբ ներկայացրել ենք փոխատու լեզվի բաղաձայնական և ձայնավորային ենթահամակարգերի դրսևորման առանձնահատկությունները<sup>411</sup>:

<sup>408</sup> Գ. Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 134-135:

<sup>409</sup> Հ.Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*, Ե., 1952, էջ 12:

<sup>410</sup> Միջնորդավորված փոխառությունները Վանի բարբառին անցել են հիմնականում թուրքերենի միջոցով:

<sup>411</sup> Փոխառյալ արաբերեն բառերն առանձնացրել ենք **Հ.Աճառյանի** «*Քննություն Վանի բարբառի*», Ե., 1952, **Մ.Մուրադյանի** «*Շատախի բարբառը*», Ե., 1962, բարբառագիտական մենագրություններից, «*Հայ ժողովրդական հեքիաթներ*» ժողովածուի 17-րդ հատորից (ընդգրկում է Մոկք գավառի հեքիաթները), Ե., 2012, ինչպես նաև Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում առկա, ՀԲԱ ծրագրով գրանցված Վանի բարբառի ձեռագիր համապատասխան նյութերից (նշված ծրագրով հավաքված նյութեր, ցավոք, չկան Բաստի և Ոզմի խոսվածքների վերաբերյալ): Փոխառյալ բառեր ընդգրկել ենք նաև **Հ.Աճառյանի**, «*Թուրքերենէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ*», Մոսկուա-Վաղարշապատ, 1902, աշխատությունից. հեղինակը նշում է, որ թեև զիրքը վերնագրված է «*Թուրքերենէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ*», բայց այդ անվանումը պայմանական է. դրանք փոխառություններ են օսմաներենից, որը կազմված է թուրքերենի, արաբերենի և պարսկերենի խառնուրդով (տե՛ս Հ.Աճառյան, *նշվ. աշխ.*, էջ 14):

Գրական արաբերենն աչքի է ընկնում հատկապես կոկորդային, միջատամնային և ուժգին արտաբերման (էմֆատիկ) բաղաձայնների զարգացած համակարգով:

Վանի բարբառում, ինչպես վերը նշեցինք, բառի բոլոր դիրքերում (բացառությամբ առանձին դեպքերի) տեղի է ունենում ձայնեղ հպականների խլացում. այսինքն՝ *բ* և *դ* ձայնեղները հնչյունափոխվում են *պ* և *տ* խուլ բաղաձայնների<sup>412</sup>: Օր.՝ *բան-պան, դանակ-տանակ* և այլն: Արևելյան լեզուներից փոխառված բառերում, սակայն, ինչպես նշում է Հ.Աճառյանը, *բ*-ն չի հնչյունափոխվում<sup>413</sup>: Այսպես, փոխառյալ արաբերեն բառերում *բ*-ն հիմնականում անփոփոխ պահպանվել է բառի բոլոր դիրքերում: Օր.՝ **բնյյ** «բակլա» - baqla<sup>414</sup> «բանջարեղեն» (baqla bārīda «եզիպտական ունդ»), **խնրնր** «խոսք» - xabar «լուր», **խեսաբ/հեսաբ** «հաշիվ» - hiṣāb և այլն: Վանի խոսվածքի որոշ ենթախոսվածքներում հանդիպում են նաև *բ* -ի՝ *պ* խուլ և *փ* շնչեղ խուլ բաղաձայնների հնչյունափոխման մի քանի օրինակներ. **սնզնս** (գյուղ Այլուր և այլն), **սնզնփ** (գյուղ Հազարեն և այլն) «հարսանիքում փեսային շրջապատող ամուրի երիտասարդներ» - ‘azab «ամուրի երիտասարդ» (հզն.՝ ‘azāb), **ռուս**, **ռուսփ** «դռաբ» - rubb «մրգահյուր, մուրաբա»:

Արաբերենի *ժ* ձայնեղ հպականը ևս, չենթարկվելով բարբառին հատուկ հնչյունափոխությանը, նույնացել է հայերենի *դ*-ին. **դնվն** «1.դատ, 2.կոժիվ» - da‘nā, **կնդախ** «ջուր խմելու կավե, պղնձյա զավաթ» - qadah «զավաթ, սկահակ», **կնյիդ** «արձանագրություն» - qayd «գրանցում, հաշվառում» և այլն:

Այսինքն՝ կարելի է նշել որ այս փոխառությունները կատարվել են այն ժամանակ, երբ Վանի բարբառում ձայնեղ բաղաձայնների խլացման հնչյունական օրենքն արդեն չէր գործում:

Փոխատու լեզվի խուլ *տ* և *կ* հպականները, որոնք հնչարտաբերությամբ մոտ են հայերենի համապատասխանաբար *թ* և *ք* հպականներին, հիմնականում նույնացել են վերջիններիս, այն տարբերությամբ միայն, որ փոխառյալ բառերում հաճախ տեղի է ունեցել բարբառին հատուկ *ք*-ի քմայնացում. **թըզըէխ** «համրիչ» - tashīh «1.փառաբանում, զովերգում, 2.տերրողորմյա, համրիչ», **խալթ** «անխելք գործ» - xalt «1.խառնում, 2.բարբաջանք, դատարկախոսություն», **քնֆիլ** «երաշխավոր» - kafīl, **քիբար** «ազնվական» - kabār (հզն.՝ kibār) «1.մեծ, հսկա, 2.կարևոր, 3.ավագ», **քուրսի** «պթոռ» - kursī «պթոռ, բազկաթոռ», **հնրվ** «վճիռ» - hukm «1.իշխանություն, 2.որոշում, վճիռ»: Կան նաև *տ>*

<sup>412</sup> Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 53-54, 57-58:

<sup>413</sup> Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 53:

<sup>414</sup> Փոխառյալ բառերի գրառման համար գործածվել է Baskerville MT for Brill 02 տառադարձման համակարգը, իսկ արաբերեն համարժեքները ներկայացվել են ըստ *Al-Qāmīs ‘al-jadīd*, T., 1985 (արաբերեն) և *Баранов X., Большой арабского-русский словарь*, т. 1, 2, М., 2002 բառարանների:



հնչյունափոխությամբ սակավաթիվ բառեր, օր.՝ *վախտ* «ժամանակ» - waqt «ժամանակ, ժամանակահատված»:

Գրական արաբերենը չունի հայերենին հաստուկ *փ, պ, գ, կ* հպականները, կիսաշփական բաղաձայնների *ձ, ծ, ց* լծորդական շարքը, *ճ, չ* կիսաշփականները, ուստի և այս բաղաձայնները փոխառյալ բառերում չեն հանդիպում: Փոխատու լեզվում գործառում են մեկ կիսաշփական ձայնեղ բաղաձայն՝ *յ*-ն, որը հնչարտաբերությամբ նույնանում է հայերենի *ջ*-ին և գերազանցապես արտահայտվում այդ հնչյունով. *ջինս/ջրնս* «ցեղ, տեսակ» - jins, *ջնիստ* «ջանք» - jahd, *հնիջի* «մահտեսի» - hājj «ուխտավոր, ուխտագնաց», *հնիջու* «հարձակում» - hijūm «հարձակում, գրոհ»: Մի քանի բառերում արաբերենի *յ*-ն, կրելով Վանի բարբառի ազդեցությունը, իլանալով հնչյունափոխվել է *ճ*-ի. *ճամի* «մզկիթ» - jāmi', *ճիվար* «շրջակայք» - jiwār «հարևանություն, մերձակայք» և այլն:

Ավելի շատ ընդհանրություններ են ցուցաբերում փոխատու և փոխառու լեզուների շփական բաղաձայնների ենթահամակարգերը: Այսպես՝ արաբերենի *z, s, š, ġ, x, f, h* հնչյունները փոխառյալ բառերում նույնացել են հայերենի համապատասխան շփական բաղաձայններին. *z* - *զըբիլ* «աղբ» - zibil, zabil «1.գոմաղբ, 2.աղբ», *զուլալ* «ականակիտ, վճիտ» - zual «թարմ, աղբյուրի ջուր», *սնիք* «հարսանիքում փեսային շրջապատող ամուրի երիտասարդներ» - 'azab, *զրհեզ* «օժիտ» - jihāz: *s* - *սըլա* «զամբյուղ» - salla «կողով, քթոց», *խասրաթ* «կարոտ» - hasra «վիշտ, կարոտ», *հնիս* «բանտ» - habs «բանտ, զնդան»: Փոխառյալ հետևյալ բառում տեղի է ունեցել *s>q* հնչյունափոխություն՝ *թըզբէլի* «համրիչ» - tashīl «1.գովերգում, 2.տերողորմյա, համրիչ»: *š* - *շիրիս* «կանեփի թելից ճուպան» - šarīl «ժապավեն, քող», *սնիք* «անառակ» - hašarī «1.խարդախ, 2.խարդախ մարդ»: *x* - *խնիք սալ* «հայտնել» - xabar «լուր», *խըրըսե/ել* «ավարտել» - xallaša «1.փրկել, 2.ավարտել», *ախըր* «վերջապես» - āxr «վերջ»: *f* - *ֆալ* «գուշակություն, հմայք» - fāl «բարի, լավ նախանշան», *սուֆրա* «սեղան» - sufra, *հնիքիֆ* «անարժեք մարդ» - harīf «1.ընկեր, գործընկեր, 2.հաճախորդ» և այլն: *f>վ* հնչյունափոխության է ենթարկվել *քուվր* «հայիոյանք» - kufir բառը (Մոկսի խոսվածք):

Վանի բարբառային միավորների հետազոտողները փաստում են, որ խնդրո առարկա բարբառում բառասկզբում *ղ* շփականը չի գործառում, քանի որ բառի այդ դիրքում տեղի է ունենում *ղ>կ* հնչյունափոխություն, որը տարածվում է նաև հաստուկ անունների (օրինակ՝ Ղազար>*Կնիք*) և փոխառյալ բառերի վրա<sup>415</sup>: Որպես օրինակներ՝ նրանք բերում են *կուռուռ* «դահեկան» և *կարիք* «պանդուխտ» բառերը: Նկատենք, սակայն, որ արաբերեն համարժեքներում qurūš -ը (կուռուռ) qirš «պիաստր (դրամ)» բառի հոգնակի թվի ձևն է, այսինքն՝ այս բառում ունենք *q (q̣)>կ*, ոչ թե՛ *ğ>կ* հնչյունափոխություն: Ինչ

<sup>415</sup> **Հ.Աճառյան**, նշվ. աշխ., էջ 70, **Մ.Մուրադյան**, նշվ. աշխ., էջ 51:

վերաբերում է *կարիք* բառին, ապա դրանում իսկապես առկա է *ց>չ* հնչյունափոխություն (արաբ․՝ ǧarīb «1.օտար, 2.օտարերկրացի»)՝<sup>416</sup>: Հանդիպում են *ց>չ* հնչյունափոխությամբ այլ բառեր ևս՝ *կայիք* «կորած բան» - ǧā'ib «1.բացակա, 2.թաքնված, անտեսանելի», *կյւզւոր* «պատուհաս» - ǧaḏab «ցասում, աստվածային պատուհաս» և այլն: Այսինքն՝ կարելի է նշել, որ փոխառյալ բառերը հիմնականում ենթարկվում են բարբառի հնչյունական վերոնշյալ օրենքին:

Արաբերենի հ շփականը, որը հայերենի *հ*-ի համարժեքն է, նույնացել է վերջինիս՝ *հւնդիս* «նվեր» - hadiyya «նվեր, շնորհ», *հուջում* «հարձակում» - huǰūm «հարձակում, գրոհ», *ջրհեզ* «օժիտ» - jihāz և այլն:

Փոխաստու լեզվի ձայնորդ բաղաձայնների ենթահամակարգը փոխառյալ բառերում դրսևորվել է հետևյալ կերպ. *մ*, *ն*, *լ*, *յ* ձայնորդները կայուն կերպով նույնանում են հայերենի համապատասխան բաղաձայններին և գործածվում բառի բոլոր դիրքերում. *մ* - *միհնզոր* «ներքնակ» - mandara «գյուղական տան հուրասենյակ», *համալ* «բեռնակիր» - hāmīl «1.կրող, 2.բեռնակիր», *խւրսւմ* «ապօրինի» - ḥarām «1.արգելված, 2.սուրբ, 3.ապօրինի»: *ն* - *նւնջւս* «շունչ» - nafas «շունչ, օդ», *խինա* «հինա» - hinā', *հէրան* «զմայլված» - hayrān «զմայլված, հիացած»: *լ* - *լրիեք* «վերմակ» - lihāf, *սրլա/սրլս* «զամբյուղ» - salla, *հւնլ* «վիճակ»- ḥāl «վիճակ, իրավիճակ»: *յ* - *յւննի* «այսինքն» - ya'nī, *հէրան* «զմայլված» - hayrān «զմայլված, հիացած», *հւնլվան* «անասուն» - hayawān և այլն:

Ինչ վերաբերում է *ր* ձայնորդին, ապա թեև այն արտաբերությամբ ավելի մոտ է հայերենի *ռ*-ին, բայց բառամիջում և բառավերջում հիմնականում փոխարինվել է *ր*-ով. *րսւրսւջ* «կողմ» - ʔaraf «1.ծայր, 2.կողմ», *քսւջուր* «հայհոյանք» - kufir, *կուրբան* «մատաղ, գոհ» - qurbān և այլն: Բառասկզբում, սակայն, *ր*-ն միշտ արտահայտվում է *ռ*-ով (քանի որ հայերենին բնորոշ չէ բառասկզբում *ր*-ի առկայությունը), անկախ նրանից՝ փոխառյալ բառը գործածվում է *ը* ձայնավորային հենարանով, ինչպես՝ *ըռաջ* «սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան» - raff «դարակ», *ըռուր* «դռոշար» - rubb (Վանի խոսվածք), *հ* հավելականով՝ *հըռուր* (Վանի խոսվածք, գյուղ Լեսկ), թե առանց վերջինների՝ *ռուս/բ*, *ռըհան* (Շատախի, Մոկսի խոսվածքներ): Բառամիջում *ր*-ն երբեմն արտահայտվում է *ռ*-ով: Օր.՝ *կուռան* «Ղուրան» - qurān:

Արաբերենի երկշրթնային *w* ձայնորդը փոխարինվել է շրթնատանային *ւ*/բաղաձայնով՝ *վախտ* «ժամանակ» - waqt, *դսւվսթ* «հրավեր» - da'ūa, *հավալա* «փոխանցում» - ḥawāla «1.գումարային փոխանցում, 2.չեկ» և այլն:

Հնչարտաբերական հատկանիշներով հայերենի համապատասխան բաղաձայններին նման բաղաձայններից գատ արաբերենն ունի նաև որոշ

<sup>416</sup>Վանի բարբառի որոշ խոսվածքներում փոխառյալ այս բառը գործածվում է նաև *հարիք* (Վանի խոսվածք, Քոեր), *կնրիպ* (Շատախի խոսվածք, Արմշատ) տարբերակներով, *կնրէք* (Մոկսի խոսվածք, Մամոտանց) տարբերակներով:

յուրահատկություններով առանձնացող հնչյուններ: Դրանցից *ժ* և *է* (արտաբերմամբ նման են անգլերենի *ձ* ձայնեղ *th-ին* [ð], օր.՝ *this* «այս» և խուլ *th-ին* [θ], օր.՝ *thing* «իր, առարկա») բաղաձայնները փոխառյալ բառերում, որքանով կարողացանք պարզել, չեն հանդիպում: Այդ բաղաձայնների գործառնության հաճախականությունն արաբերենում ևս շատ ցածր է:

Ուշագրավ է արաբերենի *h* խոչակային խուլ շփականի դրսևորումը փոխառյալ բառերում. դրանց մի մասում այն փոխարինվել է հայերենի կոկորդային խուլ *h* շփականով և գործածվում է միայն բառասկզբում. *հսւզրր* «պատրաստ» - *hādir* «1.ներկա, 2.պատրաստ», *հսւլ/հալ* «վիճակ» - *hāl*, *հսւխ* «իրավունք»-*hāq*, *հսւցի* «մահտեսի» - *hājī* «ուխտավոր, ուխտագնաց», *հսւրսւրսւթ* «տաքություն, ջերմություն» - *harāra*, *հսւփս* «բանտ» - *habs* «բանտ, զնդան», *հավալա* «փոխանցում» - *hawāla*, *հսւրիֆ* «անարժեք մարդ» - *harif* և այլն: Հ. Աճառյանը նշում է, որ այն փոխառությունները, որոնք պահում են նախաձայն *h-ն*, կատարվել են թուրքական տիրապետության շրջանում և թուրքերենի միջոցով են անցել Վանի բարբառին<sup>417</sup>:

Փոխառությունների մյուս խմբում բառի բոլոր դիրքերում տեղի է ունենում *h>խ* հնչյունափոխություն. *խսւրսւմ* «ապօրինի» - *harām*, *խասարաթ* «կարոտ» - *hasra*, *խսւլալ* «օրինական» - *halal* «թույլատրված, օրինական», *խէ-թիս* «բժիշկ» - *hakīm* «1.իմաստուն, 2.բժիշկ», *խինս* «հինս» - *hinnā'*, *լրխեք/լրխիվ* «վերմակ» - *lihāf*, *թըզբէխ* «համրիչ» - *tasbīh*, *կադախ* «ջուր խմելու կավե, պղնձյա գավաթ» - *qadah* և այլն: Ինչպես նշեցինք, Վանի բարբառում բառի բոլոր դիրքերում *h-ն* գերազանցապես հնչյունափոխվում է *խ-ի*<sup>418</sup>, օր.՝ *հայ>խայ*, *մահ>մախ*, *հայելի>խայլի* և այլն: Ըստ Հ.Աճառյանի՝ *h>խ* հնչյունափոխությունը բավականին հին է և Գ.Մագիստրոսի վկայությամբ՝ գոյություն ուներ դեռևս իր օրոք՝ 11-րդ դարում, և անշուշտ ավելի հին է:<sup>419</sup> Հեղինակը գտնում է, որ լեզվական այս երևույթը տեղի է ունեցել արաբների արշավանքից հետո և թուրքերի տիրապետությունից (ԺԱ դար) ավելի առաջ, ուստի այս շրջանին է վերագրում այն փոխառությունները, որոնցում տեղի է ունեցել *h>խ* հնչյունափոխություն<sup>420</sup>:

Այսինքն՝ ելնելով հնչյունական վերոնշյալ օրենքի գործառնման ժամանակագրական սահմաններից՝ կարելի է արաբերեն փոխառյալ բառաշերտում առանձնացնել փոխառությունների կատարման առնվազն երկու ժամանակաշրջան:

Ուշագրավ է, որ համեմատաբար ավելի շատ են *h* հնչույթ ունեցող փոխառյալ բառերը, մինչդեռ արտաբերական հատկանիշներով հայերենի *h-*

<sup>417</sup> Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 67:

<sup>418</sup> Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 64, Մ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 50:

<sup>419</sup> տե՛ս Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, Ե., 1951, էջ 383:

<sup>420</sup> Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 67:

ին ավելի մոտ հ հնչյութի առկայությամբ փոխառությունները նկատելիորեն սակավաթիվ են:

Արաբերենին հատուկ *ṣ*, *ẓ*, *ṭ*, *ḍ* ուժգին արտաբերման՝ էմֆատիկ բաղաձայնները փոխառյալ բառերում հիմնականում փոխարինվել են արտաբերական մեկ-երկու հատկանիշով իրենց մոտ հայերենի համապատասխան բաղաձայններին, այսինքն՝ գործածվել են առանց ուժգնության հատկանշի պահպանման. *ṣ* - **ղասար** «մսագործ» - qaṣṣab, *ẓ* - **զուլում** «1.մեծ փորձանք, 2. խիստ չար, դաժան» - ẓulm, **զալլըմ** «անգութ, բռնակալ» - ẓalim «1.դաժան, անարդար, 2.բռնապետ», *ṭ* - **թյրնիֆ** «կողմ» - ṭaraf «1.ծայր, 2.կողմ», **թյնֆայ** «շատ փոքր երեխա» - ṭifl «մանուկ», **ֆրուսր** «նախաճաշ» - fuṣṣr, **շիրիս** «կանեփի թելից ճուպան» - šarīṭ «ժապավեն, քող»: ժ-ն, որպես կանոն, հնչյունափոխվում է *q*-ի, թեև հնչարտաբերմամբ ավելի մոտ է հայերենի *ḡ*-ին. **հյւզրր** «պատրաստ» - ḥādir «1.ընթացիկ, 2. պատրաստ», **սյվուզ** «ավագան» - ḥawḍ l և այլն: Այս բաղաձայններ ունեցող փոխառյալ բառերը, սակայն, բավական սակավաթիվ են:

Ինչ վերաբերում է հնչարտաբերմամբ արաբերենի ամենայուրահատուկ բաղաձայնին՝ խոր հետնաքիմքային խուլ հպական *q*-ին, ապա Վանի տարածքային տարբերակների հետազոտողներն իրենց ուսումնասիրություններում չեն նշում փոխառյալ բառերում վերջինիս պահպանման մասին: Արաբախոս տարածքների հայերեն խոսվածքներում (Անտիոքի, Կիլիկիայի), սակայն, այն ունի արաբերենին մոտ արտասանություն և տառադարձվում է խուլ *q̣*-ով կամ ձայնեղ *q̣̇* (*ḡ*) -ով<sup>421</sup>, իսկ հայերենի սյուս բարբառային միավորներում հիմնականում հնչյունափոխվում է *q̣*, *ḡ*, երբեմն՝ *ju* բաղաձայնների: Վանի բարբառում *q*-ն մեծ մասամբ հնչյունափոխվում է խուլ հպական *q̣*-ի. **կյնիդ** «արձանագրություն» - qayd, **հալկա** «ողակ» - halqa, **կնզն** «փորձանք» - qaḍā', **կասար** «մսավաճառ» - qaṣṣab, **կավի** «ամուր, ուժեղ» - qawī, **կնդնի** «գավաթ» - qadah, **կյրսր** «որոշում» - qarār և այլն: Բառամիջում և բառավերջում *q>ju* հնչյունափոխություն առկա է մի քանի բառերում. **հյնju** «իրավունք» - ḥaqq, **խալju** «ժողովուրդ, մարդիկ» - xalq «1.արարում, ստեղծում, 2. մարդիկ, ժողովուրդ», **վախս** «ժամանակ» - waqt փոխառյալ բառերում: Իսկ **բսյլն** «բակլա» - baqla բառում տեղի է ունեցել *q>j* անցում: Մեկ այլ՝ **աշրդ** «աշուղ, արևելյան բանաստեղծ, երգիչ»<sup>422</sup> բառում առկա է *q>ḡ* հնչյունափոխություն՝ արաբ.՝ ‘āṣīq «1.սիրելի, 2.սիրեցյալ» և այլն:

ՀԲԱ ծրագրով<sup>423</sup> գրառված Վանի բարբառի մի շարք ձեռագիր նյութերում, այնուամենայնիվ, գտնում ենք *q*-ի պահպանմամբ արտաբերվող և

<sup>421</sup>տե՛ս **Յ.Չոլաքեան, Քեսապի բարբառը**, Ե., 2009, էջ 24, 212-214, **Հ.Աճառյան, Քննություն Կիլիկիայի բարբառի**, Ե., 2003:

<sup>422</sup> Այս բառիմաստը Վանի բարբառին անցել է թուրքերենի միջոցով:

<sup>423</sup> **Հայերենի բարբառագիտական աստվաթի նյութերի հավաքման ծրագիր**, Ե., 1977:

համապատասխան նշումով փոխառյալ բառեր՝ *կայիմ* «ամուր» - qā'im, *կայիշ* «գոտի» - qā'iš «ամրագոտի, կաշվե գոտի», *կօրոշկուրուշ* «մետաղադրամ» - qurūš (Վանի խոսվածքի Մարմետի, Պողանցի, Հագարենի ենթախոսվածքներ, Շատախի խոսվածքի Արմշատի, Կվերսի ենթախոսվածքներ, Մոկսի խոսվածքի Մամոտանց գյուղախմբի ենթախոսվածք): Երբեմն միևնույն փոխառյալ բառը տարբեր ենթախոսվածքներում գ-ն արտահայտում է տարբեր կերպ, օր.՝ *դասար* (Վան, Գյուզակ), *կասար* (Վան, Կոխպանց), *դասար* (Վան, Քոեր), *կ'կասար* (Մոկս, Մամոտանց) և այլն:

Արաբերենի՝ (համզա) և՛ (այն) բաղաձայնները արտացոլվել են հետևյալ կերպ: Խուլ հպական՝-ն բառասկզբում և բառավերջում չի պահպանվել, օր.՝ *ասրլ* «բուն, բնիկ» - 'asl «բուն, ծագում, արմատ», *կսսիմ* «փորձանք» - qadā', *խինա* «հինա» - hinna': Բառամիջում՝ միջձայնավորային դիրքում, յ կիսաձայն է երևան գալիս, որը հավանաբար ոչ թե '>յ հնչյունափոխություն է, այլ՝ համզայի անկումից հետո ձայնավորների միջև առաջացած հորանջից խուսափելու համար գործածվող հնչյուն, ինչպես՝ *խային* «չարագործ» - xā'in «դավաճան», *կայիլ* «համաձայն» - qā'il և այլն:

Չայնեղ շփական՝ (այն)-ը ևս փոխառություններում չի պահպանվել. *ազիզ* «սուրբ, տոն (օր)» - 'aziz «փառավոր, սուրբ, մաքուր», *սնիթ* «սովորություն» - 'ada, *թսիլ* «գինվորական վարժություն» - ta'im «ուսուցանում»:

Ինչ վերաբերում է փոխառյալ բառերի միջոցով արաբերենի ձայնավորային ենթահամակարգի դրսևորմանը, ապա նախ նշենք, որ գրական արաբերենի ձայնավորները երեքն են՝ իրենց կարճ ու երկար տարբերակներով՝ a, i, u և ā, ī, ū: Արաբերենի բարբառներում առկա են նաև կարճ և երկար o, ō, e, ē ձայնավորներ, ինչպես նաև կարճ օ հնչյունը: Արաբերենում ձայնավորների դրսևորումը հաճախ կախված է հնչաշղթայում նրանց գրավված դիրքից, այսինքն՝ հարևան բաղաձայնների բնույթից:

Արաբերեն փոխառությունների ձայնավորների արտահայտումը հայերեն խնդրո առարկա բարբառում կարելի է խմբավորել որոշ ընդհանուր հատկանիշներով.

ա) Կարճ a, i, u ձայնավորները հնչյունափոխության չեն ենթարկվել և փոխառյալ մի շարք ձևերում արտացոլվել են որպես այդպիսիք: Օր.՝ *խալիլ* «ժողովուրդ, մարդիկ» - xalq, *թաքրիթ* «կառավարական ծանուցազիթ» - taqīr, *հալկա* «ողակ» - halqa, *կայիլ* «համաձայն» - qā'il, *խային* «չարագործ» - xā'in, *սվուզ* «ավազան» - ḥawūz:

Երկար ā, ī, ū ձայնավորները փոխառյալ բառերում վերածվել են կարճերի՝ առանց որակական փոփոխության՝ *մալ* «պարանք» - māl «1. Հարստություն, 2.ունեցվածք», *ազիզ* «սուրբ, տոն (օր)» - 'aziz, *մախսուս* «հատուկ» - maxšūš:

բ) Արաբերենի a ձայնավորը և՛ գրական, և՛ բարբառային տարբերակներում ունի որոշ չափով առաջնալեզվային, այսինքն՝ քմային արտաբե-

րություն՝ ä, որն արտահայտվել է նաև արաբերեն փոխառյալ բառերում<sup>424</sup>. **հւնփս** «բանտ» - habs «բանտ, գնդան», **հւնխ** «իրավունք» - haqq, **կւնիդ** «արձանագրություն» - qayd, **մւնջիս** «ժողով» և այլն: Փոխառյալ բառերում արաբերենի a ձայնավորի քմայնացում դիտվում է նաև ձայնավորների ներդաշնակության օրենքի գործառնման հետևանքով: Օր.՝ **դւնրւնջւմ** «աստիճան» - daraja, **դւնրւմ** «1.թաղապետական շրջանակ, 2.դափ» - da'ira, **կւնրւմ** «1.մատիտ, 2.ձողիկ» - qalam, **խւնրւր տալ** «հայտնել» - xabar «լուր»:

զ) Ինչպես նշեցինք, ձայնավորներն արաբերենում ենթարկվում են հարևան բաղաձայնների ազդեցությանը, ուստի էմֆատիկ և մի շարք այլ բաղաձայնների ազդեցությամբ i-ն, օրինակ, հաճախ արտասանվում է կոշտ, այսինքն՝ ռուսերենի ы ձայնավորի նման<sup>425</sup>: Գուցե հենց արաբերենում առկա այս յուրահատկությունն է պատճառը, որ երկար և կարճ i ձայնավորը հայերենի վերոնշյալ խոսվածքներ թափանցած բավական թվով փոխառություններում հանդես է գալիս հնչյունավորված ձևով՝ *i, ī > p. հւնզրր* «պատրաստ» - hādir «1.ներկա, 2.պատրաստ», **խաթրր** «1.ակնաճանք, 2.որպիսության կենաց» - xātir, **կալրր** «կաղապար (կոշիկի, գլխարկի)» - qālib և այլն:

դ) Արաբերենի u ձայնավորի հնչյունափոխությունը հաճախ դրսևորվում է քմայնացմամբ. **հւնքլ** «վճիռ» - hukm «1.իշխանություն, 2.կարգ, 3.որոշում, վճիռ» **հւնցուլ** «հարձակում» - hujūm «հարձակում, գրոհ»:

Ամփոփելով Վանի բարբառում փոխառությունների միջոցով արաբերենի հնչյունական համակարգի արտացոլման առանձնահատկությունները՝ կարելի է նշել, որ արաբական փոխառյալ բառերը մասամբ ենթարկվում են խնդրո առարկա բարբառի հնչյունական օրենքներին, իսկ մասամբ էլ՝ պահպանում իրենց յուրահատկությունները: Մասնավորապես, արաբերենի ձայնեղ հպական և կիսաշփական բաղաձայնները, չենթարկվելով Վանի բարբառին բնորոշ վերոնշյալ բաղաձայնների իլացման հնչյունական օրենքին, փոխառյալ բառերում պահպանում են իրենց ձայնաբանական հատկանիշները: Դրանից կարելի է եզրակացնել, որ այդ փոխառությունները հիմնականում կատարվել են վերոնշյալ օրենքի գործառնման դադարելուց հետո: Ինչ վերաբերում է երկու լեզուների շփական և ձայնորդ բաղաձայններին, ապա դրանք ընդհանրություններ են ցուցաբերում. արաբերենի շփական բաղաձայնների շարքը փոխառյալ բառերում գրեթե նույնությամբ է արտահայտվել: Միակ բացառությունը ց՝ շփականն է, որը, Վանի բարբառի հնչյունական օրենքի համաձայն, բառասկզբում չի գործառնվում և հնչյունավորվում է *չ*-ի: Իսկ *ր* ձայնորդը, արտաբերությամբ մոտ լինելով հայերենի *ռ*-ին, ավելի

<sup>424</sup> 2. Աճառյանը գտնում է, որ Վանի բարբառում լայնորեն կիրառվող *ւմ* ձայնավորն ինքնին առաջացած ձայնական երևույթ է, այլ ոչ թե՝ օտար (օր.՝ թուրքերեն) փոխառություն, բայց դրանով չի ժխտում, որ որոշ բառեր իրենց *ւմ* ձայնավորով փոխառյալ են օտար լեզուներից (տե՛ս 2. Աճառյան, *նշվ. աշխ.*, էջ 25-26):

<sup>425</sup> Кузьмин А., *Учебник арабского языка*, М., 2001, ст. 9.

հաճախ, սակայն, արտահայտվում է *ɟ*-ով: Արաբերենի *h* շփականը փոխառյալ բառերում մասամբ արտահայտվում է *h*-ով, իսկ ավելի հաճախ, ինչպես դա հատուկ է Վանի բարբառին, հնչյունափոխվում է *h*-ի. վերջին խմբին պատկանում է համեմատաբար ավելի հին փոխառյալ բառաշերտը: Էմֆատիկ բաղաձայնաշարքը փոխառյալ բառերում արտացոլվել է առանց ուժգնության հատկանշի պահպանման: Վ բաղաձայնի պարագայում, որպես կանոն, առկա է նաև Վ > Գ հնչյունափոխություն, որը, սակայն, Վանի բարբառին հատուկ հնչյունափոխական երևույթ չէ: Անմիօրինակ դրսևորում ունի *g* բաղաձայնը. այն փոխառյալ բառերում հիմնականում հանդիպում է հնչյունափոխված, իսկ առանձին վկայությունների համաձայն՝ կան նաև այս բաղաձայնի պահպանման օրինակներ: Չայնավորների պարագայում բնութագրականը երկար ձայնավորների գործառումն է առանց տևականության հատկանշի պահպանման: Չայնավորների հնչյունափոխությունները հիմնականում փոխատու լեզվին հատուկ հնչյունական օրենքների գործառման հետևանք են:

Sona Mikayelyan – The Reflection of Arabic Sound System in the Dialect of Van.-

In this article the peculiarities of expression of Arabic consonantal and vowel subsystems, resulting from borrowings in the dialect of Van, are examined. Arabic consonants are partially identified with the respective consonants of the Van dialect, and partially retain their peculiar features. The first group includes most of the fricative and sonorous consonants and the second group - mainly vocal occlusive and affricate consonants. The vowels of the source language mostly have not undergone sound changes: long vowels are expressed transformed into short ones without the change of quality.

Микаелян Сона – Отражение звуковой системы арабского языка на Ванском диалекте. - В статье на примере заимствований исследуются особенности проявления согласных и гласных арабского языка в Ванском диалекте. Согласные арабского языка отчасти отождествляются со соответствующими согласными Ванского диалекта, а отчасти же – сохраняют свои особенности. Первая группа включает большую часть фрикативных и сонорных согласных, а вторая группа - в основном збонких смычных и аффрикаты. Гласные языка-источника в основном не подверглись звукоизменению: долгие гласные трансформировались в краткие – без качественного изменения.

**ՄՇՈ ԲԱՐԲԱՌԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ  
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ\***  
(Հանրալեզվաբանական քննություն)

Կոտայքի մարզի խոսվածքների արդի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի պատմական և ժամանակակից բարբառագիտության համար, քանի որ տարածքը գրեթե չուսումնասիրված է և, ինչպես կտեսնենք, հարուստ է հայերենի տարբեր բարբառները ներկայացնող խոսվածքներով: Կոտայքի մարզի բնակավայրերը վաթսուկոթն<sup>426</sup> են, որոնցից վաթսուրը գյուղական համայնքներ են, իսկ յոթը՝ քաղաքային: Մարզը լեռնային է և ՀՀ միակ մարզն է, որը պետական սահման չունի: Այն սահմանակից է **Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի** մարզերին և մայրաքաղաք **Երևանին**\*: Գտնվելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում՝ տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին ու միջին ավազանները և Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Մարզը հյուսիսից սահմանափակվում է Գուրանասարի, հյուսիս-արևելքից՝ Հատիսի լեռնազանգվածներով, իսկ հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Արարատյան դաշտին:

Ինչպես ցույց են տալիս Կոտայքի մարզի բնակավայրերում ապրող ազգաբնակչության սոցիալ-պատմական տվյալները, մարզի բնակչությունը, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության մյուս մարզերի, գործող լեզվական համակարգերով անհամասեռ է: Մարզի խոսվածքների այսպիսի բնութագիրը հանրալեզվաբանական տվյալներով տարակուսանք չի առաջացնում: Կոտայքի բնակավայրերից քչերն են, որ ներկայանում են բարբառային և խոսակցական միևնույն որակներով: Բնակավայրերի մեծ մասում գործում են բարբառային ու խոսակցական տարբեր օրինաչափություններ:

Մարզի բնակչության հիմնական մասը եկվորներ են: Սակավ են այն բնակավայրերը, որոնց բնակիչները տեղաբնիկներ են: 19-րդ դարի սկզբներից սկսած՝ այս տարածքում բնակություն են հաստատել գաղթականների հոծ

\* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությամբ SC5 15T-6B101 գիտական թեմայի շրջանակներում:

<sup>426</sup> Ըստ ՀՀ 2001 թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառման տրվյալների՝ Կոտայքի մարզն ունի 283.005 բնակիչ, իսկ ըստ Կոտայքի մարզի պաշտոնական կայքի տվյալների՝ այս պահի դրությամբ մարզն ունի 303 013 բնակիչ (<http://kotayk.mtaes.am/about-communities/>):

\* Ըստ վերջին վարչատարածքային բաժանման՝ Կոտայքի մարզն այսօր ընդգրկում է Հրազդանի, Աբովյանի և Նաիրիի նախկին վարչական շրջանները: Վարչատարածքային միավորը զբաղեցնում է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Կոտայք, Մազազ, Նիզ, Վարաժ-նունիք, Արագածոտն գավառների առանձին մասերը:



խմբեր Պատմական Հայաստանի տարբեր հատվածներից՝ լեզվական առումներ կայացնելով հայերենի բարբառային տարբեր միավորներ: Գաղթականների մեջ հատկապես մեծ թիվ են կազմել **Խոյից, Մակուից, Բայազետից, Մուշից, Ալաշկերտից** գաղթածները:

Մարզում կան բարբառային տարբեր որակներ: Բնակկազմի լեզվական այսպիսի հիմք է, որ մարզում ընդունենք բարբառախմբերի գոյությունը: Ըստ համաժամանակյա փաստերի՝ այնտեղ տարբերակվում են **Խոյի** բարբառը, **Բայազետի** բարբառը, **Արարատյան** բարբառը, **Մշո** բարբառը և **Մակուի** խոսվածքը: Պատմականորեն համագոյակից բարբառները, հիմնականում լինելով իրենց տարածական բուն հիմքերը կորցրած, նոր կենսամիջավայրում բնականաբար ենթարկվել են լեզվական տարաբնույթ օրինաչափ փոփոխությունների:

Կոտայքի մարզում հայերենի բարբառների արևմտյան խմբակցության, Կը ճյուղի Մշո բարբառը ներկայացնող խոսվածքների լեզվական առանձնահատկությունների ուսումնասիրությունները կարևոր են արդի վիճակում: Դրանց նշանակությունը ոչ միայն տարածքային լեզվաբանության մեջ կարող է անհրաժեշտ լինել, այլև հայերենի դեպքում վերականգնողական նշանակություն ունի: Կոտայքի մարզի խոսվածքներում գործող լեզվական օրինաչափություններով ու յուրահատկություններով հնարավոր է վերականգնել պատմական Հայաստանի բարբառների լեզվական համակարգերը և այն վիճակը, որ նրանք ունեցել են իրենց բուն հայրենիքում՝ նախքան Արևելյան Հայաստան գաղթելը:

Ինչպես նշել ենք, մարզի բոլոր բարբառների, այդ թվում Մշո շերտը ներկայացնող խոսվածքների վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություն տակավին չկա: Նմանատիպ ուսումնասիրություն կատարելու համար երկու հիմնական աղբյուր կարելի է առանձնացնել՝ ա) Համաժամանակյա կենդանի խոսքը, բ) ՀՀ ԳԱԱ Ջր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի ՀԲԱ-ի ծրագրով լրացված մի շարք բնակավայրերի լեզվական տվյալները (տեւերը 76, 108, 159, 229, 236, 238, 239, 275, 276, 281, 299):

Կոտայքի մարզում Մշո բարբառի խոսվածքների ու ենթախոսվածքների առկայությունը հիմնավորվում են նախևառաջ լեզվական գործող օրինաչափություններով: Կոտայքի խոսվածքներում բազմաթիվ են **Կը** ճյուղին հատուկ լեզվական օրինաչափությունները և յուրահատկությունները: Օրինակ՝ շնչեղ ձայնեղների առկայությունը բառակզբի դիրքում, բառամիջի և բառավերջի դիրքերում շնչեղ խուլերի ապաշնչեղացած գործառումը, բառամիջի փակ վանկում, շեշտի տակ ի հայտ եկող **աօ** և **եե** երկբարբառների առկայությունը, բառակզբի դիրքում ձայնավորներից առաջ ձայնեղ հազագի գործառումը, **կը** եղանակիչով ներկան ժամանակը կազմելը, **ը** հոդի բացակայությունը, ոչ առնմանական հիս անցումը և այլն:

Բացի լեզվական փաստերից կարևոր նշանակություն ունեն նաև ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության ենթակայությամբ գործող Հայաստանի ազգային արխիվի մարդահամարի տվյալները: 1831 թ.

մարդահամարի տվյալները, որոնք հայտնի են «Գլխակայի մարդահամար» անվանումով, գրեթե ամբողջապես հաստատում են Մշո շերտի առկայությունը Կոտայքի մարզում (ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 83, գործ 88, գործ 89, գործ 93)\*:

Մշո բարբառի ու նրա խոսվածքների տարածման սահմանները Կոտայքի մարզում խառը պատկեր են ներկայացնում: Դրանց սոցիալ-պատմական և հանրալեզվաբանական յուրահատկությունները որոշակիորեն ներկայացնելու, Կոտայքի մարզում Մշո շերտի խոսվածքների բաշխվածությունը, տարածման սահմանները, մերձավորությունն ու հեռավորությունը հստակեցնելու նպատակով ստորև կկատարենք որոշակի խմբավորումներ:

Ըստ Գևորգ Ջահուկյանի հայերենի բարբառների բազմահատկանիշվիճակագրական դասակարգման՝ Մշո բարբառը գտնվում է Մուշ-Տիգրանակերտի կամ հարավ-կենտրոնական բարբառախմբում և ունի ինը խոսվածք, ինչպիսիք են՝ **Բաղեշը, Խլաթը, Արծկեն, Արճեշը, Մանագկերտը, Մուշը, Բուլանըղը, Խնուսը, Ալաշկերտը**<sup>427</sup>: Հաջորդիվ ներկայացվելիք խմբավորման մեջ ցույց կտանք, թե Կոտայքի մարզում հանգրվանած մշեցիները Մշո բարբառի որ խոսվածքի ներկայացուցիչներ են: Այս խմբավորումը կատարելիս հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ Մշո բարբառը հայ ժողովրդի պատմական ճակատագրի բերումով մասամբ տեղահանված, մասամբ ոչնչացված բարբառների թվին է պատկանում<sup>428</sup>: Հետազոտության արդյունքները վկայում են, որ Կոտայքի մարզում Մշո բարբառով բնակեցված բնակավայրերը **խառը** տիպի են, այսինքն մինևույն բնակավայրում ապրում են Մշո բարբառի տարբեր խոսվածքներ ներկայացնող բարբառախոսներ և, բնականաբար, պատմական հայրենիքում ապրել են տարբեր արեալներում: Այդ բնակավայրերն են՝ **Աբովյան (Մուշ, Ալաշկերտ, Մանագկերտ, Բուլանըղ), Բյուրեղավան (Մուշ, Ալաշկերտ, Մանագկերտ, Բուլանըղ), Եղվարդ (Մուշ, Ալաշկերտ, Մանագկերտ, Բուլանըղ), Ծաղկածոր (Մուշ, Ալաշկերտ), Հրազդան (Մուշ, Ալաշկերտ, Մանագկերտ, Բուլանըղ), Լոր Հաճն (Մուշ, Ալաշկերտ, Մանագկերտ, Բուլանըղ), Չարենցավան (Մուշ, Ալաշկերտ, Մանագկերտ, Բուլանըղ), Արգել (Մուշ, Ալաշկերտ), Բուժական (Մուշ, Ալաշկերտ), Գետամեջ (Մուշ, Մա-**

\* Նշենք, որ մարդահամարի այս տվյալներն են հետագա բոլոր ուսումնասիրությունների ու տեղեկատվական աղբյուրների համար հիմք հանդիսացել հստակեցնել Կոտայքի մարզի բնակավայրերի եկվոր բնակկազմի նախկինում ապրած բնակավայրերի տեղը, որն էլ հիմք է հանդիսանում որոշել նրանց տարածքային (այդ թվում՝ բարբառային) պատկանելությունը Արևմտյան Հայաստանում, ինչպիսիք են ՀՀ Սովետական հանրազգիտարան (հատորներ՝ 1-13, Ե., 1974-1987), Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը (հատորներ՝ 1-5, Ե., 1986-2001) և Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարանը (ՀՀ կառավարության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, Գեոդեզիայի և Քարտեզագրության կենտրոն ՊՈԱԿ, Ե., 2008) աշխատությունները և այլն:

<sup>427</sup> Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 134:

<sup>428</sup> Մ. Սևրսյան, *Հայոց Մեծ Եղեռնը հայերենի մի շարք բարբառների վերացման ու տարածական հիմքերի խախտման պատճառ*, Նայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողով, 7-9 հոկտեմբեր, Ե., 2015, էջ 361:

*նագլներտ, Արճես), Զովունի (Մուշ, Ալաշկերտ, Մանագլներտ, Բուլանըղ), Զորավան (Մուշ, Ալաշկերտ, Մանագլներտ), Կաթնաղբյուր (Մուշ, Խնուս), Կապուտան (Մուշ, Արծկե), Սրգաշեն (Մուշ, Ալաշկերտ, Մանագլներտ, Բուլանըղ), Լոր Երզնկա (Մուշ, Ալաշկերտ, Մանագլներտ, Բուլանըղ), Պոռոջան (Մուշ, Ալաշկերտ), Զրվեժ (Մուշ, Ալաշկերտ, Մանագլներտ), Սուլակ (Մուշ, Ալաշկերտ), Սևաբերդ (Մուշ, Ալաշկերտ, Մանագլներտ, Բուլանըղ), Քանաքեռավան (Մուշ, Ալաշկերտ), Քասախ (Մուշ, Բուլանուխ, Խնուս, Ալաշկերտ):*

Խոսվածքների խառը տիպին քանակով հաջորդում են այն խոսվածքները, որոնց կրողները բացառապես Մշո բարբառի Մշո խոսվածքի ներկայացուցիչներ են: Դրանք են **Զովաշենի, Թեղենիքի, Կարենիսի, Կոտայքի, Սարալանջի, Արզականի, Զառի** խոսվածքները: **Աղավնաձոր** (Ալաշկերտի Ղազի գյուղ), **Զորաղբյուրի, Զրաբերի, Վերին Պտղնիի, Գեղաշենի** համայնքներում գործում է Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքը, **Ողջաբերդի** համայնքում գործում է Արծկեի խոսվածքը, **Արագյուղ** համայնքում՝ Արճեշի խոսվածքը, **Բալահովիտի** համայնքում՝ Բուլանըղի խոսվածքը, իսկ **Գեղաղիքի** համայնքում՝ Խնուսի խոսվածքը: Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, Կոտայքի մարզի բնակավայրերում Մշո բարբառի **Բաղեշի, Խլաթի, Մանագլերտի** խոսվածքները կրողներ չկան:

Մյուս խմբավորումը, որ կատարել ենք, վերաբերում է Կոտայքի մարզում Մշո բարբառի տարածման սահմանները որոշելուն և հստակեցնելուն: Այսպիսի խմբավորմամբ կորոշվեն Մշո բարբառի հարաբերություններն այլ բարբառների հետ: Կարելի է առանձնացնել խոսվածքների հիմնականում երեք խումբ.

ա) Համասեռ լեզվական հատկանիշներով ու որակներով ներկայանալի խոսվածքներ: Այդպիսին են **Աղավնաձորի, Սևաբերդի, Կարենիսի, Սուլակի** խոսվածքները: Վերջինները միավորվում են այն միատարրությամբ, որ պատմականորեն ներկայացնում են Մշո բարբառը, նրա տարբեր խոսվածքներն ու ենթախոսվածքները:

բ) Անհամասեռ լեզվական հատկանիշներով ու որակներով ներկայանալի խոսվածքներ: Այսպիսի խմբավորման մեջ ներառվում են այն խոսվածքները, երբ Մշո բարբառը գոյակցում է այլ բարբառներ ներկայացնող խոսվածքների հետ համատեղ: Ընդ որում, այս բնակավայրերում խոսվածքակիրների քանակը հավասարագոր է, մեկը մյուսի նկատմամբ գերակշռող չեն: Այդպիսին են **Արագյուղի, Բալահովիտի, Բուժականի, Գեղաշենի, Գեղաղիքի, Գետամեջի, Զառի, Զովաշենի, Զորավանի, Կապուտանի, Կաթնաղբյուրի, Կոտայքի, Սրգաշենի, Լոր Երզնկայի, Թեղենիքի, Զորաղբյուրի, Զրվեժի, Զրաբերի, Պոռոջանի, Սարալանջի, Վերին Պտղնիի, Քասախի** խոսվածքները:

դ) Խոսվածքներ, որոնց կրողները հիմնականում ներկայացնում են այլ բարբառներ ու ժամանակակից խոսակցականներ, սակայն նրանցում կան սակավաթիվ մշեցիներ: Այսպիսի խմբավորում առանձնացնելը կարևոր է հատկապես քաղաքային համայնքներում ապրող ազգաբնակչության տվյալները հաշվառելիս: Մարզի քաղաքների՝ **Հրազդանի, Աբովյանի, Զարենցա-**

**վանի, Բյուրեղավանի, Նոր Հաճնի, Սաղկաձորի, Եղվարդի** խոսվածքներում Մշո բարբառը գերակշռություն չի կազմում, այլ որպես առանձին խոսակցական գործում է այլ խոսակցականների հետ միասին: Ընդ որում, այս բնակավայրերի մշեցիները եկել են ՀՀ այն տարածքներից, որտեղ նրանց նախնիները հանգրվանել են վերջին երկու դարերի ընթացքում: Ստացվում է, որ նրանք երկակի անգամ են կորցրել իրենց տարածական հիմքերը. իրենց նախնիները պատմական հայրենիքում, իսկ նրանք՝ ՀՀ-ում: Նկատենք, որ այս երևույթը նկատել ենք նաև առանձին գյուղական համայնքներում, ինչպիսիք են՝ **Քանաքեռավանք, Արգելը, Արգականք, Զովունին, Ողջաբերդը, Պռոշյանը**: Այսպիսի լեզվական որակներով ներկայացող խոսվածքները կարելի է կոչել նաև խառը բարբառային ու խոսակցական որակներ ու համակարգեր ունեցող խոսվածքներ, որոնցում հավասարաչափ գործում են առանձին խոսվածքներ, և միայն ժամանակի ընթացում կարող է ձևավորվել միջբարբառային կամ միջխոսվածքային մի նոր որակ: Ինչպես փաստերն են ցույց տալիս, նմանատիպ բնակավայրերում հաղթում է այն բարբառը կամ խոսվածքը, որ թվով գերակշիռ է այլ բարբառների նկատմամբ:

Մեր ունեցած տվյալները թույլ չեն տալիս առանձնացնել խոսվածքների այնպիսի խումբ, որոնց կրողները գերազանցապես մշեցիներ են, իսկ նրանց հետ գոյակցում են սակավաթիվ այլ բարբառախոսներ: Սակայն հավանականությունը մեծ է, որ կան նմանատիպ խոսվածքներ նույնպես, առավել ևս, որ ՀՀ-ում բնակչության տեղաշարժերը վայրից վայր օրինաչափ են տարբեր պատճառաբանություններով:

Ինչպես իրենց տարածական բուն հիմքերը կորցրած բոլոր բարբառների դեպքում է, այնպես էլ Մշո բարբառը ՀՀ-ն և ոչ մի բնակավայրում իր նախնական բուն վիճակն անաղարտորեն չի պահպանել: Մշո բարբառը հնարավորինս չի աղարտվել **Գեղարքունիքի, Շիրակի, Արագածոտնի, Լոռու** մարզերի լեռնային բնակավայրերում, քանի որ լեռնային գոտիներում մեկուսացած լինելը նպաստում է բարբառի պահպանման համար: Կարևորվում է նաև այն հանգամանքը, որ Մշո բարբառի խոսվածքները գտնվում են մեկը մյուսի շրջապատում, և այլ բարբառներից ազդվելու հավանականությունը քջանում է:

Այսպես չէ Կոտայքի մարզի դեպքում: Ի տարբերություն մյուս մարզերի, այստեղ Մշո բարբառի նախնական բուն վիճակը հարաբերականորեն է պահպանված: Վերոնշյալ խմբավորումներից պարզ դարձավ, որ Կոտայքի մարզում Մշո բարբառի խոսվածքները գտնվում են այլ բարբառների շրջապատում, քանակով գերակշռություն չեն կազմում և ամենակարևորը բնակավայրերի մեծ մասում ապրում են այլ բարբառախոսների հետ համատեղ: Այս փաստերը նպաստում են, որ մշեցիները Կոտայքի մարզում աստիճանաբար կորցնեն իրենց բարբառը և ձուլվեն այլ բարբառային միավորների: Հավանականությունը մեծ է, որ նրանց մի մասը կարող են դառնալ գրական լեզվի կրողներ:

Որպես եզրակացություն՝ կարող ենք նշել, որ Կոտայքի մարզի՝ մշեցիներով բնակեցված շատ քիչ բնակավայրերում է, որ այն պահպանվում է: Եթե պահպանվում է, ապա ոչ անաղարտորեն: Ընդհանուր առմամբ Կոտայքի մարզում Մշո բարբառը գտնվում է վերացման ճանապարհին: Այս առումով, մեր վերջին խմբավորմամբ ցույց կտանք, թե Մշո բարբառի խոսվածքները պահպանվածության առումով ինչ վիճակ են ներկայացնում ուսումնասիրվող տարածքում՝ տարբերակելով հետևյալ չորս խմբերը՝

ա) Այնպիսի խոսվածքներ, որոնցում համեմատաբար լավ է պահպանված Մշո բարբառը, ինչպիսիք են՝ **Աղավնաձոր, Բուժական, Գեղաշեն, Գետամեջ, Թեղենիք, Կապուտան, Կարենիս, Ջրաբեր, Մարալանջ, Մուլակ, Սևաբերդ, Քասախ:**

բ) Այնպիսի խոսվածքներ, որոնք վերջին մեկ դարի ընթացքում արդեն անհետացել են, ինչպիսիք են՝ **Արագյուղ, Արզական, Բալահովիտ, Ջորավան, Հրազդան, Ողջաբերդ, Քանաքետավան:** Այս խմբի խոսվածքները կա՛մ ձուլվել են այլ խոսվածքների, կա՛մ գրականացել են:

գ) Այնպիսի խոսվածքներ, որոնք արդեն իսկ անհետացման եզրին են կամ գտնվում են այդ ճանապարհին՝ **Արգել, Գեղադիր, Երզնկա, Զառ, Ջովաշեն, Ծաղկաձոր, Կաթնաղբյուր, Կոտայք, Հորաղբյուր, Մրգաշեն, Նոր Ջովուհի, Ոռոշյան, Վերին Ուտղնի:**

դ) Այնպիսի խոսվածքներ, որոնցում նոր-նոր է տարածվում Մշո բարբառը: Վերջին տասնամյակներում ՀՀ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական պայմանների հետևանքով այլ մարզերում, ինչպես նաև Ջավախքում ապրող բազմաթիվ մշեցիներ բնակություն են հաստատել Կոտայքի մարզի տարբեր բնակավայրերում: Նորեկ մշեցիները հատկապես ապաստանում են քաղաքային համայնքներում: Ներքին այս տեղաշարժերի (միգրացիա) պատճառն այն է, որ Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի կենտրոնում և հարակից է երկրի մայրաքաղաքին: Հետևապես նորեկ մշեցիների համար մասամբ դյուրանում է կենսագործունեություն ապահովելը: Մակայն թիրախային այս խումբը ի գործու չէ միշտ պահպանել բարբառն անաղարտորեն: Հատկապես աճող սերունդը որդեգրում է գրական լեզուն: Մրա հետևանքով նոր տարածում գտնող Մշո բարբառը հարաբերականորեն է կայուն. եկվորները պահպանում են այն, իսկ նրանց սերունդները կա՛մ պահպանում են, կա՛մ ոչ: Այդպիսին են **Աբովյանի, Հրազդանի, Բյուրեղավանի, Նոր Հաճնի, Եղվարդի, Զարենցավանի** խոսվածքները:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ Կոտայքի մարզում Մշո բարբառը գործել է և կա երեսունյոթ՝ և՛ գյուղական, և՛ քաղաքային համայնքներում: Ուսումնասիրված խոսվածքների համար բնութագրական է այն, որ թե՛ գործող, թե՛ արդեն մահացած, թե՛ մահացման ճանապարհին գտնվող խոսվածքների վրա պարզորոշ երևում են Մակուի խոսվածքի լեզվական ազդեցությունները: Մարզի խոսվածքները լրացրած բարբառագետները վկայել են, որ Կոտայքի մարզի գրեթե բոլոր, այդ թվում Մշո բարբառի խոսվածքներն իրենց սկզբնային վիճակը կորցրել են 20-րդ դարի տարբեր ժամանակահատված-

ներում: Ստեղծված բարբառային վիճակի պատճառը, թերևս, այն է, որ Կոտայքի մարզի խոսվածքների հիմնական մասն անցած երկու դարերի ընթացքում են ձևավորվել այդ ընթացքում կրելով բազմապիսի փոփոխություններ. կորցրել են իրենց բուն վիճակը, մահացել են կամ գտնվում են այդ ճանապարհին, իսկ նոր սերունդը, սկսած 20-րդ դարից, խոսում է գրական լեզվին մոտ գտնվող մի նոր խոսվածքով:

Կոտայքի մարզում Մշո բարբառի խոսվածքների ներկա վիճակը, նրանց վերացումը և այդ ճանապարհին գտնվելը հիմնականում պատճառաբանվում են երկու հանգամանքով՝ ա) այլ բարբառների միջավայրում գտնվելը, բ) հայերենի գրախոսակցական լեզվի կենտրոնին Երևանին մոտ լինելը: Նշված երկու հանգամանքները վիճարկման ենթակա չեն: Դրանք հիմնավորվում են ՀՀ այլ մարզերում տիրող լեզվավիճակը ներկայացնող տվյալների համեմատությամբ:

Mkrtychyan Garik- The expansion borders of the dialect of moush in kotayk region. – The results of the investigation show that the dialect of Moush in Kotyak region tends to disappear. According to the carried out research the dialect of Moush is relatively preserved in rural communities. Statistical data show that in Kotayk region the speakers of Moush dialect mainly live together with other dialect speakers and they are not many in number. This is the main reason why the dialect of Moush hasn't been preserved purely in Kotayk region.

Мкртчян Гарик- Границы распространения Мушского диалекта в области Котайк Республики Армения. -Результаты исследования показывают, что в области Котайк Мушский диалект постепенно вымирает. Согласно исследованиям, Мушский диалект относительно сохранился в деревенских общинах. Статистические данные показывают, что в области Котайк малочисленные носители Мушского диалекта в основном находятся в окружении носителей других диалектов, что и является главной причиной исчезновения диалекта.

**ԴԱՐՉՎԱԾԱՑԻՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՄԱՆՇԱՑԻՆ  
ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Վ. ԹՈԹՈՎԵՆՑԻ «ԲԱՑ ԿԱՊՈՒՑՑ ԾԱՂԻԿՆԵՐ»  
ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ**

Յուրաքանչյուր տաղանդավոր գրող անհատականություն է դրսևորում իր խոսքարվեստում լեզվական հնարավորություններից արհեստավարժորեն օգտվելու կարողությամբ, կերպարներ և իրավիճակներ կերտելու, լեզվական նոր միավորներ ստեղծելու հմտությամբ: «Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը»<sup>429</sup>: Այս առումով արևմտահայ գրականության մեջ իր ուրույն տեղն ունի հայ արձակագիր, դրամատուրգ ու բանաստեղծ Վահան Թոթովենցը: Նրա ստեղծագործությունների մեջ համադրվում են արևմտահայ և խորհրդահայ ազգային գրականության տարրերը: Բացի այդ, Վահան Թոթովենցն ունեցել է գեղարվեստական նուրբ ճաշակ, հարուստ կենսաձանաչողություն և ինքնուրույն գրելակերպ<sup>430</sup>:

Գրավիչ ու պարզ է Թոթովենցի արվեստը, որտեղ զգացվում է գրողի ներքին տառապանքը: Ցավալի է նշել, որ կենդանության տարիներին նա չի գնահատվել ըստ արժանիւնի: Քննադատական մոտեցումը բացասական արձագանք է ունեցել նույնիսկ նրա լավագույն գործերի վերաբերյալ:

Նրա գրչին են պատկանում բազմաժանր գործեր («Սրինգ» ժողովածուն, «Իմ հորաքույրը» և «Տոնոն» սոցիալական վիպակները, «Ողբ անմահության» և «Արևելք» պոեմները, «Դոկտոր Բուրբոնյան» երգիծական, «Բաքու» եռահատոր, «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպերը, «Մահվան բատալիոն», «Պողպատի ճաշ», «Նոր Բյուզանդիոն», «Մասմա ծոեր», «Հրդեհ» դրամատիկական ստեղծագործությունները, «Ամերիկա» պատմվածաշարը, «Հրկիզված թղթեր» և «Հովնաթան որդի Երեմիայի» վիպակները, «Աղավնիները» և «Բաց կապույտ ծաղիկներ» պատմվածքները և շատ այլ գործեր): Մակայն, «գեղարվեստական պատմվածքը գրական այն ժանրն է, որի մեջ փայլատակեց Թոթովենցի տաղանդը»<sup>431</sup>:

Թոթովենցի պատմվածքները ծնվել են իրական փաստերից ու տպավորություններից: Դրանց շարքում իր առանձնահատուկ տեղն ունի «Բաց կապույտ ծաղիկներ» պատմվածքը, որը գրվել է 1934 թվականին:

Հոգեբանական նուրբ և խորը մոտեցումը կյանքին, հերոսներին ու նրանց վարքագծին Վահան Թոթովենցն արտահայտում է մեծ վարպետու-

<sup>429</sup> **Հ.Թումանյան**, *Երկերի ժողովածու*, 4 հատորով, հ. 4, Ե., 1951, էջ 370:

<sup>430</sup> **Մ.Մանուկյան**, *Վահան Թոթովենց*, Ե., 1959, էջ 152:

<sup>431</sup> **Մ.Արզումանյան**, *Վահան Թոթովենց*, Ե., 1961, էջ 50:

թյամբ՝ օգտվելով ժողովրդական բառ ու բանից, տարբեր տիպի բառային կառույցներից, պատկերավորման և արտահայտչական զանազան միջոցներից: Խոսքին գեղարվեստական արտահայտչականություն, կենդանություն հաղորդելու համար Վ. Թոթովենցը կիրառում է դարձվածային միավորներ (ԴՄ)՝ օգտվելով հայերենի դարձվածային հարուստ շտեմարանից:

ԴՄ-ները լեզվում առկա փոխաբերական-այլաբանական իմաստ ունեցող կայուն կապակցություններն են, որոնք անբաժանելի, իմաստով ամբողջական բառակապակցություններ կամ նախադասություններ են (այդ թվում՝ վերաիմաստավորված հարադիր բայեր, թևավոր խոսքեր, երդման, հանդիմանական, առածասացվածքային, հեղինակային արտահայտություններ, անեծքներ, օրհնանքներ, մաղթանքներ, շրջասույթներ): Լեզվում դրանք իրենց անփոխարինելի դերն ունեն, քանի որ խոսքին «աղ և համեմունք»<sup>432</sup> տվող միավորներ են: Լեզվական այդ կառույցները խոսքը զերծ են պահում կրկնությունից և միօրինակությունից: «Դարձվածային միավորները խոսքը դարձնում են ուժեղ և համոզիչ, գունագեղ և պատկերավոր»<sup>433</sup>:

ԴՄ-ները առանձնահատուկ դեր են կատարում հատկապես լեզվի ոճավորման գործում: Ոճաբանության համար շատ կարևոր է ԴՄ-ների ճիշտ և տեղին գործածությունը, այսինքն՝ «բառընտրությունը ոճաբանության ոգին է»<sup>434</sup>: ԴՄ-ի ոչ ճիշտ ընտրությունը հանգեցնում է խոսքի խրթինության, անհստակության, ոճական ու տրամաբանական սխալների: Համապատասխան ԴՄ-ների ընտրությունը և գործածությունը կապվում է գործառական ոլորտի, խոսքաշարի, այն գործածողի անձնական, անհատական հատկանիշների հետ (խառնվածք, կրթություն, մասնագիտություն, դաստիարակություն, զարգացածության աստիճան, աշխարհընկալում, հոգեկան վիճակ և այլն): Ստեղծագործողի համար այս հանգամանքը կապվում է նրա ստեղծագործական հմտությունների, «ոճական հոտառության», լեզվական հնարավորությունների յուրովի գործածության, բառաստեղծական ունակությունների հետ:

«Բաց կապույտ ծաղիկներ» պատմվածքի բառապաշարում ԴՄ-ները զերակշիռ մաս են կազմում<sup>435</sup>: Հեղինակը ԴՄ-ի և դրան համարժեք հոմանշի դեպքում նախապատվությունը տալիս է առաջինին՝ խոսքը դարձնելով ավելի տպավորիչ ու ազդեցիկ: Նկարագրվող կերպարը, երևույթը, զգացմունքը բառը չի կարող նույն խորությամբ, սեղմ ու դիպուկ արտահայտել, ինչպես ԴՄ-ը:

Պատմվածքում լեզվական այդ կառույցները հանդիպում են և՛ հեղինակային, և՛ հերոսների խոսքում: Հերոսների խոսքում օգտագործվում են ԴՄ-ների արևմտահայերեն, իսկ հեղինակային խոսքում՝ արևելահայերեն ձևերը: Օրինակ՝ «-Եկուր, մեզի տես,- ասաց նա: - Չէ, ալ հոս չի գար, *աֆ կընես*, պատասխանեց Թորիկը»: (376)<sup>436</sup> «-Տունին մեջը մորքոր մի ունիմ, ուրիշ

<sup>432</sup> Խ.Տադևիկյան, *Դարձվածային ոճաբանություն*, Ե., 2000, էջ 10:

<sup>433</sup> Н. Шанский, *Фразеология современного русского языка*, М., 1985, стр. 148.

<sup>434</sup> Ս. Էրոյան, *Մասնականից հայերենի բառային ոճաբանություն*, Ե., 1989, էջ 114:

<sup>435</sup> 40 էջ ծավալ ունեցող վերոնշյալ ստեղծագործության մեջ գործածվել է 167 ԴՄ:

<sup>436</sup> Փակագծերում նշվում են բնագրային օրինակների էջերը (Վ. Թոթովենց, *Երկեր*, Ե., 1957):



մարդ չունիմ,- շշնջաց Թորիկը: - Իսկ եթե մորաքույրդ չուզե,- տարակուսեց աղջիկը: **Քերնի՛ն է ընկեր,-** հպարտությամբ պատասխանեց Թորիկը և շարունակեց,- տունն իմն է, ունեցած չունեցածդ ժողվոտե, երթանք տուն»: (375)

**ԱՖ կրնես** (ներել), **բերնի՛ն է ընկեր** (հանդգնել, համարձակություն հանդես բերել) օրինակները հերոսների խոսքում օգտագործվում են արևմտահայերենով կամ բնորոշ են միայն գրական այդ տարբերակին (**աՖ ընել**):

«Եվ Թորիկին **մատով էին ցույց տալիս**»: (382) Անժելը **գլխի ընկավ**, թե ինչու լաց էր լինում և զգաց, որ այդ արցունքները գովացնում էին նրա հոգին: (385)

**Մատով էին ցույց տալիս** (բացասական, արգահատելի մեկը համարել), **գլխի ընկնել** (կռահել) ԴՄ-ները գործածվում են արևելահայերենով, թեև ունեն արևմտահայերեն տարբերակը, ինչպես օրինակ՝ **մատով ցույց տալ - մատով ցուցնել, գլխի ընկնել - գլխու իյնալ**:

Դարձվածային ոճաբանության համար կարևոր են նորաբանությունները, որոնք թարմություն, նոր շունչ են հաղորդում խոսքին և նպաստում լեզվի զարգացմանը:

Թոթովենց գրողի վարպետությունն ու անհատականությունը երևում է նաև նոր ԴՄ-ներ կազմելիս<sup>437</sup>. «-Քա , կը տեսնա՞ք, **անառակեն սուրբ ելավ**,- ասում էին»: (384) (**անառակեն սուրբ էլնել** - դառնալ բարոյական, առաքինի) «Դեռևս տասն օր առաջ, երբ Օվակիմը տուն էր վերադարձել և տեսել, որ իր հարևաններից մեկը մի ուրիշ թաղից մարդ էր հրավիրել իր տան արտաքնոցը մաքրել տալու համար, Օվակիմը մոտեցել էր իր արհեստակցին և ասել. - Չամչցա՞ր, իմ **բերնիս մեջ եղած հացը դուն կերար**»: (367) (**բերնի մեջ եղած հացը ուտել** - ապրուստի միջոցից զրկել) «Ժամանակի ընթացքում բամբասող **բերանները հոգնեցին**» (384) (**բերանները հոգնել** - դադարել բամբասել, չարախոսել) «Թուրվանտա Քորոն նորից լաց եղավ խեղճ, դժբախտ քրոջ վրա, որն արդեն **հանգստանում էր գերեզմանոցում**, որի վրա փոված էր թթենու մեծ սովերը»: (350) (**գերեզմանոցում հանգստանալ** - մահացած լինել) «Փալանճի Գրիգորը մի օր, երբ դիտել տվեց թե՛ - **Մեջը** հեշ **կրակ չկա**»: (350) (**մեջը կրակ չլինել** - աշխույժ չլինել) «Թորիկը նստեց կիսավարտ փալանի առաջ, վերցրեց մախարթը, բայց չկարողացավ շարունակել աշխատանքը, նրա **մտքի** փոքրիկ աշխարհում **բարձրացան** տարօրինակ պատկերներ, մեկը մյուսից ավելի գունագեղ, մեկը մյուսից ավելի ասեղ»: (370) (**մտքի աշխարհում բարձրանալ** - պատկերացնել, երևակայել) «Մի անշնորհք հարսի սկեսուրը բղավում էր վրան և ասում. - Թուրվանտային հարսին չափ ըլ չի կաս, **մեկ մատը քեզ արժե**»: (384) (**մեկ մատը քեզ արժե** - այսինչի համեմատությամբ արժեք չունենալ) «Թորիկը չիմացավ, թե ինչպես **ոտները սահեցին** դեպի դուռը»: (372) (**ոտները սահել** - քայլել) «Ժամանակը ցավի ոչ մի **սուր ծայր չթողեց**. Փալանճի Գրիգորի հագուստները Թորիկը մաշեցրեց, բացի շալ գոտուց, իսկ

<sup>437</sup> Թոթովենցի պատմվածքում կա հեղինակային 23 դարձվածային նորաբանություն:

Թուրվանտա Քորոն սկսեց մտածել Թորիկին ամուսնացնելու մասին»: (360) (*սուր ծայր չթողնել* - ամեն ինչ անցնել, մոռացվել) «Թուրվանտա Քորոն կազմ և պատրաստ ուներ ոչ ավելի քան երկու կամ երեք կաթիլ արցունք այքերի շատ մոտերքում և հարկ եղած ժամանակ *կախում էր կոպերից*» (360) (*կոպերից* (արցունք) *կախել* - լաց լինել) «-Ոգալի կը,- հարցրեց Թորիկը և զգաց, որ *սրտում* ինչ-որ *թռչուն է թայրտում*»: (362) (*սրտում թռչուն թայրտալ* - ինչ-որ թրթիռ ունենալ, զգացում ապրել) «Թորիկին մի դող բռնեց, կանգնեցրեց նա ընկերոջը, գոտու փաթից դուրս բերեց օդու մի փոքրիկ շիշ, տվեց ընկերոջը: Ընկերը *տնկեց բերանին* և տվեց Թորիկին»: (371) (*տնկել բերանին* - խմել) «Երբեմն վեճն այնքան էր տաքանում, որ Թորիկը թողնում էր խանութը, գնում տուն և սառում Թուրվանտա Քորոյին.- Թուրիկ մոքուր, Գրիգոր աղաս ընծի չի հավնիր, ալ խանութ չեմ երթար: - Սմեն մարդ ըլ արհեստը եղպես կտորվի, օդու՛լ, իրեն գլխուն ըլ էնքան են զարկեր... Թորիկը, գուխը կախ, վերադառնում էր խանութ: -Հը , *քնթիդ հույր իջալ վ*,- հարցնում էր Փալանճի Գրիգորը: Թորիկը, առանց պատասխանելու, վերցնում էր մախաթը և սկսում աշխատանքը»: (358) (*քթի հույր իջնել* - վիրավորանքը մոռանալ) «Մի քանի օր հետո մի ուրիշն առաջարկեց իրենց արտաքնոցը մաքրելու. Աղբատ Ղազարոսը գոռոզությամբ պատասխանեց. -Ա՛ջ կընես, քու արտաքնոցդ դուն մաքրե, *քիթդ չընկնիր*»: (367) (*քիթը չընկնել* - պատվաբեր չլինել) «-Աստծու գառն է, - սառում էր Թուրվանտա Քորոն: -*Քչիկ մի կով է*,- առարկում էր Փալանճի Գրիգորը»: (350) (*Քչիկ մի կով է* - Հիմար է) «*Քիչ մը մենծ ըլլի, որ մեջը բան մտնա*,- քրթմնջաց Փալանճի Գրիգորը»: (351) (*մեջը բան մտնել* - սովորել, գիտելիք ձեռք բերել)

Խոսքի ոճավորման համար շատ կարևոր է ոճական հոմանշությունը: «Ոճական ընտրությունը հենված է հոմանշության վրա, իսկ հոմանշությունը ոճաբանության հիմնական հասկացությունն է»<sup>438</sup>:

Դարձվածային հոմանիշներն ունեն միևնույն չափանիշները, ինչ բառային հոմանիշները: «Բառային հոմանիշների նման՝ հոմանիշներ պետք է համարել այն դարձվածքային միավորները, որոնք ունեն նույն կամ մոտ իմաստներ, բայց կարող են տարբերվել ոճական տարբեր կիրառություններով ու հուզաբարտահայտչական գունավորումներով (երանգավորումներով) և որոշակի համատեքստերում կարող են փոխարինվել իրարով»<sup>439</sup>:

Հեղինակի նախընտրած կիրառություններից է դարձվածային հոմանիշների, այդ թվում ԴՄ-ների և դրանց հոմանիշ բառերի համատեղ գործածությունը. «Թորիկն այս խոսքը այնպես արտասանեց, այնպիսի *խեղճությամբ*, այնպես *գուխը կախ* և անօգնական տոնով, որ Փալանճի Գրիգորը խղճահարվեց, այքերը խոնավացան, երեսը շուտ տվեց, որ ցույց չտա արցունքը, բայց Թուրվանտա Քորոն չդիմացավ և Թորիկի հետ միասին կուշտ լաց եղավ»: (354) «-Հայրիկ, ասկեց ետքը *սորերդ տնկե* ու *պատկե*, ալ գործ

<sup>438</sup> Т. Винокур, *Закономерности стилистического использования языковых единиц*, М., 1980, с. 159.

<sup>439</sup> Ա. Մուրադյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 2004, էջ 310:

մ'ըներ, մենք դրամ շատ ունինք, ամեն բան օլրայթ է»: (367) «Թորիկը հանգիստ գլուխը դարձնում էր. հայացքը հառում՝ Փալանձի Գրիգորին և ապուշ-ապուշ ժպտում»: (350) «-Աղջիկ, կաթը իստակ, գլուխը կախ»: (364) «-Թուրվանտա Քորո, ատոր խոսքը հեչ չընես, աղջիկս մինչև դպրոցը չվերջացնե՝ չեմ կարգեր,- պատասխանեց մայրը և դրանից հետո այնպիսի երես առավ, որ Թուրվանտա Քորոն մնաս բարով արավ և դուրս եկավ»: (363) «Թուրվանտա Քորոն, տեսնելով Թորիկին բոլորովին անգիտակ աշխարհի իր ամենաթանկագին էակից գրկվելու դժբախտության, սիրտը նորից փվեց, թաղման աղիողորմ լացը նորից բարձրացավ սևացած, աղքատ, փոքրիկ և խարխուլ խրճիթում»: (349) «Թուրվանտա Քորոն թեև լեց, լեզուն տակը դեց՝ ինչպես ինքն էր ասում, բայց չկարողացավ հաշտվել ահավոր եղելության հետ - իր հարսը անառա կ»: (383) «-Ինչքան ոտքս ընկան, ինչքան կենկեցան, կերեկցան, որ մեկը Թորիկիս համար ուզեմ, չուզեցի»: (367) «Թորիկը հիշեց մի քանի դեպքեր. Պուլից եկած ուսուցիչ պարոն Բուռնազյանին փողոցները ման ածելով թրեցին երեսին և խայտատակեցին, փաստաբան Կուլեսերյան Էֆենդիի մեծ տղային բռնեցին փողոցում և, իբրև նշավակ անլուր սրիկայության, երեսին մարդկային կղկղանք քսեցին, թոփալ Արթինը կեսգիշերով ստիպված եղավ փախչել քաղաքից և էլ չվերադարձավ»: (370)

Դարձվածային հոմանիշներից առանձնանում են տարբերակները, որոնք առնչվում են ԴՄ-ների բաղադրիչներին: «Դարձվածքի տարբերակներ են համարվում նույն իմաստը կամ բաղադրիչների միևնույն, հաստատուն կազմն ունեցող այն դարձվածքները, որոնց բաղադրիչները նույն բառի քերականական տարատեսակներ են կամ բարբառային և կամ էլ փոխառյալ համագործերն ու համանշանակները»<sup>40</sup>: Թոթովենցը պատմվածքում հմտորեն ստեղծում է այդպիսի բազմաթիվ օրինակներ. «Թուրվանտա Քորոն, լալագին լաց լինելով, փաթաթվեց Թորիկին և ականջին շնջաց-Լուսահոգիի ոսկի ակոսան հանե, պետք կըլի, օղու»: (359) «-Քա՛, ի՛նչ կըսես,- բացականչեց Թուրվանտա Քորոն և ճնեց աչքերը քունը փախցնելու համար»: (377) «-Էնպես երեսները կախեցին, ընծոր սև ձիթ քսեին,- առարկեց Թուրվանտա Քորոն»: (362) «-Եկեր իմ՝ խնդրեմ, որ գործ ունենաք, որք ունեցող կնիկ մի կա, անոր տաք, մեղք է, ձեռքն էլ իստակ է»: (362)

Վերոնշյալ օրինակներում ականջին շնջալ, աչքերը ճնեղ, երեսները կախել, ձեռքը իստակ կառույցները ԴՄ-ների պաշարում ունեն համապատասխանաբար ականջին փափալ, աչքերը տրորել, երեսը կախել, ձեռքը մաքուր (շիտակ) տարբերակները, որոնք ստեղծվում են նույն ԴՄ-ի հոմանիշ բաղադրիչների կամ նույն բաղադրիչ(ներ)ի բարբառային և գրական լեզվի ձևերը փոխարինելով:

«Թորիկն այս անհաջողություններից ծայր աստիճան ջղայնացավ և ով որ մերժում էր աղջիկը տալ իրեն, հայիոյում էր»: (364) «Անժելն զգաց այս կոպիտ ոսկորներով մարդու անկեղծությունը և զգացումի նրբությունը, փա-

<sup>40</sup> Ա.Սուքիասյան, *Ժամանակակից հայոց լեզու*, էջ 308:

*թաթվեց* նրա *վզով* ջերմությամբ և գորովանքով»: (375) «Թուրվանտա Քորոն այս անգամ համաձայնեց, որովհետև Թորիկի *քթի տակ* արդեն *սևին էր տալիս*, ձայնը հաստացել էր, և վերջնականապես պարզ էր, որ ուսման ոչ միայն սեր չունեիր, այլև հարմարություն»: (356)

Բնագրային *աղջիկը տալ, վզով փաթաթվել, քթի տակ սևին տալ* ԴՄ-ները տարբերակներ են նույն բաղադրիչի հոդով կամ անհոդ գործածության հետևանքով՝ *աղջիկ տալ, վզովը փաթաթվել, քթի տակը սևին տալ*:

«-Բարի լուս, Թորիկ: Թորիկը հագիվ բարեն առավ: -Ի՞նչ է, իշու պես նորեն *անկնձներդ կախեր ես*»: (369) «Կինը պատասխանեց.-էդպես մըսեր, զաթեն աստված *գարկեր է գլխուն*, որր է»: (350) «-Կուզիմ քրզի էս *ճամփայեն հանել*, մեղք չե՞ս, որ հոս մնաս»: (375) «Փալանճի Գրիգորը, ինչպես եղավ, մեռավ. ո՛չ հիվանդ պատկեց, ո՛չ էլ ոտի վրա մաշվեց. այլ մի օր խանութից տուն եկավ թե՛ -Թուրիկ, *վրաս սրափուկ եկավ*»: (359)

*Անկնձները կախել, գլխուն գարկել, ճամփայեն հանել, վրան սրափուկ գալ* արևմտահայերեն ԴՄ-ները լեզվում ունեն իրենց արևելահայերեն տարբերակները՝ *ականջները կախել, գլխին գարկել (խփել), ճամփից (ճանապարհից) հանել, վրան դող գալ*:

«Բայց *ժամանակը թռչում էր*»: (365) «Ոչ մի անհամբերություն, կանգնում էր և սպասում՝ մինչև Փալանճի Գրիգորը խոսքը վերջացներ, իսկ Փալանճի Գրիգորի *խոսքը* հաճախ *երկար էր տևում*»: (351) «Թուրվանտա Քորոն կատակի տվեց. -*Հավը երածին մեջ կորեկ կտեսնաս*»: (366) «-Աղեկ կրնես, չխոսաս, անցնես երթաս, *մախաթը սիրտս խոթես, արին չելլար*, -կտրեց Թորիկը»: (368) «-*Մեռած մարդու վրա չեն հաչեր*, - կշտամբեց Թուրվանտա Քորոն»: (356) «Անժելը գլխի ընկավ, թե ինչու լաց էր լինում և զգաց, որ այդ արցունքները *զովացնում էին* նրա *հոգին*»: (385) «Անժելը *հասկացավ* նրա *միտքը*, մոտեցավ Թորիկին, համբուրեց և ասաց. - Մինչև մահս ոչ մեկ տեղ չեմ երթար, ես քուկդ եմ»: (381)

Գրողի ստեղծած դարձվածային տարբերակներ են՝ *ժամանակը թռչում էր* (ժամանակը չի սպասում), *խոսքը երկար տևել* (խոսքը երկարել), *հավը երածին մեջ կորեկ կտեսնա* (հավը երագում կորեկ է տեսնում), *մախաթը սիրտս խոթես, արին չելլար* (դանակ գարկես, արյուն չի գա), *մեռած մարդու վրա հաչել* (մեկի վրա հաչել), *հոգին զովացնել* (հոգին թեթևացնել), *միտքը հասկանալ* (միտքը կարդալ) և այլն:

«Թորիկը, *սառած աչքերով*, նայում էր Փալանճուն և չէր պատասխանում»: (358) «Թորիկը *լռություն պահեց*»: (363)

*Սառած աչքերով նայել* ԴՄ-ը *սառը աչքերով նայել* ԴՄ-ի տարբերակն է՝ որպես նույն բաղադրիչի ածականական և հարակատար դերբայի ձևեր, իսկ *լռություն պահել*-ը՝ *լռություն պահպանել*-ի՝ որպես գրական լեզվի նույն ԴՄ-ի հոմանիշ բաղադրիչներ:

Հեղինակն իր երկում միևնույն նախադասության մեջ գործածում է մեկից ավելի ոչ հոմանիշ ԴՄ-ներ՝ հատուկ շեշտվածություն ու վեհություն հաղորդելով խոսքին: Այդ ԴՄ-ները կարող են վերաբերել առօրյա կյանքին,

ընդգծել սոցիալական խնդիրներ ու հանգամանքներ, ներկայացնել հերոսների տարբեր հոգեվիճակները, հեղինակի խոհերն ու տրամադրությունը:

«Օո՛, էս քանի՛ երորդ անգամն է, *գլխու ցեց դարձար, շա՛ն գավակ*»: (358) «-Թուրիկ մորքուր, *աչքիս մեջ նայիր, լեզուդ կտրե, տակդ դիր*, էս գործի մեջ մենք կերանք, դե՛, հիմա հարս գտի, տեսնամ»: (368) «-Ի՛նչ է, *իշու պես* նորեն *անկնճներդ կախեր ես*»: (369) «Անժելը *գլխի ընկավ*, թե ինչու լաց էր լինում և զգաց, որ այդ արցունքները *գովացնում էին* նրա *հոգին*»: (385)

Այսպիսով՝ Վահան Թորոսովենցն իր մտքերը դիպուկ և արտահայտիչ դարձնելու համար նախընտրում է ԴՄ-ների գործածությունը: Նա հմտորեն գործածում է ոչ միայն լեզվում գոյություն ունեցող ԴՄ-ները, այլև մեծ վարպետությամբ կազմում դրանց տարբերակները և ստեղծում նորերը՝ խթանելով լեզվի ԴՄ-ների համալրմանը:

Mkrumyan Armine - The phraseological neologisms and the usage of synonyms in Vahan Totovents "Light blue flowers" novel. - Vahan Totovents prefers using the PU-s for making his ideas more expressed and impressive. He uses skillfully not only the PU-s existing in the language, but also creates their new variants enriching the phraseological word-stock of the language.

Мкртумян Армине – Фразеологические неологизмы и синонимическое употребление в рассказе В. Тотовенца “Голубые цветы”. - В. Тотовенц прибегает к употреблению фразеологических единиц для более точного и образного выражения мысли. Он мастерски использует не только существующие единицы, но и образует их варианты, а также создает новые, обогащая тем самым фразеологию армянского языка.

**ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԱՉԱՅՆԵԼ ԵՒ ՀԱՄԱՉԱՅՆՎԵԼ ԲԱՅԵՐԻ  
ԻՄԱՍՏԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՉ**

Հայերենում, ինչպես գիտենք, կան մի շարք բայեր, որոնք միմյանցից տարբերվում են *-վ-* ներածանցով միայն, որը կրավորականություն չի արտահայտում, այլ բոլորովին այլ իմաստ է հաղորդում բային: Օրինակ՝ *վերաբերել* նշանակում է <<հարաբերվել, կապ, առնչություն ունենալ մի բանի>>, իսկ *վերաբերվել*՝ <<որոշակի վերաբերմունք՝ մեկի կամ մի բանի նկատմամբ>><sup>441</sup>:

Հարանունների շարքեր ներկայացնող այդ բառերի իմաստային նշանակությունները, որպես կանոն, տրված են ինչպես բացատրական բառարաններում, այնպես էլ քերականական տարբեր աշխատություններում և ուսումնական ձեռնարկներում: Սակայն այլ է հարցը *համաձայնել* և *համաձայնվել* բայերի դեպքում, որոնք, թերևս, իրենց գործածության հաճախականությամբ գերազանցում են մյուսներին: Ամեն օր և ամենուր կարելի է լսել և կարդալ թե՛ մեկը, թե՛ մյուսը: Եվ քանի որ այդ գործածությունները միանշանակ չեն ընդունվում բոլորի կողմից, փորձենք դրանց նշանակությունները պարզել բացատրական բառարաններում: Նախ պարզենք բայահիմքի իմաստային դրսևորումները:

Աղայանի բացատրական բառարանում *համաձայն* ածականի դիմաց նշված են՝ 1. Համակարծիք, նույն կարծիքի, համամիտ, 2. Իրար համապատասխան՝ պատշաճ, ներդաշնակ: 3. Մի առաջարկություն ընդունող, հոգուտ նրա ձայն տվող: 4. Հար և նման: 5. Կապ. ցույց է տալիս հիմունք՝ ըստ, համապատասխան նշանակությամբ:

*Համաձայնել* չեզոք բայի դիմաց նշված են՝ 1. Հավանություն տալ, ընդունել: 2. Համակարծիք՝ համամիտ լինել: 3. Միաբան՝ համերաշխ լինել: 4. Համապատասխանել, պատշաճ՝ հարմար գալ: 5. Համաձայնությամբ կապվել՝ կապակցվել (քեր.): 6. Ձայնակցել, ձայն ձայնի տալ(հնց.): 7. Ներդաշնակել: 8. Տե՛ս *համաձայնեցնել*:

Այնուհետև տրված է *համաձայնվել* չեզոք բայը, որը **նույնն** է, ինչ *համաձայնել*<sup>442</sup>:

Մեզ հետաքրքրող բառերի դիմաց գրեթե նույն մեկնաբանությունները գտնում ենք ինչպես քառահատոր բացատրական բառարանում<sup>443</sup>, այնպես էլ Մալխասյանցի բառարանում: Սակայն ի տարբերություն նախորդ երկուսի՝ Մալխասյանցը փոքր-ինչ հստակեցնում է՝ *համաձայնվել* բայի դիմաց գրելով՝ <<Տե՛ս *համաձայնել 2*>>, որն է՝ <<համակարծիք լինել, նույն կարծիքի

<sup>441</sup> Տե՛ս **Ալ. Մարգարյան**, *Ժամանակակից հայոց լեզու. բառագիտություն*, Ե., 1993, 121:

<sup>442</sup> Տե՛ս **Էդ. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1, 1976, 1, 802:

<sup>443</sup> Տե՛ս *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, Ե., հ. 3, 1969, 269-270:

լինել>>: Եվ որպես օրինակ է բերված հետևյալ նախադասությունը. <<Չեմ կարող **ձեզ հետ համաձայնել**>><sup>444</sup>: **Համաձայնել** բայի դիմաց նշված է նաև <<**համաձայնեցնել**>> իմաստը (ներգործական սեռ)՝ որպես հնացած նշանակություն<sup>445</sup>:

Ա. Սուքիասյանի հոմանիշների բառարանում **համաձայնվել**-ը ներկայացվում է գուտ որպես հոմանիշ **համաձայնել** բային<sup>446</sup>:

Ամփոփելով ժամանակակից հայերենի բառարաններից քաղված սովյալները մեզ հետաքրքրող բառագույզի վերաբերյալ՝ կարելի է եզրակացնել, որ դրանցում **-վ-** բայածանցի գործածությունը իմաստային որևէ տարբերակում չի մտցնում և, հետևաբար, որևէ ձևով չի հիմնավորվում: Չեն նշվում ո՛չ իմաստային, ո՛չ սեռային տարբերություններ: Երկու բառերի դեպքում էլ ունենք չեզոք ձևեր (թեև պետք է նկատել, որ ժամանակակից հայերենում ևս բայը կարող է արտահայտել ներգործական սեռի իմաստ, ինչպես՝ **Համաձայնեցի աշխատել** այդ հաստատությունում): Ստացվում է, որ իմաստով և գործածությամբ ամբողջությամբ նույնական բառերը ուղղակի հանդես են գալիս իբրև գուգաձևություններ՝ **-վ-**ով կամ առանց **-վ-**ի: Հետևաբար արդարացվում է շատերի կողմից տրվող այն կարծիքը, որ **-վ-**ով տարբերակը հնացած է, և այն չպետք է գործածել, այնպես, ինչպես **սուծվել** բայը:

Դրան հակառակ՝ մի շարք ձեռնարկներում, թելադրությունների բնագրերում հաճախ են հանդիպում թե՛ **համաձայնվել** և թե՛ **համաձայնել** բայերը, ավելին՝ հաճախ սովորողից պահանջվում է բացատրել դրանց նշանակությունները: Եվ ոչ մի աղբյուրում նույնիսկ չի ակնարկվում ածանցավոր բայի հնացած լինելու մասին:

Այժմ փորձենք բացահայտել, թե բայերն իմաստային ի՛նչ դրսևորումներ են ունեցել հայերենի զարգացման նախորդ փուլերում՝ հիմնավորելու համար **համաձայնվել** բայի գոյության և գործածական լինելու անհրաժեշտությունը:

Այսպես՝ ՆՀԲ-ն<sup>447</sup> տալիս է հետևյալ տեղեկատվությունը. **Համաձայնեմ**, (ներգ.)-եցի-<<միաբանել, զուգայարմարել>>, Մերն զմիանձնուսն համաձայնել (Լմբբ.), **Համաձայնեմ**, չեզոք., **Համաձայնեմ ձ**. <<միաձայնիլ, միաբանիլ. ձայնակցիլ. ձայնակից լինել>>. <<Հոգին սուրբ յիմոցն առցե, այսինքն համաձայնեսցե ինձ (Ոսկ.): Եւ մանկունք համաձայնեցին>>. այսինքն միաձայնելով ընդ միաձայնելով ընդ հրեշտակս երգեցին. (Երզն.): Համաձայնեալք անմարմնոցն օրհնէին: Ընդ որս և մեք համաձայնեալք բարեբանեմք (Շար.): Ուսանիմք՝ մարդկան լաւ զհամաձայնելն իրերաց՝ քան զանհաղորդ լինելն (Լմբ.):

<sup>444</sup> Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, Ե., 1944, 3, 25:

<sup>445</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>446</sup> Տե՛ս **Ա. Սուքիասյան**, *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*, Ե., 2009, 574:

<sup>447</sup> Տե՛ս **Գ. Աւետիքեան, Խ. Միլումէլեան, Մ. Աւգերեան**, *Նոր բարգիւրք հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1837, 2, 17:

Գր. Ճելալեանի «Առձեռն բառարանում»-ը և նշված են բայի սեռային տարբեր նշանակություններ՝ **Համաձայնեմ**, եցի, և. միաբանել, **համաձայնեմ**, եցի չ. միաբանիլ, ձայնակից ըլլալ, **համաձայնեմ**, եցայ<sup>448</sup>: Վերջին երկու աշխատություններում էլ նշված են ներգործական, չեզոք և կրկնասեռ տարբերակները: Հետևաբար հայերենի նախորդ փուլերում իմաստային տարբերակում, այնուամենայնիվ, առկա է:

Ուշագրավ է, որ «Արևմտահայերենի բառարանում» միայն մեկ ձև է նշված՝ **համաձայնիլ (համաձայնիլ)**, չբ, և բացատրված է՝ «**համաձայնվել**»:<sup>449</sup> Բերված է հետևյալ օրինակը. «Հասկցանք, որ անկարելի էր **համաձայնիլ**» (Ե. Օսյան)<sup>449</sup>:

Ավարտելով բառարանային մեր դիտարկումները՝ փորձենք խնդրի լուծումը փնտրել քերականական աշխատություններում:

Այսպես՝ Ա. Աբրահամյանը գրում է. «Ժամանակակից հայերենում կան որոշ սակավաթիվ բայեր, որոնք, լինելով չեզոք սեռի, զուգահեռաբար գործածվում են և՛ **-վ-** ածանցով, և՛ ածանցագուրկ ձևով, օր.՝ բռնկել // բռնրկվել, համաձայնել // համաձայնվել, հանդարտել // հանդարտվել, վերաբերել // վերաբերվել, տրաքել // տրաքվել և այլն: Այս կարգի բայերը հաճախ նույն հեղինակի երկերում հանդիպում են զուգահեռ գործածությամբ, առանց իմաստային տարբերակման»<sup>450</sup>:

Ապա բերվում են այդ բայերի գործածության օրինակներ, որոնցից առանձնացրել ենք միայն մեզ հետաքրքրող բառագույրի գործածության դեպքերը Շիրվանզադեի, Գ. Սևունցի, Ս. Խանզադյանի երկերից, որոնցում, ըստ Աբրահամյանի, դրանց իմաստային տարբերությունները չեն գիտակցվում:

Այսպես՝ «Ուսանողները **համաձայնեցին** հրավիրել Սանթրուրյանին, չնայելով շատերի ընդդիմության», «Եթե նա **համաձայնվի** էլ, Ադելաիդան երբեք չի կամենալ» (Շիրվանզադե), «Դրա համար էլ Ազադին **համաձայնեց** նրա հետ», «Ասա՛, գուցե քեզ հետ համաձայնվեմ» (Գ. Սևունց), «Ուրախ կլինեք, եթե Գարեգինը **համաձայնվեր** իր հետ աշխատելու», «Կգամ, իսկույն **համաձայնեց** Գարեգինը» (Ս. Խանզադյան):

Այնուհետև եզրակացնում է. «Եթե **վերաբերվել** ձևում **-վ-** ածանցի գործածությամբ հնարավոր է ցույց տալ իմաստային մի մասնակի տարբերություն, ապա դժվար է ցույց տալ այդպիսի տարբերություն **համաձայնել** և **համաձայնվել**, **բռնկել** և **բռնկվել**, **հանդարտել** և **հանդարտվել** ձևերի արտահայտած իմաստի միջև (բոլոր ընդգծումները մերն են)<sup>451</sup>: Չնայած Աբրահամյանի այս եզրակացությանը՝ նշված բայերը բառարաններում ունեն իրենց բացատրությունները, և խոսքում, այնուամենայնիվ, կարելի է դրանք տարբերակել: Իսկ **համաձայնել** և **համաձայնվել** բայերի համար բերված օրինակ-

<sup>448</sup>Գր. Ճելալեան, *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի*, Ս. Ղազար, Վենետիկ, 1865, 470:

<sup>449</sup>Ա. Մարգարյան, *Արևմտահայերենի բառարան*, Ե., 1991, 191:

<sup>450</sup>Ա. Ա. Աբրահամյան, *Բայր ժամանակակից հայերենում*, Ե., 1962, 651:

<sup>451</sup>Տե՛ս նույն տեղում:



ներում, կարծում ենք, իմաստային տարբերություն, այնուամենայնիվ, կա, որի մասին մենք ավելի ուշ կխոսենք:

Շարունակելով՝ Աբրահամյանը գրում է՝ «**Առայժմ դժվար է կտրակա-նապես սահմանազատել սրանք, բայց մի բան պարզ է, որ կենդանի խոսքում գերակշռությունն է ստանում սրանց կրավորաձև գործածությունը**»<sup>452</sup>: Նույն տեղում Աբրահամյանը նշում է նաև, որ այսպիսի բայերը խիստ սահմանափակ են մեր լեզվում:

Ա.Աբրահամյանի վերը նշված բոլոր ձևակերպումները կրավորակերպ չեզոք բայերի համար գրեթե նույնությամբ ներկայացված են «**Ժամանակակից հայոց լեզվի**» ակադեմիական հրատարակությունում, որտեղ դարձյալ որևէ հստակություն չկա մեզ հետաքրքրող խնդրի վերաբերյալ<sup>453</sup>:

Նշված բայերի մասին ակնարկվում է նաև Խ. Բաղիկյանի «**Ճիշտ խոսենք հայերեն**» գրքում, որտեղ դրանք ներկայացված են որպես հարանուններ՝ հետևյալ բացատրություններով. **համաձայնվել** բառի դիմաց տրվում է «**խրաբ հասկանալ**» (**մենք համաձայնվել ենք այդ հարցում**) նշանակությունը, իսկ **համաձայնել** բառի դիմաց բերվում է ենթակայի և ստորոգյալի համաձայնելու օրինակը միայն<sup>454</sup>:

Անհրաժեշտ ենք համարում ներկայացնել նաև, որ ժամանակակից հայերենում ըստ իրենց ցույց տված գործողության բնույթի՝ կրավորաձև չեզոք բայերը կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝

**1. Բայեր**, որոնք ցույց են տալիս ենթակայի կատարած ինքնին գործողություն՝ կապված առարկայի դիրքի, վիճակի, դրության, ինչպես նաև հոգեվիճակի, տրամադրության փոփոխության հետ և այլն (օր.՝ **շփոթվել, բացվել** (ծաղկի) ):

**2. Անդրադարձ բայեր- լվացվել, հագնվել, կոճկվել** և այլն:

**3. Փոխադարձ բայեր-գրկախառնվել, փաթաթվել** և այլն:

**4. Բայեր**, որոնք ցույց են տալիս համատեղ գործողություն (**հավաքվել, կուտակվել** և այլն):

Ինչպես **4-րդ**, այնպես էլ **3-րդ** կետերում նշված բայերի դեպքում դրանք դրվում են հոգն. թվով: Եզ. թվով գործածվելու դեպքում սրանք ևս ցույց չեն տալիս համատեղ գործողություն: Օր.՝ Չյունը **կխտվել է** բակերում, Անձրևաջուրը **հավաքվել էր** ջրափոսերում:

**5. Բայեր**, որոնք, ստանալով կրավորական **վ** ածանցը, բացի կրավորական սեռի նշանակությունից, ունենում են նաև առարկայի որևէ հատկանիշը կամ դերը ցույց տալու նշանակություն, ինչպես՝ Ջուրը **թափվում է**, Արյունը **մակարդվում է** և այլն<sup>455</sup> :

<sup>452</sup>Տե՛ս նշվ. աշխ, 652:

<sup>453</sup>Տե՛ս **Ս.Գ. Աբրահամյան, Ն.Ա. Պառնապյան, Հ.Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու**, Ե., 2, 1974, 297:

<sup>454</sup> **Խ. Բաղիկյան, Ճիշտ խոսենք հայերեն**, Ե., 2012, 47:

<sup>455</sup>Տե՛ս **Ս.Գ. Աբրահամյան, Ն.Ա. Պառնապյան, Հ.Ա. Օհանյան, նշվ. աշխ.**, 295- 296:

Մ. Ասատրյանն իր «Բայի սեռերը ժամանակակից հայերենում» գրքում գրում է. «Փոխադարձ բայերը ցույց են տալիս տարբեր ենթականերից իրար վրա անցնող գործողություն: Հասկանալի է, որ բայի արտահայտած փոխադարձ իմաստը պարզ և որոշակի կարող է դրսևորվել միայն հոգնակի ձևերում: Եզակի թվում փոխադարձ իմաստ կարող է դրսևորվել միայն այն դեպքում, երբ այդ բայերը կապակցվում են սեռական հոլովի և **հետ** (ընդգծումը մերն է) կապի միջոցով դրսևորվող խնդրի հետ<sup>456</sup>: Ասատրյանը նույն տեղում իբրև փոխադարձ բայերի օրինակներ է բերում՝ համբուրվել, պաշաչվել, ծեծկվել, գրկախառնվել, գրկվել, տեսնվել, ողջագուրվել և այլն: Ապա ավելացնում է, որ «գործողության փոխադարձություն կարող են արտահայտել նաև տեսնվել, բացատրվել, զարկվել բայերը»<sup>457</sup>: Առաջնորդվելով այս ձևակերպումով՝ կարծում ենք, որ նույնը կարելի է ասել նաև **համաձայնվել** բայի մասին, թեև լեզվաբանն այս բային չի անդրադարձնում և նույն աշխատության մեջ այլ առիթով գործածում է հետևյալ միտքը. «Պալասանյանի այս տեսակետի հետ **համաձայնել** չի լինի»<sup>458</sup>: Կարելի է ենթադրել, որ **-վ**-ով տարբերակը չի ընդունում, բայց այդ հարցը միանգամից փակվում է, երբ թերթում ենք ավելի ուշ հրատարակված «Ժամանակակից հայոց լեզու» աշխատությունը, որտեղ գրված է. «Մի քանի «կրավորակերպ» չեզոքներ ունեն առանց -վ-ի (չեզոք) ձևեր, ինչպես՝ **հակառակվել/ել, համաձայնվել/ել, մոլորվել/ ել, մոայլվել/ել, նմանվել/ել, վերաբերվել/ել, տրաքվել/ել**: Գրական լեզուն երբեմն գերադասում է Վ-ով, իսկ երբեմն առանց Վ-ի ձևերը<sup>459</sup>: Անհրաժեշտ ենք համարում նաև մեջբերել նույն տեղում արված Ասատրյանի հետևյալ միտքը. «Մեր լեզվում «կրավորակերպ» չեզոքների գոյությունը բացատրվում է նրանով, որ երբ Վ բայածանցի ստեղծումով ներգործական բայերի կրավորակերպ խոնարհման ԻԼ ձևը փոխվեց ՎԻԼ ձևի, միաժամանակ կրավորակերպ խոնարհվող մի շարք չեզոք սեռի բայեր (գանգատիմ, բնակիմ, խելագարիմ, սխալիմ և այլն)» նույնպես ստացան այդ ածանցը, իսկ հետո այդ բայերի նմանակությամբ կազմվեցին նաև այլ բայեր (գժվել, սիրահարվել, փշաքաղվել)<sup>460</sup>:

Ներկայացնենք մեր դիտարկումները խնդրո առարկա բառերի գործածության վերաբերյալ՝ օգտվելով «Արևակ» ԱԱԿ-ի էլեկտրոնային շտեմարանից, որտեղ ներկայացված են թե՛ ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական ստեղծագործություններ, թե՛ մամուլից քաղված օրինակներ.

1. **Ածանցավոր բայի** օրինակներ - «Գնանք, գնենք, **համաձայնվեցի** ես», Ա. Շեկոյան, «Հայկական ժամանակ». «Անցյալ տարի ծնողներս որոշեցին ամուսնացնել ինձ, և ես սիրով **համաձայնվեցի**», Ա. Ֆրանս, 1991, «Միտքով **համաձայնվեցի** մասնակցել խմբագրմանը՝ մի քանի կոնկրետ

<sup>456</sup>Մ. Ասատրյան, *Բայի սեռերը ժամանակակից հայերենում*, Ե., 1959, 188:

<sup>457</sup>Տե՛ս նշվ. աշխ., 188-189:

<sup>458</sup>Տե՛ս նշվ. աշխ., 32:

<sup>459</sup>Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն*, Ե., 2002, 220:

<sup>460</sup>Տե՛ս նույն տեղում:

առաջարկներով>>...<<Ազգ>>, 2006, 04.01, <<Ուրեմն **համաձայնվեցինք**>>, Ժ. Ավետիսյան, <<Ամպ ու ծիածան>>, <<Եվ միայն իմ մի հիմար խոսքի վրա հանկարծ **համաձայնվեցինք**>>, Ֆ. Դոստոևսկի, 1984, <<Կարամազով եղբայրներ>> և բազմաթիվ այլ օրինակներ:

2. **Պարզ բայի** գործածության օրինակներ- <<**Համաձայնեցինք**, որ այդ վայրենության մեջ վեհ բան կար>>, Գևորգ Հայրյան, <<Մեր տան ճանապարհին>>, <<Անշուշտ, մենք **համաձայնեցինք**, որ պարտք վճարել չկա, այդ պարտքերը չեղյալ կհամարվեն, և դա ընդունվեց>>, <<Ազգ>>, 2006, 11, 17 և այլն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, **բայի երկու տարբերակների գործածության հիմքում իմաստային որոշակի տարբերակում, այնուամենայնիվ, կա: Ածանցավոր բայը կա՝ մ որոված է հոգնակի թվով և նշանակում է <<համաձայնության գալ>>, այսինքն՝ փոխադարձ սեռի է, կա՝ մ նույն նշանակությամբ գործածված է եզակի թվով՝ առանց միասնության խնդրի, որը, սակայն, հիմնականում գիտակցվում է, և հնարավոր է վերականգնել *անձնանիջ գոյականի սեռական հորով + հետ* կապ (ի դեպ, նույնը կարելի է ասել Ա. Աբրահամյանի բերած օրինակների համար) կառույցը: Բսկ անաձանց բայաձևերը արտահայտում են <<ընդունել, համաձայն լինել>> իմաստները:**

Անշուշտ, կարիք չկա ներկայացնել, թե բանավոր խոսքի տարբեր դրսևորումներում որքան հաճախ կարելի է լսել վերը նշված բառերի գործածության օրինակներ, մանավանդ որ, ինչպես արդեն նշել ենք, ըստ Ա. Աբրահամյանի՝ **կենդանի խոսքում նախապատվությունը տրվում է –վ- ածանց ունեցող ձևին**: Հետաքրքիր է պարզել, թե գրավոր խոսքում ինչ հարաբերությամբ են գործածվում դրանք: Դարձյալ օգտվելով <<Արևակի>> (ԱԱԿ-ն պարունակում է մոտ 110 մլն բառամթերք՝ 19-րդ դ. կեսերից մինչև մեր օրերն ստեղծված արևելահայ տեքստեր՝ ավելի քան 100 հայ դասական գեղարվեստական ստեղծագործությունների ընդգրկմամբ) ընձեռած հնարավորությունից՝ ներկայացնենք բայերի գործածության վիճակագրությունը.

#### **Անկախ դերբայներ՝**

համաձայնել- **1903** համատեքստ/**1338** տեքստ, համաձայնվել-**467** համատեքստ / **363** տեքստ

համաձայնող-**9/8**, համաձայնվող- **2/2**

համաձայնած- **35/33** (միայն արևմտահայերենից), համաձայնված- **6/6**

համաձայնելիս**1/1** (Նար-Դոսից), համաձայնվելիս-**1/1** (Դրայգերի <<Հանձարից>>)

#### **Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձև՝**

համաձայնեցի- **217/ 164** , համաձայնվեցի-**140/ 92**

համաձայնեցիր- **20/18**, համաձայնվեցիր- **12/12**

համաձայնեց- **2211/ 835**, համաձայնվեց- **467/ 233**

համաձայնեցինք- **50 / 45** , համաձայնվեցինք- **27/ 25**

համաձայնեցիք- **29/26** , համաձայնվեցիք- **19/15**

համաձայնեցին- **322 / 249** , համաձայնվեցին- **114/ 99**

Ինչպես երևում է վիճակագրական տվյալներից, գրավոր խոսքում աստիճանաբար տարածում է ստանում բայի ածանցագուրկ տարբերակը, և **համաձայնվել**-ը գործածության հաճախակետությամբ զիջում է **համաձայնել**-ին, որը, կարծում ենք, պայմանավորված է ինչպես իմաստային տարբերակման անորոշությամբ, այնպես էլ **համաձայնվել** բայի յուրահատուկ իմաստով՝ <<համաձայնության գալ>>, մինչդեռ խոսակցական լեզվում ճիշտ հակառակն է. ավելի գործածական է **համաձայնվել** բայը:

Այսպիսով՝ մեր դիտարկումները թույլ են տալիս եզրակացնել, որ բայի ածանցավոր տարբերակի գործածությունը գրական հայերենում կարող է հիմնավորվել **որպես փոխադարձ սեռի բայ**՝ <<**համաձայնության գալ, պայմանավորվել**>> նշանակություններով, որի դեպքում, ինչպես նմանատիպ այլ բայերի պարագայում, այն պետք է հանդես գա հոգնակի թվով կամ անձնանիշ գոյականի, գոյականաբար գործածված բառի սեռական հոլովի և **հետ** կապի հետ: Օրինակ՝ <<Մենք **համաձայնվեցինք** համագործակցել>>, <<Ես **նրա հետ համաձայնվեցի**>>: **Համաձայնել** բային համարժեք է **համաձայն լինել** հարադրությունը, իսկ **համաձայնվել** բային՝ **համաձայնության գալ** - ը:

Nersisyan Varsik- On the issue of semantic differentiation of the verbs **համաձայնել** and **համաձայնվել** in the Armenian language.-The article is devoted to the issue of semantic differentiation of the verbs **համաձայնել** and **համաձայնվել** in the Armenian language.

There are some paronymic verbs in the Armenian language differentiated by the infix **-վ**. The meanings of these verbs are usually presented in dictionaries and various works on grammar.

But other is the question in case of the verbs **համաձայնել** and **համաձայնվել**, the semantic difference of which is not explained properly.

Нерсисян Варсик- К вопросу о семантической дифференциации глаголов **համաձայնել** и **համաձայնվել** в армянском языке.- Статья посвящена проблеме семантической дифференциации глаголов **համաձայնել** и **համաձայնվել** в армянском языке.

В армянском языке есть паронимические глаголы, которые отличаются друг от друга только инфиксом **-վ**-. Значения этих глаголов, как правило, представлены в толковых словарях, а также в различных исследованиях, посвященных грамматике языка.

Дело обстоит иначе с глаголами **համաձայնել** и **համաձայնվել**, семантическая дифференциация которых не представлена в достаточной степени в этих трудах.

**ԸՆԹԱՑԱԿՑԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԻ ԽՆԴԻՐԸ ԱՐԵՒՍՏԱՀԱՅԵՐԷՆԻ ՄԷՋ**

Արեւմտահայերէնի մէջ անորոշ դերբայի գործիական հոլովը լայնօրէն հանդէս կու գայ ձեւի պարագայ պաշտօնով. օրինակ՝ *Դերասանը Արիստոտէլ աղային ծունկերուն փաթթուելով աղաչեց: Ակրաները կրճտելով հանեց բարկութեամբ ոսկի մը տուաւ: Դերասանն ալ ներում խնդրելով վար իջաւ եւ գնաց*<sup>461</sup>: Ասիկա գրական լեզուի շարահիւսական անփոփոխ ու մնայուն վիճակներէն մէկն է: Ասոր կողքին կը հանդիպինք նաեւ անորոշ դերբայի բացառական հոլովի նոյնպիսի գործածութեան, այսինքն՝ ձեւի պարագայի պաշտօնով, որ գրականին անցած է խօսակցական լեզուէն: Անորոշ դերբայի բացառական հոլովի ձեւի պարագայի պաշտօնով գործածութիւնը, դերբայի գործիական հոլովի կողքին, յատկապէս նկատելի է արեւմտահայ արուեստագէտ սերունդի գրողներու, գլխաւորաբար բանաստեղծներու գործերուն մէջ: Միամանթոյի բանաստեղծութեան մէջ երկու ձեւերով ալ արտայայտուած ձեւի պարագայի յաճախադէպ գործածութիւնը անմիջապէս նկատելի կը դառնայ. *Ու գէթ անգամի մը համար՝ ինքնիրմէդ դուրս գահավիժելէն՝*

*Եթէ կրնաս, մեզի հետ քալէ*<sup>462</sup>:

Այստեղ **քալէ** ստորոգիչին հետ *համընթաց, զուգահեռ, ընթացակից* գործողութիւն մը կ'արտայայտէ *գահավիժելէն* բառը, որ *գահավիժիլ* անորոշ դերբայի բացառական հոլովաձեւն է: Կը պատասխանէ *ի՞նչ ընելով ընելէն՝ քալէ* կամ *ինչպէ՞ս քալէ* հարցումին: Ուրեմն՝ ձեւի պարագայ է:

*Մեր փրկութեանը համար*

*Ա՛յնչպիսի այլասիրօրէն արիւնելով անմահացաք*<sup>463</sup>:

Այստեղ **անմահացաք** ստորոգիչին *համընթաց, զուգահեռ, ընթացակից* գործողութիւն մը կ'արտայայտէ *արիւնելով* բառը, որ *արիւնիլ* անորոշ դերբայի գործիական հոլովաձեւն է ու կը պատասխանէ *ի՞նչ ըլլալով անմահացաք* կամ *ինչպէ՞ս անմահացաք* հարցումին: Ուրեմն՝ ձեւի պարագայ է:

Միամանթոյի բանաստեղծութեան մէջ ձեւի պարագայի պաշտօնով անորոշ դերբայի այս երկու ձեւերը հաւասարապէս հանդէս կու գան: Տանք քանի մը օրինակներ եւս.

Բացառական հոլովով. *Ու անցաք (...)*

*Ձեր ներսիդին մոլեզնաբար տատապելէն*<sup>464</sup>:

<sup>461</sup> Մէջբերումները՝ Յակոբ Պարոնեանէն. տե՛ս **Ս. Արքահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան**, *Հայերէն լեզուի դասագիրք*, երկրորդ հրատարակութիւն, Ե., 1968, էջ 405:

<sup>462</sup> **Միամանթօ**, *Յոյսին ճամբան*. արեւմտահայ բանաստեղծութենէ քաղուած այս եւ յաջորդ մէջբերումները տե՛ս *Յեղին սիրտը – արևմտահայ բանաստեղծություն*, կազմող՝ Վազգէն Գաբրիէլյան, Ե., 1991, էջ 223: Մէջբերումները կատարուած են բնագրային ուղղագրութեամբ:

<sup>463</sup> **Միամանթօ**, *Աստուածացումը*, տե՛ս Յեղին սիրտը, նշուած ժողովածուն, էջ 223:

Որպէսզի, վերջապէս, Երազին երիվարները փոթորկանման Մեր կանքին ձեռուրներէն դիցազնաբար **վարուելէն՝** Յաղթանակին կատարներուն վրայ **արձանանան...<sup>465</sup>**:  
Յանկարծ իրենց մերկ բազուկները դէպի մեզի **տարածելէն** (...) Տարօրինակ երջանկութիւնով մը **երգեցին...<sup>466</sup>**:

Գործիական հոլովով.

*Ձեր աստուածացումը օրհներգելով պիտի երիվարեն<sup>467</sup>:*

*Ես երգելով կ'ուզեմ մեննիլ<sup>468</sup>:*

*Կռունկները կռնչելով ի նշպէս անցան հովերուն հետ<sup>469</sup>:*

*Ճերմակ գառնուկ մը, մայելով, իր կճղակները կը կրծէր<sup>470</sup>:*

Շարադասական միեւնոյն պաշտօնը կատարող այս երկու ձեւերուն միջեւ իմաստաբանական տարբերութիւն մը գտնել դժուար է, բացի այն պարագայէն, որ գործիական հոլովը ցոյց կու տայ ստորոգիչին հետ կատարուող, իսկ բացառականը՝ անոր հետ սկսած գործողութիւն մը: Երկուքն ալ համընթաց ու զուգահեռ, այնքան որ միեւնոյն նախադասութեան մէջ իբրեւ ձեւի պարագայ անոնց համատեղ գործածութիւնը միայն ռճական առանձնայատկութիւն մը կը թելադրէ, ինչպէս կ'երեւի Սիամանթոյի հետեւեալ տողին մէջ, մէկը գործիական, իսկ միւսը բացառական հոլովներով.

*Մոնչելով եւ լողալէն իր գաւակը փրկել կ'ուզէր:*

Կամ Սիւսաք Մեծարենցի հետեւեալ քառատողին մէջ.

*Տենչանքներս, տարագնացի կ'մեղուներ,*

*Ոսկի երիզ մը քանալով*

*Ու գանակներ անձրեւելէն*

*Թռան գացին երամ-երամ<sup>471</sup>:*

Սակայն բացառականով ձեւի պարագան գործածութեան սահմանափակումներ ունի. անով արտայայտուած ձեւի պարագաները կարելի է աներկբայօրէն արտայայտել գործիական հոլովով. *Ու անցաք՝ Ձեր ներսիդին մոլեգնաբար տառապելէն... (տառապելով):* Յանկարծ իրենց մերկ բազուկները դէպի մեզի **տարածելէն** (տարածելով) տարօրինակ երջանկութիւնով մը երգեցին: Բայց գործիական հոլովով արտայայտուած ձեւի պարագան կարելի չէ ամէն պարագայի փոխարինել բացառական հոլովով. *Ես երգելով կ'ուզեմ մեննիլ եւ Ես երգելէն կ'ուզեմ մեննիլ* բոլորովին տարբեր բաներ են. երգելով-ը ձեւի պարագայ է, իսկ երգելէն-ը պատճառի պարագայ: Արեւմտահայերէնի մէջ անորոշ դերբայի բացառականի արտայայտած պատճառի պարագան

<sup>464</sup> Նոյնը:

<sup>465</sup> Միամանթօ, *Յոյսին ճամբան*, տե՛ս Յեղին սիրտը, նշուած ժողովածոն, էջ 223:

<sup>466</sup> Միամանթօ, *Արշալոյսները*, տե՛ս Յեղին սիրտը, նշուած ժողովածոն, էջ 225:

<sup>467</sup> Միամանթօ, *Աստուածացումը*, տե՛ս Յեղին սիրտը, նշուած ժողովածոն, էջ 223:

<sup>468</sup> Միամանթօ, *Ես երգելով կ'ուզեմ մեննիլ*, տե՛ս Յեղին սիրտը, նշուած ժողովածոն, էջ 258:

<sup>469</sup> Միամանթօ, *Հայրը հոգեվարք*, տե՛ս Յեղին սիրտը, նշուած ժողովածոն, էջ 272:

<sup>470</sup> Միամանթօ, *Մօր մը երազը*, տե՛ս Յեղին սիրտը, նշուած ժողովածոն, էջ 277:

<sup>471</sup> Մ. Մեծարենց, *Մեղունները*, տե՛ս Յեղին սիրտը, նշուած ժողովածոն, էջ 312:

սահմանափակումներ կը բերէ անոր ձեւի պարագայի դերով հանդէս գալու իրողութեան մէջ: Կայ երկրորդ պատճառ մը եւս. արեւմտահայ խօսակցական լեզուին մէջ ան լայնօրէն հանդէս կու գայ նաեւ տեղի պարագայի պաշտօնով. արդարեւ, **լողալէն տուն վերադարձայ** նախադասութիւնը չի նշանակեր **լողալով տուն վերադարձայ**. դերբայը չունի ստորոգիչին հետ համընթաց զարգացող գործողութեան իմաստ, այսինքն չունի ձեւի պարագայի դեր, այլ կը նշանակէ «լողալու փորձէն, լողալու տեղէն, լողաւագանէն», ճիշդ այնպէս, ինչպէս արեւելահայը պիտի ըսէր «լողալուց վերադարձայ»:

Միամանթոյի պարագային, գործիական հոլովով անորոշ դերբայի կողքին, բացառական հոլովով ձեւի պարագայի այնքան առատօրէն գործածութիւնը աւելի նուազ կ'ընէի իր ժամանակակիցներու գործերուն մէջ, օրինակ, Դանիէլ Վարուժանի, ուր գործիական ձեւը աւելի տիրական է՝ նոյնիսկ անոր ժողովրդական շունչով գրուած բանաստեղծութիւններուն մէջ.

*Հունձք կը ժողվեմ մանգաղով,*

*– լուսնակը եարս է,–*

*Ակօս-ակօս ման գալով,*

*– Միրաճս հարս է<sup>472</sup>:*

*Մայլերը կ'երթան անորորութեան մէջ*

**Աղաղակէլո վ<sup>473</sup>:**

*Այս իրիկուն ձեզի կու գանք, սէ՛ր երգելով,*

*Մարի ճամբով<sup>474</sup>:*

Վերջին երկու տողերը բանաստեղծը կրնար ըսել.

*Այս իրիկուն ձեզի կու գանք, սէ՛ր երգելէն,*

**Մարի ճամբէն:**

Միսաք Մեծարեւնցի եւ Մատթէոս Զարիֆեանի բանաստեղծութիւններուն մէջ բացառական հոլովաձեւի գործածութիւնն է աւելի ակնբախ.

*Տենչանքներս, տարագնացի կ'մեղուններ,*

*Ոսկի երիզ մը բանալով*

*Ու գանակներ անձրեւելէն*

*Թռան գացին երամ-երամ,*

*Անցան գացին դարուղիէն*

*Կիսաթափանց մշուշներու սպրշում քօղքը պատռելէն*

*Եւ հաճելէն մէջն արեւին ոսկեճաղիկ մատախուղի<sup>475</sup>:*

*Բայց ես կ'երթամ գլգլալէն ու լալէն<sup>476</sup>:*

Մինչ աւելի կը նուազի Վահան Թէքեանի պարագային, ուր տիրական է գործիական հոլովի նոյնիմաստ գործածութիւնը.

*Քիչ մը գորով պաղատելով պիտի գամ*

<sup>472</sup> Դ. Վարուժան, *Հունձք կը ժողվեմ*, տե՛ս Յեղիս սիրտը, նշուած ժողովածոն, էջ 506:

<sup>473</sup> Դ. Վարուժան, *Մայլերը*, տե՛ս Յեղիս սիրտը, նշուած ժողովածոն, էջ 507:

<sup>474</sup> Դ. Վարուժան, *Վերադարձ*, տե՛ս Յեղիս սիրտը, նշուած ժողովածոն, էջ 512:

<sup>475</sup> Մ. Մեծարեւնց, *Մեղունները*, տե՛ս Յեղիս սիրտը, նշուած ժողովածոն, էջ 312:

<sup>476</sup> Մ. Զարիֆեան, *Հոգիս*, տե՛ս Յեղիս սիրտը, նշուած ժողովածոն, էջ 681:

*Օտար տղոց քով թափառիլ յարածամ...<sup>477</sup>:*

*Կը մսի՛ սիրտդ ու կը դողդղա՛ս*

***Խորհելով** պայծառ արեւին անցեալ<sup>478</sup>:*

***Զսիրուելով** սիրելէ...*

*Յոգնած, յոգնած եմ հիմա<sup>479</sup>:*

Թէքեանի վերջին մէջբերումին մէջ **սիրելէ** անորոշ դերբայի բացառական հոլովը **յոգնած եմ** ստորոգիչին պատճառի պարագան է, իսկ **չսիրուելով** անորոշ դերբայի գործիական հոլովը կողմնակի ձևի պարագան է **սիրուելէ** դերբային:

Գրական լեզուին մէջ անորոշ դերբայի բացառական հոլովի ձևի պարագայի պաշտօնով գործածութիւնը, գործիական տվորական ձևի համեմատութեամբ, կը բացատրուի ոճական ու արտայայտչական հնարքի գործօններով: Անոր գործածութիւնը շատ ակտիւ նուազ է արձակ հեղինակային խօսքի մէջ, ինչպէս ցոյց կու տան Զոհրապի, Օշականի, Զապէլ Եսայանի, Յակոբ Մնձուրիի եւ այլոց գործերը:

Շահեկան է այստեղ յիշել, որ ձևի պարագայի շարահիւսական պաշտօնով հանդէս կու գան նաեւ գոյականի գործիական եւ բացառական հոլովները եւ փոխարինելի չեն: Գործիականով՝ **Միրով կ'ընկերանամ քեզի: Ներկաները միաձայնութեամբ որոշումի մը յանգած են: Հաճոյքով ընկերացայ անոր:** Բացառականով ձևի պարագան կ'արտայայտուի տեղ ցոյց տուող բառերով կազմուած ընդհանրապէս դարձուածքային, ասոյթային խօսքերու մէջ. ունին փոխաբերական իմաստ. **Մօտէն կը ճանչնամ զինք: Բարձրէն մի՛ խօսիր հետս: Ես հեռուէն կը հետեւիմ ձեր խնդիրին: Քիթին տակէն բաներ մը մրթմրթալով տուն գնաց:** Այստեղ բացառական հոլովով դրուած բառերը տեղի պարագայ չեն, այլ փոխաբերաբար գործողութեան կատարման ձևը ցոյց կու տան: Նման գործածութիւն ունին նաեւ դերանունները.- **Ես ինձմէ (ինքնաբերաբար) ելայ գացի: Դուն քեզմէ (ինքնաբերաբար) պէտք է գիտնայիր գալիքը: Մէկէն (յանկարծ) յայտնուեցաւ:**

Անորոշ դերբայի բացառական եւ գործիական հոլովներու ձևի պարագայի պաշտօնով հանդէս գալը մակբայական կիրարկութիւն է. ու հետաքրքրական է յիշել, որ արեւմտահայերէնի մէջ լրիւ մակբայացման վիճակ ունին **երթալ** բայի բացառական եւ գործիական հոլովաձևերը՝ **երթալէն/ երթալով**, որոնք ձևով ձգած են «հետզհետէ, կամաց-կամաց» իմաստը ու իբրեւ անկախ մակբայ կը գործածուին խօսակցականին մէջ. **երթալէն գործերը կը վատթարանան, երթալով գործերը կը վատթարանան: Երթալէն օդերը կը պաղին: Երթալով դասերը կը դժուարանան:**

Արեւմտահայ քերականութեան մէջ անորոշ դերբայի բացառական եւ գործիական հոլովներու ձևի պարագայի պաշտօնով հանդէս գալը օրին

<sup>477</sup> Վ. Թէքեան, *Զաւակս*, տե՛ս Յեղին սիրտը, նշուած ժողովածուն, էջ 623:

<sup>478</sup> Վ. Թէքեան, *Կ'անձրելէ, տղաս*, տե՛ս Յեղին սիրտը, նշուած ժողովածուն, էջ 611:

<sup>479</sup> Վ. Թէքեան, *Զսիրուելով*, տե՛ս Յեղին սիրտը, նշուած ժողովածուն, էջ 608:



նկատուած է ու ամբագրուած, թէև ոչ ամբողջական ներկայացումով: Օրինակ՝ «Հայերէն լեզուի դասագիրք»-ը խօսելով անորոշ դերբայի մասին՝ կը գրէ. «**Ամբողջ օրը մտածելով կ'անցընէ, խաղալով ժամն անցուց, խօսելով կը քալէր նախադասութեանց մէջ մտածելով, խաղալով, խօսելով դերբայները դրուած են գործիական հոլովով եւ պարագայ են**»<sup>480</sup>: Հնո չ'անդրադառնար բացառական հոլովի ձևի պարագայի պաշտօնին, բայց ուրիշ տեղ՝ ձևի պարագայի նուիրուած բաժնին մէջ կը գրէ, թէ ձևի պարագան կ'արտայայտուի «**Գոյականներու կամ գոյականաբար գործածուած այլ խօսքի մասերու բացառական եւ գործիական հոլովներով**» ու կը բերէ Մեծարենցէն տուն մը, ուր երկու ձևի պարագայ կ'արտայայտուած անորոշ դերբայի բացառական հոլովով. *Յայգն է ժայթքած իր շողակի շատրուաններն անըջական.*

*Հեռուներէն ուտի մը թաւ հեծքը կու գայ դողողալէն,*

*Այս գիշեր ջերմ ու երագուած կայծեր հոգույս խորերն ինկան,*

*Կը մարեմ լոյսը լամպարիս ու կ'երագեմ մրափելէն*<sup>481</sup>:

Հակառակ շարադրանքի թուլութեան եւ բերուած օրինակներու անբաւարարութեան՝ կը հասկցուի, որ անորոշ դերբայի բացառական եւ գործիական հոլովները խօսքի մէջ կը կատարեն ձևի պարագայի պաշտօն:

Անորոշ դերբայի բացառական հոլովի մակբայական այս կիրարկութիւնը նկատուած է նաեւ արեւելահայ բարբառներուն մէջ. էդ. Աղայեան Մեղրիի բարբառի պարագային գայն կը կոչէ **մակբայական դերբայ**, որ, «կազմվում է անորոշ դերբային ավելացնելով էն վերջավորությունը»<sup>482</sup>: Ան կը յայտնէ, որ դերբայը իր բովանդակութեամբ կը համապատասխանէ «աշխարհաբարի անորոշ դերբայի գործիական հոլովին՝ իբրև ձևի պարագայ» տալով բարբառի եւ աշխարհաբարի գոյգ օրինակներ՝ *ըսէլէն-ասելով, խըսէլէն-խօսելով*: Աղայեան կ'եզրափակէ գրելով. «Կազմությամբ այս դերբայը նույնն է անորոշ դերբայի բացառական հոլովի հետ, որն այսպիսի գործածություն ունի նաև Պոլսի բարբառում»<sup>483</sup>:

Մէկ կողմ ձգելով ձևի պարագայի պաշտօնով հանդէս եկող անորոշ դերբայի գործիականի համընդհանուր գործածութեան պարագան լեզուաբանները ուշադրութիւն կը դարձնեն Պոլսոյ բարբառէն արեւմտահայ գրական լեզուին անցած բացառական հոլովի ձևի պարագային վրայ: Արեւելահայ քերականութիւնը կը զբաղի այս դերբայի սահմանումով ու անուանումով: Ստորոգիչին արտայայտած գործողութեան համընթաց գործողութիւն սահմանումը կը վերաբերի նաեւ արեւելահայերէնի երկրորդ անկատար դերբային՝ *գրելիս, կարդալիս*, որ խօսքի մէջ հանդէս կու գայ ժամանակի պարագայի պաշտօնով: *Ալիս-ելիս* վերջաւորութեամբ դերբայը կը կոչուի համընթացական, իսկ *էն* վերջաւորութեամբ դերբայը՝ *ընթացակցական դերբայ*:

<sup>480</sup> Մ. Աբրահամեան, Բ. Վերդեան, Վ. Քոսեան, *Հայերէն լեզուի դասագիրք*, էջ 145:

<sup>481</sup> Նոյնը, էջ 319: Արձակէ բերուած եւս երկու օրինակները գոյականի գործիական հոլովաձեւով են եւ ոչ անորոշ դերբայի:

<sup>482</sup> **Էդ. Աղայան**, *Մեղրու բարբառը*, Ե., 1954, էջ 196:

<sup>483</sup> Նոյնը, էջ 197:

Քոստան կը գրէ. «Թէն այս դերբայը բարբառային ծագում ունի, սակայն արևմտահայ գրական լեզվում բավական շատ է գործածվում՝ ցույց տալով դիմավոր բայի արտահայտած գործողությանը համընթաց գործողության հատկանիշ եւ կատարելով ձևի պարագայի պաշտոն»<sup>484</sup>: Հեղինակը կ'աւելցնէ, որ «որոշ դէպքերում լրացումը հնարավոր է մեկնաբանել է՛ւ իբրև ընթացակցական դերբայ, է՛ւ իբրև անորոշ դերբայի բացառական հոլովածն՝ դրանց նմանության եւ կատարած շարահյուսական դերի ընդհանրության պատճառով»<sup>485</sup>: Բերուած օրինակներէն յայտնի կ'ընէ, որ պատճառի պարագայի դերով հանդէս գալու պարագային կը համարուի բացառական հոլով, իսկ ձեւի պարագայի պաշտօնով հանդէս գալու պարագային՝ ընթացակցական դերբայ:

Յետագայ բոլոր ուսումնասիրողները կամ այս երեւոյթին անդրադարձողները կը նշեն հետեւեալ յատկանիշները.

ա. Այս դերբայը կ'արտայայտէ դիմաւոր բայի գործողութեան համընթաց, զուգահեռ, ընթացակից գործողություն ու կ'ունենայ ձևի պարագայի պաշտօն, իր իմաստով կը նոյնանայ արեւելահայերէնի համընթացական դերբային հետ, որ սակայն կ'ունենայ ժամանակի պարագայի պաշտօն:

բ. Իր ձևով կը նոյնանայ արեւմտահայերէնի բացառական հոլովին հետ, որուն կը վերապահուի պատճառի պարագայի պաշտօնը, իսկ իրեն՝ ձևի պարագայի պաշտօնը:

գ. Իր իմաստով ու պաշտօնով կը նոյնանայ արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի անորոշ դերբայի գործիական հոլովին հետ, որ դարձեալ կ'արտայայտէ դիմաւոր բայի գործողութեան հետ համընթաց գործողութիւն ու կ'ունենայ ձևի պարագայի պաշտօն: Չի նշուիր, որ անորոշ դերբայի պարագային, գործիական հոլովին վստահուած է ձեւի պարագայի պաշտօնով հանդէս գալու ամենէն ընթացիկ ձեւը, ու ոչ թէ «ընթացակցական դերբային»: Քոստան իր այդ գիրքին «Բայի լրացումները դերբայներով» բաժնին մէջ<sup>486</sup> չի խօսիր անորոշ դերբայի գործիականով ձեւի պարագայի մասին, չ'անդրադառնար անոր, սակայն «պարագայական գործիականով բառակապակցություններ» բաժնին մէջ կը գրէ. «Ձևի իմաստն արտայայտվում է նաև անորոշ դերբայի գործիականով» տալով երեք օրինակ Պարոնեանէն, Չոհրապէն եւ Վահրամ Մավեանէն, աւելցնելով. «Երբեմն դիմավոր բայը և անորոշ դերբայը նույնական են լինում, և ձևի իմաստը սաստկություն է արտահայտում: Օրինակ՝ *Եւ ասելով կ'ատէր զիս*»<sup>487</sup>: Չի բացատրեր, թէ ինչու անորոշ դերբայի բացառականի ձեւի պարագան պէտք է առանձնացնել իբրև դերբայ, իսկ գործիականինը՝ ոչ:

Այս տարանջատումը շփոթ կը ստեղծէ ու կը մղէ անորոշ դերբայի գործիական հոլովն ալ ընթացակցական դերբայ համարել: Օրինակ, *էն* վերջա-

<sup>484</sup> Վ. Քոսյան, *Արևմտահայերէնի բառակապակցությունները*, Ե., 1986, էջ 230 :

<sup>485</sup> Նոյնը, էջ 231:

<sup>486</sup> Նոյնը, էջ 223:

<sup>487</sup> Նոյնը, էջ 172:

տրոյթեամբ ընթացակցական դերբայի կազմութեան օրինակներ տալէ անմիջապէս ետք կը գրուի. «Այս դերբայի գործիականը նախադասության մէջ կատարում է ձևի պարագայի շարահյուսական պաշտոն»<sup>488</sup>: Այս հակասական մօտեցումին պատճառը այն փաստն է, որ անորոշի գործիական հոլովն ալ նոյն կիրառութիւնն ու իմաստը ունի:

Նոյն մօտեցումը կ'ալ նաև ուրիշներու մօտ. Հ. Ռ. Խաչատրեանը կը գրէ. «Գրական արևմտահայերէնում ընթացակցական դերբայը կազմվում է անորոշ դերբայից՝ էն վերջավորությամբ, ինչպէս *աղօթելէն, լալէն, փշրելէն, ճեղքելէն* և այլն»<sup>489</sup>: Յետոյ կ'անւելցնէ, որ ընթացակցական դերբայը բնորոշ է արևմտահայ բարբառներուն ու կու տայ քանի մը բարբառներուն մէջ դերբայական հիմքի վրայ անոր *ով, է, էն* վերջատրութիւններով կազմուիլը: *Ով* վերջատրութիւնը կը համապատասխանէ այդ բարբառներուն գործիական, իսկ *էն* ու *է* վերջատրութիւնները՝ բացառական հոլովներուն: Ուրեմն գործիական հոլովաձևն ալ ընթացակցական դերբայ նկատենք: Ոչ մէկ ակնարկութիւն արեւմտահայ եւ արեւելահայ գրական լեզուին գործիական հոլովի նոյնարժէք գործածութեան մասին:

Հրանտ Զ. Պետրոսեան կ'ընէ հետեւեալ հաստատումը. «Ոմանք նոր հայերէնում ընդունում են նաև ընթացակցական դերբայի տեսակ, որն ըստ էության անորոշ դերբայի բացառականի կամ գործիականի պարագայական կիրառություն է»<sup>490</sup>:

Ասիկա փաստօրէն ժխտումն է արեւմտահայերէնի ընթացակցական դերբային եւ հաստատումն է այն իրողութեան, որ արեւմտահայերէնին յատուկ է անորոշ դերբայի բացառական եւ գործիական հոլովներու մակբայական գործածութիւնը: Հետեւաբար անտեղի է բացառական ձևը կոչել ընթացակցական դերբայ, իսկ միւսը համարել գործիական հոլով:

Մենք արդէն քննեցինք, որ բացառական ձևը գործիականի համեմատութեամբ ինչ սահմանափակումներ ունի եւ որոշ վերապահութեամբ պէտք է ընդունիլ Քոստանի այն հաստատումը, որ ան «արևմտահայ գրական լեզվում բավական շատ է գործածվում»<sup>491</sup>: Հակառակ կարծիքին է Հ. Ռ. Խաչատրեան. «արևմտահայերէնում ընդհանրապէս ընթացակցական դերբայը գործածության ավելի քիչ հաճախականություն ունի», բայց կարելի չէ համաձայնիլ վերջինիս այն կարծիքին, թէ այդ «պատճառով էլ որոշ քերականներ այն չեն առանձնացնում իբրև ինքնուրույն դերբայ»<sup>492</sup>: Բացառական հոլովը ունի ձևի, պատճառի եւ տեղի պարագայական նշանակութիւններ. ձևի պարագան շատ

<sup>488</sup> **Յու. Ավետիսյան**, *Արևելահայերէնի և արևմտահայերէնի գուգադրական քերականություն*, Ե., 2007, էջ 157:

<sup>489</sup> **Հ. Խաչատրյան**, Գրական արևմտահայերէնի և ՀՀ տարածքում գործառող կը ճյուղի բարբառների բայական համակարգերի առնչությունները.- *Գրական արևմտահայերէնի և ՀՀ տարածքում գործառող կը ճյուղի բարբառների առնչությունները*, Ե., 2016, էջ 181-182:

<sup>490</sup> **Հ. Պետրոսյան**, *Հայերենագիտական բառարան*, Ե., 1987, էջ 184:

<sup>491</sup> **Վ. Քայան**, *Արևմտահայերէնի բառակապակցությունները*, Ե., 1986, էջ 230 :

<sup>492</sup> **Հ. Խաչատրյան**, նշուած աշխ., էջ 182:

յաճախ իմաստային խաչաձևում կը ստեղծէ պատճառի եւ տեղի պարագաներուն հետ, այդ պատճառով ալ հետզհետէ կը նուազի անոր գործածութիւնը թէ՛ խօսակցական եւ թէ գրաւոր խօսքին մէջ, բայց այս երեւոյթը չի կրնար կապ ունենալ զայն ընթացակցական դերբայ համարել կամ չհամարելուն հետ: Այդ մերժումը, ըստ իս, հիմնուած է պարզապէս այն հիմքի վրայ, որ ձեւի պարագան անորոշ դերբայի բացառական հոլովի արտայայտութիւններէն մէկն է, ինչպէս է պարագան անոր գործիական հոլովին:

Ընթացակցական դերբայ հասկացութիւնը տեղ գտած է նաեւ սփիւռքահայ քերականութեան մէջ: Կարօ Առաքելեան երկու էջ յատկացուցած է անոր, տուած սահմանումը, կազմութեան կերպը՝ անորոշ դերբայ+էն վերջաւորութիւն, ծանօթութեան մը մէջ մէկ օրինակով տարբերած է բացառական հոլովով պատճառի պարագան ընթացակցական դերբայէն: Վերջինիս համար տրուած են երկու օրինակներ. *Յասմիկը ներս մտաւ դողդալէն: Ոտքի՛ ելէք խաչակնքելէն*<sup>493</sup>: Այս բացատրութիւնն ու օրինակները թիւր պատկերացում մը կը ստեղծեն: Այս ձեւերուն հաւանական գործածութիւնը հաստատելով հանդերձ՝ սովորականը գործիական հոլովով տարբերակն է. *Յասմիկը դողդալով ներս մտաւ: Խաչակնքելով ոտքի՛ ելէք*: Պարզապէս արուեստական դերբայի մը առանձնացումը հոս պատճառ կը դառնայ լեզուական կեղծ պատկերի մը ստեղծումին: Չեւի պարագային կամ հոլովներուն նուիրուած դասին կարելի էր յաջորդաբար դնել անոր գործածութիւնը երկու հոլովաձեւերով եւս, նշելով հանդերձ բացառական հոլովաձեւով արտայայտուած ձեւի պարագայի սահմանափակումները: Արեւմտահայերէնի մէջ *ընթացակցական անուն* դերբայի մը առանձնացումը ու զայն միայն անորոշ դերբայի բացառական հոլովին հետ կապելը ամբողջապէս անտեղի տարանջատումներ են:

Hagop Tcholakian- The Parallelistic Participle in Western Armenian.-In Western Armenian speech both ablative and instrumental cases of the indefinite participle, have a function of case of manner, showing an action parallel to the indicative mood. The same cases of nouns have the same function of case of manner. These ablative cases of infinitive verbs and nouns came from verbal speech and have some restrictions in comparison with the instrumental case. This ablative case acting as infinitive verb is separated by some linguists and is called parallelistic participle. The article confirms that the case of manner of ablative case of the indefinite participle is one of its adverbial forms, such as instrumental case, and there is no reason for that separation.

<sup>493</sup> Կարօ Առաքելեան, Արդի հայերէնի քերականութիւն, Բ. գիրք, Պէրյուք, 1998, էջ 130-131:

## ՆՈՐ ՉԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՍԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԳՐԱԲԱՐՑԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայերենի զարգացման ընթացքը պարզելու համար առաջնային կարևորություն ունեն քերականական տարբեր մասնիկների ծագումը, տարածման ժամանակը և ընթացքը պարզելը, այն առումով, որ այդ մասնիկներից շատերը հաճախ ունենում են սահմանային արժեք՝ պայմանավորելով լեզվի փուլը, մի փուլից մյուսին անցումը, տարածքային այս կամ այն տարբերակը, դրանց դասակարգումը և այլն:

Հայերենագիտության մեջ քերականական մասնիկների ծագման հարցին մեծ կարևորություն է տրված, բազմաթիվ հիմնարար աշխատություններում հանդիպում ենք տարբեր ձևայինների ծագման մասին դիտարկումներ, ինչպես՝ *կու*, *կայ*, *պիտի* և այլն, ընդ որում հաճախ դրանցից շատերը ունենում են մեկից ավելի վարկածներ:

Հետևելով մեր մատենագրությանը, այլևայլ բնագրերին՝ կարելի է խոսել որևէ ձևային գրառման ժամանակի մասին միայն, քանզի դրանց ծագման ու առաջին արձանագրման ժամանակները կարող են ոչ միայն չհամընկնել, այլև երկար ժամանակային տարբերություն ունենալ: Այդ պատճառով «հետգրաբարյան շրջանում առաջացած ձևային» ձևակերպմամբ նկատի ենք ունեցել այն մասնիկները, որոնք հատուկ չեն գրաբարյան քերականական համակարգին, դուրս են նորմայից, արձանագրվել են ուշ շրջանում, հաճախ՝ միջինհայերենյան կամ վաղաշխարհաբարյան աղբյուրներում:

Մեր դիտարկած աղբյուրները չունեն ժանրային, տարածքային սահմանափակում, «ավանդական» գեղարվեստական և պատմագրական ժանրերից բացի դիտարկել ենք նաև նամակագրությունը, դիվանական փաստաթղթերն ու գրագրությունները, զանազան արձանագրությունները և այլն: Դրանցից քաղել ենք մի քանի ձևայինների մասին բնագրային վկայակոչումներ, որոնք լեզվական ինչ-ինչ ենթադրություններ անելու հնարավորություն են ընձեռում: Մեջբերումներում պահպանել ենք բնագրի ուղղագրությունը:

Հաճախ միջին հայերենի կամ աշխարհաբարի մեջ համակարգային դարձած այս կամ այն ձևային ունենում է գրաբարից հետագա փոփոխության անցումային-միջանկյալ մի ձև, որը միշտ չէ, որ կարող է պահպանված լինել աղբյուրներում: Մի քանի դեպքերում մենք հանդիպել ենք այդպիսի միջանկյալ ձևերի, օրինակ՝ գրաբարի *-եսլ* անցյալ դերբայն արևմտահայերենի *-էր* (գրեր, կարդացեր) դերբայի փոխանցվելիս որոշակի փոփոխում գործածական է եղել *-եսար* (*-եսլ*-*-եսար*) ձևով, որը հանդիպում ենք միջնադարյան ժամանակագրության հետևյալ հատվածում. «Ի թվականութեանս մերում

ՌԾԵ սով սաստիկ է *եղեարք*, որ մարդ գմարդ, շուն եւ կատու *կերեալ* են»<sup>494</sup>: Հետաքրքիր է, որ նույն ժամանակագրության մեջ գործածված ենք գտնում նաև *-եալ*, *-եր* վերջավորությունը նույն ժամանակային իմաստով, օրինակ՝ «Տէր Գեորն եւ տէր Անանիան քահանայ են *եղեալք*», «Զմիմեանց գերկիրն ասպատակեն, եւ թալնեն եւ գողանան *եղեր* հանապազ»: Բնագրերում *-եալ* և *-եր* կարող են գործածվել կողք-կողքի նույն նախադասության մեջ, ինչպես՝ «Ոմանք կ'ասեն, թէ բազում աղքատ *մնացեր* դուրս եւ ոչ են *առեալ* ներս, նորա համար *պատասեր* է սինն»<sup>495</sup>:

Որ *-եր* վերջավորությունը աստիճանաբար է մուտք գործել գրավոր խոսքի մեջ, նկատվում է նախ՝ գրաբարաձև օժանդակ բայերի հետ (օրինակ՝ *էաք*) գործածությունից. «Մէք որ ինչ *գրեր* էաք, ինչպէս որ *գրեր* էաք առաջի գրումն»<sup>496</sup>:

Որպէս անցումային ձև պետք է դիտարկել նաև *քանս* բառակը, որ ցույց է տալիս *քան+գ* նախադրային կառույցից *քանց* մակբայի առաջացման ընթացքը. «Միխիթարութիւն վշտաց և քաւարան մեղուցելոց, որ գիտես գամենայն յառաջ *քանս* լինել նոցա»<sup>497</sup>:

Մատենագրական մի շարք փաստեր ցույց են տալիս *կայ* պակասավոր բայի և բարբառների *կայ* եղանակիչ մասնիկի՝ միննույն հիմքից ծագած լինելը (հայերենի պատմությանը նվիրված աշխատություններում դրանց ծագումը միննույն հիմքից բխեցնող վարկածի կարելի է հանդիպել): *Կայ* պակասավոր բայը միջին հայերենում, լայնացնելով գործածության շրջանակը, կարող էր դրվել թե՛ անցյալ, թե՛ հարակատար դերբայների վրա, բերենք երկու օրինակ դիվանական գրություններից՝ «Մեր փաշան *կայ* ի Նապուլուս *նստած*, գնալու վրայ է, խապար է ուղարկեր վանքերուն», «Զի թէպէտ այժմ ինդայ հոգին չարութեան ընդ յառաջումն իւրն գործառնութեան, որով *կայ տրտմեալ* Հոգին սուրբ»<sup>498</sup>:

*Կու*-ի արժեքով եղանակային այլ մասնիկներ, որոնք հանդիպում են հատկապէս բարբառներում և որոնց միջոցով հաճախ բարբառների ճյուղերն են առանձնացվում (կը, կա, կու), հետգրաբարյան բնագրերում նույնպէս շատ կարելի է հանդիպել: Օրինակները հուշում են, որ *կու*, *կոյ*, *կայ* մասնիկներն այնտամենայնիվ տարբեր ծագում ունեն, չնայած որ մասնակցում են նույն՝ ներկայի կամ ապառնիի բայաձևեր կազմելուն: Օրինակ.

<sup>494</sup> Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դ.), հատոր I, կազմեց Վ.Ա.Հակոբյան, Ե., 1951, էջ 239:

<sup>495</sup> *Ձուար ճիւղերն Օղու* քահանայի ճանապարհագրություն և ուխտ յԵրուսաղէմ, «Բազմավեպ», 1867, էջ 114:

<sup>496</sup> *Յոս Դ. Ա.*, Տնօնչիա Петра Великого с армянским народом (документы), С. Петербург, 1898, էջ 154:

<sup>497</sup> *Նորայր Պողոսյան*, Հայ հնատիպ գրքերի ձեռագիր հիշատակագրություններ (1512-1712 թթ.), Ե., 2012, էջ 59:

<sup>498</sup> Դիւան Սուրբ Յակոբայ (Ա-ԺԹ), «Միոն», 1941 յուլիս-օգոստոս, էջք 83, 158:

Կոյ (>կույ) - «Ինչ կերպիւ որ ճար կոյ լինի», «Ողորմութեամբ կոյ պախեն» «Յիստակ և ընտիր կոյ պախի», «Բանին կոյ կենան», «Կոյ իմանանք մեր ողորմութիւնն առ ձեզ» և այլն<sup>499</sup>:

Կի - «Մեք այս մէջս կիստակենք, որ Աստուծով կի լինիմք թագաւորի գորաց մէջն»<sup>500</sup>: Հմտ. Տրանսիլվանիայի կամ հունգարահայոց խոսվածքի կի մասնիկի հետ (կի կարավարին, կի քալէ, կի տեսնունք), որ հավասարապէս կիրառվում էր կու-ի հետ, օրինակ՝ «Ամենքեանս կու խոստանանք մէկմէկի ու կի կապվինք մեր ձերնագրովն ու մօհրովն»<sup>501</sup>:

Պիտի եղանակիչ մասնիկի կրճատումից տի-ի գործածության հանդիպում ենք արդէն 16-րդ դ. բնագրերում. «Յաւուրս ի վեր ոչ գիտենք, թէ այլ ինչ գիր և գրուց տի գայ, յորժամ լսեն զգալն քո»<sup>502</sup>, ուր տի-ն հստակ ապառնիի իմաստ է արտահայտում՝ «տի գայ» = պիտի գա:

Ապառնիի իմաստ է կերտում նաև պիտի-ի առաջացած պի մասնիկը, ինչպէս՝ «Կարծիւ, թէ հոտ այլ լաւ պի լավի», «Մասնաւորի քիչմ բան պի գրեմ», «Կու ճանաչեմ, որ բարի պի լինի»<sup>503</sup>:

16-17-րդ դդ. սահմանագծին արդէն գործածված ենք գտնում հետագայում գրական արևմտահայերենից հայտնի նէ մասնիկը: Հեղինակը՝ Զուար քահանան, Կ.Պոլսից լինելով, ուղեգրական իր երկում հաճախակի է գործածում այդ մասնիկը, որ կարող է ցույց տալ, որ այն հայերենի Կ.Պոլսի խոսակցական տարբերակի մեջ քաղաքացիություն էր ստացել առնվազն 17-րդ դ., օրինակներ. «Խոստովանահայրս գայ հանդիպի նէ՛ ի՛նչպէս հարկիս կ'անես, նայ ևս լուսաւորեալ հոգիս ասացեր է, թէ քո տէվլէթին լայեխ ինչ է նէ՛՝ գայն կ'անես», «Յորժամ մեծ մարդ գայ նէ՛՝ նոր ձին անդ կապեն»<sup>504</sup> և այլն: Նույն Զուար քահանայի երկում հանդիպում ենք եղեր քերականական ձևի առաջին օրինակները. «Պապիկն այն օտան զմիաբանքն կու ածիլէ եղեր, «Յամաքով զնացողն կու տանին եղեր»<sup>505</sup>:

Նշված ձևայինները, ինչպէս վերը ասացինք, պայմանավորում են նոր լեզվավիճակ, և դրանց կիրառության հաճախակիացումը հանգեցնում է լեզվական նորմայի առաջացմանը՝ իր չափով նպաստելով գրական նոր լեզվի առաջացմանը: Մեր դիտարկած աղբյուրներում կարելի է հանդիպել այնպիսի հատվածներ, որոնք, նոր մասնիկների և քերականական նոր ձևերի կիրառությամբ այնպիսի լեզվական որակ են ստացել, որ շատ մոտ են կամ համընկնում են աշխարհաբարի ճյուղերից որևէ մեկին: Օրինակ 17-րդ դարի բնագրերից՝ «Դու լաւ կու գիտես, ոչ թէ ես», «Քովս գառն են, դուրս կ'ելնեն գայլ

<sup>499</sup> Օրինակները քաղել ենք *ՅօՅ Դ. Ա.*, Сношения Петра Великого с армянским народом... գրքի 402, 403, 432 և այլ էջերից:

<sup>500</sup> *ՅօՅ Դ. Ա.*, նույն գրքում, էջ 422:

<sup>501</sup> *Գրիգոր Գովրիկեան*, Հայք յԵղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ, Վիեննա, 1893, էջ 90:

<sup>502</sup> Դիւան Սուրբ Յակոբայ... էջ 41:

<sup>503</sup> Մայր դիւան Մխիթարեանց ի Ս. Ղազար (1707-1773), Վենետիկ, 1930, էջք 106, 154 և այլ:

<sup>504</sup> *Զուար Ճիլերճի*..., նույն գրքում, էջք 130, 139:

<sup>505</sup> *Զուար Ճիլերճի*..., էջք 178, 209:

կու դառնան», «Չորս ամիս ծանր հիւանդութիւն քաշեցի, քսան օր է, որ ոտից վրայ եմ ելեր»<sup>506</sup>:

Հնատիպ գրքի էջերից քաղել ենք աշխարհաբար հետևյալ հիշատակագրությունը. «Սուրբ Էջմիածնայ գիւղի անունն Վարդգէս է, Վաղարշ Արշակունին մեծացրել է և իւր անունն դրել»<sup>507</sup>: Այն ցույց է տալիս, որ 19-րդ դարի կեսերից մեզ հայտնի Արարատյան բարբառի հիմքի վրա նոր ձևավորվող գրական արևելահայերենի նախնական տարբերակն իրականում գործածվել ու նաև գրվել է շատ ավելի վաղ 18-րդ դարի սկզբներին:

Բոլոր այս փաստերը հիմք են տալիս պնդելու, որ աշխարհաբար նորմավորված կամ կանոնավոր ձևերը (նկատի չունենք այս կամ այն բարբառային միավորը) օրինաչափ ու լայն գործածություն են ստացել դեռևս միջին հայերենի ընդերքում՝ 15-16-րդ դդ., և որպէս քաղաքացիություն ստացած ձևեր գրավոր խոսքի մեջ են ներմուծվել 16-րդ դ. վերջից ու 17-րդի սկզբից: Ասվածի վկան են այս ու այն բնագրում սփռված՝ աշխարհաբար գրական լեզուն հիշեցնող պատառիկներն ու առանձին քերականական մասնիկները:

Norayr Poghosyan - The emergence and the use of new morphemes in post old armenian period.- To find out the development period of armenian language, it is very important to define the origin time of various grammatical particles, finding out the process, as many of these particles determine the transition of one language phase to another phase, the regional version, the classification of those and so on.

From the various post old armenian (Middle armenian and early ashkharabar) sources we have identified morphemes that don't occur in old armenian, so they appeared after old armenian, for example կայ, պի, տի, նէ, etc.

Норайр Погосян - Появление и употребление новых морфем в постграбарский период.- Для прояснения процесса развития армянского языка первостепенное значение имеет определение времени возникновения различных частиц и морфем. Эти морфемы часто имеют определяющую роль - отличают разные этапы развития армянского языка, переход к другой фазе, ту или иную территориальную версию, их классификацию. .

Из различных источников постграбарского периода (среднеармянский и ранний ашхарабар) мы попытались выделить и представить морфемы, которые не встречаются в грабарском периоде, следовательно созданы в постграбарском периоде, например: կայ, պի, տի, նէ и другие.

---

<sup>506</sup> Դիւան Սուրբ Յակոբայ..., էջք 40, 253, 284:

<sup>507</sup> Նորայր Պողոսյան, նույն գրքում, էջ 12:



**ԱՆՁՆԱՆՈՒՆԸ՝ ԶԱՎԵՇՏԻ շԵՆՔ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ  
ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ԶՎԱՐՃԱՄՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Տարատեսակ օտարալեզու և հայերեն անուններով հեղեղված մեր անվանացանկին հաղորդակցվելն ինքնին զավեշտալի է: Ամեն մի ժամանակաշրջան իր կնիքն է դրել ոչ միայն հայոց տեղաանունների, այլև անձնանունների վրա, երբեմն էլ այնպիսի «խոր հետք» թողնելով, որ դրանց ստեղծման պատմության բացակայությունն անգամ չի խանգարել լսողների մեջ լիաթոք ծիծաղի առաջացնելուն: Դրա վառ ասպացույցը Հովհ. Շիրազի՝ հայոց անձնանունների<sup>508</sup> և տեղանունների<sup>509</sup> նվիրված ստեղծագործություններն են:

Ընտանիքներում ծնված երեխաներին արտառոց ու անհեթեթ անուններ, երբեմն էլ ոչ հայկական անձնանուններ, ազգանուններ և տեղանուններ դնելը, տարատեսակ տառային, վանկային ու վանկատառային հապավումներով մարքսիզմի կլասիկների ու պետական գործիչների անուններով և քաղաքական լոզունգներով հայ նորածինների բարուրները «փաթաթելը» կապված էին հատկապես Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Միության վարած քաղաքականության, համատարած անգրագիտության վերացման ու կիսագրագիտության պայմաններում խորհրդային գաղափարախոսությունը բռնի մարդկանց ուղեղներն ու ընտանիքները մտցնելու գործընթացների հետ:

Քաղաքական այդ «ոգևորության» արտացոլանքը հայկական ընտանիքներում դրսևորվեց խորհրդային կարգեր հաստատվելու հենց առաջին տարիներին, և հայ նորածինները սկսեցին անվանակոչվել՝

1. Մարքսիզմի կլասիկների անուն-ազգանուն-հայրանունների տարատեսակ հապավումներով ու բառամասերով (Մելս-Մելսիդա, Մաենլեստ, Վուլիս-Վիլիկ-Վիլուն-Վիլեն-Վլադիլեն, Լենտրոշ-Լենդրոշ) և այլն:

2. Քաղաքական գործիչների անուն-ազգանուններով՝ Կիրով, Բերիա, Լավրենտի (Շիրակ, Արցախ, Տավուշ, Լոռի), կամ դրանց բառամասերով՝ Խրուսիկ՝ Խրուշչով, Միկոյան (Վայք), երբեմն էլ ազգանվան կրճատ ձևով՝ Պլեխան (Դսեղ) .

3. Քաղաքական լոզունգների տառային՝ ԱՀՀնՍ-Արժանացի՛ր հեղափոխության հաղթանակին և սոցիալիզմին (Վարդենիս), բառամասային՝ Անշեղընթղեպսոց-անշեղ ընթացքով դեպի սոցիալիզմ (Երևան) հապավումներով կամ աշխատավորների միջազգային օրվան նվիրված ռուսերեն լոզունգի բառամասերով՝ Դագորասյերմա- դա գորաստվուեստ պերվօե մայա (Արցախ):

<sup>508</sup> Շիրազ Հովհ., *Քնար Հայաստանի*, հատոր 1, Մարդկանց անունները, Ե., 1958, էջ 440:

<sup>509</sup> Լույս տեղում, Մեր գյուղերի անունները, էջ 430:

4. Տարատեսակ համաժողովների ու կազմակերպությունների օտարալեզու կամ հայերեն հապավումներով՝ Կիւ-Կիւմ – ռուս.՝ *Կոմունիստիչեսկիյ ինտերնացիոնալ մալադոժի*, Երինտ – *Երրորդ ինտերնացիոնալ*):

5. Պետության առջև դրված 1933-37թթ. հնգամյա պլանային ցուցանիշի արտացոլմամբ՝ Վերելք (Գուգարք) և այլն:

Քիչ չեն նաև քաղաքականության հետ կապ չունեցող անհեթեթ ու զավեշտալի անձնանունները: Ահա դրանցից մի քանիսը՝ կրողների «վերձանություններով»՝

ա) օտար դիմելաձևը՝ աղավաղված անձնանվան տեսքով՝ Մազմազել-մադմաուզել (Երևան) – 2-րդ աշխարհամարտի տարիներին Ֆրանսիայում հայտնվելու արդյունք:

բ) Մրցումների կանոնակարգը արտացոլող անձնանունով՝ Ֆինալ (Արթիկ) – Մոսկվայում ըմբշամարտից եզրափակիչ դուրս գալու արդյունք:

գ) Կանալիզացիա (Երևան) – կենցաղային պայմանների բարելավման ապացույց: Ի դեպ, Կանալիզացիա անձնանունը կրող տղամարդուն 1950-ականներին վերապատրաստման նպատակով Երևանից Մոսկվա գործուղվող շինարարների ցուցակից վերադարձը հանում է, որպեսզի հանրապետությունը չխայտառակվի, ինչը դուր չի գալիս Կանալիզացիային և բողոքում է գրում վերին մարմիններին:

Հայերը իրենց երեխաներին անվանել են նաև Սոցիկ (Վանաձոր), Պրեմետիվա, Ֆրանսիկ, Աֆրենսիա, Ֆորմիլա (Դսեղ), Սովետ (Ղափան), Կասիր, Մեկրետար (Գավառ, Մարուխան), Կամֆլես, Հոկտեմբերիկ, Մոսկով (Երևան, Լոռի): Էլ ավելի անհեթեթ է Ելվրես անձնանվան առկայությունը (Արագածոտն, գ. Հնաբերդ)։

*Հնաբերդ գյուղ հարս եկած նորահարսը հարևանի տնից կնոջ գոռոցի ձայն է լսում. «Շո՛ւտ արա, Ելվրե՛ս, ազիզը թաղեն», ու սարսափած իրեն տուն է գցում և պատմում լսածը:*

*– Ելվրեսը մեր հարևանի երեխայի անունն է, – ծիծաղելով հարսին հանգըստացնում է սկեսուրը: (ԱՄՇ)<sup>510</sup>*

Հայկական մեկ բնակավայրում՝ Սարուխանում, զավեշտալի օտար անուն-ազգանուններով հեղեղված լինելու մասին է հավաստում լրագրող Տիգրան Նիկողոսյանի «Չերչիլը» հուշապատումը<sup>511</sup>:

Այժմ տեսնենք, թե անձնանունները հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում ինչն հնարանքներով են անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ դառնում.

ա. Երգիծական մանրապատումի առաջացման հենք կարող է դառնալ ազգային ու կրոնական տոների (Նոր տարի, Բարեկենդան, Զատիկ) համար ինչ-որ բան պահելիս ժողովրդական *խոսքում օգտագործվող բանաձևը՝*

<sup>510</sup> Այս և վերը մեջբերված բոլոր անձնանունների գրանցումները կատարվել են մեր կողմից: Կրկնությունից խուսափելու համար մեր գրառումների մոտ այսուհետև կնշվի **ԱՄՇ**, իսկ մեր հավաքածուի այլոց գրառումների մոտ՝ **ԱՄՇՀ** համառոտագրությունները:

<sup>511</sup> **Նիկողոսյան Տ.**, Իրական դեպքեր բայազետցիների կյանքից, Ե., 2016, էջ 24-25:

կապված մարդկանց ապրելակերպը ճիշտ կառավարելու կամ էլ եղանակային դժվարությունները (կոնկրետ՝ մարտ ամսվա «գոությունները») հեշտությամբ հաղթահարելու գործելաոճի հետ: Հիշենք Բարեկենդանյան զվարճապատումի բոլորիս ծանոթ թումանյանական մշակումը: Նմանատիպ սյուժետով, այս անգամ եղանակային դժվարությունները հաղթահարելուն առնչվող, երգիծական մանրապատումի հետաքրքիր օրինակ է պոլսահայերից գրառել հայագիտության անխոչ նվիրյալ Հր. Աճառյանը: Եթե առաջին երգիծապատումում ժողովրդական տոնախմբության Բարեկենդան անվանումը խորամանկությամբ «անձնանուն» դարձրածն է հայտնվում ու տիրանում այդ օրվա համար պահված ուտեստին, ապա աճառյանական գրառումում մարտ ամսվան տրրված ժողովրդական անվանումն է պատճառ դարձել անձնանվան քողի տակ ներկայանալ և խաբեությամբ պահուստային վառելիքը կնոջից վերցնել...

Ամուսնու՝ «Կնիկ... քեօսիւրին (իմա՝ քարածուխի) խոշորները Մարտիկ ախպօրը համար պահե» անընդհատ գգուշացումներից հետո ներկայանում է մի նոր «Բարեկենդան»՝ «Մարտիկ ախպոր» տեսքով, թե՛ «Մարտիկ ախպարը ես էմ: Քեօսիւրներուն խոշորը գատեցիր նե, տուր քի տանիս»<sup>512</sup>:

Ըստ բանահավաքի՝ «խոշորները պահենք Մարտիկ ախպորը համար» բանաձևը տարածված էր Պոլսում, և դրա «իմաստն այն է, թե՛ Մարտ ամսում ցրտերն ավելի գորեղ են և ավելի պետք կա ածուխի կամ փայտի»<sup>513</sup>:

բ. Անձնանվան և այն կրողի բնավորության, տեսքի, պահվածքի, դիրքի անհամապատասխանությունը ևս շրջապատում զավեշտ կարող է առաջացնել. Համեստ կամ Խոնարհ են դնում, մեծանալուց հետո պարզվում է՝ էությանբ հակառակն է, Մաքրուհի են դնում, փնթի է դուրս գալիս, Աշխուժ են դնում, դանդաղկոտ-դանդաղու է դառնում, Գեղեցիկը՝ տգեղ (չնայած յուրաքանչյուր ծնողի համար իր ձագն ամենագեղեցիկն է, ինչը հավաստում է նաև հայկական առածը՝ *Ագրավի համար իր ձագից գեղեցիկը չկա*):

Ըստ բանավոր աղբյուրների՝ Հրաչյա Աճառյանը ակադեմիայում աշխատելիս մի օգնական է ունենում՝ Գեղեցիկ անունով, որը շատ տգեղ է լինում: Մի անգամ նա ասում է իր օգնականին. «Գեղեցիկ կ'ընես, քո անունը այնքան շատ է քեզ սագում, ոնց որ իմը՝ ինձ»: (ԱՄԵ)

գ. Անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ կարող է դառնալ հայկական անձնանվան հանգավոր բառախաղային կիրառությունը՝ զավեշտի հենք դարձնելով ստացած վայելքի և դրա դիմաց «ապրանքափոխանակության» պատրաստակամությունն արտացոլող խտացված ասելիքը.

*Մի որբիվերի կնիկ և ընուն, տան դռանը մի ընտիր տանձի ծառ և ունենում: Հարևան ջահել տղաներից մեկը գալիս և թաքուն բարձրանում ծառն ու սկսում քաղելը:*

*Քիչ անց էս կնիկը ձեն և լսում, դուրս և գալիս տեսնում՝ մեկը ծառի վրեն և, ասում աս՝*

<sup>512</sup> Աճառյան Հր., Պոլսահայ անգիր բանահյուսություն, Ե., 2009, էջ 169-170:

<sup>513</sup> Նույն տեղում:

– Հլա իջի ցած, տես՝ ինչ եմ բերելու գլուխըդ:

– Ի՞նչ ես անելու:

– Իջի՛, կտենաս, թե ինչ եմ անըմ:

Տղեն ծառից իջնում ա, էս կնիկը տանում ա տուն, մի քիչ հաց-մաց են անում, մրտցնում ա տեղաշորը, իրա ուզելիքն առնում ա: էս տղեն հագնւրվում ա, որ գնա, էս կնիկն ասում ա՝

– Անըմըդ ի՞նչ ա:

Բա թե՛ Մխիթար: Ասում ա՝

– Այ մխիթարվես դու, Մխիթա՛ր,

Տանձի ծառը հանի տար: **(ԱՄՇ)**

**դ.** Հայոց մեջ երբեմն նորածինների անունները դնում են երկու արական սեռերի *անձնանունների միացությամբ* (Արամ+Աշոտ, Հայկ+Արամ), կամ արական ու իգական սեռերի անձնանունների (մասնավորապես ամուսնական գույգերի) *վանկային կամ բառամասային հապավումներով*, ինչպես՝ Ալզիս – **Ալվարդ+Սարգիս**, Գահերինե – **Գարիկ+Հերբինե** և այլն:

Հենց նմանատիպ կառույցներն էլ պատճառ են դարձել, որ ժողովուրդը որոշ օտար բառերի հետ *համանուն-հարանունային դրսևորմամբ*, դրանց մասնատման կամ բառաբարդման միջոցով զավեշտալի մեկնաբանություններ տա:

Այսպես, օրինակ, հայկական զվարճախոսություններից մեկում զավեշտն ստեղծվում է վերը բերված կառույցի օրինակով՝ հայկական անձնանունական բառամասային հապավումով և ճապոնական հանրահայտ ֆիրմայի հարանունությամբ.

*Աբարանցի Փանտոն ու Սոնիկն ամուսնանում, տղա են ունենում, անունը դնում են Պանասոնիկ:* **(ԱՄՇ)**

**ե.** Չվարճախոսություններից մեկում էլ անսպասելի ծիծաղը դրսևորվում է արական և իգական *անձնանունների բառաբարդման միջոցով*՝ (Գարան+Անուշ, առաջինը՝ հնչունափոխված) – Գարնանուշ: Դրան հակադարձող նմուշում (Գևորգ+Մարո) հիմք է ընդունվել ոչ թե բառամիացումը, այլ վանկաբառային հապավմամբ նոր «անձնանուն» ստեղծելու փաստը: Այս դեպքում ստացված հապավումը համադրվում է *թուրք* հիվանդության օտարալեզու եզրույթին (**Գե+մարո**) և դառնում անսպասելի ծիծաղի աղբյուր.

– *Քուր ջան, անունդ ի՞նչ է, – հարցնում է մեկը:*

– *Գարնանուշ, – պատասխանում է աղջիկը:*

– *Ինչխ էլ երկար անուն է...*

– *Հորս ու մորս անունների միացությունից է ստեղծվել. հորս անունը Գարան է, մորս անունը՝ Անուշ:*

– *Իյա՜, քուր ջան, ի՞նչ լավ է, օր հորդ անունը Գևորգ չի էղել, մորդ անունն էլ՝ Մարո, թե չէ անունդ կդնեին Գեմառո:* **(ԱՄՇ)**

**գ.** Մեկ այլ զվարճախոսության մեջ *անձնանունների ստուգաբանությունն* է դառնում զավեշտի դրսևորման հիմնական «մեղավորը»: Այսպես, օրինակ, անձնանուններից մեկի ստեղծումը կապվում է տեղավայրի հետ. հայկա-

կան Սարիկ անձնանունը զվարճախոսության մեջ բացատրվում է հերոսի՝ սարում ծնվելու հանգամանքով, ինչին անմիջապես հետևում է վերը ներկայացրած օրինակի նմանությամբ միասեռական անձնավորությանը տրվող օտարալեզու *հոմոսեքսուալիստ* բառի՝ ժողովրդախոսակցականում կիրառվող *գոմիկ* եզրույթի մեջբերմամբ եզրակացությունը՝ կրկին կապելով հերոսուհու ծննդյան տեղի՝ *գոմի* հետ.

– *Մի աղջկա հարցնում են.*

– *Անունդ ի՞նչ ա:*

*Ասմա՝ Սարիկ:*

– *Բայց Սարիկ անուն կա՞: Ի՞նչ ա նշանակում:*

– *Որ սարում եմ ծնվել, մերոնք անունս դրել են Սարիկ:*

– *Ինչ լավ ա՝ գոմում չես ծնվել, թե չէ անունը դնելու էին Գոմիկ:*

Այս դեպքում զավեշտի առաջացման երկու հանգամանք է ներկայացվում, երկուսն էլ՝ վիրավորական՝ թե՛ գոմում ծնվելն ընդծելը, թե՛ (առավել ևս) անձնանվամբ հանիրավի համասեռամոլությունը մատնանշելը: **(ԱՄՇ)**

Է. Զվարճախոսություններից մեկում էլ զավեշտն ստեղծվել է օտարալեզու *անձնանվան մասնատման միջոցով*, ինչի հետևանքով անվան առաջին վանկի և հայերեն Սոնա անձնանվան հենքի վրա, ծանոթության ֆոնին, հակադարձվում է հակառակ սեռի մեկ այլ ներկայացուցչի զավեշտալի խոսքը.

*Հարցնում են.*

– *Քուր ջան, անունդ ի՞նչ ա:*

*Բա թե՛ էքստնա:*

– *Դե որ քու անունը Էզ Սոնա ա, ինձ էլ որձ Համո են ասում: (ԱՄՇ)*

ը. Բառամասնատման նույն սկզբունքը և Դիանա *անձնանվան սխալ հնչյունարտաբերումը* ևս կարող է անսպասելի ծիծաղի աղբյուր հանդիսանալ: Այս կերպ ստեղծված զվարճախոսությունը ոչ միայն ծիծաղ է առաջացնում, այլև օգնում է քննադատելու սխալ հնչյունարտաբերումն ու քաղբենիական պահվածքը.

*Մեկը հարցնում է.*

– *Քո՛ւր ջան, անունըդ ի՞նչ է:*

– *Ասմա՝ Զիաննա (իմա՝ Դիանա):*

– *Ճիշտն օր ըսեմ, ընձի էլ էջ Վալոդ կըսեն: (ԱՄՇ)*

թ. Ինչպես գիտենք, հայոց մեջ առկա է հայկական տեղանուններով երեխաներին անձնանուններ դնելը (Անի, Կարին, Հրագդան, Վան/իկ/), Սևան և այլն), նույնիսկ՝ ազգանուններով տոհմի բնակատեղին հավերժացնելը (Սշեցյան, Կարինյան, Ղարաբաղցյան, Խոյեցյան և այլն): Զվարճախոսություններից մեկում էլ օտար տեղանունը անձնանուն դարձնելն է նպաստել անսպասելի ծիծաղ առաջացնելուն. այս դեպքում զավեշտը անունը դնելու նպատակադրվածությունն է՝ հերոսի հիմնավորմամբ՝ հենված *քաղաքի (Հոմո) և ազգակցական ու կաթոլիկ եկեղեցու բարձրագույն առաջնորդի անվան անհեթեթ համանունությամբ.*

– *Էս մի թոռան անունն էլ իմ ուզածով դրեք – ասում է հայրը տղային:*

– Ասա՛, հե՛րա ջան, ի՞նչ ես ուզում դնենք, սասա՛ թող քու սրտովը լինի, –  
ասում է տղան:

– Ուզում եմ թոռանս անունը Հռոմ դնեք:

– Ա՛յ հեր, բա «Հռոմ» անուն կըլինի՞ :

– Որ դնեք, կըլինի: Դուք դրեք, որ երբ փողոցով գնալիս ըլեմ ու հարց-  
նեն՝ էն ո՞վ ա գալի, ասեն՝ Հռոմի պապը: (ԱՄՇՀ)

**ժ.** Նմանատիպ մտացածին՝ սարքովի-անհեթեթ անունով զավեշտ ստեղծելու նմուշներից մեկն էլ 1990-ականներին ժողովրդի սոցիալական վի-  
ճակին է առնչվում՝ պայմանավորված պարենային պայանքներից մեկի՝  
պանրի բացակայությամբ, և մարդկանց՝ զվարճախոսությամբ լիցքավորվելու  
և ապրելու ներշնչանքով.

– Էրեխիդ անունն ի՞նչ ես որոշել դնել, – հարցնում է երեխայի ծննդյան  
վկայականը գրանցող աշխատակիցը:

Բա թե՛ Պանիր:

– Ընկեր, բա Պանիր էրեխի անուն կըլինի՞ :

– Այ մարդ, իմ էրեխեն չի՞, դու գրի, թող տանը պանիր էլա ըլնի: (ԱՄՇ)

**ի.** Մյուսը զվարճախոսությունը կիսաիրական-կիսամտացածին մի նը-  
մուշ է՝ ի հավաստումն հայոց մեջ գոյություն ունեցող բազում զավեշտ առա-  
ջացնող անձնանունների.

Մի գյումրեցու հարցնում են՝

– Անունդ ի՞նչ ա:

Ասում ա՝ Առավել:

– Ա՛յ քեզ անուն, ճիշտն ասած, առաջին անգամ եմ լսում:

– Բա որ ախպորըս անունն իմանաս, ինչքան կզարմանաս:

– Ախպորըդ անու՞նն ինչ ա:

– Առավելս: (ԱՄՇ)

**լ.** Մյուժետային կառուցվածքով երգիծապատումներից մեկում, որտեղ  
նաև ցեղասպանության արձագանքն է առկա, զավեշտը դրսևորվում է մի կող-  
մից օտարալեզու դիմելաձևի՝ միս (տիկին) և դանիացի միսխոներուհի Քարեն  
Եփփեի ազգանվան (Եփփե) ու հայերեն միս եփել բառակապակցության հա-  
մադրման միջոցով.

Հալեայի մեջ դանիացի միսխոներուհի Քարեն Եփփեն բոլորին ծանոթ էր  
Միս Եփփե, որ պարբերաբար միտով ճաշ կբաժաներ տարագիրներուն:

Օր մը տարեց կին մը որբուկի մը հարցը ներկայացնելու համար գուկա  
այրիանոց՝ Միս Եփփեն տեսնելու համար:

– Ամնա՛ն, քա՛ն, – գրսե, – մինչ հոս եզա, – անունը չեմ գիդեր՝ ինչպե՞ս  
խոսիմ հետը:

– Ինչպե՞ս չես գիդեր, միս Եփփե է, – գրսին զիները:

Ամնա՛ն, – գրսե, – ես ալ կզարծեի՝ ամեն օր միս կեփե, անգէ է: (ԱՄՇ)

**իւ.** Հայկական անեկդոտների համատեքստում հանդիպում ենք այնպի-  
սի նմուշների, երբ հապավում-ծածկախոսությունն է դառնում զավեշտի հենք.

Ծանոթանալու առաջարկով տղան դիմում է մի աղջկա:

– Աահ, – կարճ արտաբերում է աղջիկը՝ նկատի ունենալով «ազգանուն» – «անուն»- «հայրանուն» բառերի սկզբնառառերը:

– Ջան, – բացականչում է տղան, բայց դեմքին ապտակ ստանալով՝ հարկադրված է լինում բացատրել:

– Ջանյան Արամ Ներսեսի...<sup>514</sup>

**Ճ.** Բավականին մեծ քանակ են կազմում հայկական կամ հայության շրջանում տարածում գտած *անձնանունների* և *դրանց հենքի վրա ստեղծված տարատեսակ բառերի համանուն-հարանունային դրսևորմամբ* անեկդոտները: Այսպես, օրինակ՝

**Ճ-1.** *Հատուկ և հասարակ գոյականների համադրությամբ.*

Մինը իւր կնոջը նոր լուրեր էր ասում. ի վերջոյ ավելացրեց.

– Միրմանենց Շաքարը մեռաւ:

9 տարեկան որդին որ լսեց, ասաց.

– Հայրի կ. եթէ շաքարը մեռնի, այսուհետև թէյն ինչո՞վ պէտք է խմենք:<sup>515</sup>

Մեկ այլ նմուշում Շաքար անձնանվամբ ներկայացող ոստիկանը վարորդի կողմից բնութագրվում է այսպես.

– Բա՛, այտա՛, էնա ասա մռու բիբար ես, էլի...<sup>516</sup>

**Ճ-2.** Հատուկ և հասարակ գոյականների համադրմամբ անսպասելի ծիծաղ է առաջանում նաև անձնանվան (Բշխան) և ձկնատեսակի (իշխան) համանունության միջոցով.

*Բսպէկտորը (իմա՝ ավտոտեսուչը) մեկին կանգնացնում ա, ուզում ա ակտ գրի: Էս շոֆերն (իմա՝ վարորդը) ինչ անըմ ա, չի անըմ, ինչքան խնդրում ա, հնար չի ըլըմ, ակտ (իմա՝ արձանագրություն) ա գրըմ ու ասըմ ա՛ հմի կարաս ազատ գնաս: Էս շոֆերն ասմա.*

– Էտա դու քու ասածն արիր, մենակ մի բան եմ խնդրըմ. անունըդ ինձ բաշխի, ու ես հանգիստ խղձով կգնամ:

*Բսպէկտորն ասմա*

– Բշխան, բավարարված ե՞ս, դե գնա:

– Բշխա՛ն... Վայ քեզ ջրիցը հանողի տիրու մերը...**(ԱՄՇ)**

Համանունային դրսևորմամբ ստեղծված վերոնշյալ զվարճապատումից գատ, ստորև բերվող զվարճախոսությունը՝ կրկին համանունային դրսևորմամբ, սակայն բառախաղով կառուցված, ոչ միայն ընկալելի է դարձնում ստեղծված իրավիճակը, այլև էլ ավելի է նպաստում զավեշտի ինքնատիպ ու տպավորիչ դարձնելուն.

*Գնացինք Սևան՝ իշխան բռնելու, մըլիցա Բշխանը բռնեց: (ԱՄՇ)*

<sup>514</sup> **Ահյան Մ.**, Ծիծաղի հարյուր ակնթարթ/Զվարճապատումներ/: Մարտիկ թերթի հավելված, Ստեփանակերտ, 1995, էջ 30:

<sup>515</sup> Ծիծաղի տոպրակ. Անեկդոտներ հայ եւ օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Ս.Ս. Շահազիզեան, Թիֆլիզ, 1892, էջ 164:

<sup>516</sup> **Բալայան Գ.**, Միամիտ մտքեր, Լոռվա ժպիտներ, Ե., 2002, էջ 47:

**Ճ-3.** Բուսատեսակից ստեղծված անձնանվան (Օադիկ) և այդ նույն բուսատեսակի փնջի (ծաղկեփունջ) համանունությամբ.

*Ավտոբուսից իջնելիս մեկը շրջվելով դիմում է իր ծանոթին.*

– Օադիկ, տոմս չվերցրնես. վերցրել եմ:

*Քիչ հետո մի 5-6 հոգի առանց տոմս վերցնելու իջնում են:*

– *Չհասկըցա, էսի՞ց Օադիկ է՞ր, թե՛ ծաղկեփունջ, – գայրանում է գյումրեցի վարորդը: (ԱՄՇ)*

**Ճ-4.** Անեկդոտներից մեկում էլ տարատեսակ ծաղկանուններով (Անթառամ, Վարդ-Վարդուհի, Վարդիշաղ, Վարդիթեր, Յուլվարդ-Յուլվարդ, Հազարավարդ, Հրավարդ, Ալվարդ, Մանուշակ, Մեխակ, *Նարգիզ, Լալա, Նունուֆար, Մուսամբար, Լալագար* և այլն) անձնանուններն են դարձել զավեշտի հենք.

– Անունդ ինձ կբաշխես, աղջիկ ջան, – հարցրեց Մաքո բիձեն:

– Վարդուհի:

– Մորդ անունը:

– Մանուշակ:

– Հո՞ւրդ, քրո՞ւջու...

– Մեխակ, Նարգիզ...

– Պա՛հ, էս ինչ էլ լավ ծաղկի դաստա (իմա՛ փունջ) եք, աղջիկ ջան<sup>517</sup>:

**Ճ-5.** Զավեշտ է ստեղծվում անձնանվան և ամիս-ամսաթվի համանունության հենքի վրա՝ կապված թաղման յոթներորդ օրը կատարվող *ծիսակարգային արարողակարգի* և *յոթ* թվային միավորի հետ.

– *Ընկերքը ընկերքջը հարցնում է.*

– *Արա՛, էսօր Մայիսի յոթն է, գիտե՞ս:*

– *Ա՛յ դուռակ, էս ձմեռվա կեսին ի՞նչ մայիսի յոթ:*

– *Արա՛, ի՞նչ ես խոսում, մի շաբաթ առաջ Մայիսին չթաղեցի՞նք<sup>518</sup>:*

Զվարճախոսություններից մեկում էլ այդ նույնը արտահայտված է բառախաղով.

*... Մայիսի յոթին Մայիսի յոթն ա: (ԱՄՇ)*

Ընդ որում, զվարճապատում-զվարճախոսություններում բավականին մեծ քանակ են կազմում բառախաղի միջոցով անսպասելի ծիծաղ առաջացնող նմուշները, որոնցից մեկն էլ ազգության (թաթար) և հայության շրջանում դրա համանունությամբ առկա անձնանվան կիրառությունն է.

– *Ներեցեք, դուք ու՞մ կինն եք:*

– *Թաթարի:*

*Մարգիսը գիտեր Թաթարին, ուստի կատակում է.*

– *Թաթարները 7 միլիոն են, դուք ո՞ր մեկի կինն եք<sup>519</sup>:*

<sup>517</sup> **Բալայան Գ.**, Միամիտ մտքեր, Լոռվա կատակներ, Ե., 2002, էջ 47:

<sup>518</sup> Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, Հավաքել և կազմել է Լենա Անթառամյանը, Ե., 1994, էջ 44:

<sup>519</sup> **Քոչարյան Ս.**, Զվարճապատումներ և իրապատումներ, Ե., 2008, էջ 62:



1960-ականներին ստեղծված զվարճախոսություններից մեկում էլ դիրքային-սոցիալական անհավասարությունը ընդգծվում է *տեր* և *անտեր* բառերի հենքի վրա ստեղծված բառախաղով.

*Հայաստանի Կենտկոմի քարտուղար Տեր-Ղազարյանը գալիս և Կիրովական, ծանոթանում քաղաքացիների նիստուկացին և երբ ձեռքը մեկնում և Ռուբենին, ասում ա.*

– *Տեր-Ղազարյան:*

– *Անտեր Ռուբեն,– ներկայանում է լոռեցի Ռուբենը: (ԱՄՇ)*

**Ճ-6.** Ցուցապաստանների հենքի վրա ստեղծված անեկդոտներում բայ խոսքի մասով ստեղծված հայկական անձնանվան (Գալուստ) և դրա մակերբավոր հասարակ գոյականի (բարի գալուստ) համանունությամբ.

*Թոռան հետ հարևան շրջան գնացող պապը, տեսնելով «Բարի գալուստ» ցուցանակը, զարմացած հարցնրմ և ավտոբուսի վարորդին.*

*– Այտա, սրանք բա ռո՞ղիան են իմացել, որ մեր Գալուստը բարի ա... (ԱՄՇ)*

**Ճ-7.** Զվարճախոսություններից մեկում էլ *անձնանվան (Եփրեմ) և ժամանակ ցույց տվող մակբայական բառի (երբեմն) հարանունությամբ* է գալեջտ ստեղծվում.

*Երևանի շուկայում մի կնիկ ուզում և կարտոլ առնի, հարցնում ա.*

– *Կարտոֆեյն ի՞նչ արժի:*

– *Մեկ ռուբլի:*

– *Բայց էս վերջերս երբեմն 60 կոպեկով էլ են կարտոշկա ծախել:*

– *Եփրեմ զույն քարով ա տվե, որ 60 կոպեկով կարտոշկա յա ծախե... (ԱՄՇ):* Մեր գրառումներում առկա է նաև սրա վուլգար՝ հայհոյախառն պատասխանով տարբերակը:

**կ.** Բառի, խոսքի հանդեպ ունեցած ժողովրդի հավատքն ու դրա ազդեցությունը մարդու կյանքի վրա արտահայտվել է ժողովրդական ասույթաբանության այնպիսի տեսակներում, ինչպիսիք են օրհնանքը, անեծքը, աղոթքը, հայհոյանքը: Կյանքին, ճակատագրին դիմազրավելու միջոցներից մեկն էլ անձնանուններն էին. այսպես, մի քանի մահեր ունենալուց հետո հայ մարդը տղա երեխայի՝ կենդանի մնալու ակնկալիքով հազար ու մի միջոցների է դիմել (ծնված տղա երեխայի մազերը 7 տարի չկտրել, թուրքի անուն դնել, երեխան անցկացնել թուրք «բաջու» ծոցի միջով և հանել փեշի տակից և այլն): Ի դեպ, վերջինիս դրսևորումներն առկա են թե՛ հայկական հեքիաթներում, թե՛ հին հունական դիցաբանության մեջ՝ կապված վաղնջա-կան ժամանակների որդեգրման ծեսի հետ: Անձնանուններով մահին պատվար ստեղծելը ևս նույն նպատակին է ծառայել: Մնացականը դրա վկայությունն է: *Վրեժ-ը, Բավական-ը, Հերիքնագ-ը* նույնպես անձնանունով ներազդելու նպատակ է հետապնդել:

Ժողովրդախոսակցական լեզվում կիրառվող մնացական և գնացական բառերը վերաբերում են մնալու և գնալու ենթակա մարդկանց, ասվել է նաև հիվանդ ու անհույս երեխաների կապակցությամբ: Ստորև մեջբերվող զվար-

ճախոսությունը կառուցված է բուն *հայկական անձնանվան (Մնացական) և դրա հարանունությունն արտացոլող մտացածին անձնանվան 'Գնացական (վերջինս բխում է ստեղծված իրավիճակից) միջոցով*.

*Միլիցիան բռնված գողին հարցնում է.*

– Անունդ ի՞նչ է:

– Մնացական, – պատասխանում է գողը:

– Իսկ էն, որ փախա՞վ:

– Գնացականի՞<sup>20</sup>:

Այսպիսով, հայկական անեկդոտների համատեքստում բավականին մեծ քանակ են կազմում անձնանունների միջոցով զավեշտ առաջացնող ժողովրդական ստեղծագործությունները, որտեղ անապասելի ծիծաղի առաջացման պատճառ են դառնում՝ ա) տարատեսակ հապավումներով և այս կամ այն իրողությունների հենքի վրա ստեղծված անհեթեթ անձնանունները. բ) ժողովրդական խոսքում առկա բանաձևը. գ) անձնանունների ստուգաբանությունը. դ) անձնանունների միացմամբ և մասնատմամբ կառույցները. ե) անձնանունների արտաբերման կերպը. զ) անձնանունների և դրանց հենքի վրա ստեղծված տարատեսակ բառերի համանուն-հարանունային, բառախաղային դրսևորումները և այլն:

Փաստենք նաև, անձնանուններին առնչվող երգիծական մանրապատում-զվարճախոսությունների մեջ գերազանցում են անսյուժե՝ հիմնականում երկխոսական բնույթի կառույցները: Որոշակի սյուժե ունեցող երգիծապատումները շատ քիչ քանակ են կազմում:

**Armen Sh. Sargsyan** - Among the Armenian jokes there are many examples of folk creations where the reason of an unexpected laughter are: a) personal names introducing abbreviations or composed on the basis of some facts and events b) a formule-phrase from the people's speech c) etymology of personal names d) structures composed by joining or splitting the personal names e) pronunciation of personal names f) nicknames or additional names g) homonymous and paronymous manifestations of various complex words composed on the basis of personal names, etc. Among this kind of jokes the majority are those without plot and having dialogue constructions.

**Саргсян Армен Ш.** - В контексте армянских анекдотов немало таких народных произведений, в которых почвой для неожиданного смеха становятся: а/ разные происшествия и аббревиатура: б/ Формула-словосочетание в народном выражении: в/ «Этимология» имен: г/ Строение имен с соединением и отделением слов: д/ Слова и словосочетания из литературного и диалектного армянского языка, иностранные имена собственные, омонимо-паронимические выражения. В этих анекдотах, порожденных на почве имен собственных, преобладают бессюжетные, диалоговые конструкции.

<sup>20</sup> Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, էջ 17:

**ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ԴԱՐՁՎԱԾՆԵՐԻ ՀՆՇԵՐԱՆԳԱՅԻՆ  
ՆՈՒՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մեծ է հնչերանգի դերը ինքնուրույն գործածվող լեզվական միավորների ձևավորման և խոսքային միջավայրում նրանց դրսևորման տեսակետից: Այս առումով բացառություն չեն նաև դարձվածները: Հասկանալի է, որ յուրաքանչյուր դարձված ունի հնչերանգային ձևավորվածություն, առանց որի նա խոսքային միջավայր չի կարող մտնել: Իրենց այս հատկանիշով դարձվածները նույնանում են խոսքի բաղադրիչ հանդիսացող լեզվական մյուս միավորներին: Սակայն մի խումբ դարձվածներ կարող են հանդես գալ հնչերանգային տարբեր ձևավորվածությամբ, որն էլ առաջացնում է դարձվածային համանունություն: Բացի դրանից շարահյուսական որոշ կառույցներ դարձվածի արժեք են ձեռք բերում միայն շնորհիվ հնչերանգային հատուկ ձևավորվածության:

Ամեն մի լեզվական միավորի, այդ թվում և դարձվածների հնչերանգային առանձնահատկությունները նախնառաջ դրսևորվում են բանավոր խոսքում, որից էլ անցնում են գրավոր լեզվին: Այդ է պատճառը, որ լեզվի գոյության բանավոր տարբերակներից մեկը բարբառը, հարուստ նյութ է տալիս դարձվածների հնչերանգային առանձնահատկությունների ուսումնասիրության համար:

Ղարաբաղի բարբառի դարձվածների հնչերանգային առանձնահատկությունները ներկայացնելու համար քննելու ենք հետևյալ իրողությունները.

1. տրամաբանական շեշտը որպես դարձվածի առաջացման և դարձվածային համանունության առաջացման գործոն,
2. հարցական հնչերանգ ունեցող դարձվածային միավորները,
3. հնչերանգային հատուկ ձևավորվածությունը որպես դարձվածի առաջացման պատճառ:

Ղարաբաղի բարբառում տրամաբանորեն շեշտվել կարող են հարադիր բայի և նույնաբաղադրիչ շարահյուսական կառույցի տարբեր բաղադրիչները, որը պատճառ է դառնում սովորական բառակապակցություններից դարձվածների առաջացման: Այսպես, եթե *կրթօխը նի մրննել* կապակցության մեջ շեշտում ենք երկրորդ բաղադրիչը, ապա ունենք բառակապակցություն ուղղակի իմաստով (*գլուխը մտնել*), իսկ առաջին բաղադրիչը շեշտելու դեպքում ունենք դարձված *գլխի ընկնել, հասկանալ* իմաստներով: Նույն ձևով *կրթօխը քրցիլ* կապակցության մեջ երկրորդ բաղադրիչի շեշտվելու դեպքում ունենք *գլուխը մտցնել* ուղղակի իմաստով բառակապակցություն, իսկ առաջին բաղադրիչի ընդգծված շեշտադրումը առաջացնում է դարձված *նպատակադրվել, մտքին դնել* իմաստով: *Տը՞ղը քրցիլ* նշանակում է *անկողինը փռել*, եթե շեշտվում է երկրորդ բաղադրիչը, և ունի *կարգավորել, հունի մեջ դնել*

իմաստը, եթե շեշտվում է առաջին բաղադրիչը, ընդ որում երկրորդ դեպքում ունենք դարձված:

Բավական մեծ թիվ են կազմում այն դարձվածները, որոնց տարբեր բաղադրիչներ, ստանալով տրամաբանական շեշտ, առաջացնում են դարձվածային համանունություն: Բերենք տրամաբանական շեշտի պատճառով համանունություն ներկայացնող դարձվածներ՝ համապատասխանաբար նշելով իմաստները՝ *մին տը՛դ վը՛դ վըր չածէլ*<sup>521</sup> (իրար հետ հաշտ չլինել), *մին տը՛դ վը՛դ վըր չածէլ* (մի բանով տնական չգրադվել, մի տեղ չհաստատվել, չմնալ), *կըլխէն տալ* (դիզել, կուտակել), *կըլխէն տալ* (պարտադրել, ստիպել), *տը՛դըր տինիլ* (մեկին ցույց տալ իր ով լինելը, ինչի արժանի լինելը), *տը՛դըր տինիլ* (փոխարինող գտնել, սպառվածը վերականգնել), *տը՛դըր ինիլ* (դեռ վերջացած, սպառված չլինել), *տը՛դըր ինիլ* (իրեն արժանի դիրքում, տեղում լինել), *ըորխէն տալ* (լռեցնել), *ըորխէն տալ* (ավելորդ շատախոսել), *յըրա կ'ալ* (գարկել, խփել), *յըրա կ'ալ* (հավելվել, նյութական բարիքները շատանալ), *մաչին ինիլ* (գործին մասնակից, տեղյակ լինել), *մաչին ինիլ* (էություն, բնավորության մեջ ունենալ), *աշկը քըցիլ* (ցույց տալ, սպացուցել), *աշկը քըցիլ* (տնական մի բանի նայել), *հը՛տըր ընգընէլ* (հետապնդել, ամեն կերպ փորձել կատարել), *հը՛տըր ընգընէլ* (մեկի հետ հարաբերությունները փչացնել), *կըլխէն թըխէլ* (պարտադրել), *կըլխէն թըխէլ* (հարբեցնել, գինովցնել), *տը՛դըր թողնէլ* (լրիվ չվերցնել), *տը՛դըր թողնէլ* (1. ոչնչացնել, կործանել, 2. մեծապես ազդել (ալկոհոլի մասին), տակէն *մընալ* (լրիվ չվերջանալ), *տակէն մընալ* (1. չկարողանալ հակառակվել, 2. չկարողանալ վերադարձնել (պարտքը), *կըլխէն կ'ալ* (պարտադրել), *կըլխէն կ'ալ* (ավելանալ, շատանալ) և այլն:

Շետաքքբիբ է այն իրողությունը, որ տրամաբանական շերտի փոփոխությունը կարող է առաջացնել ներդարձվածային հականիշություն: Այսպես, *ծը՛րքըր յէր օնէլ* (հանձն առնել, իր հսկողության տակ վերցնել) և *ծը՛րքըր յէր օնէլ* (այլևս մասնակից չլինել, չխառնվել), *մօղա ընգընէլ* (նորածն դառնալ), *մօղա ընգընէլ* (նորածնությունից դուրս գալ):

Քննվող համանուն դարձվածները, հանդես գալով նախադասության մեջ, կարող են ստանալ բայի եղանակաժամանակային տարբեր ձևեր: Բայց քանի որ հայերենում, այդ թվում և Ղարաբաղի բարբառում, նախադասության մեջ տրամաբանորեն շեշտվում է օժանդակ բային նախորդող անդամը<sup>522</sup> ուստի բաղադրյալ ժամանակաձևի օժանդակ բայը դրվում է համանուն դարձվածի այն բաղադրիչից հետո, որը տրամաբանորեն շեշտված է: Օրինակ՝ *կըլխէն ա յէկալ* ( ստիպել է), *կըլխէն յէկալ ա* (հավելվել է), *մօղա յա ընգալ* (նորածն է դարձել), *մօղա ընգալ ա* (նորածնությունից դուրս է եկել) և այլն:

Հարացուցային միայն մեկ ձև ունեցող նախադասություն դարձվածները ևս կարող են հանդես բերել համանունություն տրամաբանական շեշտի տե-

<sup>521</sup> Տրամաբանորեն շեշտվող բաղադրիչը ներկայացնում ենք ընդգծված:

<sup>522</sup> Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, Ա պրակ, Ե., 1980, էջ 125-126:

դափռիտության հետևանքով: Այսպես, **տու ասէ** (*ասում են այն ժամանակ, երբ ինչ-որ բան չհիշելու պատճառով դիմում են խոսակցին՝ հիշեցնելու ակնկալիքով*) և **տու ասէ** (*եղանակավորող դարձված է, որ արտահայտում է խոսողի կամքը գործողության կատարման կամ չկատարման վերաբերյալ*), **ինձ տուս յէկ** (*ինձ վստահիր, ես կանեմ*), **ինձ տուս յէկ** (*ես չեմ խառնվում, ինձ նկատի չունենա*): Վերջին օրինակում ևս ունենք ներդարձվածային հականիշություն:

Որոշ նախադասություն դարձվածներում տրամաբանական շեշտը տեղափոխվում է՝ կապված հարցական հնչերանգի ձեռքբերման հետ, որը ևս առաջացնում է համանուն դարձված: Այսպիսով՝ նույնաբաղադրիչ նախադասությունը հարցական հնչերանգով արտահայտում է մի, առանց հարցականի՝ բոլորովին այլ իմաստ: Օրինակ **պէն ըմ ասում** նշանակում է *կարևոր, լսելու արժանի, ստույգ բան եմ ասում*, իսկ **պէն ը՛մ ասում** նշանակում է *չեմ առարկում, համաձայն եմ, կամ՝ հինչ կա-չըկա* նշանակում է *ամբողջը, ամեն ինչ, իսկ հինչ կա՝ չըկա ի՞նչ նորություն կա: Հինչ կինի* դարձվածը հարցական հնչերանգով արտահայտում է քաղաքավարական դիմելիք, խընդրանք և ունի եղանակավորող դարձվածի արժեք, իսկ առանց հարցական հնչերանգի՝ *ինչ ուզում է լինի* իմաստը, *արագ ըս տը՛սալ* նշանակում է *քեզ լսվացել է*, իսկ հարցականով՝ *ի՞նչ ես ասում, հո չե՞ս գժվել*: Այս կարգի որոշ դարձվածներ նույն իմաստն են արտահայտում թե՛ ընդհանրական, թե՛ հարցական կիրառությամբ, ինչպես՝ *աշխարքըս մօրէիս կերալ ա* (՞), *աշխարքըս մին կըրպէտալ ծասկած ա* (՞), *ի* (մ) *մար ինձ ջօլէն դուզումն ա* (՞) *պէրալ* և այլն:

Ղարաբաղի բարբառի դարձվածների հնչերանգային առանձնահատկությունների բացահայտման տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում հարցական հնչերանգ ունեցող դարձվածները, որոնց կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ ունեն հիմնականում նախադասության կառուցվածք: Բարբառի հարցական դարձվածները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Ոչ հարցական կիրառություն ունեցող դարձվածներ, որոնք կարող են ստանալ նաև հարցական ձևավորում: Մյուս հարցական դարձվածներից ունենալով քանակային գերակշռության՝ այս դարձվածները բնութագրվում են մի շարք առանձնահատկություններով: Նախ՝ դրանք ունեն հարացույցային հարուստ ձևեր՝ ինչպես *մաննան փրթաթան ա՛ տը՛նալ*, *մաննան փրթաթան տը՛նալ*, *մաննան փրթաթան ա՛ տըռնըլան* և այլն: Երկրորդ՝ հայտնի է, որ «*հարցումը համընկնում է նախադասության տրամաբանական շեշտի հետ. այն դառնում է տրամաբանական շեշտի դրսևորման ձև և հաճախ դրվում է ստորոգյալի վրա*»<sup>523</sup>: Իսկ տրամաբանական շեշտի տեղափոխության պատճառով հարցում կարող են արտահայտել նախադասության տարբեր անդամներ, մինչդեռ քննարկվող դարձվածներում հարցում կրող անդամը միշտ ստորոգյալն է:

<sup>523</sup> Աբրահամյան Ա., *Հայոց լեզու. Շարահյուսություն*, Ե., 2004. էջ 82:

2. Հարցական դարձվածներ, որոնց դարձվածային իմաստ ունենալը պայմանավորված է հարցական հնչերանգով: Օրինակ՝ *ճօտեր ա՞րննան* նախադասությունը հարցական հնչերանգով ունի դարձվածի արժեք և նշանակում է *չի ավելանալու, նույնն է մնալու, անու՛մը տու վը՞ս տիրալ (որպես նախատինք ասվում է նրան, ով տարիքով մեծին անունով է դիմում)*:

3. Ոչ հարցական կիրառություն ունեցող դարձվածներից առաջացած հարցական դարձվածներ, որոնք ունեն թե՛ կառուցվածքային, թե՛ իմաստային տարբերություններ և հանդես են գալիս միայն նախադասության կառուցվածքով: Օրինակ՝ *աշկը յօր օնէլ (հանդուրժել, համակերպվել)* և *հունց ա՞ւշկը յօր օնում (համակերպվել անհնար է)*, *ծը՛րքը փըռնէլ (արգելել)* և *հու վա՞ծը՛րքը փըռնում (արգելող չկա)*, *խը՛քը կըտըլէլ (հասկանալ)* և *խը՛քըտ հինչ ա՞ կըտրում (ի՞նչ ես մտածում, ի՞նչ կարծիք ունեւ)* և այլն:

4. Դրական-հարցական հնչերանգ ունեցող դարձվածներ, որոնց իմաստը նույնանում է նրանց ժխտական կառուցվածքի իմաստին: Օրինակ՝ *կօռ ը՞ս ըրալ// կօռ չըս ըրալ (ոչինչ չես արել)*, *գօռըս ը՞մ տըննական// գօռըս չըմ տըննական (ինձ պետք չէ, ինձ համար չեմ անում)*, *կապէկըս մաչին քը՛ցալ ա՞// կապէկըս մաչին քը՛ցալ չի (դրամական ոչ մի ներդրում չունեւ)*:

5. Միայն հարցական ձևավորում ունեցող դարձվածներ, որոնք մյուսներից տարբերվում են իրենց իմաստային բազմազանությամբ, տարբեր է նաև նրանց հարցադրման նպատակը:

Միայն հարցական ձևավորում ունեցող որոշ դարձվածներ դրական հարցական ձևավորումով ժխտական իմաստ են արտահայտում: Օրինակ՝ *ճարը հի՞նչ (այլ ելք չունի)*, *հու կըգի՞ դա հուր դարդ (ոչ մեկը մյուսի դարդը չի իմանա)*, *էըը հի՞նչ ա՞ գուդում՛մօըը հի՞նչ ա՞ (ասում են են ժամանակ, երբ մի բան ըստ արժանվույն չի գնահատվում)*:

Հարցական դարձվածների մեծագույն մասում հարցումը ունի ճարտասանական բնույթ: Գիտենք, որ «ճարտասանական հարցը կառուցվածքային տեսակետից ունի մի առանձնահատկություն. հաստատական նախադասություններով արտահայտվում է մտքի ժխտում, իսկ ժխտական նախադասություններով հաստատում»<sup>524</sup>: Մինչդեռ հարցական դարձվածներում վերաիմաստավորման պատճառով նշված առանձնահատկությունը կարող է նաև չարտահայտվել, օրինակ՝ *հինչ մօ՞ խէր ածիմ կըլխէս // հինչ վա՞ յ տամ կըլխէս (ասում են, երբ փորձանք է պատահում՝ ակնարկելով սեփական անկարողությունը)*, *անումը հինչ տինի՞նք՞ (ինչպե՞ս պատճառարանենք)* և այլն: Բացի այդ, եթե ընդհանրապես ճարտասանական հարցը ձևականորեն է միայն հարց, որին պատասխան տալ պետք չէ, ապա կան հարցական դարձվածներ, որոնք պատասխան են ակնկալում, օրինակ՝ *հինչ խաբար ա՞՞ (1. ի՞նչ է պատահել, 2. չափազանց է)*, *ախճի՞ց՞ ը՞ս, թա տըղա՞ (գործը հաջող է, թե՞ անհաջող)*, *աղն ա՞ պակաս, թա մա՞ դը (ի՞նչ խնդիրք, հոգս, կարիք ունի)*, *Անի յա՞, թա չա՞նի (չե՞ն է, թե՞ ավերակ)*:

<sup>524</sup> Պողոսյան Պ., *Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ*, հ.2, Ե., 1991, էջ 17:

Միայն հարցական ձևավորում ունեցող դարձվածների կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ նրանք հիմնականում ունեն հարացույցային մեկ ձև (հազվադեպ կարող են մեկից ավելի հարացույցային ձև ունենալ՝ *հու վա գ'ուդում հուր դարդ, հու կրզի դա հուր դարդ* և այլն): Այս խմբի դարձվածների հարցական երանգը պայմանավորված է հարցական դերանուններով, որոնք առկա են համարյա բոլոր դարձվածներում, ինչպես՝ *ըռը՝խը հինչ ա (չի կարող առարկել), հինչ ա նիմ (ինձ չի վերաբերում, չի հետաքրքրում)* :

Որպես Ղարաբաղի բարբառի հարցական դարձվածներին բնորոշ կառուցվածք՝ կարելի է նշել հարց ու միաժամանակ պատասխան պարունակող դարձվածներ, ինչպես՝ *ճարըն նադը՝ ճուվարան (ուրիշ էլք, միջոց չունի), քորը հինչ կօ զի՝ էրկու աշկ, էն էլ պըլօզ-պըլօզ/կօղը հինչ կօ զի՝ մըթէն քըշէր (մեկի ուզածը հենց դա է)* :

Եթե գրական հայերենի հարցական դարձվածները պարզ կառուցվածք ունեն (կան բացառություններ՝ *ի՞նչ էս կորցրել, ինչի՞ ման գալիս*), ապա բարդ կառուցվածք ունեցող հարցական դարձված-նախադասությունները բարբառում շատ են՝ *դուշ ըմ պըհըլական, ջընդաքու յըրա պեց թօ՞ դիմ (աշխատանքս պետք է ըստ արժանվույն գնահատվի), ճօրուն հըրցըրէն՝ քու հար հու վա՞, սսից՝ ի(մ) մար ծին ա (հարցին պատասխանելիս նախ և առաջ իրենց ձեռնտու փաստն են մատնանշում), հինչ ա՞նիմ ըշխարքէս լինօթունը, վեր վը՞ննէրըս նը՞դ տը՞դ ա (ինձ հետաքրքրում է միայն սեփական բարօրությունը), ծառը կըտրալ ըս, էլ հօր ը՞ս ստում, թա ծըտէրը հօր ը՞ն (եթե մեղքը դու էս գործել, ինչու՞ էս գարմանում հետևանքների վրա)* և այլն:

Ղարաբաղի բարբառի դարձվածների առաջացման պատճառ կարող է դառնալ շարահյուսական կառույցի հնչերանգային հատուկ ձևավորվածությունը, առանց որի բառակապակցությունը կամ նախադասությունը չունի դարձվածի արժեք: Որպես յուրահատուկ հնչերանգ՝ քննվող դարձվածներում հաճախադեպ է հեզնանքը: Հեզնանքը ոճական այն հնարքն է, երբ բառերն ու բառակապակցությունները գործածվում են իրենց իմաստներին լիովին հակառակ նշանակություններով: Դարձվածներում հանդիպում ենք սովորական հեզնանքի, երբ «ինքնաբանորեն դրական գաղափարի բառը կամ արտահայտությունը գործածվում է բացասական, ժխտական նշանակությամբ»<sup>525</sup>, օրինակ՝ *կըրօխը յը՞դուտ-մը՞դրուտ անէլ/էն դօլը տէս անէլ (մեկի կամ ինքն իր համար ոչինչ չանել), յէրէ բաղէն խընձօրը//գուլը//յէրէ արտեն գարդան // Մանթաշօվէն տըղան//Կուտուգօվէն թօնը (անհիմն իրեն երևակայող մարդ)* և այլն: Դարձվածներում հեզնանքի դերը կարևորվում է նրանով, որ ուղղակի իմաստ ունեցող մի շարք նախադասություններ հեզնական հնչերանգի շնորհիվ դարձել են դարձվածներ: Բերենք օրինակներ՝ *փակագծերում տալով միայն դարձվածային նշանակությունները՝ էտ ար պակաս // էն հօր կասիս (դա չլինելու բան է, դրա մասին խոսելն ավելորդ է), ներակ ինձ տուված//*

<sup>525</sup> Նույնը, էջ 68:

բախտավար կըլիս տուված (հեզնական արտահայտություն մեկի կողմից խոսողին նախատելու, վիրավորելու, գերազանցելու ևն մասին), տու վէլ պէն ըսէցէր (անխմաստ բան էս ասում), տու վիր պակաս (ասում է դիմացինի մասին՝ ցույց տալու նրա անարժեք լինելը) և այլն:

Հնչերանգային հատուկ ձևավորվածություն ունեցող դարձվածների մեջ կան նաև հարցական նախադասություններ, որոնցում հարցական հնչերանգին միանում է հեզնականը, առանց որի հարցական նախադասությունը դարձվածային իմաստ չի արտահայտում, ինչպես՝ *է՛լ հինչ կօզիս (ասում են շեշտելով ինչ-որ բանի անկարելիությունը), հու վա՛ ասալ (հնարավոր չէ), հինչ ը՛ս ասում (անխմաստ, անկարելի բան էս ասում), պա հի՛նչ (արտահայտում է խոսողի անհամաձայնությունը մի բանի կապակցությամբ):* Հինչ ա՛ նիս՝ դարձվածը հեզնական երանգով գործածելով խոսողը արտահայտում է իր անտարբերությունը, չհատնվելու ցանկությունը, իսկ վրդովված արտասանելու դեպքում՝ խոսողի անգործությունը որևէ բան անելու տեսակետից: *Հինչ կա՛ սիս* նախադասությունը ունի պատասխան ակնկալող սովորական հարցման արժեք, վերախմաստավորվելով ձեռք է բերել նաև դարձվածի արժեք, որը գործածվում է խոսակցի կարծիքը, խորհուրդը, եզրակացությունը լսելու համար: Ստանալով լրացուցիչ հեզնական երանգ՝ այն արտահայտում է խոսողի արհամարհական վերաբերմունքը խոսակցի ասվածի վերաբերյալ՝ անկարելի համարելով նրա կատարումը:

Շարահյուսական մի շարք կառույցների՝ դարձվածների վերածվելու պատճառը կարող է լինել հնչերանգային այլևայլ արտահայտություններ ունենալը, ինչպիսիք են զարմանքը, դժգոհությունը, հաստատակամությունը և այլն: Օրինակ՝ *էս հինչ ը՛ս ասում (ավելորդ, անխմաստ բաներ էս խոսում), պէն ար, ասից՛/ըրավ/պըտահից/իլավ (պետք չէ լուրջ ուշադրություն դարձնել), մըտքավըս էլ չի ընցընում (ոչ մի դեպքում, անկարելի է)* և այլն:

Այսպիսով՝ Ղարաբաղի բարբառի հնչերանգային հատուկ ձևավորումով բնութագրվող դարձվածները իրենց բազմազան դրսևորումներով մեկ անգամ ևս բացահայտում են ժողովրդական լեզվի հարստությունը, ժողովրդական մտածողության ինքնատիպությունն ու նրա դրսևորման առանձնահատկությունները: Իմանալ և գործածել նման դարձվածները կնշանակի զգալ լեզուն և տիրապետել նրան:

Sargsyan Armen, Minasyan Shogher - The intonation peculiarities of the phraselogical units of Karabakh dialect. - In this article the intonation peculiarities of the phraselogical units of Karabakh dialect are examined. Special attention is paid to the logical stress, the interrogative and ironical intonation as the emergency factors of the phrase and phraselogical homonymy.

Саргсян Армен, Минасян Шогер - Интонационные особенности фразеологических единиц Карабахского диалекта. - В этой статье рассматриваются интонационные особенности фразеологических единиц Карабахского диалекта. Обращено особое внимание на логическое ударение, вопросительную и ироническую интонации фразеологических единиц и фразеологическую омонимию.



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔՈՆԵՑՈՒ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ ԼԱՏԻՆԵՐԵՆ ՆԱԽՕՐԻՆԱԿՆԵՐԸ

Հովհաննես Քոնեցու երկը համարվում է լատինատիպ քերականությունների առաջնեկը, միաժամանակ պարունակելով հունաբանություններ՝ այն հունա-լատինատիպ է<sup>526</sup>, նույն է թե հայերենի իրողությունները նկարագրված են հունարենի և լատիներենի քերականությունների հիմքով, քերականն ինքը հիշատակարանում ծանոթագրել է, որ համառոտ հավաքեց «ի Հայոց և Լատինացոց զասկաս ի բագում շարագրաց և ի քերթողաց» (Հ.Ք.221): Բացի հայերենի այն քերականություններից, որոնք նյութ են քաղել Դ. Թրակացու երկի թարգմանությունից, Քոնեցին ուղղակի կամ միջնորդաբար օգտվել է նաև 5-րդ դարի նշանավոր լատին քերական Պրիսցիանուսի աշխատությունից՝ «*Institutiones grammaticae*» («Քերականական ուսմունքներ»), որի անունը՝ Պրիսիանոս ձևով, հիշատակել է մի քանի անգամ<sup>527</sup>:

Քոնեցու քերականության մեջ «դարձեալ» բառով շաղկապված մի քանի սահմանումներ զուգահեռ քաղվածքներ են հունատիպ տեսություններից և Պրիսցիանուսից կամ նրա որևէ մեկնիչից: Այսպես, վանկի առաջին սահմանումը՝ «Վանկ է պարառութիւն տառից ի ներքո միո ձայնի և միո շնչո անբաժանելի արտաբերեալ:» (Հ.Ք.161), նույնանում է Պրիսցիանուսի ձևակերպմանը. հմմտ. «*Syllaba est comprehensio literarum consequens sub uno accentu et uno spiritu prolata.*»<sup>528</sup>: Երկրորդը արտագրված է Թրակացու երկի թարգմանությունից, և ինչպես նշված է ծանոթագրության մեջ, չնչին տարբերություններով<sup>529</sup>: Այսպես նաև, անվան առաջին սահմանումը տրված է ըստ Թրակացու<sup>530</sup>, երկրորդը սկսվում է նույն բառերով, ապա հավելվում է երկու հատկանիշ՝ «գոյացութիւն և որակութիւն», ինչպես Պրիսցիանուսի նախնական սահմանման մեջ<sup>531</sup> «*substantia et qualitas*», հմմտ. «Անուն է մասն բանի հոլովական, որ նշանակէ զգոյացութիւն կամ զենթակայ բանին, հանդերձ որակութեամբ յատուկ կամ հասարակ:» (Հ.Ք.,164). «*Proprium est nominis substan-*

<sup>526</sup> Տե՛ս **Յովհաննես Քոնեցի**, *Յաղագս քերականին*, Ե., 1977, էջ 140: Այս աշխատությունից քաղված ուղղակի մեջբերումների էջերը կտրվեն կից փակագծերում՝ Հ. Ք. նշումով:

<sup>527</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 191, 197, 209:

<sup>528</sup> *Prisciani Institutionvm Grammaticarvm Libri I-XII*, ex recensione Martini Hertzii, Lipsia, 1859, p. 44. Այս և մյուս հատորին (*Prisciani Institutionvm Grammaticarvm Libri XII-XVIII*, ex recensione Martini Hertzii, Lipsia, 1859) արված հղումները կտրվեն կից փակագծերում՝ Pr. Նշումով:

<sup>529</sup> Տե՛ս **Յովհաննես Քոնեցի**, նշվ. աշխ., ներածություն, էջ 161:

<sup>530</sup> Տե՛ս ն.ս., էջ 163:

<sup>531</sup> Բուն սահմանումը (Pr.I,56), արտագրված է 2-րդ դարի քերական Ապոլլոնիոսից. տե՛ս **Stephanos Matthaios, Franco Montanari, Antonios Rengakos** (Eds.), *Ancient Scholarship and Grammar: Archetypes, Concepts and Contexts*, Berlin/New York, 2011, էջ 486:

tiam et qualitatem significare. hoc habet etiam appellatio et vocabulum.» (Pr.I,55): Քննվող քերականությանը կից ներածության մեջ նշվում են նաև հայկական աղբյուրներ. ըստ Ս. Ավագյանի՝ Քոնեցին անվան սահմանումը լրացրել է օգտագործելով հայ մեկնիչների, հատկապես Դավթի դիտողությունները<sup>532</sup>: Այս հղումը ևս հնարավոր է հաշվի առնելով, որ քերականն ուսանել է Գլաձորի համալսարանում և ըստ ամենայնի՝ ծանոթ է եղել մեկնողական գրականությանը:

Հունաստիպ ձևակերպումներից տարբերվում է նաև Քոնեցու դերանվան սահմանումը, որ մասնավորեցված է իբրև հատուկ անվանը փոխարինող բառ. «Դերանուն է մասն բանի հոլովական, որ եղեալ լինի փոխանակ յատուկ անուան և նշանակէ զյատուկ իմն անձն» (Հ.Ք.172): Ավագյանը նկատում է գրեթե նույնական տեսակետ Հովհաննես Երզնկացու և Հովհաննես Օրծորեցու սահմանումներում<sup>533</sup>: Այս նոր հատկանիշը ևս, որ վերագրված է հայ քերականներին, ինքնուրույն չէ և հավանաբար քաղված է լատին քերականի երկից, որտեղ նույն կերպ դերանունը դիտված է՝ իբրև հատուկ անվանը փոխարինող բառ. «Pronomen est pars orationis, quae pro nomine proprio (ընդգրծումը՝ Տ.Ս.) uniuscuiusque accipitur quepersonas finitas recipit.» (Pr.,XII,577): Դժվար է հստակորեն նշել, թե Քոնեցին հատկապես որ աղբյուրից է օգտվել, բայց որոշ բառեր կողմնորոշում են կարծելու, որ Երզնկացու և Օրծորեցու սահմանումներն ավելի մոտ են լատիներեն նախօրինակին, և հակառակը՝ Քոնեցու սահմանումը շեղվում է ուղղակիությունից, այսպես «personas finitas»-ը Երզնկացիները փոխադրել են՝ պահպանելով բառային և քերականական համարժեքությունը «ստոյգ գղէմս», իսկ Քոնեցու ձևակերպումը համեմատաբար ազատ է. «finitas»-ը «գհատուկ», հավելադիր «իմն», հոգնակի «personas»-ը՝ «անձն»:

Նույն ներածության մեջ բայի սահմանման աղբյուրների հղումը և հաջորդած մեկնաբանությունը, թե Քոնեցին ինքնուրույն ձևակերպումով ձգտել է խորացնել բայի հունաստիպ ըմբռնումը<sup>534</sup>, համոզիչ չեն: Լատիներեն տեքստի զուգահեռը թույլ է տալիս ենթադրելու, որ քերականը, սուկ շարադասական փոփոխությամբ, կրկնել է Պրիսցիանուսի երկու սահմանումների դրույթները, հմմտ. «Բայ է մասն բանի անհոլով, թարց անգման, հանդերձ ամանակաւ և դիմօք, որ նշանակէ ներգործութիւն և կիր կամ գերկոսեանն:» (Հ.Ք.176). «Propium est verbi actionem sive passionem sive utrumque cum modis et formis et temporibus sine casu significare.» (Pr.I,55), «Verbum est pars orationis cum temporibus et modis, sine casu, agenda vel patiendi significativum.» (Pr.VIII,369): Ինչպես նկատելի է, Քոնեցու սահմանման մեջ «հանդերձ»-ով նշված է երկու հատկանիշ՝ «ամանակ, դիմք», իսկ «modus»-ը՝ եղանակը, որ կայուն է լատիներեն երկու սահմանումներում, բացակայում է, փոխարենը տրված է «անհոլով» հատկանիշը, որը չի բխում Պրիսցիանուսի սահմանումներից: Սակայն սա առերևույթ

<sup>532</sup> Տե՛ս նաև **Յովհաննես Քոնեցի**, նշվ. աշխ., ներածություն, էջ 62:

<sup>533</sup> Տե՛ս նաև Ս. Ավագյանի, ներածություն, էջ 71:

<sup>534</sup> Տե՛ս նաև Ս. Ավագյանի, ներածություն, էջ 76:

հակասությունն է. «անհոլով» բառը ներմուծվել է հետագայում. ձեռագրում գրված է եղել «հոլովական», որը քննական բնագիրը կազմող Լ. Խաչիկյանը փոխել է «անհոլով»-ի և ծանոթագրել, թե բնօրինակը սխալ է՝ որպես ապացույց հիշատակելով Թրակացու սահմանման սկիզբը<sup>535</sup>: Եթե այս դիտողությունը ճիշտ է, ապա անհասկանալի է, թե ինչու է բայն օժտվել իրար հաջորդող երկու ժխտված հատկանիշներով՝ «անհոլով» և «թարց անգման», արդի տերմինաբանությամբ՝ անհոլովում և առանց հոլովի: Ըստ Ավագյանի՝ քերականը ներմուծել է «թարց անգման»-ը, որպեսզի նախորդ քերականների անհոլով բառին հատկացվի ոչ թե հոլովի, այլ հոլովման նշանակություն<sup>536</sup>, այսինքն՝ տերմինային ճշտում կատարելով՝ կանխել է շփոթը, որովհետև ինքը հոլովն անվանում էր «անգում»: Սակայն «թարց անգման» հավելումը չի կարող վերագրվել Քոնեցու ինքնուրույն դատողությանը, քանի որ լատիներեն երկու սահմանումներն էլ պարունակում են նույնական կապակցություն «sine casu», բացի այս՝ եթե նկատի չառնենք խմբագրական տարբերությունը, բնօրինակում «թարց անգման»-ը հերթագայում է այլ հատկանիշների նույն տրամաբանությամբ, որով հարաբերված են լատիներեն սահմանման հատկանիշները: Ըստ այդմ՝ Քոնեցին, առերևույթ պահելով ավանդական սահմանման սկիզբը՝ «Բայ է մասն բանի...» (ընդ որում՝ բացառված չէ, որ սա ևս քաղած լինի լատիներեն երկրորդ սահմանումից), «modus»-ի փոխարեն գործածել է «հոլովական» բառը, ապա սրան անմիջապես հակադրել է «թարց անգման» հատկանիշը, որով մերժվում է անվանը հատուկ թեքական կարգը և հավաստվում բային բնորոշ թեքումը, այսինքն՝ այս զուգադրությամբ պարզաբանված է, որ բայն ունի խոնարհում, բայց ոչ հոլովում. այդպես է նաև Պրիսցիանուսի երկու սահմանումներում՝ խորնարհման կարգերի թվարկմանը հաջորդում է «sine casu» կապակցությունը: «Հոլովական» տերմինի խոնարհման իմաստով գործածությունը վկայված է նաև ունիթորական գրականության մեջ. Բարդուղիմեոս Մարաղացու «Հաւաքումն համառօտ և յոյժ օգտակար ի դիալեթիկէն» ձեռագրի քերականական հատվածներում բայի ելակետը ներկան, ընկալված է իբրև անփոփոխ ձև, իսկ մնացածը փոփոխված, հոլովական ձևեր<sup>537</sup>: Այսպիսով, հիմք ընդունելով ձեռագրային տվյալը և «հոլովական» բառն ընթերցելով թեքական նշանակությամբ՝ կարելի է առնչել միակողմանի դիտված հատկանիշները՝ «անհոլով»-ը և «modus»-ը, և պարզաբանել «թարց անգման» տեղը սահմանման մեջ:

Բայի եղանակն, ըստ Պրիսցիանուսի, հետևյալն է. «*Modi sunt diversae inclinationes animi, varios eius affectus demonstrantes.*» (Pr.VIII,421). նույն միտքը դիպուկ սեղմությամբ ձևակերպված է Քոնեցու սահմանման մեջ. «Կերպ բային է ձայն, որ ցուցանէ զախորժակ սրտին:» (Հ.Ք.177). դարձյալ թեական է աղբյուրի ուղղակի կամ որևէ մեկնությամբ միջնորդված լինելը: Քոնեցու նշած «ցուցական» (Հ.Ք.177) տերմինը (փխ. սահմանական) ևս կարելի է հղել նույն

<sup>535</sup> Տե՛ս ն. տ., էջ 176:

<sup>536</sup> Տե՛ս ն. տ., ներածություն, էջ 76:

<sup>537</sup> Տե՛ս Մ.Մ. ձեռ. 69, 276բ:

աղբյուրին, որտեղ այդ եղանակն անվանված է երկու տարբերակով՝ «indicativus sive definitivus» («ցուցական կամ սահմանական») (Pr.VIII,421): Ընդամին, բացառված չէ, որ եղանակներին վերագրված հատկանիշները ևս ընտրովի քաղված լինեն լատիներեն տեքստից. այսպես՝ Քոնեցին ցուցականը բնորոշել է դեմք, թիվ, ժամանակ նշելու կարողությամբ, որոնք մասամբ են հատուկ մյուս եղանակներին են և խորթ են աներևույթին. «Իսկ աներևույթն յայտնապես ոչ ունի գղեմ, զժամանակ, զթիւ» (Հ.Ք.178), այսինքն՝ եղանակները տարբերակել է՝ ըստ այդ հատկանիշների ընդգրկվածության: Լատիներեն երկում նույն այս սկզբունքով մեկնվել է եղանակների հերթագայությունը. սահմանականի առաջադիր լինելը բացատրված է դրա հատկանիշների լրիվությամբ. «...quia perfectus est in omnibus tam personis quam temporibus.» (Pr.VIII,421), իսկ անորոշի վերջադիր լինելը՝ դեմք և թիվ չունենալով. «Infinitivus est, qui et personis et numeris deficit.» (Pr.VIII,425): Սակայն հայ մեկնողական գրականության մեջ եղել են հիշված սկզբունքով եղանակներ զանազանելու ավելի վաղ փորձեր, ինչպես՝ Հովհաննես Օրծորեցու և Եսայի Նչեցու գրեթե նույնական սահմանումներում<sup>538</sup>, ուստի հնարավոր է նաև, որ Քոնեցին զուգահեռաբար կամ բացառապես օգտված լինի այդ աղբյուրներից:

Լ. Խաչիկյանը հղելով Ա. Չուդինովային<sup>539</sup>, գրում է, թե «gerundium» և «supinum» տերմինները սկսել են շրջանառվել XIII դարում՝ Պրիսցիանուսի մեկնիչ Պետրոս Հելիուսի (Petrus Helias) կողմից, և Քոնեցին թերևս նրա միջոցով է ծանոթացել Պրիսցիանուսի երկին<sup>540</sup>: Սակայն հղված տվյալը հավաստի չէ. Պրիսցիանուսը ոչ միայն ծանոթ է եղել «gerundium» տերմինին, այլև քանիցս հիշատակել է այն («Gerundia saepe Priscianus dixit.»<sup>541</sup>). օր. «Gerundia quoque vel participialia, cum participiorum vel nominum videantur habere casus obliquos nec tempora significant.» (Pr. VIII, 409), «supinum» տերմինը ևս նրա երկում հաճախադեպ է («Sed frequentat v. supini usum Priscianus...»<sup>542</sup>), օր.՝ «Supina vero nominantur, quia a passivis participiis, quae quidem supina nominaverunt, nascuntur.» (Pr.VIII,412): Ընդ որում՝ այս տերմինները ճանաչել է նաև 4-րդ դարի քերական Դիոմեդեսը<sup>543</sup>: Ուստի Քոնեցու «ջերունդիական» և «սուփինական» (Հ. Ք.178) տերմինները կարող էին և տառադարձված լինել Պրիսցիանուսի երկից. անշուշտ հավանական է նաև այլ աղբյուրի կամ աղբյուրների վարկածը:

<sup>538</sup> Հմմտ. **Յովհաննես Քոնեցի**, նշվ. աշխ., ներածություն, էջ 79-80, **Եսայի Նչեցի**, *Վերլուծություն քերականության*, Ե., 1966, էջ 129:

<sup>539</sup> «Названия gerundia, gerundiva, а также supina вводятся лишь со времени Петра Гелия и становятся общеупотребительными в XIII веке...», **А. Чуудинова**, *Очерки из истории языкознания. Развитие грамматических теорий в средние века*, Воронеж, 1871, стр. 47.

<sup>540</sup> Տե՛ս **Յովհաննես Քոնեցի**, նշվ. աշխ., ներածություն, էջ 47-48:

<sup>541</sup> **Wilhelm Weissenborn**, *De gerundio et gerundive latinae linguae commentatio*, Isenaci, 1844, p.8. Տե՛ս նաև՝ **John William Donaldson**, *The New Cratylus: Or, Contributions Towards a More Accurate Knowledge of the Greek Language*, London, 1839, էջ 502:

<sup>542</sup> Տե՛ս **Wilhelm Weissenborn**, նշվ. աշխ. էջ 3:

<sup>543</sup> Տե՛ս ն. տ.:

Ներածության մեջ նշվում է, որ մակբայը սահմանելիս Քոնեցին հիմնականում հետևել է «Քերականական արվեստի» թարգմանությանը<sup>544</sup>։ Թեև մակբայի ըմբռնումը՝ որպես բայի վերադիր, ընդհանուր է հունատիպ և լատինատիպ քերականություններում և սահմանումների միջև կարելի է աղերս տեսնել, սակայն ակնհայտ նմանությունները, ներառյալ մակադրական անունների հետ զուգահեռը և այն հաստատող օրինակները, վկայում են, որ Քոնեցու սահմանումը քաղված է Պրիսցիանուսի երկից, հմմտ.՝ «Մակբայ է մասն բանի անհոլովական, որո նշանակութիւնն յաւելեալ լինի բային, որպէս մակադրական անուանքն գոյացականացն, քանզի որպէս ասեմք *junctus est* մարդ, այսպէս և ասեմք, թէ *junctus est*» (Հ.Ք.181)։ «Adverbium est pars orationis indeclinabilis, cuius significatio verbis adicitur, hoc enim perfecit adverbium verbis additum, quod adiectiva nomina appellativis nominibus, ut "prudens homo prudenter agit".» (Pr.XV,61)։ Մակբայների տեսակները ևս, թեև համարված են՝ ավելի հարագատ, դիպուկ և ազատ հունարենի պատճենումից<sup>545</sup>, բառակազմական արժանիքներով հանդերձ ինքնատիպ չեն։ «երդմականք» (Հ.Ք.182, մյուսները՝ ն.ս.)։ «iurativa» (Pr.XV,85), «ըղձականք»։ «optativa» (84), «կարծողականք»։ «dubitativa» (86), «որպիսականք»։ «qualitatis» (ն.ս.), «ժամանականք»։ «temporalis» (81), «տեղականք»։ «localis» (83), «հաստատականք»։ «confirmativa» (87), «յորդորականք»։ «hortativa» (86), «քանակականք»։ «quantitatis» (ն.ս.), «ժողովականք»։ «congregativa» (87), «որոշականք»։ «discretiva» (ն.ս.), «նմանականք»։ «similitudinis» (ն.ս.)։

Ներածական մեկ այլ բնորոշում, թե Քոնեցին զգալի ինքնուրույնություն է ցուցաբերել շաղկապի որոշման և նկարագրության մեջ<sup>546</sup>, փաստացի չի հաստատվում, և եթե դրա սահմանումն ուշագրավ է, ինչպես գրում է Ս. Ավագյանը, ապա իբրև նմուշ, որ մեկտեղում է թարգմանական և ինքնուրույն հատվածներ, հմմտ.՝ «Շաղկապ է մասն բանի անհոլովական, շաղկապական կամ տարալուծական այլոց մասանց բանին՝ ընդ որս նշանակէ, կարգաւորեալ զմիտս բանին, ցուցանելով զօրութիւն կամ զկարգ իրաց։» (Հ.Ք.186), «Coniunctio est pars orationis indeclinabilis, coniunctiva aliarum partium orationis, quibus consignificat, vim vel ordinationem demonstrans.» (Pr.XVI,93)։ Ինչպէս նկատելի է, լատիներեն սահմանման կադապարը և միտքը հիմնականում պահպանված են, ընդ որում՝ շարադասական, բառային և քերականական նույնությամբ, օր.՝ «ընդ որս նշանակէ»։ «quibus consignificat» («ընդ» նախդիրը գործածվել է «con-» նախածանցի իմաստն արտահայտելու համար), «ցուցանելով»։ «demonstrans» են, սակայն Քոնեցին շաղկապն օժտել է նաև տարալուծական հատկանիշով՝ ամբողջացնելով դրա երկակի՝ միավորական և տրոհական բնույթը, ինքնուրույն կարելի է համարել նաև դրա ոճական արժեքի մասին նշումը։ Շաղկապի խմբավորումը և տեսակների իմաստային-կիրառական նկարագրությունը ևս ընդօրինակված են Պրիսցիանուսի երկից, նկատելի են

<sup>544</sup> Տե՛ս նաև **Ցովհաննէս Քոնեցի**, նշվ. աշխ., ներածություն, էջ 94։

<sup>545</sup> Տե՛ս ն. ս., էջ 96։

<sup>546</sup> Տե՛ս ն. ս., էջ 101։

միայն աննշան տարբերություններ և որոշ կրճատումներ, որոնք լատիներեն գուգահեռ օրինակներում նշել ենք անկյունավոր փակագծերում. հմմտ.՝ «Բադիիսական է, որ բադիիսէ զբանն և զիմացումն:» (Հ.Ք.187, մյուսները ևս՝ ն.ս.). «Copulativa est, quae copulat tam verba, quam sensum.» (Pr.XVI,93), «Շարահրական է, որ նշանակել զշարադրութիւն և զհետևումն իրին:» «Continuativae sunt, quae continuationem et consequentiam rerum significant.» (Pr.XVI,94), «Բադիական է, որ հաւաքել զվերոասացեալսն բանականութեամբ:» «Collectivae [vel rationales] sunt... hae enim per illationem colligunt supra dictum, [hoc est ratione confirmant].» (ն.ս.), «Շարադրական է, որ նշանակել զշարադրութիւն և զհետևումն իրին:» «Continuativae sunt, quae continuationem et consequentiam rerum.» (Pr.XVI,94), «Ենթաշարադրական է, որ ցուցանել զպատճառ շարադրութեանն:» «Subcontinuativae vero causam continuationis ostendunt.» (ն.ս.), «Շարաշարադրական է, որ ստորադասական բանիցն շարադրի:» «Adiunctivae sunt, quae verbis subiunctivus adiunguntur.» (Pr.XVI,95), «Փաստաբանական է, որ զպատճառն արտայայտել:» «...casuales sunt, quae causativa, [id est res ex causa antecedente eventientes,] significant.» (Pr.XVI,96), «Հաստատական է, որ հաստատել զիրն:» «Approbativae sunt, quae approbant rem.» (Pr.XVI,97), «Տարալուծական է, որ թէպէտ յարահիսէ զատութիւնսն, այլ տարալուծել զիմացուածսն:» «Disiunctivae sunt, quamvis dictiones coniungunt, sensum tamen disiunctum [et alteram quidem rem esse, alteram vero non esse significant].» (ն.ս.), «Ենթատարալուծական է, որ ի ներքո տարալուծական ձայնի զերկուեանն նշանակել լինել:» «Subdisiunctivae sunt, quae voce disiunctivarum utrumque tamen esse significant, [vel simul, ut copulativae, vel discrete].» (Pr.XVI,98), «Դիմադրական է, որ նշանակել զներհակ պատճառին:» «Adversativae sunt, quae adversum convenienti significant.» (Pr.XVI,99), «Տարակուսական է, որ նշանակել զերկբայութիւն:» «Dubitativae sunt, quae dubitationem significant.» (Pr.XVI,101) ևն:

Նախադրության սահմանումը նույնպես արտագրված է Պրիսցիանուսի երկից, հմմտ.՝ «Նախդիր է մասն բանի ոչ հոլովական, որ նախադասի այլոց մասանց բանին յաւելմամբ կամ բադադրութեամբ:» (Հ.Ք.189), «Est igitur praepositio pars orationis indeclinabilis, quae praepositur aliis partibus vel appositione vel compositione.» (Pr. XIV, 24): Հոդը, ինչպես նշված է ներածության մեջ, Պրիսցիանուսի երկի և նրա ուշ մեկնությունների հիմունքով ներկայացվել է միջարկության հատկանիշներով<sup>547</sup>: Բուն սահմանումը թերևս քաղված է մի քանի աղբյուրներից, օր.՝ Քոնեցու նշած «անծանալք ձայնը» հիաշատակված է 4-րդ դարի քերական Էլիուս Դոնատուսի քերականության մեջ, ըստ որի՝ ձայնարկությունները հստակ տարբերակելի չեն, քանի որ արտաբերվում են անծանոթ, այսինքն՝ անորոշ արտահայտված ձայնով. «... non sunt certi, quippe, cum et *abscondita voce* (ընդծումը՝ S.U.), id est non plane expressa, proferantur.» (Pr.XV,91):

Շարահյուսության շարադրանքը նույնպես մեծապես աղերսվում է լատիներեն տեքստին. այդպիսի մի օրինակ է «բանի» սահմանումը, հմմտ.՝

<sup>547</sup> Տե՛ս ն. ս., էջ 107-109:

«Բանն է պատշաճաւոր շարակարգութիւն սաստեանցն:» (Հ.Ք.191), «Oratio est ordinatio dictionum congrua.» (Pr.II,53):

«Ձևական շարամանությունների» հինգ տեսակները («փրօլէմսիս, սէլէմսիս, սիմթոզիս, գէօմայ, անթիթոզիս», Հ.Ք.206), ըստ Ս. Ավագյանի, Քոնէցին նկարագրել է հետևելով Պրիսցիանուսին, միայն թէ «բազմաթիվ տեսակներից» ընտրել է «առավել կարևոր հինգը»<sup>548</sup>, ըստ Լ. Խաչիկյանի Պրիսցիանուսը «շարամանության կառուցման վեց ձևեր է ճանաչում, որոնցից առաջինը Հովհ. Քոնէցու կողմից չի նշված, իսկ մյուս հինգը՝ բերված է նույնությամբ»<sup>549</sup>: Այդ «անտեսված» ձևը՝ հուն.՝ «ἀλλοιοτήσ», լատ.՝ «alloetheta»<sup>550</sup>, իրակաճում, առանձին տեսակ չէ, հասկացության ընդհանուր անվանումն է, որը Պրիսցիանուսը նշում է իբրև «figura»-ի (դարձույթ) հունարեն զուգահեռ. «Illud tamen sciendum, quod per figuram, quam Graeci ἀλλοιοτήτα vocant, id est variationem...» (Pr.XVII,183) (թրգմ.՝ «Սակայն պետք է իմանալ այն, որ դարձույթի միջոցով, ինչպես հույներն են կոչում ἀλλοιοτήτα, այսինքն՝ փոփոխության...»), ապա թվարկում է դրանց հինգ տեսակների հունարեն անվանումները՝ կից տրված համիմաստ ձևերով. «πρόληψις, praecceptio, σύλληψις, conceptio, ζέγγμα. adiunctio, συνέμπτωσις, coincidentia, ἀντιπτώσις, procidentia» (Pr.XVII,183-84), ուրեմն երկու տեքստերում էլ նշված է ձևական շարամանության նույնքան տեսակ: Սակայն խնդրական է աղբյուրի հավաստիությունը. Քոնէցու թվարկած տեսակներից մի քանիսը լիովին չեն արտացոլում Պրիսցիանուսի հունարեն անվանումների հնչունական կազմը, հատկապես ուշագրավ է «փրօլէմսիս»-ի տառադարձությունը, որը շեղվում է «πρόληψις»-ից և համընկնում է «prolemsis»-ին, իսկ սա լատինատառ վկայված է հետագա մեկնություններում, օրինակ, Պրիսցիանուսի նշանավոր մեկնիչ Պետրոսու Հելիասի երկում<sup>551</sup>. միջձայնավորային s-q անցումը («antitosis-անթիթոզիս») ևս հուշում է, որ տառադարձումը կատարվել է լատինատառ սկզբնաձևից:

Համընկնում են նաև «փրօլէմսիս»-ի առաջադիր բառի հոլովական զանազանությունները նշող որոշ օրինակներ. . «Արծիւքն թռեան, այս յարևելից և այն յարևմտից:» (Հ.Ք.207). «Aquilae devolaverunt, haec ab oriente, ille ab occidente.» (Pr.XVII,125) ևն (որոշ օրինակներ տարբերվում են. «Ի յարծիս թռուցեալս ի մինն հայիմ ես և միւսն դու:» (ն.տ.). «Aquilis volantibus, huic oriens, illi relinquitur occidens.» (Pr.XVII, 126) ևն),

Այդուհանդերձ, մի քանի հուշումներ թույլ են տալիս ենթադրելու, որ Քոնէցին «շարամանությունը» նկարագրելիս ձեռքի տակ չի ունեցել լատին քերականի շարահյուսության ուսմունքը՝ «Priscianus minor» («Փոքր Պրիսցիանուս») կոչվող XVII և XVIII գրքերը, կամ գուցե ծանոթ է եղել դրանց, բայց առավելապես նյութ է քաղել Պրիսցիանուսի մեկնիչներից: Այսպես,

<sup>548</sup> Ն. տ., էջ 127:

<sup>549</sup> Ն. տ., էջ 206-07:

<sup>550</sup> Տե՛ս ն.տ.:

<sup>551</sup> Տե՛ս Charles Thurot, *Extraits de divers manuscrits Latins*, Paris, 1869, էջ 235:

«Յադագս պարզ գիտութեանց» բաժնում, ինչպես ցույց տրվեց, մի շարք հատվածներ ընդօրինակված են Պրիսցիանուսի երկի առաջին մասից («Priscianus major». «Մեծ Պրիսցիանուս»՝ I-XVI գլուխներ), մինչդեռ շարահյուսության բաժնում նկատված համընկնումները խիստ սակավ են, և դրանց սկզբնաղբյուրը, թերևս, «Priscianus minor»-ը չէ: Վերը հիշված, «բանի» սահմանումը նույնանում է «Priscianus major»-ի ձևակերպմանը (Pr.II,53), ձևական շարամանության տեսակները տառադարձված են այլ աղբյուրից՝ հավանաբար Պետրուս Հելիասից, իսկ «փոլլեմսիսի» հոլովելի անդամի օրինակները վկայված են նաև Պրիսցիանուսի ուշ մեկնություններում, հետևաբար կարող էին ներմուծված լինել միջրոդ տեքստից<sup>552</sup>:

Մի հանգամանք ևս. Քոնեցին ձևաբանությունը նկարագրելիս՝ ակնհայտորեն օգտվելով Պրիսցիանուսից, առհասարակ չի հիշել նրա անունը, մինչդեռ շարահյուսության մեջ, երբ ինչպես նշվեց, համընկնումները հազվադեպ են և որպես առաջնային աղբյուր՝ կասկածելի, հիշատակել է՝ «վասն զի ասէ Պրիսիանոս» (Հ.Ք.191), «որպէս ասէ Պրիսիանոս» (Հ.Ք.209): Մա հղման սովորական ձև է, որ զանազան տարբերակներով բազմիցս գործածվել է մեկնողական գրականության մեջ («ut dicit..., ostendit..., ponit..., innuit..., ait..., asserit..., describit Priscianus»<sup>553</sup> ևն), և եթե Քոնեցին համառոտել է բազում տեքստեր, ինչպես հայտնում է հիշատակարանում, ապա կարելի է ենթադրել, որ ինքնուրույն չի հղել Պրիսցիանուսին, այլ օգտվելով նրա մեկնիչներից՝ մեջբերմամբ հանդերձ անփոփոխ ներմուծել է անվանական հիշատակությունները: Այս ենթադրության օգտին է 13-րդ դարի քերական Սպոնցիուսի (Sponcius Provincialis) «Summa de constructione» աշխատությունից քաղված հետևյալ օրինակը. «Relatio est, ut ait Priscianus (այս և հաջորդ ընդգծումը՝ S.Ս.), antelate rei repetitio.»<sup>554</sup>, որը այլ շարադասությամբ կրկնել է Քոնեցին. «Արդ վերբերականութիւն է նախասացեալ իրին վերստին յիշեցումն, որպէս ասէ Պրիսիանոս» (Հ.Ք.209):

Սրան հաջորդող շարադրանքը ևս՝ վերբերականի պակասական և ոչ պակասական տեսակների զանազանումը, դրանց սահմանումները, օրինակները, «որ»-ի հոլովելի լինելը, վերբերականի և և նրան առնչակից բառի հարաբերության առանձնահատկությունները, թարգմանված է նույն աղբյուրից (հմմտ.՝ Հ.Ք.210-11 և Ch. Thurot.357-58), տերմինները համընկնում են՝ ուղղակի, անուղղակի. directus, indirectus, անձնական, պարզ. personalis, simplex, ներքին, արտաքին. intrinsecus, extrinsecus, համր՝. mutuus, արտաքս առեալ, ներքս առեալ. extrasumptus, intrasumptus, ձևակերպումներում

<sup>552</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 260, 267:

<sup>553</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 8, 22, 151, 155, 211, 275, 357 ևն:

<sup>554</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 357:

\* Կարծում ենք՝ Հովհ. Քոնեցին այս տեսակը սխալմամբ է թարգմանել «համր»՝ նկատի ունենալով «mutuus»-ը, մինչդեռ լատ. աղբյուրում «mutuus» է («երկկողմանի» կամ «ընդհատուր»)։ այս խմատը հաստատվում է նաև օրինակներով. «այն, որ կու ընթեռնու, կու տրամաբանէ, ille, qui legit, disputat»:



հնարավոր են որոշ տարբերություններ, օր.՝ հետևյալ սահմանման մեջ «ponuntur»-ը թարգմանված է «կարէ դնիլ» (=«potest poni»), «semper»-ը անտեսված է. «Դարձեալ յատկական վերաբերականն կարէ դնիլ առանց համանմանին իւրո:» (Հ.Ք.210). «Item relativa proprietatis semper ponuntur per defectum sui similis.» (Ա.Ս.) են:

Ամփոփենք. քննված սահմանումները թարգմանված են կամ համառոտագրված, նկատված ինքնուրույնությունը հիմնականում ռճական է, հեղինակային հավելումները սակավ են և էականորեն չեն լրացնում երկր: Սակայն այս խնդրական ինքնուրույնությամբ հանդերձ՝ Հովհաննես Քրնեցուն, այնուամենայնիվ, պետք է համարել քերականության նորոգիչ, որը հունարան ավանդույթը հարստացրեց լատիներենից արված առատ քաղվածքով և ձևակերպելով շարահյուսության ուսմունքը՝ նոր բովանդակությամբ օժտեց հայերենի քերականությունը:

Sirunyan Tigran- The latin origins of the definitions of Hovhannes Krnetsi's grammar. - Some definitions of Hovhannes Krnetsi's grammar, which essentially differ from the comprehensions transmitted from hellenizing theory, were generally presented as authorial explications. But this study showed, that the specificity attributed to grammarian was exaggerated, the examined sections are literal translations or abstracts from the "Institutiones grammaticae" work of Latin grammarian Priscian. Beside this, there are selected fragments from Latin and Armenian other origins too.

Сирунян Тигран- Латинские первоисточники определения грамматики Ованеса Крнеци.- Ряд определений грамматики Ованеса Крнеци существенно отличается от подходов, завещанных грекофильской теорией, и был представлен, в основном, в качестве самостоятельных комментариев. В настоящем исследовании показано, что приписываемая автору грамматики самостоятельность преувеличена, упомянутые определения являются дословными переводами или компиляциями из работы латинского грамматика Присциануса "Instituones grammaticae", в иных случаях - из других латинских и армянских источников.

**ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՏԵՄՊԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Սույն հաղորդման մեջ քննարկվում է խոսակցական և գրական լեզուների տեմպի հարցը՝ ելնելով փորձառական հնչյունաբանական վերլուծության տվյալներից: Համեմատվում են հն շյունների տևողության և ուժգնության արժեքները խոսակցական և գրական տարբերակների պարագաներում:

Խոսակցական լեզուն գրուցակիցների անմիջական մասնակցությամբ տեղի ունեցող հանպատրաստից, ազատ, ինքնաբերական, անկաշկանդ խոսքն է, որն իրականացվում է ոչ պաշտոնական իրավիճակներում: Խոսակցական լեզվի հիմնական գործառույթը տեղեկության փոխանցումն է, որն իրականացվում է հնչող խոսքի միջոցով: Խոսակցական լեզվի առանձնահատկություններից մեկն այն է, որ տեղեկության մեծ մասը պարունակվում է ոչ այնքան շարադրանքի (տեքստի), որքան հաղորդակցման իրադրության մեջ:

Խոսողը հույս ունի, որ իր խոսակիցը կարող է **ընտրել** անհրաժեշտ տեղեկությունը, քանի որ նա ևս գտնվում է նույն համատեքստում, հաղորդակցման նույն իրավիճակում. ժամանակը, տեղը, նաև արտալեզվական միջոցները (դեմքի արտահայտություն, դիմախաղ, ժեստեր և այլն) ստեղծում են բավարար պայմաններ դրա համար: Սրանից տուժում են բառերը՝ ենթարկվելով քանակական և որակական փոփոխությունների: Ժեստերն ու դիմախաղը ուժեղացնում են զգացմունքներն ու արտահայտությունները. դեմքի արտահայտությունն ավելին է ասում, քան բառերը:

Գրական լեզուն, որը բնորոշվում է որպես ժողովրդական լեզվի մշակված տարբերակ և որին բնորոշ է նորմատիվությունը, կիրառվում է ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքում: Այս ոճին բնորոշ է „հնչյունների լիախունչ, մաքուր, բաց արտասանությունը և հստակ առոգանությունը,<sup>555</sup>: Մեր նպատակը չէ տալ այս երկու տեսակների ձևակերպումները, այլ բացահայտել, թե ձայնաբանական ինչ փոփոխությունների են ենթարկվում հնչող բառերը այս երկու պարագաներում, մասնավորապես տևողության և ուժգնության դեպքերում:

Այս նպատակին հասնելու համար առաջին հերթին ձայնագրվել են պատահական երկխոսություններ, որոնցից առանձնացվել են այն բառերը, որոնք հանդիպում են նաև գրական լեզվում: Պատահական երկխոսությունների ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հնարավորինս ապահովվի անկաշկանդությունը և խոսքի բնականությունը: Դրանից

<sup>555</sup> Թ.Ղարազյույան, *Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը*, Ե., էջ 81:

հետո այդ ընտրված բառերից կազմվել են տեքստեր, որոնք հատուկ են նաև գրական լեզվին: Այդ շարադրանքները կարդացվել են 3 հաղորդավարների կողմից, որից հետո կատարվել են համեմատական դիտարկումներ:

Սովորաբար խոսքի տեմպը կախված է մի շարք հանգամանքներից, որոնց մասին շատ է ասվել՝ խոսողի յուրահատկություններից և տարիքից, մարդու հուզական վիճակից, հաղորդակցման իրավիճակից, խոսքի ոճից, տեքստի բովանդակությունից և այլն: Մեր պարագայում այս կախվածությանը <<մասնակցում են>> հիմնականում խոսքի ոճը և տեքստի բովանդակությունը, այսինքն՝ խոսքը գրական և խոսակցական լեզուների մասին է:

Փորձառական հնչյունաբանական հետազոտությունները կատարվել են ՊՌԱՍՏ ծրագրի<sup>556</sup> միջոցով, որը համակարգչային ծրագիր է և օգտագործվում է շատ հնչյունաբանական լաբորատորիաներում: Այս ծրագիրը հնարավորություն է տալիս հաշվարկելու հնչյունների տևողությունը և ուժգնությունը: Ձայնագրությունները կատարվել են տնային պայմաններում, նյութը կարդացել են հայերենախոսներ: Փորձարկման են ենթարկվել 28 բառեր, որոնք ուսումնասիրվել են 2 պարագաներում՝ խոսակցական լեզվում՝ երկխոսությունների ժամանակ, և գրական շարադրանքում՝ հաղորդավարների ընթերցմամբ:

Ուսումնասիրությունները կատարվել են բոլոր ձայնավորների և բաղաձայնների գերակշիռ մասի նկատմամբ: Բառերը հնչել են նախադասությունների մեջ և առանձին ուսումնասիրվել ծրագրի օգնությամբ:

Հետաքրքրականն այն է, որ ողջույնի և բաժանման ժամանակ ասվող բառերը ամենից շատ են ենթարկվել փոփոխությունների, նույնիսկ ամբողջական հնչյուններ կուլ են գնացել, որն ակնառու է ոչ միայն ձայնի պատկերում, այլ նաև լսելի է անզեն ականջով: Օրինակ՝ խոսակցական լեզվում *բարև ձեզ* արտահայտության մեջ առաջին [e] հնչյունի տևողությունը 80 միլիվայրկյան է, որը մոտ 2.5 անգամ փոքր է գրական լեզվում արտասանված տարբերակից, երկրորդ [e] –ն՝ *ձեզ* –ի, համարյա թե չի լսվում, իսկ ձայնապատկերի մեջ արտահայտված էլ չէ: <<Ձեզ>>-ը հնչում է մոտավորապես <<ցս>>: Ինչ վերաբերում է ուժգնությանը, ապա այստեղ հակառակ պատկերն է. գրական լեզվում [e] ձայնավորի ուժգնությունը զիջում է խոսակցական տարբերակում արտասանված ձայնավորի ուժգնությանը:

Ստորև բերված աղյուսակում կարելի է տեսնել տևողության փորձառական հնչյունաբանական հաշվարկների տվյալները՝ ըստ 3 հաղորդավարների:

---

<sup>556</sup>Պրաստը (Praat, *հոլանդերեն՝ խոսք, խոսել*) ժամանակակից փորձառական հնչյունաբանության մեջ օգտագործվող խոսքի վերլուծության համակարգչային ծրագիր է, որը *նախատեսված է* խոսքի վերլուծության, *այդ թվում՝ սպեկտրալիկ*, և խոսքի համադրության (սինթեզի) *համար*: Դա *մշակվել է* շարունակում է *գարգանայ* Ամստերդամի համալսարանի զիտաշխատակիցների՝ *Պոլ Բոերսմայի* (Paul Boersma) և *Դեյվիդ Ուինինկի* (David Weenink) կողմից: *Օրագիրը ստեղծվել է 1995թ.*:

	Խոսակցական	Գրական		
ՁԱՅՆԱՎ.		Հաղորդավար 1	Հաղորդավար 2	Հաղորդավար 3
Ա.	170	195	200	210
Օ	117	130	190	180
ՈՒ	118	150	155	190
Ի	133	160	180	150
Է	175	180	190	210
Ը	73	90	120	100

Ստորև բերված աղյուսակում կարելի է տեսնել ուժգնության փորձառական հնչյունաբանական հաշվարկների տվյալները՝ ըստ 3 հաղորդավարների:

	Խոսակցական	Գրական		
ՁԱՅՆԱՎ.		Հաղորդավար 1	Հաղորդավար 2	Հաղորդավար 3
Ա.	74.1	66.2	74.1	69.4
Օ	76.3	66.4	80.1	70.1
ՈՒ	70.7	66.1	60.7	69.1
Ի	78.2	74.4	70.3	70.1
Է	83.2	76.6	75.4	71.4
Ը	61.7	60.1	55.9	60.3

Համեմատական տվյալները հնարավորություն տվեցին բացահայտելու մի շարք հետաքրքրական եզրահանգումներ.

- Գրական լեզվում ձայնավորների տևողությունը գերազանցում է խոսակցական տարբերակում արտասանված ձայնավորների տևողությանը:
- Գրական լեզվում ձայնավորների ուժգնությունը զիջում է խոսակցական տարբերակում արտասանված ձայնավորների ուժգնությանը:
- Գրական լեզվում բաղաձայնների տևողությունը հավասար է կամ չնչին չափով է գերազանցում խոսակցական տարբերակում արտասանված ձայնավորների տևողությանը:
- Գրական լեզվում բաղաձայնների ուժգնությունը հիմնականում հավասար է խոսակցական տարբերակում արտասանված ձայնավորների ուժգնությանը:

Այսինքն՝ ասված եզրահանգումներից ելնելով, կարող ենք ասել, որ գրական և խոսակցական լեզուներում հիմնական փոփոխությունը կատարվում է ձայնավորների հետ՝ տևողության և ուժգնության տվյալների փոփոխմամբ: Իսկ բաղաձայնները համարյա թե փոփոխության չեն ենթարկվում: Այսպիսով, կատարված փորձառական հնչյունաբանական վերլուծության տվյալները փաստում են հետևյալը: Գրական լեզուն, ի համեմատ խոսակցականի, այնքան էլ ինտենսիվ չէ. մարդիկ խոսում են հանգիստ, ոչ-ուժգին ձայնավորների կիրառմամբ, սակայն այդ ձայնավորները արտասանվում են պարզ, ամբողջական և հստակ, որն էլ ապահովում է դրանց տևականությունը:

Խոսակցական լեզուն ավելի ինտենսիվ է ձայնավորների ուժգնության շնորհիվ, սակայն բառերի տևողությունը <<տուժում է>>, քանի որ կրճատվում են ձայնավորների տևողությունները: Եվ այսպես, մեր փորձարկման բանաձևն ունի հետևյալ տեսքը՝ **Sq> Sfu, Ուզ<Ու խ**, որտեղ **Sq**-ն տևողություն - գրականն է, **Sfu**-ն՝ տևողություն - խոսակցականը, նույն տրամաբանությամբ տրված է նաև ուժգնության համեմատությունը: Բանաձևից ելնելով՝ կարող ենք ասել, որ գրական խոսքը տևական է, խոսակցական լեզուն՝ ուժգին:

Grigoryan Gayane - A Comparative Study of the tempo of colloquial and literary languages. - The report discusses the tempo of colloquial and literary languages, based on the phonetic analysis of experimental data. The values of the duration and intensity of the spoken and literary versions are compared. To achieve this goal several dialogues were recorded, then those words were separated which appear in the literary language too. The words were examined, tested in two respects: in the spoken dialogues and literary text by announcers reading. The comparative data gave a possibility to reveal a number of interesting patterns and to find out which words are most the subject to be changed.

Григорян Гаяне - Сравнительное исследование темпа разговорного и литературного языков. - В докладе рассматривается вопрос темпа разговорного и литературного языков, основываясь на фонетическом анализе экспериментальных данных. Сравняются данные длительности и интенсивности разговорного и литературного языков. Во время эксперимента слова были изучены в двух обстоятельствах: в разговорных диалогах и в литературном тексте, которые читали дикторы. Сравнительные данные дали возможность выявить ряд интересных закономерностей и выяснить, какие слова наиболее подвержены изменениям.

**ԱՅՈ-ՈՉ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ ԵՎ  
ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Նոր Կտակարանում Մատթեոսի Ավետարանը առաջինն է և ծավալով ամենամեծը՝ բաղկացած է 28 գլուխներից: Բոլոր չորս Ավետարաններն էլ ունեն իրենց խորհրդանիշը և գույնը: Մատթեոսի Ավետարանի խորհրդանիշը մարդն է, գույնը-սպիտակը:

Ուսումնասիրության համար անհրաժեշտ նյութը քաղված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից 1994 թ. հրատարակած «Աստվածաշունչ»-երից: Արևելահայերեն Աստվածաշնչում կա 136 հարցական նախադասություն, իսկ արևմտահայերենում՝ 140:

Մատթեոսի Ավետարանում կան տարատեսակ հարցական նախադասություններ՝ ինչու-որ, այո-ոչ, ընտրանքային, երկկերպ, երկկերպ ընտրանքային և եղանականիշ: Քանակով բոլորից շատը ինչու-որ հարցումներն են: Այո-ոչ հարցումները քանակով երկրորդն են:

Այստեղ որպես ելակետային վերցվում են արևելահայերենի հարցումները, ապա զուգահեռաբար տրվում են նաև արևմտահայերենինը:

Այս Ավետարանում կան մենաբևեռ և երկբևեռ հարցական նախադասություններ:

**ՄԵՆԱԲԵՎԵՆՈՒ ԱՅՈ-ՈՉ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ:** Նշված Ավետարաններում կա 27 մենաբևեռ այո-ոչ հարցական նախադասություն, այսինքն՝ մեկ հարցումով նախադասություն: Այստեղ կան տարատեսակ պարզ և բարդ կառուցվածքի ինչպես համադասական, այնպես էլ ստորադասական հարաբերություններով նախադասություններ: Բարդ ստորադասական նախադասությունները հանդես են գալիս ուղիղ խնդիր, ենթակա և պարագա երկրորդական նախադասություններով: Բոլորից շատ ուղիղ խնդիր երկրորդական նախադասությամբ հարցումներն են:

Բերենք այդ հարցումները.

ա) Պարզ կառուցվածքի հարցումներ.

1) Յիսուս իր աշակերտներին ասաց. <<Այս բոլորը իմացա՞ք>> - Ըսավ անոնց Յիսուս. <<Հասկցա՞ք այս ամեն բաները>> (13,5):

2) Եւ Յիսուս կանգնեց կուսակալի առաջ. կուսակալը հարցրեց նրան ու ասաց. <<Դո՞ւ ես հրեաների թագաւորը>> - Յիսուս կուսակալի առջեւ կայնեցաւ եւ կուսակալը հարցուց անոր ու ըսաւ. <<Հրեից թագաւորը դո՞ւն ես>> (27, 11):

3) Իսկ Յիսուս նրան ասաց. <<Ընկե՛ր, սրա՛ համար դու եկար>> - Յիսուս ըսաւ անոր - <<Ընկեր, ինչո՞ւ համար եկար դուն>> (26, 50): Այստեղ արևելահայերենի այո-ոչ հարցման դիմաց արևմտահայերենում ունենք ինչո՞ւ-որ հարցում:

4) Նա եկաւ աշակերտների մօտ եւ նրանց քնի մէջ գտաւ ու Պետրոսին ասաց. <<Այդպէս, չկարողացա՞ք մէկ ժամ արթուն մնալ ինձ հետ: ...>> - Երբ եկաւ աշակերտներուն, զանոնք քնացած գտաւ եւ ըսաւ Պետրոսին. <<Այդպէս մէկ ժամ մալ չկրցաք ինձի հետ արթուն կենալ:...>> (26, 40):

5) Երբ նրանք Կափառնայում եկան, երկդրամեան տուրքը պահանջողները մօտեցան Պետրոսին եւ ասացին. <<Ձեր վարդապետը երկդրամեանը չի տալիս>> – Երբ անոնք Կափառնայում եկան, երկդրամեան տուրքը առնողները Պետրոսին եկան ու ըսին. <<Ձեր վարդապետը երկդրամեանը չի հատուցաներ>> (17, 23):

6) Յիսուսին հարցրին ու ասացին. <<Շաբաթ օրը թույլատրելի՞ է բժշկել>>. որպէսզի նրան ամբաստանեն – Հարցուցին անոր. <<Շաբաթ բժշկել արժան է>> որպէսզի անոր վրայով ամբաստանութիւն ընեն (12, 10):

7) Այն ժամանակ Յիսուս ամբոյսի սասց. <<Սրերով եւ մահակներով իմ դէմ ելել-բռնելու ինձ իբրեւ մի ավազակի՞:...>> – Այն ատեն Յիսուս ըսաւ այն բազմութեանը. <<Իբր թէ ասազակի՞ վրայ ելաք սուրերով ու բիրերով զիս բռնելու:...>> (26, 55):

Բարդ ստորադասական հարցումներ.

1) Այն ժամանակ Պիղատոսը նրան ասաց. <<Չե՞ս լսում, ինչքան դրանք քո դէմ են վկայում>> – Այն ատեն Պիղատոս ըսաւ անոր. <<Չե՞ս լսեր թէ ո՞րչափ քեզի դէմ կը վկայեն ատոնք>> (27, 13):

2) Յիսուս նրանց ասաց. <<Հաւատո՞ւմ էք, որ ես այդ բանը ձեզ կարող եմ անել>> – Յիսուս անոնց ըսաւ. <<Կը հաւատա՞ք թէ կրնամ այս բանը ձեզի ընել>> (9, 28):

3) Եւ փարիսեցիները մօտենալով նրան՝ փորձեցին եւ ասացին. <<Օրինա՞տ՞ր է, մէկն իր կնոջը արձակի ամէն մի յանցանքի պատճառով>> – Փարիսեցիները անոր մօտենալով՝ զանկակ փորձեցին ու հարցուցին. <<Արժա՞ն է, որ մարդ մը իր կինը արձակէ ամէն պատճառի համար>> (19, 3):

4) Երբ քահանայապետներն ու օրէնագետները տեսան այն սքանչելիքները, որ նա արեց, եւ մանուկներին, որ տաճարի մէջ աղաղակում էին ու ասում՝ օրհնութիւն Դաւթի Որդուն, բարկացան եւ ասացին. <<Լսո՞ւմ ես՝ դրանք ինչ են ասում>> – Երբ քահանայապետները ու դպիրները տեսան անոր ըրած հրաշքները եւ տղաքը, որոնք տաճարին մէջ ու կ'ըսէին՝ <<Ուվսա՞ննա, Որդի Դաւթին>>, բարկացան ու ըսին անոր. <<Կը լսե՞ս ինչ կ'ըսեն ատոնք>> (21, 15-16):

5) Յիսուս նրանց ասաց. <<Այո՛, դուք չե՞ք կարդացել, թէ երեխաների ու ծծկերների բերանով օրհնութիւն կատարեցիր>> – Յիսուս ըսաւ անոնց. <<Այո, բնաւ չե՞ք կարդացեր, թէ Մանկաց ու կաթընկեր տղայոց բերնէն զոհութիւն կատարեցիր>> (21, 16):

6) Ծառաները նրան ասացին. <<Կամենո՞ւմ ես, որ գնանք ու քաղենք հանենք այն>> – Ծառաները իրեն ըսին. << Հիմա կ'ուզե՞ս որ երթանք զանոնք քաղենք>> (13, 28):

7) Նա պատասխանեց նրանցից մեկին եւ ասաց. «Կամ թէ նախանձո՞ւմ ես, որ ես առատաձեռն եմ» – Անիկա պատասխան տուաւ անոնցմէ մեկուն ու ըսաւ. «... . կամ թէ քու աչքդ չա՞ր է, որ ես բարեար եմ» (20, 15):

8) Եւ նա նրանց ասաց. «... Կամ թէ Օրէնքում չէ՞ք կարդացել, որ շաբաթ օրերը տաճարում քահանաները պղծում են շաբաթը եւ անմեղ են: ...» – Ան ալ անոնց ըսաւ. «... Կամ թէ օրէնքին մէջ չէ՞ք կարդացեր, որ քահանաները շաբաթ օրերը տաճարին մէջ շաբաթը կը պղծեն ու անմեղ են:...» (12, 5):

9) Այն ժամանակ նրա աշակերտները մօտեցան եւ ասացին նրան. «Գիտե՞ս, որ փարիսեցիները, երբ այդ խօսքը լսեցին, գայթակղուեցին» – Այն ատեն իր աշակերտները եկան, ըսին իրեն. «Գիտե՞ս թէ փարիսեցիները գայթակղեցան, երբ լսեցին այդ խօսքը» (15, 12):

զ) Բարդ ենթաստորադաս հարցումներ.

1) Այն ժամանակ Յիսուս նրան ասաց. «... Եւ կամ կարծո՞ւմ ես, թէ չեմ կարող իմ Հօրն աղաչել, որ նա հիմա ինձ համար այստեղ հասցնի հրեշտակների աւելի քան տասներկու գնդեր:...» – Այն ատեն Յիսուս ըսաւ անոր. «... Կը կարծես թէ չե՞մ կրնար հիմա իմ Հօրս աղաչել, որ ինձի հասցնէ տասներկու գունդէն աւելի հրեշտակներ:...» (26, 53):

2) Իսկ ուրիշներ ասում էին. «Թո՞ղ, տեսնենք թէ Եղիան կը գա՞յ, որ դրան փրկի» – Միւսները ըսին. «Թող տուր, տեսնենք թէ Եղիան պիտի գա՞յ ստիկա ազատելու» (27, 49): Այս օրինակում արևմտահայերէնը բարդ ստորադասական է:

3) Քահանայապետը խօսեց եւ նրան ասաց. «Երդուեցնում եմ քեզ կենդանի Աստուծով, որ մեզ ասես, թէ դո՞ւ ես Քրիստոսը՝ Աստծու Որդին» – Ուստի ելաւ քահանայապետը ու ըսաւ անոր. «Կենդանի Աստուծով քեզ կ'երդմընցնեմ, որ մեզի ըսես, թէ դո՞ւն ես Քրիստոսը՝ Որդին Աստուծոյ» (26: 63):

դ) Համադասական հարցում, որի առաջին մասը ստորադասական է.

1) Այն ժամանակ Յիսուս Գալիլիայից Յորդանան եկաւ, Յովհաննէսի մօտ՝ նրանից մկրտուելու, իսկ Յովհաննէսն ընդդիմացաւ ու ասաց. «Ի՞նձ պետք է, որ քեզնից մկրտուեմ, եւ դու ի՞նձ մօտ ես գալիս» – Այն ատեն Յիսուս Գալիլիայէն Յորդանան եկաւ Յովհաննէսին, որպէսզի անկէ մկրտուի: Յովհաննէս կ'արգիլէր գանիկա ու կ'ըսէր – «Ինձի պետք է որ քեզմէ մկրտուիմ ու դուն ինձի՞ կու գաս» (3, 13-14):

ե) Բազմաբարդ հարցումներ, որոնցում կան տարաբնույթ համադասական և ստորադասական հարաբերություններ

1) Յիսուս նրանց ասաց. «Սուրբ Գրքերում երբեիցէ չէ՞ք կարդացել այն վերը, որ կառուցողները անարգեցին, նա՛ է, որ եղաւ անկիւնաքար. Տիրոջից եղաւ այս, եւ մեր աչքին սքանչելի է:...» – Ըսաւ անոնց Յիսուս. «Բնաւ չէ՞ կարդացեր գրքին մէջ, Այն քարը զոր շինողները անարգեցին, անիկա անկիւնին գլուխը եղաւ: Ասիկա Տէրոջմէն եղաւ եւ զարմանալի է մեր աչքերունք» (21, 42):

2) Նա պատասխանեց նրանց եւ ասաց. «Դուք չէ՞ք կարդացել, թէ նա, ով սկզբից ստեղծեց, արու և էգ արեց նրանց եւ ասաց. դրա համար տղամարդը



պիտի թողնի հորը եւ մօրը ու պիտի գնայ իր կնոջ ետեւից. եւ երկուսը մէկ մարմին պիտի լինեն:...>>– Անիկա ալ անոնց ըսաւ. <<Չէ՞ք կարդացեր թէ ան որ սկիզբէն ստեղծեց, արու եւ էգ ստեղծեց զանոնք>>, ու աւելացուց. <<Ասոր համար մարդ իր հայրը ու մայրը պիտի ձգէ եւ իր կնոջ պիտի յարի ու երկուսը մէկ մարմին պիտի ըլլան:...>> (19, 4-5):

3) Այն ժամանակ տէրը կանչեց նրան եւ ասաց. <<Չար ծառայ, քո ամբողջ պարտքը քեզ շնորհեցի նրա համար, որ աղաչեցիր ինձ, իսկ պէտք չէ՞ր, որ դու գրթայիր քո ծառայակցին, ինչպէս ես էլ քեզ գրթացի>> – Այն ասէն անոր տէրը կանչեց զանիկա ու ըսաւ. Չա՞ր ծառայ, այն բոլոր պարտքը ես քեզ շնորհեցի, ինձի աղաչելովու համար. ուրեմն պէտք չէ՞ր որ դու ալ քու ծառայակիցիդ ողորմէիր, ինչպէս ես քեզի ողորմեցայ (18, 32-33):

4) Եւ նա պատասխանեց ու նրանց ասաց. <<Տեսնո՞ւմ էք այդ ամէնը. ճշմարիտ եմ ասում ձեզ, այդտեղ չպիտի մնայ քար քարի վրայ, որ չքանդուի>> – Յիսուս անոնց ըսաւ. <<Կը տեսնէ՞ք այդ ամէն բաները. ասա կ'ըսես ձեզի, Քար քարի վրայ պիտի չմնայ, որ չքակուի>> (24, 2):

5) Յիսուս պատասխանեց եւ ասաց. <<Չէք իմանում՝ ինչ էք խնդրում. կարո՞ղ էք խմել այն բաժակը, որը ես խմելու եմ կամ մկրտուել այն մկրտութեամբ, որով ես մկրտուելու եմ>> - Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ . <<Չէք գիտեր, թէ ի՞նչ կը խնդրէք: Կրնա՞ք խմել այն գաւաթը որ ես պիտի խմեմ, կամ այն մկրտութիւնով մկրտուիլ, որով ես պիտի մկրտուիմ>> (20, 22):

6) Յիսուս պատասխանեց նրանց ու ասաց. <<... Բայց մեռելների յարութեան մասին չէ՞ք կարդացել Աստուծոյ ձեզ ասուածը, որ ես Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը. Եւ Աստուած մեռելների Աստուածը չէ, այլ՝ կենդանիների>> – Յիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ. <<... Բայց մեռելներուն յարութիւն առնելուն համար չէ՞ք կարդացեր Աստուծմէ ձեզի ըսուած խօսքը. ես եմ Աբրահամին Աստուածը եւ Իսահակին Աստուածը ու Յակոբին Աստուածը: Աստուած մեռելներուն Աստուածը չէ, հապա կենդանիներուն>> (22, 31-32):

**ԵՐԿՐՈՒ ԱՅՈՒՈՉ-ՈՎ ԵՐԿԲԵՎԵՆ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ:** Նշված Ավետարաններում երկու այո-ուչ-ով կան 2 հարցական նախադասություններ: Ահա դրանք.

1) Յիսուս ասաց. <<Դեռես դո՞ւք էք անհասկացող էք. չէ՞ք իմանում, թէ ամէն ինչ, որ բերանն է մտնում, որովայն է գնում եւ դուրս է ելնում:...>> – Յիսուս ըսաւ. <<Դո՞ւք ալ տակաւին անմիտ էք ու չէ՞ք հասկնար, թէ ամէն ինչ որ բերանը կը մտնէ, փորը կ'երթայ ու արտաքնոցը կը ձգուի:...>> (15, 15-17):

2) Եւ գալով իր գաւառը՝ նրանց ուսուցանում էր իրենց ժողովարանում, այնպէս որ նրանք զարմանում ու ասում էին. <<... Սա հիւսնի որդին չէ՞. սրա մայրը չէ՞, որ Մարիամ է կոչուում. եւ սրա եղբայրները՝ Յակոբոս, Յովսէս, Սիմոն եւ Յուդա:...>> – Եւ գնաց իր գաւառը ու անոնց կը սորվեցնէր իրենց ժողովարանին մէջ. անոնք ալ կը զարմանային ու կ'ըսէին. <<... Ասիկա հիւսնին որդին չէ՞. ասոր մայրը Մարիամ չի՞ կոչուիր: Ասոր եղբայրները՝ Յակոբոս եւ Յովսէս ու Սիմոն եւ Յուդա. ...>> (13, 55):

## **ԻՆՉՈՒՆՈՐՈՎ ԵՎ ԱՅՈՆՈՉՈՎ ԵՐԿԲԵՎԵՆ ՆԱՐՑՈՒՄՆԵՐ**

Այս Ավետարաններում ինչու-որ-ով և այո-ոչ-ով կա 4 երկրևեռ հարցական նախադասություն: Մրանց եզրերից մեկը կազմված է ինչ, որտեղից և ինչպէս հարցական դերանուններով:

1) Եւ ահա նրանք աղաղակեցին ու ասացին. «Ի՞նչ կա մեր եւ քո միջեւ, Յիսուս, Որդի՛ Աստծու, մեզ տարածամ տանջելո՞ւ եկար» - Ահա աղաղակեցին ու ըսին. <<Յիսուս, Որդի Աստուծոյ, դուն մեզի հետ ի՞նչ բան ունիս, ատենէն առաջ մեզ տանջելո՞ւ համար հոս եկար>> (8, 29):

2) Եւ քահանայապետը վեր կենալով՝ նրան ասաց. <<Պատասխան չէ՞ս տալիս, քո մասին ի՞նչ ամբաստանութիւն են անում դրանք>> – Քահանայապետը ոտքի ելնելով՝ ըսաւ անոր. <<Պատասխան մը չէ՞ս տար. ի՞նչը կը վկայեն ասոնք քեզի դէմ>> (26, 62):

3) Եւ գալով իր գաւառը՝ նրանց ուսուցանում էր իրենց ժողովարանում, այնպէս որ նրանք զարմանում ու ասում էին. <<... Եւ սրա քույրերը բոլորը մեզ մօտ չե՞ն. եւ արդ, որտեղի՞ց է սրան այս բոլորը>> – Եւ գնաց իր գաւառը ու անոնց կը սորվեցնէր իրենց ժողովարանին մէջ, անոնք ալ կը զարմանային ու կ'ըսէին. <<... ու ասոր քայրերը ամենքը մեր քով չե՞ն: Ալ ինք ուրկէ՞ ունի այս ամէն բաները>> (13, 56):

4) Եւ Յիսուս իր մօտ կանչեց մի մանուկ, կանգնեցրեց նրան նրանց մէջ ու ասաց. <<... Ձեզ ինչպէ՞ս է թում. եթէ մի մարդ հարիւր ոչխար ունենայ, եւ նրանցից մեկը մոլորուի, իննսունինը ոչխարը լերան վրայ չի՞ թողնի ու գնայ որոնելու մոլորուածին: ...>> – Եւ Յիսուս տղայ մը կանչեց իրեն, զանիկա անոնց մէջ տեղը կայնեցուց ու ըսաւ. <<... Ի՞նչպէս կ'երեսնայ ձեզի, եթէ մարդ մը հարիւր ոչխար ունենայ եւ անոնցմէ մեկը մոլորի, իննսունինը ոչխարը լեռները չի՞ ձգեր ու երթար մոլորածը փնտռել:...>> (18, 12):

**ԻՆՉՈՒՆՈՐՈՎ ԵՎ ԱՅՈՆՈՉՈՎ ՔԱՌԱԲԵՎԵՆ ՆԱՐՑՈՒՄ:** Այս Ավետարաններում ինչու-որ-ով և այո-ոչ-ով կա մեկ քառաբևեռ հարցում: Այս հարցական նախադասությունը կազմված է երկու այո-ոչ և երկու ինչու-որ հարցումներից: Մրանում երկու եզրերում հանդես է գալիս քանի հարցական դերանունը:

1) Յիսուս այդ իմացաւ ու ասաց. <<... Դեռես չէ՞ք իմանում եւ չէ՞ք յիշում հինգ նկանակը, որ կերակրեց հինգ հազարին. եւ քանի՞ սակառ վերցրիք ոչ էլ եօթը նկանակը՝ չորս հազարին. եւ քանի՞ սակառ վերցրիք...>>: Իսկ Յիսուս անոնց խորհուրդը զիտնալով՝ ըսաւ անոնց. <<... Տակալին չէ՞ք հասկնար եւ չէ՞ք յիշեր հինգ նկանակը՝ հինգ հազարին ու քանի՞ կողով վերցուցիք. ոչ ալ եօթը նկանակը՝ չորս հազարին, ու քանի՞ զամբիւղ վերցուցիք:... >> (16, 9-10):

Ghukasyan Sevak - *Yes-no* questions in Eastern & Western Armenian Gospels of Matthew - In the Gospel of Matthew there are 136 interrogative sentences in the Eastern Armenian language and 140 in the Western Armenian. There exist various types of questions. Most of all - pronominal questions. The second place occupy yes - no questions: 27 single polar and 2 – two polar. 5 yes-no questions appear with the pronominal questions. In the mentioned Gospel there are simple and complex structured questions.

Subjunctive sentences act as secondary sentences of direct object, subject and circumstance. The direct object secondary sentences are the maximum in the Gospel.


Гукасян Севак - *Да-нет* вопросы в восточноармянской и западноармянской Евангелии от Матфея - В Евангелии от Матфея в восточном варианте армянского языка есть 136 вопросительных предложений, а в Западном - 140. Здесь существуют различные типы вопросов. Больше всего по количеству – местоименные вопросы . По количеству второе место занимают вопросы да-нет: 27 однополюсные, 2- двухполюсные. 5 да-нет вопросов выступают с местоименными вопросительными предложениями. В упомянутой в Евангелии существуют простые и сложные структуры. Сложноподчиненные предложения выступают в качестве второстепенных предложений прямого дополнения, подлежащего и обстоятельства.

ՀԱՎԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԵՂՉՈՒՄԸ՝ ՀԱԿՈՏՅԱ ՄԻՏՈՒՄՆԵՐ.  
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

«Հավելադրությունը» (պլեոնազմ) և «զեղչումը» (էլիպսիս) լեզվաբանական գրականության մեջ կիրառվում են որպես լեզվի արտահայտության պլանին առնչվող հասկացություններ՝ վերագրվելով մասնավորապես քերականության ոլորտին: Մրանք, ըստ էության, լեզվում «մրցակցող» երկու հայտնի միտումների՝ ծավալման և տնտեսման դրսևորումներն են, որ, միմյանց հաջորդելով կամ միաժամանակ (օր.՝ *այլուն-փայլուն*, այստեղ արմատի կրկնությունը հավելադրություն է, հնչյունի անկումը՝ զեղչում) կարող են դրսևորվել մինչև անգամ նույն միավորի վրա:


Հավելադրությունը դիտվում է նույնիմաստ բառի կամ ձևային ավելորդ կամ լրացուցիչ կիրառություն, զեղչումը՝ ենթադրվող միավորի բացթողում նախադասության կամ բառակապակցության կառուցվածքում, որ վերականգնվում է շնորհիվ համատեքստի կամ խոսքային իրադրության: Հավելադրությունը և զեղչումը կատարում են տրամաբանորեն միմյանց հակադիր դերեր, ուստի դիտարկվում են իբրև հակոտնյաներ: Այս երկու երևույթի դեպքում էլ գործ ենք ունենում ձևի և բովանդակության սահմանների անհամապատասխանության հետ: Այսպես՝ հավելադրության դեպքում բովանդակությունն արտահայտվում է իր հիմնական ձևին ուղեկցող լրացուցիչ միջոցով (տե՛ս գծապատկեր 1/ա), որը կարող է լինել ընդունելի կամ մերժելի, պարտադիր կամ ոչ պարտադիր: Այսինքն՝ հավելադրության դեպքում ձևը գերազանցում է բովանդակությանը, ավելցուկային է: Զեղչման դեպքում հակառակ պատկերն է, բովանդակությունն ավելին է, քան նրա արտահայտվածությունը, բայց կարևոր պահն այստեղ այն է, որ չարտահայտված մասը պարտադիր ենթադրվում է և կարող է վերականգնվել (տե՛ս գծապատկեր 1/բ)<sup>557</sup>:

Գծապատկեր 1.




Հավելադրությունը և զեղչումը չպիտի նույնացնել այնպիսի իրավիճակների հետ, որոնցում, համապատասխանաբար, կրկնված համասեռ միավորները պայմանավորված են բովանդակային աճով (տե՛ս գծապատկեր 2/ա, օր.՝ *գրքինի, երկու-երկու...*), իսկ բացակայող ձևային բաղադրիչը պարտադիր և որոշարկված կերպով չի ենթադրվում, վերականգնելի չէ (տե՛ս գծապատկեր 2/բ, օր.՝ միակազմ նախադասությունները):

<sup>557</sup> Ստվերագծվածը արտահայտման հիմնական ձևն է, հոծ գծով ավելացված մասը՝ լրացուցիչ միջոցը, գծիկներով եզրագծվածը՝ զեղչված՝ ենթադրելի, բայց չարտահայտված մասը:



Հավելադրությանը և զեղչմանն առնչակից են, համապատասխանաբար, բազմաբառությունը (периссология) և համառոտությունը (брахилогия)<sup>558</sup>, որոնք, սակայն պետք չէ նույնացնել: Վերջիններից հավելադրություն կամ զեղչում չպիտի համարել փոխակերպական զույգերը (տե՛ս 3/ա, 3/բ գծապատկերները), քանի որ դրանք ոչ թե նույն ձևերի սերտաճումները կամ թերաձևումներն են, այլ տարբեր ձևեր, տարբեր կառույցներ (օր.՝ պարզ և բարդ նախադասությունների փոխադարձ փոխակերպումները, մենաբառ և շրջասույթային արտահայտությունները):

Գծապատկեր 3.



Կարծում ենք՝ ճիշտ կլինի հավելադրությունը և զեղչումը դիտարկել իբրև լեզվական միտումներ ուղղված լեզվի «նորաձևությանը»: Այդ միտումների դրսևորմամբ առաջանում են նոր բառեր, բառաձևեր, դարձվածքներ, նախադասությունների և տեքստային հատվածների փոփոխակային շարքեր, որոնցից ոչ բոլորը կարող են գնահատվել իբրև ընդունելի, գրական, պարտադիր ձևեր (հայտնի է, որ լեզվի զարգացման միտումներն առավելագույնս են արտահայտվում լեզվական սխալների մեջ, ինչը որոշ լեզվաբանների ուշադրությունը հրավիրում է դրանց ուսումնասիրության վրա<sup>559</sup>): Այստեղ մեր խնդիրն է լինելու ընդարձակել հավելադրության և զեղչման ըմբռումները՝ նրանց դրսևորումները փնտրելով արդի արևելահայերենի յուրաքանչյուր մակարդակում:

**1. Հավելադրություն:** Լեզվաբանական գրականության մեջ հավելադրությունը մեկնաբանվում է միայն շարահյուսական մակարդակում՝ որպես համասեռ միավորների (բառեր, դարձվածքներ, կառույցներ) ավելցուկային կիրառություն: Այսպես՝ ԼՅՑ-ում, օրինակ, *հավելադրությունը դիտվում է տեքստի հատկություններից, որ արտահայտվում է բառային, քերականական ձևերի կամ հոմանիշների կրկնության ձևով, ինչպես նաև այն ամենի առավել ընդարձակ արտահայտվածությամբ, ինչը կարող է արտահայտվել առավել հակիրճ ձևով (վերջինի համար՝ «բազմաբառություն» – «периссология»): Հավելադրության արտահայտվածության ոլորտ է համարվում ինչպես նախադասությունը, այնպես էլ ավելի լայն համատեքստը՝*

<sup>558</sup> Տե՛ս Ն. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազոյան, *Լեզվաբանական բարբարան*, Ե., 1975,

էջ 98:


<sup>559</sup> Տե՛ս Ա. Փրեյ, *Грамматика ошибок*, М., 2006:

ամբողջական նախադասությունների նույնիմաստության ձևով (իզոսեմիա)<sup>560</sup>:

Ի մի բերելով մեր ուսումնասիրած հրապարակումներում տեղ գտած մեկնաբանությունները՝ հավելադրության տեսակները կարելի է ներկայացնել 4-րդ գծապատկերով:

Հայ լեզվաբանության մեջ ևս հավելադրության մեկնաբանությունները հարում են շարահյուսությանը, սակայն այստեղ երևոյթը գնահատվում է ավելի շատ մերժողական դիրքերից հաճախ նույնացնելով այն նույնաբանության (тавтология) հետ: Պարտադիր կամ կամընտրական հավելադրությունների մասին կարծես թե չի խոսվում: Այսպես՝ «ՀԱՎԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ կամ ԱՎԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ// плеоназм, լեզվական համիմաստ կամ հոմանիշ տարրերի (բառերի, դարձվածքների, կառույցների) հավելական գործադրումը. կիրառվում է նաև իբրև ոճաարտահայտչական միջոց (թեև ինքնին, որպես անհարկի գործածություն, խոսքի համար ըստ էության թերություն է)»<sup>561</sup>: Այլ տեղում՝ «Հավելադրություն// հավելաբանություն: Այնպիսի հոմանիշ բառերի կամ կապակցությունների համադրում, որոնցից մեկը կամ մի քանիսը տրամաբանորեն ավելորդ են. օր.՝ սև մուր, սև խավար (հավելաբանական մակդիր), «Նա լայիս էր և արցունք էր թափում» (նույնաբանություն) և այլն»<sup>562</sup>:

Գծապատկեր 4.



Հավելորդայնությունը և նույնաբանությունը գրեթե նույնական են. երկուսն էլ ոչ համակարգային, խոսքային սխալներ են, բայց եթե առաջինն ունի ավելի լայն իմաստ՝ ընդգրկելով հավելադրության բոլոր մերժելի դրսևորումները, ապա նույնաբանությունը վերագրվում է միայն շարահյուսական մակարդակին:

**Տարամակարդակ հավելադրություն:** Մեր դիտարկումները հանգում են նրան, որ հավելադրություն երևոյթը կարող է ունենալ տարամակարդակ դրսևորումներ: Դրանք այնպիսի իրավիճակներ են, որոնցում առկա է ձևի

<sup>560</sup> Տե՛ս **В. Ярцева и др.**, *Лингвистический энциклопедический словарь*, М., 1990, էջ 379:  
<sup>561</sup> **Հ. Պետրոսյան**, *Հայերենագիտական բառարան*, Ե., 1987, էջ 357:  
<sup>562</sup> **Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազոյլյան**, *Լեզվաբանական բառարան*, էջ 173:

սահմանների գերազանցում բովանդակության սահմանների նկատմամբ: Այս դրույթի հիմնավորումը կա հայ լեզվաբանության մեջ շրջանառվող որոշ եզրույթներում, ինչպես «հնչյունի հավելում», «հավելուրդային ածանց», «հավելուրդային մասնիկ», «թարմատար», «հավելաբանական մակդիր», «նախադասության ձևական անդամ» (հարաբերյալի համար), «կրկնություն»: Պետք է արձանագրել, որ որքան ստորին է լեզվական մակարդակը, այնքան պակաս հաճախադեպ է պակաս հստակ են հավելադրման օրինակները:

**1.1. Հնչյունական մակարդակում** այն կարող է արտահայտվել հնչյունի հավելմամբ (օր.՝ *այպա – հապա, արբել – հարբել, աճար – հաճար*<sup>563</sup>, *արթուն – զարթուն, արդասենյակ – հարդասենյակ...*)՝ բացառած իմաստազատիչ դերով հավելումները: Այս դեպքում միջոցը հնչյունական է, արդյունքը բառակազմական: Նկատենք, որ թե՛ այս և թե՛ ներքոբերյալ օրինակներից շատերում հավելադրությունն ուղեկցվում է իմաստի նեղացմամբ: Այսպես «արբել» բառի ուղիղ իմաստների մեջ արդեն իսկ կա «հարբել» բառի իմաստը (1. ն.բ. խմել: 2. Տե՛ս *Հարբել*<sup>564</sup>), այսինքն՝ «ոգելից խմիչք(ներ) խմելով հարբած վիճակի մեջ ընկնել» իմաստն արտահայտելու պարագայում նշված բայերը նույնանիշներ են, իսկ «հարբել»-ը՝ հավելադիր ձև, քանի որ [հ]-ի հավելմամբ բառիմաստը չի ընդլայնվում, ավելին՝ նեղանում է: Ստացվում է, որ հավելադրումը կա՛մ նեղացնում է բառի նախկին իմաստը, կա՛մ ամբողջությամբ փոխարինում այն: «Ապա» – «հապա»-ի պարագայում բազմիմաստ բառից ստացվել են համանուն «հապա»-ներ՝ մակբայական կիրառության ջնջմամբ: «Արթուն» – «զարթուն»-ը նույնանիշ բառազույգ է, պարզապես առաջինի փոխաբերական իմաստները երկրորդում վերածվել են ուղղակիի կամ դուրս են մնացել: «Աճար» – «հաճար», «արդասենյակ» – «հարդասենյակ» բառազույգերի պարագայում ունենք նույնանիշներ, որոնցից առաջինի համար բառարանով ընդունելի տարբերակը հավելադիրն է, երկրորդի համար՝ սերողը (վերջինը հենց հավելված հնչյունի նորից անկման դեպքն է):

**1.2. Բառակազմական մակարդակում** այն կարող է արտահայտվել հետևյալ կերպ՝

- **Թարմատար ածանցներով.** սրանք, ըստ Գ. Զահուկյանի, այնպիսի ածանցներ են, որոնք բառին նոր իմաստ չեն հաղորդում և ունեն հավելուրդային դեր (օր.՝ *մութ – մթին, միշտ – մշտապես*)<sup>565</sup>: Բացառիկ օրինակներում հավելադիր ածանցումը կարող է արտահայտվել ծագումով տարբեր երկու փոքրացուցիչ ածանցների մեկտեղմամբ (օր.՝ *պատանեկիկ*):

- **Թարմատար արմատներով.** սրանք այնպիսի կազմություններ են, որոնցում սերող հիմքին ավելացվող արմատը, որ լիիմաստ բառերի դեպքում բացառապես նախադաս է լինում, իսկ թերիմաստ բառերի դեպքում՝ գերա-

<sup>563</sup> Նկատենք, որ հավելվող հնչյունը հիմնականում [հ]-ն է, որն առկա է նաև «հավելում» բառում:

<sup>564</sup> Այս և մյուս օրինակների հիմնավորումները՝ ըստ Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976:

<sup>565</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 157:

զանցապես հետադաս, կրում է ձևական բնույթ. չի փոխում սերող բաղադրիչի հասկացական իմաստը (օր.՝ **ջրհեղեղ, թռչներամ, լեռնակիրճ, քարայր, հենց որ, թե որ, իրոք որ, ուստիև, թեպետև, թեկուզև, չլինի թե, կարծես թե, նամանավանդ, միգուցե, մինչև անգամ, մինևույն...**)<sup>566</sup>:

Հավելադրության ընդհանուր տեսության մեջ հնարավոր միջոց է համարվում նաև կրկնությունը: Հայերենում, սակայն, կրկնավոր կազմություններին մաքուր հավելադրություն դժվար է վերագրել. նույնիսկ իմաստի նեղացման պարագայում դրանք շատ (օր.՝ **մեծ-մեծ, մեծամեծ, չարաչար, նուփնոր, կաս-կարմիր...**) կամ քիչ (օր.՝ **մանր-մունր, սխալ-մխալ...**) չափով ենթարկվում են բովանդակային հարստացման՝ սաստկական կամ քանակական նրբիմաստներով: Այսպես՝ «մանր-մունր» բառը, որ 16 իմաստ ունեցող «մանր» բառի երկու իմասն է միայն արտահայտում (*ած. 1. սովորականից կամ անհրաժեշտից ավելի մանր, 2. մանր և անկարևոր, երկրորդական*), հավելադրություն է միայն երկրորդ իմաստի համար, քանի որ առաջին իմաստի դեպքում մանր լինելը տարբերակվում է ըստ աստիճանների (մանր/ ավելի մանր), ինչը խոսում է համանշտության մասին, այլ ոչ թե նույնանշտության: Հավելադիր չափտի համարել հատկապես այն կրկնավորները, որոնցում արմատի կրկնությամբ ապահովվում է խոսքիմասային կամ դասային անցում (օր.՝ – *Եկավ, փիլիսոփա-փիլիսոփա եկավ*<sup>567</sup> (194), *խումբ-խումբ, գույգ-գույգ, ուրախ-ուրախ, կաթիլ-կաթիլ, քսան-քսան, հինգ-հինգ...*):

Ինչ վերաբերում է հավելադրության **քերականական** դրսևորումներին, ապա դրանք ամենից ցայտուն արտահայտվածները և ամենից շատ ուսումնասիրվածներն են:

**1.3. Ձևաբանական մակարդակում** այդպիսին է քերականական արտահայտման լրացուցիչ միջոցի կիրառությունը, ինչը կարող է լինել ընդունելի կամ անընդունելի, պարտադիր կամ կամընտրական բնույթի:

Հավելորդայնության ձևաբանական դրսևորումներ են՝

- **հոգնակերտը**՝ որոշ հավաքական գոյականների համար (օր.՝ *տեսականիներ, խմորեղեններ, դեղորայքներ...*),
- **ստացական հոդը**՝ անձնական դերանվան սեռական հոլովի և ստացական հոդի մեկտեղմամբ (օր.՝ *իմ գրքից*),
- **ածականի գերադրական աստիճանի կազմության միջոցների մեկտեղումը** (օր.՝ *ամենայնպեսգույն*),
- **«հոմանական թվական + -րդ, -ին անանց» գրությունը** (օր.՝ *IV-րդ*), ինչը կարող է դիտարկվել նաև որպես հնչյունաբանական-գրաբանական դրսևորում,
- **երկրորդ հիմքակազմիչը**՝ (օր.՝ *մոտեցրեցի, դրեցի*):

<sup>566</sup> Առաջին երեք օրինակները՝ ըստ **Է. Ադայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*. Առաջաբան, էջ XII:

<sup>567</sup> Այս և մյուս գեղարվեստական օրինակները՝ ըստ **Շ. Մաթևոսյան**, «Տերը» ժողովածու, Ե., 1983 (էջերը՝ օրինակներին կից):



Ձևաբանական ընդունելի հավելադրություններ են՝

• **կրկնակի ժխտումը** (օր.՝ *ոչ ոք չասաց, ոչինչ չի ասել*), ինչը արդի գրական արևելահայերենում պարտադիր հավելադրություն է, քանի որ միակի ժխտումը բացառվում է,

• **անորոշության լրացուցիչ արտահայտումը** (օր.՝ *Կպատմի հեքիաթ* (Օ): – *Կպատմի մի հեքիաթ* (մի, Օ): – *Կպատմի մի որևէ հեքիաթ* (մի, որևէ, Օ)...),

• **ես ինքս, դուք ինքներդ...** անձնական դերանունների զուգակցումը,

• **անձնական դերանվան և բայի դիմավոր ձևի զուգակցումը** (օր.՝ *ես գրում եմ, դուք գրել էք, նա գրեց...*)՝ որպես դեմքի և թվի կրկնակի արտահայտում: Եթե արևելահայերենում սա համակարգային, բայց կամընտրական հավելադրություն է, ապա կան լեզուներ (օր.՝ ֆրանսերեն), որոնցում այն պարտադիր հավելադրություն է:

Վերջին երեք կետերը ընդունելի, համակարգային, կամընտրական հավելադրություններ են:

Համեմատելով նկատենք, որ 1.3. բաժնի երկրորդ և երրորդ կետերի միջոցների կիրառությունը երկուստեք հնարավոր է նաև առանձին (օր.՝ *իմ գիրքը// գիրքս, ասենալավ// լավագույն*), մինչդեռ վերջին կետում բերվածի միակողմ կիրառությունը հնարավոր է միայն օժանդակ բայի կամ դիմաթվային վերջավորության համար (օր.՝ *ես գրում եմ, ես գրեցի// գրում եմ, գրեցի// ես գրեի*):

Հավելադրություն չպիտի համարել երկու պատմական հոգնակերտների մեկտեղումը, որոնցից առաջինը հոգնակերտից վերածվել է ածանցի (-ք), մյուսը՝ դարձել հոգնակիության միակ արտահայտիչ (օր.՝ *ձեռքեր, աչքեր...*):

**1.4. Շարահյուսական մակարդակի** հավելադրություններն արտահայտվում են կրկնությունների (նույնիսկ ներդրյալ միավորների), նույնիմաստ միավորների համատեղման կամ ձևական անդամի կիրառության ձևով: Կրկնվում են՝

• **նախադասության անդամները** (զլխավոր կամ երկրորդական), օր.՝ *Մայայի բախտից, և Միմոնի՛, Միմոնի՛ բախտից՝ անձրևներ սկսվեցին ու մի քանի օր չկտրվեցին* (220): *Եվ սիրով-ծիծաղով-կարոտով լեցուն կանանց երամից ամաչկոտ Գուհարը (նա՛ էլ, նա՛ էլ) կանչեց* (220),

• **սպասարկու բառերը** (բազմաշաղկապություն, բազմակապություն, բազմավերաբերում, բազմաձայնարկում<sup>568</sup>), օր.

....– *Վույ, վույ, վույ,– գլուխը բռնել ու երեսները վար է բերել Ադունը* (221): *Միմոնը շուտ եկավ ու ձեռնասողոցով կտրել շարունակեց ձեռքի տախտակը: Արագ-արագ-արագ-արագ-արագ, դռռ, դռռ, դռռ, դռռ...* (221) (Նկատենք, որ այս օրինակում «արագ»-ի կրկնությունը, որ, ըստ հեղինակային կետադրու-

<sup>568</sup> Վերջին երեքն առաջարկվում է մեր կողմից:

թյան, բառակազմական բնույթի է, հավելադրություն չէ, քանի որ նրանով արտահայտվում է «չափազանց» մակրայի իմաստը),

- **ուղղակի խոսքի բացականչությունները.**

– *Ձի՛ն, ձի՛ն, ձի՛ն, էն ձի՛ն՝ որ հետըդ չտարար ու էնտեղից էստեղ ոտով ես եկել,- զգվելով կանչեց Ադունը, ձի՛ն, ձի՛ն, ձի՛ն (188):*

Մերժելի հավելադրություններ են

- **անվան և դերանվան համատեղումը** (օր.՝ *Մանուշակը դա ծաղիկ է*),

- **նույնարմատ կամ նույնանիշ կապակցությունները՝ նույնարմատությունները** (օր.՝ *Հումանիշ բառերն այն բառերն են, որոնք... կառույց կառուցել, բուժել ու բժշկել, հագուստ հագնել, ուսուցանել ու դասավանդել, Մասինս ու Արարատը...),*

- **կապի և համարժեք հոլովական վերջավորության համատեղումը** (օր.՝ **ըստ որոշմամբ**):

Ընդունելի, համակարգային հավելադրություն է՝ **ձևական անդամի** (հարաբերյալ) կիրառությունը բարդ ստորադասական կառույցում, ինչը հիմնականում կամընտրական բնույթի է (օր.՝ *Հասանք այն աղբյուրին, որի մոտ խաչքար կար: // Հասանք աղբյուրին, որի մոտ խաչքար կար*):

**1.5. Կետադրական հավելադրություն:** Այս ըմբռնումն առանձնացվել է մեր կողմից՝ հետևյալ մեկնաբանությամբ. «*Հավելադիր կետադրությունը հիմնական և լրացուցիչ կետադրական նշանների կամ գրաբանական օժանդակ միջոցների զուգակցումն է, ինչը հիմնականում կրում է ավելորդ բնույթ: Հավելադիր կարող են համարվել նաև չակերտները՝ ինքնանվանողաբար կիրառված բառն առանձնացնելիս, երբ այն շարված է ընդհանուր տեքստից տարբերվող տառառձով (թավ, շեղատառ, գլխատառ, միջտառային հեռավորությամբ) կամ ընդգծված է (սա մերժելի չէ): Անհարկի հավելադրության ամենահաճախադեպ օրինակը կախման կետերով ավարտվող նախադասությունը նաև վերջակետով ամփոփելն է»<sup>569</sup>:*

*.... կախվում գոռում է՝ «Արա Ֆելո՛՛ն», «Մամա՛ ա»... (338), Տխրե՛՛ց, տխրության ծովն ընկալ (348):* Այս օրինակներում տառակրկնությունը և բացականչական նշանը կատարում են նույն դերը:

**1.6. Տեքստային հավելադրություն:** Հավելադրությունը վերագրելի է նաև տեքստաբանական մակարդակին՝ հիմնականում նույնարմատության կամ տեքստային հատվածների կրկնության դրսևորումներով: Չեն բացառվում նաև ոճական-գաղափարական բնույթի հավելադրությունները՝ բովանդակային ընդգծում ապահովելու դերով:

Տեքստային հավելադրության դրսևորումներից է ուրիշի խոսքի անուղղակի և ուղղակի արտահայտումների մեկտեղումը, ինչը չի խրախուսվում հատկապես լրագրության ոլորտում. ռեպորտաժում, օրինակ, հեղինակի խոսքը պիտի նախապատրաստի սինքրոն հատվածում ասված մտքին, բայց

<sup>569</sup> Տե՛ս նաև **Հ. Մելքոնյան**, Հեղինակային կետադրության հարցեր.- *Մ. Ասատրյանի 90-ամյակին նվիրված գիտաժողով*, ԵՊՀ, 27. 04. 2016 (հոդվածը տպագրման փուլում է):

չկրկնի այն:

**2. Ձեղչումը** ենթադրելի միավորի (բովանդակային պլանում առկա) ձևային չարտահայտվածությունն է (լրիվ կամ մասնակի): «*Ձեղչում (հուն. *έλλειψις* – բացթողում, թերություն). ենթադրելի լեզվական միավորի բացթողում խոսքում կամ տեքստում, շարահյուսական կառույցի կառուցվածքային «անլիարժեքություն»: Այն հատուկ է հատկապես խոսակցական լեզվին, որում գեղջված միավորների պակասը լրացվում են ոչ խոսքային միավորներով, օր.՝ ժեստ, դիմախաղ»<sup>570</sup>:*

«*Ձեղչումը թերթնացնում է խոսքի արտահայտության պլանը, կանխում անհարկի կրկնությունը, ասության բերում դինամիկություն, արտասանական դյուրություն, սահունություն, խնայում արտաբերական ջանքերը (էներգիան)....*»<sup>571</sup>:

**Տարամակարդակ գեղչում:** Չնայած այն բանին, որ գեղչումը վերագրվում է միայն շարահյուսական միավորներին՝ մեր դիտարկումները հանգում են նրան, որ այն ևս կարող է ունենալ տարամակարդակ դրսևորումներ: Այս դրույթի հիմնավորումները կան հայ լեզվաբանության մեջ շրջանառվող որոշ եզրույթներում, ինչպես՝ «հնչյունի անկում», «սղում», «աձանցի գեղչում»:

**2.1. Հնչյունական մակարդակում** գեղչումը կարող է արտահայտվել **հնչյունի անկմամբ** (օր.՝ այլուն-փայլուն), **հնչյունի կամ երկբարբառակերպի սղմամբ** (օր.՝ վերջին → վերջնական, կապույտ → կապտավուն), **ամփոփմամբ** (օր.՝ հասարակական կարգ → հասարակարգ):

Ձեղչում չեն ձուլումները (գինի+ա+տուն → գինետուն), ինչպես նաև հնչյուն>ը//այլ հնչյուն, երկբարբառակերպ>ը//այլ հնչյուն անցումները:

**2.2. Բառակազմական մակարդակում** գեղչման դրսևորումներ են՝

• **Աձանցի գեղչումը:** Առանձնացնելով աձանցների երկու տեսակ՝ իմաստափոխական և գործառական՝ Գ. Ջահուկյանը կարծում է, որ դրանցից գործառականները կարող են գեղջվել՝ ենթարկվելով տնտեսման օրենքին: Օր.՝ տես(ություն) + ական → տեսական: Այս բառի ջահուկյանական կաղապարն է  $A=(+c)+d$ , այլ ոչ թե՛  $A+d$ <sup>572</sup>:

Աձանցի գեղչում պիտի փնտրել նաև հատվածական բարդությունների առաջին բաղադրիչներում (օր.՝ ռուս-պարսկական, հայ-ֆրանսերեն...):

• **Կրկնվող արմատի գեղչումը** (երբեմն աձանցի հետ)՝ հատվածական բարդություններում (օր.՝ *հեռուստա-* և *ռադիոթեր,* *նախա-* և *հետպատե-րազմյան*):

• **Հապավույթի գեղչումը:** Ձեղչումը դրսևորվում է նաև հապավման տեսակներից մեկում՝ «կրկնահապավում» կոչված, որի բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը հապավույթով չեն արտահայտվում, օր.՝ *պրոֆանդամ* = *պրոֆեսիոնալ միության անդամ, կոլվարչություն* = *կոլլեկտիվ տնտեսության*

<sup>570</sup> В. Ярцева и др., *Лингвистический энциклопедический словарь*, М., 1990, с. 592.

<sup>571</sup> Հ. Պետրոսյան, *Հայերենագիտական բառարան*, էջ 212:

<sup>572</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, *Ֆամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 158:

վարչություն (Գ. Սևակ)<sup>573</sup>: Այլ օրինակներ՝ *ԽԴԿ – Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիա, ԱՓՊՇԿ – Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա, ԿԱԵ – Կենտրոնական և Արևելյան Եվրոպա, ԿԳՆ – Կրթության և գիտության նախարարություն:*

**2.3. Ձևաբանական մակարդակում** գեղչումն արտահայտվում է **փոխանունության** ձևով (օր.՝ մեր ազգինը – մերինը, գեղեցիկ տեսարանով – գեղեցիկով, երկու հոգուց – երկուսից, Թումանյանի գործերից – Թումանյանից...):

**2.4. Շարահյուսական մակարդակում** գեղչումն արտահայտվում է նախադասության առանձին անդամ(ներ)ի կամ սպասարկու բառերի, ինչպես նաև անվանական կամ բայական խմբերի (NP, VP) բացթողման ձևով: Ձեղչմանը նվիրված գրեթե բոլոր հրապարակումներում երևույթը մեկնաբանվում է բացառապես շարահյուսական կամ տեքստաբանական տեսանկյուններից: Օր.

– .... Աղունը ճայթունի պես հանկարծ էր վրա հասել Մայային («Լիրբ, գավթիչ»), բռնել էր մագերից ու՝ մեջքին, մեջքին, մեջքին («Ձավթիչ, գավթիչ, գավթիչ»), բայց կանանց շփոթված-շաղված երամը հավաքվել, մի կողմ էր շարտել Աղունին.... (220)

Այս օրինակում գեղչված է «հարվածել» բայի հոմանիշներից որևէ մեկը, որի բազմապատիկ իմաստն արտահայտված է «մեջքին» բառի կրկնությամբ, և ասացական բայը՝ ներդրված ուղղակի խոսքերի համար:

Օտար լեզուների համար առանձնացնում են շարահյուսական գեղչման որոշակի տեսակներ, որոնցից են՝ գեփինգ, կեծ գեփինգ, սլուսինգ սթրիփինգ, VP խմբի գեղչում, թերասացություն, NP խմբի գեղչում, հատկացյալի գեղչում, բաղդատական գեղչում, պատասխանական գեղչում<sup>574</sup>:

**2.5. Տեքստաբանական մակարդակում** գեղչումն արտահայտվում է ենթադրվող ասելիքի մասնակի կամ ամբողջական բացթողման ձևով: Եթե հավելադրությունը տեքստաբանական մակարդակում կատարում է գաղափարական ընդգծման դեր, ապա գեղչումը՝ ռեմայի ընդգծման, խոսքի դինամիկության ապահովման կամ գեղագիտական (ենթատեքստային ակնարկները): Ձեղչման պատճառները կարող են լինել ինչպես տեքստակազմական, այնպես էլ արտալեզվաբանական բնույթի (բարոյագիտական, ինտելեկտուալ, հոգեբանական, քաղաքական-դիվանագիտական...): Այսպես՝ մասնագիտական լսարանում մետալեզվական հանրահայտ ճշմարտությունների մեկնությունների բացթողումը հարգանք է ունկնդիրների հանդեպ: Արգելքի ենթարկված բառերի և արտահայտությունների գեղչումը կարող է ունենալ հոգեբանական կամ բարոյագիտական, քաղաքական հանրահայտ տեղեկություն

<sup>573</sup>Տե՛ս **Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազոյան, Լեզվաբանական բառարան**, էջ 159:

<sup>574</sup>Նշվածների տեղայնացումը հայերենում կարող է լինել մի առանձին քննության նյութ. ծավալի սահմանափակումների պատճառով այստեղ շրջանցում ենք մանրամասները:

շրջանցումը՝ դիվանագիտական հիմքեր:

Ամփոփելով շարադրանքը՝ կարելի է արձանագրել հետևյալը՝

- Հավելադրության և զեղչման դրսևորումները կարող են լինել տարամակարդակ՝ վերին մակարդակներում առավել հաճախադեպ և հստակ արտահայտվածությամբ:
- Հայերենում զերակշռում են հավելադրության մերժելի-խոսքային և ոճական դրսևորումները:
- Ի համեմատություն զեղչման՝ հավելադրությունն աչքի է ընկնում օրինակների պակաս հստակությամբ, պակաս համակարգայնությամբ և պակաս կենսունակությամբ:

Melkonyan Heghine – Pleonasm and Ellipsis as Antipode Phenomena: Their Expressipon in the Armenian Language. – The article reveals two antipodal phenomena existing in the expression plane of a language – the pleonasm and the ellipsis. The language material has been selected from modern Eastern Armenian. An attempt has been made to expand these concepts, offering to refer their expression to all levels of the language.

Мелкоян Эгине – Плеоназм и эллипсис как антиподные явления: их выражения в армянском языке. – В данной статье рассмотрены две антиподные явления плана выражения языка – плеоназм и эллипсис. Языковой материал выбран из современного восточноармянского языка. Сделана попытка расширения данных концептов, предлагая приписывать их выражения всем уровням языка.

**ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ  
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ**

Արդի հայերենի զարգացման խնդիրներից մեկը արևելահայ և արևմտահայ տարբերակների փոխհարաբերությունների հարցն է:

2010 թ. ՅՈՒՆԵՍԿՈ-ն հրատարակեց աշխարհում վտանգված լեզուների ցանկը, լեզուներ, որոնք գալիք տարիների ընթացքում մարման վտանգի տակ են: Եվ այդ լեզուների շարքում էր արևմտահայերենը:

Սա մեծ իրարանցման պատճառ դարձավ արևմտահայ տարբերակը պաշտպանող ջատագովների՝ լրագրողների, ուսուցիչների, գրողների, լեզվաբանների, դպրոցների տնօրենների միջավայրում, որոնք հասկանալի պատճառներով արտահայտեցին իրենց լուրջ մտահոգությունը:

Սփյուռքում, լեզուն հայոց ինքնության պահպանման հիմնական լծակն է: Այն սփյուռքահայության ինքնությունը բնորոշող, յուրահատկությունը ներկայացնող գործոնն է: Եթե արևմտահայ տարբերակը ուժանա և սերնդեսերունդ սկսի մարել, ապա սփյուռքահայությունը կդատապարտվի անհետացման:

Այդ է պատճառը, որ արևմտահայերենը ՅՈՒՆԵՍԿՈ-ի՝ վտանգված լեզուների շարքում գտնվելը մեծ համախմբման պատճառ դարձավ սփյուռքում արևմտահայերենի ջատագովների շրջանակներում:

Երկու տարի առաջ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կրթական – հայագիտական բաժանմունքը կազմակերպեց միջազգային գիտաժողով՝ նվիրված արևմտահայերենի ուսուցման, դասավանդման խնդիրներին:

Անցյալ տարի Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունն ու Փարիզի արևելյան լեզուների ինստիտուտը կազմակերպեցին «21-րդ դարուն արևմտահայերենի դասավանդման մարտահրավերները» խորագրով գիտաժողովը, որին մասնակցեցին տարբեր երկրներից ժամանած մեծ թվով մանկավարժներ, դասախոսներ, դպրոցների տնօրեններ, լրագրողներ:

Հետաքրքիր է նշել բազմաթիվ նիստերից մի քանի թեմաներ՝

- լեզվաբանական կենսունակությունը հարցականի տակ, տեսություն և կիրարկում
- արևմտահայերենի դասավանդումը աշխարհի մեջ
- լեզուի մը դասավանդումն ու յուրացումը արվեստի ու մշակույթի ընդմեջ
- արևմտահայերենը Ֆրանսիայի մեջ
- հայկական դպրոցը. Վերամտածել տարրական շրջանի և ներգործական մանկավարժություն
- մանկավարժական այլընտրանքներ
- դաստիարակչական մարտահրավերներ

- հայերենի ուսուցումը չափահասներուն

Վերջապես, այս տարվա հունվարին Օբսֆորդ համալսարանի հայագիտական ամբիոնի կազմակերպությամբ և Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նյութական աջակցությամբ կազմակերպվեց միջազգային գիտաժողով, որի թեման էր՝ արևմտահայերենը 21-րդ դարում, ընդհանուր խորագրով:

- արևմտահայերենը. ներկա իրադրությունը
- սփյուռքում արևմտահայերենով մտածելու – ստեղծագործելու խնդիրներն ու մարտահրավերները
- կառույցների և միջոցների խնդիրները
- արևմտահայ հրատարակչության հարցեր
- արևմտահայ մամուլի այսօրվա և վաղվա խնդիրները:

Ինչպես ցույց են տալիս այս 3 օրինակները, մոբիլիզացիան, համընդհանուր խուճապը վերաբերում էր Սփյուռքում գործող մեծ թվով դպրոցների ղեկավարների, մանկավարժների, բոլորը չափազանց մտահոգ արևմտահայերենի ապագայի համար:

Սփյուռքում բնակվող, գործող, հայկական միջավայրի մեջ ապրող, հայկական մշակութային կազմակերպությունների կյանքին հետևող յուրաքանչյուր իրատես անձ միշտ հանգում է նույն եզրակացությանը՝ արևմտահայ տարբերակի կիրարկության ոլորտները տարեցտարի նվազում են, նահանջ են ապրում, այդ տարբերակով հաղորդակցվողների թիվը աստիճանաբար պակասում է, հատկապես այդ տարբերակի գրական գրավոր խոսքը տիրապետողների թիվը:

Ո՞րն է այս տագնապալի իրադրության պատճառը:

Կան բնական, լեզվական միջավայրին ու կարգավիճակին հատուկ պատճառներ, որոնք բոլորին հայտնի են՝ արևմտահայ տարբերակը սփյուռքում պետական լեզու չէ, նրա կիրարկման ոլորտները սահմանափակ են, այն տեղական – տարածքային լեզու չէ, հասարակության մեջ ընդհանուր հաղորդակցության միջոց չէ:

Կարելի ասել, որ արևմտահայերենը տիրապետող բոլոր հաղորդակցվողները երկլեզվանի են - առանց ընդունող երկրի լեզուն իմանալու անհնար է այդ հասարակության մեջ որևէ գործունեություն ծավալելը:

Այս բոլոր հանգամանքները նվազեցնում են հայերենի պիտանիությունը, անհրաժեշտությունը սփյուռքում որպես գործադրելի լեզու ամենօրյա կյանքում:

Որպեսզի լեզուն ապրի, կենսունակ լինի, այն պետք է ինչ-որ նպատակի ծառայի: Որևէ ծառայություն չմատուցող լեզուն չի կարող ունենալ երկար ապրելու բնական պայմաններ:

Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ արևելահայերենը դանդաղ, աստիճանաբար ներթափանցում է արևմտահայերենի կիրարկման տարածքներ:

Փորձենք կոնկրետ օրինակներով ցույց տալ այդ երևույթը: Նախ՝ գրավոր խոսքում:

Որտե՞ղ է գրավոր արևմտահայերենը տեսանելի արևմտահայ ընթերցողների շրջանակներում: Անշուշտ մամուլում. գրավոր արևմտահայերենը ուրիշ տեղ մասսայական տարածում չունի:

Տրամաբանորեն, Միյոտքում լույս տեսնող հայերեն գրավոր հրատարակությունները՝ մամուլ, գրականություն, պետք է լինեն արևմտահայ տարբերակով և դասական ուղղագրությամբ: Գոնե այդ միջոցով կարելի է պահպանել, շրջանառության մեջ դնել արևմտահայ տարբերակը:

Բայց իրականում այդպես չէ:

Ֆրանսիայում հայկական մամուլ ասելով պետք է հասկանալ հայալեզու մեկ երկշաբաթաթերթ «Նոր Յառաջ» խորագրով, որը փոխարինեց ավանդական «ՅԱՌԱՋ» օրաթերթը, որը դադարեց 2009 թ.:

Լույս են տեսնում ֆրանսալեզու 3 ամսագիր "Les Nouvelles d'Arménie Magazine", լույս է տեսնում Փարիզում, "France – Arménie", լույս է տեսնում Լիոն քաղաքում և "Azad magazine", լույս է տեսնում Գրենոպլ քաղաքում:

Ընթերցողներին հայերեն կարդալու նյութ տալու նպատակով, թերևս հայերենը պահպանելու նպատակով, որպեսզի ցույց տրվի, որ հանդեսը հայ համայնքի հայերեն ընթերցողներին էլ է ուղղված, այս ամսագրերը, ամեն ամիս 4- 6 կամ 8 էջ հայոց լեզվով հոդվածներ, զանազան լուրեր են մատուցում հայերեն ընթերցողներին: Նախ նշեմ, որ "Les Nouvelles d'Arménie Magazine" մեզ անհայտ պատճառներով վաղուց դադարել է հայերեն էջեր հրատարակելուց:

Պարզվում է, որ հոդվածները հաճախ արևելահայերեն են, արտասույումներ են Հայաստանում լույս տեսնող մամուլից և արևելահայ ուղղագրությամբ: Ամսագրերը հայալեզու էջերում մի բաժին են հատկացնում հայկական ասացվածքներին, առակներին՝ բոլորը արևելահայերեն և արևելահայ ուղղագրությամբ:

"France – Arménie" ամսագրում N°424 էջ 2, ամբողջ էջը նվիրված է Ռոն Ալփ նահանգի գովազդին՝ 8 լեզուներով չինարեն, իսպաներեն, անգլերեն, յեբրայերեն և այլն լեզուներով, պարզ է նաև հայերեն գրված է «Բոլորս Ռոն Ալպից ենք» արևելահայերեն և արևելահայ ուղղագրությամբ:

Նույն ամսագրի 56 էջում տրված են հայերեն ասացվածքներ կամ առածներ՝ «Ասա ընկերդ ով է, ասեմ ով ես դու», «Բարեկամը նեղ օրվա համար է», «Բարեկամությունը՝ բարեկամություն, հաշիվը հաշիվ», բոլորը արևելահայերեն արևելահայ ուղղագրությամբ:

"France – Arménie" ամսագրի դեկտեմբեր ամսվա N°425 համարում, էջ 52-53, երկու էջ նվիրված են «Հայկական Մարսել» խորագրով մի հոդվածի. բոլորը արևելահայերեն և դասական ուղղագրությամբ:

Նույն հանդեսի մեջ նոր տարվա առթիվ ուղերձներում կարդում ենք արևելահայերեն արևելահայ ուղղագրությամբ «Թող այս նոր տարին ձեզ բերի երջանկություն, խաղաղություն և առողջություն»:

«ԱՋԱՏ» եռամսագրում հայալեզու էջերում բոլոր հոդվածները արևելահայերեն են, արևելահայ ուղղագրությամբ:



«Եվրոպայի հայերի համագումար» կազմակերպությունը 2016 թ. մարտի 4 – 6 –ին Գերմանիայի Դալբուրգ քաղաքում կազմակերպել էր եռօրյա գիտաժողով: Համացանցով ուղարկված այդ գիտաժողովի հաշվետվությունը, որը նախ և առաջ ուղղված է արևմտահայերին, գրված է արևելահայերեն արևելահայ ուղղագրությամբ:

- Արևմտահայ մամուլում ստացվում են հետևյալ տարբերակները՝
- արևմտահայերեն դասական ուղղագրությամբ
  - արևելահայերեն դասական ուղղագրությամբ
  - արևելահայերեն արևելահայ ուղղագրությամբ

Ինչպես բացատրել, որ սփյուռքահայ մամուլում, ինչպես նաև համացանցում, որտեղ միայն արևմտահայերեն լեզու և ուղղագրություն է պետք օգտագործել, արևելահայերենն է օգտագործվում:

Նախ խմբագրություններում արևմտահայ խոսքի մասնագետներ, գրավոր լեզուն տիրապետողներ չկան կամ շատ քիչ կան: Թերևս գլխավոր խմբագիրը հայերեն չի կարդում ու գրում: նրանց փոխարեն կան Հայաստանից արտագաղթած բարձրագույն ուսում ստացած բազմաթիվ արևելահայերենի մասնագետներ, որոնք արևմտահայ մամուլի մեջ գրում են արևելահայերեն, քանի դա իրենց մայրենի լեզուն է:

Կադրերի պակաս, մասնագետների պակասը զգալի է բոլոր ոլորտներում, այն պարզ պատճառով, որ սփյուռքը չի վերարտադրում իրեն անհրաժեշտ լեզվի մասնագետներ, ուսուցիչներ:

Գրավոր խոսքում կան այլ փոխներգործություններ քերականական ձևերի մեջ: Նկատելի է, որ հաճախ արևելահայ բացառական հոլովը փոխարինում է արևմտահայ բացառականին. Գրում են *«ժամը 3-ից 8-ը»* փոխանակ գրելու *«ժամը 3-էն 8-ը»*:

Մեկ այլ հոդվածում *«Ֆրանս –Արմենի»* ամսագրում կարդում ենք. *«Գծանկարներու միջոցով ներկայացնելու 15-ից մինչև 20-րդ դարու սկիզբը հայունու կերպարը»*:

Ֆրանսահայ մշակութային միությունների՝ համացանցով ուղարկված ծանուցումները շատ հաճախ արևելահայերեն են:

Այս տարի Իսսի – լ Մուլինո քաղաքում, հայ Առաքելական եկեղեցու 8 – 18 տարեկան աշակերտների համար բացած դպրոցում դասավանդվում է արևելահայերեն և ծնողները շատ գոհ են, որ արևելահայերեն է դասավանդվում:

Մարսել քաղաքի ԺԱՖ մշակութային կազմակերպության շաբաթօրյա դասընթացներում արդեն մի քանի տարի է որ դասավանդվում է արևելահայերենը:

Վերջերս «Ակոս» թերթին տված իր հարցազրույցում, «Ժամանակ» թերթի խմբագիր, Մխիթարյան վարժարանի հայերենի ուսուցիչ Սևան Տեյիրմենճեանը նշում է որ *«արևմտահայերեն խոսողներուն նուազումը թրքահայերին գլխավոր մտահոգություններեն մեկն է: Մտահոգություն որ կ'ապացուցե վտանգի առկայութիւնը»*:

*Թրքահայոց համար հայերենի առօրեայ կեանքին մեջ գործածությունը հարցական է: Դպրոցներէ ներս անգամ աշակերտները միայն դասարաններուն Հայերէն կը խօսին եւ դպրոցէ դուրս կ'իշխէ տեղական լեզուն: Նշեմ որ հայերէնը սովորելիք լեզու մը նկատելով արդէն դուրս հանած կ'ըլլանք անմիջական եւ գործածուող լեզու մը ըլլալէ: Երախան կ'անդրադառնայ թէ հայերէնը սովորելիք լեզու մըն է, բայց այդ ուսումը կեանքին մեջ բնաւ շահեկան չէ:... Շատ ցաւալի է "հայերէնը ինչի՞ կը ծառայէ" հարցումը լսել: Այդ հանգրուանին հայերէնը կը սկստի անբարարար թուիլ: Անշուշտ որ սխալ համոզում մըն է, որուն ետին կ'այ հայերէնը դպրոցին մեջ տրված ըլլալու իրողութիւնը: Մինչդէռ հայերէնը միայն դպրոցի լեզուն չէ, այլ փողոցի լեզուն, սիրոյ լեզուն: Աշակերտները այս իրողութեան համապատասխան փորձը չունենալով ակամայ կը հեռանան հայերէնէն:*

*Թուրքիոյ համար հայերէնը դիմադրութեան միջոց մըն է նախ: Երբ շրջապատուած եւ ազգայնական ճնշումի մը մեջ, հայախօսութիւնը, հայալարի ապրումը ինքնին դիմադրութիւն են:*

ՊԲՀ-ի 2001թ. թիվ 1-ում հրատարակել եմ «Արդի հայերէնի 2 տարբերակների փոխներգործության շրջանակները» խորագրով հոդված, որտեղ ցույց եմ տվել, նախ՝ ամեն մի տարբերակի կիրարական ոլորտները, և 2-րդ ամեն մի տարբերակի ներկայությունը մյուսի կիրարական ոլորտներում: Պարզվում է, որ արևելահայերէնը շատ ավելի ներկա է արևմտահայ ոլորտում, քան հակառակը:

Այդ թվականից անցել է 15 տարի և արևելահայերէնի ներկայությունը արևմտահայերէնի գործառույթի ոլորտներում շատ ավելի զգալի է:

Ֆրանսիայի հայ համայնքը հաշվվում է մոտավորապես 400-450 հազար ծագումով հայեր: Հիշեցնենք, որ այս համայնքը Եվրոպայի ամենահայաեռն համայնքն է՝ ավելի մեծ թվով, քան ամբողջ միջին արևելքի հայ բնակչությունը, ներառյալ Բսպանալու և Եգիպտոսը: Այդ տեսակետից Ֆրանսիայի հայ համայնքը ունի ներկայացուցչական բնույթ: Սակայն, երբ ասում ենք «ծագումով» հայեր, նշանակում է, որ անձերի մեծամասնությունը ունի հայկական ազգանուն՝ *–յան* վերջավորությամբ:

Երեխայի ծնվելու օրից, եթե հոր ազգանունը հայկական է, ապա երեխան մեխանիկորեն, ինքնաբերաբար դառնում է ծագումով հայ. և այդ պիտակը մնում է նրա ամբողջ կյանքում: Այս դեպքում ծագումով հայ լինելը կրում է ժառանգական բնույթ:

Սակայն պետք է իմանալ, որ հայկական ազգանուն կրելը, ունենալը չի նշանակում ունենալ ազգային պատկանելության զգացումնք, իմանալ ազգային ինքնության գանձարանը, ցուցաբերել համերաշխություն հավաքականության հետ: Ինքնությունը կառույց է, որն իրականանում է ժամանակի ընթացքում, մանկության հասակից, ծնողներից ժառանգելով ու դպրոցում սովորելով հայոց ինքնությունը կերտող ազգային արժեքները:

Իր բուն ինքնությունից խզվելը, անջատվելը առաջ է բերում «մուսանտներ» առանձնյակներ, այսինքն՝ անձեր, որոնց ժառանգական բնույթը

ձևափոխված է, այն տարբեր է իր նախնիների փոխանցած արժեքներից: Նրանք պատկանում են անօգուտ, ամուլ խմբին, որոնք միայն ազգանունով են հայ, բայց չունեն համայնքային պատկանելիության ու ազգային համերաշխության զգացմունք: Հայ ազգային ժառանգությունը անծանոթ է, խորթ է նրանց:

Ահա սա է լեզվի նահանջի, արևմտահայ տարբերակով հաղորդակցվողների թվի նվազեցման պատճառներից մեկը: Մեզ թվում է, որ այս միտումը բնական գործընթաց է, որը գալիք տարիների ընթացքում հավանաբար ավելի լայն թափ ստանա:

Հետաքրքիր մի դիպված, որի մասին տեղեկացա մի քանի ամիս առաջ: Միևնույն դասարանում սովորող 12 տարեկան 2 աշակերտուհիներ, մեկի անուն ազգանունը՝ Սոֆի Լըբլան, և մյուսինը՝ Ռուդա Լիլու, արդեն վաղուց ճանաչում են իրար: Կեսօրին նրանք սովորաբար ճաշում են դպրոցում: Մեկ օր Սոֆին կեսօրին գնում է տուն ճաշելու: Կեսօրից հետո՝ դասամիջոցին, Ռուդան հարցնում է Սոֆիին. «Տանը ի՞նչ կերար: Երևի դպրոցի ճաշարանից ավելի համով բան կերար»: Սոֆին պատասխանում է՝ «Բուլգուր կերա»: «Ի՞նչ էս ասում,- զարմանում է Ռուդան,- դու հա՛յ ես»: «Այո՛»,- պատասխանում է Սոֆին: «Ես էլ եմ հայ,- պատասխանում է Ռուդան,- մոքս ազգանունը Դեղեյան է»: Սոֆիի մոր ազգանունը Գույումճյան էր: Այսպես, պատահակա՜նորեն, երկու ընկերուհիները բացահայտում են իրենց՝ մոր կողմից հայ լինելը:

Բանն այն է, որ «ծագումը» առերևույթ չի արտահայտվում: Ֆրանսահայերը չունեն իրենց ուրիշներից գանազանող նշաններ. ոչ զգեստին- հագուստին վերաբերող առանձնահատկություն, ոչ խոհարարական, ոչ էլ ուրույն դիմագծային տարբերություններ: Հետևաբար, «ծագումով հայ» ասելով՝ մենք հասկանում ենք որպես «վիրտուալ հայեր»՝ «ներունակ» հայեր, որոնք չունեն համայնքային պատկանելիության զգացմունք:

Բանավոր խոսքում նույնպես փոխներգործությունները քիչ չեն:

Վերջին 10-15 տարիների ընթացքում Հայաստանից արտագաղթած բնակչությունը, որը խոսում է արևելահայերեն, ստեղծել է բանավոր խոսքի միջտարբերակային լեզվական շփումներ: Հաճախ, յուրաքանչյուր հաղորդակցվող փորձում է ընդօրինակել խոսակցին, կարծես խոսակցությանը ավելի մտերմիկ բնույթ տալու համար. արևելահայն ասում է «աղվոր է», «կրնամ» կամ «աղեկ է» փոխանակ «լավ է»: Երկար տարիներ Ֆրանսիայում ծառայող արևելահայ վարդապետն իր քարոզը կարդում է ինքնատիպ լեզվով՝ խառնելով արևելահայ և արևմտահայ տարբերակները:

Արևմտահայերենին տիրապետող մի շարք լրագրողներ, երբ Հայաստան են այցելում իրենց բանավոր խոսքում օգտագործում են արևելահայ տարբերակի բայական ձևեր:

Պոլսահայ «Ժամանակ» թերթի խմբագիր Արա Գոչունյանը Հ1 հեռուստատեսային կայանով տրված հարցազրույցի ժամանակ օգտագործում է արևելահայ բայական ձևեր: Օրինակ, նա ասում է «մեր *թերթը հանդիսանում է... մենք փորձում ենք ... մեր թերթը հնարավորություն է ունեցել...»*

Հայտնի լրագրող Հարութ Մասունյանը, 2016 թ. ապրիլի 24-ին հեռու-տատեսությամբ տված հարցազրույցի ժամանակ օգտագործում է՝ «*զգում եմ որ իմ ժողովուրդը... ես հավատում եմ որ... աշխարհը մնում է նույն ձևով... մենք մեկնաբանում ենք հայ ժողովրդի շահերից...*» և այլն:

Ստացվում է մի տեսակ խառնուրդ արևելահայ բայական ձևեր արևմտահայ արտասանությամբ: Այս երևույթը թերևս կարելի բացատրել լրագրողի արևելահային ավելի հասկանալի լինելու ցանկությամբ: Մա նույնպես արևելահայ տարբերակի ներկայությունն ու ազդեցությունն է արևմտահայ բանավոր խոսքում:

Հեռուստատեսային ծրագրերը. ֆրանսահայերից շատերը բողոքում, որ Հայաստանի հեռուստատեսիին հաղորդումների արևելահայերենը լավ չեն հասկանում, քիչ են հասկանում, հաղորդավարները արագ են խոսում:

Հակառակ երևույթը հազվադեպ է. արևելահայը ավելի լավ է հասկանում արևմտահայ բանավոր խոսքը, քան հակառակը:

Իմ անձնական ենթակայական կարծիքն այն է, որ հայերենը արևելահայերի մայրենի լեզուն է, նրանք տիրապետում են լեզուն՝ մանկությունից սկսած: Իսկ արևմտահայերի համար մեծ մասամբ հայերենը իրենց մայրենի լեզուն չէ, հատկապես երիտասարդ սերնդի համար, արևմտահայերենը նրանց 2-րդ լեզուն է, սովորած լեզու է:

Եվ ընդհանրապես ասենք, որ այսօր արևմտահայերենը աքսորի լեզու է: Եզրակացություն

Արդի հայերենի երկու գրական տարբերակների գրավոր և բանավոր խոսքերի միջև եղած փոխադարձ շփումները, փոխներգործությունը անխուսափելի են: ՀՀ և Սփյուռքի կապերը տարեցտարի գնալով սերտանում են, և այդ կապերը իրականանում են սփյուռքահայության և Հայաստանում բնակվող բնակչության փոխադարձ կանոնավոր շփումներով, իսկ այդ շփումները նախ և առաջ լեզվական են:

Վերջին տարիների համեմատական հետազոտությունները ցույց են տալիս որ արևելահայերենը զգալի չափով նահանջ է ապրում, և դա պարզ էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ վտազված լեզուների ցանկը հրատարակելուց շատ առաջ: Թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում զգալի է արևելահայ տարբերակի ներկայությունը արևմտահայ տարբերակի օգտագործման ոլորտներում:

Այս միտումը բնական գործընթաց է, որը գալիք տարիների ընթացքում հավանաբար ավելի լայն թափ կստանա: Որևէ լեզվի ապագան կանխատեսելը չի կարող հաստատ գիտական հիմք ունենալ:

Թե ինչպիսին կլինի 2 – 3 սերունդ հետո այդ տարբերակով հաղորդակցվողների քանակը և որակը, անհանար է կանխատեսել: Քննարկելով արդի հայերենի երկու գրական տարբերակների գրավոր և բանավոր խոսքերի միջև եղած փոխադարձ շփումները և հատկապես արևմտահայ տարբերակի նահանջի առարկայական և սուբյեկտիվ պատճառները՝ հարց է առաջանում՝ արդյոք լեզվական գործընթացը կարող է չենթարկվել միջավայրի թելադրած բնական կանոններին ու պատմության ընթացքի ուղեգծին:

Robert Der Merguerian- Questions relating to interrelationship of the two variants of modern Armenian.- In 2010, UNESCO drew up the list of the languages in danger of extinction in the world in which appeared modern western Armenian.

This caused great anxiety in the culture medium of Armenian Diaspora, as far as language is the main lever of conservation armenian identity. It's well known that year after year the space of the use of western Armenian is gradually reduced and the number of speakers decreases.

The reasons of the gradual moving back are of different nature : most of them on account of the language environement and the status of the diaspora languages.

Others may depend on language contacts between the two variants of modern Armenian which have intensified since the independence of Armenia.

Our investigations reveal the presence of eastern Armenian grammar forms, vocabulary and spelling in western Armenian press in France.

This tendency, noticeable in written as well as oral expressions of western Armenian, as the course of a natural linguistics process, seems unavoidable in the light of the environement and conditions western Armenian currently develops.

**ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԵՐԹԱԿԱՆ  
ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Բայր, որպէս թեքուող խօսքի մաս, ամէնէն արտայայտիչ անդամն է, որուն արտայայտական նշանակութեամբ կերանգաւորուի, կիմաստաւորուի մեր խօսքը: Կը խօսինք պատմելով, զեկուցելով, վճռելով, ենթադրելով, պայմանադրելով, հրամայելով, ըղձալով, խնդրելով եւ այլն: Եւ արտայայտութեան այս եղանակներուն համաձայն բայր եղանակային ձեւ կը ստանայ: Ան հանդէս կու գայ երկու ձեւով դիմաւոր եւ անդէմ:

Թէեւ մեր զեկույցի թեման է «Արեւմտահայերէնի խոնարհման համակարգի հերթական տարբերութիւնները», սակայն այս յօդուածի սահմանուած օրէնքի համաձայն, անհնար է խօսիլ արեւմտահայերէնի խոնարհման համակարգի անցած ողջ ուղիի մասին:

Ուստի, մենք առաւել նպատակայարմար կը սեպենք անդրադառնալ՝ սահմանական եղանակի պարզ ժամանակաձեւերէն բացարձակ ապառնի եւ անկատար ապառնի ժամանակներուն, սահմանականի բաղադրեալ ժամանակի ապառնի դերբայ եւ օժանդակ բայով կազմուած ժամանակաձեւերուն, ինչպէս նաեւ որոշ քերականներու կողմէ՝ ընդունուած հարկադրական եղանակի ապառնի դերբայ եւ օժանդակ բայով ձեւաւորուած երկու ժամանակներու, յարակատար եւ ապառնի դերբայներով ձեւաւորուած բաղադրեալ եւ երկրորդական բաղադրեալ ժամանակաձեւերու խոնարհման ընթացքի մասին:

Բոլորիս ծանօթ է, որ արեւմտահայերէնի սահմանական եղանակի պարզ ժամանակի ապառնի ձեւերը երկուք են եւ ցոյց կու տան խօսելու պահէն ետք խօսողին կողմէ ստոյգ, հաստատապէս կատարուելիք գործողութիւնը:

Ապառնի ժամանակի ու ապառնի դերբայ- օժանդակ բայի սահմանական ներկայ եւ անկատար ձեւերով կազմուած բաղադրեալ ժամանակաձեւերը ներկայացնելու գծով ցուցակագրեցինք Մփիւռքի տարբեր հայկական համայնքներու մէջ վերջին վաթսուն տարիներուն լոյս տեսած արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերը:

Ցաւով, բոլոր դասագիրքերը մենք չկրցանք ունենալ մեր տրամադրութեան տակ, բայց եւ այնպէս ներքեւ նշուած եօթը հեղինակներու գործերը կարեւորագոյններն են, որոնց ուսումնասիրութիւնը հնարաւորութիւն տուաւ ի յայտ բերել, ընդգծել, տեղ գտած նմանութիւններն ու տարբերութիւնները եւ յանգիլ որոշ եզրակացութեան:

**1-Չարեհ Մելքոնեան**- Բայի խոնարհման հինգ եղանակներ կը նշէ՝ Սահմանական, հրամայական, ստորադասական, ըղձական եւ անորոշ: Մելքոնեան «Քերականութիւն արդի հայերէն լեզուի միջին եւ բարձրագոյն

դասընթացը»<sup>575</sup> դասագիրքի մեջ խօսելով բայի խոնարհման եղանակներու եւ ժամանակներու մասին կը գրէ. «Սահմանական եղանակը ունի նաեւ բաղադրեալ ժամանակներ: Բաղադրեալ կը կոչուին այն ժամանակները, որոնք կազմուած են էական բային օժանդակութեամբ: Այսպէս «վազեր է, վազած է եւ վազելու է»:

Մելքոնեան սահմանական եղանակի բաղադրեալ ժամանակաձեւ կը համարէ՝

ա-Ապառնի յարակատար՝ դրկած պիտի ըլլամ եւ ապառնի գերակատար դրկած պիտի ըլլայի խոնարհման ձեւերը:

բ-Հարկադրական յարակատար՝ դրկելու եմ եւ հարկադրական գերակատար՝ դրկելու էին:

գ-Պատմական ապառնի պիտի դրկեմ եղեր եւ պատմական անկատար ապառնի պիտի դրկէի եղեր ձեւերը:

Մելքոնեան կը յիշէ նաեւ, որ ստորադասական եղանակը է՛ւս ունի բաղադրեալ ժամանակ՝ ապառնի՝ դրկելու ըլլամ, եւ անկատար ապառնի դրկելու ըլլայի ձեւերը, ինչ որ չենք հանդիպիր միւս դասագիրքերուն մէջ:

**2- Մկրտիչ Մկրտիչեան-** Բայը ունի խոնարհման չորս եղանակ. սահմանական, հրամայական, ստորադասական եւ ըղձական: Մկրտիչեան «Քերականութեան դասեր իր բ. գիրքի (Նախակրթարանի Ե.-Ձ. կարգերուն համար)<sup>576</sup> աշխատութեան մէջ կ'անդրադառնայ նաեւ սահմանական եղանակի գլխաւոր բաղադրեալ ժամանակներուն: Մկրտիչեանի համաձայն բաղադրեալ ժամանակաձեւ է ապառնի յարակատարը, որ կազմուած կ'ըլլայ անցեալ դերբայ (յարակատար) եւ օժանդակ բայի բացարձակ ապառնիով. օրինակ՝ հերկած պիտի ըլլայ, գրուած պիտի ըլլայ, եւ ապառնի վաղակատարը, որ կազմուած կ'ըլլայ անցեալ դերբայ եւ օժանդակ բայի անկատար ապառնիով. օրինակ՝ հերկած պիտի ըլլայի, գրուած պիտի ըլլար:

Մկրտիչեան ստորադասական եղանակի բաղադրեալ ժամանակաձեւի մասին անդրադառնալով կը գրէ. «Ստորադասական եղանակի բաղադրեալ ժամանակները կրնան կազմուիլ նաեւ ապառնի դերբայով իք-ի փոխարէն աւելցնելով ու մասնիկը. օրինակ՝ հերկելու ըլլամ եւ հերկելու ըլլայի»:

**3-Յակոբ Չոլաքեան** հեղինակած «Անդաստան» Գ.<sup>577</sup> դասագիրքին մէջ բայի խոնարհման չորս եղանակ կ'ընդունի՝ սահմանական, ըղձական, հրամայական եւ հարկադրական:

---

<sup>575</sup>Մելքոնեան Զարեհ, *Գործնական Քերականութիւն Արդի Հայերէն Լեզուի* (Միջին եւ Բարձրագոյն դասընթաց), Դ. Տպագրութիւն, Պէրոյթ, 1973, էջ 38-40, 56-77:

<sup>576</sup>Մկրտիչեան Մկրտիչ, *Քերականութեան դասեր*, Բ. Գիրք, (Նախակրթարանի Ե-Ձ կարգերուն համար), Հալէպ, 1962, էջ 82-96, 109-111:

<sup>577</sup>Չոլաքեան Յակոբ, *Անդաստան Գ.*, Հալէպ, 2010, էջ 8-10, 16, 24-26:

Խօսելով հարկադրական եղանակի մասին կ'ըսե՝ «Ապառնի դերբայը էական պակասատր բային հետ կը կազմէ բային չորրորդ եղանակը՝ հարկադրական եղանակ, որ ունի բաղադրեալ ժամանակներ».

ա-հարկադրական եղանակի ներկայ ժամանակ՝ գրելու եմ, գրելու ես եւայլն:

բ-հարկադրական եղանակի անցեալ անկատար ժամանակ՝ գրելու էի, գրելու էինք եւայլն:

Չոլաքեանի համաձայն, հարկադրական եղանակի բայը կ'արտայայտէ ընելու պարտաւորում կամ հարկադրում գործողութիւն մը, որ կրնայ արտայայտուիլ նաեւ բային ըղձական եղանակաձեւին առջեւ «պէտք է» աւելցնելով. օրինակ՝ գրելու ես- պէտք է գրես, երթալու ենք- պէտք է երթանք ձեւերը:

**4-Կարօ Առաքելեանի** համար բայը ունի երեք եղանակ՝ սահմանական, ըղձական (ստորադասական) եւ հրամայական: Առաքելեանի համաձայն սահմանական եղանակը ունի հինգ պարզ եւ 6 բաղադրեալ ժամանակաձեւեր:

Սահմանական եղանակի պարզ ժամանակը կ'անուանէ ներկայ ապառնի (բացարձակ ապառնիի փոխարէն) եւ անցեալ ապառնի (անկատար ապառնիի փոխարէն).

Առաքելեան սահմանական եղանակ բաղադրեալ ժամանակաձեւերուն մէջ կը տեղադրէ Չոլաքեանի հարկադրական եղանակի ժամանակաձեւերը՝ ներկայ ժամանակ անուանելով բաղադրեալ ներկայ ապառնին (օրինակ՝ տեսնելու եմ), իսկ հարկադրական անցեալ անկատար ժամանակ՝ բաղադրեալ անցեալ ապառնին:

Առաքելեան իր գիրքի «Արդի հայերէնի քերականութեան»<sup>578</sup> թիւ 2 էջ 142՝ կը գրէ. «Այս բաղադրեալ ժամանակաձեւերէն բացի, կան նաեւ երկրորդական բաղադրեալ ժամանակաձեւեր, որոնք կը կազմուին յարակատար եւ ապառնի դերբայներով ու ըլլալ բային խոնարհուած ձեւերով (էջ 166): Այս բաղադրեալ ժամանակաձեւերուն մէնք կը հանդիպինք ոչ միայն սահմանական եղանակի, այլ եւ ըղձական եղանակի մէջ:

Այսպէս՝ յարակատար ապառնի (հարկադրական երանգով)՝ փախած պիտի ըլլամ: Յարակատար անցեալ ապառնի փախած պիտի ըլլայի կամ՝

-երկրայական երանգով՝ յարակատար ապառնի փախած ըլլալու եմ. յարակատար անցեալ ապառնի՝ փախած պիտի ըլլայի:

Իսկ ըղձական եղանակի երկրորդական բաղադրեալ ժամանակաձեւերուն մէջ կը յիշէ ապառնի՝ փախչելու ըլլամ եւ անցեալ ապառնի փախչելու ըլլայի ձեւերը:

Առաքելեանի «Դիւրին հայերէն» վերտառութեամբ արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքի էջ 123-ի վրայ նոյնպէս կը կարդանք. «Բայը

---

<sup>578</sup>**Առաքելեան Կարօ.** *Արդի Հայերէնի Քերականութիւն*, Բ. Գիրք, Պէրուք, 1998, էջ 150-152, 166-250:



ունի երեք եղանակ՝ սահմանական, հրամայական եւ ըղձական»։ Էջ 131-ի վրայ կը կարդանք. «Սահմ. եղ. ապառնի ժամանակը կ'արտայայտուի երկու ձևով՝ պարզ ժամանակով եւ բաղադրեալ ժամանակով»։ Բաղադրեալ ժամանակը կը կազմուի ապառնի դերբայով եւ եւ օժանդակ բային ներկայով»։ Այսպէս՝ տեսնելու եւ, փախչելու եւ, մօտենալու եւ։

Բաղադրեալ ժամանակը կը կազմուի ապառնի դերբայով եւ եւ օժանդակ բային անցեալ անկատար ժամանակով։ Այսպէս՝ տեսնելու էի, փախչելու էի, մօտենալու էի։

**5-Յարութիւն Քիրքճեան** «Նոր քերականութիւն հայերէն լեզուի»- արեւմտահայերէն դասագիրքի մէջ խօսելով բայի մասին կը նշէ, որ բայը ունի խոնարհման չորս եղանակ՝ սահմանական, հրամայական, ստորադասական եւ դերբայական եղանակ։

Սահմանականի պարզ ժամանակաձեւերէն է ապառնին եւ անկատար ապառնին։

Քիրքճեան կըսէ- ապառնին՝ ապագայի մէջ ապահովաբար տեղի ունենալիք գործողութեան իմաստ ունի։ Իսկ անկատար ապառնին՝ ծրագրուած, բայց չիրագործուած արարք։ (Ա. տարի<sup>579</sup>)

Քիրքճեան սահմանական եղանակի բաղադիր ժամանակներ կը կոչէ համարէ միայն՝ յարակատար, վաղակատար դերբայներով եւ օժանդակ բայով կազուած ներկայ եւ անցեալ ժամանակները։

Քիրքճեանի Բ. գիրքի<sup>580</sup> ուրբերորդ դաս Դերբայական եղանակի մասին է։ Էջ 72-ի ծանօթագրութիւն բաժինին մէջ հետեւեալը կը կարդանք. «Արեւելահայերէնը ունի նաեւ անկատար դերբայը գրում (գրում եւ, գալիս եւ) եւ ապառնի դերբայի գրելու ձեւը (գրելու եւ- պիտի գրեմ)։ Այս վերջին ձեւը մենք կը գործածենք հագուաւղէպօրէն, հարկադրանքի իմաստով (գրելու ես այս նամակը)։ Իսկ յաճախ գործածուող գրելու համար, առանց գրելու ձեւերը կապ չունին ասոր հետ»։

**6- Պետրոս Հաճեան** «Պարզ քերականութիւն»<sup>581</sup> Ա. գիրքին մէջ կը նշէ բայի եղանակները՝ սահմանական, հրամայական եւ ստորադասական։ Հաճեանի համար (Ա. գիրք, էջ 105) Սահմանական եղանակը ունի երեք ժամանակ եւս, որոնց շարքին կը յիշատակէ ապառնի յարակատար՝ գրած պիտի ըլլամ, խօսած պիտի ըլլամ ձեւերը. ան կը կոչէ բաղադրեալ ժամանակներ։ Ապառնի յարակատարը կազմուած է անցեալ դերբայով եւ էական բայի բացարձակ ապագայով։ Հաճեանի համար Սահմանականը ունի հինգ պարզ եղանակ եւ 3 բաղադրեալ ժամանակներ (յարակատար՝ վազած եւ, կրկին

<sup>579</sup> Քիրքճեան Յարութիւն, *Նոր քերականութիւն Հայերէն Լեզուի* (Արեւմտահայերէն), (Միջնակարգ բաժինի Ա. Տարի), Աթէնք, 1989, էջ 58-64։

<sup>580</sup> Քիրքճեան Յարութիւն, *Նոր քերականութիւն Հայերէն Լեզուի* (Արեւմտահայերէն), (Միջնակարգ բաժինի Բ. Տարի), Աթէնք, 1989, էջ 71-76։

<sup>581</sup> Հաճեան Պետրոս, *Պարզ քերականութիւն*, Ա., Պուլկոս Այրէս, 1988, էջ 22-31, 105-108։

կատարեալ՝ վազած եղայ եւ ապառնի յարակատար վազած պիտի ըլլամ ձեւերը): Հաճեանի միւս գիրքերու մէջ չենք հանդիպիր բայի այլ պարզ եւ բաղադրեալ ժամանակներուն:

**7- Հիլտա Գալֆայեան-Փանոսեան** «Արեւմտահայ գրական լեզուի ուսումնական ձեռնարկ»<sup>582</sup>-ի մէջ գրէ. «Բայն ունի գործողութեան կատարման ձեւը արտայատող չորս եղանակ՝ սահմանական, հրամայական, ըղձական եւ անորոշ (որ կը կոչուի նաեւ դերբայ իր վեց ձեւերով- անդէմ բայ):

Գալֆայեան իր ձեռնարկին մէջ կը յիշէ, որ «սահմանական եղանակը ունի 5 պարզ եւ 6 բաղադրեալ ժամանակ»: Բաղադրեալ ժամանակաձեւերուն մէջ յարակատարի եւ վաղակատարի կողքին կը նշէ բաղադրեալ ապառնի եւ անցեալ ապառնի ժամանակաձեւերը տարով համապատասխան օրինակներ:

Ձեռնարկի էջ 78-ի վրայ Գալֆայեան կը գրէ. «Արեւելահայերէնում, սահմանական ապառնին եւ սահմանական անցեալ ապառնին բաղադրեալ են (գրելու եմ, գրելու էի): Իսկ արեւմտահայերէնում բայերը իրենց սկիզբը ստանում են "պիտի" եղանակիչ մասնիկը, որը անջատ է գրում, ինչպէս՝ պիտի գրեմ (այս ձեւը համապատասխանում է արեւելահայերէնի հարկադրական եղանակին): Ապառնի ժամանակը կազմում է սահմանական ներկայի կամ անկատարի կը մասնիկի փոխարէն "պիտի" դնելով:

Արդ, վերոնշեալ 7 հեղինակներու կողմէ սփիւռքի տարբեր հաստատուներու վրայ ապրող աշակերտներու համար պատրաստուած արեւմտահայերէնի քերականութեան նուիրուած դասագիրքերու բովանդակութիւնները ուսումնասիրելով եւ այնտեղ տեղ գտած նմանութեանն ու տարբերութիւններու միայն մէկ պարագան հրամցնելով մեր առջեւ կը պարզուի հետեւեալը.

ա- քերականութեան իւրաքանչիւր դասագիրք ունի երկու հիմնական ուղղութիւն ա) տեսական եւ բ) մեթոդաբանական.

բ- մեթոդաբանական առումով համեմատաբար տարուած աշխատանքը գնահատելի է, ուր իւրաքանչիւր դասագիրքի հեղինակ արեւմտահայերէնի դիրքին ուսուցման եւ ըմբռնման համար որդեգրած իր ձեւի մէջ յաջողութիւն արձանագրած է:

գ- սակայն տեսական առումով այնտեղ չենք գտներ գիտական հիմնաւորուած ամբողջական մէկ ուղղութիւն պարզող այս կամ այն հարցին վերաբերեալ, այլ խօսքով՝ որեւէ գիտական ուղեցոյց-ձեռնարկ սփիւռքահայ ուսուցիչին, համալսարանական ուսանողին եւ այլոց:

Մեզի յստակ է, թէ վերոյիշեալ հեղինակներէն իւրաքանչիւրը իր պարզած տեսական բաժինին մէջ որդեգրած է իր նախորդներէն այս կամ հեղինակի մօտեցում տուեալ հարցի վերաբերեալ: Մակայն գիտութեան զարգացման հետ լեզուն ալ իր տրամաբանական զարգացման ընթացքի ճանապարհին անհրաժեշտ է ունենայ մէկ ամբողջական գիտական ուղղութիւն արդի քերականութեան դասաւանդման որպէս միջոց, ձեռնակ, որով կարելի է առաջնոր-

<sup>582</sup>Գալֆայեան-Փանոսեան Հիլտա, *Արեւմտահայ գրական լեզուի ուսումնական ձեռնարկ*, ԵՊՀ հրատարակչութիւն, Ե., 2009, էջ 65-90:

դուիլ եւ հիմնաւորել այն լեզուական երեւոյթները, որոնք ունանց մօտ կը մնան անբացատրելի:

Առ այդ, այս առաջադրանքէն թելադրուած անհրաժեշտ է գիտակա-նօրէն ուսումնասիրել արեւմտահայերէնը, քննարկումներու ճամբով հասնիլ մէկ յայտարարի, պատրաստել արեւմտահայերէնի մէկ եւ ամբողջական ձեռնարկ, որպէսզի վերջ դրուի այդ տարբերակումներուն եւ նպաստէ ոչ միայն արեւմտայերէնի իմացութեան, ուսուցման, այլ եւ՝ արեւելահայերէնի-արեւմտահայերէնի զուգադրական քերականութեան ուսումնասիրութեան:

Ani Fishenkjian (Fchnkjian) - Western Armenian conjugation methodical and Serial (ordinal) Differences.- For the students of the Diaspora schools, Western Armenian grammar textbooks were prepared by grammarians. In the contents of these textbooks, there are methodical and theoretical different approaches worthy of study. Our article displays (studies) the grammar textbooks published by only seven authors during the last sixty years. The authors are Zareh Melkonian, Mgrditch Mgrditchian, Hagop Cholakian, Garo Arakelian, Bedros Hajian and Hilda Kalfaian-Panossian. In these grammar textbooks we detect the methodical and theoretical conjugation differences found in Westwrn Armenian, in particular what concerns the future tense.

**ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵզՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**  
**INSTITUTE OF LINGUISTICS OF NAS OF RA AFTER H.ACHARYAN**  
**ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА**

**ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ**

**ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

Գիտական հոդվածների ժողովածու

**JAHUKYAN READINGS**

Collection of scientific papers

**ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ**

Сборник научных статей



**ԱՍՈԴԻԿ**

Տպագրված է «ԱՍՈԴԻԿ» հրատարակչության տպարանում:  
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)  
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)  
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63  
Էլ. փոստ՝ [info@asoghik.am](mailto:info@asoghik.am)

Տպաքանակը՝ 200



